ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ՝ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍՊԸ

Սյունյաց երկիր

www.syuniacyerkir.am

°ð°øÞ²´ÂÆ
6 ê°ä î°Ø´°ðÆ
2016Ã
№ 27 (403)

ISSN 1829-3468

25 տարի առաջ հայոց աշխարհի վրա վերսկին ճառագեց անկախ պետականության աստղը

Ով հայ ժողովուրդ, քո միակ փրկությունը քո հավաքական ուժի մեջ է

Եղիշե Չարենց

Էրեբունի-Երևան

Երևան դարձած իմ Էրեբունի,
Դու մեր նոր Դվին, մեր նոր Անի,
Մեր փոքրիկ հողի դու մեծ երազանք,
Մեր դարեկարոտ, մեր քարե նազանք:

Երևան դարձած իմ Էրեբունի,
Դարեր ես անցել, բայց մնացել
ես պապանի:
Քո Մասիս հորով, քո Արաքս մորով,
Մեծանաս դարով, Երևա՛ն:
Մենք արյան կանչեր ունենք
մեր սրտում,
Անկապար փենչեր ունենք դեռ շատ:
Մեր կանչն առանց քեզ՝ իզուր կկորչի,
Առանց քեզ՝ մեր տաք փենչն էլ կսառչի:

Կյանքում ամեն սեր լինում է տարբեր,
Իսկ մենք բոլորս էլ քեզնով հարբել:
Տաք է սերը մեր շեկ քարերիդ պես,
Դին է սերը մեր ձիգ դարերիդ պես:

ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿ

Հայաստանի Հանրապետության խորհրդանիշները

«Հայաստանի Հանրապետության պետական զինանշանի մասին» օրենքն ընդունվել է Գերագույն խորհրդի կողմից 1992թ. ապրիլի 19-ին: Վերականգնվել է Հայաստանի առաջին հանրապետության (1918-1920թթ.) զինանշանը, որի հեղինակներն են ճարտարապետ, Ռուսաստանի գեղարվեստի ակադեմիայի ակադեմիկոս Ալեքսանդր Թամանյանը եւ նկարիչ Հակոբ Կոջոյանը:

Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի 1991թ. հունիսի 1-ի որոշմամբ, որպես երկրի օրհներգ ընդունվել է Հայաստանի առաջին հանրապետության (1918-1920թթ.) օրհներգը: Տեքստը՝ Միքայել Նալբանդյանի, երաժշտությունը՝ Բարսեղ Կանաչյանի:

Մեր հայրենիք, ազատ, անկախ,
Որ ապրել է դարեդար
Իր որդիքը արդ կանչում է
Ազատ, անկախ Հայաստան:

Ահա, եղբայր, քեզ մի դրոշ,
Որ իմ ձեռքով գործեցի,
Գիշերները ես քուն չեղա,
Արտասուքով լվացի:

Նայիր նրան՝ երեք գույնով,
Նվիրական մեկ նշան,
Թող փողփողի թշնամու դեմ,
Թող միշտ պանծա Հայաստան:

Ամենայն տեղ մահը մի է,
Մարդ մի անգամ պի՛տք մեռնի,
Բայց երանի, որ յուր ազգի
Ազատության կզոհվի:

«Հայաստանի Հանրապետության պետական դրոշի մասին» օրենքը ընդունվել է Գերագույն խորհրդի կողմից 1990թ. օգոստոսի 24-ին: Պետական դրոշը եռագույն է՝ կարմիր, կապույտ, նարնջագույն հորիզոնական հավասար շերտերով (վերեւից ներքեւ):

Հայաստանի Հանրապետության նախագահներ

Լեւոն Տեր- Պետրոսյան

Ծնվել է 1945 թ. հունվարի 9-ին, Սիրիայի Հալեպ քաղաքում: 1946թ. ընտանիքի հետ տեղափոխվել է Երեւան: Երեւանում ավարտել է միջնակարգ դպրոցը, 1968թ. ԵՊՀ-ի բանասիրական ֆակուլտետի արեւելագիտության բաժինը՝ արաբերեն լեզու եւ գրականություն մասնագիտությամբ: Ասպիրանտական շրջանն անցել է Լենինգրադում, 1972թ. Լենինգրադի համալսարանում պաշտպանել թեկնածուական, իսկ 1987թ. նույն համալսարանում՝ դոկտորական դիսերտացիան, ստացել բանասիրական գիտությունների դոկտորի գիտական աստիճան:
1972-78թթ. որպես կրտսեր գիտաշխատող աշխատել է Մ.Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում, 1978-85թթ. վարել Մատենադարանի գիտական քարտուղարի պաշտոնը, 1985-ից Մատենադարանի ավագ գիտաշխատող է: Տիրապետում է հայերեն, ռուսերեն, ֆրանսերեն, անգլերեն, գերմաներեն, արաբերեն, ինչպես նաեւ մի քանի մեռած լեզուների: Հեղինակ է ավելի քան 70 գիտական աշխատությունների, որոնք հրապարակվել են հայերեն, ռուսերեն, ֆրանսերեն լեզուներով եւ վերաբերում են հայ միջնադարյան թարգմանական գրականությանը, հայ-ասորական մշակութային առնչություններին: Կիլիկյան շրջանին վերաբերող նրա վերջին՝ «Խաչակիրները եւ հայերը» երկու ստվար հատորներով հրապարակված պատմաքաղաքագիտական հետազոտությունը (հրատ. 2005 եւ 2007 թվականներին) պատմագիտության մեջ նոր ուղղության եւ Հայոց պատմության ուսումնասիրման նոր մեթոդի հիմք է դնում: 2006թ. լույս է տեսել նրա քաղաքական ու քաղաքագիտական բնույթի ելույթների, հոդվածների եւ հարցազրույցների «Ընտրանի» ժողովածուն:
Լեւոն Տեր-Պետրոսյանը ԽՍՀՄ արեւելագետների ընկերակցության (1985), Հայաստանի գրողների միության (1988), Ֆրանսիական Ասիական ընկերության (1989), Վենետիկի Մխիթարյան ակադեմիայի (1991) անդամ է, Լա Վեռնի (1990), Սոֆիայի (1994), Սորբոնի (1996) եւ Ստրասբուրգի (1996) համալսարանների պատվավոր դոկտոր:
Լեւոն Տեր-Պետրոսյանը Հայաստանի Հանրապետության հիմնադիր նախագահն է, միջազգային լայն ճանաչում ունեցող պետական-քաղաքական գործիչ: Քաղաքական գործունեությունն սկսել է 1960-ական թվականներից, 1966-ին ձերբակալվել եւ մեկ շաբաթ կալանքի տակ է պահվել ապրիլի 24-ի ցույցին ակտիվ մասնակցության համար: 1988-ի փետրվարից ղեկավարել է Մատենադարանի «Ղարաբաղ» կոմիտեն, մայիսից ընդգրկվել Ղարաբաղյան շարժման Հայաստանի կոմիտեի կազմում, դարձել նրա ամենահեղինակավոր ու ազդեցիկ անդամներից մեկը: Հանդես է եկել ծրագրային ելույթներով, ինչպես նաեւ ընթացիկ իրադարձությունների ու հնարավոր զարգացումների քաղաքական վերլուծություններով ու դիպուկ կանխատեսումներով: 1988թ. դեկտեմբերի 10-ին «Ղարաբաղ» կոմիտեի մյուս անդամների հետ միասին ձերբակալվել է եւ վեց ամիս պահվել Մոսկվայի «Մատրոսսկայա տիշինա» բանտում:
Նրա գրչին են պատկանում Շարժման տարիներին «Ղարաբաղ» կոմիտեի եւ ՀՀՇ-ի անունով տարածած 100-ից ավելի թռուցիկներ, Շարժման ճնշման տակ ընդունված ՀԽՍՀ ԳԽ որոշումները: Եղել է Հայոց Համազգային Շարժման հիմնադիր անդամ, նրա վարչության նախագահ: 1989թ. օգոստոսին ընտրվել է ՀԽՍՀ Գերագույն խորհրդի պատգամավոր, 1990թ. հուլիսին՝ ԳԽ-ի նախագահության անդամ: 1990թ. մայիսին կրկին ընտրվել է Գերագույն խորհրդի պատգամավոր, նույն թվականի օգոստոսի 4-ին՝ Գերագույն խորհրդի նախագահ: Լեւոն Տեր-Պետրոսյանը 1991թ. հոկտեմբերի 16-ին ձայների ջախջախիչ մեծամասնությամբ (83, 4%) ընտրվել է Հայաստանի Հանրապետության նախագահ: Նույն պաշտոնում վերընտրվել է նաեւ 1996 թ. սեպտեմբերի 22-ին:
Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման առիթով երկրում ստեղծված լարված ներքաղաքական իրավիճակը հաղթահարելու, երկրի համար անկանխատեսելի հետեւանքներով հղի ապակայունացում թույլ չտալու նպատակով Լեւոն Տեր-Պետրոսյանը 1998թ. փետրվարի 3-ին հրաժարական է տվել ՀՀ նախագահի պաշտոնից:
Լեւոն Տեր-Պետրոսյանն ամուսնացած է, ունի որդի եւ երեք թոռ:

21.11.07, levonpresident.am

Ռոբերտ Քոչարյան

Ծնվել է 1954 թվականի օգոստոսի 31-ին, Լեռնային Ղարաբաղի Ստեփանակերտ քաղաքում: Միջնակարգ դպրոցն ավարտել է Ստեփանակերտում: 1972-1974 ծառայել է խորհրդային բանակում: 1982-ին գերազանցության դիպլոմով ավարտել է Երեւանի պոլիտեխնիկական ինստիտուտի էլեկտրատեխնիկական ֆակուլտետը: Աշխատանքային գործունեությունը սկսել է 1971-ին՝ Ստեփանակերտի էլեկտրատեխնիկական գործարանում: Եղել է հավաքող-փականագործ, ապա՝ ինժեներ-մեխանիկ: 1980-ից տարբեր պաշտոններ է զբաղեցրել Լեռնային Ղարաբաղի կոմերիտական եւ կուսակցական մարմիններում: 1989 եւ 1990թթ. ընտրվել է Հայաստանի

Գերագույն խորհրդի պատգամավոր, ապա Գերագույն խորհրդի նախագահության անդամ: 1991թ. ընտրվել է ԼՂՀ առաջին գումարման Գերագույն խորհրդի պատգամավոր:
1988թ. փետրվարից եղել է Արցախյան շարժման քաղաքական առաջնորդներից: Անդամակցել է «Կռունկ» կազմակերպությանը, որի լուծարումից հետո հիմնադրել եւ գլխավորել է «Միացում» կազմակերպությունը: Առաջիններից է եղել, որ ստանձնել է Լեռնային Ղարաբաղի անվտանգության եւ պաշտպանության համակարգի ձեւավորման պատասխանատվությունը:
1992թ. օգոստոսին, երբ ադրբեջանական բանակը բռնազավթել էր ԼՂՀ տարածքի կեսը, Ռ.Քոչարյանը ստանձնել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության պետական կոմիտեի նախագահի եւ ԼՂՀ վարչապետի պաշտոնը: Բոլոր ուժերի կենտրոնացումն ու Արցախն ազատագրելու վճռական կամքը կարճ ժամանակում հնարավոր են դարձրել բեկումը ռազմական գործողություններում:
1994թ. դեկտեմբերի 24-ին՝ ԼՂՀ Գերագույն խորհրդի որոշմամբ, իսկ 1996թ. նոյեմբերին՝ համաժողովրդական ընտրություններով, Ռոբերտ Քոչարյանն ընտրվել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նախագահ:
1997թ. մարտի 20-ին Ռոբերտ Քոչարյանը նշանակվել է Հայաստանի Հանրապետության վարչապետ:
1998թ. մարտի 30-ին արտահերթ նախագահական ընտրություններում Ռոբերտ Քոչարյանն ընտրվել է Հայաստանի Հանրապետության նախագահ: Նրա օգտին քվեարկել էր ընտրողների 59,5%:
2003թ. մարտի 5-ին Ռոբերտ Քոչարյանը վերընտրվել է Հայաստանի Հանրապետության նախագահի պաշտոնում՝ այս անգամ ստանալով ձայների 67,5%:
Պաշտոնավարել է մինչեւ 2008 թիվը:
2009-ից՝ «Սիստեմա» ԲՖԿ (ՌԴ) անկախ տնօրեն:
Տիրապետում է ռուսերեն եւ անգլերեն լեզուներին:
Ամուսնացած է, ունի երեք զավակ եւ չորս թոռնիկ՝ Բելլա, Անի, Էմմա եւ Ռոբերտ:

Սերժ Սարգսյան

Ծնվել է 1954 թվականի հունիսի 30-ին, Ստեփանակերտ քաղաքում: Ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը: 1971 թվականին ընդունվել է Երեւանի պետական համալսարան: 1972-1974 թվականներին ծառայել է ԽՍՀՄ զինված ուժերում: 1979 թվականին ավարտել է ԵՊՀ բանասիրական ֆակուլտետը: Աշխատանքային գործունեությունը սկսել է 1975 թվականին Երեւանի էլեկտրատեխնիկական գործարանում՝ որպես խառատ, աշխատել է մինչեւ 1979 թվականը:
1979-1988 թվականներին եղել է ԼԿԵՄ Ստեփանակերտի քաղկոմի բաժնի վարիչ, ապա՝ երկրորդ քարտուղար, առաջին քարտուղար, կոմկուսի Ստեփանակերտի քաղկոմի պրոպագանդայի եւ ագիտացիայի բաժնի վարիչ, ԼՂ մարզկոմի կուսկազմակերպությունների բաժնի հրահանգիչ, ԼՂ մարզկոմի առաջին քարտուղար Հենրիկ Պողոսյանի օգնական:
1989-1993 թվականներին ղեկավարել է ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերի կոմիտեն:
1990 թվականին ընտրվել է Հայաստանի Գերագույն խորհրդի պատգամավոր:
1993-1995 թվականներին եղել է ՀՀ պաշտպանության նախարար:
1995-1996 թվականներին՝ ՀՀ պետական անվտանգության վարչության պետ, ապա՝ ազգային անվտանգության նախարար:
1996-1999 թվականներին՝ ՀՀ ներքին գործերի եւ ազգային անվտանգության նախարար:
1999 թվականին՝ ՀՀ ազգային անվտանգության նախարար:
1999-2000 թվականներին՝ ՀՀ նախագահի աշխատակազմի ղեկավար:
1999-2007 թվականներին՝ ՀՀ նախագահին առընթեր ազգային անվտանգության խորհրդի քարտուղար:
2000-2007 թվականներին՝ ՀՀ պաշտպանության նախարար:
2007 թվականի ապրիլի 4-ին նշանակվել է Հայաստանի Հանրապետության վարչապետ:
2007 թվականի հունիսի 7-ին կրկին նշանակվել է ՀՀ վարչապետ՝ գլխավորելով ՀՀ Ազգային ժողովի ընտրություններից հետո ձեւավորված կառավարությունը:
2008թ. փետրվարի 19-ին կայացած նախագահական ընտրություններում ընտրվել է Հայաստանի Հանրապետության նախագահ:
2008թ. ապրիլի 9-ին ստանձնել է ՀՀ նախագահի պաշտոնը:
Հայաստանի Հանրապետական կուսակցության անդամ է 2006 թվականից, 2006 թվականի հուլիսից մինչեւ 2007 թվականի նոյեմբերը՝ կուսակցության խորհրդի նախագահ: 2007 թվականի նոյեմբերին ընտրվել է ՀՀԿ նախագահ:
Երեւանի պետական համալսարանի խորհրդի եւ Հայաստանի շախմատի ֆեդերացիայի նախագահն է:
Ստացել է Արցախի հերոսի կոչում, «Ոսկե արծիվ» շքանշան, ՀՀ «Մարտական խաչ» առաջին աստիճանի, «Տիգրան Մեծ» շքանշաններ, պետական այլ պարգեւներ:
Ամուսնացել է 1983 թվականին: Կինը՝ Ռիտա Սարգսյանը, ծնվել է Ստեփանակերտում՝ զինվորականի ընտանիքում: Մասնագիտությամբ երաժշտության ուսուցչուհի է:
Ունի երկու դուստր՝ Անուշն ու Սաթենիկը, եւ երեք թոռնիկ՝ Մարիամը, Արան ու Սերժը:

Համարի հովանավորը

Վահե Հակոբյան

«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» բարեգործական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահ, Սյունիքի մարզի շախմատի ֆեդերացիայի նախագահ, «Գանձասար-Կապան» ֆուտբոլային ակումբի նախագահ, «Զանգեզուրի ՊՄԿ» ՓԲԸ գլխավոր տնօրենի 1-ին տեղակալ

Խմբագրական

«...Ու պիտ դառնաս էն երկիրը, ուր ձգտում է մեր հոգին»

ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Հայաստանի երրորդ հանրապետությունը 25 տարեկան է... Մենք վերստին ու նորովի թերթում ենք պատմության էջերը, անցած ճանապարհից դասեր քաղելու, վաղվա օրը տեսնելու, կանխատեսելու փորձեր անում, անցածի, ներկայի, գալիքի համադրությամբ վերլուծություններ մտմտում:

«Սյունյաց երկիր» թերթի սույն համարը խորհրդածություն է հայոց պետության, պետականության, մեր անցած ճանապարհի, ներկա կացության, առկա սպառնալիքների ու մարտահրավերների մասին, իսկ սույն խմբագրականը նաեւ անձնական տեսակետ է մեր ընթացքի որոշ հարցերի վերաբերյալ՝ պարուրված որդիական զգացմունքով:

* * *

Հիմա ընդունված է ասել, որ մեր անկախությունը Խորհրդային Միության կամ Ռուսական կայսրության փլուզման հետեւանք էր: Իրականում, մինչդեռ, անկախ պետականության վերականգնումը հայ ժողովրդի պատմության հասունացած պտուղն էր, միանգամայն տրամաբանական ու պատճառաբանված արդյունքը, դեպի հավերժություն միտված ազգային մեր երազանքի դրսեւորումը:

1980-ականների վերջին եւ 90-ականների սկզբին ազգովի ոգեւորված էինք, ինչ-որ առումով սավառնում էինք երազների մեջ եւ համոզված էինք, որ անկախությունն անվտանգ, ապահով ու լուսավոր գալիք կբերի հայ ժողովրդին...

Մեզ թվում է՝ չկա մի հայ, ում չի մտահոգել հայ ժողովրդի հերոսական էպոսի ոչ հերոսական ավարտը՝ Վանա քարի մեջ Միհերի փակվելը եւ այնտեղից ելնելու անորոշ հեռանկարը.

«- Որ աշխարք ավերվի, մեկ էլ շինվի,
Երբոր ցորեն էղավ քանց մասուր մի,
Ու գարին էղավ քանց ընկուզ մի,
Էն ժամանակ հրամանք կա, որ էլնենք էղբեղեն»:

Հայոց անկախ պետականության վերականգնումը միլիոնավոր հայեր ընկալեցին դյուցազնավեպի տրամաբանության մեջ՝ Միհրն իր Քուռկիկ Ջալալիով ազատագրվել է, շղթայազերծ է եղել...

Հետո, սակայն, անկախության համար «հայտնաբերեցինք» գործընթաց բառը, եւ մեր բազմաթիվ ձգտումներ ու երազանքներ ճապաղվեցին ու շեղվեցին կյանքի դիմադրությամբ:

Այդ բոլորով հանդերձ, 1991-ն այն ժամանակն էր, երբ յուրաքանչյուր հայ

Շարունակությունը՝ էջ 80

Սյունյաց Երկիր

Հասցե՝ Կապան, Շահումյան 20/32:
Հեռ. ՝ (0285) 5 25 63, (091) 45 90 47, (077) 45 90 47:
էլ. փոստ՝ syuniacyerkir@mail. ru
էլ.կայք՝ www. syuniacyerkir. am

Գլխավոր խմբագիր՝
ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ
Լրագրողներ՝
ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ
ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Ձեւավորող՝
ԳՐԻԳՈՐԻ ՍԱՀԱԿՅԱՆ
Օպերատորներ՝
ՆՈՒԲԱՐ ԴԱՎԹՅԱՆ
ԱՆՆԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ
Սրբագրիչ՝
ՍԼԱՎԻԿ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի):

Հղումը «Սյունյաց երկրին» պարտադիր է:

Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:
Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:
Պետական աջակցություն՝ տարեկան 500,000 ՀՀ դրամ:

Ծավալը՝ 25.5 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 1700:

Ստորագրված է տպագրության 01.09.2016թ.:

Բովանդակություն

Հայաստանի Հանրապետության մայրաքաղաքը (Պարույր Սեւակ, Էրեբունի-Երեւան) 2
Հայաստանի Հանրապետության խորհրդանիշները (պետական դրոշ, պետական զինանշան, երկրի օրհներգ) 3
Հայաստանի Հանրապետության նախագահները (Լեւոն Տեր-Պետրոսյան, Ռոբերտ Քոչարյան, Սերժ Սարգսյան) 4
Համարի խմբագրականը (Սամվել Ալեքսանյան, «Ու պիտ դառնաս էն երկիրը, ուր ձգտում է մեր հոգին») 6
Հայոց ազգային հիմնը (Եղիշե Չարենց, Ես իմ անուշ Հայաստանի) 9
Մեր դարավոր երազանքը՝ իրականություն (Հովհաննես Թումանյան) 10

Հայոց պեսականությունը (սկզբնաղբյուրներ)

Մովսես Խորենացի, Հայոց պատմություն (հատված).... 11
Ղազար Փարպեցի, Հայոց պատմություն (հատված)..... 13

Հայաստանի 3-րդ հանրապետություն

Հայաստանի Հանրապետության քարտեզը..... 15
...Եվ մեր հողը վերստին օծվեց անկախության մյուռոնով (1988-91թթ.)..... 16
Հռչակագիր Հայաստանի անկախության մասին..... 18
Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության օրենքը Հայկական ԽՍՀ-ի վերանվանման մասին 19
Հայաստանի 3-րդ հանրապետության պատմություն (Էդիկ Մինասյան, Հայաստանի անկախության հռչակումը)..... 19
Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի որոշումը Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման մասին..... 31
Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի դիմումը Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին, հայ ժողովրդին..... 31
ՀՀ վարչատարածքային բաժանումը եւ տարածքային քաղաքականությունը 32
Հայոց ազգային բանակը՝ Հայաստանի Հանրապետության անկախության եւ արժանապատիվ ընթացքի երաշխավոր 33
Հայաստանի Հանրապետության հանրաքվեի կենտրոնական հանձնաժողովի հաղորդումը 34
ՀՀ պաշտպանության նախարարները 34
ՀՀ կառավարության ղեկավարները..... 35
ՀՀ ԱԺ նախագահները 35
Սուրբ պատարագ Վատիկանի Սուրբ Պետրոս տաճարում՝ Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի առիթով (12 ապրիլի 2015թ.) 36
Սպասված այց. 2016թ. հունիսի 24-26-ը Հայաստանի Հանրապետությունում էր Հռոմի սրբազան քահանայապետ Ֆրանցիսկոս պապը..... 37
Սյունիքն Արցախյան ազատամարտում 38

Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն

ԼՂՀ քարտեզը 39
ԼՂՀ խորհրդանիշները 40
ԼՂՀ նախագահները (Ռոբերտ Քոչարյան, Արկադի Ղուկասյան, Բակո Սահակյան)..... 41
Հոգեւոր կյանքի վերածնունդն Արցախում..... 42
ԼՂՀ Ազգային ժողովն ու կառավարությունը 43
Ինչպես ծնվեց ԼՂՀ-ն. վավերագրեր..... 44
Արցախահայության պետական կյանքի անխախտ շղթան (Վահրամ Բալայան)..... 46
ԼՂՀ կազմավորման պատմությունը 50
Ինչպես կայացավ բիշքեկյան հանդիպումը (Դավիթ Միքայելյան) 51
ԼՂՀ ՊԲ մարտական ուղու պատմության համառոտ ակնարկ (Սենոր Հասրաթյան)..... 53
Արցախն անսասան մնաց նաեւ նոր պատերազմում..... 70
Քառօրյա պատերազմում զոհված սյունեցիները 71
Հրադադարի մասին պայմանագիր (1994թ.)..... 76
ՌԴ արտաքին գործերի նախարարի, ԱՄՆ պետքարտուղարի ու Ֆրանսիայի եվրոպական հարցերով պետքարտուղարի համատեղ հայտարարությունը (17 մայիսի 2016թ.) 76
Բիշքեկյան արձանագրություն (1994թ.)..... 77
Շուշի, Սբ Ղազանչեցոց եկեղեցին 78
Աստված է վկա, Արցախին հաղթող չի եղել, չկա («Մենք ենք, մեր սարերը») 79

Սփյուռքը հայոց պեսականության հզորության գրավականն է

Համահայկական ներուժը մեկտեղելով՝ կառուցենք առավել հզոր Հայաստան, ապահով Արցախ եւ Հայաստանակենտրոն Սփյուռք (հատված ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանի՝ «Այունյաց երկիր» թերթին տված հարցազրույցից, 15 ապրիլի 2015թ.) 84
Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի համահայկական հռչակագիր..... 87

Հայոց մայրաքաղաքները

Վան 88
Արմավիր 89
Երվանդաշատ..... 90
Արտաշատ..... 91
Տիգրանակերտ 92
Վաղարշապատ..... 93
Դվին 94

Բովանդակություն

Բագարան 95
Շիրակավան 96
Կարս 97
Անի 98

Վաղ շրջանի պետական կազմավորումներբ Հայաստանում

Քա III-II հազարամյակներ (Արտակ Մովսիսյան)..... 99
Վանի համահայկական թագավորությունը (Արտակ Մովսիսյան)..... 103

Էջեր հայ ժողովրդի պատմությունից

Հայաստանի առաջին հանրապետությունը 110
Խորհրդային Հայաստանի առաջնորդները 111

Հայոց ինքնիշխանությունբ Այունիքում

Հատված Ստեփանոս Օրբելյանի «Այունիքի պատմություն»-ը գրքից (Այունյաց իշխանների (հաջորդական) կարգը եւ նրանց թագավորելը վերջին ժամանակներում. ամփոփ տեղեկություններ) 112
Այունյաց թագավորության կազմավորումը, անունը եւ սահմանները (հատված Թադեւոս Հակոբյանի «Այունիքի թագավորությունը» գրքից) 114
1720-ական թթ. Այունյաց իշխանապետությունը (Լիլիթ Առաքելյան)..... 121
Լեռնահայաստանի Հանրապետությունը (Մարտին Ջիլֆուղարյան)..... 131

Հայրենիք արծարծող թեման՝ հայ արվեստագետների ստեղծագործություններում

Դավիթ Մուրադյան. «Մասշտաբային մի ֆիլմ նորանկախ Հայաստանին դեռեւս պակասում է» 141
Անկախ Հայաստանի երաժշտական մշակույթը (Լուսինե Սահակյան) 143
Հայրենիք բանք հայոց. հատված (Դավիթ Գասպարյան)..... 146
Փարավոն Միրզոյան. «Եթե կոչման մասին մտածես, արվեստ ստեղծել չես կարող» 158

Հայ առաքելական եկեղեցին եւ հայոց պետականությունբ

Հայոց եկեղեցին պետականության գաղափարախոս (Վահե Թորոսյան) 160
Ընդհանրական կաթողիկոսական աթոռի վերահաստատումն էջմիածնում՝ Գրիգոր Տաթեւացու եւ նրա համախոհների ջանքերի արդյունք (Սուսաննա Գրիգորյան)..... 165

Հետադարձ հայացք հայոց պետականությանբ

Հենզել Մանուչարյան. «Որտեղ սխալվեինք, կկտրվեր մեր ազգային գործունեության շղթան» 169
Վլադիմիր Բարխուդարյան. «Այս վիճակից դուրս կգանք, եթե իշխեն արդարությունը, ճշմարտությունը, օրենքը» 172
Վազգեն Մանուկյան. «Եթե պետության եւ տնտեսության զարգացում չկա, ինչքան էլ խելամիտ արտաքին քաղաքականություն վարես, ոչ մի արդյունքի չես հասնի..... 175
Պատմության քառուղիներով (Եղիշե Չարենց)..... 179

Հայաստանբ երգերի մեջ

Դանիել Վարուժան (Ջոն)..... 183
Սիամանթո (Հույսին համար, Ափ մը մոխիր, Հայրենի տուն) 183
Վահան Թեքեյան (Անկախութիւն հայկական, Հայոց երկրին մէջ միշտ կ'ապրին) 184
Հովհաննես Շիրազ (Իմ սուրբ հայրենիք, Կտակ, Արարատ) 185
Համո Սահյան (Ուր որ նայում եմ, Հայաստան ասելիս, Անունդ տալիս) 186
Ավետիք Իսահակյան (Հայրենիքիս, Հայաստանը (ավանդություն)) 187
Հովհաննես Թումանյան (Սասունցի Դավիթ. հատված պոեմից) 188

Գովազդ

Գորիսի ֆրանս-հայկական սրտանոթային կենտրոնն առաջարկում է բարձրորակ եւ մատչելի բուժսպասարկում 190
Կապանի բժշկական կենտրոնը՝ ձեր առողջության պահպանման հուսալի գործընկեր..... 192
«Քոնթուր գլոբալ հիդրոկասկադ» ՓԲ ընկերություն ... 194

Իմ Հայաստան

Հայաստանն ըստ «Աշխարհացույց»-ի..... 199
Հայկի եւ Բելի ճակատամարտը, Ք.ա. 2492թ. (Ջուլիանո Ջասսո) 200
Մայր աթոռ Սուրբ Էջմիածին 201
Սուրբ Մեսրոպ Մաշտոց 202
Հայկական ժողովրդական էպոսը (ըստ Հակոբ Կոջոյանի) 203
Հայաստան (Պարույր Սեւակ)..... 204

Հայոց ազգային հիմնք

Ես իմ անուշ Հայաստանի

Եղիշե Չարենց

Ես իմ անուշ Հայաստանի արեւահամ
բառն եմ սիրում,
Մեր հին սազի ողբանվագ, լացակումած
լարն եմ սիրում,
Արնանման ծաղիկների ու վարդերի բույրը վառման,
Ու նաիրյան աղջիկների հեզաճկուն պա՛րն եմ սիրում:

Սիրում եմ մեր երկինքը մուգ, ջրերը ջինջ, լիճը լուսե,
Արեւն ամռան ու ձմեռվա վիշապաձայն բուքը վսեմ,
Մթում կորած խրճիթների անհյուրընկալ
պատերը սեւ
Ու հնամյա քաղաքների հազարամյա
քա՛րն եմ սիրում:

Ո՛ւր էլ լինեմ - չե՛մ մոռանա ես ողբաձայն երգերը մեր,
Չե՛մ մոռանա աղոթք դարձած երկաթագիր
գրքերը մեր,
Ինչքան էլ սո՛ւր սիրտս խոցեն արյունաքամ
վերքերը մեր -
Էլի՛ ես որբ ու արնավառ իմ Հայաստան-
յա՛րն եմ սիրում:

Իմ կարոտած սրտի համար ոչ մի ուրիշ հեքիաթ չկա.
Նարեկացու, Քուչակի պես լուսապսակ ճակատ չկա.
Աշխա՛րհ անցի՛ր՝ Արարատի նման
ճերմակ գագաթ չկա.
Ինչպես անհաս փառքի ճամփա՝ ես իմ
Մասիս սա՛րն եմ սիրում:

Մեր դարավոր երազանքը՝ իրականություն

Ի՞նչ ասես, որ չէր տա գրեթե ամեն մի հայ, միայն թե աչքով տեսներ ազատ Հայաստանը

Հովհաննես Թումանյան

Մեր սերունդը էն սերունդն է, որ դեռ երեկ ազատ Հայաստան էր երազում:
Ազատ Հայաստան էին երազում ռուսահայը, տաճկահայը, պարսկահայը եւ բոլոր հեռավոր գաղութները:
Ազատ Հայաստան էին երազում հայ ժողովրդի բոլոր խավերը, առանց սեռի ու հասակի խտրության:
Ի՞նչ ասես, որ չէր տա գրեթե ամեն մի հայ, միայն թե աչքով տեսներ ազատ Հայաստանը:
Ու հանկարծ...
Արդեն իրականություն է երեկվա մեծ երազը. ազատ է Հայաստանը, ամբողջ աշխարհի կողմից ճանաչված ինքնուրույն հանրապետություն է նա, իր եռագույն դրոշակով կանգնած է մյուս պետությունների շարքում:

Հայոց պեսականությունը (սկզբնաղբյուրներ)

Մովսես Խորենացու «Հայոց պատմություն» ձեռագրից, որի մանրանկարը պատկերում է Պատմահորը (ձախից) և նրա մենենատ մարդպան Սահակ Բագրատունուն (աջից)

Հայոց պատմություն

Մովսես Խորենացի

Հայկի ապստամբության մասին

Այս Հայկը, ասում է, վայելչակազմ էր, թիկնավետ, խիստ գանգուր մազերով, վառվռուն աչքերով, հաստ բազուկներով: Սա քաջ եւ երեւելի հանդիսացավ հսկաների մեջ, դիմադրող այն բոլորին, որոնք ձեռք էին բարձրացնում բոլոր հսկաների եւ դյուցազունների վրա տիրապետելու: Սա խրոխտանալով ձեռք բարձրացրեց Բելի բռնավորության դեմ այն ժամանակ, երբ մարդկային ազգը սփռվում տարածվում էր բոլոր երկրի լայնության վրա, բազմամբոխ հսկաների, անչափ կատաղիների եւ ուժավորների մեջ: Որովհետեւ այս ժամանակ ամեն մի մարդ, խելագարված, սուրն ընկերի կողն էր կոխում, ձգտում էին մեկը մյուսի վրա տիրելու, եւ Բելին պատահմամբ հաջողվեց բռնանալ եւ բոլոր երկիրը գրավել: Որին Հայկը չկամենալով հնազանդել, Բաբելոնում Արամանյակ որդին ծնելուց հետո. չվեց դեպի Արարադի (1) երկիրը, որ գտնվում է հյուսիսային կողմերում, իր որդիներով, դուստրերով եւ որդիների որդիներով, որ զորավոր մարդիկ էին, թվով մոտ երեքհարյուր հոգի, եւ ուրիշ ընդոծիններով (2), նրան հարած եկվորներով եւ բոլոր տունուտեղով (3): Գնում բնակվում է մի լեռան ստորոտում դաշտավայր տեղում, որտեղ ապրում էին սակավաթիվ մարդիկ առաջուց ցրվածներից: Հայկը նրանց իրեն հնազանդեցնելով՝ այնտեղ կալվածում շինում է բնակության տուն (4) եւ տալիս է ժառանգություն Կադմոսին, Արամանյակի որդուն: Սա արդարացնում է ասված անգիր հին զրույցները:

Իսկ ինքը, ասում է (Մար Աբասը), իր մնացած մարդկանցով եւ տունուտեղով շարժվում է դեպի հյուսիսային արեւմուտք եւ գալիս բնակվում է մի բարձրավանդակ դաշտում եւ այս լեռնադաշտի անունը կոչում է Հարք, այսինքն թե այստեղ բնակողները հայրեր են Թորգոմի տան սերունդի: Շինում է եւ մի գյուղ, որն իր անունով կոչում է Հայկաշեն: Այստեղ էլ պատմության մեջ հիշվում է, թե այս դաշտի հարավային կողմում, մի երկայնանիստ լեռան մոտ, ապրելիս են եղել առաջուց սակավաթիվ մարդիկ, որոնք կամովին հնազանդել են դյուցազնին: Այս էլ արդարացնում է ասված անգիր զրույցները:

Հայոց պեսականությունը (սկզբնաղբյուրներ)

Պատերազմի եւ Բելի մահվան մասին

Խոսքը շարունակելով (Մար Աբասը) ասում է, թե իբր Տիտանյան Բելը (5) իր թագավորությունն ամենքի վրա հաստատեց, ապա իր որդիներից մեկին հավատարիմ մարդկանց հետ ուղարկում է հյուսիսի կողմը Հայկի մոտ, որ նա հնազանդության գա եւ խաղաղությամբ ապրի: *«Դու ցուրտ սառնամանիքների մեջ բնակվեցիր, ասում է, սակայն տաքացրո՛ւ եւ մեղմացրո՛ւ քո հպարտ բնավորության ցուրտ սառնությունը եւ ինձ հնազանդելով խաղաղ ապրիր՝ որտեղ որ կհաճես իմ երկրում բնակության տեղ ընտրել»:* Հայկը Բելի պատգամավորներին հետ է դարձնում խստությամբ պատասխանելով: Ուղարկված (պատգամավորը) վերադառնում է Բաբելոն:

Այն ժամանակ Տիտանյան Բելը զորք է ժողովում նրա դեմ եւ հետեւակ զորքի մեծ բազմությամբ գալիս հասնում է հյուսիս, Արարադի երկիրը, Կադմոսի տան մոտ: Կադմոսը փախուստ է տալիս Հայկի մոտ, իրենից առաջ արագագնաց (մարդիկ) ուղարկելով: *«Գիտցած եղիր, ասում է, ո՛վ մեծդ դյուցազունների մեջ, որ Բելը դիմում գալիս է քո վրա հավերժական քաջերով եւ երկնադեզ հասակով մրցող հսկաներով: Եվ ես լսելով, որ նա մոտեցել է իմ տանը՝ փախա եւ ահա տագնապած գալիս եմ քեզ մոտ: Ուրեմն շտապիր մտածել, ինչ որ անելու ես»:*

Իսկ Բելը հանդուգն ու անճոռնի ամբոխի զորությամբ, ինչպես մի հեղեղ, որ զառիվայրից ներքեւ է վիժում, շտապում էր հասնել Հայկի բնակության սահմանները, վստահ լինելով զորավոր մարդկանց սրտերի եւ անձերի վրա: Այս ժամանակ ուշիմ եւ խոհեմ հսկան, խիստ գանգուր մազերով, վառվռուն աչքերով, շտապով հավաքում է իր որդիներին եւ թոռներին, քաջ եւ աղեղնավոր մարդկանց, թվով շատ նվազ, եւ ուրիշ մարդկանց, որ ձեռքի տակ ուներ, գնում հասնում է մի ծովակի ափ (6), որի ջրերն աղի են եւ մանր ձկներ են պարունակում: Եվ իր զորքերը կանչելով՝ ասում է նրանց. *«Երբ մենք դուրս կգանք Բելի ամբոխի դեմ, աշխատենք այն տեղին պատահել, որտեղ կանգնած կլինի Բելը քաջերի խուռն բազմության մեջ, որպեսզի կամ մեռնենք եւ մեր աղխը Բելի ծառայության տակ ընկնի, կամ մեր մատների հաջողությունը նրա վրա ցույց տանք, նրա ամբոխը ցրվի եւ մենք հաղթություն տանենք»:*

Եվ ամբողջ ասպարեզներ (7) դեպի առաջ անցնելով՝ հասնում են բարձրագույն լեռների միջեւ մի դաշտածեւ տեղ: Եվ ջրերի հոսանքի աջ կողմում բարձրավանդակի վրա ամուր դիրք գրավելով, գլուխները վեր բարձրացնելով տեսնում են Բելի բազմաթիվ ամբոխի անկարգ հրոսակը, որ հանդուգն հարձակումով ցիրուցան վազվզում էին երկրի երեսի վրա, իսկ ինքը, Բելը, մեծ ամբոխով հանդարտ կանգնած էր ջրի ձախ կողմում մի բլրակի վրա իբրեւ դիտանոցում: Հայկը ճանաչեց սպառազինված ջոկատի խումբը, որտեղ Բելը մի քանի ընտիր եւ սպառազինված մարդկանցով ամբոխի առաջն էր անցել, եւ երկար տարածություն կար նրա եւ ամբոխի մեջ: Նա կրում էր երկաթե գլխանոց, նշաններ կրող վերջերով, թիկունքի եւ լանջի վրա պղնձե տախտակներ, սրունքների եւ թեւերի վրա պահպանակներ, մեջքը կապել էր գոտի, որից ձախ կողմից կախված էր երկսայրի սուրը, աջ ձեռքում բռնել էր հսկայական նիզակը, իսկ ձախում վահան, նրա աջ եւ ձախ կողմում ընտիր (զորականներ): Հայկը տեսնելով պինդ սպառազինված Տիտանյանին եւ նրա աջ եւ ձախ կողմի ընտիր մարդկանց՝ կանգնեցնում է Արամանյակին երկու եղբայրներով աջ կողմը, Կադմոսին իր ուրիշ երկու որդիներով ձախ կողմը, որովհետեւ աղեղ եւ սուր (գործածելու մեջ) կորովի մարդիկ էին, ինքը կանգնեց առջեւից եւ մյուս բազմությունը կանգնեցրեց իր հետեւում, դասավորեց մոտավորապես եռանկյունի ձեւով եւ հանդարտ առաջ շարժվեց:

Երբ երկու կողմի հսկաներն իրար մոտ հասան, երկրի վրա ահագին դղրդյուն բարձրացրին իրենց գրոհներով եւ իրար վրա ահ ու սարսափ էին գցում իրենց հարձակումների ձեւերով: Այնտեղ երկու կողմից ոչ սակավ հաղթանդամ մարդիկ սրի բերանի հանդիպելով թավալվում ընկնում էին գետին, եւ կռիվն (անորոշ էր մնում), երկու կողմերն էլ անպարտելի մնալով: Այս անսպասելի տարակուսական դիպվածը տեսնելով՝ Տիտանյան արքան զարհուրեց, եւ հետ քաշվելով սկսեց բարձրանալ այն բլուրը, որտեղից իջել էր, որովհետեւ մտածում էր ամբոխի մեջ ամրանալ, մինչեւ բոլոր զորքը հասնի, որպեսզի երկրորդ անգամ ճակատամարտ սարքի: Աղեղնավոր Հայկը այս բանը հասկանալով՝ իրեն առաջ է նետում, մոտ է հասնում արքային, պինդ քաշում է լայնալիճ աղերը, երեքթեւյան նետը դիպցնում է նրա կրծքի տախտակին, եւ սլաքը շեշտակի թափ անցնելով նրա թիկունքի միջով, գետին է խրվում, այս կերպով՝ ճոխացած Տիտանյանը կործանվում, ընկնում է գետին եւ շունչը փչում է: Իսկ ամբոխն այս քաջության ահագին գործը տեսնելով փախչում է, ամեն մեկը իր երեսը դարձած կողմը: Այսքանը բավական լինի այս մասին:

Բայց ճակատամարտի տեղը շենցնում՝ դարձնում է դաստակերտ եւ անունը դնում է Հայք, հաղթական պատերազմի պաճառով. սրանից գավառն էլ մինչեւ այժմ կոչվում է Հայոց ձոր: Իսկ այն բլուրը, որտեղ Բելն ընկավ քաջ զորականների հետ՝ Հայկը կոչեց Գերեզմանք, որին այժմ ասում են Գերեզմանակ: Բայց Բելի դիակը, ասում է (Մար Աբաս), դեղերով զմռսելով՝ Հայկը հրամայում է տանել Հարք եւ թաղել մի բարձրավանդակ տեղում ի տես իր կանանց եւ որդիների: Իսկ մեր աշխարհը մեր նախնի Հայկի անունով կոչվում է Հայք:

Ծանոթություն

1. Արարադի երկիրը Այրարատյան նահանգը չէ, Հայաստանի կենտրոնում, այլ նրանից արեւմտահարավ ընկած երկիրը, Վանա լճից հարավ:

2. Ընդոծին: Հին նահապետական տունը, որպիսին եղել է Հայկինը՝ բաղկանում էր հարյուրավոր մարդկանցից: Սրանց մի մասը բուն Նահապետի արյունից էին, նրա մերձավոր կամ հեռավոր սերունդները, սրանք են իսկապես «տուն» կազմողները: Սրանց հետ նույն տանը ապրում էին, իբրեւ մշտական անդամներ՝ օտար արյունից մարդիկ, որոնք եւս ունեին իրենց սերունդները, բայց տան բուն անդամների իրավունքները չունեին. այսպես էին այդ տան մշակները, սպասավորները եւ այլն: Սրանք են, որ կոչվում են ընդոծին:

3. Բնագրում գրված է «եւ բոլոր աղխիւ», որ մենք թարգմանեցինք «բոլոր տունուտեղով»: «Աղխ» շատ լայն նշանակություն ունի. նա նշանակում է ընտանիքի ծառաները, անասունները, կահկարասիքը, մթերքները, որոնք տա-

Շարունակությունը՝ էջ 200

Հայոց պեսականությունը (սկզբնաղբյուրներ)

Հայոց պատմություն

Ղազար Փարպեցի

ԺԳ. Արտաշեսը երիտասարդ էր ու իգամոլ եւ թագավորությունը վարում էր շատ անառակություններով: Իսկ Հայոց նախարարները, չկարողանալով հանդուրժել Արտաշես թագավորի այս զեղխ ու մոլեկան վարքը, միահամուռ հավաքվեցին Հայոց մեծ քահանայապետ սուրբ Սահակի մոտ, որ Պարթեւաց տոհմից էր, որդին սուրբ Ներսեսի, եւ նրան ասացին. *«Այլեւս չենք կարող հանդուրժել թագավորի այսօրինակ անօրեն ու պիղծ գործերը, քանի որ լավ ենք համարում մեռնել, քան թե ամեն օր տեսնել ու լսել այսպիսի աղտեղություններ: Չենք կարող նաեւ խղճի մտոք հաղորդվել այն մեծ, պատվական ու երկնային խորհրդին՝ ամեն օր անմռունչ տեսնելով այսպիսի պղծագործություն, քանզի քեզնից ու քո նախնյաց վարդապետությունից գիտենք, որ մեղավոր են ոչ միայն գործողները, այլեւ նրանք, որ հանդուրժում են: Արդ՝ նախ, դու պարտավոր ես այսպիսի անտանելի աղետը վերացնելու հնար գտնել ու մեջտեղից հանել այնպիսի ամբարիշտ թագավորին, որն անհավատի պես բացահայտ արհամարհանքով ոտնատակ է տալիս սրբությունը եւ աներկյուղ կամակորությամբ գործում է աղտեղի անառակություններ»:*

Եվ այս խոսքերը լսելով, Հայոց սուրբ քահանայապետ Սահակը պատասխանեց, ասաց. *«Ոչ թե իբրեւ նոր մի բան ձեզնից լսած լինելով, գիտեմ ձեր այդ ասածները: Գիտեմ նաեւ, որ սրտի կսկիծով եք ասում այդ բաները: Եվ անհնար է ասել, թե հնարված բաներ են կամ ստույգ չեն ձեր պատմածները: Սակայն թե այժմ հոգեւոր մարդուն արժանի ի՞նչ հնարավորություն կա դրությունից ելնելու համար, այն պետք է բոլորը քննեն ու գտնեն»:*

Նրանք բոլորը միասին պատասխանեցին սուրբ կաթողիկոս Սահակին, ասացին. *«Մենք այդ վիճակից ոչ մի ելք կամ հնար չենք կարող գտնել, բացի Պարսից թագավորին բողոքելուց, որպեսզի նրան հեռացնի թագավորությունից, որը ժառանգելու արժանի չեղավ ինքը: Դրանից բացի ուրիշ ոչինչ ո՛չ իմանալ կարող ենք, ո՛չ կատարել: Բայց խնդրում ենք քեզ՝ այս խորհրդի մեջ միաբան լինել մեզ հետ: Եվ պետք չէ թագավորի այսպիսի անսուրբ ու պիղծ գործերին լինել կցորդ»:*

Իսկ Հայոց սուրբ հոգեւոր կաթողիկոս Սահակը, երբ այս բոլորը լսեց Հայոց նախարարներից եւ ստույգ իմացավ, որ նույն մտքի ու խորհրդի մեջ հաստատ են բովանդակ աշխարհի ավագները, խորասուզվեց մեծ տրտմության ու անմխիթար սգի մեջ: Նա Հայոց նախարարների առաջ անկեղծորեն արտասուք թափեց եւ շատ օրեր հրաժարվեց պատասխանել նրանց խոսքին: Նա մի սենյակի մեջ փակվեց: Միայն ողբի ու հեկեկոցի ձայներ էին լսում սենյակին մոտեցողները, որովհետեւ այդ այրն Աստծո՝ սուրբ հոգու զորությամբ իր իսկ աչքով տեսնում էր Հայոց աշխարհի վերջնական կործանումն ու կորուստը:

Իսկ շատ օրեր հետո նրա պալատում ծառայող եպիսկոպոսներից ոմանք, այլեւս չկարողանալով չլսել նրա առատաբուխ ու շնորհալի քարոզությունը, որ, Դավիթ մարգարեի խոսքի համաձայն, հոգեւոր ու իմաստուն աշակերտների համար քաղցր էր, քան մեղվի խորիսխը, - եւ այն սուրբ մարդու ուխտի պատվական երեցներից ու սարկավագներից մի քանիսը եւ Հայոց ազնվական ավագներից ոմանք, - համարձակվեցին ներս մտնել ու նրա հետ զրուցել աղերսական խոսքերով: Դրանով սակավ ինչ մխիթարված՝ սուրբ հայրապետը, համաձայն հոգեւոր այն գիտության ու խրատի, որ միացած պահում էր իր մեջ մանկությունից, առժամանակ լռեց, հանգստացավ:

Իսկ շատ օրեր անց Հայոց աշխարհի բոլոր ազատները, միահամուռ հավաքվելով նրա մոտ եւ նույն խոսքը կրկնելով Հայոց սուրբ կաթողիկոսի առաջ, խնդրեցին ու ստիպեցին, որ նա էլ միաբանի իրենց հետ: Սուրբը տեսնում էր, որ նրանք ոչ մի կերպ չեն հրաժարվել իրենց նախորդ առաջարկից ու վճռից, - ըստ որում օրըստօրե թագավորի աղետի գործերն առավել ու առավել շատանում էին՝ աճեցնելով իշխանների միաբանությունն իր կորստյան հարցում, - բարձրաձայն ողբալով այսպես դիմեց բոլորին. *«Թե ես, ասաց, եւ թե դուք, - որ իբրեւ Աստծուց կրթվածներ, ճշմարիտ եք խոսում, - այն մարդու թերությունը հանդուրժելով, արտասուքով ու թախանձանքներով պիտի դիմենք մեր ամենաողորմած փրկիչ Հիսուս Քրիստոսին եւ կորուսյալին գտնելու համար մի ելք փնտրենք, քանի որ, չնայած մեղավոր, ըստ ծննդյան ավազանի մեր եղբայրն է նա, մեր մարմինը: Հիշեցեք վարդապետությունը սուրբ առաքյալ Պողոսի (1 (17)), որ ավանդելով սովորեցրեց ձեզ հոգեւոր հայրը ձեր՝ սուրբ քահանայապետ Գրիգորը, երբ ասաց. «Թե վշտանում է որեւէ անդամը, վշտանում են բոլոր անդամները նրա հետ, եւ թե փառավորվում է մեկ անդամը, նրա հետ խնդում են անդամները բոլոր» (2): Պետք է հիշել ու մտաբերել սուրբ Գրիգորի վշտերն ու նեղությունները, բանտերն ու կապանքները, չմոռանալով այն պաղատանքներն ու աղոթքները, որ համայն աշխարհի համար ուղղեց Աստծուն եւ ստացավ՝ ինչ քանկ է. սուրբ հոգու շնորհիվ անհավատությունից բոլորին հավատացյալներ դարձրեց, դեւերի մոլորությունները հեռացրեց ձեզանից ու հալածեց, սերմանեց աստվածապաշտության ճշմարիտ հավատը եւ ծաղկեցրեց ձեր մեջ: Եվ դուք էլ նրա օրինակով պարտավոր եք խնդրել ողոր-*

Հայոց պեսականությունը (սկզբնաղբյուրներ)

մություն մեղավոր անդամի համար եւ ոչ թե անօրենների ձեռքը մատնելով՝ ծաղր ու ծանակի ենթարկել տաք մեր հավատի սուրբ խորհուրդը: Հիշեցե՛ք իմ եւ ձեր սուրբ հորը եւ վարդապետին, որ գիշեր ու ցերեկ հառաչելով եւ անդադար հայցելով ամեն ինչի արարիչ Քրիստոսի գութը՝ վերստին մարդկային բնության դարձրեց անասնական բնություն ու կերպարանք ստացածին: Եվ դուք՝ նրան աշակերտած հոգեւոր վարդապետների միաբանությամբ, բոլոր տղամարդիկ ու կանայք, ծերեր ու երիտասարդներ, արտասվալից աղաչանքով հաշտեցրե՛ք ամենակարող Աստծուն, որի համար հնարավոր է ամեն բան, եւ ոչինչ չի տկարանա նրա զորության ահեղ հրամանների առաջ: Նա մարդասիրաբար կվճռի մեզ ամենից դժվար թվացող հարցերը: Այն անսուտ Աստվածն էր, որ իսկապես վճռեց միամիտ ու անթերահավատ աղոթողների խնդիրքը՝ ասելով. «Ուր երկու-երեք մարդ են հավաքված ինձ համար, ամեն ինչ, որ նրանք խնդրեն իմ Հորից, կտրվի նրանց» (3): Իսկ, արդ, եթե Աստված երկու-երեք աներկմիտ աղոթողների հայցածներն է կատարում, ապա որքա՜ն ավելի արագ կկատարի այսքան բազմության խնդրանքը, մանավանդ, եթե այդ խնդրանքը հղվի անձանձրույթ, ջերմ հառաչանքներով եւ անթերահավատ հույսով: Ինչո՞ւ չպետք է առավել մեծ գործեր կատարի, քան հայցվածներն են»:

«Իսկ այն առթիվ, որ ասում եք՝ միաբանեմ ձեզ հետ, քա՛վ լիցի, որ ես մատնիչ լինեմ մեր ճշմարիտ հավատին եւ իմ հոտի մոլորյալ ոչխարը հանձնեմ անհավատներին՝ ծանակելու: Որովհետեւ, թեպետ եւ մեղավոր է, սակայն սուրբ ավազանի վրա դրոշմված է ծնունդով, տեղյակ է փրկության խնդրին, լսել է կենաց Ավետարանի քարոզության խոսքը: Արդ, եթե իմ եկեղեցու վիրավոր ոչխարը տանելու լիներ առողջ բժշկի մոտ, կշտապեի եւ չէի հապաղի: Իսկ ամենախտալից ատյանին մատնել իմ հիվանդացած հոգեւոր որդո՞ւն՝ երբեք հանձն չեմ առնի: Եթե հավատացյալ թագավորի մոտ պետք լիներ տանել այսպիսի հանդիմանության համար, թերեւս համարձակվեի՝ կորցրածը գտնելու հույսով: Բայց մեղքերի համար հավատացյալներին կշտամբել անհավատների առաջ՝ չեմ համաձայնի, քանի որ ես միշտ քարոզել եմ Պողոսի այն բողոքը, որ ասում է. «Թե ձեզնից մեկը գործ ունենա իր ընկերոջ հետ, կհամարձակվի՞ դատվել անօրենների առաջ եւ ոչ թե սրբերի առաջ: Չգիտե՞ք, որ սրբերն են աշխարհը դատում: Եվ եթե ձեզնով դատվի այս աշխարհը, ապա արժանի չեք անարգ ատյաններին: Չգիտե՞ք, որ հրեշտակներին ենք դատում, ո՛ւր մնաց թե երկրավորներին: Եթե երկրավոր ատյաններն ընդունենք, ապա անարգներին կարգած կլինենք եկեղեցու դատավորներ: Ձեր ամոթի համար եմ ասում: Եվ այսպես, - ասում է, - ձեր մեջ չկա՞ մի իմաստուն մարդ, որ կարողանա իր եղբոր արդար դատաստանը տեսնել, որ եղբայրը դատվում է եղբոր հետ, եւ այն էլ անհավատների մեջ» (4): Եվ արդ, ես, որ շատերին եմ դաստիարակել, ինչո՞ւ ինձ չդաստիարակեմ: Բայց լավ է՝ ես մեռնեմ, քան թե անարժան գործի համար հավատացյալներին մատնեմ անօրենների ձեռքը: Քանի որ, չնայած եւ պոռնիկ լինի, իր անձի վրա Քրիստոսի հոտի կնիքն է կրում: Անառակացել է մարմնով, բայց անհավատ ու հեթանոս չէ: Շվայտ կյանք է վարում, բայց կրակապաշտ չէ: Տկարացել է կանանց հանդեպ, բայց չի ծառայում տարերքին: Մեկ ախտով հիվանդացել է, բայց վարակված չէ ամեն տեսակ ախտով, ինչպես ամբարիշտը: Եվ ինչպե՞ս սակավ մեղք ունեցողին մատնենք ամենաամբարիշտներին, որ տանեն-սպանեն: Քավ լիցի, որդիք, մի՛ ունեցեք այդպիսի դիտավորություն եւ, ձեր նախնիներից ոմանց պես, մի՛ ջանացեք կորցնել բնիկ ձեր տերերին»:

Այս եւ սրանից էլ ավելի խոսք ու խրատ՝ անձանձիր, արտասուքով ու աղերսանքներով խոսեց սուրբ կաթողիկոսը Հայոց ավագանու առաջ: Սակայն չկարողացավ նրանց հեռացնել նախկին միաբանությունից ու խորհրդից, որ դրել էին իրենց մտքներում: Որովհետեւ եկել, նրանց էր վրա հասել սուրբ Ներսեսի անեծքը, թե նրանք ընկնելու են հեթանոսների չար ծառայության լծի տակ... Եվ քանի գործը գլուխ չէր բերել, չէր հանգստանում սուրբ կաթողիկոս Սահակը:

Եվ նրանք բոլորը միաբան պատասխան տվին սուրբ քահանայապետին, ասացին. *«Դու չլսեցիր մեր խոսքը եւ մեր միաբանությունից քո անձը հեռացրիր: Իմացած եղիր, ինչպես մեր մտքերում դրել ենք, որ սա այլեւս թագավոր չլինի մեզ վրա, խոստանում ենք, որ դու էլ այդպես երկար քահանայապետ չես մնա մեր աշխարհի վրա»:*

Եվ այսպես ասելով Սահակ հայրապետի առաջ, եւ այդ սրբի խրատի վրա սաստիկ զայրացած՝ Հայոց աշխարհի ավագներն ու տանուտերները ելան, այլեւս չկամեցան մնալ քահանայապետ Սահակի մոտ, քանզի բոլորեքյան շրջափակված ու պաշարված էին երանելի հայրապետ Ներսեսի անեծքով՝ ամենայնի կորստյան խորհուրդի մեջ:

Ծանոթություն

1 (17). Ղազարը չի ասում, թե իրեն ի՛նչ աղանդի մեջ են մեղադրում: Եվ ուսումնասիրողներից ոմանք հակված են կարծելու, թե ինչպես ինքը՝ Ղազարը, այնպես էլ Մովսես Խորենացին, իբրեւ հունական կրթություն ստացած եւ առհասարակ ամեն հունականի նկատմամբ ավերապահ սեր ունեցող մարդիկ, եղել են քաղկեդոնության կողմնակիցներ եւ դրա համար էլ հալածվել են: Այստեղ մանրամասների մեջ մտնելն ավելորդ համարելով՝ ասենք, որ քաղկեդոնության դեմ Հայոց եկեղեցին բուռն պայքարի մեջ մտավ VI դ. առաջին քառորդից սկսած: Իսկ Քաղկեդոնի ժողովին (451թ.) մեր հոգեւոր առանջնորդները ո՛չ մասնակցեցին, ո՛չ էլ սկզբնապես առհասարակ նրա հետ որեւէ կապ կարող էին ունենալ, որովհետեւ մինչդեռ տիեզերական եկեղեցու սրբազան հայրերը Քրիստոսի բնության հարցը մեջտեղ քաշելով անլցնելի ճեղք էին ստեղծում նույն եկեղեցու տարբեր թեւերի միջեւ, Հայաստանը կենաց ու մահու պատերազմ էր մղում քրիստոնեական հավատի համար եւ քրիստոնեությունն էր պաշտպանում Պարսից հրեշավոր հարձակումներից:

Սակայն եւ այնպես Ղազարի նամակում կան իրարամերժ տվյալներ, որոնք հիմք կարող էին դառնալ կրոնական վեճերի: Եթե նա Արիոս Ալեքսանդրացուն, Նեստոր Անտիոքացուն եւ նրանց նմաններին կորստյան ճանապարհի ուղեկիցներ է համարում, ապա դրանց շարքում է դնում նաեւ Եվտիքես Կոստանդնուպոլսեցուն, որը Քրիստոսի մեկ բնության համառ քարոզիչն էր եւ հալածվեց Կ.Պոլսի երկաբնակ մոլեռանդների կողմից (Մաղ. Օրմանյան, Ազգապատում, պարագրաֆ 333):

2. Ա. Կորնթ.., ԺԲ, 26:

3. Մատթէոս, ԺԸ, 20:

4. Ա. Կորնթ., Զ. 1-6:

Հայաստանի երրորդ հանրապետություն

Հայաստանի Հանրապետության քարտեզը



ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐՈՒՄԱՆՈՒԹՅՈՒՆ

Տարածքը - 29 743 կմ²
Բնակչության թիվը - 3 219,2 հազ. մարդ (առ 01.01.06 թ.)
Նշանակալ. - 1 554,1 հազ. մարդ
Այլն - 1 665,1 հազ. մարդ
Մայրաքաղաքը - Երևան
Բնակչության խտությունը - 108 մարդ/կմ²
Մարզերի թիվը - 10 և մայրաքաղաքային կարգավիճակ ունեցող գ. Երևանը
Քաղաքների թիվը - 49
Քաղաքային համայնքների թիվը - 49
Քաղաքային բնակչության թիվը - 2 067,0 հազ. մարդ
Գյուղերի թիվը - 950
Գյուղական համայնքների թիվը - 866
Գյուղական բնակչության թիվը - 1 154,2 հազ. մարդ

ՎԱՐՉԱՅԻՆ ԲԱԺԱՆՈՒՄ

Մարզ	Տարածք (հազ. կմ²)	Բնակչ. (հազ. մարդ)	Համ. թիվը	Մարզկենտրոն
1. Արարատի	2,8	139,5	114	Արտաշատ
2. Արարատ	2,1	274,2	97	Արարատ
3. Արմավիր	1,2	279,2	97	Արմավիր
4. Գեղարքունիք	5,3	239,4	92	Գավառ
5. Լոռի	3,8	283,4	113	Վանաձոր
6. Կոտայք	2,1	275,1	67	Հրազդան
7. Շիրակ	2,7	281,4	119	Գյումրի
8. Սյունիք	4,5	153,0	109	Կապան
9. Վայոց Ձոր	2,3	55,8	44	Եղեգնաձոր
10. Տավուշ	2,7	134,4	62	Իջևան
գ. Երևան	0,2	1 103,8	12	
Ընդամենը	29,7	3 219,2	926	

ԹՎԱՆԱՇՆԵՐ

Անվանում	Բնակչության (հազ. մարդ)	Անվանում	Բնակչության (հազ. մարդ)
1. Արարատ	45,0	26. Գավառ	45,6
2. Աշտարակ	4,8	27. Հրազդան	52,8
3. Աբովյան	16,2	28. Ճամբարակ	7,4
4. Արթիկ	2,4	29. Մասիս	21,8
5. Աշտարակ	2,4	30. Մարտունի	5,8
6. Աշտարակ	20,7	31. Մարտունի	11,9
7. Արտաշատ	6,6	32. Մեղրի	10,2
8. Արարատ	20,6	33. Մեղրի	4,8
9. Արմավիր	17,3	34. Նորմալիցիոնի	5,5
10. Արմավիր	32,3	35. Նոր Հաճն	10,2
11. Արտաշատ	25,1	36. Ճամբարակ	0,7
12. Մեղրի	8,7	37. Չարենցավան	24,6
13. Թալինի	8,3	38. Մեղրաձոր	5,3
14. Գավառ	28,1	39. Սիսիան	16,7
15. Գյումրի	148,3	40. Սոչիանի	15,1
16. Դիլիջան	23,2	41. Ստեփանավան	16,0
17. Դաստակերտ	0,3	42. Սևան	23,6
18. Դիլիջան	15,8	43. Վաղարշապատ	56,7
19. Եղեգնաձոր	8,2	44. Վայք	5,9
20. Եղվարդ	12,0	45. Վանաձոր	105,5
21. Երևան	1 103,8	46. Վարդենիս	12,7
22. Թալին	5,7	47. Վեդի	13,2
23. Թեղուտի	1,9	48. Տաշիր	8,9
24. Իջևան	20,4	49. Փարաքար	8,4
25. Ծաղկաձոր	1,6		

Հայաստանի երրորդ հանրապետություն

...Եվ մեր հողը վերսկսին օծվեց անկախության մյուռոնով (1988-91թթ.)

Հայաստանի երրորդ հանրապետություն

ՀՌՉԱԿԱԳԻՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ՝

արտահայտելով Հայաստանի ժողովրդի միասնական կամքը, գիտակցելով իր պատասխանատվությունը հայ ժողովրդի ճակատագրի առջեւ համայն հայության իղձերի իրականացման եւ պատմական արդարության վերականգնման գործում, ելնելով մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի սկզբունքներից եւ միջազգային իրավունքի հանրաճանաչ նորմերից, կենսագործելով ազգերի ազատ ինքնորոշման իրավունքը, հիմնվելով 1989 թվականի դեկտեմբերի 1-ի «Հայկական ԽՍՀ եւ Լեռնային Ղարաբաղի վերամիավորման մասին» Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի եւ Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհրդի համատեղ որոշման վրա, զարգացնելով 1918 թվականի մայիսի 28-ին ստեղծված անկախ Հայաստանի Հանրապետության ժողովրդավարական ավանդույթները, խնդիր դնելով ժողովրդավարական, իրավական հասարակարգի ստեղծումը,

ՀՌՉԱԿՈՒՄ է

անկախ պետականության հաստատման գործընթացի սկիզբը:

1. *Հայկական ԽՍՀ-ն վերանվանվում է Հայաստանի Հանրապետություն, կրճատ՝ Հայաստան:*
   Հայաստանի Հանրապետությունն ունի իր դրոշը, զինանշանը եւ հիմնը:
2. *Հայաստանի Հանրապետությունը ինքնիշխան պետություն է՝ օժտված պետական իշխանության գերակայությամբ, անկախությամբ, լիիրավությամբ:*
   Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում գործում են միայն Հայաստանի Հանրապետության սահմանադրությունը եւ օրենքները:
3. *Հայոց պետականության կրողը Հայաստանի Հանրապետության ժողովուրդն է, որն իր իշխանությունը իրագործում է անմիջականորեն եւ ներկայացուցչական մարմինների միջոցով՝ Հայաստանի Հանրապետության սահմանադրության եւ օրենքների հիման վրա: Հանրապետության ժողովրդի անունից հանդես գալու իրավունքը պատկանում է բացառապես Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդին:*
4. *Հայաստանի Հանրապետության տարածքում բնակվող բոլոր քաղաքացիների համար սահմանվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն:*
   Արտերկրի հայությունը Հայաստանի Հանրապետության քաղաքացիության իրավունք ունի:
   Հայաստանի Հանրապետության քաղաքացիները գտնվում են նրա պաշտպանության եւ աջակցության ներքո:
   Հայաստանի Հանրապետությունը ապահովում է իր քաղաքացիների ազատ ու իրավահավասար զարգացումը՝ անկախ ազգությունից, ռասայական պատկանելությունից եւ դավանանքից:
5. *Հայաստանի Հանրապետությունը իր անվտանգությունը եւ սահմանների անձեռնմխելիությունը ապահովելու նպատակով ստեղծում է Գերագույն խորհրդին ենթակա սեփական զինված ուժեր, ներքին զորքեր, պետական եւ հասարակական անվտանգության մարմիններ:*
   Հայաստանի Հանրապետությունը ունի ԽՍՀՄ սպառազինության իր մասնաբաժնի իրավունքը:
   Հայաստանի Հանրապետությունն ինքն է որոշում իր քաղաքացիների զինվորական ծառայության կարգը:
   Այլ երկրների զորամիավորումները, նրանց ռազմական բազաները եւ շինությունները կարող են տեղաբաշխվել Հայաստանի Հանրապետության տարածքում միայն նրա Գերագույն խորհրդի որոշմամբ:
   Հայաստանի Հանրապետության զինված ուժերը կարող են օգտագործվել միայն նրա Գերագույն խորհրդի որոշմամբ:
6. *Հայաստանի Հանրապետությունը, որպես միջազգային իրավունքի սուբյեկտ, վարում է անկախ արտաքին քաղաքականություն, անմիջական հարաբերություններ է հաստատում այլ պետությունների, ԽՍՀՄ ազգային-պետական կազմավորումների հետ, մասնակցում է միջազգային կազմակերպությունների գործունեությանը:*
7. *Հայաստանի Հանրապետության ազգային հարստությունը՝ հողը, ընդերքը, օդային տարածությունը, ջրային եւ այլ բնական պաշարները, տնտեսական, մտավոր, մշակութային կարողությունները, նրա ժողովրդի սեփականությունն է: Դրանց տիրապետման, օգտագործման եւ տնօրինման կարգը որոշվում է Հայաստանի Հանրապետության օրենքներով:*
   Հայաստանի Հանրապետությունը ունի ԽՍՀՄ ազգային հարստության, այդ թվում՝ ոսկու պաշարների, ալմաստի եւ վալյուտային ֆոնդերի մասնաբաժնի իրավունք:
8. *Հայաստանի Հանրապետությունը սեփականության բազմաձեւության հիման վրա որոշում է իր տնտեսավարման սկզբունքները եւ կարգը, հիմնում սեփական դրամ, ազգային բանկ, ֆինանսավարկային համակարգ, հարկային եւ մաքսային ծառայություններ:*
9. *Հայաստանի Հանրապետությունը իր տարածքում ապահովում է՝*
   խոսքի, մամուլի, խղճի ազատություն.
   օրենսդիր, գործադիր եւ դատական իշխանությունների տարանջատում.
   բազմակուսակցություն, կուսակցությունների իրավահավասարություն, իրավապահ մարմինների եւ զինված ուժերի ապաքաղաքականացում:
10. *Հայաստանի Հանրապետությունը ապահովում է հայերենի, որպես պետական լեզվի, գործառությունը հանրապետության կյանքի բոլոր ոլորտներում, ստեղծում կրթու-*

Հայաստանի երրորդ հանրապետություն

թյան, գիտության եւ մշակույթի սեփական համակարգ:

11. *Հայաստանի Հանրապետությունը սատար է կանգնում 1915 թվականին Օսմանյան Թուրքիայում եւ Արեւմտյան Հայաստանում հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործին:*
12. *Սույն Հռչակագիրը հիմք է ծառայում Հայաստանի Հանրապետության սահմանադրության մշակման, իսկ գործող սահմանադրության մեջ փոփոխությունների եւ լրացումների կատարման, պետական մարմինների գործունեության, հանրապետության նոր օրենսդրության մշակման համար:*

Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի նախագահ՝ Լ. Տեր-Պետրոսյան
Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի քարտուղար՝ Ա. Սահակյան
23 օգոստոսի 1990 թվականի, քաղ. Երեւան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ-Ի ՎԵՐԱՆՎԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմնվելով «Հայաստանի անկախության մասին» հռչակագրի 1-ին հոդվածի վրա, Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության Գերագույն խորհուրդը որոշում է.

1. *Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունը վերանվանել Հայաստանի Հանրապետություն, կրճատ՝ Հայաստան:*
2. *Ներկայիս գումարման Գերագույն խորհուրդը համարել Հայաստանի Հանրապետության առաջին գումարման Գերագույն խորհուրդ:*
3. *Սույն օրենքը կիրարկել ընդունման պահից:*

Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահ՝ Լ. Տեր-Պետրոսյան
Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի քարտուղար՝ Ա. Սահակյան
24 օգոստոսի 1990 թվականի, քաղ. Երեւան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀՌՉԱԿՈՒՄԸ

ԷԴԻԿ ՄԻՆԱՍՅԱՆ

Ա. Հայաստանի անկախության հռչակագիրը

1990թ. օգոստոսի 23-ին Հայաստանի Գերագույն խորհրդի առաջին նստաշրջանը հանգամանալի քննարկումներից հետո ընդունեց «Հռչակագիր Հայաստանի անկախության մասին» փաստաթուղթը, որով դրվեց Հայաստանի անկախացման գործընթացի սկիզբը (141):

ՀԽՍՀ Գերագույն խորհրդի օգոստոսի 4-ի որոշմամբ պատգամավորներից ստեղծվեց Հայաստանի անկախության հռչակագրի նախապատրաստման 15 մարդուց բաղկացած հանձնաժողով (142): Հռչակագրի մշակման հանձնաժողովի գործունեության առաջին օրերից սկսած Հայաստանի տարբեր քաղաքական ուժերից Գերագույն խորհրդին ներկայացվեց հռչակագրի 5 տարբերակ: Հանձնաժողովի նախաձեռնությամբ փաստաթղթի կազմման աշխատանքներին ներգրավվեցին հումանիտար ոլորտի մասնագետներ: Շուտով քաղաքական տարբեր ուժերի կողմից ներկայացված տարբերակների թիվը հասավ մեկ տասնյակի (143): Գերագույն խորհրդի հանձնաժողովի քննարկմանը ներկայացվեցին ՀԿԿ կենտկոմի, «Սահմանադրական իրավունք» միության խորհրդի, Հայաստանի Հանրապետական կուսակցության եւ մի շարք այլ քաղաքական կազմակերպությունների մշակած հռչակագրի նախագծերը (144): Ներկայացված բոլոր նախագծերն էլ ունեին որոշակի ընդհանրություններ, որոնք կարելի է բաժանել երկու խմբի:

Առաջին խմբի տարբերակները մեծամասամբ կազմված էին հուզական հենքով, անցյալի հրապարակախոսական վերլուծության հիման վրա եւ առաջարկում էին պետահիրավական բնույթի միջոցառումներ:

Երկրորդ խմբի տարբերակները աչքի էին ընկնում իրավագիտական նկատելի մակարդակով, քաղաքական կոռեկտությամբ եւ առաջարկվող վերափոխումների հիմնավորվածությամբ ու արմատական բնույթով (145):

Հայաստանի երրորդ հանրապետություն

Հանրապետության հանրության լայն շրջաններում ավելի մեծ հեղինակություն էին վայելում Հայաստանի քաղաքական կարգավիճակի մասին ավելի իրատեսական ու ժամանակակից պահանջներին ավելի համապատասխանող երկրորդ խմբի տարբերակները, որոնք այնպես էին կազմված, որ ԽՍՀՄ-ում քաղաքական իրավիճակի ցանկացած կտրուկ ու անկանխատեսելի փոփոխության դեպքում անգամ հանրապետության իշխանություններին հնարավորություն կտային վարելու անկախացման գծից չշեղվող ճկուն քաղաքականություն (146):

Հայաստանի լիակատար քաղաքական ինքնորոշումը հիմնականում պաշտպանում էր Հայաստանի Գերագույն խորհրդի արմատական ժողովրդավարական թեւը՝ իշխանության համար պայքարում արդեն առաջին հաղթանակները տարած ՀՀՇ-ի գլխավորությամբ: Նրանք բացառում էին ամենաչնչին զիջումներն անգամ կենտրոնին:

1990թ. օգոստոսի 7-ին հռչակագիրը կազմող Գերագույն խորհրդի հանձնաժողովը, հիմք ընդունելով հիմնական խնդիրների շուրջ, առանձին դեպքերում նույնիսկ իրար հակասող 8 տարբերակները, մշակեց, ամբողջացրեց ու Գերագույն խորհրդի քննարկմանը ներկայացրեց հռչակագրի երեք նոր տարբերակ (147): Դրա հիման վրա էլ կազմվեց հռչակագրի վերջնական տարբերակը:

1990թ. օգոստոսի 20-ին հանձնաժողովը Գերագույն խորհրդին նրկայացրեց միասնական տարբերակը (148): Քննարկման ընթացքում բանավեճ ծավալվեց Հայաստանի անկախ պետականության հռչակման փաստի իրավաբանական ձեւակերպման շուրջ: Տեսակետների բախումն այն խնդրի վերաբերյալ էր, արդյոք Գերագույն խորհուրդը հռչակում է անկախ պետականության հաստատման, թե՞ վերականգնման գործընթացի սկիզբը, կամ թե ճանաչո՞ւմ է Հայաստանի ինքնիշխանությունը նորացված ֆեդերացիայի կազմում, թե՞ ոչ, եւ այլն (149):

Գերագույն խորհրդի 1990թ. օգոստոսի 23-ի նիստում, երբ ընդամենը հաշված ժամեր էր մնացել հռչակագրի պաշտոնական ընդունմանը, բանավեճեր էին ընթանում փաստաթղթի վերջնական անվանման հարցի շուրջ: Շրջանառվում էր վերնագրի 5 տարբերակ, որոնց քվեարկության արդյունքում ձայների մեծամասնությամբ (159 կողմ) հայ ժողովրդի համար բախտորոշ այդ փաստաթուղթը անվանվեց «Հռչակագիր Հայաստանի անկախության մասին» (150):

Անհրաժեշտ է նշել, որ հռչակագրի քննարկումների ընթացքում բավական վիճահարույց հարց էր համաշխարհային հանրությանը հասցեագրված փաստաթղթում հայերի ցեղասպանության ճանաչման ու դատապարտման մասին դրույթը ներառելու խնդիրը: Պատգամավորները տարակարծիք էին որոշ ձեւակերպումների կապակցությամբ: Կային ուժեր՝ ՀՀՇ-ն ներկայացնող պատգամավորները՝ Լ. Տեր-Պետրոսյանի ղեկավարությամբ, որոնք ելնելով իրենց քաղաքական սկզբունքներից, ընդհանրապես դեմ էին հռչակագրում ցեղասպանության հարցը որեւէ կերպ արծարծելուն: Սակայն մի ստվար պատգամավորների խումբ՝ Ա. Նավասարդյան, Ի. Մուրադյան, Հ. Բաբուխանյան, Ռ. Համբարձումյան եւ այլն՝ Հ. Սիմոնյանի ղեկավարությամբ պահանջում էին բացառիկ պատմական նշանակության այդ փաստաթղթում անպայման արձանագրել ցեղասպանության փաստը (151):

Ի վերջո, Հայաստանի Գերագույն խորհրդի նիստում հայոց ազգային արժեքներին հավատարիմ քաղաքական ուժերի ճնշման տակ, որոշվեց ցեղասպանության մասին դրույթն ընդգրկել հռչակագրում: Ձայների մեծամասնությամբ հավանության արժանացած այս դրույթն իր տեղը գտավ հռչակագրի 11-րդ կետում, որտեղ արձանագրված է. «Հայաստանի Հանրապետությունը սատար է կանգնում 1915թ. Օսմանյան Թուրքիայում եւ Արեւմտյան Հայաստանում հայերի ցեղասպանության միջազգային ճանաչման գործին» (152): Այս փաստը հանրապետությունում իշխանության եկած ՀՀՇ-ի դեմ Գերագույն խորհրդում ընդդիմության առաջին դրսեւորումն էր:

1990թ. օգոստոսի 23-ին Գերագույն խորհրդի հերթական նիստում հռչակագիրը վերջնական տեսքով դրվեց քվեարկության, որի արդյունքում 183 կողմ, 2 դեմ, 2 ձեռնպահ ձայներով այն ընդունվեց (153):

Հայաստանի Գերագույն խորհրդի քարտուղար Ա.Սահակյանը հռչակագրի ընդունումից անմիջապես հետո արտահայտելով իր տեսակետը՝ նշեց, որ «հռչակագիրը, իրոք, պատմական, քաղաքական մեծ նշանակություն ունեցող փաստաթուղթ է, որն ընդունվեց սուր բանավեճի պայմաններում» (154):

Հաջորդ օրը ՀՀ առաջին գումարման Գերագույն խորհրդի նիստում պատգամավորները, կրկին անդրադառնալով հռչակագրին, վերջնական խմբագրումից հետո դրեցին նոր քվեարկության, որն ընդունվեց 192 կողմ, 2 ձեռնպահ ձայներով: Հենց այդ նիստում տեղի ունեցավ խորհրդանշական հայտնի իրադարձություն, երբ Հայաստանի անկախության մասին հռչակագրի վերջնական տեքստը մեծ հանդիսավորությամբ հրապարակեց Գերագույն խորհրդի պատգամավոր Արամ Մանուկյանը՝ Հայաստանի առաջին Հանրապետության հիմնադրի անվանակիցը: Խորհրդարանը արտահայտելով Հայաստանի ժողովրդի միասնական կամքը, ելնելով Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի սկզբունքներից եւ միջազգային իրավունքի հանրաճանաչ նորմերից, կենսագործելով ազգերի ազատ ինքնորոշման իրավունքը, հիմնվելով 1989 թվականի դեկտեմբերի 1-ի «Հայկական ԽՍՀ-ի եւ Լեռնային Ղարաբաղի վերամիավորման մասին» Հայաստանի Գերագույն խորհրդի եւ Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհրդի համատեղ որոշման վրա, զարգացնելով 1918 թվականի մայիսի 28-ին ստեղծված անկախ Հայաստանի Հանրապետության ժողովրդավարական ավանդույթները եւ խնդիր դնելով ժողովրդավարական, իրավական հասարակարգի ստեղծումը, հռչակում էր անկախ պետականության հաստատման գործընթացի սկիզբը:

Հռչակագիրը, որ կարեւոր իրավական փաստաթուղթ էր դեպի անկախություն տանող ճանապարհին եւ նախանշում էր Հայաստանի քաղաքական, տնտեսական, մշակութային զարգացման ուղիները, բաղկացած էր 12 կետից:

Հռչակագրի քաղաքական բաժնում նշվում էր, որ ՀԽՍՀ-ն վերանվանվում է Հայաստանի Հանրապետություն (կրճատ՝ Հայաստան, այսինքն՝ այնպես, ինչպես հանրապետությունը կոչվել էր 1918 թվականին): Այսպիսով, Հայաստանի պատմության մեջ սկսվում էր երրորդ

Հայաստանի երրորդ հանրապետություն

հանրապետության շրջանը (առաջինը՝ 1918-1920, երկրորդը՝ 1920-1991): Կարեւոր է նշել, որ թեեւ Խորհրդային Հայաստանը դեռեւս ԽՍՀՄ կազմում էր եւ չէր օգտվում իրական պետական անկախությունից, բայց այդ շրջանում ձեռք բերված հաջողությունների հիմքի վրա էր, որ հնարավոր եղավ կյանքի կոչել երրորդ հանրապետությունը:

Հռչակագրի հատուկ հոդվածով ընդունվում էր հանրապետության օրենքների գերակայությունը ԽՍՀՄ օրենքների նկատմամբ: Եթե ԽՍՀՄ տվյալ օրենքը չէր հաստատված Հայաստանի Գերագույն խորհրդի կողմից, ապա այն չէր կարող գործել հանրապետությունում:

Փաստաթղթում ամրագրվում էր, որ Հայաստանն ինքնիշխան պետություն էր՝ օժտված պետական իշխանության գերակայությամբ, անկախությամբ, լիիրավությամբ: Նրա ամբողջ տարածքում գործելու էին միայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը եւ օրենքները: Այստեղ բնակվող բոլոր քաղաքացիների համար սահմանվում էր Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն, որի իրավունքը պետք է ունենար նաեւ արտերկրի հայությունը: Պետությունն ապահովելու էր իր քաղաքացիների ազատ ու իրավահավասար զարգացումը՝ անկախ ազգությունից, ռասայական պատկանելությունից եւ դավանանքից:

Պետական խորհրդանիշներ հաստատվեցին Հայաստանի առաջին հանրապետության դրոշն ու զինանշանը: Հայաստանը պետք է վարեր անկախ ու ակտիվ արտաքին քաղաքականություն, ունենար իր դիվանագիտական ներկայացուցչությունները տարբեր երկրներում:

Փաստաթղթի տնտեսական բաժնում նշվում էր, որ Հայաստանի տարածքում հողը, նրա ընդերքը, օդային տարածությունը, ջրային եւ այլ բնական պաշարները համարվում են հայ ժողովրդի սեփականությունը: Երկրի տնտեսության հիմքում պետք է ընկած լինեն մասնավոր սեփականատիրական եւ ազատ շուկայական հարաբերությունները: Հողը, իբրեւ մասնավոր սեփականություն, պետք է տրվեր գյուղացուն: Ձեռնարկությունների մի մասը ենթակա էր սեփականաշնորհման:

Հայաստանը սեփականության բազմաձեւության հիման վրա որոշելու էր իր տնտեսավարման սկզբունքները եւ կարգը, հիմնելու էր սեփական դրամ, ազգային բանկ, ֆինանսավարկային համակարգ, հարկային եւ մաքսային ծառայություններ:

Հատուկ կետով արձանագրվում էր, որ Հայաստանի Հանրապետությունն իր անվտանգությունը եւ սահմանների անձեռնմխելիությունն ապահովելու նպատակով ստեղծելու էր սեփական զինված ուժեր, ներքին զորքեր, պետական եւ հասարակական անվտանգության մարմիններ: Նա պետք է ունենար ԽՍՀՄ սպառազինության իր մասնաբաժնի իրավունքը, եւ ինքն էր որոշելու իր քաղաքացիների զինվորական ծառայության կարգը:

Մշակութային բաժնում հատուկ ուշադրություն էր հատկացվում հայերենի, իբրեւ պետական լեզվի, կիրառման հարցին: Հանրապետությունում ներքին ամբողջ գործավարությունը պետք է կատարվեր միայն հայերենով:

Հռչակագիրն արտոնում էր մարդու իրավունքների հարգում, խղճի, կուսակցությունների, ժողովների, մամուլի ազատություն: Վերականգնվում էին Հայ առաքելական եկեղեցու իրավունքները: Հռչակագիրը հաստատում էր Հայաստանի վճռականությունը՝ Արցախն իր տարածքի անբաժանելի մասը ճանաչելու վերաբերյալ: Մինչեւ նոր սահմանադրության (հիմնական օրենքի) ընդունումը հռչակագիրը ծառայելու էր իբրեւ ծրագրային փաստաթուղթ:

Հռչակագիրը միաժամանակ հիմք էր նոր օրենսդրության, ՀՀ սահմանադրության մշակման, ինչպես նաեւ Խորհրդային Հայաստանի գործող սահմանադրության մեջ փոփոխությունների ու լրացումների կատարման համար:

բ. Հայաստանի Հանրապետությունը՝ ինքնիշխան պետություն

ԽՍՀՄ-ի փլուզումը

1989-91 թվականներին Խորհրդային Միության ծայրամասերում առաջացան ճգնաժամի, ազգամիջյան հակասությունների, լարվածության մի շարք օջախներ, որոնք գնալով վերածվեցին անկախության համար պայքարի կենտրոնների: Դրանցից առաջիններից մեկը Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ առաջացած հակասություններն էին՝ կապված Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի հետ: Մյուսները Մերձբալթյան հանրապետություններն էին՝ Լատվիան, Լիտվան եւ Էստոնիան, ինչպես նաեւ հարավկովկասյան տարածաշրջանը՝ գլխավորապես Վրաստանի, Աբխազիայի ու Հարավային Օսեթիայի միջեւ եղած հակասություններով: Այս ամենի եւ մի շարք այլ պատճառներով 1991թ. գարնանը ԽՍՀՄ-ը գտնվում էր փլուզման եզրին: Երկրի ղեկավարությունը ջանքեր էր գործադրում միությունը փրկելու համար:

Կանխազգալով ԽՍՀՄ մոտալուտ փլուզման վտանգը՝ Խորհրդային Միության առաջին նախագահ Մ. Գորբաչովը դեռեւս 1990թ. ապրիլի 3-ին ստորագրեց «ԽՍՀՄ-ի կազմից միութենական հանրապետության դուրս գալու հետ կապված հարցերի լուծման կարգի մասին» օրենքը (155), որը միութենական հանրապետությունների հնարավոր անկախացումը կանխելու փորձ էր, քանզի ԽՍՀՄ սահմանադրության 72-րդ հոդվածով, թեկուզ անորոշ, տեսականորեն ընդունելով միութենական հանրապետությունների անջատման իրավունքը (156), չսահմանելով դրա գործնականում կիրառման մեխանիզմներ, ավելի մեծ հնարավորություններ էին ընձեռվում անկախանալու ձգտող հանրապետություններին, քան գորբաչովյան օրենքը: Դրա գլխավոր առանձնահատկությունն այն էր, որ ժամանակային առումով հնարավորինս ձգձգվում էր անկախացման գործընթացը: Նախատեսվում էր անկախացման հարցով հանրաքվեի մասին որոշումն ընդունելուց ոչ շուտ քան վեց ամիս հետո իրականացնել հանրաքվեն, որի ընթացքը գտնվելու էր ԽՍՀՄ Գերագույն խորհրդի վերահսկողության տակ: Ըստ օրենքի 9-րդ հոդվածի՝ ԽՍՀՄ-ից անջատվող հանրապետությունը կարող էր անկախանալու թույլտվությունը ակնկալել միայն հանրաքվեից 5 տարի անց: Այդ հնգամյա անցման շրջանում պետք է լուծվեին ԽՍՀՄ-ից անկախանալու հանդգնություն ունեցող հանրապետության՝ միությունից դուրս գալու հետ կապված հարցերը: Ավելի ճիշտ կլիներ ասել, որ դա մի տեւական ժամանակահատված էր, երբ անկախության ձգտող կողմը ստիպված էր լինելու հաղթահարել կենտրոնի կողմից հարուցած բազմաթիվ խոչընդոտները, այդ

Հայաստանի երրորդ հանրապետություն

թվում ֆինանսատնտեսական հսկայական սանկցիաներ, եթե ընդհանրապես դրանք հնարավոր էր հաղթահարել (157): Հայաստանը առաջիններից մեկն էր, որ պատրաստակամություն հայտնեց անկախացման գործընթացում ղեկավարվել բացառապես վերոնշյալ օրենքով: Հանրապետությունների անկախացումը թույլ չտալու, ԽՍՀՄ-ի փլուզումը կանխելու նպատակով Մ.Գորբաչովի ղեկավարությամբ մշակվեցին եւ կիրառության մեջ մտան մի շարք այսպես կոչված «հակաանկախացման» օրենքներ՝ «Հասարակական կարգը պահպանելիս ԽՍՀՄ ներքին գործերի մինիստրության ներքին զորքերի պարտականությունների եւ իրավունքների մասին» (158), «Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» (159) եւ այլն: Կենտրոնի կամայականությունների դեմ պայքարող ազգերի եւ մասնավորապես հայ ժողովրդի կենսական շահերի դեմ էր ուղղված, անկախության մասին հռչակագրի ընդունումից ընդամենը օրեր անց, ԽՍՀՄ նախագահի «ԽՍՀՄ օրենսդրությամբ չնախատեսված սպառազեն կազմավորումների ստեղծումն արգելելու եւ անօրինական զենք պահելու դեպքում այն առգրավելու մասին» հրամանագիրը (160): Ստեղծված իրավիճակում Հայաստանի Գերագույն խորհուրդը կայացրեց բացառապես Հայաստանի շահերից բխող ինքնիշխան վճիռ, որով կասեցվում էր ԽՍՀՄ նախագահի հրամանագրի կիրարկումը ինչպես Հայաստանում, այնպես էլ Արցախում (161):

Այդ կապակցությամբ ընդունվեց Հայաստանի իշխանությունների ինքնուրույն գործելաոճն արտահայտող «Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահի հայտարարության մասին» որոշումը, որում մասնավորապես ընդգծվում էր. «Հայաստանի իշխանությունները ի վիճակի են կարճ ժամանակի ընթացքում սեփական ուժերով լուծելու հանրապետության ներքին կյանքին վերաբերող, նրա քաղաքական-հասարակական վիճակի կայունացմանն ուղղված բոլոր խնդիրները, պայմանով, որ բացառված լինի արտաքին միջամտությունը» (162):

Հայաստանի նկատմամբ կենտրոնի ճնշումները առանձնապես ուժեղացան անկախության մասին հռչակագրի ընդունումից հետո: Հայաստանին անկախացման ուղուց շեղելու նպատակով ԽՍՀՄ կենտրոնական իշխանությունները դիմում էին ամեն տեսակի միջոցների, գործի էին դրվում իշխանական լծակները, սադրիչ քայլերի էին դիմում Լեռնային Ղարաբաղի հարցում եւ այլն: Ուժեղացել էին Արցախում եւ Հայաստանի սահմանամերձ շրջաններում անձնագրային ռեժիմի ստուգման անվան տակ ԽՍՀՄ զինված ուժերի եւ ադրբեջանական միլիցիայի հատուկ ստորաբաժանումների, հատկապես ՕՄՕՆ-ի կողմից իրականացվող պատժիչ գործողությունները: Կենտրոնը ԽՍՀՄ փլուզումը կանխելու նպատակով բռնաճնշումներ էր գործադրում նաեւ անկախության ձգտող մյուս հանրապետությունների նկատմամբ: Այդ ուղղությամբ 1990-1991թթ. կենտրոնական իշխանությունները շարունակում էին ընդունել օրենքներ ու որոշումներ՝ ուղղված ԽՍՀՄ-ի ժողովրդավարական ազատական շարժումների ճնշմանը: Սակայն այս շրջանում ազատական սկզբունքներ որդեգրած քաղաքական ուժերը, հատկապես անկախության ձգտող ազգային հանրապետություններում, սկսել էին ավելի ու ավելի վճռականորեն ընդդիմանալ միութենական կենտրոնի կողմից հրամցվող այդ անկենդան փաստաթղթերին: Միութենական կենտրոնի նման վճիռ-որոշումների դեմ ընդվզումները տեղերում հանուն ինքնիշխանության պայքարի առաջին դրսեւորումներն էին: Արդեն այդ փուլում ժողովրդավարական ուժերի պայքարը դարձել էր ավելի կազմակերպված, հագեցել ներքին տրամաբանությամբ, գործողությունները դարձել էին ավելի կանոնակարգված, հաջորդական ու նպատակամղված (163): Անկախացող հանրապետությունների, բնույթով արդեն ժողովրդավարականացած իշխանությունները վարում էին ազգային ինքնիշխանության հաստատմանը միտված կանխամտածված, ծրագրավորված քաղաքական կուրս: Նրանցից առավել հետեւողականները, արդեն, աստիճանաբար անցում էին կատարում կենտրոնի նկատմամբ, իրավական առումով, հարձակողական գործելաոճին:

Դրա լավագույն վկայությունն են այդ շրջանում հատկապես Հայաստանում ծավալված քաղաքական իրադարձությունները: Այսպես, ՀՀ Գերագույն խորհրդի նախագահությունը՝ 1991թ. հունվարի 31-ի որոշմամբ, ուղղակիորեն, կասեցրեց Հայաստանի Հանրապետության տարածքում ԽՍՀՄ պաշտպանության եւ ներքին գործերի նախարարների 1990թ. դեկտեմբերի 29-ի «Ներքին գործերի մարմինների աշխատակիցների, խորհրդային բանակի ու ռազմածովային նավատորմի զինծառայողների համատեղ պարեկություն կազմակերպելու մասին» հրամանի գործունեությունը, այն որակելով որպես հակասահմանադրական եւ ստեղծված իրավիճակում սադրիչ փաստաթուղթ (165): Հենց նույն օրը՝ հունվարի 31-ին, Հայաստանում փաստորեն բարձրագույն իշխանական կարգավիճակ վայելող ՀՀ Գերագույն խորհուրդն իր ընդունած մեկ այլ որոշմամբ կասեցրեց Հայաստանի տարածքում ԽՍՀՄ նախագահի 1991թ. հունվարի 26-ի մեկ այլ՝ «Տնտեսական սաբոտաժի եւ տնտեսական հանցագործություններին» վերաբերվող հրամանագրերի գործողությունը:

ԽՍՀՄ կործանման եւ խորհրդային հանրապետությունների անկախացման օրավուր ահագնացող գործընթացները կանգնեցնելուն էր միտված նաեւ ԽՍՀՄ պահպանման վերաբերյալ 1991թ. մարտի 17-ին անցկացվելիք հանրաքվեն, որի մասին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի որոշումն ընդունվել էր 1991թ. հունվարի 16-ին (166):

Խորհրդային Հայաստանը անկախացման ուղին ընտրած միութենական վեց հանրապետությունների թվում էր: Դրանք էին Վրաստանը, Լատվիան, Լիտվան, Էստոնիան, Մոլդովան եւ Հայաստանը, որոնց տարածքում նշված հանրաքվեն չանցկացվեց: Կենտրոնի այդ նախաձեռնության դեմ ՀՀ Գերագույն խորհուրդը նախ 1991թ. հունվարի 30-ին հանդես եկավ հատուկ հայտարարությամբ (167), իսկ ապա մարտի 1-ին ընդունեց հանրաքվեն Հայաստանի տարածքում արգելելու մասին որոշում, որում մասնավորապես արձանագրված էր. «Հաշվի առնելով, որ ԽՍՀՄ-ի պահպանման վերաբերյալ 1991թ. մարտի 17-ի ԽՍՀՄ հանրաքվեն հակասում է ազգերի ազատ ինքնորոշման իրավունքին, Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհուրդը որոշում է.

1. *Հայաստանի Հանրապետության տարածքում չանցկացնել ԽՍՀՄ-ի պահպանման վերաբերյալ 1991 թվականի մարտի 17-ի ԽՍՀՄ հանրաքվեն:*

Հայաստանի երրորդ հանրապետություն

2. *Համարել, որ ԽՍՀՄ-ի պահպանման վերաբերյալ 1991 թվականի մարտի 17-ի ԽՍՀՄ հանրաքվեի արդյունքները Հայաստանի Հանրապետության համար իրավական ուժ չունեն» (168):*

ՀՀ Գերագույն խորհուրդը 1991թ. մարտի 1-ին ընդունեց մեկ այլ որոշում՝ «Հայաստանի Հանրապետության տարածքում ԽՍՀՄ-ի կազմից դուրս գալու վերաբերյալ հանրաքվե անցկացնելու մասին»: Այդ պատմական կարեւոր որոշման մեջ մասնավորապես ասված էր. «Ելնելով Հայաստանի անկախության մասին հռչակագրի դրույթներից ու նպատակներից եւ հիմնվելով Հայաստանի Հանրապետության սահմանադրության 98 հոդվածի 5 կետի վրա, Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհուրդը որոշում է.

1. *Հայաստանի Հանրապետության տարածքում անցկացնել հանրաքվե ԽՍՀՄ-ի կազմից դուրս գալու վերաբերյալ, քվեարկության դնելով հետեւյալ հարցը «Համաձա՞յն եք, որ Հայաստանի Հանրապետությունը լինի անկախ ժողովրդավարական պետություն ԽՍՀՄ-ի կազմից դուրս»:*
2. *Հանրաքվեն անցկացնել 1991թ. սեպտեմբերի 21-ին:*
3. *Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի նախագահությանը իրավունք տալ իրադրության կտրուկ փոփոխության դեպքում որոշում կայացնել հանրաքվեն ավելի վաղ ժամկետում անցկացնելու մասին:*
4. *Հանրաքվեի անցկացման հետ կապված ծախսերը կատարել Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից» (169):*

Հարկավոր է նշել, որ անկախության հանրաքվեի մասին որոշման ընդունմանը նախորդել էին Գերագույն խորհրդում այդ հարցի հանգամանալի քննարկումները, որոնցից հատկանշական է ՀՀ Գերագույն խորհրդի 1991թ. փետրվարի 28-ի նիստը, որտեղ ելույթ ունեցավ ՀՀ ԳԽ նախագահ Լ. Տեր-Պետրոսյանը: Նա նշեց. «ԽՍՀՄ-ը եւ նրա տիպի ցանկացած նոր միությունը դատապարտված է լինելու ոչնչացման: Ցանկալի եւ հնարավոր է, որ միության քայքայումը կատարվի բնական, անարյուն, քաղաքակիրթ ձեւով, եւ սա վերածվի ժողովուրդների մի համերաշխ համագործակցության, ինչպիսին է, օրինակ, Եվրոպական երկրների համերաշխ համագործակցությունը, - ապա հատուկ շեշտեց միութենական հանրաքվեի մերժման անհրաժեշտությունը եւ անկախացման հանրաքվեի անցկացման անխուսափելիությունը, - չպետք է բացառել, որ Հայաստանը անկախության հանրաքվեից հետո էլ, կենտրոնի հարկադրանքի պարագայում, ստիպված կլինի կնքել միութենական պայմանագիրը, որքան էլ ստրկական լինի այն» (170): Փաստորեն, քաղաքական չափանիշներով ինքնիշխանություն վայելող Հայաստանի ղեկավարության վարած դիվանագիտական ճկուն քաղաքականությունը, ըստ էության, նպատակ ուներ հնարավորինս ապահովագրել հանրապետությունում անկախացման հանրաքվեի գործընթացը կենտրոնի պահպանողական ուժերի հնարավոր արգելափակման փորձերից: Հայաստանի ինքնիշխանության ճանապարհին կարեւոր քայլ էր ՀՀ Գերագույն խորհրդի կողմից 1991թ. ապրիլի 2-ին «Հանրաքվեի մասին» օրենքի ընդունումը (171), որտեղ արձանագրված էր, որ համաժողովրդական հանրաքվեով պետք է լուծվեին նաեւ Հայաստանի Հանրապետության կարգավիճակի փոփոխման վերաբերյալ հարցերը (172):

1991թ. ապրիլի 12-ին Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի նախագահության եւ նախարարների խորհրդի կողմից ընդունված որոշմամբ հավանություն տրվեց ՀՀ Գերագույն խորհրդի անկախ պետականության հաստատման եւ տեղական ինքնակառավարման հարցերի մշտական հանձնաժողովների կողմից հանրաքվեի հանձնաժողովի կազմի վերաբերյալ ներկայացված առաջարկությանը: 1991թ. մայիսի 23-ին Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհուրդը ընդունեց հանրաքվեի կենտրոնական հանձնաժողով կազմելու մասին որոշում, որով հաստատվեց հանձնաժողովի կազմը: Հայաստանի Հանրապետության հանրաքվեի կենտրոնական հանձնաժողովի նախագահ դարձավ ՀՀ Գերագույն խորհրդի նախագահի առաջին տեղակալ Բ. Արարքցյանը (173): Մայիսի 25-ին տեղի ունեցավ ԽՍՀՄ կազմից դուրս գալու վերաբերյալ հանրաքվեի անցկացման կենտրոնական հանձնաժողովի անդրանիկ նիստը, որում քննարկվեցին եւ համապատասխան որոշումներ ընդունվեցին կազմակերպական բնույթի մի շարք հարցերի մասին (174):

Հայաստանի Հանրապետության հանրաքվեի կենտրոնական հանձնաժողովի օգոստոսի 16-ի հերթական նիստում ընդունվեց սեպտեմբերի 21-ի հանրաքվեի Ռ. Արուտչյանի եւ Կ. Փաշայանի հեղինակած խորհրդանիշը (175), հաստատվեց քվեաթերթիկների նմուշը (176):

ՀՀ Գերագույն խորհրդի 1991թ. հունիսի 24-ի որոշմամբ նախատեսվեց հանրաքվեի անցկացման նպատակներով ՀՀ պետական բյուջեից հատկացնել 1,8 մլն ռուբլի:

1991թ. Խորհրդային Միության ներքին քաղաքական բոլոր կարգի իրադարձություններն ու երեւույթները այսպես թե այնպես ծավալվում էին միութենական նոր դաշնագրի վավերացման եւ նորոգված ֆեդերացիայի ստեղծման հարցի շուրջը: Մի կողմից թափ էր առնում կենտրոնի կողմից դաշնագրի նոր տարբերակների մշակման գործընթացը (միայն 1991թ. հունիսի 14-ին եւ 18-ին հապճեպորեն կազմվել եւ հանրությանն էր ներկայացվել դաշնագրի երկու տարբերակ), մյուս կողմից էլ ուժեղանում էր միութենական նոր դաշնագրի գաղափարը ընդհանրապես մերժող եւ արդեն խռովարարի պիտակավորում ստացած Հայաստանի, Վրաստանի, Մոլդովայի, Լիտվայի, Լատվիայի ու Էստոնիայի նկատմամբ կենտրոնի բիրտ ճնշումների քաղաքականությունը՝ նրանց ապագա ֆեդերացիայի մեջ մտցնելու նպատակով (178): Ընդսմին, եթե Լատվիայի, Էստոնիայի եւ Մոլդովայի նկատմամբ այդ ճնշումը դեռեւս դրսեւորվում էր միայն պաշտոնական հայտարարությունների ձեւով (179), ապա Լիտվան, Հայաստանն ու Վրաստանը վաղուց էին վերածվել խորհրդային զորքերի տարբեր պատժիչ օպերացիաների մշակման դաշտի: Կենտրոնական իշխանությունները շատ լավ էին հասկանում, որ միայն նոր դաշնագրի ստորագրմամբ կարելի կլիներ պահպանել խորհրդային կայսրությունը: Եվ ահա 1991թ. հունիսի 18-ին ԽՍՀՄ իշխանությունները ներկայացրեցին 26 կետից բաղկացած միութենական դաշնագրի նախագիծը «Դաշնագիր ինքնիշխան պետությունների մասին»

Հայաստանի երրորդ հանրապետություն

վերնագրով (180): Սակայն Հայաստանի ազգաբնակչության գերակշռող մասը, հանրապետության ամենաազդեցիկ քաղաքական ուժերը անվերապահորեն պաշտպանում էին Հայաստանի լիակատար անկախացման գաղափարը (181):

Խոսելով հիշատակված դաշնագրի, որպես ԽՍՀՄ-ը փրկելու վերջին փորձերից մեկի մասին, հարկ է նշել, որ այն աչքի էր ընկնում խորհրդային շրջանի քաղաքական բնույթի բոլոր փաստաթղթերին հատուկ դեկլարատիվ բնույթով: Դաշնագիրը այնպես էր կազմված, որ իրավական առումով նախկին ԽՍՀՄ-ի կազմից ինչ-որ կերպ դուրս գալու միակ տարբերակը նոր միության մեջ մտնելու համաձայնագիրը ստորագրելն էր: Պարզապես նոր դաշնագրի նախագծում եւս նախատեսվում էր, որ ԽՍՀՄ-ի կազմավորման մասին 1922թ. պայմանագիրը դադարում էր գործել միայն այն հանրապետությունների համար, որոնք կստորագրեին միութենական նոր դաշնագիրը (182):

1991թ. գարնանից կենտրոնական իշխանությունների գործունությունը ուղղված էր Նովո-Օգարյովոյում միութենական նոր պայմանագրի վերջնական մշակման խնդրի կենսագործմանը, որի համար մերձմոսկովյան այդ բնակավայր պետք է ժամանեին արագորեն փլուզվող ԽՍՀՄ-ի հանրապետությունների ներկայացուցիչները: Հայաստանի Հանրապետության իշխանությունները հնարավորինս խուսափում էին նոր պայմանագրի նախապատրաստական կոմիտեի աշխատանքներին մասնակցելուց եւ այդպես էլ չներկայացան ապրիլ եւ մայիս ամիսներին Նովո-Օգարյովոյում կայացած երկու հանդիպումներին (183): Նույն 1991թ. հուլիսի 23-ին նախատեսված էր դաշնային նոր պայմանագրի վերջնական մշակման նպատակով նախապատրաստական կոմիտեի հերթական նիստը, որին մասնակցելուն հրավիրված էր ՀՀ Գերագույն խորհրդի նախագահը: Ելնելով ստեղծված կացությունից, ՀՀ Գերագույն խորհրդի նախագահ Լ. Տեր-Պետրոսյանը մասնակցեց Նովո- Օգարյովյան հուլիսի 23-ի նիստին: Սակայն դա ավելի շուտ դիվանագիտական բարեկրթության այց էր եւ ոչ երբեք նոր միության «կերտման» մտահոգությամբ իրականացված գործնական ուղեւորություն (185): Հայաստանը այլեւս անդառնալիորեն ընտրել էր իր ուղին:

Փաստորեն, Հայաստանը մինչեւ սեպտեմբերի 21-ը չմասնակցեց նաեւ կենտրոնի եւ հանրաքվեին մասնակցած ինը հանրապետությունների (Ուկրաինա, Բելառուս, Ղազախստան, Ուզբեկստան, Ղրղզստան, Տաջիկստան, Թուրքմենստան, Ադրբեջան) (9+1) կողմից մշակվող միութենական նոր պայմանագրի նախապատրաստման աշխատանքներին, որի ստորագրմամբ Կրեմլը հույս ուներ անկախացող հանրապետությունները պահպանել միության կազմում: Չնայած տվյալ հարցում կենտրոնի ակնհայտ շտապողականությանը՝ առանձին հանրապետություններ, մասնավորապես Ռուսաստանն ու Ուկրաինան, լրջորեն խոչընդոտում էին այդ պայմանագրի ստորագրմանը, որի հետեւանքով այն հետաձգվեց մինչեւ 1991թ. սեպտեմբերի կեսերը: Միութենական նոր դաշնագրի ստորագրման փակուղի մտնելն էլ ավելի թուլացրեց կենտրոնի դիրքերը, որոնց ամրապնդման միակ ուղին խորհրդային ղեկավարության պահպանողական թեւի ներկայացուցիչները տեսնում էին երկրում ռազմական բռնապետություն հաստատելու մեջ:

Հայաստանի անկախացման եւ ընդհանրապես ԽՍՀՄ-ի վերջնական փլուզման գործում վճռորոշ դերակատարություն ունեցավ 1991թ. օգոստոսի 19-ին ԽՍՀՄ-ում հետադիմական ուժերի նախաձեռնած հեղաշրջման անհաջող փորձը:

Մ. Գորբաչովի նախաձեռնությամբ խորհրդային ինքնիշխան հանրապետությունների նորացված միություն ստեղծելու համար նախատեսված պայմանագրի ստորագրումը նշանակվեց օգոստոսի 20-ին:

1991թ. օգոստոսի 19-ին ԽՍՀՄ-ի հետադիմական ուժերը կազմակերպեցին խռովություն՝ երկիրը կանգնեցնելով ռազմական բռնապետություն հաստատելու սպառնալիքի առջեւ: Օգոստոսի 19-ի առավոտյան օգտվելով այն հանգամանքից, որ երկրի նախագահը արձակուրդը անցկացնում էր Ղրիմում, հայտարարվեց, թե Մ. Գորբաչովը վատառողջության պատճառով չի կարող կատարել երկրի նախագահի պարտականությունները, եւ դրանք անցնում են փոխնախագահ Գ. Յանաեւին: Երկրի կառավարման համար ստեղծվեց Արտակարգ դրության պետական կոմիտե (ԱԴՊԿ): Օգոստոսի 19-ին զորքը մտավ Մոսկվա: Ռուսաստանի Դաշնության նախագահ Բորիս Ելցինը երկրի քաղաքացիներին ուղղված դիմումի մեջ կատարվածը համարեց «հակասահմանադրական հեղաշրջում»: Օգոստոսի 21-ին խռովարարները ձերբակալվեցին: Մ. Գորբաչովը Ղրիմից վերադարձավ Մոսկվա:

Փաստորեն ժողովրդավարների վճռականության շնորհիվ պահպանողական ուժերի հեղաշրջման փորձը ձախողվեց: Մոսկվայում ժողովրդավարական ուժերի հաղթանակը կարեւոր նշանակություն ունեցավ՝ արագացնելով կոմունիստական կուսակցության միանձնյա իշխանության եւ խորհրդային կայսրության փլուզումը: Օգոստոսյան դեպքերից հետո ՌԽՍՖՀ նախագահ Բ. Ելցինի հրամանագրով արգելվեց ԽՄԿԿ-ի գործունեությունը Ռուսաստանի տարածքում: 1991թ. սեպտեմբերի 7-ին Հայաստանի կոմունիստական կուսակցության XXIX համագումարը որոշեց դադարեցնել ՀԿԿ-ի գործունեությունը (187):

Ելնելով Հայաստանի անկախության մասին հռչակագրի դրույթներից ու նպատակներից, ինչպես նաեւ բացահայտ հակահայկական քաղաքականություն վարող կենտրոնից ձերբազատվելու եւ ազգի շահերից բխող քաղաքականություն վարելու համար հայոց խորհրդարանը որոշեց 1991թ. սեպտեմբերի 21-ին հանրապետության տարածքում անցկացնել հանրաքվե՝ ԽՍՀՄ-ի կազմից դուրս գալու եւ անկախանալու հարցով:

Սեպտեմբերի 21-ի հանրաքվեին մասնակցեց քվեարկությանը մասնակցելու իրավունք ունեցող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների 95,05 տոկոսը: Հայաստանի անկախության օգտին իր ձայնը տվեց 2 մլն 43 հազար մարդ կամ քվեարկության իրավունք ունեցողների 94,39 տոկոսը (188): Համապատասխանաբար անկախությանը դեմ էր քվեարկել մոտ 0,47 տոկոսը եւ անվավեր ճանաչված քվեաթերթիկների քանակը կազմում էր քվեարկության իրավունք ունեցող քաղաքացիների 0,19 տոկոսը (189): Հանրաքվեի ընթացքին հետեւեցին աշխարհի 25 երկրից՝ Մեծ Բրիտանիայից, Շվեյցարիայից, Բելգիայից եւ այլն ժամանած 117 դիտորդներ (190): Հանրաքվեի նախօրյակին դիտորդական առաքելությամբ

Հայաստանի երրորդ հանրապետություն

Հայաստան էր ժամանել ԱՄՆ-ի 10 կոնգրեսականներից բաղկացած պաշտոնական պատվիրակությունը՝ կոնգրեսական Վ. Օուենսի գլխավորությամբ: Սեպտեմբերի 23-ին տեղի ունեցած ՀՀ հանրաքվեի կենտրոնական հանձնաժողովի անկախության հանրաքվեի արդյունքների ամփոփիչ նիստում արձանագրվեց, որ բոլոր դիտորդները միահամուռ էին իրենց տեսակետում, որ հանրաքվեն իրականացվել էր նորմալ մթնոլորտում եւ այդ ընթացքում «Հայաստանի Հանրապետության հանրաքվեի մասին» օրենքի խախտման վերաբերյալ ոչ մի բողոք չէր արձանագրվել: Հանրաքվեի ընթացքում Հայաստանում գտնված ԱՄՆ-ի կոնգրեսականների կողմից Միացյալ Նահանգների նախագահին ներկայացրած զեկուցագրում մասնավորապես ասվում էր. «Մենք կարող ենք հավաստել, որ Հայաստանի ժողովրդին հնարավորություն էր ընձեռվել դրսեւորելու իր ազատ ընտրության իրավունքը, եւ բացարձակ մեծամասնությունը քվեարկեց Խորհրդային Միության կազմից դուրս գալու օգտին:

Մենք միասնաբար պահանջում ենք, որպեսզի Միացյալ Նահանգները ճանաչեն Հայաստանի նոր Հանրապետությունը» (193), - վերջում ավելացրել էին զեկուցագրի հեղինակները:

1991թ. սեպտեմբերի 23-ին ՀՀ ԳԽ-ի հատուկ նիստը նվիրված էր հայ ժողովրդի համար կարեւորագույն հարցի՝ անկախության հանրաքվեի արդյունքների հաստատմանը, որը վարեց խորհրդարանի նախագահի տեղակալ Գ. Հարությունյանը:

1991թ. սեպտեմբերի 23-ին Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհուրդը հիմնվելով համաժողովրդական հանրաքվեի արդյունքների վրա ընդունեց Հայաստանը անկախ պետություն հռչակելու մասին պատմական որոշումը (194): Հայ ժողովրդի համար մեծ կարեւորություն ունեցող որոշման մեջ ասված էր. «Հավատարիմ մնալով Հայաստանի անկախության մասին հռչակագրին, հենվելով մարդու իրավունքների եւ ազգերի ազատ ինքնորոշման միջազգային նորմերի վրա, նպատակ ունենալով ստեղծել ժողովրդավարական, իրավական հասարակարգ, հիմք ընդունելով 1991թ. սեպտեմբերի 21-ի՝ ԽՍՀՄ կազմից դուրս գալու մասին անցկացված հանրաքվեի արդյունքները, Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհուրդը հռչակում է Հայաստանի Հանրապետությունը անկախ պետություն» (195):

Որոշման ընդունմանը հաջորդած Հայաստանի օրհներգն ու Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինի տերունական օրհնությունը մի առանձնակի հանդիսավորություն հաղորդեցին ԽՍՀՄ կազմից դուրս գալու մասին որոշման պահպանմամբ իրականացված գործընթացի տրամաբանական ավարտին (196): Փաստորեն, Հայաստանը ԽՍՀՄ հանրապետություններից առաջինն ու ըստ էության միակն էր, որը անկախացման հանրաքվեն անցկացրեց Խորհրդային Միության սահմանադրության եւ «ԽՍՀՄ-ի կազմից միութենական հանրապետության դուրս գալու հետ կապված հարցերի լուծման կարգի մասին» օրենքին լիակատար համապատասխանությամբ. այն է՝ հանրաքվե իրականացնելու որոշման ընդունումից 6 ամիս անց, եւ անկախացման մասին որոշումը կայացրեց հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող ազգաբնակչության ոչ պակաս քան երկու երրորդի համաձայնությամբ (197): Սեպտեմբերի 24-ին ՀՀ Գերագույն խորհրդի որոշմամբ սեպտեմբերի 21-ը հայտարարվեց տոնական, ոչ աշխատանքային օր (198):

Այսպիսով, 70-ամյա ընդմիջումից հետո կրկին վերականգնվեց Հայաստանի ազգային անկախությունը:

Նախկին խորհրդային հանրապետությունների օրինակով Հայաստանում եւս մտցվեց նախագահական կառավարման համակարգ: 1991թ. հոկտեմբերի 16-ին Հայաստանում առաջին անգամ անցկացվեցին նախագահական այլընտրանքային ընտրություններ՝ վեց թեկնածուների մասնակցությամբ: Արդյունքում ձայների ճնշող մեծամասնությամբ (83 տոկոս) հանրապետության նախագահ ընտրվեց Գերագույն խորհրդի նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը, իսկ փոխնախագահ՝ Գագիկ Հարությունյանը:

Անկախության ուղին բռնած հանրապետությանը ծանր փորձություններ էին սպասում: Այն փաստորեն կտրվել էր նախկին միութենական տնտեսական համակարգի բոլոր օղակներից: 1991թ. նոյեմբերին հերթական անգամ փակվեց Ադրբեջանից եկող գազամուղը: Հայաստանի էներգետիկ շրջափակումը գնալով ավելի մեծ չափեր ընդունեց: Կանգ առան հանրապետության գրեթե բոլոր ձեռնարկությունները, ուսումնական հաստատություններում դադարեցին պարապմունքները, բնակչությունը զրկվեց ջեռուցումից: Գազամուղի փակումից բացի ընդհատվեց նաեւ երկաթուղային կապը: Հայաստանի տնտեսությունը կանգնեց կազմալուծման լուրջ վտանգի առաջ: Օրըստօրե ծանրանում էր ազգաբնակչության սոցիալական վիճակը: Իսկ տարածաշրջանում լարվածությունը գնալով ավելի էր սրվում:

Հանրապետության համար այսպիսի ծանր պայմաններում, 1991թ. դեկտեմբերի 8-ին, Մինսկի մոտակայքի Բելովեժսկ բնակավայրում երեք սլավոնական հանրապետությունների՝ Ռուսաստանի, Ուկրաինայի եւ Բելառուսի ղեկավարները ստորագրեցին համաձայնագիր՝ ԽՍՀՄ-ի գոյությունը դադարեցնելու մասին՝ որպես միջազգային սուբյեկտ եւ աշխարհաքաղաքական իրողություն: Դրանով իրականացավ ԽՍՀՄ-ի փլուզումը: Միաժամանակ հայտարարվեց միջազգային համագործակցության նոր սուբյեկտի՝ Անկախ պետությունների համագործակցության (ԱՊՀ) կազմավորման մասին (200): Միութենական նախկին հանրապետություններից Մինսկի համաձայնագրին առաջինն արձագանքեց Հայաստանի Հանրապետությունը, որը ողջունեց ԱՊՀ-ի ստեղծումը՝ հայտնելով նրան միանալու իր պատրաստակամությունը:

1991թ. դեկտեմբերի 21-ին Ղազախստանի նախկին մայրաքաղաք Ալմա-Աթայում 11 ինքնիշխան պետություններ՝ Ռուսաստանը, Ուկրաինան, Բելոռուսը, Ղազախստանը, Ուզբեկստանը, Տաջիկստանը, Ղրղզստանը, Թուրքմենստանը, Ադրբեջանը, Մոլդովան եւ Հայաստանը ստորագրեցին համաձայնագիր ԱՊՀ ստեղծման մասին (201): Այլեւս գոյություն չունեցող երկրի նախագահ Մ. Գորբաչովին մնում էր հրաժարական տալ: Հրաժարականից մեկ օր անց, դեկտեմբերի 26-ին, նորաստեղծ ԱՊՀ-ի անդամ երկրներից առաջիններից մեկը ՀՀ ԳԽ-ն վավերացրեց ՀՀ-ն ԱՊՀ-ին անդամակցելու մասին արձանագրությունը: Անհրաժեշտ է նշել, որ Ադրբեջանը ԱՊՀ-ին անդամագրվեց միայն 1993թ. սեպտեմբերին, իսկ Հայաստանի Հանրապե-

Հայաստանի երրորդ հանրապետություն

տության մյուս հարեւանը՝ Վրաստանը, միայն 1994թ. մարտին վավերացրեց հանրապետության անդամակցությունը ԱՊՀ-ին:

գ. Պետականության կայացման գործընթացի սկիզբը

Անցումային դժվարին փուլում գտնվող Հայաստանի Հանրապետությունն իր անկախության հաստատման համար պետական շինարարությունն իրականացրեց ըստ էության պատերազմական պայմաններում: Մինչդեռ պետական կառավարման խորհրդային համակարգից անցումը նրանից էապես տարբերվող միանգամայն նոր համակարգի՝ զգալի նյութական եւ ֆինանսական միջոցներ էր պահանջում: Իշխանության նոր մարմինների ձեւավորման գործընթացը սկսվել էր 1990թ. մայիս-հունիսին կայացած Գերագույն խորհրդի ընտրություններից հետո, երբ խորհուրդներից անցում կատարվեց դեպի խորհրդարանական հանրապետություն: Ընդ որում, եթե Հայաստանի Հանրապետության օրենսդիր իշխանությունը կենտրոնացած էր խորհրդարանի ձեռքում, ապա գործադիր իշխանությունը բաժանված էր վարչապետի, նրա կաբինետի եւ Գերագույն խորհրդի նախագահության միջեւ: Փաստորեն, հանրապետությունում առկա էր պետական կառավարման համակարգի նախկին եւ նոր կառույցների զուգորդում՝ կառավարման մարմինների անարդյունավետ կառուցվածքներով եւ հնից ժառանգած ավանդույթներով: Իշխանության թեւերի տարբեր մարմիններին բնորոշ էին միմյանց գործառույթների կրկնությունը, անհրաժեշտ տեղեկատվության փոխանակման բացակայությունը եւ այլն:

Հայաստանի Հանրապետության առաջին գումարման Գերագույն խորհուրդը անկախ պետականության գործընթացի ու հանրապետության ինքնիշխանության ամրապնդման ուղղությամբ առաջին քայլերն իրականացրեց ՀՀ պետականության խորհրդանիշների մասին օրենքների ընդունումով:

ՀՀ Գերագույն խորհուրդը 1990թ. օգոստոսի 24-ին ընդունեց ՀՀ պետական դրոշի մասին օրենքը, որով ի լուր բոլորի հայտարարվեց, որ այսուհետ «Հայաստանի Հանրապետության դրոշը եռագույնն է» (203): Նույն օրը Գերագույն խորհրդի որոշմամբ հայտարարվեց նորանկախ Հայաստանի պետական զինանշանի եւ հիմնի ստեղծման մրցույթ, որի կազմակերպումն ու ղեկավարումը հանձնարարվեց ՀՀ Մինիստրների խորհրդին եւ խորհրդարանի համապատասխան մշտական հանձնաժողովներին (204):

Այդ պատմական որոշումներով սկիզբ դրվեց Հայաստանի անկախության հռչակագրով սահմանված անկախացման գործընթացին:

1990թ. օգոստոսի 25-ին Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի շենքի (այժմ ՀՀ կառավարության շենք) վրա հանդիսավոր կերպով բարձրացվեց հայոց եռագույնը: Այս արարողությանը ներկա էին հազարավոր մարդիկ: ՀՀ ԳԽ նորընտիր նախագահի ելույթից հետո դրոշակաձողից իջեցվեց հայ ժողովրդի անցած 70-ամյա ուղու ժամանակահատվածը խորհրդանշող Խորհրդային Հայաստանի դրոշը եւ Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի կողմից կատարվող «Մեր հայրենիք»-ի հանդիսավոր հնչյունների ներքո բարձրացվեց Հայոց անկախ պետության խորհրդանիշը՝ հայոց եռագույնը: Նույն օրը կառավարական տան (այժմ ՀՀ նախագահի նստավայր) վրա եւս ծածանվեց ինքնիշխան Հայաստանի խորհրդանիշը (205): Սակայն ՀՀ մյուս խորհրդանիշների՝ հիմնի ու զինանշանի ընդունման գործընթացը երկարաձգվեց:

ՀՀ կառավարության 1990թ. սեպտեմբերի 28-ի որոշմամբ հայտարարվեց ՀՀ զինանշանի եւ հիմնի ստեղծման մրցույթ, որի համաձայն ստեղծվեց բարձրաստիճան պաշտոնյաներից, գիտության, արվեստի, գրականության բնագավառի հեղինակավոր ներկայացուցիչներից կազմված 15 հոգանոց կազմկոմիտե՝ հանրապետության Մինիստրների խորհրդի նախագահ Վ. Մանուկյանի գլխավորությամբ (206): ՀՀ կառավարության 1990թ. հոկտեմբերի 10-ի որոշմամբ էլ ստեղծվեցին Հայաստանի պետական զինանշանի մրցութային հանձնաժողով՝ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Հր. Ռ. Սիմոնյանի նախագահությամբ եւ պետական օրհներգի մրցութային հանձնաժողով՝ Հայաստանի կոմպոզիտորների միության վարչության նախագահ, երգահան Է.Մ. Միրզոյանի ղեկավարությամբ (207):

Խորհրդարանի 1991թ. հուլիսի 1-ի նիստում քննարկման դրվեց օրհներգի երկու տարբերակ՝ հանրահայտ «Մեր հայրենիքը» եւ 1944 թվականին կոմպոզիտորներ Ա. Բաբաջանյանի ու Ա. Հարությունյանի կողմից գրված օրհներգը: ՀՀ ԳԽ նիստերի դահլիճում հնչեցին այդ երկու ստեղծագործությունների ձայնագրությունները: Քվեարկությանը մասնակցած 158 պատգամավորից 146-ը նախապատվությունը տվեց «Մեր հայրենիքին»: Որոշվեց ՀՀ օրհներգի հիմք ընդունել «Մեր հայրենիք» ստեղծագործությունը՝ երգի խոսքերը հետագայում հանձնաժողովում վերջնականապես խմբագրելուց հետո (208): Նույն օրը քննարկման դրվեց նաեւ զինանշանի ընդունման հարցը: ՀՀ վարչապետի տեղակալ Կ. Սարդարյանը կազմկոմիտեի անունից քննարկման ներկայացրեց Մ. Սարյանի ստեղծած ՀԽՍՀ պետական զինանշանի նորոգված տարբերակները եւ 1918-1920թթ. ՀՀ պետական զինանշանը: Զինանշանի հարցը հանվեց օրակարգից այն բանից հետո, երբ զինանշանի ստեղծման մրցութային հանձնաժողովի նախագահ Հր. Ռ. Սիմոնյանը տեղեկացրեց, որ իր ղեկավարած օղակում հավանության չի արժանացել ներկայացված 150 տարբերակից եւ ոչ մեկը (209): Այդ հարցը իր վերջնական լուծումը ստացավ միայն հաջորդ տարում՝ ՀՀ ԳԽ 1992թ. մարտի 25-ին կայացած հերթական նիստի որոշմամբ: Հայաստանի պետական զինանշան ընդունվեց 1920 թվականի հուլիսին հաստատված Հայաստանի առաջին Հանրապետության հերալդիկան (210):

Անկախության հռչակումից կարճ ժամանակ անց ՀՀ-ն ստացավ համընդհանուր միջազգային ճանաչում: Սկսվեց հայոց անկախ հանրապետության պետական շինարարությունը: «Անկախ պետության հիմնադրույթների մասին» ՀՀ սահմանադրական նոր օրենքով սահմանվում էր իշխանության պետական կարգը, ապահովվում էր օրենսդիր, գործադիր եւ դատական իշխանությունների տարանջատումը:

Ելնելով պետական կառավարման նոր՝ արդյունավետ համակարգի ձեւավորման անհրաժեշտությունից եւ առաջնորդվելով օրենսդիր, գործադիր ու դատական իշխանությունների տարանջատման վերաբերյալ Անկախության հռչակագրի դրույթներով՝ ՀՀ Գերագույն խորհուրդը 1991թ. հունիսի

Հայաստանի երրորդ հանրապետություն

25-ին հիմնեց հանրապետության նախագահի պաշտոնը, որով հաստատեց նախագահական կառավարման համակարգ՝ վերջինիս զիջելով իր լիազորությունների մի մասը (211): Նույն թվականի օգոստոսի մեկին ընդունվեց «Հայաստանի Հանրապետության նախագահի մասին» օրենքը, համաձայն որի՝ ՀՀ նախագահը հանրապետության բարձրագույն պաշտոնատար անձն է եւ գլխավորում է հանրապետության գործադիր իշխանությունը (212): Դրանով, ըստ էության, ուրվագծվեց անկախության ուղիով ընթացող Հայաստանի Հանրապետության պետական կարգը:

1991թ. նոյեմբեր եւ դեկտեմբեր ամիսներին «ՀՀ Գերագույն խորհրդի» եւ «Կառավարության կառուցվածքի մասին» օրենքներով սահմանվել էին իշխանության պետական բարձրագույն մարմինների գործունեության շրջանակները (213):

Հանրապետությունում պետական կառավարման համակարգը ներառում էր պետական գործադիր մարմինները, իսկ ՀՀ գործադիր իշխանությունն իրականացվում էր ՀՀ կառավարության կողմից, որը կազմված էր վարչապետից ու նախարարներից: Կառավարությունը 1991-1992թթ. գործադիր իշխանությունն իրականացնում էր 22 նախարարության, 8 պետական վարչության եւ վարչապետի ու փոխվարչապետի միջոցով (214): Հետագայում կառավարության կառուցվածքային կազմը բազմիցս փոփոխությունների ենթարկվեց: Այսպիսով, Հայաստանի անկախության մասին հռչակագրի ընդունումից մեկ տարի հետո հանրապետության իշխանությունների կողմից տնտեսական, քաղաքական, պետաիրավական եւ վարչական ոլորտներում հետեւողականորեն իրականացված արմատական վերափոխումների շնորհիվ հայոց անկախ պետականության կայացման գործընթացի սկիզբը դրվեց:

դ. 1995թ. ՀՀ սահմանադրության ընդունումը

Հանրապետության պետական-քաղաքական կյանքի կարեւոր իրադարձություններից էր պետության հիմնական օրենքի՝ ՀՀ սահմանադրության ընդունումը: Քանի որ գործող սահմանադրությունը հակասում էր Անկախության մասին հռչակագրի սկզբունքներին, ուստի ՀՀ խորհրդարանը ստիպված էր այնտեղ անընդհատ կատարել սահմանադրական փոփոխություններ ու շտկումներ: Օրենսդրական փակուղուց դուրս գալու նպատակով խորհրդարանը 1990թ. դեկտեմբերին ընդունեց «Հայաստանի անկախության մասին» առաջին սահմանադրական օրենքը, որի համաձայն մինչեւ նոր սահմանադրության ընդունումը դադարեցվում էր սահմանադրական այն դրույթների գործողությունը, որոնք հակասում էին Հռչակագրի հիման վրա ընդունված օրենքներին:

Ակնհայտ էր, որ միայն փոփոխություններով հնարավոր չէր լիովին բարեփոխել նախորդ սահմանադրությունը: Ուստի անհրաժեշտ էր ունենալ նոր սահմանադրություն: Այդ նպատակով 1990 նոյեմբերի 15-ին ստեղծվեց սահմանադրական հանձնախումբ՝ 90 մարդուց բաղկացած, նոր սահմանադրության նախագծի մշակման համար: 1993թ. հունիսի 24-ին սահմանադրական հանձնաժողովը հավանություն տվեց ՀՀ սահմանադրության նախագծի առաջին տարբերակին եւ ներկայացրեց համաժողովրդական քննարկման, որը տեւեց ինը ամիս: Նախագծի վերաբերյալ մտցվեց ավելի քան 1000 դիտողություն եւ առաջարկ: Հատկանշական է, որ 6 կուսակցության ներկայացրած նախագծի վերաբերյալ ստացվեց 72 առաջարկություն եւ դիտողություն, որոնցից 17-ը ընդհանուր բնույթի էին (215): 1994թ. ապրիլի 20-ին սահմանադրական հանձնաժողովը հավանություն տվեց նախագծի լրամշակված տարբերակին եւ ներկայացրեց ՀՀ ԳԽ-ին: Ներկայացվեցին նաեւ ՀՀ սահմանադրության այլընտրանքային նախագծեր: 1994թ. մայիսի 1-ին Գերագույն խորհուրդը որոշում ընդունեց սահմանադրական հանձնաժողովի կազմի ընդլայնման մասին: ՀՀ ԳԽ նախագահ Բ. Արարքցյանը ընտրվեց հանձնաժողովի համանախագահ: 1995թ. մայիսի 12-ին ՀՀ ԳԽ-ն ընդունեց հիրավի պատմական որոշում «ՀՀ Սահմանադրության նախագծի մասին», որով ՀՀ Գերագույն խորհուրդը որոշեց.

1. *Հավանություն տալ ՀՀ ԳԽ սահմանադրական հանձնաժողովի ներկայացրած ՀՀ սահմանադրության նախագծին.*
2. *ՀՀ սահմանադրության ընդունման նպատակով 1995թ. հուլիսի 5-ին անցկացնել հանրաքվե, քվեարկության դնելով հետեւյալ հարցը. «Համաձա՞յն եք արդյոք, ընդունել ՀՀ ԳԽ-ի հավանության արժանացած ՀՀ սահմանադրությունը»:*

ՀՀ պատմության ողջ ընթացքում առաջին անգամ 1995թ. հուլիսի 5-ին անցկացվեց սահմանադրական հանրաքվե (216): Հանրաքվեին մասնակցեց մեկ մլն 217 հազար 531 քաղաքացի, այսինքն՝ քվեարկության իրավունք ունեցողների 55,66 %-ը: ՀՀ հիմնական օրենքի (սահմանադրության) օգտին կողմ արտահայտվեց ընտրողների ճնշող մեծամասնությունը՝ 68,04 %-ը:

Նոր սահմանադրությունը, իր թերություններով հանդերձ, կարեւոր երեւույթ էր: ՀՀ սահմանադրությունը կազմված էր ներածությունից եւ 117 հոդվածից, որոնք շարադրված էին ինը գլխում: Սահմանադրությունը դրեց ամբողջատիրական համակարգից դեպի ժողովրդավար պետություն անցնելու իրավական հիմքը: Սկսեցին ձեւավորվել պետաիրավական նոր կառույցներ: ՀՀ սահմանադրությունը նախատեսում էր նախագահական հանրապետության մոդելը՝ գործադիր, օրենսդիր եւ դատական իշխանությունների տարանջատումով: Բարձրագույն օրենսդիր մարմինը՝ Գերագույն խորհուրդը, վերանվանվեց Ազգային ժողով:

Սահմանադրությունը իրավական ձեւակերպում տվեց քաղաքական նոր համակարգին, հռչակեց սեփականության բոլոր ձեւերի հավասարություն, սահմանեց Հայաստանի քաղաքացիների իրավունքներն ու պարտականությունները: Նա հռչակում էր, որ Հայաստանի Հանրապետությունը ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական եւ իրավական պետություն է:

ՀՀ Սահմանադրությամբ հաստատվեցին Հայաստանի երրորդ Հանրապետության խորհրդանիշները՝ դրոշը, զինանշանը եւ օրհներգը: Պետական դրոշ ճանաչվեց եռագույնը՝ կարմիր, կապույտ եւ նարնջագույն՝ հորիզոնական հավասար շերտով, որն առաջին հանրապետության դրոշն էր: Այնուհետեւ ընդունվեց ՀՀ զինանշանը, որի կենտրոնում վահանը պահող արծիվն ու առյուծն են. պատկերված է Արարատ լեռը՝ Նոյյան տապանով եւ պատմական Հայաստանի չորս թագավորության զինանշաններով, սուր, ճյուղ, հասկե-

Հայաստանի երրորդ հանրապետություն

րի խուրծ, շղթա եւ ժապավեն: Որպես օրհներգ ընդունվեց առաջին հանրապետության պետական հիմնը՝ «Մեր Հայրենիքը»: 2010թ. հունիսի 15-ին, երիտասարդության նախաձեռնությամբ, ՀՀ-ում առաջին անգամ նշվեց ՀՀ պետական խորհրդանիշների օրը:

Հետագայում հանրապետության քաղաքական եւ սոցիալ-տնտեսական կյանքի զարգացումն առաջացրեց սահմանադրության մեջ բարեփոխումներ կատարելու անհրաժեշտություն:

Ե. Հայոց ազգային բանակի կազմավորումը

Առաջնահերթ նշանակություն ստացավ ազգային պետության անվտանգության եւ անկախության պահպանման հարցը, որի երաշխիքը կարող էր լինել մարտունակ բանակը: Իր կարճատեւ պատմության ընթացքում հաղթահարելով պատերազմի ու բանակաշինության ծանրագույն փորձությունները՝ հայոց բանակը կոփվեց եւ դարձավ մեր անկախ պետականության կարեւորագույն երաշխիքը: Իր կայացման ճանապարհին այն անցավ երեք դժվարին ու կարեւոր փուլեր:

Առաջին փուլն ընդգրկում է 1988 թվականի փետրվարից մինչեւ 1992թ. մայիսը, երբ Ղարաբաղյան շարժման ակտիվացման եւ հայ-ադրբեջանական հարաբերությունների ծայրաստիճան սրման պայմաններում Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի բնակչության ռազմական անվտանգության ապահովումը դարձավ հրատապ խնդիր:

Երկրորդ փուլը ներառում է 1992թ. հունիսից մինչեւ 1994թ. մայիսն ընկած ժամանակահատվածը, երբ անկախ Հայաստանի Հանրապետությունը, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հետ միասին, գտնվելով չհայտարարված, բայց փաստացի պատերազմի մեջ, ձեռնամուխ եղավ ազգային բանակի ստեղծմանը:

Երրորդ փուլն ընդգրկում է 1994թ. հունիսից մինչեւ օրս ընկած ժամանակահատվածը: Այս փուլն անվանվում է բանակաշինության, զորքերի մարտունակության բարձրացման, անհրաժեշտ ստորաբաժանումների ստեղծման, խաղաղ պայմաններում բանակի, որպես ռազմապաշտպանական համակարգի վերջնական ձեւավորման շրջան: Առաջին փուլի առանձնահատկությունն այն էր, որ հայ հասարակության մտածողության մեջ հասունացավ այն գիտակցությունը, որ միայն սեփական զինված ուժերը կարող են լինել ժողովրդի ու հասարակության անվտանգության երաշխիքը: Այս ժամանակահատվածում «բանակ» էին համարվում իրարից անջատ գործող շուրջ 80 կամավորական ջոկատները, որոնք ռազմականացված հիմնարկություններից, հակակարկտային հրետանու կրակակետերից, ռազմագիտության դասարաններից ու բոլոր հնարավոր այլ վայրերից զենք հայթայթելով, կամավոր, հայրենասիրական ու բարոյական մղումներից դրդված, մեկնում էին սահմանի ամենաթեժ կետերը՝ պաշտպանելու հանրապետության սահմանները: Այդպիսի ջոկատներից էին «Վրիժառուներ»-ը, «Սասունցի Դավիթ»-ը, «Սասնա ծռեր»-ը, «Մուշ»-ը եւ այլն (218): Չնայած հայ կամավորական ջոկատների գործողությունները տարերային էին, չկոորդինացված եւ տեղի էին ունենում ՀՀ ու Արցախի պաշտպանությունը համակարգող միասնական կենտրոն-կառույցի բացակայության պայմաններում, դրանք այն կենսունակ սաղմերն էին, որոնցից անկախության հռչակումից անմիջապես հետո պիտի ծնվեին հայոց փառապանծ բանակի ստորաբաժանումները (219):

Հայկական բնակավայրերի պաշտպանությունը կազմակերպելու նպատակով ստեղծված կամավորական ջոկատները պետական կառույցում ընդգրկելու համար ՀԽՍՀ նախարարների խորհուրդը 1990թ. օգոստոսի 21-ին ընդունեց «ՀԽՍՀ ներքին գործերի նախարարությանն առընթեր հատուկ ստորաբաժանումներ ստեղծելու մասին» որոշումը (220): Իրավական այս հիմքի վրա էլ 1990 թվականի սեպտեմբերին կազմավորվեց ՀՀ ներքին գործերի նախարարությանը կից հատուկ գունդը, որի կազմի մեջ ընդգրկվեցին Արարատի, Գորիսի, Վարդենիսի, Իջեւանի, Մեղրու եւ այլ շրջանների 26 ինքնապաշտպանական վաշտերը (221): Այդ վաշտերը կռվեցին ՀՀ եւ ԼՂՀ գրեթե բոլոր ռազմաճակատներում: Հայրենիքի սահմանների պաշտպանության համար մղված մարտերում զոհվեց 159 մարտիկ, այդ թվում նաեւ գումարտակի հրամանատար, Հայաստանի ազգային հերոս Ջիվան Աբրահամյանը (222): Կամավորական ջոկատների տարերայնորեն կազմավորման եւ բնակչության ձեռքին մեծաքանակ զենք հայտնվելու արդյունքում ի հայտ եկան նաեւ չվերահսկվող զինված խմբավորումներ, որոնց գործունեությունն ապակայունացնում էր Հայաստանի ներքին դրությունը: Այդպիսի մի զինված անհնազանդության ժամանակ դեպքերի հետագա սրումն արգելելու նպատակով բանակցությունների մեկնելիս, օգոստոսի 29-ին զոհվեցին Վիտյա Այվազյանն ու Գեղազնիկ Միքայելյանը՝ իրենց կյանքի գնով սթափեցնելով բոլորին ու կանխելով հնարավոր արյունահեղությունը: Նրանց հետմահու շնորհվեց Ազգային հերոսի կոչում (223): 1991թ. ապրիլի 26-ին ՀՀ նախարարների խորհուրդը հաստատեց «ՀՀ երկրապահ զինապարտի ժամանակավոր կանոնակարգը», որը տարածվում էր մինչեւ 50 տարեկան, կամավորական սկզբունքով հանրապետության պաշտպանության գործին մասնակցել ցանկացող ՀՀ քաղաքացիների վրա: ՀՀ կառավարության որոշմամբ ստեղծվեց ՀՀ նախարարների խորհրդին առընթեր պաշտպանության պետական կոմիտեն, որի հիմքի վրա էլ ավելի ուշ ստեղծվեց պաշտպանության նախարարությունը (224):

1992-1993թթ. երկրապահ կամավորական ջոկատների եւ բանակ զորակոչված զինակոչիկների միավորումով ստեղծվեց շարժունակ եւ կարգապահ բանակ (225): 1992 թվականի հունվարի 28-ին կառավարությունն ընդունեց «ՀՀ պաշտպանության նախարարության մասին» պատմական որոշումը, որով ազդարարեց ազգային բանակի ստեղծման սկիզբը: Նորաստեղծ նախարարության ենթակայությանը հանձնվեցին զինվորական միավորները՝ ՆԳՆ պարեկապահակային գունդը, հատուկ նշանակության գունդը եւ հանրապետական զինկոմիսարիատը (226): Պաշտպանության նախարարության կենտրոնական ապարատը՝ գլխավոր շտաբը, վարչություններն ու առանձին բաժինները ստեղծվեցին ավելի ուշ: Դեռեւս 1991թ. դեկտեմբերի 5-ին Հայաստանի Հանրապետության պաշտպանության առաջին նախարար էր նշանակվել Վազգեն Սարգսյանը (1959-1999) (227), որն արդեն լինելով խորհրդարանի պաշտպանության հանձնաժողովի նախագահ՝ կամավորների մեծ մասի սիրված

Հայաստանի երրորդ հանրապետություն

հրամանատարն էր: Ազգային բանակի ստեղծման գործում մեծ էր նրա ներդրումը: «Հայաստանի Հանրապետության ազգային հերոս Վազգեն Սարգսյանը կանգնած է եղել հայոց պետականության եւ հատկապես հայոց բանակի, որպես պետության առանցքային բաղադրիչի ստեղծման ակունքներում: Դժվար է պատկերացնել, թե ինչպիսին կլիներ հայոց բանակը, եթե այն չունենար Վազգենի հաղթելու կամքը, վճռականությունը, ամենադժվարին պահերին ամենաբարդ տեղում հայտնվելու քաջությունը, անսահման սերը հայրենիքի ու զինվորի նկատմամբ», - ընդգծել է ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը: Վ. Սարգսյանի անմիջական նախաձեռնությամբ հայոց բանակաշինության գործում զգալի աշխատանք կատարվեց: 1992թ. մայիսին պաշտպանության նախարարությունը «Զինապարտության մասին» օրենքով հիմք դրեց բանակը ժամկետային զինծառայողներով համալրելու կայուն ավանդույթին: Նոր կազմավորված զորամասերի անձնակազմը 1992թ. մայիսի 28-ին Հանրապետության հրապարակում հանդիսավոր պայմաններում տվեց առաջին զինվորական երդումը:

Անկախ Հայաստանի զորամիավորումներն ու զորատեսակները, ինչպես նաեւ սպայական կազմը ձեւավորվեցին գերազանցապես խորհրդային բանակի կազմակերպական հիմքի վրա: Նորաստեղծ հայկական բանակի սպառազինությունը եւ ռազմական տեխնիկան ժառանգություն էր մնացել նույն խորհրդային բանակից: Աստիճանաբար աճեց բանակի թվաքանակը: Հաշվի առնելով Հայաստանի տարածքում ձեւավորված ռազմաարդյունաբերական համալիրի գիտատեխնիկական եւ տեխնոլոգիական բարձր մակարդակը՝ աշխատանքներ ծավալվեցին դրա պահպանման ու զարգացման ուղղությամբ: Առանձնահատուկ ուշադրություն էր դարձվում բանակի մարտական պատրաստականության կատարելագործմանը: Հայաստան վերադարձան հարյուրավոր հայազգի սպաներ, որոնք մինչ այդ ծառայում էին խորհրդային բանակի տարբեր զորամիավորումներում: Նրանք լծվեցին բանակաշինության, հայրենիքի անվտանգության ապահովման գործին: Նրանց թվում էին գեներալներ Գ. Դալիբալթայանը, Մ. Հարությունյանը, Ն. Տեր-Գրիգորյանցը, Ք. Իվանյանը, Յու. Խաչատուրովը, Ա. Տեր-Թադեւոսյանը (Կոմանդոս) եւ շատ ուրիշներ (228): Հետագայում կազմակերպվեց նաեւ սպայական կադրերի պատրաստման բարձրագույն դպրոցը, ամրապնդվեց նյութատեխնիկական բազան: Հայոց ազգային բանակի ստեղծման գործում մեծ եղավ պաշտպանության նախարարներ Վ. Սարգսյանի, Վ. Մանուկյանի եւ Ս. Սարգսյանի դերը: Բանակը աստիճանաբար զինվեց ժամանակակից ռազմական տեխնիկայով եւ ամուր պատվար դարձավ անկախության պաշտպանության գործում: Հայոց բանակը կազմավորվեց մեր անկախ պետականության վերականգնման գործընթացում եւ հանդիսացավ նրա ամենամեծ ձեռքբերումը: Լավ կազմակերպված հայոց բանակում ծառայելը դարձավ յուրաքանչյուր հայ երիտասարդի պատվի գործը:

1994թ. զինադադարից հետո ադրբեջանական իշխանությունների կողմից բազմիցս հնչեցրած ռազմատենչ հայտարարությունները, ԼՂՀ-ի եւ ՀՀ-ի դեմ ռազմական գործողություններ վերսկսելու սպառնալիքներն ու ագրեսիվ նկրտումները ՀՀ զինված ուժերից պահանջում են մշտապես ապահովել բարձր մարտական պատրաստվածություն, մարտունակություն եւ զգոնություն:

Ծանոթագրություն

141. *«Խորհրդային Հայաստան», 25 օգոստոսի, 1990:*
142. *«Հայաստանի Հանրապետություն», 9.10.1990:*
143. *Պողոսյան Է., Անկախ պետականության հաստատման գործընթացը Հայաստանում (1990-2001թթ.), Երեւան, 2013, էջ 31, «Խորհրդային Հայաստան», 3,5,9.08.1990:*
144. *Տե՛ս նույն տեղում:*
145. *Տե՛ս նույն տեղում, «Խորհրդային Հայաստան», 10.08.1990:*
146. *Տե՛ս Պողոսյան Է., նշված աշխ., էջ 33:*
147. *Տե՛ս նույն տեղում, էջ 35:*
148. *«Խորհրդային Հայաստան», 22.08.1990:*
149. *Տե՛ս նույն տեղում, Պողոսյան Է., նշված աշխ., էջ 37:*
150. *Պողոսյան Է., նշված աշխ., էջ 38, «Խորհրդային Հայաստան», 24.08.1990:*
151. *Տե՛ս նույն տեղում, 21.08.1990:*
152. *«Խորհրդային Հայաստան», 24.08.1990:*
153. *Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր, 16 (972), 31.08.1990, էջ 5-6:*
154. *«Խորհրդային Հայաստան», 24.08.1990:*
155. *“Известия” Советов народных депутатов СССР, 7.04.1990.*
156. *Конституция (Основной закон) Союза Советских Социалистических Республик, Ташкент, 1978., с. 63.*
157. *Պողոսյան Է., նշված աշխ., էջ 48, 49:*
158. *“Известия” Советов народных депутатов СССР, 31.03.1990.*
159. *Նույն տեղում, 10.04.1990.*
160. *«Խորհրդային Հայաստան», 27.07, 1990, Պողոսյան Է., նշված աշխ., էջ 52:*
161. *Նույն տեղում, 2.08.1990:*
162. *ՀԽՍՀ Գերագույն խորհրդի տեղեկագիր, N 15 (971), 23.08.1990, էջ 13:*
163. *Տե՛ս Պողոսյան Է., նշված աշխ., էջ 54:*
164. *Տե՛ս նույն տեղում:*
165. *Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր, N 2 (982), 31.01.1991, էջ 72-73:*
166. *Տե՛ս նույն տեղում, էջ 52:*
167. *Նույն տեղում:*
168. *Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր, N 5 (985), 15.03.1991, էջ 3:*
169. *Նույն տեղում, էջ 4:*
170. *Տե՛ս Տեր-Պետրոսյան Լ., Ընտրանի (ելույթներ, հոդվածներ, հարցազրույցներ), Երեւան, 2006, էջ 176,177:*
171. *Հայաստանի Հանրապետության գործող օրենքների ժողովածու (1990-1995թ.), Երեւան, 1995, էջ 119-130:*
172. *Նույն տեղում, էջ 120:*
173. *Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր, N10 (990), 31.05.1991, էջ 12-13:*
174. *Նույն տեղում:*
175. *Նույն տեղում, N 16 (996), 31.08.1991, էջ 8:*
176. *Նույն տեղում, էջ 27-28:*
177. *ՀՀ Գերագույն խորհրդի տեղեկագիր, N 16 (996), 31.08.1991, էջ 11:*

Հայաստանի երրորդ հանրապետություն

178. Տես Պողոսյան Է., նշված աշխ., էջ 59:
179. "Известия Советов народных депутатов СССР", 1, 2, 3, 15.04, 7, 16, 21 мая, 1990г:
180. «Հայաստանի Հանրապետություն», 2.07.1991:
181. «Հայաստանի Հանրապետություն», 9.07.1991:
182. Տե՛ս Պողոսյան Է., նշված աշխ., էջ 61:
183. Տե՛ս Պողոսյան Է., նշված աշխ., էջ 62:
184. «Հայաստանի Հանրապետություն», 19.07.1991:
185 Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 11.08.1991, Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր, N 14 (994), 31.07.1991, էջ 13:
186. «Հայաստանի Հանրապետություն», 20 օգոստոսի, 1991:
187. Տե՛ս ՀԱԱ, ֆ1, g84, գ1, թ.68, g 128, գ. 3, թ. 1
188. Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր, N 18 (998), 30.09.1991, էջ 21:
189. «Հայաստանի Հանրապետություն», 24 սեպտեմբերի, 1991թ.:
190. Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր, N 18 (998), 30.09.1991, էջ 15:
191. Նույն տեղում, N 17 (997), 15.09.1991, էջ 25: «Հայաստանի Հանրապետություն», 21 սեպտեմբերի, էջ 29:
192. Նույն տեղում, N 18 (998), 30.09.1991, էջ 29:
193. «Հայաստանի Հանրապետություն», 2. 10, 1991թ.:
194. Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր, N 18 (998), 30.09.1991, էջ 21:
195. Նույն տեղում:
196. Նույն տեղում:
197. «Հայաստանի Հանրապետություն», 2. 10, 1991թ.:
198. Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր, N 18 (998), 30.09.1991, էջ 5:
199. «Հայաստանի Հանրապետություն», 12. 11, 1991թ.:
200. «Հայաստանի Հանրապետություն», 24. 12, 1991թ.:
201. Տե՛ս նույն տեղում:
202. «Հայաստանի Հանրապետություն», 2.03, 1994թ.:
203. Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր (1), N16 (972), 31.08.1990, էջ 6:
204. Նույն տեղում, էջ 7:
205. «Խորհրդային Հայաստան», 26.08.1990:
206. ՀԱԱ, ֆ. 113, g. 163, գ. 418, թ.1-3:
207. Նույն տեղում, գ. 417, թ. 1-5:
208. Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր (1), 13 (993), 15.07. 1991, էջ 7:
209. Նույն տեղում 13 (993), 15.07. 1991, էջ 75-76:
210. Նույն տեղում 8 (1012), 30.04.. 1992, էջ 3:
211. Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, g. 165, գ. 415, թ. 42:
212. Տե՛ս Հայաստանի գործող օրենքների ժողովածու, 1990-1995թթ., էջ 158, 162:
213. Տե՛ս նույն տեղում, էջ 189-196:
214. Տե՛ս նույն տեղում, էջ 195:
215. Խաչատրյան Հ., Հայաստանի Հանրապետության առաջին սահմանադրությունը, Երեւան, 1997, էջ 23:
216. Տե՛ս Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր, հոդված 13-14, Երեւան, 1995:
217. Տե՛ս Խաչատրյան Հ., նշված աշխ., էջ 22:
218. Տե՛ս ՀՀ պաշտպանության նախարար Սերժ Սարգսյանի ելույթը ՀՀ զինված ուժերի կազմավորման 10-րդ տարելիցին նվիրված հանդիսավոր նիստում, «Հայկական բանակ», 1, 2 (31-32), Երեւան, 2002, էջ 12:
219. Նույն տեղում:
220. Տե՛ս ՀԱԱ, ֆ.113, g.165, գ.298, թ.1:
221. Օհանյան Ս., Հայկական բանակի 20-ամյա տարեգրությունը, Երեւան, 2012, էջ 40, ՀԱԱ, ֆ. 113, g. 163, գ. 406, թ. 8, 9:
222. Տե՛ս ՀՀ պաշտպանության նախարար Սերժ Սարգսյանի ելույթը ՀՀ զինված ուժերի կազմավորման 10-րդ տարելիցին նվիրված հանդիսավոր նիստում, «Հայկական բանակ», 1, 2 (31-32), էջ 13-14:
223. Տե՛ս Օհանյան Ս., նշված աշխ., էջ 41:
224. Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, g. 165, գ. 317, թ. 1, 2:
225. Մանրամասն տե՛ս Մինասյան Է., Սոցիալ-տնտեսական վերափոխումները Հայաստանի Հանրապետությունում (1990-2003թթ.), էջ 54-64:
226. ՀԱԱ, ֆ. 113, g. 163, գ. 406, թ. 6-9:
227. Տե՛ս նույն տեղում, ֆ. 113, g. 165, գ. 298, թ. 1:
228. Օհանյան Ս., 21-րդ դարի բանակը, Երեւան, 2007, էջ 11:

Հայաստանի երրորդ հանրապետության պատմություն
Երեւան, 2013

Հայաստանի երրորդ հանրապետություն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀՌՉԱԿՄԱՆ ՄԱՍԻՆ

Հավատարիմ մնալով «Հայաստանի անկախության մասին» հռչակագրին, հենվելով մարդու իրավունքների եւ ազգերի ազատ ինքնորոշման միջազգային նորմերի վրա,

նպատակ ունենալով ստեղծել ժողովրդավարական, իրավական հասարակարգ, հիմք ունենալով 1991 թվականի սեպտեմբերի 21-ի՝ ԽՍՀՄ կազմից դուրս գալու մասին անցկացված հանրաքվեի արդյունքները՝

Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհուրդը հռչակում է Հայաստանի Հանրապետությունը անկախ պետություն:

Հայաստանի Հանրապետության
Գերագույն խորհրդի նախագահ
Լեւոն Տեր-Պետրոսյան
Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի
քարտուղար՝ Արա Սահակյան
23 սեպտեմբերի 1991
թվականի, քաղ. Երեւան

Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի ԴԻՄՈՒՄԸ

Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին, հայ ժողովրդին

Հայրենակիցներ, հավատարիմ ժողովրդի միասնական կամքին, որի արտահայտությունը եղավ սեպտեմբերի 21-ի հանրապետական հանրաքվեն, Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհուրդը հռչակեց Հայաստանի անկախությունը: Մեր ժողովուրդը վճռական քայլ կատարեց միջազգային հանրության մեջ իր ուրույն տեղը վերագտնելու հարցում:

Վերադարձը դեպի ինքնություն հեշտ չի լինելու: Մենք դեռ նոր ենք սկսում քայլել ազատության ճանապարհով: Քաղաքակիրթ մարդկության անցած ուղին ցույց է տալիս, որ դա մեկ օրվա հարց չէ եւ, հատկապես, դյուրին ճանապարհ չէ: Ուստի խոհեմաբար յուրացնելով առաջադեմ պետությունների փորձը, մենք պետք է կարողանանք պահպանել եւ հարստացնել մերը: Այո, մենք գնում ենք դեպի համայն մարդկության ընտանիք, բայց արդեն մեր դրոշի ներքո, մեր անկախ պետականությամբ եւ մեր ազգային սեփական դիմագծով: Ազատության ճանապարհին մեզ

սպասում են նոր փորձություններ: Դա ամենօրյա քննություն է լինելու մեզ համար: Պահպանենք մեր ոգեւորությունը, բայց համակվենք իրապաշտությամբ, շարունակենք մնալ երազող, բայց սթափ դատողությամբ:

Վերջապես եկավ ժամը, երբ մեր ձեռքերով պետք է արարենք մեր ներկան ու ապագան: Ընտրությունը կատարել ենք ազգովի ու ազգովի էլ պետք է լծվենք վաղվա օրվա կերտմանը:

Հանրապետության՝ միջազգային իրավունքի լիիրավ սուբյեկտի կարգավիճակը եւ տնտեսական իրական անկախությունը պետք է զուգակցվի տարբեր երկրների ու պետությունների հետ փոխշահավետ համագործակցությամբ: Մեր նպատակը հիրավի ազատ, ժողովրդավարական պետության ստեղծումն է՝ մի երկրի, որ քաղաքական, տնտեսական, մշակութային զարգացման հավասար հնարավորություններ է ընձեռում իր բոլոր քաղաքացիներին, անկախ գաղափարներից, դավանանքից եւ ազգությունից, իր սրբազան պարտքը համարելով յուրաքանչյուր քաղաքացու իրավունքների ու ազատությունների պաշտպանությունը:

Հայոց անկախ պետականության գոյությունը, նշանավորելով ազգային նպատակների իրականացումը, որակական նոր հնարավորություն է ստեղծում ազգի միասնության ամրապնդման, աշխարհով մեկ սփռված հայության համախմբման համար: Չկա մի հայ, որի աչքերն այսօր Հայաստանին ուղղված չլինեն: Մեզ միշտ միավորել են միտքն ու հույզը, այսօր թող միավորի գործն ու գերագույն նպատակը: Եվ քանի որ մեզ է վիճակված գրելու հայոց նորագույն պատմության այս փառահեղ էջը, ուրեմն միասնաբար ձեռնամուխ լինենք անկախ Հայաստանի արարման գործին՝ հանուն գալիք սերունդների բարօրության եւ երջանկության:

24 սեպտեմբերի 1991 թվականի, քաղ. Երեւան

Հայաստանի երրորդ հանրապետություն

ՀՀ վարչատարածքային բաժանումը եւ տարածքային քաղաքականությունը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին

ՀՈԴՎԱԾ 1.Հայաստանի Հանրապետության վարչատարածքային միավորները

Հայաստանի Հանրապետության վարչատարածքային միավորներն են՝ մարզերը, համայնքները, մարզի կարգավիճակ ունեցող Երեւան քաղաքը եւ նրա թաղային համայնքները:

Համայնքը կարող է ընդգրկել մեկ կամ ավելի թվով բնակավայրեր, իսկ Երեւան քաղաքի թաղային համայնքները՝ նաեւ առանձին թաղամասեր:

Մարզերում եւ Երեւան քաղաքում իրականացվում է պետական կառավարում, իսկ համայնքներում՝ տեղական ինքնակառավարում:

ՀՈԴՎԱԾ 2. Հայաստանի Հանրապետության մարզերի վարչական կենտրոնները

Հայաստանի Հանրապետության տարածքը բաժանվում է տասը մարզի եւ մարզի կարգավիճակ ունեցող Երեւան քաղաքի:

Հայաստանի Հանրապետության մարզերը եւ նրանց վարչական կենտրոններն են՝

ՄԱՐԶԸ	ՄԱՐԶԿԵՆՏՐՈՆԸ
Արագածոտն	Աշտարակ
Արարատ	Արտաշատ
Արմավիր	Արմավիր
Գեղարքունիք	Գավառ
Լոռի	Վանաձոր
Կոտայք	Հրազդան
Շիրակ	Գյումրի
Սյունիք	Կապան
Վայոց ձոր	Եղեգնաձոր
Տավուշ	Իջեւան

ՀՈԴՎԱԾ 3. Հայաստանի Հանրապետության մարզերի տարածքները, մարզերի եւ Երեւան քաղաքի սահմանները, Հայաստանի Հանրապետության մարզային բաժանման քարտեզը

Մարզի տարածքը կազմված է նրա մեջ ընդգրկված համայնքների տարածքներից եւ պետական սեփականություն հանդիսացող հողային եւ ջրային այլ տարածքներից:

Արագածոտնի մարզն ընդգրկում է Աշտարակի, Ապարանի, Արագածի եւ Թալինի նախկին վարչական շրջանների տարածքները:

Արարատի մարզն ընդգրկում է Արարատի, Արտաշատի եւ Մասիսի նախկին վարչական շրջանների տարածքները:

Արմավիրի մարզն ընդգրկում է Արմավիրի, Բաղրամյանի եւ Էջմիածնի նախկին վարչական շրջանների տարածքները:

Գեղարքունիքի մարզն ընդգրկում է Կամոյի, Կրասնոսելսկի, Մարտունու, Սեւանի եւ Վարդենիսի նախկին վարչական շրջանների տարածքները:

Լոռվա մարզն ընդգրկում է Գուգարքի, Թումանյանի, Սպիտակի, Ստեփանավանի եւ Տաշիրի նախկին վարչական շրջանների տարածքները:

Կոտայքի մարզն ընդգրկում է Կոտայքի, Հրազդանի եւ Նաիրիի նախկին վարչական շրջանների տարածքները:

Շիրակի մարզն ընդգրկում է Ախուրյանի, Ամասիայի, Անիի, Աշոցքի եւ Արթիկի նախկին վարչական շրջանների տարածքները:

Սյունիքի մարզն ընդգրկում է Գորիսի, Կապանի, Մեղրիի ու Սիսիանի նախկին վարչական շրջանների տարածքները:

Վայոց ձորի մարզն ընդգրկում է Եղեգնաձորի եւ Վայքի նախկին վարչական շրջանների տարածքները:

Տավուշի մարզն ընդգրկում է Իջեւանի, Նոյեմբերյանի եւ Տավուշի նախկին վարչական շրջանների տարածքները:

Հայաստանի երրորդ հանրապետություն

Հայոց ազգային բանակը՝ Հայաստանի Հանրապետության անկախության եւ արժանապատիվ ընթացքի երաշխավոր

Հայաստանի երրորդ հանրապետություն

Հայաստանի Հանրապետության հանրաքվեի կենտրոնական հանձնաժողովի

ՀԱՂՈՐԴՈՒՄԸ

1991թ. սեպտեմբերի 21-ին կայացած Հայաստանի Հանրապետության հանրաքվեի արդյունքների մասին

Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի 1991թ. մարտի 1-ի որոշման համաձայն, 1991թ. սեպտեմբերի 21-ին Հայաստանի Հանրապետությունում անցկացվեց հանրաքվե հետեւյալ հարցադրմամբ.

«Համաձա՞յն եք, որ Հայաստանի Հանրապետությունը լինի անկախ ժողովրդավարական պետություն, ԽՍՀՄ կազմից դուրս»:

«Հայաստանի Հանրապետության հանրաքվեի մասին» օրենքի 31-րդ հոդվածին համապատասխան Հայաստանի Հանրապետության հանրաքվեի կենտրոնական հանձնաժողովը, ամփոփելով հանրաքվեի շրջանային եւ քաղաքային հանձնաժողովների ներկայացրած արձանագրությունների արդյունքները

Արձանագրում է

1. *Հայաստանի Հանրապետության հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող քաղաքացիների թիվը՝ 2163967:*
2. *Քվեարկությանը մասնակցած քաղաքացիների թիվը՝ 2056758 մարդ, որը կազմում է քվեարկության իրավունք ունեցող քաղաքացիների 95.5 տոկոսը:*
3. *ԱՅՈ քվեարկած քաղաքացիների թիվը՝ 2042627 մարդ, որը կազմում է քվեարկության իրավունք ունեցող քաղաքացիների 94.39 տոկոսը:*
4. *ՈՉ քվեարկած քաղաքացիների թիվը՝ 10002 մարդ, որը կազմում է քվեարկության իրավունք ունեցող քաղաքացիների 0.46 տոկոսը:*
5. *Անվավեր ճանաչված քվեաթերթիկների թիվը՝ 4129 մարդ, որը կազմում է քվեարկության իրավունք ունեցող քաղաքացիների 0.19 տոկոսը:*

Հանրաքվեի հրապարակայնությունն ապահովելու նպատակով Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի, հասարակական-քաղաքական կազմակերպությունների կողմից հրավիրվել են դիտորդներ: Գրանցվել են 117 դիտորդ՝ 25 երկրներից: Հանրաքվեի անցկացման ընթացքում «Հայաստանի Հանրապետության հանրաքվեի մասին» օրենքի խախտման վերաբերյալ բողոքներ չեն ստացվել:

Հանրաքվեի կենտրոնական հանձնաժողովի նախագահ՝
Բ. Արարքցյան, 23 սեպտեմբերի 1991թ.

Գործունեության նախարարներ

ՎԱՉԳԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ
(1991-1992ԹԹ.)

ՎԱՉԳԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ
(1992-1993ԹԹ.)

ՍԵՐԺ ՍԱՐԳՍՅԱՆ
(1993-1995ԹԹ.)

ՎԱՉԳԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ
(1995-1998ԹԹ.)

ՎԱՂԱՐՇԱԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ (1998-2000ԹԹ.)

ՍԵՐԺ ՍԱՐԳՍՅԱՆ
(2000-2007թթ.)

ՄԻՔԱՅԵԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ (2007-2008թթ.)

ՍԵՅՐԱՆ ՕՀԱՆՅԱՆ
(2008թ.-մ/ա)

Կառավարության ղեկավարները

Վ.Մանուկյան
(1990-1991թթ.)

Գ.Հարությունյան
(1991-1992թթ.)

Խ.Հարությունյան
(1992-1993թթ.)

Հ.Բագրատյան
(1993-1996թթ.)

Ա.Սարգսյան
(1996-1997թթ.)

Ռ.Քոչարյան
(1997-1998թթ.)

Ա.Դարբինյան
(1998-1999թթ.)

Վ.Սարգսյան (1999թ.)

Ա. Ջ. Սարգսյան
(1999-2000թթ.)

Ա.Մարգարյան
(2000-2007թթ.)

Ս.Սարգսյան
(2007-2008թթ.)

Տ.Սարգսյան
(2008-2014թթ.)

Հ.Աբրահամյան
(2014թ.-մ/ա)

Օրենսդիր մարմնի ղեկավարները

Լ.Տեր-Պետրոսյան
(1990-1991թթ.)

Բ.Արարքցյան (1991-1998թթ.)

Խ.Հարությունյան
(1998-1999թթ.)

Կ.Դեմիրճյան (1999թ.)

Ա.Խաչատրյան
(1999-2003թթ.)

Ա.Բաղդասարյան
(2003-2006թթ.)

Տ.Թորոսյան
(2006-2008թթ.)

Հ.Աբրահամյան
(2008-2011թթ.)

Ս.Նիկոյան
(2011-2012թթ.)

Հ.Աբրահամյան
(2012-2014թթ.)

Գ.Սահակյան
(2014թ.-մ/ա)

Հայաստանի երրորդ հանրապետություն

Սուրբ պապարագ Վատիկանի Սուրբ Պետրոս տաճարում՝ Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի առիթով (12 ապրիլի 2015թ.)

Արարողության ընթացքում Հռոմի պապ Ֆրանցիսկոսը հայտարարեց՝ «20-րդ դարի առաջին ցեղասպանությունը պատուհասել է հայ ժողովրդին»: Հռոմի պապը Սուրբ Գրիգոր Նարեկացուն հռչակեց Տիեզերական եկեղեցու 36-րդ վարդապետ, երկրորդը՝ Արեւելքից:

Հայաստանի երրորդ հանրապետություն

ՍՊԱՍՎԱԾ ԱՅՑ. 2016թ.

հունիսի 24-26-ը Հայաստանի Հանրապետությունում էր Հռոմի սրբազան քահանայապետ Ֆրանցիսկոս պապը

Սյունիքն Արցախյան ազատամարտում

Կապան, Բաղաբուրջի հուշահամալիր, որտեղ հանգչում են կապանցի նահատակ ազատամարտիկները

Խոնարհվենք նրանց հիշատակի առջեւ, ովքեր սեփական արյամբ սրբագործեցին քաջաց մեր հողը՝ անկախության վերականգնման ու Արցախի ազատագրության համար մղված մարտերում:

Արցախյան պատերազմը կռիվ չէր սոսկ Լեռնային Ղարաբաղի համար: Դա պատերազմ էր նաեւ մեր հանրապետության սահմանամերձ տարածքների պաշտպանության, երկրի տարածքային ամբողջականությունը պահպանելու համար: Պատմության վճռորոշ այդ պահին սյունեցիներն իրենց դրսեւորեցին արժանապատվորեն:

Հայաստանի անկախության եւ Արցախի ազատագրության համար մղված մարտերում միայն Սյունիքի մարզից զոհվեց ավելի քան 500 երիտասարդ:

Մարզի տարբեր բնակավայրերում կանգնեցվել են հուշարձան-կոթողներ, որոնք իրենց մեջ ամփոփում են մեր վերջին ազատամարտի բոլոր նահատակների երբեք չմեռնող ոգին: Այդ հուշարձանները եղել եւ մնում են հավատքի եւ ներշնչման աղբյուր բոլորիս համար՝ հայոց պետության կառուցման ճանապարհին:

ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Գորիս, Արցախյան պատերազմում զոհված հայորդիների հիշատակը հավերժացնող կոթող (2016թ.)

Սիսիանի պանթեոն

Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն

Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն

ԼՂՀ խորհրդանիշները

ԼՂՀ զինանշան: Հաստատվել է ԼՂՀ Գերագույն խորհրդի կողմից 1994 թվականի նոյեմբերի 17-ի որոշմամբ: Իրենից ներկայացնում է մի թեւատարած արծիվ, որը կրում է Արտաշեսյանների արքայատոհմի թագը, իսկ գլխավերեւում տարածվում են արեւի ճառագայթները: Կենտրոնում դրված է վահան, որի վրա պատկերված են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դրոշը (հորիզոնական դիրքով)

եւ Ստեփանակերտի մոտ գտնվող «Մենք ենք մեր սարերը («Տատիկ եւ Պապիկ») հուշարձանը՝ Մեծ Քիրս լեռան ֆոնին: Ներքեւի մասում արծվի ճանկերի մեջ խաղողի վազեր են, թթենու պտուղներ, ցորենի հասկեր: Վերեւի կիսաշրջանաձեւ ժապավենի վրա արված է հայերեն մակագրություն՝ «Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն-Արցախ»: Զինանշանի հեղինակն է Լավրենտ Ղալայանը:

ԼՂՀ պետական օրհներգը

«Ազատ ու անկախ Արցախն» է (խոսք՝ Վարդան Հակոբյանի, երաժշտություն՝ Արմեն Նասիբյանի), հաստատվել է ԼՂ ԳԽ 1994-ի դեկտեմբերի 23-ի որոշմամբ:

ԼՂՀ պետական օրհներգի խոսքը եւ երաժշտությունը

խոսք՝ Վ.Հակոբյանի, երաժշտ.՝ Ա.Նասիբյանի

Ազատ ու անկախ Արցախ,
Քո փուն-ամրոցը կերտեցինք,
Պատմությունը մեր երկրի,
Մեր սուրբ արյամբ մենք սերտեցինք:

Դու բերդ ես անառիկ,
Բարձունք սրբազան, վեհ անուն,
Մասունք աստվածային,
Քեզնով ենք հավերժանում:
Դու մեր լույս հայրենիք,
Երկիր, հայրենյաց դուռ սիրո.
Ապրիր դու միշտ խաղաղ,
Մեր հին ու նոր Ղարաբաղ:

Քաջերն ենք մենք հայկազուն,
Մռավ ենք, Քիրս ենք ու Թարթառ,
Մեր վանքերով լեռնապահ՝
Անհաղթելի մի բուռ աշխարհ:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն

ԼՂՀ նախագահները

ԲԱԿՈ ՍԱՀԱԿՅԱՆ
2007թ.-մ/ա

ԱՐԿԱԴԻ ՂՈՒԿԱՍՅԱՆ
1997-2007թթ.

ՌՈԲԵՐՏ ՔՈՉԱՐՅԱՆ
1994-1997թթ.

ԼՂՀ նախագահի նստավայրը

Լեռնային Դարաբաղի Հանրապետություն

Հոգեւոր կյանքի վերածնունդն Արցախում

ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Որպես հայոց Արեւելից կողմ, Արցախը ժամանակի ընթացքում (իբրեւ հոգեւոր առանձին միավոր) ընդգրկվել է Աղվանից կաթողիկոսության մեջ: Արցախի տարածքում բազմում էին Աղվանից կաթողիկոսները, իսկ Աթոռը տեղափոխվում էր քաղաքից-քաղաք: XV դարի վերջին կաթողիկոսության աթոռանիստը հայտնվեց սբ Գանձասարի վանքում (երբեմն կոչում էին Գանձասարի կաթողիկոսություն): Իր ժամանակին Արցախն ունեցել է հոգեւոր երեք թեմ: Հետագայում կաթողիկոսությունը, դադարեցնելով իր գործունեությունը, փաստորեն վերածվեց մետրոպոլիտության: Խորհրդային կարգեր հաստատվելուց հետո նախկին մարզն ընդամենն ուներ մեկ թեմ, որի հոգեւոր կենտրոնը Գանձասարն էր, իսկ վարչական կենտրոնը՝ Շուշի քաղաքը: Պատմական փառավոր անցյալ ունեցող թեմն իր գործունեությունը դադարեցրեց 1930 թվականին: Ադրբեջանի իշխանությունների ճնշմամբ շուրջ 6 տասնամյակ լիովին փակվեցին բոլոր եկեղեցական դռները: Ու միայն Արցախյան ազգային-ազատագրական պայքարի շնորհիվ՝ 1989 թ. հոկտեմբերի 1-ին Ամենայն հայոց կաթողիկոս, երջանկահիշատակ Վազգեն Առաջինի հայրապետական օրհնությամբ հնարավոր եղավ կրկին վերաբացել Արցախի թեմը: Գանձասար վանքի սբ Հովհաննես տաճարում տեղի ունեցած եկեղեցական արարողությամբ (Հայ առաքելական եկեղեցու Արցախի թեմի առաջնորդ Պարգեւ եպիսկոպոս Մարտիրոսյանը Սուրբ Վարագա Խաչի տոնի առթիվ պատարագ մատուցեց) լեռնաշխարհում դրվեց հոգեւոր կյանքի վերածնունդը:

«Այունյաց երկիր»
N18-19 (26-27), 25 մայիսի 2004թ.

Հայ Առաքելական եկեղեցու Արցախի թեմի առաջնորդ Պարգեւ արքեպիսկոպոս Մարտիրոսյան

Լեռնային Դարաբաղի Հանրապետություն

ԼՂՀ Ազգային ժողովն ու կառավարությունը

Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն

ԻՆՉՊԵՍ ԾՆՎԵՑ ԼՂՀ-Ն.

ՎԱՎԵՐԱԳՐԵՐ

№ 20

РЕШЕНИЕ ВНЕОЧЕРЕДНОЙ СЕССИИ СОВЕТА НАРОДНЫХ ДЕПУТАТОВ НКАО XX СОЗЫВА

"О ХОДАТАЙСТВЕ ПЕРЕД ВЕРХОВНЫМИ СОВЕТАМИ АЗЕРБАЙДЖАНСКОЙ ССР И АРМЯНСКОЙ ССР
О ПЕРЕДАЧЕ НКАО ИЗ СОСТАВА АЗЕРБАЙДЖАНСКОЙ ССР В СОСТАВ АРМЯНСКОЙ ССР"

от 20 февраля 1988г.

Заслушав и обсудив выступления депутатов областного Совета народных депутатов НКАО о ходатайстве перед Верховными Советами Азербайджанской ССР и Армянской ССР о передаче НКАО из состава Азербайджанской ССР в состав Армянской ССР, внеочередная сессия Нагорно-Карабахского областного Совета народных депутатов решила:

Идя навстречу пожеланиям трудящихся НКАО, просить Верховный Совет Азербайджанской ССР и Верховный Совет Армянской ССР проявить чувство глубокого понимания чаяний армянского населения Нагорного Карабаха и решить вопрос о передаче НКАО из состава Азербайджанской ССР в состав Армянской ССР, одновременно ходатайствовать перед Верховным Советом Союза ССР о положительном решении вопроса передачи НКАО из состава Азербайджанской ССР в состав Армянской ССР.

№ 31

ДЕКЛАРАЦИЯ

О провозглашении Нагорно-Карабахской Республики

Совместная сессия Нагорно-Карабахского областного и Шаумяновского районного Советов народных депутатов с участием депутатов Советов всех уровней выражая волю народа, закрепленную фактически проведенным референдумом и в решениях органов власти НКАО и Шаумяновского района в 1988-1991гг., его стремление к свободе, независимости, равноправию и добрососедству;

констатируя провозглашение Азербайджанской Республикой “восстановления государственной независимости 1918-1920гг.”;

учитывая, что проводимая в Азербайджане политика апартеида и дискриминации создала в республике атмосферу ненависти и нетерпимости к армянскому народу, приведшую к вооруженным столкновениям, человеческим жертвам, массовой депортации жителей мирных армянских сел;

основываясь на действующей Конституции и законах Союза ССР, предоставляющих народам автономных образований и компактно проживающим национальным группам право на самостоятельное решение вопроса о своем государственно-правовом статусе в случае выхода союзной республики из СССР;

считая стремление армянского народа к воссоединению естественным и соответствующим нормам международного права;

стремясь к восстановлению добрососедских отношений между армянским и азербайджанским народами на основе взаимного уважения прав друг друга;

принимая во внимание сложность и противоречивость обстановки в стране, неопределенность судьбы будущего Союза, союзных структур власти и управления;

уважая и следуя принципам Всеобщей Декларации прав человека и Международного пакта об экономических, социальных и культурных правах, Международного пакта о гражданских, политических и культурных правах и рассчитывая на понимание и поддержку международного сообщества,

ПРОВОЗГЛАШАЕТ:

НАГОРНО-КАРАБАХСКУЮ РЕСПУБЛИКУ В ГРАНИЦАХ НЫНЕШНЕЙ НАГОРНО-КАРАБАХСКОЙ АВТОНОМНОЙ ОБЛАСТИ И СОПРЕДЕЛЬНОГО ШАУМЯНОВСКОГО РАЙОНА.

Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն

ԱԿՏ Ի ԴԱՉՈՒԼՈՒԹԱՆ ԴԱՓԱԴԱՐՈՒՄԱ ԻՐԱՎԱԿԱՆ ՈՒԺԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

10 դեկտեմբեր 1991 թվականին Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի Ժողովրդական Դեպուտատների Սովետի նախագահությունը հանդես եկավ հայտարարությամբ, որտեղ նշվում էր, հետևաբար, հանրաքվեի արդյունքները ամրագրելու անհրաժեշտության մասին:

Հանրաքվեի արդյունքներն ամփոփվեցին հետևյալ կերպ:

Ընտրողների ցուցակներում գրանցված է եղել 108736 անձ, քվեարկությանը մասնակցել է 82,2%-ը կամ 108 736 ընտրող, 95 ընտրատեղամասերում: Ընտրական տեղամասերի ներկայացուցիչներ:

«ԱՅՈ»—108.615 (99,89% կամ ընտրողներ քվեարկությանը մասնակցածների մեջ).

«ՈՉ»—24 (0,02% կամ ընտրողներ քվեարկությանը մասնակցածների մեջ).

Հանրաքվեի «Դեկլարացիայի նախագծի հաստատման մասին» դեկլարացիայի նախագծի հաստատման մասին, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ինքնուրույն գոյության մասին հանրաքվեի արդյունքներն ամրագրելու մասին:

Հանրաքվեի արդյունքներն ամրագրելու մասին հանրաքվեի արդյունքներն ամրագրելու մասին հանրաքվեի արդյունքներն ամրագրելու մասին:

Հանրաքվեի արդյունքներն ամրագրելու մասին հանրաքվեի արդյունքներն ամրագրելու մասին հանրաքվեի արդյունքներն ամրագրելու մասին:

Հ.Գ. Սույն փաստաթուղթը ստորագրել են 23 միջազգային դիտորդներ՝ համաշխարհային ճանաչում ունեցող մի շարք լրատվամիջոցների ներկայացուցիչների մասնակցությամբ:

СОКРАЩЕННО НКР.

Нагорно-Карабахская Республика пользуется полномочиями, предоставленными республикам Конституцией и законодательством СССР и оставляет за собой право самостоятельно определять свой государственно-правовой статус на основе политических консультаций и переговоров с руководством страны и республик. На территории Нагорно-Карабахской Республики до принятия Конституции и законов НКР действуют Конституция и законодательство СССР, а также другие ныне действующие законы, которые не противоречат целям и принципам настоящей Декларации и особенностям Республики.

Совместная сессия Нагорно-Карабахского областного и Шаумяновского районного Советов народных депутатов с участием депутатов Советов всех уровней.

2 сентября 1991г

Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն

Արցախահայության պեպական կյանքի անխախտ շղթան

Պատմություն եւ արդիականություն

ՎԱՀՐԱՄ ԲԱԼԱՅԱՆ
ԼՂՀ ԱԺ փոխնախագահ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

«Բնությունն ու պատմությունը Ղարաբաղում ստեղծել են ցայտուն արտահայտված մի տիպ. սփռված ամբողջ աշխարհում՝ ղարաբաղցիները հեշտությամբ կարող են ճանաչվել: Գործունեության լայն թափ, անծնազոհ քաջություն, վտանգալից խիզախության հակում, ինքնավստահություն, նահապետականություն ընտանեկան կյանքում՝ ահա ղարաբաղցու համակրելի գծերը, որոնք ասես խտացնում են հին հայկական առաքինությունները՝ խամրած պատմության դաժանություններից եւ մաքուր տեսքով պահպանված Ղարաբաղը». Սերգեյ Գորոդեցկի:

Արցախը զբաղեցնում է Փոքր Կովկասի հարավարեւելյան լեռնոտ տարածքը, Մեծ Հայքի ծայր արեւելյան հատվածի մի մասը: Նրա սահմաններն արեւմուտքում հասնում են մինչեւ Սեւանա լճի արեւելյան ափերը, հարավարեւմուտքում՝ Աղավնո, հարավում՝ Երասխ (Արաքս) գետերը, արեւելքում խորանում Մուխանքի դաշտաբերանում, իսկ հյուսիսից՝ եզրագծվում Ղարաբաղյան լեռնաշղթայով:

Երկրամասը ունի խիստ կտրտված լեռնային մակերեւույթ: Ամենաբարձր գագաթներն են Գյամիշը, Մռավը, Քիրսը: Ասես աստծո կամոք այս լեռներն ու լեռնաշղթաները ձեռք ձեռքի տված մի բերդ են կազմել: Պատահական չէ, որ վաղ միջնադարյան հայ պատմիչները Արցախը անվանում էին Արցախամուր աշխարհ:

Հնագիտական նյութերը, օտար եւ հայ աղբյուրները վկայում են, որ մարդն Արցախում շարունակաբար ապրել է հնագույն ժամանակներից ի վեր:

Հայկական լեռնաշխարհում ժողովրդակազմավորման գործընթացի ավարտից հետո Ք.ա. 3-1-ին հազարամյակներում հանդես եկան առաջին պետական կազմավորումները, որոնց շարքում իր ուրույն տեղն ու դերն ուներ Ուրարտուն՝ Վանի կամ Արարատի թագավորությունը: Արցախը Արգիշտի Ա-ի կառավարման տարիներին ներառված է եղել Ուրարտական պետության կազմում, ինչի մասին վկայված է Արգիշտի Ա-ի Կոտայքում գտնված ժայռափոր արձանագրության մեջ, որտեղ խոսվում է Զառ քաղաքի մասին: Այն համընկնում է Արցախի միջնադարյան Ծար մելիքանիստ ավանի եւ ներկայիս Քարվաճառի շրջանի Ծար գյուղի հետ:

Հայոց երկրի հաջորդ թագավորատոհմերի՝ Երվանդունիների եւ Արտաշիսյանների օրոք Արցախը եւ Ուտիքը շարունակում են մնալ միացյալ թագավորության կազմում: Հույն եւ հռոմեացի պատմիչները վկայում են, որ Հայաստանի արեւելյան սահմանները անցնում են Կուր գետով:

Արցախից հավաքագրված զինված ուժերը Ք.ա. 2-րդ դարում, Արտաշես Ա-ի կառավարման տարիներին նպաստեցին երկրի սահմանների ընդարձակմանը: Ըստ հույն պատմիչ Ստրաբոնի՝ Արցախը այդ ժամանակ արտահանում էր մեծաքանակ պատերազմական ձիեր: Արտաշես Ա-ի կիսատ թողած գործը շարունակեց նրա թոռ Տիգրան Բ Մեծը եւ առավել ընդարձակելով տերության սահմանները, ստեղծեց ծովից ծով Հայաստան: Լայնածավալ տերությունը ներքաշվեց հելլենիստական մշակույթի ոլորտը, որի բնորոշ գծերից մեկը քաղաքաշինությունն էր:

Տիգրան Բ Մեծը բուն Հայաստանում կառուցեց 4 քաղաք եւ դրանք կոչեց իր անունով՝ Տիգրանակերտ: Արցախի Վանքասարի ստորոտում կառուցվել է Տիգրանակերտը, որին հետագայում եկվոր թուրքերը անվանել են Գյավուրդալա՝ դրանով իսկ անուղղակի ձեւով վկայելով հայկական ծագումնաբանության մասին: Այն շարունակել է գոյատեւել նաեւ վաղ միջնադարում:

2006թ. հայ հնագետների ջանքերով հողի տակից վեր բարձրացան Արցախի Տիգրանակերտի հնագույն կառույցները՝ հայ մարդու կույր ու խուլ ընդդիմախոսին որերորդ անգամ նորից ապացուցելով, որ Նոյի ժամանակներից այս աշխարհը հայաշունչ ու հայաբույր է:

Ներոնի ժամանակներից Հռոմում պահպանված պատի վրա փորագրված աշխարհի մարմարե քարտեզում Արցախը դիտվում էր որպես Հայոց պետության նահանգներից մեկը: Այս իրողությունը ժամանակին արձանագրել են Ք.ա. 1-ին դարից մինչեւ Ք.հ. 5-րդ դարն ապրած հույն եւ հռոմեացի մատենագիրները:

Սակայն 387թ. պարսկա-բյուզանդական համաձայնությամբ Մեծ Հայքի թագավորությունը ծվեն-ծվեն արվեց երկու տերությունների միջեւ: 428թ. Արշակունիների թագավորության անկումից հետո հայոց դիմադրական ուժը վերջնական կոտրելու նպատակով պարսից արքունիքը 450-ական թվականներին Արցախ եւ Ուտիք նահանգները բռնակցեց Աղվանից մարզպանությանը:

Չնայած Հայաստանը բաժան-բաժան էր արվել, բայց եւ այնպես երկրի հայրենասեր ուժերը ջանքեր էին թափում հայրենիքի միասնությունը պահպանելու եւ պարսից արքունիքի կրոնափոխման ու ուծացման քաղաքականությանը դիմակայելու: Հայոց արեւելից կողմանց նախարարները նույնպես կամովին ներ էին քաշվել ազատագրական շարժման հորձանուտների մեջ: Այդպես էր

Լեռնային Դարաբաղի Հանրապետություն

Ավարայրում ու Սարդարապատում, այդպես է նաեւ այսօր:

Արցախի քաջորդիները Բակ Առանշահիկ իշխանի գլխավորությամբ, Վարդան զորավարին թեւ ու թիկունք դարձած, մարտնչեցին Ավարայրում՝ իրենց նվիրական արյունը հեղելով ազատության դաշտում:

5-րդ դարի հակապարսկական հուժկու ապստամբությունից հետո, Արցախի եւ Ուտիքի Առանշահիկ հայ իշխանական տոհմը՝ Վաչագան Բարեպաշտի օրոք, հզորանալով, իրեն հայտարարում է թագավորություն: Պետականության հիմքերը անսասան դարձնելու եւ երկրի հոգեւոր կյանքը աշխուժացնելու համար Վաչագան թագավորը, ինչպես Մ. Կաղանկատվացին է ասում. «տարվա օրերի թվով եկեղեցիներ շինեց» ու նախանձախնդիր ջերմեռանդություն ցուցաբերեց հայ դպրության տարածման գործում: Նրա նախաձեռնությամբ 488թ. Աղվենի ժողովում ընդունվեց առաջին սահմանադրությունը:

7-րդ դարի սկզբներին Հայոց երկրի անդորրը խաթարեցին արաբական մահասփյուռ արշավանքները, որոնց դիմակայելու նպատակով Արցախի տարբեր գավառներում կառուցվեցին Հանդաբերդը, Կաչաղակաբերդը, Քթիշը, Շիկաքարը:

Հայ ժողովրդի հակաարաբական ընդվզումները անարդյունք վախճան չունեցան եւ հանգեցրին Հայաստանի անկախության վերականգնմանը: 885թ. խալիֆայությունը ճանաչեց Աշոտ Բագրատունուն Մեծ Հայքի նահանգների գերագահ տիրակալ: Արցախը կրկին հայտնվեց համահայկական պետության ուղեծրում:

9-10-րդ դարերին վերաբերող արաբ աղբյուրները վկայում են, որ Պարտավից Քարվաճառի վրայով Դվին տանող ճանապարհի բոլոր քաղաքները հայկական էին եւ պատկանում էին Աշոտ Բագրատունու թագավորությանը:

9-րդ դարում Արցախի արեւմտյան եւ հյուսիսային կողմերում կազմավորվում է Խաչենի իշխանությունը: Խաչենի իշխանական տան շառավիղներն են համարվում Գարդմանքի Սահակ Սեւադայի, Հաթերքի Վախթանգյանները, Դեսումյանները, Դլենյանները եւ Խաղբակյան-Պռոշյանները:

10-րդ դարի կեսերին Սահակ Սեւադայի թոռան՝ Հովհաննես Սենեքերիմի ջանքերով Շամքոր գետակի վերին ավազանում կազմավորվում է Փառիսոսի թագավորությունը, որի հյուսիսային սահմանը հասնում է մինչեւ Կուր գետը: Թագավորանիստ քաղաքն էր Փառիսոսը՝ ներկայիս Ադրբեջանի Կալաքենդ գյուղի մոտ: Այս տոհմի ներկայացուցիչներից մեկը՝ Օշինը թուրք-սելջուկների ճնշումների տակ Գանձակի շրջակայքում գտնվող Մայրեցաջրից տեղափոխվում է Կիլիկիա եւ դառնում Լամբրոն բերդի ու նրա շրջակայքի տերը: Օշինի հաջորդներից էր Հեթում Ա-ն, որից էլ սկզբնավորվում է Կիլիկիայի Հեթումյանների տունը:

Արցախի մյուս ծայրում՝ Արաքսի հարեւանությամբ, 9-րդ դարում ձեւավորվում է մեկ այլ՝ Դիզակի իշխանությունը: Արցախի իշխանությունների բարգավաճ կյանքը 11-րդ դարի կեսերից սկսած խաթարվեց սելջուկ-թուրքերի, իսկ 13-րդ դարից՝ մոնղոլ-թաթարների արշավանքների հետեւանքով: Խռովվեց հայ մարդու անդորրը: Հայը իր տան մեջ առաջին անգամ անպաշտպան զգաց: Նա նոր հազարամյակ ոտք դրեց՝ իր կողքին զգալով այլ արժեքներով ապրող քոչվոր ու օտար ցեղի սահմռկեցուցիչ շունչը: Նրանք եկել էին այլեւս չգնալու համար: Հույնի ու հայի հողի վրա թուրքը ստեղծեց իր պետությունը՝ չարիք ու դաժանություն սփռելով շրջակա երկրներում: Այս պայմաններում էլ արցախցի հայը, կուչ գալով լեռնաստանում, շարունակեց պահել իր ինքնությունը:

Եկան նոր ժամանակներ: Զաքարյաններին հաջողվեց ազատագրել հյուսիսարեւելյան Հայաստանի նահանգները: Հայոց միասնությունը անխաթար պահելու համար Զաքարյան իշխանները խնամիական կապեր ստեղծեցին գավառային հզոր իշխանական տների հետ: Ներքին Խաչենի տեր Վախթանգ-Տանգիկի կինն էր վրաց-հայկական զորքի հրամանատար Սարգիս Զաքարյանի դուստր Խորիշահը, սրանց որդին էր Հասան-Ջալալ Դոլան: Այս Հասանի անունով էլ նրանց շառավիղները սկսեցին հետագա դարերում կոչվել Հասան-Ջալալյաններ, որոնց մեծագործություններին բազմաթիվ սերունդներ պիտի ականջալուր եւ ականատես լինեին: Հասան-Ջալալը իրեն համարում էր «թագաւոր բարձր եւ մեծ արցախական աշխարհի»:

Վերին Խաչենի կամ Ծարի Հասան իշխանը ամուսնացել էր Սարգիս Զաքարյանի մյուս աղջկա՝ Դոփի հետ: Իշխանուհին չափազանց լայնախոհ, եռանդուն մի գործիչ էր, որի հայրենանվեր գործունեությունը իրավունք վերապահեց այդ տոհմը կոչել նրա անունով՝ Դոփյան: Իշխանանիստ կենտրոնն էր Ծարը՝ ներկայիս Քարվաճառի շրջանի Ծար գյուղի տեղում: Առայսօր այստեղ կանգուն են իշխանուհու կառուցած եկեղեցիները:

Հայության արնածոր վերքերը դեռ չէին սպիացել, երբ 14-րդ դարի 80-ական թվականներին Այսրկովկաս խուժեցին Լանկ-Թամուրի հորդաները: Աշխարհավեր հորդաներին կրնկակոխ այնուհետեւ Հայաստան թափանցեցին կարակոյունլու եւ աղկոյունլու թուրքմենական քոչվոր ցեղերը:

Արցախի Առանշահիկ նախարարական տան շառավիղները, դիմակայելով օտար բռնավորների դժնդակ տիրապետության մղձավանջներին, ավելի մանրացան, եւ կառչելով լեռնաստանի անմատչելի վայրերին, լիահույս սպասում էին բարենպաստ օրերի գալստյանը:

15-րդ դարից սկսած Արցախում շարունակում են պահպանվել հայկական պետականության բեկորները՝ այս անգամ մելիքությունների ձեւով:

16-րդ դարի սկզբներից մինչեւ 17-րդ դարի 30-ական թվականների վերջը Հայաստանը ռազմական թատերաբեմ էր դարձել Առաջավոր Ասիայում քաղաքական առաջնության ձգտող Սեֆյան Իրանի եւ Օսմանյան Թուրքիայի միջեւ:

Քաջածանոթ լինելով հայ զինվորականության սխրանքներին, Շահ Աբասը, հետագա բարդություններից խուսափելու նպատակով, Պարսկաստանի խորքերից քրդական ցեղեր տեղափոխեց եւ բնակեցրեց Արցախի ու Սյունիքի մելիքությունների միջեւ՝ Արաքսի ափից մինչեւ Մռավի փեշերը: Չնայած այդ դժվարություններին, Դիզակի, Վարանդայի, Խաչենի, Ջրաբերդի եւ Գյուլիստանի մելիքական տները, ժողովրդի հետ համախմբված, անխաթար էին պահում հայրենիքի սահմանները:

Պարբերաբար կրկնվող ավերիչ արշավանքների առաջն առնելու նպատակով անջատ-անջատ գործող Արցախի մելիքները, ապավինած իրենց անառիկ բերդերին, ստեղծեցին զինա-

Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն

Արթուր Մկրտչյան, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Գխ առաջին նախագահ

կան միասնություն, որը պատմությանը հայտնի է սղնախներ անունով: Վերածնվեց արցախահայ պետականությունը:

Հինգ մելիքությունից կազմված նահանգը, կենտրոն ունենալով Տող ավանը, Դիզակի մելիք Եգանի գլխավորությամբ ճանաչվեց որպես հայկական ինքնավար մի երկիր, որի սահմանները ձգվում էին Գանձակի մատույցներից մինչեւ Արաքս գետը: Մելիք Եգանը, օգտագործելով Նադիրի հետ ունեցած իր ջերմ հարաբերությունները, հոգում էր ողջ Արեւելյան Հայաստանի հայության հոգսերը:

18-րդ դարի երկրորդ կեսին արցախահայությունը դաժան մարտեր էր մղում կուր-արաքսյան միջագետքից դեպի լեռնաստան ձգտող ավազակաբարո թուրքախոս ցեղերի դեմ:

Ղարաբաղցու կամքը անկոտրում ու համառ էր: Տվյալ ժամանակահատվածում Ռուսական կայսրությունը եւս ձգտում էր ամրանալ Այսրկովկասում:

19-րդ դարասկզբին, հայության ջանադիր մասնակցությամբ, ռուսական զենքի հաղթանակները ամբողջականացվեցին 1813թ. հոկտեմբերի 12-ի Գյուլիստանի եւ 1828թ. փետրվարի 10-ի Թուրքմենչայի պայմանագրերով:

Արեւելյան Հայաստանը, այդ թվում Արցախը, անցնելով Ռուսաստանին, հայ ժողովուրդը ցանկալի ազատությունը չստացավ: Պարսկական լուծը փոխարինվեց ռուսականով:

1917թ փետրվարյան հեղափոխության եւ հոկտեմբերյան պետական հեղաշրջումների հետեւանքով փոխվում է ռուսական կայսրության քաղաքական համակարգը: Նոր մարտահրավերներին դիմակայելու նպատակով Արցախում գործող քաղաքական ուժերի եւ հատկապես դաշնակցության ջանքերով 1917թ. դեկտեմբերին Շուշիում ստեղծվում է կառավարման մարմին՝ Միջկուսակցական բյուրոն, որի իշխանությունը ընդունելի էր ոչ միայն երկրամասի հայ բնակչության, այլեւ ազգային փոքրամասնությունների՝ թաթարների եւ ռուսների համար:

1918թ. մայիսի 27-ին «Մուսավաթ» կուսակցությունը նախկին Բաքվի եւ Ելիզավետպոլի նահանգները հռչակում է ադրբեջանական: Աշխարհի քաղաքական քարտեզի վրա գծվում է մի նոր պետություն, որի հիմքում դրված էին ոչ պատմականության եւ ոչ էլ էթնիկական պատկանելիության սկզբունքները: Այն ստեղծվեց պանթուրքիստական եւ մեծ տերությունների շահանկատ ծրագրերի իրագործման եւ հայկական հարցի վերջնական կործանման համար:

Հորիզոնում ընդգծվում էր թուրքական յաթաղանի մահաստիյուռ ուրվականը: Անհրաժեշտ էր անցնել ինքնապաշտպանության եւ պահպանել երկրամասի ինքնուրույնությունը: Այդ նպատակով 1918թ. հուլիսի 22-26-ը Շուշիում հրավիրվեց Ղարաբաղի հայության առաջին համագումարը: Լեռնային Ղարաբաղը հայտարարվեց անկախ վարչաքաղաքական միավոր, ընտրվեց ազգային խորհուրդ եւ 7 հոգուց բաղկացած ժողովրդական կառավարություն: Արցախահայությունը շուրջ երկու տարի դաժան մարտեր է մղում թուրք-թաթարական զավթիչների դեմ:

1920թ. մայիսի 12-ին Ադրբեջանի խորհրդային կառավարությունը, 11-րդ ռուսական կարմիր բանակի զորամասերի աջակցությամբ, խորհրդայնացրեց Ղարաբաղը: Նորից ասպարեզ իջավ այսպես կոչված «վիճարկելի» տարածքների հարցը: Պահը շատ հարմար էր՝ Ադրբեջանը խորհրդային էր եւ խորհրդային Ռուսաստանի բարեկամը, իսկ Հայաստանը, ինչպես այն ժամանակ բոլշեւիկ քարոզիչներն էին համարում, միջազգային իմպերիալիզմի գործակալը: Համաշխարհային հեղափոխության մոլուցքով բռնված բոլշեւիկները, իրենց նոր դաշնակցին՝ Թուրքիային հաճոյանալու նպատակով 1921թ. հուլիսի 5-ին ՌԿ/Բ/Կ Կավբյուրոյի որոշմամբ Լեռնային Ղարաբաղը նվիրաբերեցին Ադրբեջանին:

Արցախահայության պայքարի շնորհիվ 1923թ. ստեղծվեց Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզը, որը ԽՍՀՄ վարչաքաղաքական համակարգում իր ուրույն տեղն ուներ:

Չնայած քաղաքական տեսակետից շատ աննպաստ ժամանակաշրջան էր, բայց արցախահայությունը, չկորցնելով վաղվա նկատմամբ իր հավատը, աշխատասիրությամբ եւ ստեղծագործական հնարավորությունների գերագույն լարումով կերտում էր իր ապագան:

1980-ականների վերջերին արցախցին ստիպված էր այս անգամ էլ զենքը ձեռքին կանգնել իր տան շեմին: 1987թ. մխացող կրակը վերածվեց բոցավառ հրդեհի: Դժվարին պայմաններում կազմակերպվեց յուրօրինակ հանրաքվե եւ 80 հազար համախոսականներ ուղարկվեցին Մոսկվա: Իսկ 1988թ. փետրվարի 20-ը դարձավ արցախյան նորօրյա պայքարի իրավական ելակետը: ԼՂԻՄ մարզխորհուրդը, արտահայտելով ժողովրդի ցանկությունը, ընդունեց պատմական որոշում՝ ԼՂԻՄ-ը Ադրբեջանի

Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն

կազմից դուրս բերելու եւ Հայաստանի կազմի մեջ ընդգրկելու մասին: Սակայն Կրեմլը ի սկզբանե Ղարաբաղյան շարժման նկատմամբ անհանդուրժողական դիրք գրավեց: Ոգեւորվելով կենտրոնական /մոսկովյան/ իշխանությունների աջակցությունից, Ադրբեջանի ղեկավարությունը դիմեց բիրտ ուժի եւ բռնության քաղաքականությանը:

Հուսահատության հասած արցախահայությունը, օտարների հովանավորության պատրանքը թոթափելով, իր սեփական բախտը կռելու վճռականությամբ, զենքի դիմեց: Ինքնապաշտպանության մղումով ստեղծվեցին հայ աշխարհազորայինների առաջին խմբերն ու ջոկատները, որոնք Շահումյանում, Գետաշենում եւ Լեռնային Ղարաբաղում արժանի հակահարված տվեցին թշնամուն:

1991թ. սեպտեմբերի 2-ին Ստեփանակերտում տեղի ունեցավ ժողովրդական պատգամավորների Լեռնային Ղարաբաղի մարզային եւ Շահումյանի շրջանային խորհուրդների համատեղ նստաշրջան, որտեղ ընդունվեց «Հռչակագիր Լեռնային Ղարաբաղի հանրապետության հռչակման մասին»:

Արցախահայությունը իր պետականության վերակերտման ճանապարհին, հետեւելով ԽՍՀՄ օրենսդրությանը եւ միջազգային իրավունքի բոլոր նորմերին, 1991թ. դեկտեմբերի 10-ին կազմակերպեց համաժողովրդական հանրաքվե: Բնակչության 99,89 տոկոսը «այո» ասաց ԼՂՀ հռչակմանը: 1991թ. վերջերին անցկացվեցին ԼՂՀ Գերագույն խորհրդի առաջին ընտրությունները: 1992թ. հունվարի 8-ին 33-ամյա Արթուր Մկրտչյանը ընտրվեց ԳԽ առաջին նախագահ:

Այս իրադարձությունները սրով ընդունեց Ադրբեջանի ղեկավարությունը: Արդեն նշմարելի էր դառնում վերահաս լայնամասշտաբ պատերազմի ուրվականը: 1991թ. վերջերին Ադրբեջանը զինված ագրեսիա սկսեց Լեռնային Ղարաբաղի հանրապետության դեմ:

Արցախցու վճռականության ու հաղթանակի նկատմամբ հավատի շնորհիվ հարեւան հանրապետության ղեկավարությունը ստիպված նստեց բանակցությունների սեղանի շուրջը: Այն ավարտվեց 1994թ մայիսի 14-ին զինադադարի հաստատումով: Ղարաբաղյան հակամարտությունը թեւակոխեց հերթական խաղաղ բանակցային փուլը:

Խուլ շրջափակման մեջ հայտնված երկիրը պարտավոր էր ոչ միայն ամոքելու վերքերը, այլ նաեւ համաքայլ դառնալու աշխարհում ընդունված քաղաքական, տնտեսական գործընթացներին:

1994թ. մինչեւ 2016թ. անցկացվեցին հինգ նախագահական եւ վեց խորհրդարանական ընտրություններ: Երկրի առաջին նախագահ ընտրվեց Ռոբերտ Քոչարյանը, 1997թ. եւ 2002թ.՝ Արկադի Ղուկասյանը, 2007թ. եւ 2012թ՝ Բակո Սահակյանը:

Փլատակների տակից սկսեցին վեր խոյանալ դպրոցներն ու մշակութային օջախները: Անհրաժեշտ էր լուծել Ադրբեջանից հազարավոր բռնատեղահանվածների առօրյա հոգսերը: Այս ամենը անհնարին է պատկերացնել առանց մայր Հայաստանի, համայն աշխարհի հայության բարոյական, քաղաքական ու նյութական աջակցության: Սփյուռքի աջակցությամբ կառուցվեցին հարյուրավոր կիլոմետր ճանապարհներ, տասնյակ դպրոցական շենքեր, մշակութային օջախներ:

Ստեղծվեց հետխորհրդային տարածքի ամենամարտունակ բանակներից մեկը, որը ԼՂՀ եւ նրա ժողովրդի անվտանգության գլխավոր ու հուսալի երաշխավորն է: Կյանքի կոչվեցին արտադրական նոր ձեռնարկություններ: Իր բազկի ուժով կերտած ազատությունն ու անկախությունը այսօր Արցախի հայը ամրապնդում է խաղաղ ստեղծագործ աշխատանքով: Բայց այս ամենը արցախահայության իղձերի վերջնական սահմանը չէ: Այսօր նա կցանկանար քարտեզի վրա ԼՂՀ-ն տեսնել որպես խաղաղության ու բարօրության մի կղզյակ: Դրա առհավատչյան դարձավ 2006թ. դեկտեմբերի 10-ի համաժողովրդական «Այո»-ով ընդունված Սահմանադրությունը:

Արցախցու անխորտակ նավը, անցնելով խռովահույզ օվկիանոսը, մաքառելով չարի ու բռնության դեմ, հասել է 21-րդ դարի ալեկոծ նավահանգիստը: Դա հանգրվան է նոր հորիզոններ բացելու համար: Նորօրյա պետականության ստեղծման ճանապարհին, հաղթահարելով տեսանելի ու անտեսանելի խութերը, ԼՂՀ-ն արդարացի պահանջատիրությամբ, կենսահաստատ, համառ ու անկոտրում դիրքորոշմամբ աշխարհի հզորներից պահանջում է հարգանքով եւ ըմբռնումով մոտենալ իր դատին ու պահանջատիրությանը: Այսօր արցախցին իր խաղաղ, ստեղծագործ աշխատանքով փորձում է անմասն չմնալ համամարդկային արժեքներից՝ իրեն զգալով երկիր մոլորակի համակեցության անբաժանելի մասնիկ:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն

ԼՂՀ կազմավորման պատմությունը

Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը /ԼՂՀ/ կազմավորվել է 1991թ. սեպտեմբերի 2-ին նախկին Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի եւ հարակից Շահումյանի շրջանի սահմաններում: Այդ օրը Լեռնային Ղարաբաղի մարզային եւ Շահումյանի շրջանային խորհուրդների համատեղ նիստը՝ բոլոր մակարդակի խորհուրդների պատգամավորների մասնակցությամբ, ընդունել է հռչակագիր ԼՂՀ հռչակման մասին՝ ԽՍՀՄ օրենսդրական նորմերին, ինչպես նաեւ միջազգային իրավական փաստաթղթերում ամրագրված ժողովրդի ինքնորոշման իրավունքին համապատասխան:

/ԽՍՀՄ Սահմանադրություն, հոդված 72, ԽՍՀՄ օրենքը «ԽՍՀՄ կազմից միութենական հանրապետությունների դուրս գալու հետ կապված հարցերի լուծման կարգի մասին», 1990թ. ապրիլի 3: Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր, հոդված 1, 10 դեկտեմբերի 1948թ., ԵԽԱԽ անդամ-երկրների ներկայացուցիչների Վիեննայի հանդիպման եզրափակիչ փաստաթուղթ, կետ 4, 1989թ., ՄԱԿ-ի կանոնադրությանը համաձայն պետությունների միջեւ բարեկամական հարաբերություններին վերաբերող միջազգային իրավունքի սկզբունքների մասին Հռչակագիր, 1945թ./

Ավելի ուշ, օգտագործելով ինքնուրույն հանրաքվե անցկացնելու եւ սեփական պետահիրավական կարգավիճակի մասին հարցադրման իրավունքը, որն ամրագրված է միութենական օրենսդրության մեջ, ԼՂՀ ժողովրդական պատգամավորների խորհուրդը որոշում է ընդունել հանրապետության անկախության մասին հանրաքվե անցկացնելու շուրջ: 1991թ. դեկտեմբերի 10-ին կայացած հանրաքվեին, որն անցել է տարբեր տեսակի զենքերից հայկական բնակավայրերի անդադար հրետակոծության ներքո, մասնակցել է գրանցված քաղաքացիների 82.2%-ը: Այդ հանրաքվեին մասնակցել են նաեւ Գետաշենի ենթաշրջանի բնակիչները՝ դրանով իսկ իրավական տեսակետից ամրագրելով ենթաշրջանի՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կազմի մեջ մտնելը: Քվեարկությանը չմասնակցած մարդկանց մեծամասնությունն ադրբեջանական բնակավայրերի բնակիչներն էին: Քվեաթերթիկները տպագրվել էին երեք լեզուներով՝ հայերեն, ադրբեջաներեն եւ ռուսերեն: Քվեարկածների 99.89%-ը հանդես է եկել Ադրբեջանից անկախանալու օգտին: Հանրաքվեի արդյունքները, նրա ժողովրդավարական եւ թափանցիկ լինելը հաստատել էին արտասահմանյան անկախ դիտորդները:

1991թ. դեկտեմբերի 28-ին ձեւավորված ԼՂՀ Գերագույն խորհուրդն /խորհրդարան/ ընդունել է Հռչակագիր պետական անկախության մասին՝ դրանով իսկ օրենսդրորեն ամրագրելով ինչպես հանրաքվեի արդյունքները, այնպես էլ իրավական փաստաթղթերի հաջորդականությունը, որոնք ապահովում են քաղաքական կարգավիճակի ինքնուրույն որոշման Լեռնային Ղարաբաղի ժողովրդի իրավունքը:

1992թ. օգոստոսին Գերագույն խորհրդի նախագահության որոշմամբ ԼՂՀ-ում ստեղծվում է Պաշտպանության պետական կոմիտե /ՊՊԿ/, որին է փոխանցվում ողջ գործադիր եւ մասամբ օրենսդրական իշխանությունները: ՊՊԿ-ի նախագահի պաշտոնը զբաղեցնում է Ռոբերտ Քոչարյանը, ում վրա են դրվում հանրապետության վարչապետի պարտականությունները:

1994թ. դեկտեմբերի 21-ին Գերագույն խորհրդի որոշմամբ ԼՂՀ-ում մտցվում է նախագահական կառավարման ինստիտուտ, եւ առաջին նախագահ է ընտրվում ՊՊԿ-ի նախագահ Ռոբերտ Քոչարյանը: Համաձայն «ԼՂՀ նախագահի մասին» օրենքի, պետության ղեկավարի հաջորդ ընտրությունները պետք է կայանային երկու տարի անց՝ համընդհանուր, հավասար եւ ուղիղ ընտրական իրավունքի հիման վրա՝ հինգ տարի ժամկետով: Եվ 1996թ. նոյեմբերի 24-ին ԼՂՀ նախագահի առաջին համաժողովրդական ընտրությունում պետության ղեկավար է վերընտրվում Ռոբերտ Քոչարյանը /քվեների 88.91%/ :

Ռոբերտ Քոչարյանին Հայաստանի վարչապետ նշանակելու կապակցությամբ, 1997թ. սեպտեմբերի 1-ին ԼՂՀ-ում տեղի են ունենում նախագահի արտահերթ ընտրություններ: Պետության նախագահ է ընտրվում ԼՂՀ արտաքին գործերի նախարար Արկադի Ղուկասյանը /քվեների 89.32%/: 2002թ. օգոստոսի 11-ին Արկադի Ղուկասյանը վերընտրվում է հանրապետության նախագահի պաշտոնում /88.95%/:

2007թ. հուլիսի 19-ին Լեռնային Ղարաբաղում անց է կացվում հանրապետության ղեկավարի 4-րդ համաժողովրդական ընտրությունը: Ձայների ճնշող մեծամասնությամբ /85.1%/ նախագահ է ընտրվում Բակո Սահակյանը, ով նախկինում զբաղեցնում էր ԼՂՀ ազգային անվտանգության ծառայության ղեկավարի պաշտոնը:

president.nkr.am

Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն

Ինչպե՞ս կայացավ բիշքեկյան հանդիպումը

ԴԱՎԻԹ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

1994թ. ապրիլի 15-ին կայացավ ԱՊՀ անդամ երկրների ղեկավարների նիստը: Նիստում ընդունվեց հայտարարություն, որով ղարաբաղյան հակամարտության կողմերին կոչ էր արվում՝ սեղմ ժամկետում դադարեցնել ռազմագործողությունները եւ հաստատել զինադադարի ռեժիմ:

Լրացավ ադրբեջանա-ղարաբաղյան ճակատում զինադադարն ուժի մեջ մտնելու 20 տարին, ինչն արդյունք էր Հայաստանի, Ադրբեջանի եւ Լեռնային Ղարաբաղի միջեւ Ղրղզստանի մայրաքաղաք Բիշքեկում ձեռք բերված պայմանավորվածության: Հատկանշական է, որ հրադադարի ռեժիմն ահա արդեն երկու տասնամյակ է, ինչ պահպանվում է, եւ, ընդհանուր առմամբ, տարածաշրջանում անդորր է տիրում (չհաշված հակառակորդի կողմից սահմանային դիրքերում երբեմն արձանագրվող խախտումները): Եվ, փոխանակ Ադրբեջանի իշխանությունները նոր քայլեր կատարեն հրադադարը երկարաձգելու, ռազմագործողությունների վերջնական դադարեցման ու խաղաղ պայմանագրի պատրաստման ուղղությամբ, նոր անպատասխանատու կոչեր են հնչում Բաքվից: Առավել տարօրինակ է, երբ նման տխուր «առաքելություն» է որդեգրել երկրի նախագահը, այն էլ՝ բիշքեկյան պայմանագրի ստորագրման 20-ամյակի օրերին:

Բիշքեկյան հանդիպմանը, որին հրավիրվել էր նաեւ Լեռնային Ղարաբաղի պատվիրակությունը, մասնակցում էին ԼՂՀ խորհրդարանի նախագահ Կարեն Բաբուրյանը (պատվիրակության ղեկավար), արտգործնախարար Արկադի Ղուկասյանը, խորհրդարանական հանձնաժողովի նախագահ Վալերի Բալայանը, ԱԺ խոսնակի խորհրդական Վասիլի Աթաջանյանը, ինչպես նաեւ օգնականներ Աշոտ Ղուլյանը եւ Լեւոն Մայիլյանը: Կարեւորելով հրադադարի վերաբերյալ համաձայնագրի ստորագրման անհրաժեշտությունը, ինչպես զրույցի ժամանակ խոստովանեց Աշոտ Ղուլյանը, նման մակարդակի հանդիպումներին մասնակցելու առումով, դա իր համար «առաջին հաջողությամբ դիմակայված փորձությունն էր»...

ԼՂՀ արտաքին քաղաքական գերատեսչության ղեկավարի համոզմամբ, բիշքեկյան հանդիպումը եւ ընդհանրապես 1994թ. մայիսը, նշանակալի փուլ էր արցախյան հիմնախնդրի կարգավորման պատմության մեջ:

- Չնայած մինչ այդ ադրբեջանա-ղարաբաղյան ճակատում ռազմագործողությունների դադարեցման մասին կնքվել էին պայմանագրեր, սակայն դրանք, որպես կանոն, լավագույն դեպքում գործում էին մեկ շաբաթվա կտրվածքով: Ըստ որում՝ հրադադարի ռեժիմը գլխավորապես խախտվում էր Ադրբեջանի կողմից, ինչի մասին այսօր հիշում են եւ միջնորդները:

Պարոն Ղուլյանը նշեց, որ խաղաղության գործընթացն այն տարիներին իրականացվում էր Ռուսաստանի եւ ԵԱՀԿ-ի կողմից: Խաղաղարար առաքելությանն աջակցում էր նաեւ ԱՊՀ միջխորհրդարանական վեհաժողովը, որի պատվիրակությունները հաճախ էին այցելում Ստեփանակերտ: 1994թ. մայիսի սկզբներին ռազմագործողությունները փաստացի լիովին տեղափոխվել էին հակառակորդի տարածքները եւ Արցախի շուրջ ստեղծվել էր անվտանգության գոտի: Սակայն անհաջող ռազմագործողություններում կրած ծանր պարտությունները բարոյալքել էին ադրբեջանական զինված ուժերին, ջլատել: Ու, չնայած զինադադար հաստատելու վերաբերյալ պայմանագրի ստորագրումն անհրաժեշտ էր եւ Ադրբեջանին, սակայն Բաքվի իշխանություններին կարծես «համարձակությունը» չէր հերիքում դիմել միջազգային կազմակերպություններին: Ինչպես ասում են, «դանակը ոսկորին հասավ» այն ժամանակ, երբ Արցախի պաշտպանական բանակը, շարունակելով իր հաղթարշավը, հակառակորդին ստիպեց հաշվի նստել իրողության հետ: Եվ Բաքուն, ահաբեկված հայկական ուժերի առաջխաղացման մտադրությունից, ի վերջո սկսեց միջնորդներ որոնել:

Պարզվում է, որ հրադադարի ձեռքբերման վերաբերյալ 1994թ. փետրվարին փորձ էր արվել Հայաստանի եւ Ադրբեջանի պաշտպանության նախարարությունների ղեկավարների ու ԼՂՀ ՊԲ ներկայացուցչի՝ Մոսկվայում կայացած հանդիպման ժամանակ, սակայն որերորդ անգամ ադրբեջանցիների մեղքով պայմանավորվածությունը խախտվել էր: Այնուամենայնիվ, Մոսկվայի ճնշմամբ հաջողվեց Ադրբեջանին ստիպել նստելու բանակցությունների սեղանի շուրջ: «Ապրիլի 15-ին տեղի էր ունեցել ԱՊՀ անդամ պետությունների ղեկավարների նիստը, որտեղ ընդունված հայտարարությամբ հակամարտության կողմերին կոչ էր արվում սեղմ ժամկետում դադարեցնել ռազմագործողությունները եւ հաստատել զինադադարի ռեժիմ, - պատմում է Ա.Ղուլյանը: - Դրանից հետո վեհաժողովն ավելի կոնկրետացրեց իր անելիքները: Մայիսի սկզբներին Բիշքեկ հրավիրվեցին հակամարտության անմիջական կողմերի (Հայաստանի, Ադրբեջանի եւ Լեռնային Ղարաբաղի) պատվիրակությունները (ԼՂՀ պատվիրակությունը գլխավորում էր ԱԺ խոսնակ Կ.Բաբուրյանը): Մայիսի 3-ին բոլորն արդեն Բիշքեկ էին ժամանել եւ հաջորդ օրը համառ ու լարված աշխատանք էր սպասվում»...

Աշոտ Ղուլյանի հավաստմամբ, որը պատվիրակության կազմում այդ օրերին գտնվում էր Ղրղզստանում, միասնական փաստաթղթի մշակման եւ այն պատվիրակությունների ստորագրմանը

Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն

ներկայացնելու նպատակով ստեղծվել էր աշխատանքային խումբ: «Սկզբնական շրջանում որոշակի լարվածություն էր զգացվում, - հիշում է արտգործնախարարը, - Ադրբեջանի պատվիրակությունն ամեն կերպ փորձում էր խոչընդոտել Լեռնային Ղարաբաղի պատվիրակության (իբրեւ առանձին կողմի) մասնակցությանը բանակցություններին, սակայն կազմակերպիչների հորդորներից հետո ստիպված տեղի տվեց»: Մայիսի 5-ին արդեն միասնական փաստաթուղթը ներկայացվեց ստորագրման: Եվ, չնայած Ադրբեջանի պատվիրակության ղեկավար, մեջլիսի փոխխոսնակ Ա.Ջալիլովը հրաժարվում էր պայմանագրի տակ դնել իր ստորագրությունը, մի քանի օր անց արձանագրությունը ստիպված եղավ ստորագրել խորհրդարանի խոսնակ Ռ. Գուլիեւը:

Ուշագրավ է, որ արձանագրության մեջ Լեռնային Ղարաբաղը ճանաչվում է ոչ միայն հակամարտության լիիրավ կողմ, այլեւ ներկայացվում է որպես հաղթող կողմ: Հայաստանի, Ադրբեջանի եւ ԼՂՀ պատվիրակությունների ղեկավարներից բացի փաստաթուղթը ստորագրել էին նաեւ Ղրղզստանի մեջլիսի եւ ՌԴ պետդումայի նախագահները, մի հանգամանք, ինչն ավելի է արժեքավորում փաստաթուղթը: Այդպիսով, Ռուսաստանի միջնորդությամբ 1994թ. մայիսի 12-ին ադրբեջանա-ղարաբաղյան ճակատում ուժի մեջ մտավ զինադադարը, որը շուրջ երկու տասնամյակ է, ինչ պահպանվում է՝ բացառապես հակամարտ կողմերի ռազմական հաշվեկշռի շնորհիվ:

Ցավալի է, որ հրադադարի վերաբերյալ ձեռք բերված համաձայնության հիշարժան տարելիցի օրերին երբեմն զավեշտական հայտարարություններ են հնչում Բաքվից: Փորձ է արվում անտեսել բանակցությունների ընթացքում արձանագրված տեղաշարժը, մինչեւ իսկ կասկածի տակ է դրվում ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների աշխատանքը, սակայն միջազգային հանրությունը հազիվ թե համաձայնի նման գնահատականներին: Ադրբեջանի քաղաքական ուժերի նման պահվածքն այլ կերպ չես որակի, քան ղարաբաղյան հարցը փակուղի մտցնելու միտում: Հայաստանի եւ ԼՂՀ իշխանությունները մեկ անգամ չէ, որ նշել են. ղարաբաղյան խնդրի կարգավորումը պիտի բխի պատմական իրավունքներից, փաստացի իրավիճակից, Արցախի ժողովրդի անվտանգության ապահովման անհրաժեշտությունից: Այսօր էլ նրանք հավատարիմ են մնում իրենց որդեգրած սկզբունքներին՝ պահանջելով ԼՂՀ անկախության ճանաչումը: Ընդ որում, շեշտվել է, որ հիմնահարցի շուրջ ընթացող ցանկացած բանակցություններում պետք է վերականգնվի ԼՂՀ իշխանությունների ներկայացուցիչների լիիրավ մասնակցությունը:

«Այունյաց երկիր»
2 մայիսի 2014թ.
N9 (317)

Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն

ԼՂՀ ՊԲ մարտական ուղու պատմության համառոտ ակնարկ

Փետրվար 1988թ.-1992թ. մայիս (կամավորականության պոռթկում եւ զորակոչային բանակի սաղմնավորում)

ՍԵՆՈՐ ՀԱՍՐԱԹՅԱՆ
ԼՂՀ ՊԲ խոսնակ

1988-ին սկիզբ առած արցախահայության ազգային-ազատագրական պայքարն իր նշանակությամբ դարակազմիկ իրադարձություն էր հայ ժողովրդի բազմադարյա պատմության մեջ: Դարակազմիկ՝ ողջ էությամբ հանդերձ: Կասկածից վեր է, որ անարդարության ճիրաններում հայտնված մի ազգ պոռթկաց՝ հանուն հալածված ճակատագրի փրկության: Ազդարարվեց բողոք բոլոր նրանց դեմ, ովքեր ճշմարտությունը քողարկեցին պատմական սխալի վարագույրի հետեւում:

Արհեստականորեն երկատված ազգի արժանապատվության փրկությունը դարձավ ժամանակի անհետաձգելի խնդիր, քանզի շարունակել հապաղել, կնշանակեր արցախահայության դանդաղ մահ ոչ հեռու ապագայում:

Ամեն ինչ սկսվեց ժողովրդական ցույցերից: Ապա տեղի ունեցան հայկական ջարդեր Սումգայիթում, Բաքվում, Գյանջայում եւ այլուր: Փախստականների արտահոսք Ադրբեջանից: Օրըստօրե ահագնացող լարվածությունը մութ ամպեր էր խոստանում աշխարհատարածքին:

Բաքվի կողմից պահանջվող եւ համայնավարական Մոսկվայի որոշումներով իրականացվող հակահայկական նպատակամետ գործողությունները Լեռնային Ղարաբաղում՝ այն է, շրջափակման ու արյան մեջ խեղդել ազատության ճանապարհը որդեգրած մի ժողովրդի, իրենց չարդարացրին: Արցախում վերուից իջեցված սաֆոնովյան բռնապետությունն աստիճանաբար իրեն սպառեց: Նրան հաջորդած Պոլյանիչկոյի վարչակազմը, արժանանալով իր նախորդի ճակատագրին, ստիպված էր թողնել նստավայրը Ստեփանակերտում եւ հեռանալ Ղարաբաղի սահմաններից:

Ակնհայտ էր, որ դեպքերի զարգացումը տանում է դեպի լայնածավալ առճակատում: Ադրբեջանն ընդունում է ռազմաքաղաքական նոր կուրս, ըստ որի հայերի հետ հարաբերություններ պարզելու համար վճռական դեր պիտի խաղար ուժի գործոնը: Ուստի միասնական հրամանատարության ներքո գործող բանակի ստեղծման խնդիրն արցախցիների համար հետզհետե դառնում էր հրատապ անհրաժեշտություն:

Սկզբնական շրջանում իրադարձություններն այնպես ծավալվեցին, որ կանոնավոր, կենտրոնացված բանակ ստեղծելու գաղափարն իրացնելու իսկ ժամանակ, առավել եւս՝ անհրաժեշտ նյութատեխնիկական հնարավորություններ չկային: Սակայն մի բանում բոլորն էլ անվերապահորեն համոզված էին՝ պետք էր կազմակերպել ամուր եւ հստակ ինքնապաշտպանություն: Եվ ի հայտ եկան առաջին կամավորական ջոկատները, որոնց շարքերն օր-օրի ավելի էին ստվարանում: Մերձակա բնակավայրերում տեղակայված ադրբեջանական խաժամուժի ոտնձգությունները կանխելու նպատակով Արցախի մի շարք գյուղերում կազմավորվեցին ինքնապաշտպանական խմբեր: Այդ գործընթացն ավելի արագ կյանքի կոչվեց մարզկենտրոն Ստեփանակերտում: Այն սկսվել էր դեռեւս 1988-ի աշնանը՝ Խոջալուի հայտնի իրադարձություններից հետո: Ջոկատները հիմնականում կազմավորվում էին ընկերականության հիման վրա: Յուրաքանչյուր մարտիկ ինքն էր ազատ կերպով ընտրում իր խումբը, հատկապես Ստեփանակերտում: Իսկ գյուղական վայրերում խմբերը ստեղծվում էին ըստ բնակության վայրի, աշխարհագրական հիմունքով:

Այդ օրերին ուժերի արդյունավետ կենտրոնացման նպատակով ստեղծվեց Արցախի ինքնապաշտպանության ուժերի մարզային շտաբ, որի մեջ մտան բոլոր խմբերի հրամանատարները:

Ժամանակը ծնում էր իր հերոսներին եւ առաջնորդներին: Օր-օրի երկրամասում հայտնի էին դառնում անուններ, որոնք իրենց շուրջն էին համախմբում ամենատարբեր մասնագիտության ու խառնվածքի տեր, բայց միեւնույն նպատակի մարդկանց: Թշնամուն դիմակայելու համար աստիճանաբար ձեռք էին բերվում ժամանակի պահանջներին քիչ թե շատ համապատասխանող զինատեսակներ եւ բաժանվում նրանց, ովքեր պետք է իրականացնեին միացյալ շտաբի կողմից ծրագրավորված եւ համակարգվող առաջադրանքները: Ձենքի հայթայթմանը զուգընթաց մեծանում էր նաեւ կարգապահության ուժեղացման անհրաժեշտությունը: Դրա արդյունքում սկիզբ առավ խմբերի միաձուլման եւ դասակների ու վաշտերի ստեղծման գործընթացը:

Արդեն 1991թ. վերջերին եւ 1992թ. սկզբներին Արցախի տարածքում կազմավորվել էին 10-ից ավելի դասակներ ու վաշտեր, որոնց մեջ ընդգրկված էր շուրջ հազար կամավորական: Սա թերեւս առաջին կարեւոր քայլերից մեկն էր կանոնավոր բանակի ստեղծման ճանապարհին, որն արվում էր հընթացս՝ ռազմական գործողություններին զուգահեռ: Իրավիճակն ինքն էր հուշում

Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն

դեպքերի զարգացման հաջորդականությունը: Յուրաքանչյուր նախաձեռնություն ծնվում էր՝ ելնելով գործնական փորձից: Մարտադաշտը յուրովի հանճարեղությամբ ղարաբաղցուն տալիս էր կանոնավոր բանակի ստեղծման հիրավի օրինակելի դասեր:

1991թ. սեպտեմբերի 2-ին Ստեփանակերտում տեղի ունեցավ ԼՂ մարզխորհրդի եւ Շահումյանի շրջխորհրդի միացյալ նիստը, որը եւ ընդունեց պատմական որոշում: Նրա առաջին կետով՝ ինքնավար մարզը եւ Շահումյանի շրջանն ընդգրկող տարածքը հռչակվեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն: Ադրբեջանի իշխանություններն այս քայլն ընդունեցին սվիններով: Սեպտեմբերի 25-ին Շուշիից առաջին անգամ «Ալազան» տիպի հեռահար կայանքներից Ստեփանակերտը ենթարկվեց հրետակոծության, որը հետագայում կրեց պարբերական բնույթ: Մայրաքաղաքը շրջապատող ադրբեջանական գյուղերը վերածվեցին ռազմական խոշոր հենակետերի: Արցախում տիրող իրավիճակը գնալով ավելի էր ծանրանում: Երկրորդ աշխարհամարտի տարիների լենինգրադյան իրականությունն ասես տեղափոխվել էր քաղաքամայր Ստեփանակերտ: Չորս կողմից հրթիռահրետակոծության էր ենթարկվում քաղաքը: Մայրաքաղաքում տեղակայված խորհրդային բանակի 366-րդ գնդի զինանձնակազմի քթի տակ ավերվում էր Ստեփանակերտը: Իսկ աշխարհը լռում էր: Վերջապես, հասկանալ տվին, որ Ղարաբաղի հարցը հայ ազգի հարցն է, եւ միայն ու միայն նրան է վերապահված լուծելու իր խնդիրը: Ստանձնելով հայրենի երկրամասի պաշտպանության առաքելությունը՝ արցախահայությունը դիմեց վճռական քայլերի:

1992թ. հունվարի 21-ի լույս 22-ի գիշերը ազատամարտիկների արդյունավետ գործողությունների շնորհիվ ոչնչացվեց Ստեփանակերտի Կրկժան (երբեմնի Կառկարաշենի) թաղամասում ամրացած ադրբեջանական օմոնի հենակետը: Փետրվարի 10-ին վերացվեցին Մալիբեյլուի եւ Ղուշչիլարի կրակակետերը: Այնուհանդերձ, դրությունը շարունակում էր մնալ չափից ավելի լարված: Պատերազմի բոցը հետզհետե ավելի էր սաստկանում:

1992թ. փետրվարի 23-ին, երբ Շուշիից հերթական անգամ հրետակոծության էր ենթարկվում Ստեփանակերտը, Ադրբեջանի ազգայնականները, առանց որեւէ դիմադրության հանդիպելու, վերցրին Աղդամում տեղակայված նախկին խորհրդային բանակի օկրուգային զինապահեստը, որտեղ պահվում էր 728 վագոն հրետանային եւ 245 վագոն հրթիռային արկեր, 131 վագոն հրածգային զենքի ռազմամթերք: Զինվորական փորձագետների ենթադրությամբ՝ այդքան զինամթերքը կհերիքեր մեկ տարվա լարված պատերազմի համար:

Ադրբեջանա-ղարաբաղյան սահմանի ողջ երկարությամբ տեղակայված հակառակորդի հրակետերից սկսեցին գործել հեռահար հրանոթները: Ռազմական ուղղաթիռներով Արցախի ադրբեջանաբնակ գյուղերում ապրող բնակչությանը պարենամթերք հասցնելու պատրվակի տակ այդտեղ էր տեղափոխվում զենք ու զինամթերք: Կարճ ժամակահատվածում Ստեփանակերտը շրջապատող Խոջալու, Ջանհասան, Ղայբալիշեն, Քյոսալար եւ Նաբիլար գյուղերն ադրբեջանցիների համար վերածվեցին ուժեղ ռազմականացված կրակակետերի: Ադրբեջանի քաղաքական եւ ռազմական ղեկավարության համար Արցախն արյան մեջ խեղդելու վճիռն օրահաս պահանջ էր: Ըստ նրանց՝ եկել էր Ղարաբաղը հայաթափելու ամենահարմար պահը:

Խոջալուի ռազմական պլացդարմի վերացման հարցը դարձավ ժամանակի առաջնահերթ խնդիրներից մեկը: Ասկերան ավանը Ստեփանակերտի հետ կապող միջանցքի բացումը ռազմավարական մեծ նշանակություն ուներ: Մայրաքաղաքը սահմանամերձ բնակավայրերի հետ կապող հիմնական ճանապարհն անցնում էր մինչեւ ատամները զինված ադրբեջանաբնակ այդ գյուղով: Բացի դրանից, ադրբեջանական այդ հենակետից համարյա ամեն օր կատաղի հերտակոծության էին ենթարկվում Ստեփանակերտն ու Ասկերան շրջկենտրոնը: Զոհվում էին տասնյակ անմեղ մարդիկ, ավերվում բնակելի շենքեր, հիմնարկ-ձեռնարկությունների շինություններ: Պարտադրված պատերազմի հետքերն օր-օրի ավելի լայն ծավալներ էին ընդգրկում:

1992թ. փետրվարի 15-ին Արցախի ինքնապաշտպանական ջոկատները, դիրքավորվելով Խոջալուի արեւմտյան մասի երկարությամբ, ադրբեջանական բանակային ստորաբաժանումներից պահանջեցին թողնել ռազմական հենակետը եւ առաջարկված միջանցքով դուրս գալ հանրապետության տարածքից դեպի Աղդամ: Այնինչ ադրբեջանական զինյալները կատարեցին լրիվությամբ հակառակը: Որպես պաշտպանական վահան, օգտագործելով գյուղում գտնվող խաղաղ բնակչությանը, նրանք վերսկեցին Ստեփանակերտի հրետակոծությունը: Դրա հետեւանքով այդ օրը սպանվեց շուրջ 20 խաղաղ բնակիչ: Կատարված արկածախնդրությունը ոչ միայն ռազմական, այլեւ քաղաքական մեծ նպատակ էր հետապնդում: Ադրբեջանի քաղաքական ընդդիմությունը, ի դեմս ժողովրդական ճակատի, ձգտում էր ամեն կերպ սասանել Մութալիբովի վարչակարգի հիմքերը, դրա համար չխնայելով անգամ սեփական ժողովրդի կյանքը: Ամեն ինչ կատարվում էր կանխամտածված ու նպատակասլաց:

Փետրվարի 26-ին Արցախի ինքնապաշտպանական ուժերը ռազմական գործողություններ ծավալեցին միաժամանակ բոլոր ուղղություններից: Նույն օրը ազատագրվեց դեռեւս 1990թ. հոկտեմբերի 17-ից ադրբեջանական օմոնականների կողմից զավթված Ստեփանակերտի օդանավակայանը: Ապա, զարգացնելով առաջխաղացումը, հայկական ջոկատները կոտրեցին հակառակորդի դիմադրությունը Խոջալու ռազմական հենակետում: Մարտական գործողությունների ընթացքում հակառակորդից առգրավվեց երեք զրահամեքենա, երկու հրթիռանետ կայանք, մեկ թնդանոթ եւ զինամթերքի խոշոր պաշարներ, շուրջ հարյուր միավոր մարտական զենք:

1992թ. մարտի 10-ին Մոսկվայից ստացվեց հրաման Ստեփանակերտից 366-րդ մոտոհրաձգային գնդի դուրս բերման մասին: Դրանով Կրեմլն օրակարգից հանեց երբեմնի «միասնական հայրենիքի» հարավային սահմանագծում ապրող ժողովրդի պաշտպանության հարցը: Ամեն ինչ թողնվեց բախտի քմահաճույքին: Միակ հավատը սեփական ուժն էր, սեփական ճակատագիրը տնօրինելու դժվարին, բայց եւ բաղձալի դավանանքը: Ղեկավարվելով «ԼՂՀ նախարարների խորհրդի մասին» ԼՂՀ օրենքի 24-րդ հոդվածով եւ ելնելով հանրապետության տարածքում ստեղծված

Լեռնային Դարաբաղի Հանրապետություն

ռազմական բարդ իրադրությունից, նույն օրենքի 2-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ հանրապետության անվտանգության եւ պաշտպանության ապահովման նպատակով անհետաձգելի միջոցառումների մշակման եւ իրագործման համար, մինչեւ ԼՂՀ պաշտպանության նախարարության կազմավորումը, ԼՂՀ նախարարների խորհրդին առընթեր 1992թ. մարտի 26-ին ստեղծվեց Պաշտպանության կոմիտե: Այն իր ողջ գործունեությունը պետք է կազմակերպեր ԼՂՀ Գերագույն խորհրդի եւ ԼՂՀ նախարարների խորհրդի որոշումների ու կարգադրությունների հիման վրա:

Ռազմական գործում կառավարման պետական համակարգի ձեւավորումը բնականաբար խիստ դրական եւ արդյունավետ անդրադարձավ ԼՂՀ պաշտպանության բանակի ձեւավորման եւ նրա զարգացման հետագա ընթացքի վրա: Մինչ այդ տարանջատ ֆիդայական-կամավորական ջոկատների գործունեության կենտրոնացումը ծավալվող պատերազմի ընթացքում դարձավ հաջողության երաշխիքներից մեկը:

ԼՂՀ Պաշտպանության կոմիտեի (հետագայում՝ ԼՂՀ Ինքնապաշտպանության կոմիտե) նախաձեռնությամբ եւ անմիջական ղեկավարությամբ, իրադրությանը համապատասխան, կյանքի կոչվեցին մի շարք հույժ կարեւոր եւ հրատապ միջոցառումներ: Կարճ ժամանակահատվածում կարգավորվեց ինքնապաշտպանական ջոկատների միավորման, նրանց նյութատեխնիկական բազայի համալրման, սպառազինության եւ ռազմական տեխնիկայի վերաբաշխման գործընթացը:

Խոջալուի ռազմական հենակետի վերացմամբ Ստեփանակերտի վրա տեղացող հրետանային «կարկուտը» այնուամենայնիվ, չմեղմացավ: Ջանհասան գյուղից մինչեւ Քիրս ձգվող բոլոր ադրբեջանական գյուղերը շարունակում էին համալրվել թարմ ուժերով: Անմատչելի բերդաքաղաք Շուշին հակառակորդը վեր էր ածել ամենատարբեր զինատեսակներով հագեցված հզոր մի ամրոցի: Օրվա ընթացքում մի քանի անգամ այդտեղից հարյուրավոր արկեր էին թափվում ինչպես մայրաքաղաքի, այնպես էլ շրջակա մյուս բնակավայրերի վրա: Գործում էին համարյա բոլոր տեսակի հեռահար զենքերը:

1992թ. մայիսի 7-ին ադրբեջանական հետեւակն ու զրահատեխնիկան, ինչպես նաեւ Մի-24 մարտական երեք ուղղաթիռներ ուժեղ գրոհ ձեռնարկեցին Ստեփանակերտի հարավարեւմտյան հատվածի պաշտպանական դիրքերի վրա: Միաժամանակ, նույն օրվա ընթացքում Շուշիի եւ Ջանհասանի բարձունքներից մայրաքաղաքի վրա արձակվեցին «Գրադ» կայանքի մոտ 200 հրթիռ եւ մի քանի տասնյակ այլ տիպի արկեր: Զոհվեց երկու բնակիչ, իսկ չորս մարդ վիրավորվեց: Հրթիռակոծության հետեւանքով հրդեհ բռնկվեց երկաթուղային կայարանում եւ քաղաքի մի շարք բնակելի շենքերում:

ԼՂՀ Ինքնապաշտպանության ուժերի հրամանատարությունը հարկադրված էր դիմել վճռական գործողությունների: Հայ ազատամարտիկները Ստեփանակերտի հարավարեւմտյան մատույցներում հաջողությամբ չեզոքացնելով հակառակորդի առաջխաղացումը, մայիսի

Լեռնային Դարաբաղի Հանրապետություն

8-ի առավոտյան անցան հակահարձակման: ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերի շտաբի հմուտ ղեկավարման, բոլոր աստիճանի հրամանատարների հստակ փոխգործակցության շնորհիվ դարաբաղյան զորամիավորումներն առավոտյան ժամը 10-ին կոտրեցին հակառակորդի դիմադրությունը Ջանհասանի եւ Քյոսալարի բարձունքներում՝ թշնամուց առգրավելով մեկ «Գրադ» կայանք, մեծ քանակությամբ զենք ու զինամթերք: Շարքից հանվեց ադրբեջանական մի քանի միավոր զրահատեխնիկա: Նույն ժամանակ մարտական գործողություններ էին ընթանում նաեւ Շոշ գյուղի եւ Քիրս լեռան ուղղություններում՝ նպատակ ունենալով վերահսկողության տակ առնել Լաչինից Շուշի տանող մայրուղին:

Շուշիի մերձակա կրակակետերը ոչնչացնելուց հետո ահեղ մարտեր ծավալվեցին բուն քաղաք-ամրոցի համար: Հակառակորդն սկսեց ավելի կատաղի գործել քաղաքի շուկայի եւ բանտի հենակետերից: Միայն բանտի մերձակայքում ադրբեջանցիները տեղադրել էին երեք «Գրադ» կայանք եւ վերածել ամուր բերդի: Սակայն թե՛ ամրակուռ պաշտպանական կառույցների առկայությունը, թե՛ Շուշիի զուտ աշխարհագրական առումով դժվարամատչելի տեղանքն անզոր եղան արգելք հանդիսանալ հայ ազատամարտիկների առաջխաղացմանը:

Մայիսի 8-ի կեսօրվա դրությամբ Շուշիի պաշտպանությունը ճեղքվեց հյուսիսից եւ արեւելքից: Ստեփանակերտի եւ Շոշ գյուղի ուղղություններից քաղաք մտած ազատամարտիկները կռիվներ էին մղում շուկայի շրջակայքում՝ քաղաքի կենտրոնական թաղամասերում: Ոչ պակաս դաժան մարտեր էին ընթանում նաեւ Շուշիի արեւելյան թաղամասում՝ բանտի մոտակայքում: Երեկոյան ժամը 18-ին հայ մարտիկները վերջնականապես տիրացան քաղաքի կենտրոնին՝ ադրբեջանական զինյալների հսկողության տակ թողնելով միայն նրա հարավային հատվածը:

Քիրս լեռան ուղղությամբ գործող ինքնապաշտպանության ուժերի ջոկատներն իրենց հերթին արդյունավետ գործողությունների շնորհիվ կարողացան գրավել Լիսագոր գյուղի մոտակայքում գտնվող կարեւորագույն բարձունքներից մեկը եւ վերահսկողության տակ առնել Շուշի-Լաչին մայրուղին: Այս հանգամանքն ադրբեջանցիների շարքերում խուճապի տեղիք տվեց: Ադրբեջանական բանակի արդեն բարոյալքված զինվորները, ինչպես եւ սպասվում էր, դարձան անկառավարելի եւ, տարանջատվելով, սկսեցին անկազմակերպ նահանջել:

Ստեղծված իրավիճակում ադրբեջանական բանակի հրամանատարությունը ձեռնամուխ եղավ հակամարտության գոտու ողջ երկայնքով մի շարք լայնածավալ ռազմական գործողությունների՝ նպատակ ունենալով հնարավորության սահմանում ղարաբաղյան ուժերի ուշադրությունը շեղել Շուշի-Լաչին ռազմաճակատային հատվածում: Մայիսի 8-ին, ժամը 15.00-ի դրությամբ, ադրբեջանական ուղղաթիռները, ներխուժելով հանրապետության օդային տարածք, գնդակոծության ենթարկեցին Մարտունու շրջանի Ավդուռ, Մյուրիշեն, Նորշեն եւ Ասկերանի շրջանի Շոշ եւ Քռասնի գյուղերը: Միաժամանակ Նորշեն գյուղից դեպի Աղդամի շրջանի Գյուլափլի բնակավայրն ընկած տարածքում հայ ազատամարտիկներն անհավասար մարտի մեջ մտնելով զրահատեխնիկայով զինված ադրբեջանական կազմավորումների հետ, հակառակորդին ստիպեցին ձեռնպահ մնալ հետագա հարձակողական գործողությունները զարգացնելու մտադրությունից եւ նահանջել ելման դիրքեր՝ մարտադաշտում թողնելով 9 սպանված եւ 1 միավոր զրահատեխնիկա:

Նույն օրը ժամը 18.00-ին Հադրութի շրջանի Տող գյուղի ուղղությամբ Ադրբեջանի զինված կազմավորումների կողմից կատարված ճեղքման բոլոր փորձերը նույնպես ավարտվեցին անարդյունք: Արցախ տանող երկաթե դարպասների անառիկությունն այդ օրերին փաստվեց: Յուրաքանչյուր քայլ կատարվում էր լրիվ մշակված ու կանխամտածված ձեւով:

Մայիսի 8-ի ուշ երեկոյան Շուշիի երկնակամարն աստիճանաբար խաղաղվեց: Միայն երկար ընդհատումներով քաղաքի տարբեր ծայրերից լսելի էին ավտոմատային կրակահերթեր: Հայոց Արցախ աշխարհի հինավուրց մայր քաղաքը, որ տասնամյակներ շարունակ ադրբեջանցիների կողմից հանիրավի թմբկահարվում էր որպես «մուսուլմանական գահանիստ», վերջապես գտավ իր իսկական տիրոջը: Մայիսի 9-ին Շուշին լրիվությամբ ազատագրված էր: Հայ մարտիկի զենքի փառքը վերստին փայլատակեց իրեն առաձնահատուկ փառահեղությամբ: Իր 273-ամյա պատմության ընթացքում, Շուշիի բերդ-ամրոցը, որը միշտ էլ հայտնի է եղել իր անառիկությամբ, առաջին անգամ անձնատուր եղավ հանուն պատմական արդարության, հանուն տիրոջ սիրո: Երկու օր տեւած մարտական այդ փայլուն ռազմագործողության ընթացքում ակնհայտ դարձավ հայրենիքին ծառայելու կոչված մարդկային արժանապատվության անվիճելի իրողությունը, որը ցայտուն կերպով դրսեւորվեց ինքնապաշտ-

Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն

պանության ուժերի 1-ին, 4-րդ, 6-րդ, Ակնաղբյուրի, Բալուջայի վաշտերի, հետախույզների եւ մյուս ստորաբաժանումների սխրագործություններում:

Վերացնելով հանրապետության տարածքում տեղակայված թշնամական կրակակետերը եւ ազատագրելով Շուշի քաղաքը, ղարաբաղյան ուժերի առջեւ խնդիր դրվեց կարճ ժամանակահատվածում իրականացնել ինչպես օպերատիվ-ռազմավարական նշանակության խնդիրներ, այնպես էլ կենսական ամենահույժ կարեւորության Շուշի-Լաչին-Զաբուխ ճանապարհի բացման մարտական առաջադրանքը, որը հնարավորություն կտար ճեղքել Արցախը շրջափակող օղակը եւ ապահովել երկրամասի նորմալ կենսագործունեությունը:

Մայիսի առաջին կեսերին ինքնապաշտպանության ուժերի ստորաբաժանումներին հաջողվեց ադրբեջանցիներին դուրս մղել Իսաբուլաղ, Զարիսլու, Լիսագոր՝ ռազմական հենակետերի վերածված գյուղերից: Ապա, զարգացնելով առաջխաղացումը, մայիսի 17-ին՝ ադրբեջանական օմոնի կողմից Բերդաձորի ենթաշրջանի բնակավայրերը հայաթափելուց ուղիղ մեկ տարի անց, ազատագրեցին Ծաղկաձոր, Կանաչ թալա, Մեծ շեն, Հին շեն եւ եղծահող գյուղերը՝ դրանով իսկ լիակատար եւ վերջնական հսկողություն հաստատելով ամբողջ Շուշիի շրջանի վրա: Մայիսի 18-ին Արցախի ինքնապաշտպանները մտան Քաշաթաղ-Լաչին, ապա դուրս եկան Հայաստանի Հանրապետության պետական սահմանը: Շուրջ երեք տարի պահանջվեց շրջափակման մահաբեր օղակը զենքի ուժով պատռելու համար: Խորհրդային իշխանության օրոք արհեստականորեն տարանջատված Լեռնային Ղարաբաղը նորաբաց միջանցքով վերստին միաձուլվելով Հայաստանի հետ, դարձավ մայր ամբողջության բաղկացուցիչ մաս: Տասն օրում կատարված ռազմական հաղթարշավը դարձավ պատմական իրադարձություն՝ իմաստավորելով հանուն հայրենյաց նահատակված զինվորների անձնազոհությունը: Հանձինս արցախահայության անօրինակ անձնվիրության, ողջ հայ ժողովրդի մեջ վերստին վերընձյուղվեց զենքի ուժի հանդեպ կորսված հավատը, հաղթահարվեց դարեր ի վեր ստվերի պես նրան հետապնդող դատապարտվածության ուրվականը:

1992 թ. հունիս-դեկտեմբեր (պաշտպանական մարտեր)

Շուշի-Լաչին ռազմագործողությանը հաջորդեց հակամարտության գոտում լարվածության համեմատական անկում: Միեւնույն ժամանակ դրան զուգահեռ նկատվում էին ադրբեջանական զորքերի մեծ տեղաշարժեր: Ինչպես հետագայում պարզվեց, այդ ամենը ոչ այլ ինչ էր, քան լայնածավալ ռազմական գործողությունների նախապատրաստություն:

1992թ. հունիսի 12-ի ժամը 17-ի մոտերքին ռազմաճակատի հյուսիսարեւելյան, արեւելյան եւ հարավարեւելյան ուղղություններով ադրբեջանական զորամիավորումներն անցան լայնածավալ հարձակման: Շուրջ 120 կմ երկարությամբ ճակատային գիծ նետվեց Ադրբեջանի համարյա ողջ ռազմական ներուժը: Միեւնույն ժամանակ հակառակորդը ռազմական գործողությունների մեջ ներքաշեց նաեւ Գյանջա քաղաքում տեղաբաշխված նախկին խորհրդային 4-րդ բանակի ուժերը: Մոտավոր հաշվումներով ադրբեջանական կողմից հարձակմանը մասնակցում էին 150 միավոր զրահատեխնիկա, մի քանի հազար հետեւազոր: Գլխավոր հարվածներն ուղղելով դեպի Ասկերանի, Կիչան-Քոլատակի եւ Շահումյանի շրջանի հյուսիսարեւելյան հատվածները, Ադրբեջանի ռազմական հրամանատարությունը վճռել էր զրահատեխնիկայի, «գրադ» կայանքների, հրետանու եւ ռազմական օդուժի հուժկու հարվածներով կոտրել տակավին կազմավորման գործընթաց ապրող ղարաբաղյան զինուժի դիմադրությունը եւ մարտադաշտում նախաձեռնությունը վերցնել իր ձեռքը:

Չեռնարկված հանկարծակի հար-

Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն

ձակման հետեւանքով Արցախում ստեղծվեց ծանր կացություն: Շահումյանի շրջանի մեծ մասը, այդ թվում՝ Ղարաչինար, Հայ Բորիս, Էրքեջ, Մանաշիդ, Բուզլուխ գյուղերը հակառակորդը գրավեց:

Իրավիճակը չափից ավելի ծանր էր հատկապես Ասկերանի ուղղությունում: Ձավթելով Նախիջեւանիկ, Փրջամալ եւ Աղբուլաղ գյուղերը, թշնամին հասավ ընդհուպ Ասկերան շրջկենտրոնի մատույցներին: Նույն դրությունն էր տիրում նաեւ Կիչան-Նարեշտար-Սրխավենդ ճակատային հատվածում: Ռազմավարական կարեւոր նշանակության ճանապարհը, որը Մարտակերտը կապում էր մայրաքաղաքի հետ, հայտնվել էր փակման վտանգի առաջ: Իսկ դա նշանակում էր Մարտակերտի շրջանի եւ Շահումյանի շրջանի դեռ չզավթված տարածքների մեկուսացում ինքնապաշտպանության հիմնական ուժերից:

Հունիսի երկրորդ կեսին մարտերը շարունակվեցին Մարտակերտի շրջանի հյուսիսարեւելյան հատվածում: Ադրբեջանական զինյալները, ունենալով տեխնիկայի եւ կենդանի ուժի զգալի առավելություն, հիմնահատակ ավերեցին Շահումյանի ողջ շրջանը, ապա Մարտակերտի շրջանի դաշտային մասը՝ իր խոշոր բնակավայրերով: Մարտակերտ քաղաքը հայտնվեց հրետակոծության կիզակետում: Հյուսիսային Արցախում Ադրբեջանի ազգային բանակի աննախադեպ լայնածավալ հարձակման հետեւանքով բռնագաղթի ճանապարհը բռնեց հանրապետության ավելի քան 40 հազար բնակիչ, ավերվեցին ու հրկիզվեցին տասնյակ բնակավայրեր:

Ելնելով ստեղծված ծանր վիճակից, հունիսի 18-ին ԼՂՀ տարածքում մտցվեց արտակարգ դրություն: ԼՂՀ նախարարների խորհուրդը որոշեց հունիսի 20-ի ժամը 8.00-ից հանրապետության ամբողջ տարածքում անցկացնել մասնակի զորահավաք: Զորակոչման ենթակա էին 18-ից մինչեւ 40 տարեկան զինապարտ սերժանտները, զինվորներն ու զինակոչիկները, մինչեւ 50 տարեկան սպաները, հատուկ պատրաստություն ունեցող 19-ից մինչեւ 30 տարեկան կանայք:

Արցախի ապագան լուրջ վտանգի տակ էր: Հակառակորդն օրեցօր ռազմաճակատի գիծը նոր ծավալների էր հասցնում: Ցամաքային եւ օդային ուժերի ներդաշնակ գրոհներով հունիսի վերջերին նա կոտրեց մեր զորքերի դիմադրությունը եւ գրավեց Մարտակերտի շրջանի հյուսիսային տարածքները:

Մարտական գործողություններ էին ընթանում նաեւ Ասկերանի, Մարտունու եւ Հադրութի ուղղություններում:

Հուլիսի 4-ին, Ադրբեջանի բանակային կազմավորումները երեք ուղղություններով՝ Լիսինավանի, Կարմիրավանի եւ Փափռավենդի կողմից ձեռնարկեցին լայնածավալ հարձակում Մարտակերտ քաղաքի վրա: Հարձակմանը մասնակցում էին հազարավոր հետեւակայիններ, շուրջ 70 միավոր հրասայլ եւ այլ զրահատեխնիկա: Հակառակորդի բազմակի գերազանցող ուժերի դեմ անհավասար եւ կատաղի մարտերից հետո հայկական ինքնապաշտպանության ջոկատները ստիպված էին թողնել Մարտակերտ շրջկենտրոնը եւ նահանջել դեպի Ներքին Հոռաթաղ գյուղի առավել հարմար դիրքերը: Մարտական գործողությունների ողջ ընթացքում Մարտակերտը ռմբակոծում էր ադրբեջանական օդուժը:

Նույն օրվա գիշերն ադրբեջանական զորամիավորումները, Քելբաջարի շրջանից ներխուժելով Մարտակերտի շրջանի իր մեծությամբ երկրորդ բնակավայրը՝ Հաթերք գյուղ, հրկիզեցին այն: Արդեն հուլիսի 10-ի դրությամբ ռազմա-

Լեռնային Դարաբաղի Հանրապետություն

ճակատի գիծն անցնում էր Դրմբոն-Գյուլաթաղ հատվածով:

Ռազմական գործողությունների ընդլայնմանը զուգահեռ եւ ծանր իրավիճակի պարտադրանքով կյանքն առաջ էր քաշում պետական կառավարման համակարգի, այդ թվում եւ առաջին հերթին պաշտպանության վերակառուցմանը եւ կատարելագործմանն ուղղված մի շարք հրատապ լուծում պահանջող հիմնախնդիրներ: Այդ առումով ձեռնարկված միջոցներից, անշուշտ, ամենագլխավորը ԼՂՀ Գերագույն խորհրդի նախագահության օգոստոսի 15-ի որոշմամբ Պաշտպանության պետական կոմիտեի ստեղծումն էր: Պետական կառավարման նոր կառույցի ստեղծումը, որպես առաջնահերթ խնդիր, նպատակ էր հետապնդում կենտրոնացնել հանրապետության հիմնարկ-ձեռնարկությունների եւ կազմակերպությունների ղեկավարումը, առկա հասարակական-քաղաքական, մարդկային ու նյութական ողջ ներուժը ենթարկել պատերազմական կացությանը եւ այդպիսով առավելագույն հնարավորություններ ապահովել երկրի պաշտպանությունն իրականացնելու համար: ՊՊԿ-ին հանձնվեցին Նախարարների խորհրդի բոլոր գործառույթները, ինչպես նաեւ Գերագույն խորհրդի լիազորություններ-ի մի զգալի մասը, վերջինիս թողնելով միայն օրենսդրական դաշտի ձեւավորման իրավունքը:

Սեղմ ժամկետում կատարվեց զինված ուժերի կառուցվածքային վերակազմավորում: ԼՂՀ Ինքնապաշտպանության կոմիտեի նախագահի «Պաշտպանական շրջանների եւ շրջանային ուժերի ու միջոցների լրակազմի հաստիքա-կազմակերպական կառուցվածքի կազմակերպման մասին» թիվ 002 հրամանի համաձայն հանրապետության տարածքում ստեղծվեց վեց պաշտպանական շրջան, որոնք պետք է ունենային ժամանակակից կանոնավոր զինված ուժերին հատուկ սխեմատիկ կառուցվածք: Ըստ հրամանի՝ ձեւավորվում են գումարտակներ (դիվիզիոններ), վաշտեր (մարտկոցներ), դասակներ եւ ջոկեր: Կառուցվածքային նման վերակազմավորումը հնարավորություն է տալիս օպերատիվ եւ նպատակասլաց կատարել վերեւից ներքեւ տրված յուրաքանչյուր հրաման, ինչպես նաեւ նպաստում է զինվորական կարգապահության

աճին: Մարտական ստորաբաժանումների առկայության պայմաններում ռազմագործողությունների մշակված ծրագրերն իրագործում են միասնական հրամանատարության ներքո, որը տվյալ փուլում հաջողության հասնելու թերեւս գլխավոր երաշխիքներից մեկն էր դիտվում:

Մինչ հանրապետությունում տեղի էին ունենում պաշտպանական կարեւոր նշանակության կառուցվածքային փոփոխություններ, ռազմաճակատի տարբեր հատվածներում շարունակվում էին ընթանալ թեժ մարտեր:

Ամառվա վերջերին հակամարտության գոտու ամենալարված հատվածը շարունակում էր մնալ Մարտակերտի ուղղությունը: Օգոստոսի երկրորդ կեսին թշնամին շոշափելի հաջողության հասավ Վաղուհաս գյուղի ուղղությամբ: Հյուսիսարեւմտյան ռազմաճակատում ղարաբաղյան ուժերի նահանջը հակառակորդին ակտիվ գործելու հնարավորություն տվեց Մարտակերտի շրջանի Դրմբոն-Գյուլաթաղ մարտագծում: Օգոստոսի 26-ին մեծաթիվ կորուստների գնով թշնամուն հաջողվեց տիրանալ Մարտակերտ-Քելբաջար ռազմավարական կարեւոր նշանակության ավտոմայրուղուն, իսկ սեպտեմբերի լույս 2-ի գիշերն ուժեղ հրթիռահրետակոծությունից հետո գրոհեց Կոճողոտ եւ Պողոսագոմեր գյուղերի վրա: Մարտակերտի ուղղությամբ գործող ղարաբաղյան փոքրաթիվ ուժերի վիճակը նախանձելի չէր: Սեպտեմբերի 26-ին ընկավ Չլդրանը: Ռազմաճակատի գիծը հասավ ընդհուպ Վանք-Առաջաձոր-Ղազանչի բնագծին:

ԼՂՀ ՊԲ հրամանատարությունը Մարտակերտի ուղղությամբ գործող իր զորքերի պաշտպանությունը կայունացնելու նպատակով ձեռնարկեց մի շարք օպերատիվ միջոցառումներ: Ռազմաճակատի հյուսիսային հատված տեղափոխվեցին կենտրոնական պաշտպանական շրջանի երկրորդ եւ երրորդ գումարտակների ուժերը, որոնց առաջ խնդիր դրվեց աջակցել Առաջաձորի եւ Վաղուհասի ուղղություններում գործող 5-րդ պաշտպանական շրջանի ուժերին:

Միաժամանակ ուժերի վերատեղաբաշխում կատարվեց նաեւ Լաչինի միջանցքի ուղղությամբ, որտեղ Արեւելյան զորախմբի ստորաբաժանումները ծանր մարտեր մղելով, հակառակորդի գերակշիռ ուժերի հարվածներից ստիպված ետ էին քաշվում դեպի «կյանքի ճանապարհ»: Հոկտեմբերի կեսերին Լաչինի մարդասիրական միջանցքը դարձավ պատերազմական գործողությունների հիմնական թատերաբեմը: Թշնամին հյուսիսից եւ հարավից արկերի տարափ էր տեղում «կյան-

Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն

քի ճանապարհի» վրա: Հակառակորդի համար գլխավոր կրակակետ էր դարձել Խծաբերդ գյուղին մերձակա Թոփաղուճ լեռը: Հոկտեմբերի 12-ին ղարաբաղյան ուժերին հաջողվեց ադրբեջանցիներին դուրս մղել այդ բարձունքից: Երկու օր հետո՝ հոկտեմբերի 14-ին, մարտական գործողություններ սկսվեցին միջանցքի հյուսիսում՝ Ղոչազ լեռան ուղղությամբ: Ինքնապաշտպանության ուժերի հաջող մարտավարության շնորհիվ հակառակորդը նահանջեց՝ թողնելով իր դիրքերը ոչ միայն Ղոչազի, այլեւ Սարի բաբա լեռան եւ հարակից տարածքներում: «Կյանքի ճանապարհի» անվտանգությունն ապահովեց : Հակառակորդը, չկարողանալով ռազմաճակատում հասնել էական հաջողության, ստիպված ռմբահարում էր հանրապետության խաղաղ բնակավայրերը, այդ թվում նաեւ մայրաքաղաք Ստեփանակերտը:

Մի քանի օր շարունակ հրթիռահրետակոծության ենթարկելով Մարտունու շրջանի պաշտպանական դիրքերը, հոկտեմբերի 29-ի կեսօրից հետո հակառակորդը լայնածավալ գրոհ ձեռնարկեց Ավդալ-Գյուլափլուի ուղղությամբ: Սակայն, մարտադաշտում թողնելով հետեւակի 2 մարտական մեքենա եւ տասնյակ դիակներ, թշնամին հետ նահանջեց: Նույն բեմագիրը կրկնվեց մեկ օր հետո՝ այս անգամ արդեն Ասկերանի շրջանի Խրամորթ գյուղի ուղղությամբ:

Նոյեմբերի առաջին կեսին մարտական գործողություններն ահագնացան նաեւ Մարտակերտի ռազմաճակատում: Այս անգամ արդեն որպես ռազմագործողության նախաձեռնող հանդես եկավ ղարաբաղյան կողմը: Նոյեմբերի 10-ին հայկական ուժերը, գրոհներ ձեռնարկելով ռազմաճակատի հյուսիսարեւմտյան հատվածում, կարողացան շեշտակի հարվածով ազատագրել Վաղուհաս, Հարությունագոմեր եւ Կոճողոտ գյուղերը՝ ընդհուպ մոտենալով Չլդրանի արեւմտյան մատույցներին: Ամրանալով ազատագրված բնակավայրերի իշխող բարձունքներին, ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերը փաստորեն հսկողության տակ առան Թարթառ-Մարտակերտ-Քելբաջար մայրուղին:

Նոյեմբերի 13-ին հակառակորդին, մեծ կորուստների գնով, հաջողվեց կանգնեցնել մեր զորքերի առաջխաղացումը: Թիկունքից ռազմաճակատ նետելով մեծաթիվ կենդանի ուժ ու զինտեխնիկա, ադրբեջանական հրամանատարությունը փորձեց վերստին տիրանալ ձեռքից բաց թողնված նախաձեռնությանը եւ Մարտակերտի շրջանի ռազմաճակատային գոտու ողջ երկարությամբ ձեռնարկեց հերթական լայնածավալ հակահարձակողական գործողությունները: Նոյեմբերի 17-ին հարվածի հիմնական ուղղությունը Վաղուհասի ճակատն էր: Ինչպես միշտ, այս անգամ եւս ադրբեջանական կողմը, անտեսելով մարդկային ուժի եւ զինտեխնիկայի հարաճուն կորուստները, ամեն կերպ ջանում էր ճեղքել հայկական ուժերի պաշտպանական գիծը: Սակայն այս բոլոր փորձերն անցան ապարդյուն:

Ըստ Բաքվի աղբյուրների՝ 1992թ. ութ ամսվա ընթացքում Ղարաբաղի ճակատում իրենց մահկանացուն կնքեցին մոտ 5 հազար ադրբեջանական ասկյարներ, վիրավորվեց ավելի քան 18 հազար մարդ, որոնցից շուրջ 2000-ը բուժվեց Աղդամի թիվ 1 զինվորական հոսպիտալում: Հոսպիտալի պետի տեղեկատվության համաձայն՝ վիրավորների 80 տոկոսը ստացել էր վերջույթների վնասվածքներ: Այդ ընթացքում ընդհանուր առմամբ Ադրբեջանի զինված ուժերից դասալիք էր դարձել շուրջ 20 հազար մարդ:

ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերի տրամադրության տակ եղած տվյալների համաձայն՝ քննարկվող ժամանակահատվածում Ադրբեջանի ազգային բանակը Ղարաբաղի դեմ պատերազմում կորցրեց 115 հրասայլ, Արցախի երկնքում խփվեց թշնամական մեկ տասնյակից ավելի ինքնաթիռ եւ ուղղաթիռ:

1992թ. վերջին ռազմաճակատի ամբողջ երկարությամբ նկատվեց մարտական գործողությունների ակտիվության անկում: Ակնհայտ դարձավ, որ ԼՂՀ ԻՈՒ հրամանատարության կողմից կազմակերպված պաշտպանությունը, հատկապես մարտագծի հյուսիսային հատվածում, ադրբեջանական զինուժին կանգնեցրել էր դժվարին կացության առաջ: Փաստորեն Կիչան-Վաղուհաս պաշտպանական բնագծում մեր զորքերի ցուցաբերած մարտական բարձր որակների շնորհիվ ադրբեջանա - ղարաբաղյան զինված հակամարտությունը թեւակոխեց շրջադարձային փուլ: Այդ պայմաններում ԼՂՀ ԻՈՒ զորամիավորումները պաշտպանական մարտերը համարելով անցած շրջան, ամենայն լրջությամբ ձեռնամուխ եղան անվտանգության երաշխիքների ապահովմանը՝ այն է՝ ԼՂՀ շուրջ անվտանգության գոտու ստեղծման չափազանց դժվարին, սակայն, ռազմավարական առումով անհրաժեշտ գործընթացին:

1993 թ. հունվար-դեկտեմբեր (հարձակողական մարտեր)

1992թ. վերջերին եւ 1993թ. սկզբներին ադրբեջանա-ղարաբաղյան հակամարտության գոտու ողջ երկարությամբ տիրում էր հարաբերական անդորր: Դա գլխավորապես պայմանավորված էր

Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն

նրանով, որ կողմերից յուրաքանչյուրը զբաղված էր հետագա ռազմագործողությունների իրականացման համար նոր ծրագրերի մշակման ու միաժամանակ ուժերի վերախմբավորման եւ համալրման խնդիրներով:

Դեռեւս 1992թ. վերջերին Ադրբեջանը ծրագրել էր 1993թ. 200 միլիարդի հասնող պետական բյուջեից ռազմական կարիքների համար հատկացնել 80 մլրդ ռուբլի: Թերեւս դա ադրբեջանական ղեկավարության որդեգրած քաղաքականության այն բացահայտ քայլն էր, որը պետք է առաջիկայում արդարացներ որոշ ակնկալիքներ՝ կապված ռազմաճակատում հօգուտ իրեն տեղի ունենալիք դրական տեղաշարժերի հետ: Անտեսելով խաղաղ գոյակցության հնարավորությունները, Բաքուն այս անգամ էլ իր հաշվարկները կառուցեց ռազմական ներուժի ընդլայնման վրա:

1993թ. հունվարի սկզբներին ադրբեջանական բանակի հեռահար հրետանին վերսկսեց ԼՂՀ մի շարք բնակավայրերի հրետակոծումը: Աշխուժացավ նաեւ հետեւակը: Հունվարի 13-14-ը Ադրբեջանը գործողության մեջ դրեց իր ռազմական տեխնիկայի գրեթե ամբողջ զինանոցը՝ գրոհային ինքնաթիռներ, ծանր հրասայլեր, հետեւակի մարտական մեքենաներ: Ոմբակոծվեց Ասկերանի շրջանի Սարդարաշեն եւ Մեհտիշեն գյուղերի տարածքը: Հրթիռահրետակոծության ենթարկվեցին Մարտունու, Մարտակերտի, Ասկերանի եւ Հադրութի մի շարք բնակավայրեր: Հունվարի 13-ին Մարտունու շրջանի Ճարտար գյուղի ուղղությամբ՝ Ուրյան լեռան մերձակայքում ծավալված թեժ մարտերից հետո հակառակորդի գրոհը կասեցվեց:

Երկու օր հետո ադրբեջանական զորամասերը հարձակման անցան հյուսիսային ռազմաճակատում՝ Չլդրան - Սրխավենդ ռազմագոտու ուղղությամբ: Կատաղի մարտեր ծավալվեցին նաեւ Լաչինի մարդասիրական միջանցքի հարավային մատույցների շրջանում: Սակայն, ինչպես այստեղ, այնպես էլ մյուս ճակատներում Ադրբեջանի զինված ուժերին չհաջողվեց շոշափելի հարված հասցնել ղարաբաղյան դիրքերին:

Ադրբեջանա-ղարաբաղյան հակամարտության գոտու ողջ երկարությամբ ընթացող ռազմագործողությունները մտան նոր փուլ: ԼՂՀ ԻՈՒ հրամանատարության կողմից մշակված օպերատիվ պլանի համաձայն հայկական զորամասերն անսպասելի հակագրոհներով թշնամուն հասցրին կարճատեւ, բայց եւ ուժգին հարվածներ, կասեցրին մի քանի անգամ գերազանցող ուժերի ճնշումը, եւ դրանով իսկ ոչ միայն զգալիորեն ամրապնդեցին իրենց գրաված դիրքերը, այլեւ լավագույն նախադրյալներ ստեղծեցին հետագա մարտական գործողությունների հաջող ելքի համար:

1993թ. փետրվարի սկզբներին մարտական թեժ գործողություններ ծավալվեցին հյուսիսային ռազմաճակատում: Մարտակերտի շրջանի բռնազավթված տարածքներն ազատագրելու նպատակով, ըստ ԼՂՀ ԻՈՒ հրամանատարության օպերատիվ պլանի, հարձակումը պետք է իրականացվեր Վաղուհաս-Զագլիկ-Թալիշ, Չլդրան-Դրմբոն-Կուսապատ - Մարտակերտ եւ Սրխավենդ - Բաշ Գյունափայա - Մանիքլու - Ջանյաթաղ-Գյուլաթաղ-Մարտակերտ ուղղություններով: Այս ռազմագործողությունն իրականացնելու խնդիրը հանձնարարվեց Կենտրոնական պաշտպանական շրջանի ստորաբաժանումներին, 54-րդ առանձին մոտոհրաձգային գումարտակի զինուժին եւ Հայաստանի տարբեր շրջաններից կազմված կամավորական ջոկատներին:

Հարձակումը սկսվեց փետրվարի 5-ին: Մի քանի օրվա ընթացքում կոտրելով թշնամու դիմադրությունը, ղարաբաղյան ուժերն ազատագրեցին Կիչան, Չլդրան գյուղերը եւ դուրս եկան Մարտակերտ-Քելբաջար մայրուղու Դրմբոն հատվածը:

Սրխավենդ - Բաշ եւ Օրթա Գյունափայա - Մանիքլու - Ջանյաթաղ ուղղությամբ գործող 3-րդ եւ 4-րդ պաշտպանական շրջանների զինուժի մի մասը եւ 54-րդ առանձին մոտոհրաձգային գումարտակի ստորաբաժանումները, համագործակցելով իրենց ձախ թեւում գործող Կենտրոնական պաշտպանական շրջանի զորամասերի հետ, փետրվարի 6-ին մտան Սրխավենդ գյուղ եւ, կրնկակոխ հետապնդելով խուճապի մեջ հայտնված հակառակորդի զինուժին, գրավեցին Բաշ Գյունափայա բնակավայրը:

Փետրվարի երկրորդ կեսին դա-

Լեռնային Դարաբաղի Հանրապետություն

ղաբաղյան ուժերին հաջողվեց ազատագրել Դրմբոն, Վաղուհաս, Չափար, Զարդախաչ, Հաթերք գյուղերը եւ լրիվությամբ վերահսկողության տակ առնել Մարտակերտ-Քելբաջար մայրուղին: Ահեղ մարտեր սկսվեցին Սարսանգի հիդրոհանգույցի ազատագրման համար: Ադրբեջանական հրամանատարությունը, գիտակցելով, որ հիդրոհանգույցի հանձնումն ինչպես ռազմական, այնպես էլ բարոյահոգեբանական առումով խիստ բացասական հետեւանքներ կարող է ունենալ բանակի անձնակազմի վրա, պաշտպանությունն ամրապնդելու նպատակով այդտեղ կենտրոնացրեց իր զինուժի ճնշող մասը: Կատարվեց զինտեխնիկայի նոր համալրում: Նահանջի ճանապարհին ադրբեջանական ստորաբաժանումները պայթեցրին դեպի հիդրոհանգույց տանող բոլոր ճանապարհները, որպեսզի կանխարգելեն ԼՂՀ ԻՈՒ զինտեխնիկայի առաջխաղացումը:

ԼՂՀ ԻՈՒ հրամանատարությունը, կազմակերպելով միաժամանակյա համաձայնեցված հարձակում, ճակատից եւ թիկունքից հանկարծակիի բերեց ադրբեջանցիներին՝ նրանց շարքերում տեղիք տալով իրարանցման ու խուճապի: Նահանջն անխուսափելի էր:

Հիդրոհանգույցի պաշտպանությունը ճեղքվեց: Այդ օրը ղարաբաղյան ուժերը մարտերով վերցրին Սարսանգի ջրամբարը եւ, զարգացնելով առաջխաղացումը, հաջորդ մի քանի օրվա ընթացքում ռազմաճակատի հյուսիսային հատվածում գրավեցին բավական նպաստավոր դիրքեր: Մինչեւ մարտ ամսվա վերջերն ազատագրվեցին Մեծ շեն, Մաղավուզ, Մոխրաթաղ, Հակոբ Կամարի եւ այլ բնակավայրեր: Այդ նույն ժամանակ իրավիճակը կտրուկ սրվեց հյուսիսարեւմտյան ռազմաճակատում: Ադրբեջանի ռազմական վերնախավը հյուսիսարեւելյան մարտագծում ԼՂՀ ԻՈՒ զորամասերի ուշադրությունը շեղելու նպատակով Քելբաջարում տեղակայված խմբավորումներին առաջադրանք տվեց թիկունքից հարվածել Մարտակերտի շրջանում գործող ղարաբաղյան ուժերին:

Լաչինի միջանցքի փակման եւ Մարտակերտի խմբավորման թիկունքին հարվածի սպառնալիքը վերացնելու համար ղարաբաղյան զորքերը 1993թ. մարտի 27-ից մինչեւ ապրիլի 5-ն ընկած ժամանակահատվածում անցկացրին Քելբաջարի ռազմական հենակետերի ոչնչացման մարտական գործողությունը: Հանկարծահաս հարվածների շնորհիվ, մարտի 27-ից մինչեւ մարտի 30-ը, ղարաբաղյան ուժերին հաջողվեց վերցնել Աղդաբան, Չարեքտար, Նարեշտար, Թազաքենդ, Բաղրլու, Քեչիլղայա, Չորման գյուղերը:

Ապրիլի 2-ը մարտական գործողությունների վճռական պահն էր: Այդ օրը հայկական զինուժի կողմից գրավվեց Քելբաջարը Գյանջայի հետ կապող ճանապարհի խաչմերուկը, իսկ 3 օր հետո՝ ապրիլի 5-ին, ԼՂՀ ԻՈՒ ստորաբաժանումները դուրս եկան Օմարի լեռնանցք:

Այդ հաղթարշավով ղարաբաղյան բանակը շոշափելի հարված հասցրեց հակառակորդին՝ ի դերեւ հանելով այս հատվածում առաջխաղացման նրա մտադրությունները:

Չնայած հյուսիսարեւելյան եւ հյուսիսարեւմտյան ռազմաճակատներում կրած կորուստներին, ադրբեջանական բանակը, այնուամենայնիվ, շարունակում էր մարտական ակտիվ գործողություններ վարել հակամարտության գոտու համարյա ողջ երկայնքով: Հատկապես դա ակնհայտ էր ճակատային գծի հարավարեւելյան հատվածում: Հարձակողական գործողությունների մի շարք փորձեր արձանագրվեցին Հադրութի եւ Մարտունու պաշտպանական

Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն

դիրքերի վրա: Սակայն այս ուղղություններում եւս հաջողությունն ուղեկցեց ղարաբաղյան ուժերին: Հակառակորդի հետագա քայլերը կանխելու նպատակով ապրիլի 1-ին ինքնապաշտպանության ուժերը մարտերով գրավեցին Կըզըլկայա կարեւոր նշանակության բարձունքը, որն իշխում էր շրջակա տեղանքի վրա:

Մեկ օր հետո՝ հարավ-արեւելքում Հադրութի եւ Մարտունու պաշտպանական շրջանների զորամասերի համատեղ գործողությունների շնորհիվ վերացվեցին ադրբեջանական զինուժի կրակակետերը Խազազ եւ Շահրուվեն յալ բարձունքների վրա, ապա զարգացնելով առաջխաղացումը, գրավվեցին ռազմական հենակետերի վերածված Ղաջար, Գովշաթլի եւ Դիվանլար գյուղերը:

1993թ. ապրիլի երկրորդ կեսից ռազմաճակատում իրադրությունը համեմատաբար հանդարտվեց: Հակառակորդի կողմից հարձակողական գործողությունների նման պասիվությունը բացատրվում էր Ադրբեջանի ներքաղաքական անկայուն վիճակով եւ, իհարկե, նաեւ մարտական գործողությունների ծավալման համար առկա անբարենպաստ եղանակով:

Օգտվելով իրավիճակից, ԼՂՀ ԻՈՒ հրամանատարությունը ձեռնամուխ եղավ հանրապետության զինված ուժերի կազմավորման գործընթացի ավարտական փուլին: Լայնածավալ աշխատանք տարվեց զորամասերի ու ստորաբաժանումների հետագա ձեւավորման եւ համալրման ուղղությամբ: Հայրենիքի պաշտպանության շարքերն էին մտնում 18 տարեկան դարձած պատանիները, որոնք նախքան ռազմաճակատ մեկնելը, զինվորական պատրաստություն էին ստանում նորաստեղծ ուսումնական կենտրոնում: Կատարելագործվեց զորքերի կառավարումը, շտաբները սկսեցին առավել խորը զբաղվել մարտական գործողությունների կազմակերպման ու կառավարման հարցերով: Կարգավորվեց հրետանու հետախույզների ուսումնական կենտրոնում զորքերի մարտական եւ սպաների հրամանատարական նախապատրաստությունը: Վերոհիշյալ այս եւ նման փաստերը վկայում են այն մասին, որ ԼՂՀ զինուժն արդեն գարնան վերջերին ապրում էր իր կազմավորման ու ստեղծման փուլի ավարտը:

1993թ. գարնան վերջերին եւ ամռան սկզբներին ռազմաճակատում իրադրությունը կտրուկ փոխվեց: Կարճատեւ դադարից հետո հունիսի սկզբներին ռազմագծի ողջ երկայնքով հակառակորդը վերսկսեց մարտական գործողությունները: Ստեղծելով հարձակողական հզոր բռունցք, թշնամին գլխավոր թիրախ ընտրեց արեւելյան ուղղությունը: Մարտունու պաշտպանական շրջանի ստորաբաժանումներն իրենց վրա վերցնելով հարվածի հիմնական ծանրությունը, դրսեւորեցին պաշտպանական մարտերի մղման փայլուն օրինակներ: Անխոցելի պատնեշի վերածված ղարաբաղյան զորքերի պաշտպանությունը ճեղքելու հակառակորդի բոլոր փորձերն ավարտվեցին անարդյունք: Կանխելով թշնամու առաջխաղացումը, հունիսի 12-ին ինքնապաշտպանական ուժերն անցան հակահարձակման եւ ոչնչացրին մի քանի կրակակետեր:

Ռազմական իրավիճակի շեշտակի փոփոխություն տեղի ունեցավ նաեւ հակամարտության գոտու հյուսիսային հատվածում: Այդտեղ իրադրությունը շտկելու միակ ճանապարհը կտրուկ հակահարձակողական գործողությունների նպատակասլաց իրականացումն էր: Ամռան կեսերին ինքնապաշտպանության ուժերի հրամանատարությունը ձեռնամուխ եղավ 1993թ. առաջին կիսամյակի գործողությունների եզրափակիչ փուլի՝ Մարտակերտի ազատագրման

Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն

ռազմագործողությանը: Հակառակորդի ուշադրությունը շեղելու նպատակով ծրագրվեց միաժամանակյա հարձակողական գործողություններ ձեռնարկել մի քանի ուղղություններում: Այստեղ կենտրոնացվեցին 2-րդ, 3-րդ, 4-րդ եւ 5-րդ պաշտպանական շրջաններից ընտրված հարվածային մի քանի ստորաբաժանումներ եւ կենտրոնական ուղղության զորամասերը:

Հունիսի երկրորդ կեսին, հաջողությամբ իրականացնելով իրենց առջեւ դրված մարտական խնդիրները, ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերը գրավեցին օպերատիվ-մարտավարական տեսակետից մի քանի շահավետ բարձունքներ եւ բնագծեր: Ուրվագծվում եւ իրատեսական էր դառնում շուրջ մեկ տարի առաջ ադրբեջանցիների կողմից բռնազավթված Մարտակերտ քաղաքի ազատագրման հնարավորությունը: Հունիսի 27-ը դարձավ հյուսիսային ուղղությամբ ընթացող մարտական գործողությունների ամենավճռորոշ պահը: Այդ օրը մեր զորքերի փոխհամագործակցված առաջխաղացման շնորհիվ ազատագրվեց Մարտակերտը: Ղարաբաղյան զորամասերն անցան գերիշխող բարձունքների եւ հիմնական ճանապարհային ուղղությունների պաշտպանությանը:

Ղարաբաղյան բանակի կողմից իրականացվող հաջող գործողությունները մարտադաշտում հակառակորդին ստիպում էին դիմելու չտեսնված բախտախնդրությունների: Հյուսիսից հարավ ձգվող ռազմաճակատային գծի ողջ երկայնքով հակառակորդը հեռահար հրանոթներից հրետակոծում էր Արցախի խաղաղ բնակավայրերը, այդ թվում նաեւ հանրապետության մայրաքաղաք Ստեփանակերտը: Ջոհվում էին կանայք, երեխաներ ու ծերեր: Մայրաքաղաքի անվտանգությունն ապահովելու նպատակով Արցախի զինված ուժերի առջեւ խնդիր դրվեց վերացնել Աղդամի ռազմական հենակետը, որտեղ տեղակայված էին թշնամական հեռահար հրանոթներն ու «գրադ» կայանքները:

1993թ. հուլիսին ծավալվեց ադրբեջանա-ղարաբաղյան հակամարտության ընթացքում տեղի ունեցած հիրավի նշանավոր ռազմագործողություններից մեկը՝ Աղդամի ռազմական հենակետի ոչնչացման օպերացիան: Ադրբեջանական բանակի հրամանատարությունը, գիտակցելով, որ Աղդամ քաղաքի անկումը ոչ միայն ռազմական, այլեւ սեփական ժողովրդի բարոյահոգեբանական պարտությունը կդառնա, ռազմաճակատի այս հատված նետեց իր զինված ուժերի ծանրակշիռ մասը: Աշխատում էին գրեթե բոլոր զինատեսակները: Ձենքի եւ զինամթերքի խոշոր պաշարներ ունեցող թշնամին երկու օր անընդհատ ղարաբաղյան դիրքերի վրա կրակե հեղեղ էր թափում: Սակայն հայ զինվորի ոգին ամուր էր:

1993թ. հուլիսի 23-ին ղարաբաղյան զորամիավորումները, կոտրելով հակառակորդի դիմադրությունը, մարտերով մտան Աղդամ: Լուծվեց Ստեփանակերտ քաղաքի պարբերաբար հրետակոծման եւ Ասկերանի ու հարակից շրջանների վրա հարձակման վտանգի կանխման հարցը:

Աղդամի ռազմական հենակետի անկմամբ Ադրբեջանի ղեկավարությունը հայտնվեց անելանելի վիճակի մեջ: Գիտակցելով, որ ռազմական գործողությունների շարունակումը հղի է անկանխատեսելի հետեւանքներով, նա ստիպված էր հանդես գալ առաջարկությամբ, համաձայն որի ղարաբաղյան կողմի հետ պայմանավորվածություն ձեռք բերվեց հուլիսի 25-ի 00 ժամից սկսած մինչեւ հուլիսի 28-ը դադարեցնել կրակը: Հակամարտության ողջ ընթացքում առաջին անգամ ադրբեջանական կողմը դիմեց կառուցողական քայլի: Ավելի ճիշտ՝ այդպես թվաց: Այնինչ իրականում դա հերթական խոստումնազանցություն էր Բաքվի կողմից:

Օգոստոսի սկզբին իրադրությունը վերստին փոխվեց: Արձանագրված փաստերը վկայում էին, որ Ադրբեջանի բանակի համար ԼՂՀ-ի եւ Ադրբեջանի միջեւ ժամանակավոր հրադադարի վերաբերյալ ձեռք բերված պայմանավորվածությունն առանձին կարեւորություն չէր ներկայացնում: Առանց ընդհատումների շարունակվում էին հարձակումները ղարաբաղյան դիրքերի վրա: Ռազմաճակատում վիճակը դիվանագիտական ճանապարհով կարգավորելու ԼՂՀ իշխանությունների փորձերը եւս ապարդյուն անցան: Ավելին, օգոստոսի 9-ին Ադրբեջանի լրատվական

Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն

ծառայությունները հաղորդեցին ադրբեջանական բանակի ծավալուն հարձակողական գործողությունների եւ նրա կողմից Ֆիզուլու մոտակայքում մի քանի բնակավայրերի եւ ռազմավարական կարեւորություն ունեցող բարձունքների գրավման մասին:

ԼՂՀ ԻՈՒ հրամանատարությունը ռազմաճակատի հարավում իրադրությունը շտկելու նպատակով ստիպված էր ձեռնարկել համարժեք գործողություններ: Հարկ է ընդգծել, որ դեռեւս մինչեւ ամռան վերջերը Հադրութի շրջանի տարածքի մի մասը շարունակում էր մնալ հակառակորդի կողմից բռնազավթված: Ցոր, Առաքյուլ եւ Բանաձոր գյուղերը թշնամու համար վեր էին ածվել խոշոր ռազմակայանների: Հակառակորդի ձեռքին էին նաեւ Դոլանլար, Ծամձոր հայկական գյուղերը:

Համակողմանի նախապատրաստությունից հետո հարավային ուղղությամբ գործող Կենտրոնական պաշտպանական շրջանի զորքերը, որոնց ձախ թեւից համագործակցում էր 1-ին պաշտպանական շրջանի զինուժը, օգոստոսի 15-ին հարձակողական մարտերով մտան պատմական Դիզակի Ցոր գյուղը, ապա, զարգացնելով առաջխաղացումը, ազատագրեցին Բանաձոր եւ Առաքյուլ բնակավայրերը: Օգոստոսի երկրորդ կեսին ռազմական գործողություններ ծավալվեցին Ֆիզուլի-Զեբրայիլ-Ղուբաթլու մարտագծի երկայնքով:

Օգոստոսի 22-ին 1-ին եւ 2-րդ պաշտպանական շրջանների ստորաբաժանումների ճնշման տակ 160-րդ ադրբեջանական գնդի ստորաբաժանումները հարկադրված էին թողնել Ֆիզուլի քաղաքը եւ շուրջ 1380 քառ. կմ տարածք ունեցող համանուն շրջանը:

Հարձակողական մարտերը հաջողությամբ էին ընթանում նաեւ Զեբրայիլի ուղղությամբ: Ինքնապաշտպանության ուժերի նպատակասլաց գործողությունների շնորհիվ այդ ընթացքում ոչնչացվեցին հակառակորդի մի շարք ռազմական հենակետեր: Օգոստոսի 23-ին ղարաբաղյան զորքերը մտան Լենքորանի գումարտակի կողմից պաշտպանվող Զեբրայիլ շրջկենտրոնը: Իսկ երկու օր հետո հայկական ուժերի վերահսկողության տակ ընկավ 1050 քառ. կմ մակերես ունեցող համանուն շրջանի տարածքը:

Ռազմաճակատի հարավային հատվածում ձեռք բերած հաջողությունները հայ զինվորին դարձրին ավելի ինքնավստահ: Նրա յուրաքանչյուր հարված շեշտակի էր եւ վերջնական: 1993թ. օգոստոսի 31-ին ղարաբաղյան զորամասերը խաչաձեւող գրոհներով մտան Ղուբաթլու շրջկենտրոն: 1993թ. սեպտեմբերի սկզբի դրությամբ ինքնապաշտպանության ուժերը ճակատի որոշ հատվածներում Իրանի պետական սահմանից գտնվում էին 4-5 կմ հեռավորության վրա:

Ինչպես Ադրբեջանը, այնպես էլ տարածաշրջանում նրա հովանավորները հայտնվել էին լուրջ տագնապի մեջ: Ամեն ինչ տանում էր դեպի հարցի միջազգայնացում: Իրադարձությունների նման ընթացքը կրկին կյանքի կոչեց խաղաղ կարգավորման բանակցությունների գործընթացը:

1993թ. օգոստոսի 31-ին, ժամը 17.00-ին Ադրբեջանի եւ ԼՂՀ միջեւ կնքվեց կրակի դադարեցման մասին համաձայնագիր եւ ձեռք բերվեց պայմանավորվածություն մինչեւ սեպտեմբերի 10-ը Ադրբեջանի եւ Լեռնային Ղարաբաղի ղեկավարների հանդիպում անցկացնելու վերաբերյալ: Հարկ է ընդգծել, որ այս անգամ համաձայնությունը չխախտվեց: Սակայն, ինչպես պարզվեց հետագայում, այն ոչ մի արդյունք չտվեց, բացի կարճատեւ հրադադարից:

1993թ. հոկտեմբերի 10-ի գիշերը Ադրբեջանի ռազմական ղեկավարությունը կրկին վերսկսեց մարտական գործողությունները Հադրութի շրջանի սահմանամերձ գյուղերի ուղղությամբ: Պարզ էր, որ Ադրբեջանը հաստատված զինադադարն օգտագործել է ոչ այնքան հակամարտության խաղաղ կարգավորմանն ուղղված արդյունավետ բանակցային գործընթացի կազմակերպման, որքան բանակը համալրելու, ուժերի նոր կուտակումներ կատարելու, Ղարաբաղի դեմ ավելի ինտենսիվ պատերազմ շարունակելու համար:

Մարտական գործողություններ սկսվեցին Կույջակ եւ Սաֆարշա բնակավայրերի ուղղությամբ: Սկզբից եւեթ նկատվեց, որ հակառակորդի հարձակողական գործողությունները ոչ մի հեռանկար չունեն: Դրանում համոզվելու համար երկար ժամանակ չպահանջվեց: Նույն օրվա երկրորդ կեսին թշնամու առաջխաղացումը կասեցվեց: Դեռ ավելին, անցնելով հակագրոհի, ղարաբաղյան ուժերը վերացրին Կույջակ եւ Սաֆարշա բնակավայրերում տեղակայված ռազմական հենակետերը, իսկ երկու օր հետո մտան Նուզգեր եւ Շեյբեյ գյուղերը: Ռազմաճակատի հարավային եւ հարավարեւելյան հատվածում ադրբեջանական զինուժը հայտնվել էր խուճապի մեջ: Ամենուր նահանջ էր, նորանոր դիրքերի կորուստ:

Հոկտեմբերի 24-ին ինքնապաշտպանության ուժերը մի քանի ուղղությամբ զարգացնելով առաջխաղացումը, ճնշեցին հակառակորդի ամենախոշոր հենակետերից մեկը՝ Հորադիզի երկաթուղային հանգույցը, որը հարավային ռազմաճակատում հանդիսանում էր թշնամու բանակին սնուցող հիմնական

Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն

երակը: Գրավելով ադրբեջանական բանակի այս ռազմակայանը, ղարաբաղյան զինուժը Ջանգելանի շրջանը եւ Ջեբրայիլի ու Ղուբաթլուի շրջանների դեռեւս չզբաղեցված տարածքները մեկուսացրեց Ադրբեջանից: Այս ուղղությամբ գործող թշնամական ստորաբաժանումները փաստորեն հայտնվեցին շրջափակման օղակի մեջ: Մի քանի օր հետո՝ նոյեմբերի 1-ի առավոտյան, հայկական ստորաբաժանումները վերահսկողության տակ առան Ջանգելան շրջկենտրոնը՝ հարակից բնակավայրերով հանդերձ:

Այսպիսով, մինչեւ 1993թ. ձմեռը Ադրբեջանը կորցրեց վերահսկողությունը Հորադիզ երկաթուղային հանգույցից մինչեւ Հայաստանի պետական սահմանը ձգվող տարածքի վրա: Դա թերեւս հենց իր՝ Ադրբեջանի ղեկավարության կողմից տարված անհեռանկար քաղաքականության հետեւանք էր, քանզի ադրբեջանական կողմը, կրկին բաց թողնելով հրադադարը երկարաձգելու իրական հնարավորությունը, գերադասեց մեկ անգամ եւս ստուգել հայկական դիրքերի ամրությունն ու բռնել կասկածելի ռազմական հաղթանակների ուղին: Նոյեմբերի սկզբներից ադրբեջանա-ղարաբաղյան հակամարտության գոտում վերստին հաստատվեց հարաբերական անդորր, բայց այս անգամ եւս ոչ տեւական:

Այն վերսկսվեց 1993թ. դեկտեմբերի երկրորդ կեսին: Ադրբեջանի ռազմական գերատեսչությունը ղարաբաղյան զորքերի հարավային խմբավորման ուշադրությունը շեղելու նպատակով մարտական գործողություններ ծավալեց հյուսիսարեւելյան եւ հարավարեւելյան հատվածներում:

Դեկտեմբերի վերջերին ադրբեջանական կողմը ռազմաճակատի որոշ հատվածներում կարողացավ հասնել մասնակի հաջողությունների: Ղարաբաղյան ուժերը դեկտեմբերի 28-ին տեղի ունեցած ծանր մարտերից հետո ստիպված էին թողնել իրենց դիրքերը Մարտակերտի շրջանի Թալիշ, Մատաղիս գյուղերում, ինչպես նաեւ դրանից մի երկու օր առաջ՝ շուրջ 13 պահակակետ Փափռավենդ գյուղի մոտակայքում եւ մեկ դիրք՝ Մարտունու պաշտպանական շրջանի Աղբուռուն տեղամասում: Հատկապես իրավիճակը ծանր էր արեւելյան ռազմաճակատի Փափռավենդ-Սալահլի -Քենգերլի հատվածում:

Հակառակորդի հարձակումը դիմագրավելու համար ռազմաճակատի Մահսուդլու-Բոյահմեդլի-Փափռավենդ-Պուշկեն յալ բնագծի երկարությամբ պաշտպանական մարտեր սկսեցին մղել 4-րդ, 5-րդ եւ Կենտրոնական պաշտպանական շրջանների եւ 71-րդ առանձին մոտոհրաձգային գումարտակի ուժերը: Դեկտեմբերի 29-ի կեսօրին՝ համաձայն Պաշտպանության բանակի (1993թ. նոյեմբերի 10-ին՝ ՊՊԿ նախագահի հրամանագրով ինքնապաշտպանության ուժերը վերակազմավորվեցին Պաշտպանության բանակի (ՊԲ)) հրամանատարության կողմից մշակված պլանի, ղարաբաղյան ստորաբաժանումները պաշտպանական մարտերից անցան հակահարձակման: Ճնշելով հակառակորդի դիմադրությունը, ԼՂՀ ՊԲ զորքերը վերագրավեցին նախօրերին կորցրած դիրքերը, ապա, զարգացնելով առաջխաղացումը Բոյահմեդլու բնակավայրի ուղղությամբ, ոչնչացրին Սաֆուլու գյուղում եւ նրան հարակից բնակավայրերում տեղակայված թշնամական հենակետերը եւ ընդհուպ հասան Թարթառի ջրանցքի աջափնյակ: Այդպիսով իսկ ադրբեջանական բանակը, ռազմաճակատի այս հատվածում կրելով կենդանի ուժի եւ զինտեխնիկայի զգալի կորուստներ, փաստորեն ետ շպրտվեց ոչ միայն գրաված տարածքներից, այլեւ իր նախկին բնագծից:

Այս ռազմագործողությամբ ավարտվեց 1993 թվականը: Սակայն պատերազմը դեռ շարունակվում էր: Առջեւում էր 1994-ը:

1994թ. հունվար-մայիս (զինադադարի պարտադրում)

1994 թվականի սկզբներին արդեն ակնհայտ էր, որ Ադրբեջանի կողմից 1993թ. դեկտեմբերի վերջերին ձեռնարկված ձմեռային արշավի պլանը աստիճանաբար մատնվում է ձախողման: Ծանր մարտեր էին ընթանում Օմարից մինչեւ Արաքս: Չնայած կենդանի ուժի եւ զինտեխնիկայի հսկայական կորուստներին, թշնամին հետ չէր կանգնում իր ծավալապաշտ նկրտումներից:

Կենտրոնացնելով հարվածային խմբավորումները եւ գործի դնելով բազմաքանակ զինտեխնիկա, հունվարի սկզբներին հակառակորդին հաջողվեց ճեղքում կատարել ռազմաճակատի հարավարեւելյան ուղղությամբ (Հադրութի շրջան) եւ առաջանալ մոտ 15 կմ խորությամբ ու 5 կմ լայնությամբ: Ադրբեջանի բանակային ստորաբաժանումների համար դրությունը բավականին բարենպաստ էր նաեւ հյուսիսարեւելյան՝ Մատաղիս-Հակոբ Կամարի հատվածում:

Թվում էր, թե ԼՂՀ ԶՈՒ ստորաբաժանումներն անզոր կգտնվեն 180 կմ երկարությամբ ձգվող ճակատային գծի պաշտպանությունն ապահովելու համար: Այնինչ դաժան մարտերի ընթացքում զինվորներին հաջողվեց կասեցնել ոչ միայն հակառակորդի առաջխաղացումը, այլեւ որոշ հատվածներում, որոնցում նախօրերին հակառակորդը հասել էր դիրքային հաջողությունների, ջախջախիչ հարվածներ հասցնել նրան: Ղարաբաղյան զորքերի փայլուն ռազմագործողության շնորհիվ հունվարի 11-ին ադրբեջանական բանակի 77 հոգուց կազմված մի հարվածային զորախումբ, որը մեկ օր առաջ իրականացրել էր Հակոբ Կամարի գյուղի գրավման գործողությունը, շրջապատման մեջ առնվեց ու գլխովին ջախջախվեց: Նման զորախմբի կորուստը թշնամու ճամբարում խուճապի տեղիք տվեց, ինչն իր հերթին նպաստեց, որպեսզի հյուսիս-արեւելքում անշրջելի դառնան ԼՂՀ բանակային կազմավորումների հաջողությունները:

Սակայն, չնայած դրան, դրությունը չափից ավելի ծանր էր մնում հարավային ռազմաճակատում: Հունվարի 11-ի առավոտյան ադրբեջանական զորքերը հուժկու հրետակոծությամբ խախտեցին ռազմաճակատի այս հատվածում հաստատված երկօրյա հարաբերական անդորրը: Մարտի մեջ մտավ նրա մեքենայացված կորպուսը: Միաժամանակ գործում էին ռազմական օդուժը, հեռահար հրետանին, հրասայլերը եւ այլ զինատեսակներ: Բայց, այնուհանդերձ, հակառակորդն ի զորու չեղավ, նույնիսկ հսկայական կորուստների գնով, հասնել աննշան հաջողության:

Փայլուն կերպով իրականացնելով պաշտպանական ռազմագործողությունը, ղարաբաղյան բանակի հարավային խմբավորումը հունվարի 12-ին անցավ հակահարձակման եւ ոչնչացրեց թշնամու ռազմական հենակետերը Կորգան, Աշաղի Աբդուռահմանլու եւ Յուխարի Սեյիդահմեդլու բնակավայրերում: Անտեսելով այս ամենը, Ադրբեջանի

Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն

ռազմական գերատեսչությունն այդ օրերին դիմեց նոր արկածախնդրության՝ մարտական թատերաբեմը տեղափոխելով Սալահլի-Քենգերլի-Մարտակերտ-Լեւոնարխ-Մատաղիս-Օմար բնագիծը:

Առավել ծանր հատվածն Օմարի լեռնանցքի շրջանում էր: Հունվարի վերջին իրավիճակն այստեղ շեշտակի սրվեց: Ադրբեջանական զինուժին հաջողվեց Քելբաջարի ուղղությամբ զարգացնել իր հարձակողական գործողությունները եւ դուրս գալ Քելբաջարը Գյանջային կապող խճուղու խաչմերուկը: Հյուսիսային ռազմաճակատում իրադրությունը շտկելու նպատակով ԼՂՀ ՊԲ հրամանատարությունն այդտեղ կենտրոնացրեց 3-րդ, 4-րդ, 5-րդ եւ Կենտրոնական պաշտպանական շրջաններից ու 71-րդ եւ 54-րդ առանձին մոտոհրաձգային գումարտակներից ընտրված մի քանի հարվածային ստորաբաժանումներ:

Հունվարի 24-ին խաչմերուկի մոտ ադրբեջանական զորքերի առաջխաղացումը կասեցվեց: Այդ ընթացքում գործողություններ էին սկսվել նաեւ Մարտակերտի հեռուստաաշտարակի, արեւելյան եւ հարավարեւելյան մարտագծի ողջ երկայնքով: Սակայն դրանք առավելապես ուշադրություն շեղելու նպատակ էին հետապնդում: Կարեւոր օղակը շարունակում էր մնալ հյուսիսային ուղղությունը:

Փետրվարի սկզբներին ղարաբաղյան զորքերը սկսեցին Օմարի վնասազերծման ռազմագործողությունը: Հակահարձակումն իրականացվեց հստակ եւ կտրուկ: Մեկը մյուսի հետեւից վերագրավվեցին Օմարի տարածաշրջանում տեղաբաշխված հակառակորդի ռազմական հենակետերը: Փետրվարի 18-ի առավոտյան Քելբաջարի հյուսիսային հատվածը՝ ներառյալ Օմարի լեռնանցքը, ամբողջությամբ ընկավ ղարաբաղյան ուժերի վերահսկողության տակ: Ձախողվեց հակառակորդի հյուսիսային խմբավորման ռազմագործողությունը: Ռազմական անհաջողությունները հյուսիսում Ադրբեջանին հետ չպահեցին մարտական գործողությունները շարունակելու մտադրությունից:

Փետրվարի վերջին եւ մարտի սկզբին թշնամին հարվածի ուղղություն ընտրեց Աշաղի Սեյիդահմեդլու բնակավայրից մինչեւ Հորադիզ ձգվող ճակատային գիծը: Ադրբեջանական ստորաբաժանումները՝ զրահատանկային ուժերի եւ հրետանու օժանդակությամբ ցանկանում էին ճակատային հարվածներով ճեղքել մեր զորքերի պաշտպանությունը եւ առաջ շարժվել դեպի Ֆիզուլի: Սակայն խոր էշելոնացված հրետանային ու հակատանկային պաշտպանությունը եւ զորքի բոլոր տեսակների լավ կազմակերպված փոխգործողությունը հակառակորդին թույլ չտվեցին հասնելու իր նպատակին: Ադրբեջանական կողմն այստեղ գործի էր դրել իր ողջ ռազմական ներուժը: Գրոհներ էին ձեռնարկվում եւ օդից, եւ ցամաքից: Հակառակորդի օդուժն օրվա ընթացքում մի քանի անգամ ռմբակոծում էր ղարաբաղյան դիրքերը, փորձում հոգեբանորեն ընկճել հայ զինվորին: Սակայն՝ ապարդյուն: Հաջողությունն ուղեկցեց նրան, ով կամքով արի էր եւ ուժեղ: Ղարաբաղյան ուժերին ոչ միայն հաջողվեց պահպանել ունեցածը, այլեւ որոշ հատվածներում անցնել հակահարձակման: Արդյունքում վերացվեցին Հորադիզ գյուղում եւ թիվ 271.8 նիշի բարձունքում տեղակայված ադրբեջանական հենակետերը: Չնայած մարդկային, նյութական, դիրքային եւ տարածքային զգալի կորուստներին, ադրբեջանական կողմը, այդուհանդերձ, համառորեն փորձում էր երկարացնել ռազմագործողությունների շղթան՝ հուսալով, թե այդպիսով իսկ կսպառի ղարաբաղյան բանակի ռազմական ներուժը:

Երեւի թե նման ինքնախաբեությամբ դրդված, հակառակորդը հարձակողական մարտեր էր սանձազերծում Կուրոպատկինոյից մինչեւ Աղդամ եւ դեպի հյուսիս ձգվող ճակատային գծի երկայնքով:

Մարտի 11-ին ադրբեջանական կազմավորումները գրոհներ ձեռնարկեցին Աղդամից հարավ գտնվող Աջարլի եւ Մարզիլլու բնակավայրերի ուղղությամբ: Շուրջ մեկ ժամ տեւած մարտերից հետո հակառակորդը ճարահատյալ նահանջեց իր ելման դիրքերը: Նույն բեմագիրը կրկնվեց մարտի 16-ին՝ Օմարի ուղղությամբ տեղի ունեցած հարձակման ժամանակ: Ապրիլի սկզբներին Լեւոնարխ եւ Մատաղիս գյուղերի շրջանում թշնամու ձեռնարկած հարձակումն իր իսկ համար ավելի բացասական հետեւանքներ ունեցավ: Ղարաբաղյան ուժերը, ապրիլի 10-ին կասեցնելով ադրբեջանական ուժերի առաջխաղացումը, հյուսիսարեւելյան ռազմաճակատում անցան հակահարձակման եւ Գյուլիստանի ու Թալիշի ուղղությամբ զբաղեցրին ռազմավարական նշանակության մի շարք բարձունքներ: Երկու օր անց հայկական ուժերը մտան Վերին Չայլու եւ Լեւոնարխ բնակավայրերը:

Ապրիլի 16-ին ղարաբաղյան ստորաբաժանումները ճնշեցին թշնամու դիմադրությունն արեւելյան ճակատում, ոչնչացրին Գյուլիջա բնակավայրի կրակակետերը՝ լայն հնարավորություն ստեղծելով թեւերում գործող զորքերի առաջխաղացումը զարգացնելու համար:

Նույն հաջողությամբ էին գործում նաեւ հարավարեւելյան ռազմաճակատի խմբավորումները: Հակառակորդի բազմաքանակ զինուժն այդ օրը ջախջախիչ պարտություն կրեց Աշաղը Սեիդահմեդլուց հարավ (Ֆիզուլու ուղղությամբ) ձգվող բնագծում:

Արեւելյան ռազմաճակատում ստեղծված բարենպաստ իրավիճակը հայկական ստորաբաժանումներին հնարավորություն տվեց մարտական գործողությունները հաջողությամբ զարգացնել ոչ միայն հարավարեւելյան, այլեւ հյուսիսարեւելյան հատվածում: Ապրիլի 18-ին 5-րդ մոտոհրաձգային բրիգադի զորամասերը ոչնչացրին Թափկարակոյունլուի ուղղությամբ տեղաբաշխված մի շարք կրակակետեր եւ ընդհուպ մոտեցան այդ բնակավայրի մատույցներին:

Ապրիլի 21-ին Ասկերանի պաշտպանական շրջանի ստորաբաժանումները ոչնչացրին Իլխըչըլար եւ Թաղըբեյլի բնակավայրերի ռազմական հենակետերը եւ բավական լավ հնարավորություն ստացան հետագա առաջխաղացումն ապահովելու համար: Դա հատկապես ակնհայտ դարձավ ապրիլի 24-ին տեղի ունեցած մարտական գործողությունների ընթացքում: Այդ օրը վերացվեցին հակառակորդի կրակակետերը Աղդամի շրջանի Ումելու, Շոբլանլու, Նամիրլու, Շուրաբադ բնակավայրերում: Ապրիլի 26-ին ղարաբաղյան ուժերն ազատագրեցին Սեյսուլան հայկական բնակավայրը: Մեկ օր հետո ճնշվեցին հակառակորդի կրակակետերն Աղդամի շրջանի Շխլար եւ Օրթա Քարվենդ գյուղերում: Ապրիլի վերջին եւ մայիսի սկզբներին ահեղ մարտեր ընթացան Կարմիրավանի ազատագրման համար: Մի քանի օրվա ընթացքում գյուղը երեք անգամ անցավ ձեռքից-ձեռք: Ադրբե-

Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն

ջանական հրամանատարությունն այս բնագծի պաշտպանության համար կենտրոնացրել էր անհամեմատ մեծ քանակությամբ զինուժ, քանզի զգում էր, որ այն տալուց հետո հայկական ուժերը բավական մեծ հնարավորություն կստանան ինչպես հարեւան Յարմջան գյուղի դիրքերը, այնպես էլ ադրբեջանական բանակի հարակից պաշտպանական բնագծերը վերացնելու համար: Ավելացնենք, որ այդ ընթացքում ղարաբաղյան ուժերն արդեն հսկողության տակ էին առել Աղդամ-Բարդա մայրուղին: Սրանք ղարաբաղյան ուժերի հրադադարին նախորդած վերջին նշանակալից մարտերն էին, որոնցով, փաստորեն վերջակետվեց ռազմագործողությունների թվով երկրորդ ակտիվ շրջանը:

Առկա ռազմաքաղաքական պայմաններում Ադրբեջանը ստիպված էր ընդունել Ռուսաստանի Դաշնության առաջարկությունը եւ հայտարարել ապրիլի 28-ի 00 ժամից ղարաբաղյան ռազմաճակատում կրակը դադարեցնելու իր պատրաստակամության մասին:

Իսկ արդեն մայիսի 16-ին ՌԴ պաշտպանության նախարարի նախաձեռնությամբ Մոսկվայում Հայաստանի ու Ադրբեջանի պաշտպանության նախարարների եւ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Պաշտպանության բանակի հրամանատարի միջեւ տեղի ունեցած հանդիպման ընթացքում քննարկվեցին զինադադարի հաստատմանն ուղղված կոնկրետ առաջարկներ, որոնց հիման վրա թերեւս պիտի կնքվեր քաղաքական համաձայնագիր: Թեւակոխեց տեւական զինադադարը…

ՎԵՐՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

Անդրադառնալով ԼՂՀ Պաշտպանության բանակի կազմավորման եւ նրա անցած մարտական ուղու տարեգրությանը, դժվար է գերագնահատել այն առաքելությունը, որը կարելի է արտահայտել երկու բառով՝ «Հանուն Արցախի…»: Խրամատից-խրամատ, դիրքից-դիրք տեղափոխվող զինանձնակազմը մեր գոյամարտի ընթացքում կարողացավ ճշտել եւ իմաստավորել մի իրողություն, որն իր մեջ ամփոփում է

Ստեփանակերտ



Լեռնային Դարաբաղի Հանրապետություն

հայրենասիրության բովանդակությունն ամբողջությամբ:

Օմարից մինչեւ Արաքս, Ղոչազից՝ Գյուլիջա ձգվող ղարաբաղյան ռազմաճակատի բոլոր հատվածներում տեղի ունեցած մարտական գործողությունների ընթացքում ԼՂՀ Պաշտպանության բանակի զինուժը, ի լուր աշխարհի, նորանկախ հանրապետության ռազմական պատմության անդաստանում իր կենսագրությունը գրեց ոսկե տառերով: Այդ տարեգրության հերոսները ծնվել ու ապրում են մեր կողքին, հազար ու մի տառապանք կրած իրենց ներկայությամբ բազմապատկում հայրենի տան սյուների ամրությունը, հոգու անթաքույց երախտագիտությամբ հիշում եւ հավերժացնում բոլոր այն զոհված մարտընկերների հիշատակը, որոնց թափած արյան ծովից բարձրացել է մեր հաղթանակների փոթորիկը: Մարտական գործողությունների ընթացքում Պաշտպանության բանակի զինանձնակազմն ազատագրեց ադրբեջանցիների կողմից բռնազավթված շուրջ 50 հայկական բնակավայր, վնասազերծեց Արցախին սահմանակից 7 վարչատարածքային միավորումներում տեղակայված թշնամական հենակետերը, շարքից հանեց ու առգրավեց հարյուրավոր ծանր զինտեխնիկա, ոչնչացրեց մոտ 25 մարտական ինքնաթիռ ու ուղղաթիռ:

Պաշտպանության բանակի տասնյակ զորահրամանատարներ, հարյուրավոր սպաներ ու զինվորներ ռազմադաշտում ցուցաբերած հերոսության համար արժանացան հայրենիքի բարձրագույն պարգեւին՝ «Մարտական խաչ» 1-ին եւ 2-րդ աստիճանի շքանշանների:

Այսօր էլ շարունակում է ապրել ու զորանալ ԼՂՀ Պաշտպանության բանակը: Զորանալ, քանզի հայ ժողովրդի հազարամյակների պատմությունն իր ճակատագրական քառուղիներում բանաձեւել է լինելիության առաջին եւ ամենագլխավոր պայմանը՝ ուժն է ծնում իրավունք: Եվ այդ իրավունքը պաշտպանելու համար նախապատրաստվում է հայրենապահ երիտասարդներից կազմված մի ողջ զորասյուն, որոնց վստահված է շարունակ պահել եւ փառավորել իրենց նախորդների պատիվն ու անունը…

Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն

Արցախն անսասան մնաց նաեւ նոր պատերազմում

Ինչպես վերսկսվեցին ռազմական գործողություններն Արցախում

2-5 ԱՊՐԻԼԻ 2016թ.

(02/04/16 [08:18])

Ապրիլի 1-ի լույս 2-ի գիշերը շփման գծի հարավային, հարավարեւելյան եւ հյուսիսարեւելյան ուղղություններով հակառակորդը ձեռնարկել է բացահայտ հարձակողական գործողություններ՝ այլ զինատեսակների հետ միասին օգտագործելով հրետանի, զրահատեխնիկա եւ օդուժ:

Բացի առաջնագծում ընթացող մարտերից, հակառակորդը հրետանային հարվածներ է հասցրել խաղաղ բնակավայրերի եւ մի շարք զորամասերի մշտական տեղակայման վայրերին:

Այս պահի դրությամբ ղարաբաղա-ադրբեջանական հակամարտ զորքերի շփման գծի ողջ երկարությամբ տեղի են ունենում թեժ բախումներ:

ՊԲ առաջապահ ստորաբաժանումները, ընդունելով հակառակորդի մարտահրավերը, վարում են հուսալի պաշտպանական մարտեր:

ՖՈՏՈԼՈՒՐ

(02/04/16 [09:10])

Ղարաբաղա-ադրբեջանական հակամարտ զորքերի շփման գոտում ադրբեջանական զինուժը շարունակում է իրականացնել լայնամասշտաբ նախահարձակ գործողություններ:

Այս պահի դրությամբ ՊԲ առաջապահ ստորաբաժանումները պաշտպանական հաջող մարտեր են իրականացնում առաջնային գծի բոլոր ուղղություններով՝ հակառակորդին պատճառելով կենդանի ուժի եւ զինտեխնիկայի զգալի կորուստներ: ՊԲ օպերատիվ տվյալների համաձայն, բացի ադրբեջանական զինուժին հասցրած այլ կորուստներից, ՊԲ հակաօդայինները հակամարտ զորքերի շփման գոտու հյուսիսային հատվածում խոցել են հայկական դիրքերի ուղղությամբ գրոհող թշնամական մեկ ուղղաթիռ:

(02/04/16 [10:25])

Ըստ ՊԲ օպերատիվ տվյալների՝ ադրբեջանական զինուժի կողմից ապրիլի 2-ին ժամը 08:30-ի սահմաններում Մարտունու պաշտպանական ուղղությամբ ՄՄ-21 (Գրադ) կայանքից իրականացված հրթիռահրետակոծության հետեւանքով սպանվել է 2004թ. ծնված Վաղինակ Թաքուլի Գրիգորյանը, եւս երկու երեխա վիրավորվել են:

(02/04/16 [12:50])

Ղարաբաղա-ադրբեջանական հակամարտ զորքերի շփման գծի ողջ երկայնքով շարունակվում են ռազմական բախումները: Առավել թեժ մարտեր են ընթանում արդեն ռազմաճակատի վերածված առաջնային գծի հարավային (Հադրութ) եւ հյուսիսարեւելյան (Մարտակերտ) ուղղություններով: Հաստատված տվյալներով ղարաբաղյան ուժերը մարտագծի հարավարեւելյան ճակատում շարքից հանել են 2 տանկ, հյուսիսարեւելյան ուղղությամբ՝ 1 տանկ եւ 1 անօդաչու թռչող սարք:

Ժամը 12:30-ի սահմաններում ՊԲ հակաօդայինների կողմից հարավարեւելյան ուղղությամբ խոցվել է թշնամու եւս մեկ ռազմական ուղղաթիռ, իսկ հյուսիսարեւելյան ուղղությամբ՝ 1 անօդաչու սարք:

(02/04/16 [18:50])

ՊԲ առաջապահ ստորաբաժանումները շարունակում են հաջողությամբ

Լեռնային Դարաբաղի Հանրապետություն

Քառօրյա պատերազմում զոհված սյունեցիները

Մայիս Երջանիկի Միրզոյան (Դարբաս համայնքի ղեկավար) - կամավորական, զոհվել է 2016թ. ապրիլի 4-ին

Արմեն Մինասի Բեգլարյան (Ախլաթյան համայնքի ղեկավար) - կամավորական, զոհվել է 2016թ. ապրիլի 4-ին

Սեդրակ Սերգեյի Ասրյան (Դարբաս) - կամավորական, զոհվել է 2016թ. ապրիլի 4-ին

Սերգեյ Գուրգենի Դանղյան (Սիսիան) - կամավորական, զոհվել է 2016թ. ապրիլի 4-ին

Դավիթ Բագրատի Սարգսյան (Բալաք) - կամավորական, զոհվել է 2016թ. ապրիլի 4-ին

Եղիշե Արտավազդի Նիկալյան (Լծեն) - կամավորական, զոհվել է 2016թ. ապրիլի 4-ին

Էդուարդ Յուրիկի Ալեքսանյան (Սիսիան) - կամավորական, զոհվել է 2016թ. ապրիլի 4-ին

Կարո Ծերունի Համբարձումյան (Վաղատին) - կամավորական, վիրավորվել է 2016թ. ապրիլի 4-ին, մահացել ապրիլի 18-ին

Արմեն Արեգի Հովհաննիսյան (Ծղուկ) - կամավորական, վիրավորվել է 2016թ. ապրիլի 4-ին, մահացել ապրիլի 7-ին

Գագիկ Կոլյայի Փարսադանյան (Կապան) - կամավորական, զոհվել է 2016թ. ապրիլի 4-ին

վարել պաշտպանական մարտեր եւ հակառակորդին հասցնել ծանր վնասներ: Ընդհանուր առմամբ, ապրիլի 1-ի լույս 2-ի գիշերը եւ օրվա ընթացքում տեղի ունեցած մարտական գործողությունների ընթացքում ադրբեջանական զինուժը տվել է 200-ից ավելի կորուստ: Միայն Թալիշի ուղղությամբ ոչնչացվել է ադրբեջանական հատուկ նշանակության ջոկատի առնվազն 30 զինվոր, Մարտակերտի ուղղությամբ՝ 2 տանկ, 2 անօդաչու թռչող սարք, իսկ հյուսիսային ուղղությամբ՝ 1 ուղղաթիռ: Առավել խոշոր բախումներ են տեղի ունենում մարտագծի հարավարեւելյան ուղղությամբ: Հակառակորդը կիրառելով զրահատեխնիկա, հրետանային միջոցներ, այդ թվում՝ ՄՄ-21 («Գրադ») տիպի կայանք, հարձակման թիրախ է դարձրել ոչ միայն պաշտպանության բանակի դիր-

Արմեն Կառլենի Գասպարյան (Կապան) - կամավորական, զոհվել է 2016թ. ապրիլի 6-ին

Նորիկ Ժորայի Գասպարյան (Կապան) - ժամկետային զինծառայող, զոհվել է 2016թ. ապրիլի 2-ին

Նարեկ Վարդանի Մկրտչյան (Գորիսի տարածաշրջանի գյուղ Որոտան) - ժամկետային զինծառայող, զոհվել է 2016թ. ապրիլի 3-ին

Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն

ՖՈՏՈԼՈՒՐ

Թալիշ

քերը, այլեւ՝ խորը թիկունքում գտնվող խաղաղ բնակավայրերը: Այս ուղղությամբ ՊԲ հակաօդայինների կողմից ժամը 12:30-ի սահմաններում խոցվել է թշնամական մեկ ռազմական ուղղաթիռ եւ 2 տանկ:

Ցավոք, թեժ մարտերի ընթացքում կորուստներ է ունեցել նաեւ ղարաբաղյան կողմը:

(03/04/16 [07:25])

Ապրիլի 3-ին՝ ժամը 06:00-ից սկսած, առաջնային գծի հարավային ուղղությամբ հակառակորդը հրթիռահրետանային միջոցների եւ զրահատեխնիկայի կիրառմամբ շարունակել է ագրեսիվ ռազմական գործողությունների վարումը:

ՊԲ առաջապահ ստորաբաժանումները ձեռնարկում են անհրաժեշտ միջոցառումներ հակառակորդի նախահարձակ գործողությունները ճնշելու համար:

(03/04/16 [11:35])

Ղարաբաղա-ադրբեջանական հակամարտ զորքերի շփման գծի հարավարեւելյան եւ հյուսիսարեւելյան ուղղությամբ ընթանում են թեժ մարտեր: Լուսադեմին հակառակորդի կողմից ձեռնարկված լայնածավալ հրետակոծությանն ի պատասխան, ՊԲ ստորաբաժանումները անցել են հակազդիչ գործողությունների եւ Թալիշի ուղղությամբ տիրել նախօրյակին ադրբեջանական ուժերի կողմից գրավված մարտավարական կարեւոր նշանակության հենակետին: Թշնամին զգալի կորուստներ կրելով հետ է շպրտվել: Մարտական գործողությունների ժամանակ ղարաբաղյան կողմից վիրավորվել է երկու զինծառայող:

Ղարաբաղյան ուժերի գործողությունները հաջող են ընթանում նաեւ մարտագծի հարավային հատվածում: Այս ուղղությամբ դիմագրավելով հակառակորդի հրթիռահրետանային ու զրահատանկային հարձակումներին, հարավային թեւում գործող ՊԲ ստորաբաժանումները շարքից հանել են թշնամական 2 տանկ եւ 1 հետեւակի մարտական մեքենա (ՀՄՄ):

(03/04/16 [13:55])

Ղարաբաղա-ադրբեջանական հակամարտ զորքերի շփման գծի ողջ երկայնքով իրավիճակը տակավին մնում է լարված: Առավել ուժգին բախումներ են տեղի ունենում մարտագծի հյուսիսարեւելյան եւ հարավարեւելյան ուղղություններում: ՊԲ ստորաբաժանումները Թալիշի ուղղությամբ հակառակորդին հասցնում են կենդանի ուժի եւ զինտեխնիկայի մեծ կորուստներ: Հաստատված տվյալներով այս հատվածում ադրբեջանական զինուժը կորցրել է 3 տանկ: Հիշեցնենք, որ եւս 2 տանկ եւ 1 ՀՄՄ հակառակորդն այսօր կորցրել է հարավարեւելյան ուղղությամբ:

Մարտագծի հարավարեւելյան ուղղությամբ եւս ընթանում են դիրքային թեժ մարտեր:

Հակամարտ զորքերի շփման գծում հակառակորդն իր անզորությունը փորձում է պարտակել խաղաղ բնակիչների, մասնավորապես Մարտակերտ քաղաքի վրա ՄՄ-21 («Գրադ») հրթիռահրետանային կայանքից եւ 152 միլիմետրանոց հրետանային միջոցներից իրականացվող արկակոծումներով:

(03/04/16 [16:25])

ԼՂՀ ՊՆ հայտարարությունը

Ադրբեջանի պաշտպանության նախարարության կողմից տարածված՝ մարտական գործողությունների միակողմանի դադարեցնելու մասին հայտարարությունն ապատեղեկատվություն է:

Ապրիլի 1–ի լույս 2-ի գիշերը ադրբեջանական կողմը Լեռնային Ղարաբաղի նկատմամբ սկսել է լայնածավալ հար-

Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն

ձակողական գործողություններ, կիրառել է իր զինանոցում եղած ռազմական տեխնիկայի գրեթե բոլոր հնարավոր տեսակները, ավելին՝ նույն հայտարարության տարածումից հետո ՄՄ-21 («Գրադ») տիպի հրթիռահրետանային կայանքներից եւ 152 միլիմետրանոց հրանոթներից արկակոծել հայկական խաղաղ բնակավայրերը, մասնավորապես՝ Մարտակերտ քաղաքը:

Նշված փաստերն, ինչպես նաեւ հայտարարության մեջ «հակահարձակողական գործողություններ» եւ «ազատագրված տարածքների ամրապնդում» եզրույթների օգտագործումը ի ցույց են դնում այդ փաստաթղթի կեղծ բնույթը, որի իրական նպատակը բացահայտ նախապայմաններով լի կրակի դադարեցման իմիտացիան է:

ԼՂՀ Պաշտպանության բանակը պատրաստ է ընդառաջել եւ քննարկել կրակի դադարեցման մասին առաջարկը՝ նախնական դիրքերի վերականգնման համատեքստում:

ՖՈՏՈԼՈՒՐ

ՖՈՏՈԼՈՒՐ

(03/04/16 [19:50])

Ղարաբաղա-ադրբեջանական հակամարտ զորքերի շփման գծում մարտերը շարունակվում են:

Ծավալված մարտական գործողությունների ընթացքում պաշտպանության բանակի կողմից հյուսիսարեւելյան ուղղությամբ ոչնչացվել է եւս 1 տանկ, հյուսիսային ուղղությամբ՝ ՄՄ-21 («Գրադ») տիպի 1 հրթիռահրետանային կայանք, 1 միավոր ինժեներական տեխնիկա եւ 1 միավոր անօդաչու թռչող սարք՝ Մարտակերտի ուղղությամբ:

(04/04/16 [08:10])

Ապրիլի 3-ի լույս 4-ի գիշերը ղարաբաղա-ադրբեջանական հակամարտ զորքերի շփման գծի ողջ երկայնքով հակառակորդը ականանետներից ու հրանոթներից շարունակել է արկակոծել ՊԲ առաջնային դիրքերն ու մերձակա հայկական բնակավայրերը: Առավոտյան ժամը 07:00-ի սահմաններում առավել ինտենսիվ հրետակոծություններ են սկսվել շփման գոտու հարավարեւելյան եւ հյուսիսարեւելյան ուղղություններով: Ադրբեջանական բանակը կիրառում է 152 միլիմետրանոց հրանոթներ, «Գրադ» կայանքներ եւ տանկեր: Հակառակորդի ագրեսիվ գործողությունները ճնշելու ուղղությամբ ՊԲ առաջապահ ուժերը ձեռնարկում են բոլոր անհրաժեշտ միջոցները եւ վստահաբար իրականացնում իրենց առջեւ դրված մարտական խնդիրները:

(04/04/16 [10:45])

Ղարաբաղա-ադրբեջանական հակամարտ զորքերի շփման գծի ողջ երկայնքով ընթանում են թեժ մարտեր: Ղարաբաղյան ուժերը հակառակորդին պատճառելով զգալի կենդանի ուժի եւ զինտեխնիկայի կորուստներ՝ մարտագծի հյուսիսարեւելյան եւ հարավարեւելյան ուղղություններով նախաձեռնությունը վերցրել են իրենց ձեռքը: Ռազմական գործողությունների ընթացքում հակառակորդը հյուսիսարեւելյան ուղղությամբ կորցրել է 3 տանկ, իսկ հարավարեւելյան ուղղությամբ՝ 2 տանկ:

(04/04/16 [13:30])

Ղարաբաղա-ադրբեջանական հակամարտ զորքերի շփման գծի ողջ երկայնքով շարունակվում են ընթանալ թեժ բախումներ:

Հակառակորդը մարդկային եւ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն

ՖՈՏՈԼՈՒՐ

ՖՈՏՈԼՈՒՐ

ՖՈՏՈԼՈՒՐ

ՖՈՏՈԼՈՒՐ

զինտեխնիկայի մեծ կորուստներից սարսափած, այսօր՝ ժամը 11:20-ի սահմաններում հյուսիսարեւելյան ուղղությամբ առաջին անգամ կիրառել է ТОС (Тяжелая огнеметная система) ծանր հրանետային համակարգեր: Նշված զինատեսակի կիրառումից ղարաբաղյան կողմը կորուստ չունի: Նույն ուղղությամբ հակառակորդը օգտագործել է երկու հարվածային անօդաչու թռչող սարք, իսկ 1-ը՝ հարավարեւելյան ուղղությամբ, որոնց գործողությունները նպատակին չեն հասել: Բոլոր 3 հարվածային անօդաչու թռչող սարքերը ոչնչացված են:

(04/04/16 [21:40])

Ղարաբաղա-ադրբեջանական հակամարտ զորքերի շփման գծում շարունակվում են մարտական գործողությունները: Օրվա ընթացքում հակառակորդը, բացի նախօրեին գործածության մեջ դրած զինատեսակներից, սկսել է կիրառել նաեւ սեփական զինանոցում կուտակված «ТОС 1» տիպի ծանր հրանետային համակարգեր, հարվածային անօդաչու թռչող սարքեր ու այլ ժամանակակից զինտեխնիկա: Սակայն այս ամենի արդյունքում անգամ ադրբեջանական զինուժին չհաջողվեց ռազմաճակատում փոխել դեպքերի զարգացման ընթացքը հօգուտ իրեն: Հակառակը, ՊԲ բոլոր ուղղությունների ստորաբաժանումները ոչ միայն հաջողությամբ իրենց դրսեւորեցին դիրքային մարտերում, այլեւ գրագետ ու նպատակասլաց գործողությունների շնորհիվ օրվա ընթացքում ոչնչացրին թշնամական 5 տանկ, 3 հարվածային անօդաչու թռչող սարք, տարբեր տեսակի տեխնիկա եւ տասնյակների հասնող կենդանի ուժ:

Գուցե հենց մեր այս հաջողությամբ է պայմանավորված Ադրբեջանի ռազմական ղեկավարության կողմից արված անհավասարակշիռ հայտարարությունը, ըստ որի նրանք հանդես են գալիս Արցախի Հանրապետության խաղաղ բնակավայրերի եւ մասնավորապես մայրաքաղաք Ստեփանակերտի ռմբահարման սպառնալիքներով:

ԼՂՀ պաշտպանության նախարարությունը զգուշացնում է անձամբ Հասանովին եւ նրա «գերագույնին», որ նման զարգացումների դեպքում արձագանքը լինելու է անհամաչափ եւ ավելի ցավոտ:

(04/04/16 [22:06])

Հաշվի առնելով ղարաբաղա-ադրբեջանական հակամարտ զորքերի շփման գծի ողջ երկայնքով արդեն երեք օր շարունակվող թեժ մարտերի հանդեպ տեղական եւ միջազգային հանրության հետաքրքրությունը՝ ԼՂՀ պաշտպանության նախարարության նախաձեռնությամբ ստեղծվել է օպերատիվ իրազեկման կենտրոն, որը պարբերաբար ներկայացնելու է առաջնագծում տեղ գտնող զարգացումների մասին կանոնավոր եւ օբյեկտիվ տեղեկատվություն: Այսօր նորաստեղծ կենտրոնում տեղի է ունեցել անդրանիկ հանդիպումը տեղական եւ միջազգային լրատվամիջոցների

Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն

ներկայացուցիչների հետ, որը վարել է ԼՂՀ ՊԲ օպերատիվ վարչության պետ, գնդապետ Վիկտոր Առստամյանը:

(04/04/16 [23:59])

Ադրբեջանի պաշտպանության նախարարությունը առաջնագծում կրած մեծաքանակ կորուստները պարտակելու, սեփական բարոյալքված բանակի մարտական ոգին ինչ-որ կերպ բարձրացնելու համար դիմել է հերթական էժանագին քարոզչական հնարքի՝ հայտարարելով, թե իբր ադրբեջանական ուժերը տիրել են Մատաղիս բնակավայրին:

ԼՂՀ պաշտպանության նախարարության մամուլի ծառայությունը հայտարարում է, որ վերոնշված տեղեկատվությունն իրականության հետ որեւէ կապ չունի: Ուղղակի հերթական անգամ հակառակորդ կողմը ցանկալին ներկայացրել է իրականության փոխարեն:

(05/04/16 [08:35])

Ապրիլի 1-ի լույս 2-ի գիշերը ղարաբաղա-ադրբեջանական հակամարտ զորքերի շփման գծի ողջ երկայնքով Ադրբեջանի կողմից սանձազերծված ագրեսիվ գործողությունները իրենց շարունակությունն ունեցան նաեւ այս գիշեր: Օր-օրի մեծացնելով կիրառվող զինատեսակների տրամաչափը՝ ապրիլի 4-ի լույս 5-ի գիշերը առաջնային գծի հարավային ուղղությամբ հակառակորդը կիրառել է «Սմերչ» համազարկային կրակի ռեակտիվ համակարգ:

Նույն ժամանակահատվածում հակառակորդը շարունակել է խաղաղ բնակավայրերի եւ մարտական հենակետերի հրետակոծությունները, անօդաչու թռչող սարքերի ակտիվորեն կիրառումը ղարաբաղա-ադրբեջանական հակամարտ զորքերի շփման գծի ողջ երկայնքով, որոնցից մեկը ՊԲ-ի կողմից ոչնչացվել է:

(06/04/16 [08:55])

Այս գիշեր ղարաբաղա-ադրբեջանական հակամարտ զորքերի շփման գոտում հիմնականում պահպանվել է ապրիլի 5-ի ժամը 12-ին ձեռք բերված կրակի դադարեցման շուրջ պայմանավորվածությունը:

ԼՂՀ ՊՆ մամուլի ծառայություն
nkrmil.am

Է.ԳՐԻԳՈՐՅԱՆ / ՀԵՏՔ

Մատաղիս

Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն

Հրադադարի մասին պայմանագիր

Ոչ պաշտոնական թարգմանություն

ՌԴ Պաշտպանության նախարար Պ. Ս. Գրաչովին
ՌԴ Արտաքին գործերի նախարար Ա. Վ. Կոզիրեւին
Վ. Ն. Կազիմիրովին

Արձագանքելով 1994 թվականի մայիսի 5-ի Բիշքեկի արձանագրության մեջ նշված հրադադարի կոչին եւ հենվելով 1994 թվականի փետրվարի 18-ի Արձանագրության վրա՝ հակամարտող Կողմերը համաձայնեցին հետեւյալի մասին.

1. *Ապահովել կրակի եւ ռազմական գործողությունների լիակատար դադարեցումը՝ սկսած 1994 թվականի մայիսի 12-ի 00 ժամ 01 րոպեից: Մինչեւ ոչ ուշ, քան 1994 թվականի մայիսի 11-ը հրադադարի մասին համապատասխան հրամանները կտրվեն եւ կհաղորդվեն ռազմական ստորաբաժանումների հրամանատարներին, որոնք պատասխանատու են դրանց իրականացման համար: Մայիսի 12-ին՝ մինչեւ ժամը 23.00, Կողմերը կփոխանակեն հրադադարի մասին իրենց հրամանների տեքստերը՝ դրանց հնարավոր փոխադարձ լրացման եւ հետագայում համանման փաստաթղթերի հիմնական դրույթների ներդաշնակեցման նպատակով:*
2. *Խնդրել Ռուսաստանի Դաշնության Պաշտպանության նախարարին՝ Մոսկվայում, մինչեւ ոչ ուշ, քան ս.թ. մայիսի 12-ը Ադրբեջանի, Հայաստանի պաշտպանության նախարարների ու Լեռնային Ղարաբաղի բանակի հրամանատարի մասնակցությամբ հրատապ հանդիպում հրավիրելու՝ նպատակ ունենալով համաձայնեցնելու զորքերի բաժանման եզրագծերը, այլ հրատապ ռազմատեխնիկական հարցեր, ինչպես նաեւ նախապատրաստել միջազգային դիտորդների առաջավոր խմբի տեղակայումը:*
3. *Սույն պայմանավորվածությունը կօգտագործվի առաջիկա 10 օրվա ընթացքում բանակցությունները ավարտելու եւ մինչեւ ոչ ուշ, քան ս.թ. մայիսի 22-ը զինված հակամարտության դադարեցման մասին համաձայնագիր կնքելու համար:*
4. *Սույն համաձայնագիրը ուժի մեջ կմտնի անմիջապես այն պահից հետո, երբ Միջնորդը տեղեկացնի, որ նա ստացել է հակամարտող ուժերի կողմից լիովին նույնական փաստաթղթեր, ստորագրված լիազոր ներկայացուցիչների կողմից:*

Ադրբեջանի պաշտպանության նախարար
Հայաստանի պաշտպանության նախարար
Լեռնային Ղարաբաղի բանակի հրամանատար

Նշում. տեքստը ստորագրել են համապատասխանաբար Մ. Ի. Մամեդովը՝ 1994 թվականի մայիսի 9-ին Բաքվում, Ս. Սարգսյանը՝ մայիսի 10-ին Երեւանում, Ս. Բաբայանը՝ մայիսի 11-ին Ստեփանակերտում:

nkr.am

Ռուսաստանյան Դաշնության արտաքին գործերի նախարարի, Ամերիկայի Միացյալ Նահանգների պետքարտուղարի ու Ֆրանսիայի եվրոպական հարցերով պետքարտուղարի համատեղ հայտարարությունը

Ռուսաստանյան Դաշնության արտաքին գործերի նախարար Սերգեյ Լավրովը, Ամերիկայի Միացյալ Նահանգների պետքարտուղար Ջոն Քերին ու Ֆրանսիայի եվրոպական հարցերով պետքարտուղար Հարլեմ Դեզիրը, ներկայացնելով ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահող երկրները, այսօր Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորման հարցով հանդիպում ունեցան Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանի եւ Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւի հետ:

Նրանք վերահաստատեցին, որ հակամարտությունը ռազմական լուծում չի կարող ունենալ: Համանախագահները շեշտադրեցին 1994 եւ 1995թթ. հրադադարի համաձայնագրերը հարգելու կարեւորությունը:

Նախագահները վերահաստատեցին հրադադարի պահպանման ու հակամարտության խաղաղ կարգավորման շուրջ իրենց հանձնառությունը: Հետագա բռնությունների ռիսկը կրճատելու համար նրանք համաձայնեցին հնարավորինս սեղմ ժամկետում համաձայնեցնել ԵԱՀԿ հետաքննությունների մեխանիզմի մանրամասները: Նախագահները նաեւ համաձայնեցին ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցչի գոյություն ունեցող գրասենյակի ընդլայնմանը: Ի վերջո, նրանք համաձայնեցին ԿԽՄԿ-ի հովանու ներքո շարունակել տվյալների փոխանա-

Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն

Բիշքեկյան արձանագրություն

ԱՊՀ խորհրդարանական վեհաժողովի, Ղրղզստանի Հանրապետության խորհրդարանի, Ռուսաստանի Դաշնության Դաշնային ժողովի եւ Արտաքին գործերի նախարարության նախաձեռնությամբ 1994 թվականի մայիսի 4-5-ը Բիշքեկ քաղաքում անցկացված հանդիպման մասնակիցները.

- *վճռականություն արտահայտեցին ամենայն կերպ օժանդակել Լեռնային Ղարաբաղում եւ նրա շուրջը զինված հակամարտության դադարեցմանը, որը ոչ միայն անուղղելի վնաս է հասցնում ադրբեջանական եւ հայ ժողովուրդներին, այլեւ էականորեն շոշափում է տարածաշրջանի մյուս երկրների շահերը, լրջորեն բարդացնում միջազգային իրավիճակը,*
- *պաշտպանելով ԱՊՀ պետությունների երկրների ղեկավարների 1994 թվականի ապրիլի 15-ի խորհրդի հայտարարությունը, պատրաստակամություն հայտնեցին լրիվ աջակցություն ցուցաբերել զինված դիմակայության դադարեցմանը եւ նրա հետեւանքների վերացմանն ուղղված գործադիր իշխանության ներկայացուցիչների ու ղեկավարների ջանքերին՝ համապատասխան համաձայնագրի շուտափույթ կնքման միջոցով,*
- *հանդես եկան հակամարտության դադարեցման գործում Համագործակցության եւ Միջխորհրդարանական վեհաժողովի բնական ակտիվ դերի, դրա հետ կապված ՄԱԿ-ի եւ ԵԱՀԿ սկզբունքների, նպատակների եւ կոնկրետ խնդիրների իրագործման օգտին /ամենից առաջ Անվտանգության խորհրդի 822, 853, 874, 884 բանաձեւեր/,*
- *կոչ արեցին բոլոր հակամարտող կողմերին լսել ողջախոհության ձայնը. մայիսի 8-ի լույս 9-ի կեսգիշերին դադարեցնել կրակը՝ հիմնվելով 1994 թվականի փետրվարի 18-ի արձանագրության վրա /այդ թվում եւ դիտորդների տեղակայման մասով/, եւ արդյունավետ աշխատանքով սեղմ օրերի ընթացքում այն ամրապնդել հուսալի, իրավաբանորեն պարտավորեցնող համաձայնագրի ստորագրման միջոցով, որը նախատեսում է ռազմական եւ թշնամական գործողությունները չվերսկսելու ապահովման մեխանիզմ, գրավված տարածքներից զորքերի դուրս բերում եւ հաղորդակցման ուղիների գործունեության վերականգնում, փախստականների վերադարձ,*
- *համաձայնվեցին առաջարկել ԱՊՀ անդամ-պետությունների խորհրդարաններին՝ քննարկել Միջխորհրդարանական վեհաժողովի խորհրդի նախագահ Վ.Ֆ. Շումեյկոյի եւ վեհաժողովի խաղաղարար խմբի ղեկավար Մ.Շ.Շերիմկուլովի նախաձեռնությունը Համագործակցության խաղաղարար ուժերի ստեղծման մասին,*
- *նպատակահարմար գտան շարունակել նման հանդիպումները՝ ի շահ զինված հակամարտությունների խաղաղ լուծման,*
- *երախտագիտություն հայտնեցին Ղրղզստանի ժողովրդին եւ ղեկավարությանը՝ աշխատանքի համար հիանալի պայմաններ ստեղծելու, սրտաբացության եւ հյուրընկալության համար:*

Պատվիրակությունների անունից՝

Ա.Ջալիլով/Ռ.Գուլիեւի ստորագրությունը/

Կ.Բաբուրյան

Բ.Արարքցյան

Վ.Շումեյկո

Մ.Շերիմկուլով

Վ.Կազիմիրով/Ռուսաստանի Դաշնության Նախագահի լիազոր ներկայացուցիչ, Ռուսաստանի միջնորդական առաքելության ղեկավար/

Մ.Կրոտով/ԱՊՀ անդամ-պետությունների միջխորհրդարանական վեհաժողովի խորհրդի քարտուղարության ղեկավար/

Բիշքեկ, 5 մայիսի 1994թ.

nkr.am

կումը անհայտ կորածների վերաբերյալ, որի շուրջ նախագահները պայմանավորվածություն էին ձեռք բերել 2014թ. հոկտեմբերին Փարիզում կայացած գագաթնաժողովի ընթացքում:

Նախագահները համաձայնության եկան բանակցային հաջորդ փուլի վերաբերյալ, որը կկայանա հունիսին կողմերի համաձայնությամբ ընտրված վայրում՝ նպատակ ունենալով վերսկսել բանակցությունները համակողմանի կարգավորման շուրջ:

17 մայիսի, 2016թ.

ԱՄՆ դեսպանություն

Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն

Շուշի, Սբ Ղազանչեցոց եկեղեցին

Լեռնային Դարաբաղի Հանրապետություն



Խմբագրական

«...Ու պիտ դառնաս էն երկիրը, ուր ձգտում է մեր հոգին»

Սկիզբը՝ էջ 6

ասաց՝ ես իմ հայրենիքի զավակն եմ: Այնպես որ՝ անկախ պետականությունը մեր ազգային արժանապատվության բարձրագույն դրսեւորումն է եւ հավիտենական արժեք է:

Ուրեմն եւ՝ երախտագիտության ու հպարտության զգացումով հիշենք բոլոր նրանց, ովքեր 1991 թվականին իրականություն դարձրին մեր ազգային երազանքը, եւ հայոց աշխարհի վրա կրկին ճառագեց անկախության աստղը:

* * *

Ի՞նչ մեթոդաբանություն է ընկած համարի հիմքում, ի՞նչ սկզբունքով է կառուցվել թերթի այս համարը:

Հայ ժողովրդի լինելիության կարգախոս (սկզբունք) ենք ընդունել չարենցյան հայտնի բանաձեւը՝ «Ով հայ ժողովուրդ, քո միակ փրկությունը քո հավաքական ուժի մեջ է», որով եւ սկսում ենք համարը՝ համոզված լինելով, որ բանաձեւն արդիական ու պահանջված է նաեւ այսօր:

Համարում հարգանք, պատկառանք է սերմանվում Հայաստանի Հանրապետության խորհրդանիշների նկատմամբ:

Այդպիսի վերաբերմունք է սերմանվում ազգային արժեհամակարգի հիմք հանդիսացող մի քանի երեւույթների (իրողությունների) հանդեպ՝ Հայոց ազգային էպոս, Հայոց այբուբեն, Մայր աթոռ սուրբ Էջմիածին, Հայոց մերօրյա մայրաքաղաք, Սրբազան լեռ՝ Արարատ՝ մեր բռնազավթված հայրենիքի խորհրդանիշ, մեր ազգային լինելիության գերագույն գաղափար:

Համեմատաբար ծավալուն անդրադարձ կա Հայաստանի երրորդ հանրապետությանը եւ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությանը:

Անդրադարձ կա հայոց պետական միավորումներին՝ սկսած Հայաստանի վաղ պետական կազմավորումներից՝ աստվածապետական Արատտայից մինչեւ Միտաննի ու Հայասա թագավորություններ եւ Նաիրյան երկրներ, մինչեւ Երվանդունիների, Արտաշեսյանների ու հայ Արշակունիների, Բագրատունիների թագավորական հարստություններ, մինչեւ Կիլիկիայի հայկական պետություն, Հայաստանի առաջին հանրապետություն, Հայաստանի երկրորդ հանրապետություն:

Հետադարձ հայացք ենք ձգում հայոց պատմության որոշ սկզբնաղբյուրների, ներկայացնում քարտեզներ, համառոտ խոսք ասում հայոց մայրաքաղաքների մասին:

Կարեւորել ենք Սյունիքի դերը հայոց պետական միավորումների կազմավորման ու հարատեւման հարցում: Ի վերջո հայոց կենտրոնացված (կենտրոնաձիգ) պետականության բացակայության պայմաններում անգամ Սյունիքում պահպանվել է ինքնիշխանություն. նկատի ունենք Սյունիքի հայկազուն նախարարական տունը, Սյունիքի թագավորությունը, Դավիթ Բեկի իշխանապետությունը, Լեռնահայաստանը, ինչպես եւ Սյունիքի մելիքությունները:

Կարեւորեցինք հայ արվեստագետների ստեղծագործություններում հայրենիք արծարծող թեմաները գոնե մասամբ հիշատակելը (Հայրենիքի գեղարվեստական կերպարը, Հայրենիքի թեման հայ կոմպոզիտորների ստեղծագործություններում, Հայրենիքի թեման հայ կինոյում, կերպարվեստում): Այդ խնդիրը լուծում ենք նաեւ «Հայաստանը երգերի մեջ» խորագրի ներքո՝ ներկայացնելով ստեղծագործություններ նշանավոր հայ բանաստեղծներից՝ Վահան Տերյան, Հովհաննես Շիրազ, Եղիշե Չարենց, Համո Սահյան, Հովհաննես Թումանյան, Պարույր Սեւակ, Ավետիք Իսահակյան, Սիամանթո, Դանիել Վարուժան, Վահան Թեքեյան:

Համարի առիթով ծնվեցին մի շարք հոդվածներ ու հարցազրույցներ:

* * *

Հայ ժողովուրդն իր հազարամյակների պատմության մեջ շատ փորձություններ ու արհավիրքների միջով է անցել: Եվ այդ ամենից դասեր քաղելը, հետեւություններ անելն անհրաժեշտություն է եղել ու մնում է մինչեւ այսօր:

Գոնե մեկ-երկու դրվագ, կարծում ենք, արժեր հիշել այս հոբելյանի առիթով, քանզի շատ անելիքներ ունենք:

Հիշել է պետք, թե Քերթողահայր Խորենացին ինչպիսի ցավով է ողբում հայոց թագավորության (Արշակունիների ցեղից) 428թ. անկումը. «Ողբում եմ քեզ, Հայոց աշխարհ, ողբում եմ քեզ, բոլոր հյուսիսային ազգերի մեջ վեհագույնդ, որովհետեւ վերացան թագավորդ, խորհրդականդ եւ ուսուցանողդ. վրդովվեց խաղաղությունը, խախտվեց ուղղափառությունը, հիմնավորվեց տգիտությամբ չարափառությունը»:

Հայ ժողովուրդը ողբասացության այդպիսի առիթ ունեցավ նաեւ 1045 թվականին, երբ մեր ներքին դավաճանության հետեւանքով բյուզանդական բանակը գրավեց Բագրատունյաց թագավորության մայրաքաղաք Անին: Եթե Ամենայն հայոց կաթողիկոս Պետրոս Գետադարձը գոնե մի քիչ սիրեր իր հայրենիքը, այդչափ կորցրած չլիներ հայի արժանապատվությունը եւ այդքան հեռացած չլիներ քրիստոնեությունից, ապա Բագրատունիների թագավորությունը նման՝ մեր ազգի համար ամոթալի վերջաբան չէր ունենա:

Ողբալու առիթ ունեցանք 1375թ. ապրիլի 16-ին եւս, երբ մամլուքներին հանձնվեց Սիսի միջնաբերդը, եւ գերեվարվեցին Կիլիկիայի Լեւոն Զ թագավորը, Մարիամ թագուհին, Պողոս կաթողիկոսը…

Առհասարակ հայ ժողովուրդը տասը անգամ համազգային (համահայկական) պետություն է կերտել, որից ինը կորցրել է, ինչը պետք է միշտ հիշել:

Պետականությունը կորցնելու ամեն մի դեպք իր պատճառներն ու նախապատմությունն ունի: Բայց եւ դրանք հանգեցնում են մի ստույգ եզրակացության՝ ազգերի լինելիության համար ավելի մեծ երաշխիք գոյություն չունի բնության մեջ, քան անկախ պետությունն է, համազգային պետությունը:

Ոչ միշտ եւ մեր ազգային ոչ բոլոր գործիչներն են, ցավոք, գիտակցել (գիտակցում) անքննելի ու անսակարկելի այդ ճշմարտությունը: Բայց եւ

Խմբագրական

եղել են անհատականություններ, որոնց պահվածքն առ այսօր օրինակ եւ ուղեցույց է մեզ, նաեւ գալիք սերունդների համար: Նկատի ունենք, օրինակ, Հայոց սուրբ կաթողիկոս Սահակի վարքը, որ դրսեւորվեց հայոց Արտաշես Գ Արշակունի թագավորի ճակատագրի շուրջ հայոց ավագանու եւ կաթողիկոսի միջեւ տեղի ունեցած քննարկումներում, ինչը հիշեցնում է Ղազար Փարպեցի պատմագիրը «Հայոց պատմություն. թուղթ Վահան Մամիկոնյանին» գրքում:

Ահա թե ինչ ասացին հայոց նախարարները մեր մեծ քահանայապետ Սահակին. *«Այլեւս չենք կարող հանդուրժել թագավորի այսօրինակ անօրեն ու պիղծ գործերը… Մենք այդ վիճակից ոչ մի ելք կամ հնար չենք կարող գտնել, բացի Պարսից թագավորին բողոքելուց, որպեսզի նրան հեռացնի թագավորությունից… Խնդրում ենք քեզ՝ այս խորհրդի մեջ միաբան լինել մեզ հետ»:*

Երկար ու տառապալից մտորումներից հետո Հայոց քահանայապետն այսպես պատասխանեց նախարարներին. *«… Քա՛վ լիցի, որ ես մատնիչ լինեմ մեր ճշմարիտ հավատին եւ իմ հոտի մոլորյալ ոչխարը հանձնեմ անհավատներին՝ ծանակելու… Արդ, եթե իմ եկեղեցու վիրավոր ոչխարը տանելու լինեին առողջ բժշկի մոտ, կշտապեի եւ չէի հապաղի: Իսկ ամենաախտալից ատյանին մատնել իմ հիվանդացած հոգեւոր որդու՞ն՝ երբեք հանձն չեմ առնի»:*

Դրան հաջորդեց նախարարների խիստ արձագանքը՝ *«… Դու էլ քահանայապետ չես մնա մեր աշխարհի վրա»:*

Եվ Սասանյան Վռամ 5-րդ թագավորը Տիզբոնի դատական ատյան կանչեց հայոց թագավորին ու կաթողիկոսին, ովքեր էլ գահընկեց արվեցին, իսկ Հայաստանը կորցրեց անկախ պետականությունը…

Դա տեղի ունեցավ Քրիստոսից հետո 428 թվականին:

Փաստորեն՝ Հայոց նախարարների խնդրանքով Պարսից թագավորը վերացրեց հայոց պետականությունը. առանց պետության, առանց թագավորի, ըստ էության, ապազգային նախարարների համար դյուրին էր ապրել:

Դրանից 1571 տարի անց՝ 1999 թվականի հոկտեմբերի 27-ին, մենք մեր ձեռքով գլխատեցինք հայոց պետության երկու առաջնորդի՝ Վազգեն Սարգսյանին ու Կարեն Դեմիրճյանին՝ պետությունը մղելով փորձանքների ու փորձությունների նոր հուն…

Կա՞ աշխարհում մեկ այլ ժողովուրդ, որի ավագանին, անձնական նկատառումներից ելնելով, ձեռք բարձրացնի իր իսկ ամենամեծ արժեքի՝ պետականության վրա:

* * *

Անկախ պետականության 25-րդ տարում Հայաստանի Հանրապետությունը բախվեց առնվազն երկու ոչ սովորական իրադարձության, որոնք խորհրդածելու տեղիք են տալիս:

Արցախյան քառօրյա պատերազմը, անշուշտ, հայ ժողովրդի հերոսականության մի նոր եւ փայլուն դրսեւորումն էր: Բայց պատերազմն առաջ բերեց մտահոգող բազմաթիվ հարցեր, որոնց պատասխանը դեռ չի տրվել:

Իսկ ոստիկանության գնդի շուրջ հուլիսին տեղի ունեցածը, նաեւ դրան հաջորդած զարգացումները նորովի ջրի երես հանեցին հանրապետությունում կուտակված հարցերը:

Անշուշտ, մերժելի է զենքի ուժով հարց լուծելու մտածելակերպը: Բայց կկարողանա՞նք տեղի ունեցածից այնպիսի հետեւություններ անել, որ հայ մարդը ներքաղաքական կյանքում այլեւս ու երբեք իր մտահոգությունները լուծելու համար ստիպված չլինի ապավինել զենքի ուժին:

Եվ ուրեմն՝ հանուն մեր պետականության ամրապնդման պարտավոր ենք այդ իրադարձությունների հետ կապված՝ հանրությանը մտահոգող ամեն մի հարցի պատասխանել ու դրանից բխող անկեղծ հետեւություններ անել:

* * *

Հայաստանի երրորդ հանրապետությանը սպառնացող վտանգները, ժամանակի մարտահրավերները նույնպես չեն կարող ուշադրության կենտրոնում չլինել հոբելյանական այս օրերին:

Մեր հանրապետությանը սպառնացող ամենամեծ վտանգը շարունակում է մնալ արտագաղթը: Այդ երեւույթի իրական պատճառների մեջ խորանալու եւ վտանգը չեզոքացնելու փոխարեն երբեմն լսում ենք արդարացումի մտավարժանքներ՝ իբր արտագաղթը, տեղից տեղ գաղթելը մեր ժողովրդի հոգեկերտվածքին բնորոշ երեւույթ է: Շատ ափսոս, որ նման պատասխանատու տեսակետ արտահայտողները ծանոթ չեն հայոց պատմությանը եւ չեն գիտակցում, որ արտագաղթը մեզանում պատմական կոնկրետ հանգանմանքների, ողբերգական կոնկրետ իրադարձությունների հետեւանք է եղել. ասվածը հաստատող բազմաթիվ օրինակներ կարող ենք բերել, որ հաջորդել են, ասենք, Անիի թագավորության կործանմանն ու շարունակվել հետագայում:

Մեր տեսակետը հիմնավորելու համար՝ եւս մի փոքր անդրադարձ հայ ժողովրդական էպոսին, որը, համոզված ենք, պատմական հեռք ունի եւ հավելյալ անգամ հաստատում է հայ մարդու վերաբերմունքը գաղթին.

…Փոքր Միհրը գնաց մոր գերեզմանին եւ կանչեց՝

«Մերի՛կ, վեր էլի, մերիկ վեր էլի,
Շատ եմ ման էկե աշխարհք, շվար եմ ման էկե...»:

Մոր գերեզմանից ի պատասխան, ձայն եկավ՝

«Բոլ է ման գաս վեր աշխրքին,
Բոլ է ման գաս...»:

Հոր գերեզմանից էլ նույն խոսքերն են լսվում:

Այսօր էլ, կարծեք, Սանասարն ու Բաղդասարը, Մեծ Միհրն ու Դավիթը ձեն են տալիս գերեզմանից՝

«Բոլ է ման գաք աշխրքով մեկ,
Վերադարձեք մեր դուն...»:

Ինչ վերաբերվում է ներկայիս արտագաղթին, ապա դա երկրի ներքին վիճակով պայմանավորված երեւույթ է, ինչից պետք է լրջագույն հետեւություններ անել, այլապես մեր նախնյաց կանչը՝ վերադառնալու տուն, հնչելու է իբրեւ ձայն բարբառո հանապատի:

…Ալեքսանդր Մեծ Մյասնիկյան ունեինք (Հայաստանի կառավարության նախագահ եւ ռազմական գործերի ժողկոմ 1921-25թթ.), ով Հայաստանի խորհրդայնացումից հետո՝ սովի, աղքատության, համաճարակի պայմաններում ազգային կարեւոր գործերից գլխավորը համարեց հայրենադարձությունը, աշխարհով մեկ ցրված հայ ուժերին Հայաստանում հավաքելը: Հենց այդ ճանապարհով Ալեքսանդր Մյասնիկյանը վերածնություն բերեց Հայաստանին: Եղիշե Չարենցն է ասում՝ «Չունեինք մենք դարեր-հայրենիք: - Եվ նա մեզ հայրենիք տվեց»:

* * *

Մեզ սպառնացող ամենամեծ վտան-

Խմբագրական

գի մասին ասացինք: Բայց ունենք նաեւ մարտահրավերներ: Գլխավորն այդ շարքում արցախահայության անվտանգության ապահովման եւ Ղարաբաղյան հակամարտության բարեհաջող կարգավորման գերակա խնդիրն է, որը, կարելի է ասել, ստվերում է մեր ժողովրդին հուզող մնացյալ հարցերը:

Իսկապես, դա այն հարցն է, հանուն որի ժամանակավորապես մի կողմ պետք է դնենք մեր տարաձայնություններն ու մտահոգությունները, հայ ժողովրդին հուզող մնացյալ հարցերն ու միասնաբար լծվենք այդ մարտահրավերի դիմակայման գործին: Շատ դիպուկ է այդ հիմնախնդրի առիթով վերջերս արտահայտվել ՀՀ առաջին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը. *«... Ներկա պահին իշխանությունների, կուսակցությունների, հասարակական կազմակերպությունների, վերլուծաբանների, լրագրողների յուրաքանչյուր քայլ, խոսք կամ գործողություն անհրաժեշտ է գնահատել բացառապես այդ գերակա խնդրին նպաստելու կամ վնասելու տեսանկյունից»:*

Խոստովանենք միաժամանակ՝ ապրիլյան պատերազմից հետո հանրության մեջ ավելի ակտիվ է շրջանառվում «հողեր հանձնելու» մասին խոսակցությունը՝ դրանից բխող մտահոգություններով: Բայց ուզում ենք հավատ ընծայել ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի՝ այդ խոսակցություններին հակադրող դիրքորոշմանը, որ արտահայտեց վերջերս (1 օգոստոսի 2016թ.). *«Լեռնային Ղարաբաղի խնդրի կարգավորման ճանապարհին միակողմանի զիջումներ չեն լինելու: Բացառվում է: Լեռնային Ղարաբաղը երբեք չի լինելու Ադրբեջանի կազմում: Բացառվում է: Մեկ անգամ եւս կրկնում եմ՝ բացառվում է»:* Այո, այդ խոսքերի հանդեպ հավատ ենք ընծայում՝ վստահ լինելով, որ նման դիրքորոշում կունենար Հայաստանի Հանրապետության նախագահի պաշտոնը վարող յուրաքանչյուր հայ մարդ: Այլ կերպ, այլ մոտեցում չենք էլ պատկերացնում:

* * *

Եվս մի քանի մարտահրավերների, մտահոգությունների մասին:

ա) Ասացինք, որ ի վիճակի չենք պատմությունից դասեր քաղելու: Անընդհատ վրիպումներ ենք թույլ տալիս եւ այնպիսի վրիպումներ, որ պատմության մեկ այլ հանգրվանում նույնպես թույլ ենք տվել: Հայոց ցեղասպանության խնդրում անգամ չենք կարողանում կանգնել իրատեսության հողի վրա: Անընդհատ խոսում ենք պահանջատիրության մասին՝ չհասկանալով, որ առանց հզոր պահանջատիրոջ անհեթեթ է խոսել պահանջատիրության մասին:

բ) Շարունակում ենք մնալ կարծիքին, որ մեզ պակասում է զարգացման բուն հայկական ուղին: Միշտ կողմնորոշումների խնդիր ենք դրել մեր առջեւ՝ Տիզբո՞ն, Հռո՞մ, թե՞ Բյուզանդիա, հետո Պարսկաստա՞ն, թե՞ Թուրքիա, իսկ այսօր՝ Եվրասիական միությո՞ւն, թե՞ Եվրամիություն:

Այնպես որ՝ թերարժեքության բարդույթը, օտարամոլությունը չեն լքում մեզ:

Ղարաբաղյան պատերազմում, գոնե, մեր թերարժեքության բարդույթներից մեկը հաղթահարեցինք եւ թողեցինք անցյալում՝ այն, որ թուրքն իբր անպարտելի է...

գ) Կանգնած ենք մեր ազգային արժեհամակարգը ճանաչելու, անաղարտ պահելու, ժամանակին համընթաց զարգացնելու անհրաժեշտության դեմ հանդիման: Նկատի ունենք արժեհամակարգի հատկապես հետեւյալ տարրերը՝ լեզուն, մշակույթը, Հայ առաքելական եկեղեցին եւ պետական համակարգի ու ազգի բարոյական նկարագիրը:

1990-ականներից ձեւավորվող նոր արժեհամակարգը, կարծում ենք, ոչ միշտ է համապատասխանում դարերով ձեւավորված արժեհամակարգին կամ, ինչպես ընդունված է ասել, «հայկական կողմնորոշմանը»:

Լուրջ փորձության է ենթարկվում մշակույթը:

Հրանտ Մատթեւոսյանն էլ հիշեցնում է՝ *«Լեզուն հայրենիք է, լեզվի կորուստը ցեղի կորուստն է»:*

Դե իսկ Հայ առաքելական եկեղեցին՝ իբրեւ արժեհամակարգի առանցքային բաղադրիչ... էությամբ իր հոտի հետ պետք է լինի: Հավատի տաճարներ կառուցելով չէ, որ եկեղեցին ու հոտը միասին կլինեն: Դրանով չէ, որ Քրիստոսի հավատքը կամրապնդվի մեզանում... Ավելին, որքան շատ եկեղեցի ենք կառուցում, որքան մեծանում է մկրտվողների թիվը, այնքան շատ ենք հեռանում Աստծո պատվիրաններից:

դ) Գյուղն է փորձության ենթարկվում: Դեռեւս խորհրդային տարիներից գյուղացուն ձգում է քաղաքը, քաղաքային հարմարավետությունը: Արդյունքում՝ գյուղացիությունը, որպես դասակարգ, հոգեվարք է ապրում, ինչը բնորոշ է հատկապես լեռնային գյուղերին: Քարից հաց քամող, աշխատող, արարող գյուղացին, կարծեք, մնում է անցյալում... Հայոց Արտաշես 1-ին թագավորը (Արտաշեսյան արքայատան հիմնադիր, Ք.ա. 189-160թթ.) պետության եւ հատկապես բանակի հզորության հիմքը համարում էր գյուղը: Ու թեեւ փոխվել են ժամանակները, փոխվել են առաջնայնությունները, միեւնույն է, այդ տեսակետը միշտ էլ արդիական է մնում: Իսկ ավելի ստույգ՝ Հայաստանի Հանրապետությունն առանց կենսունակ գյուղերի դժվար է պատկերացնել:

* * *

Հայոց անկախ պետության հզորության, հարատեւության, կենսունակության ամենազորավոր աղբյուրը, այնուամենայնիվ, հայ մարդն է՝ իր իշխանությունների կողմից պաշտպանված ու հարգված, սոցիալական հոգսերից հիմնականում բեռնաթափված, իր իսկ հայրենիքից չօտարված եւ ուրիշների փայլով չշառագունված, իր իսկ հայրենիքում ինքնադրսեւորման լիարժեք հնարավորություններ ունեցող, իր ընտանիքի արժանապատիվ ապրելակերպն ապահովելու համար ասպարեզ եւ հնարավորություններ ունեցող, չքավորության, թշվառության, աղքատության հետ որեւէ աղերս չունեցող... Ավելի վաղ առիթ ենք ունեցել ասել՝ *«Հայ մարդուն տուր խաղաղ աշխատելու, ստեղծագործելու մի փոքր հնարավորություն, գոնե հստակ հեռանկարի ուրվագիծ, եւ հայ մարդը դառնացած չի լինի, հայ մարդուց ավելի բարի մարդ չես գտնի աշխարհում»* («Այունյաց երկիր, N4, 2016թ.): Իսկ կրիտիկական պահերին, երբ պետությանը, ազգին վտանգ է սպառնում, հայ մարդը պատրաստ է մոռանալ ամեն ինչ եւ ինքնազոհողության գնալ՝ հանուն հայրենիքի: Հենց նման դրսեւորման ականատես եղանք 2016թ. ապրիլին:

Այո, հայի այդ տեսակը, հանրապետության քաղաքացու այդ տեսակն ավելի մեծ հենարան է եւ ռեսուրս հզոր պետականություն կերտելու եւ արտաքին

Խմբագրական

թշնամուց պաշտպանված լինելու համար, քան նույնիսկ ամենամարտունակ բանակը, ամենախոհեմ դիվանագիտությունը, քան գերտերություն հովանավոր ունենալը, քան՝ ազգային համակ շահերն ընդգրկելուն անկարող տասնյակ կուսակցություններ ունենալը:

Դա այն վիճակն է, երբ հայ մարդը գիտակցում է, որ երկրի տերն ինքն է որ կա, որ Հայաստանի Հանրապետությունը նախեւառաջ ինքն է:

Հայաստանի առաջին հանրապետության վարչապետ Հովհաննես Քաջազնունուն՝ հանրապետության երկրորդ տարեդարձի կապակցությամբ հղած խոսքում ահա թե ինչ էր ասում Հովհաննես Թումանյանը. *«Թող տառապյալ ժողովրդի հզոր ոգին հենարան դառնա մեր կառավարությանը՝ հանուն դարերից ժառանգած սրբազան պայքարի հաղթական ավարտի, հանուն հայրենիքում նոր, պայծառ ժամանակների փրկարար կարգախոսների իրագործման»:*

Մոտ հարյուր տարի է անցել այդ օրերից, բայց բանաձեւը նույնն է մնացել՝ միայն ժողովրդի հզոր ոգին, միայն հայ մարդը կարող են լինել անկախ պետականության անպարտելիության, հզորության գրավականը:

* * *

Մեր պետության ծննդյան 25-ամյակը, ինչպես նշել ենք, լավագույն առիթն է ապագայի, անցնելիք ճանապարհի մասին խորհրդածելու համար:

Իհարկե, նորմալ չէ, որ երկուսուկես տասնամյակում չկարողացանք դուրս գալ անցումային փուլ կոչվածից, հրաժարվել «մեր նորանկախ պետությունը» արտահայտությունից: Նորմալ չէ, որ գործող քաղաքական համակարգն իր մեջ պարունակում է արատավոր երեւույթները վերարտադրելու մեխանիզմներ: Ահա թե ինչու ներկայումս մեր առջեւ շարունակում են ծառացած մնալ ողջամիտ շատ հարցեր. ո՞րն է մեր դավանած Հայաստանը, ո՞րն է պետականության մեր ճանապարհը…

Անշուշտ, գերադասելի է ժողովրդավարական պետական կարգը (ժողովրդավարություն, խորհրդարանական ժողովրդավարություն, սահմանադրական ժողովրդավարություն): Սա է պետական կառավարման ձեւը, որ բացառում է օլիգարխիայի, մենաշնորհների գոյությունը, քաղաքական միաբեւեռությունը, ամբողջատիրության մեկ այլ քայքայիչ դրսեւորում: Սա է պետական կառավարման ձեւը, որ մերժում է մաքիավելականությունը՝ բարոյական նորմերն արհամարհող քաղաքական համակարգը, որն ուժեղ պետության ստեղծման համար առաջնորդվում է հայտնի սկզբունքով՝ «Նպատակն արդարացնում է միջոցները»:

Ո՛չ գիտության, ո՛չ էլ միջազգային իրավունքի մեջ դեռեւս չկա «պետության» միասնական, համընդհանուր եւ հստակ սահմանում:

Չնայած դրան, շատ գիտնականներ փորձել են տեսակետ ներկայացնել «պետություն» հասկացության վերաբերյալ: Սույն հրապարակումը, իհարկե, նպատակ չունի գոնե ընդհանուր գծերով ներկայացնելու դրանք: Բայց մեկերկու սահմանում, որոնք համեմատաբար ընդունելի են, կուզենայինք հիշել:

Այսպես՝ ռուսերենի բացատրական բառարանը (հեղինակներ՝ Օժեգով եւ Շվեդովա) պետությանը տալիս է այսպիսի նշանակություն. *«հասարակության գլխավոր քաղաքական կազմակերպություն, որն իրականացնում է նրա կառավարումը, տնտեսական եւ սոցիալական կառուցվածքի պահպանությունը»:*

Մեկ ուրիշ սահմանում՝ *«Պետությունը սոցիալական հարաբերությունները կարգավորող անկախ, կենտրոնացված սոցիալ-քաղաքական կազմակերպություն է: Այն գոյություն ունի բարդ, շերտավորված հասարակության մեջ, որը զետեղված է որոշակի տարածքում եւ բաղկացած է երկու հիմնական շերտից՝ կառավարողներ եւ կառավարվողներ: Այդ շերտերի միջեւ հարաբերությունները բնութագրվում են առաջինների քաղաքական գերիշխանությամբ եւ երկրորդների հարկային պարտավորվածությամբ: Այդ հարաբերություններն օրինականացված են հասարակության գոնե մի մասի ընդունած գաղափարախոսությամբ, որի հիմքում ընկած է փոխադարձության սկզբունքը»* (Claessen H. J. M. 1996. State // Encyclopedia of Cultural Anthropology. Vol. IV. - New York. - P.1255):

Եվս մեկ սահմանում՝ *«Պետությունն իրավունքի մարմնավորումն է հասարակության մեջ»* (Брокгауз-Ефрон. Философский словарь логики, психологии, этики, эстетики и истории философии под редакцией Э. Л. Радлова. С.-Петербург, 1911, стр. 64):

Բերված օրինակները ցույց են տալիս (իսկ նման օրինակների թվարկումը կարելի է շարունակել), որ հնացած է պետության մարքսիստական ձեւակերպումը՝ առայսօր նաեւ հայերենի բացատրական բառարաններում նիրհող: Ահա՝ *պետությունը գործիք է սեփականատեր դասակարգի ձեռքին՝ հակառակորդ դասակարգին շահագործելու եւ ճնշելու համար:*

* * *

Պատմական դարաշրջան ենք ապրում: Աստծո ողորմածությամբ մեր սերնդին է վիճակվել անկախ պետականության վերականգնումը: Մեր սերնդին է վիճակվել պատրանքներից հրաժարվելն ու իրականում անկախ ու ազատ Հայաստան կառուցելը:

Մեծն Չարենցի խոսքերն, առհասարակ, բացարձակ ու անվիճելի ճշմարտության պես են հնչում մեզ համար: Բացառություն չէ նաեւ այս դիտարկումը՝

«Պատմության քառուղիներով քայլել ենք երկար՝
Անդեկ, ցաքուցրիվ, անգաղափար»:

Ապա շարունակում է՝

«Օ, չի եղել մեր գայլը պղնձյա,
Եվ ոչ մարմարիոնյա, եւ ոչ անգամ քարե... »:

Միայն անկախ պետականության միջոցով ու մեր անկեղծ նվիրումով կարող ենք հակադրվել ասվածին եւ ապացուցել հակառակը:

Միայն անկախության գաղափարի հետ հոգեհարազատությամբ ու պաշտամունքի հասնող հավատով եւ հիացմունքով, անհողդողդ կամքով կարող ենք ցուցանել հակառակը…

* * *

Սույն առաջնորդող հոդվածը վերնագրեցինք Ամենայն հայոց բանաստեղծի խոսքով: Նրա խոսքով էլ ավարտենք՝ «Հույսի՜ հայրենիք,/Լույսի՜ հայրենիք»:

Հույսի եւ լույսի անկնկալիքով էլ շնորհավորենք միմյանց՝ մեր անկախ պետության 25-ամյակի կապակցությամբ:

Եվ, իհարկե, ողջո՜ւյն մեր թանկագին հայրենիքին:

Ողջո՜ւյն գալիք տարիներին ու գալիք սերունդներին:

Սփյուռքը հայոց ազգայնության հզորության գրավական է

Համահայկական ներուժը մեկտեղելով՝ կառուցենք առավել հզոր Հայաստան, ապահով Արցախ եւ Հայաստանակենտրոն Սփյուռք

Հատված ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանի՝ «Այունյաց Երկիր» թերթին տված հարցազրույցից, 15 ապրիլի 2015թ.

– Հարգելի տիկին Հակոբյան, ինչպիսի՞ն է այսօր Սփյուռքի ընդհանրական պատկերը: Որո՞նք են ամենախոշոր հայկական գաղթօջախներն աշխարհում:

– Հայության տեղաշարժեր իր բնօրանից դեպի աշխարհի չորս ծագերը գոյություն են ունեցել վաղնջական ժամանակներից ի վեր՝ տնտեսական, քաղաքական եւ այլ պատճառներով: Սակայն, Սփյուռքը, որպես պատմական իրողություն, հիմնականում առաջացել է 20-րդ դարասկզբին՝ Օսմանյան Թուրքիայում իրականացված ցեղասպանության եւ տեղահանության հետեւանքով: Թուրքական յաթաղանից փրկված եւ հայրենազրկված հայության բեկորները, ապաստան գտնելով Միջին Արեւելքի, Եվրոպական, Ամերիկյան մայրցամաքների տարբեր երկրներում, աստիճանաբար կազմավորվեցին որպես համայնքներ եւ ի մի գալով՝ սկսեցին ստեղծել հայապահպան կառույցներ, դպրոցներ, եկեղեցիներ, հայրենակցական միություններ, մշակութային կենտրոններ եւ այլն:

Տարիներ շարունակ ամենահայահոծ եւ գործուն համայնքները գտնվում էին Լիբանանում, Սիրիայում, Իրանում, Հունաստանում, Ամերիկայի Միացյալ Նահանգներում, Ֆրանսիայում եւ այլն: Սակայն, Սփյուռքը հարափոփոխ օրգանիզմ է եւ շատ զգայուն ձեւով է արձագանքում աշխարհաքաղաքական փոփոխություններին: Եվ կախված տարբեր երկրների քաղաքական, տնտեսա-

Սփյուռքը հայոց ոգեականության հզորության գրավական է

կան իրավիճակներից՝ փոխվում է հայության պատկերն աշխարհում, փոխվում է նաեւ համայնքների կառուցվածքը: Ներկայումս, ամենամեծաքանակ հայ համայնքը Ռուսաստանի Դաշնությունում է՝ շուրջ 2,3 մլն, ԱՄՆ-ում՝ շուրջ 1,2 մլն, որտեղ հայերը կենտրոնացած են մասնավորապես Կալիֆորնիայում, այնուհետեւ Ֆրանսիան է՝ շուրջ 600 հազար հայությամբ, Ուկրաինան՝ 600 հազար, Արգենտինան՝ 100 հազար, Ավստրալիան՝ շուրջ 60 հազար, Բրազիլիան՝ 44 հազար եւ այլն: Վերջին տարիներին ստվարացել են Իսպանիայի, Գերմանիայի, Միջին Ասիայի հայ համայնքները:

– Բնական է, որ Սփյուռքում ամենակարեւոր հարցը հայապահպանությունն է: Այս իմաստով ինչպիսի՞ն է իրավիճակը, եւ ինչպե՞ս է նախարարությունն աջակցում Սփյուռքի հայապահպանության ջանքերին:

– Նախարարության ստեղծումից ի վեր մեր առջեւ դրված ռազմավարական խնդիրներից ամենակարեւորը Սփյուռքում հայապահպանությանն աջակցելն է:

> *Մեր ծրագրերի հիմնական նպատակը՝ Հայաստան-Սփյուռք, Սփյուռք-Սփյուռք կապերի ամրապնդումը եւ գործակցության հնարավորությունների ընդլայնումն է, Սփյուռքում հայ մշակութային ինքնության պահպանումն ու զարգացումը, ինչպես նաեւ Հայրենիքի եւ Սփյուռքի մասնագետների, երիտասարդ ստեղծագործողների միջեւ կապերի խորացումը:*

Նախարարության բազմաթիվ ծրագրեր նպատակաուղղված են ազգային ինքնության եւ մայրենի լեզվի պահպանությանը, Հայրենիքի ճանաչողությանը: Արդեն քննություն են բռնել «Իմ Հայաստան» համահայկական փառատոնը, «Սփյուռք» ամառային դպրոցը, «Արի տուն» ծրագիրը, համահայկական մասնագիտական ու Հայրենիք-Սփյուռք համաժողովները եւ այլն:

Նշեմ, որ բացի նախարարության պաշտոնական՝ mindiaspora.am կայքից, մենք ստեղծել ենք մի շարք տեղեկատվական, ուսուցողական կայքեր: Այսպես՝ տեղեկատվական ընդհանուր միջավայրի ձեւավորման նպատակով 2009-ից գործում է «Հայերն այսօր»՝ www.hayernaysor.am էլեկտրոնային պարբերականը, համացանցում առկա կայքը, հայերեն գրականության եւ հայալեզու ուսումնական եւ գիտահանրամատչելի նյութերի քանակության պակասը լրացնելու նպատակով գործում է նախարարության էլեկտրոնային գրադարանը՝ www.lib.mindiaspora.am, ստեղծվել են «Հայկական սփյուռքի պատմության վիրտուալ թանգարան»՝ www.armdiasporamuseum.com կայքը՝ Սփյուռքի պատմությունը, ներկան եւ հեռանկարները ներկայացնելու նպատակով եւ Սփյուռքի համահայկական եւ տարածաշրջանային կառույցների, անհատների եւ տեղեկատվական ռեսուրսների մասին լիարժեք տեղեկություններ ու տվյալներ ստանալու նպատակով՝ տվյալների համապարփակ էլեկտրոնային շտեմարանը: Հայկական համայնքներում արեւմտահայերեն եւ արեւելահայերեն խոսող սփյուռքյան երկու հատվածի փոխըմբռնումը հեշտացնելու նպատակով 2009թ. ստեղծվել է համակարգչային՝ «Արեւմտահայերենից արեւելահայերեն եւ հակառակը փոխարկիչ» ծրագիրը՝ translator.am: Բացի այդ, հատկապես Սփյուռքի պատանիներն ու երիտասարդները սիրով են այցելում «Արի տուն» ծրագրի եւ «Իմ Հայաստան» փառատոնի՝ aritun.am եւ imhayastan.am կայքերը:

Ինձ համար ուրախալի է, որ գնալով ընդլայնվում է մեր ծրագրերի ե՛ւ աշխարհագրությունը, ե՛ւ ավելանում մասնակիցների թիվը: Դա նշանակում է, որ ավելանում է վստահությունը, մեծանում է հավատը մեր կազմակերպած ծրագրերի նկատմամբ, մարդիկ փորձում են ավելի շատ մասնակցություն եւ ներկայություն ունենալ մեր ծրագրերին հատկապես Հայաստանում:

Այսպես՝ 2014թ. «Իմ Հայաստան» համահայկական փառատոնին, նախատեսված 600-ի փոխարեն, մասնակցեց ավելի քան 1300 մասնակից աշխարհի 16 երկրից:

Փառատոնը յուրօրինակ հաշվետվություն է այն մասին, թե ինչպես եւ արժեքային ինչ համակարգով է ապրում հայ երիտասարդությունը Սփյուռքում, որքանով է ապրում եւ շնչում հայ մշակույթով, ինչպես է կարողանում ներկայացնել դրանք Հայաստանում:

Ակնհայտ է նաեւ, որ երգի ու պարի խմբերը Սփյուռքում հայապահպանության կենտրոններ են, որտեղ պահպանվում, տարածվում եւ ներկայացվում է հայ մշակույթը:

Նշեմ, որ մենք օգտագործում ենք նաեւ բարձր տեխնոլոգիաների հնարավորությունները, դրանց կիրառմամբ մենք նաեւ Հայաստանում իրականացրած միջոցառումները տարածում ենք Սփյուռքում, իսկ Սփյուռքում կազմակերպվածները՝ Հայրենիքում:

Չափազանց կարեւորում եմ «Սփյուռք» ամառային դպրոց ծրագիրը, որն այսօր Բեյրութի Հայկազյան համալսարանից հետո միակ ուսումնական կենտրոնն է, որը աշխարհի տարբեր երկրներում ապրող հայրենակիցների հայապահպանության ոլորտում կրթական մակարդակի բարձրացման, վերապատրաստման եւ հատկապես համայնքային կյանքում իրենց ներդրումն ավելացնելու հնարավորություն է տալիս:

«Սփյուռք» ամառային դպրոցում գործում են հայոց լեզվի արագացված, ազգային երգի ու պարի, Սփյուռքի ուսուցիչների վերապատրաստման, սփյուռքահայ երիտասարդ առաջնորդների, Սփյուռքի լրագրողների եւ Սփյուռքի համայնքային գործի կազմակերպման դասընթացներ:

Ծրագիրն իրականացվում է 2012 թվականից: Յուրաքանչյուր տարի մեծանում է ծրագրի մասնակիցների թիվը: Համեմատության համար ասեմ, եթե 2012թ. ամառային դպրոցն ընդունել է 131 մասնակից՝ 15 երկրից, ապա 2014թ. մասնակցության համար ապահովվել է 222–ի մասնակցությունն՝ աշխարհի 22 երկրից:

Նախարարության «Արի տուն» հայրենաճանաչության ծրագիրը դարձել է նախարարության այցեքարտը: Այն իրականացվում է 2009 թվականից: Եթե առաջին տարում ծրագրին մասնակցել է 317 պատանի եւ աղջիկ՝ 14 երկրից, ապա 2014թ.՝ ավելի քան 1070 սփյուռքահայ երիտասարդ՝ աշխարհի 31 երկրից:

Մի ուշագրավ փաստ եւս՝ այս տարի օգոստոսին առաջին անգամ հյուրընկալեցինք 50 իսլամացած հայերի՝ պատմական Տիգրանակերտից:

Ծրագրի գագաթնակետն է

Սփյուռքը հայոց ոգեականության հզորության գրավական է

դառնում ճամբարային հատվածը, որը երեխաները մեծ ոգեւորությամբ են անցկացնում, քանզի 20-30 երկրից եկած տարբեր երեխաներ հնարավորություն են ունենում ծանոթանալ, կապվել միմյանց հետ, սովորել հայկական երգ, պար, օրը սկսել մայրենիի դասով: Ճամբարային օրերին կազմակերպվում են նաեւ ազգային երգի, պարի, հայրենագիտության դասընթացներ, սպորտային միջոցառումներ, հանդիպումներ ՀՀ պետական այրերի, մշակութային եւ անվանի գործիչների հետ, որոնք անմոռանալի են դարձնում հայրենիքում անցկացված երկու շաբաթը: Ծրագրի մասնակիցներն ազգային ինքնության գիտակցության մեծ դպրոց են անցնում եւ անխզելի թելերով կապվում հայրենիքի, հյուրընկալ ընտանիքների եւ միմյանց հետ:

Երեխաները հեռանում են լացով, տխրությամբ, որովհետեւ ցանկանում են ավելի երկար ժամանակով մնալ Հայրենիքում, ավելի շատ շփվել միմյանց եւ հյուրընկալ ընտանիքի անդամների հետ: Դա ամենամեծ նվաճումն է:

Ես ուրախությամբ պետք է հավելեմ, որ ծրագրի արդյունքում մենք ունենք 20 եւ ավելի ամուսնացած զույգ, ունենք թոռնիկներ եւ ունենք հարյուրավոր երիտասարդներ, որոնք գալիս եւ սովորում են հայաստանյան բուհերում:

> *Չեմ կարող չնշել, որ ծրագրի հիմնական արդյունքը սփյուռքահայերի եւ հայաստանցիների մերձեցման եւ ջերմացման համար ստեղծվող տարածքն է: Ծրագիրը նրանց հարաբերությունների ջերմացման գրավականն է:*

Սփյուռքից արդեն 5000 ընտանիք մեզ վստահել եւ Հայաստան է ուղարկել իրենց զավակներին: 5000 ընտանիք Հայաստանից իրենց դռներն են բացել եւ Սփյուռքի մեր պատանիներին ու աղջիկներին ընդունել իրենց հարկի տակ: Այսինքն՝ 10 000 ընտանիք այս ծրագրի շրջանակներում ծանոթացել եւ ընկերացել է: Իսկ, եթե միջին հաշվով 5 մարդ էլ ապրի յուրաքանչյուր ընտանիքում, ապա ծրագիրը 50 000 հայի է բարեկամացրել:

– Որոնք են այն առանցքային, առաջնահերթ հիմնախնդիրները, որոնց իրականացումը դրված է Հայաստան-Սփյուռք համագործակցության առանցքում:

– Կարող եմ ասել, որ այդ առաջնահերթություններն ամրագրվեցին Հայրենիք-Սփյուռք 5-րդ համաժողովի կողմից ընդունված հայտարարությունում: Ամենից առաջ դա Հայաստանի հզորացումն է, քանի որ անառարկելի է, որ Հայաստանը համայն հայության երազանքների կիզակետն է, եւ առանց հզոր Հայաստանի մնացյալ հարցերի մասին խոսելն ավելորդ է: Այնուհետեւ՝ Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի խաղաղ կարգավորման հարցը, Սփյուռքի կազմակերպումը, հայոց լեզվի պահպանումը, Ցեղասպանության ճանաչումը, դատապարտումը եւ հետեւանքների վերացումը, արտակարգ իրավիճակներում հայտնված հայության պաշտպանվածությունը: Ահա այն հիմնական հարցերը, որոնք կազմում են Հայաստան-Սփյուռք համագործակցության առանցքը:

– Հայաստանից արտագաղթի մասին մենք շատ թե քիչ պատկերացում ունենք: Իսկ ի՞նչ կասեք ներգաղթի մասին, կա՞ նման երեւույթ, թե՞ դա ազգային երազանք է սոսկ:

– Հայաստանի Հանրապետությունը, ունենալով 7 մլն Սփյուռք, անշուշտ մտածում է հայրենադարձության, հայրենակիցներին հայրենիք վերադարձնելու եւ ինտեգրելու մասին: Այդ նպատակով էր, որ ՀՀ սփյուռքի նախարարության կողմից մշակվեց եւ համապատասխան գերատեսչությունների կողմից ակտիվ քննարկումների փուլ անցնելուց հետո ՀՀ կառավարության կողմից ընդունվեցին այնպիսի կարեւորագույն փաստաթղթեր, ինչպիսիք էին Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացման եւ Հայրենադարձության գործընթացի կազմակերպման հայեցակարգերը:

Մենք ամեն ձեւով պետք է խրախուսենք ներգաղթը, ուստի փորձում ենք սփյուռքահայերին զանազան ծրագրերի միջոցով ներկայացնել Հայաստանը, նրանց բերել Հայաստան, ծանոթացնել հայրենիքին, այն ճանաչելի դարձնել հատկապես երիտասարդներին: Նման քաղաքականությունը նպաստում է սփյուռքահայերի ազգային ինքնության վերազարթոնքին ու ամրապնդմանը, վերադարձին դեպի ազգային արմատներ եւ ինչու ոչ՝ նաեւ վերադարձին դեպի Մայր հայրենիք, որը կարող է լինել բացարձակապես կամավոր:

Անշուշտ ներգաղթ կա: Պարզապես մենք ավելի շատ խոսում ենք արտագաղթի մասին, քան ներգաղթի: Մերօրյա ներգաղթը հիմնականում կապված է տարածաշրջանային հակամարտությունների հետեւանքով հայրենիքում ապաստան գտածների հետ: Սա վկայում է այն մասին, որ չնայած առկա արտագաղթին, արտերկրում հաստատված մեր հայրենակիցների հիմնական մասն աշխարհաքաղաքական անկայուն իրավիճակներում գերադասում է Մայր հայրենիքը որպես կյանքի նոր հանգրվան:

Ակնհայտ է, որ յուրաքանչյուր սփյուռքահայի համար ազգային երազանքը հայրենիքը հզոր ու կայացած տեսնելն է, քանզի Մայր Հայաստանն է բոլորիս հանգրվանն ու տունը:

Հարցազրույցը՝
ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻ

Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի համահայկական հռչակագիր

Համազգային նշանակության բացառիկ փաստաթուղթ.

մեր հեռագա գործողություններին ուղեցույցը

Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումները համակարգող պետական հանձնաժողովը, համախորհուրդ սփյուռքում գործող տարածաշրջանային հանձնախմբերի հետ, 2015թ. հունվարի 29-ին ընդունեց համահայկական հռչակագիր (հռչակագրի տեքստը՝ «Այունյաց Երկրի» 2015թ. ապրիլի 15-ի համարում):



Հայոց մայրաքաղաքները

ՎԱՆ

Ուրասպելական Տուշպան աշխարհի հնագույն քաղաքներից էր: Պատմությանը հայտնի է մի քանի անուններով՝ Տուշպա, Տոսպ, Վանտոսպ, Երվանդավան, Շամիրամի քաղաք... Բայց ամենասիրելին Վանն էր, անուն, որ քաղաքի մասին հիշատակությունը հասցնում է հազարամյակների խորքը եւ ծագել է հնամյա Բիայնա անունից:

Երբ «տիեզերքի արքա» Սարդուրի Առաջին (մ.թ.ա. 840-825թթ.) թագավորն արքունիքն Արզաշկուից տեղափոխեց Վան (827թ.), քաղաքում կառուցվեց Շիվինիի՝ արեւի Աստծո տաճարը, եւ Տուշպան դարձավ նրա պաշտամունքի գլխավոր կենտրոնը:

Տոսպ գավառում՝ Վանա լճի արեւելյան ափից քիչ հեռու գտնվող քաղաքը Հայկազուն Երվանդունիների օրոք եւս եղել է մայրաքաղաք՝ մինչեւ Ք.ա. 4-րդ դարի վերջերը:

Հայոց մայրաքաղաքները

ԱՐՄԱՎԻՐ

Արմավիր. բնակելի համալիրը և բլրից երևացող տեսարանը:

ամահայկական առաջին պետության՝ Հայկյանների Արարատյան թագավորության մայրաքաղաք. հիմնադրել է Հայկի թոռ Արամայիսը Ք.ա. 1032 թվականին: Կառուցվել է Արաքս գետի ձախ ափին՝ Արարատյան դաշտում: Հայկյանների թագավորության մայրաքաղաք է եղել մինչեւ Ք.ա. 827 թվականը: Այնուհետեւ Հայկազուն Երվանդունիների օրոք դարձել է Մեծ Հայքի մայրաքաղաք՝ Ք.ա. 4-րդ դարի վերջից մինչեւ Ք.ա. 3-րդ դարի վերջը: Երվանդունի արքայատան Երվանդ Վերջին թագավորը մայրաքաղաքը տեղափոխել է Երվանդաշատ:

Առասպելական Արմավիր քաղաքի հետքերը տեսնելու համար պետք է գնալ Արմավիրի տարածաշրջանի Հայկավան գյուղ:

Շրջանառվում է վարկած, որի համաձայն հենց այստեղ է հետագայում Մենուայի որդի Արգիշտին (մ.թ.ա. 786-764թթ.) հիմնել իր հաղթության քաղաքը՝ Արգիշտիխինիլին:

Հայոց մայրաքաղաքները

ԵՐՎԱՆԴԱՇԱՏ



հիմնադրել է Երվանդ Վերջին թագավորը:

Հիմնադրել է Այրարատյան նահանգի Երասխաձոր գավառում, ուր Արաքսը եւ Ախուրյանը միախառնվում են:Մայրաքաղաքն Արմավիրից տեղափոխելու պատճառը Խորենացին համարում է Արաքսի հունի փոփոխումը: Բայց այս տեղափոխությունն ավելի շատ ռազմաքաղաքական բնույթ ուներ:

Նոր մայրաքաղաքից մի փոքր հյուսիս Երվանդը կառուցում է նաեւ Երվանդակերտ դաստակերտը: Մ.թ.ա. 201թ. գարնանն Արտաշեսը պատերազմ է սկսում Երվանդի դեմ, գահընկեց անում նրան եւ դառնում Արտաշիսյան հարստության հիմնադիր եւ կառուցում հայոց 4-րդ մայրաքաղաքը՝ Արտաշատը:

Մինչեւ այսօր Բաղրամյանի տարածաշրջանի Երվանդաշատ գյուղի մոտ պահպանվել են Երվանդաշատի ու Երվանդակերտի պարիսպների, տարբեր շինությունների հետքերը:

Հայոց մայրաքաղաքները

ԱՐՏԱՇԱՏ



Հատված Արտաշատի պեղավայրից



Արտաշես Առաջինը մ.թ.ա. 189-ին իրեն հռչակեց Մեծ Հայքի թագավոր եւ ձեռնամուխ եղավ հայկական հողերի միավորմանը (այն ժամանակ Մեծ Հայքից բացի կար եւս երեք հայկական թագավորություն՝ Կոմմագենի, Ծոփքի եւ Փոքր Հայքի):

Թագավոր դառնալով, նա առաջին հերթին հիմնադրեց նոր մայրաքաղաք՝ կոչելով Արտաշատ (Արաքս եւ Մեծամոր գետերի միախառնման վայրում՝ Խոր Վիրապի մոտ):

Քաղաքի կառուցման վայրն ընտրել է հին աշխարհի զորավարներից մեկը՝ Հաննիբալը, ով բազմաթիվ գործերով խորհրդատու էր Արտաշեսին:

Ժամանակակիցներն Արտաշատն անվանեցին «Հայկական Կարթագեն»:

Հայոց մայրաքաղաքները

ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏ

Հատված Տիգրանակերտի պարիսպներից

Մ.թ.ա. 95-ին հայոց գահ բարձրացավ Տիգրան Երկրորդը: Նա իրար հետեւից հպատակեցրեց հայկական մեծ ու փոքր թագավորությունները՝ Հայաստանի սահմանները հասցնելով Միջերկրական ծովի ափերից մինչեւ Կասպից ծով, Քուռ գետից մինչեւ Միջագետք:

Ստեղծված պայմաններում, երբ Հայաստանը հին աշխարհի մեծագույն տերություններից մեկն էր դարձել, մայրաքաղաք Արտաշատը մնացել էր երկրի հյուսիսում: Տիգրանն իրեն նստավայր ընտրեց ժամանակի խոշորագույն քաղաքներից մեկը՝ Անտիոքը: Սակայն ցանկանում էր, որ հայոց մայրաքաղաքն ու աթոռանիստը հայկական հողում լինեն, եւ մ.թ.ա. 80-ական թվականներին Աղձնիքում՝ Արեւմտյան Տիգրիսի ձախակողմյան վտակ Քաղիրթ գետի հովտում հիմնադրեց նոր մայրաքաղաք Տիգրանակերտը, որն էլ եղել է հայոց աշխարհակալ տերության մայրաքաղաքը մինչեւ Ք.ա. 55թ.:

Մի քանի դար Տիգրանակերտը Մեծ Հայքի հարավային սահմանային Աղձնիք բդեշխության կենտրոնն էր:

Այսօր Թուրքիայի Ֆարկին գյուղի մոտ կարելի է տեսնել Տիգրանակերտի պարիսպների ու այլ շինությունների մնացորդները:

Մինչեւ օրս որոշ գիտնականներ Տիգրանակերտը շփոթում են Ամիդի (Դիարբեքիրի) հետ:

Հայոց մայրաքաղաքները

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ

Էջմիածնի Մայր տաճարը, ս. Հռիփսիմե և ս. Գայանե եկեղեցիները պատկերող փորագրություն, 1796 թ.:

Հին Վաղարշապատի տեղադրության հարցին պատասխանեցին 1931թ. պեղումները. ապացուցվեց, որ քաղաքը եղել է ներկայիս Էջմիածնի տեղում:

Վաղարշապատի տարածքում բնակավայր է եղել դեռեւս քարե դարում:

Հազարամյակներ անց հայոց Երվանդ Սակավակյաց (մ.թ.ա. 570-560թթ.) արքայի փեսա Վարդգես Մանուկն այնտեղ հիմնեց Վարդգեսավանը:

Հայոց Վաղարշ Առաջին (117-140թթ.) թագավորը, պարսպապատելով Վարդգեսավանը, այն վերանվանեց Վաղարշապատ եւ հռչակեց մայրաքաղաք, թեպետ երկրի խոշորագույն քաղաքը մնում էր Արտաշատը:

Վաղարշապատի նշանակությունը մեծացավ հատկապես քրիստոնեությունը պետական կրոն հռչակելուց (299/301թթ.) հետո: Կործանելով Սանդարամետի մեհյանը, նոր կրոնի նվիրյալները նրա տեղում կառուցեցին Կաթողիկե եկեղեցին՝ Հայաստանի քրիստոնեական անդրանիկ մայր տաճարը: Նրա անունով էլ հետագայում, հատկապես 13-15-րդ դարերից սկսած, քաղաքը կոչվեց Էջմիածին:

Հայաստանում քրիստոնեական կրոնի գլխավոր կենտրոնը լինելու շնորհիվ Վաղարշապատը դարեր շարունակ երկրի համար ունեցավ եւ ունի հոգեւոր-մշակութային խոշոր նշանակություն:

1105 թվականից Կիլիկիայում գտնվող հայոց կաթողիկոսարանը 1441 թվականին վերահաստատվեց Էջմիածնում:

Հայոց մայրաքաղաքները

ԴՎԻՆ

Քաղաքի անունը տարբեր ազգերի մոտ տարբեր ձեւով է հնչել. հայ պատմիչները հիշում են Դուին, Դվին ձեւով, արաբները՝ Դաբիլ, Ադաբին, հույները՝ Դուվիյ եւ այլն: Երբեմն Դվին կոչել են միայն բերդն ու բլուրը, այնուհետեւ՝ ողջ քաղաքը, երբեմն էլ Արարատյան դաշտի մի մասը եւ Արաքս գետը կոչվել են Դվնա դաշտ եւ Դվնա գետ:

Դվինի բլուրը շուրջ 30 մ բարձրություն ունի: Նրա վրա բնակավայր է եղել դեռեւս մ.թ.ա. 5-րդ հազարամյակում: Բայց որպես քաղաք հիմնադրվել է 4-րդ դարի 30-ական թվականներին, երբ հայոց Խոսրով Կոտակ թագավորը (330-338թթ.) արքունիքն Արտաշատից տեղափոխեց այդտեղ եւ Դվինը հայտարարեց նոր մայրաքաղաք:

Արշակունիների անկումից (428թ.) հետո Դվինը Մարզապանական Հայաստանի կենտրոնն էր:

Երբ Գյուտ կաթողիկոսը (461-478թթ.) կաթողիկոսարանը Վաղարշապատից տեղափոխեց Դվին, այն դարձավ Հայաստանի ոչ միայն քաղաքական ու տնտեսական, այլ հոգեւոր-մշակութային կենտրոնը:

Դվինի հողածածկ ավերակները փռված են Արտաշատի ներկայիս տարածաշրջանի Վերին Դվին, Ներքին Դվին, Հողաբերդ, Հնաբերդ, Վերին Արտաշատ եւ մի քանի այլ գյուղերի տարածքներում:

Հայոց մայրաքաղաքները

ԲԱԳԱՐԱՆ

Հայոց երեւելիները 884 կամ 885թ. թագադրում են Աշոտ Բագրատունուն, եւ Արշակունիների անկումից չորսուկես դար անց Հայաստանը կրկին վերագտնում է իր պետականությունը:

Նորաստեղծ Բագրատունյաց թագավորությունը պետք է ունենար իր մայրաքաղաքը, թեեւ Արշակունիների մայրաքաղաք Դվինը շարունակում էր մնալ Հայաստանի մեծագույն քաղաքներից մեկը:

Բագրատունիները մայրաքաղաք ընտրեցին (մինչեւ 890թ.) անառիկ Բագարանը, որն Արշարունիք գավառում էր՝ Ախուրյանի աջ ափին:

Բագարանը Հայաստանի հնագույն բնակավայրերից էր. այն հիմնադրել է դեռեւս Երվանդ Վերջինը՝ իր նոր մայրաքաղաք Երվանդաշատի հետ միաժամանակ:

Բագարանը, սակայն, կարճ ժամանակ միայն մայրաքաղաք եղավ: Բագրատունյաց թագավորությունն իր գոյության շուրջ 160-ամյա պատմության ընթացքում չորս մայրաքաղաք փոխեց. Բագարանին հաջորդեցին Շիրակավանը, Կարսը եւ Անին:

Հայոց մայրաքաղաքները

ՇԻՐԱԿԱՎԱՆ

Աշոտ Բագրատունու մահից հետո գահը ժառանգեց որդին՝ Սմբատ Բագրատունին (890-914թթ.), ով էլ իր նստավայր եւ երկրի նոր մայրաքաղաք հռչակեց Շիրակավանը:

Պետության մայրաքաղաք եղավ մինչեւ 928 թվականը:

Շիրակավանը, որը կոչվել է նաեւ Երազգավորս, հիմնադրվել է Ք.ա. 1-ին հազարամյակի 2-րդ կեսին Այրարատ նահանգի Շիրակ գավառում:

Սմբատ Առաջինի եւ Աշոտ Երկաթի օրոք, մոտ 40 տարի, հայոց արքայանիստն ու մայրաքաղաքն էր:

Շիրակավանը Թուրքիային անցնելուց հետո (Շիրակավանը հնչյունափոխվելով դարձել էր Շորագյալ) ամեն ինչ ոչնչացվեց ու անհետացավ:

Շիրակավանի բնակչությունը տեղահանվեց 1920թ. եւ մի մասը բնակություն հաստատեց Ախուրյանի շրջանի Երազգավորս գյուղում:

Հայոց մայրաքաղաքները

ԿԱՐՍ

Կարսի բերդն առաջին անգամ հիշատակվում է 9-րդ դարում, բայց հիմնադրվել է շատ ավելի վաղ: Այն հնուց ի վեր Վանանդի նշանավոր նախարարական տան աթոռանիստն էր:

928թ. Աբաս Բագրատունին Կարսը հռչակեց հայոց մայրաքաղաք: Նոր մայրաքաղաքը ձեւավորվեց ու ընդարձակվեց Կարսի բերդի շուրջ: Համահայկական մայրաքաղաք մնաց մինչեւ 961թ.:

Երբ Աշոտ Ողորմածը (953-977թթ.) մայրաքաղաքը 961թ. փոխադրեց Անի, Կարսի կառավարիչ նշանակվեց նրա եղբայր Մուշեղ Բագրատունին, ով 963 թվականին իրեն հռչակեց թագավոր՝ «թագավոր Կարուց»:

1921թ. հոկտեմբերին Կարսի մարզն անցավ Թուրքիային:

Հայոց մայրաքաղաքները

ԱՆԻ

Այրարատ նահանգի Շիրակ գավառում գտնվող Անին հայոց մայրաքաղաք հռչակեց Աշոտ Երրորդ Ողորմած Բագրատունի թագավորը 961թ.:

Անին գտնվում է Շիրակում՝ ներկայիս Անիի տարածաշրջանի Խարկով գյուղի դեմ-դիմաց՝ Ախուրյանի աջ ափին:

Բնականից անառիկ այս սարահարթում բնակավայր է եղել դեռեւս վաղնջական ժամանակներում: Բագրատունիների թագավորության հաստատումից հետո (885թ.) Անին երկրի կարեւորագույն բերդերից էր:

961թ. Աշոտ Ողորմածը հանդիսավոր պայմաններում Անիում օծվում է հայոց թագավոր՝ շահնշահ:

Անիի ամենանշանավոր ճարտարապետը Տրդատն էր, ով ապրել է 10-րդ դարի երկրորդ կեսին եւ 11-րդ դարի առաջին տասնամյակում: Նրա գլուխգործոցն Անիի Մայր տաճարն է, որի շինարարությունը սկսել էր Սմբատ Երկրորդը՝ 988 կամ 989թ. եւ ավարտվել է 1001 թվականին՝ Գագիկ Առաջինի կին՝ Սյունյաց աշխարհի մեծանուն դուստր Կատրամիդե թագուհու հոգածությամբ:

Անին եկեղեցաշատ քաղաք էր. բազմաթիվ պատմիչներ նշել են, որ Անիում կար հազար ու մեկ եկեղեցի: 1045թ. Անին առանց կռվի հանձնվեց բյուզանդացիներին:

Վաղ շրջանի պետական կազմավորումներբ Հայաստանում

Ք.ա. III-II հազարամյակներ

ԱՐՏԱԿ ՄՈՎՍԻՍՅԱՆ

Հայկական լեռնաշխարհում նախնադարից անցումը վաղ քաղաքակրթության եւ վաղ պետական կազմավորումներին տեղի է ունեցել վաղ բրոնզի դարում (Ք.ա. IV հազարամյակի կեսերից մինչեւ Ք.ա. XXIV դ.): Այդ ընթացքում ողջ Հայկական լեռնաշխարհը միավորված էր մեկ մշակութային գոտու մեջ: Լեռնաշխարհի տարածքում աշխատանքի գործիքներն ու զինատեսակները միանման են, գերիշխում է բնակարանների նույն տեսակը, նույնատեսակ են կենցաղային իրերը: Լայն տարածում ունեն պաշտամունքային նշանակության իրերը՝ եռոտանի պատվանդաններ, եզան ու խոյի տեսքով բազմատեսակ հենակներ, որոնք Հայկական լեռնաշխարհի մշակութային գոտուց դուրս հայտնի չեն: Դա խոսում է ոչ թե պարզ մշակութային կապերի, այլեւ լեռնաշխարհի բնակիչների ազգակցության, այսինքն՝ էթնո-հոգեւոր միասնության մասին:

Հայկական լեռնաշխարհում վաղ բրոնզի դարաշրջանում արձանագրված են վաղ քաղաքակրթություններին բնորոշ գրեթե բոլոր հատկանիշները: Առկա է իր ժամանակի համար բավականին զարգացած քաղաքաշինություն (քաղաքներին բնորոշ է կանոնավոր հատակագծով կառուցապատումը, կենտրոնում գտնվում էին տաճարն ու վարչական կենտրոնը, առկա էր ամրաշինական համակարգ՝ միջնաբերդ եւ բնակավայրը եզերող պարիսպ): Քաղաք-կենտրոնի շուրջ կային փոքր արբանյակ-բնակավայրեր: Մի շարք հնավայրերից հայտնաբերվել են կիսաթանկարժեք քարերից պատրաստված գուրզեր, որոնք, հավանաբար, եղել են իշխանության խորհրդանշաններ:

Ժամանակի գիտության բացառիկ նվաճում է Մեծամորի աստղադիտարանը, որտեղից աստղային երկինքը դիտարկել են Ք.ա. 2800-2600 թվականների ընթացքում: Այդ փաստը եկավ հիմնավորելու եվրոպական աստղագետ-պատմաբանների (Վ. Օլկոտ, Կ. Ֆլամարիոն եւ ուրիշներ) դեռեւս XIX դարավերջին եւ XX դարում կատարած եզրահանգումները, որոնց համաձայն՝ կենդանակերպի (զոդիակի) համաստեղությունների անվանակոչումը կատարվել է Հայկական լեռնաշխարհում Ք.ա. մոտ XXVIII դարում:

Միջազգային առեւտրի եւ տարածաշրջանային կապերի մասին են վկայում ինչպես Հայաստանի հնավայրերից հայտնաբերված օտար ծագում ունեցող իրերը, այնպես էլ հայաստանյան նյութերի լայն տարածումը լեռնաշխարհից բավականին մեծ հեռավորությունների վրա:

Հայաստանյան վաղբրոնզեդարյան խեցեղենի վրա մեծ առատությամբ հանդիպում են խորհրդանշաններ եւ գաղափարագրեր, որոնք դարձան հայկական մեհենագրության հիմքը:

Հնագիտական պեղումները ցույց են տալիս, որ Ք.ա. մոտ XXVIII դարում Հայկական լեռնաշխարհից տեղի է ունենում վաղբրոնզեդարյան մշակույթի աննախադեպ մեծ տարածում: Այդ մշակույթը հյուսիսում հասնում է Հյուսիսային Կովկաս (Կուբանի երկրամաս, Չեչնիա, Ինգուշեթիա), հարավում՝ Սիրիա եւ Պաղեստին, հարավ-արեւելքում՝ Իրանական սարահարթի կենտրոնական շրջաններ: Մշակութային այս ներթափանցումն ու տիրապետությունը շարունակվում է երկու-երեք հարյուրամյակ՝ մինչեւ Ք.ա. XXVI դարը, որից հետո Հայաստանի մշակութային գոտին կրկին սահմանափակվում է Հայկական լեռնաշխարհի սահմաններով:

Առաջին պետական կազմավորումը. Արատտա: Հայաստանի Ք.ա. III հազարամյակի պատմության լուսաբանման համար անգնահատելի տեղեկություններ են հաղորդում հնագույն միջագետքյան (շումերական եւ աքադական) գրավոր հուշարձանները: Շումերական բնագրերի մեջ առանձնահատուկ տեղ է գրավում շումերական հերոսավեպը, որը Հին Արեւելքի պատմության կարեւորագույն սկզբնաղբյուրներից է: Հերոսավեպի ինը մասերից հինգում հիշատակվում է Արատտա երկիրը: Արատտան մինչ օրս հայտնի Հայկական լեռնաշխարհի առաջին վաղ պետական կազմավորումն է, որի մասին տեղեկությունները վերաբերում են Ք.ա. XXVIII-XXVII դարերին:

Արատտան եղել է աստվածապետական (կրոնապետական կամ թեոկրատական) կարգերով երկիր: Դա պետական կառավարման այն ձեւն է, որում ե՛ւ աշխարհիկ, ե՛ւ հոգեւոր ողջ իշխանությունը գտնվում էր հոգեւոր դասի ձեռքում, որն էլ Աստծո անունից կառավարում էր երկիրը: Արատտայի արքան միաժամանակ նաեւ երկրի գերագույն քուրմն էր: Երկրի ճակատագրին վերաբերող կարեւոր հարցերի լուծման համար քրմապետ-արքան գումարում էր Ավագների Ժողով: Հիշատակվում է երկրի գլխավոր տնտեսական պաշտոնյան, որը կոչվում էր «կառավարիչ»: Արատտայում հիշատակվում են նաեւ տնտեսական ոլորտի պաշտոնյաներ՝ հարկահաններ, վերակացուներ եւ այլն:

Մեզ են հասել տեղեկություններ նաեւ Արատտայի եւ Շումերի տնտեսական հարաբերությունների մասին: Արատտացիները հացահատիկ եւ այլ երկրագործական ապրանքներ են ներմուծել եւ փոխարենը արտահանել մետաղներ ու թանկարժեք քարեր: Բացի դրանից հարավ են ուղարկել նաեւ շինարարական հումք՝ «լեռնային քարեր»: Շումերում որպես քաշող ուժ եւ փոխադրամիջոց օգտագործվել են էշերը, իսկ Արատտայում՝ ձիերը: Նշենք, որ սա գրավոր աղբյուրներում ձիերի առաջին հիշատակությունն է. ձիերի կիրառումը տնտեսության մեջ եւ ռազմարվեստում բերեց աննախադեպ առաջընթացի:

Վաղ շրջանի պետական կազմավորումներբ Հայաստանում

Շումերական բնագրերը տեղեկություններ են պահպանել Արատտայի բանակի եւ պարսպապատ մայրաքաղաքի մասին: Արատտայի մասին կարեւորագույն տեղեկություններից մեկը երկրում սեփական գրի գործածության փաստն է, ինչն ապացուցվում է նաեւ Հայկական լեռնաշխարհից հայտնաբերված Ք.ա. III հազարամյակի մեհենագիր հուշարձաններով, որոնք դեռեւս վերծանված չեն:

Արատտայի հիշատակության ժամանակաշրջանում Հայկական լեռնաշխարհը միավորված էր մեկ մշակութային գոտում, որը հնագիտական գրականության մեջ ընդունված է կոչել Հայաստանի վաղբրոնզեդարյան մշակույթ:

«Արմենիա» անվան հնագույն հիշատակությունները: Արմի, Արման(ում), Արամ: Ք.ա. 26-23-րդ դարերում ներկայիս Սիրիայի տարածքում բարձրանում է Էբլա պետությունը, որն առեւտրական լայն ցանցով կապված է եղել շրջակա երկրների հետ: Էբլայի արքայական արխիվից գտնված բնագրերի զգալի մասը տնտեսական բնույթի վավերագրեր են, որոնք վերաբերում են Էբլայի արքունի ծախսերին, այլ երկրների ու քաղաքների հետ ունեցած առեւտրա-փոխանակային եւ այլ հարաբերություններին:

Էբլայի բնագրերը Հայկական լեռնաշխարհի եւ հարակից տարածքներում հիշատակում են երկու տասնյակից ավելի բնակավայրեր: Դրանցից առանձնապես կարեւորվում է Արմին, որը համանուն թագավորության մայրաքաղաքն էր: Հատկանշական է, որ Ք.ա. 24-23-րդ դարերի բնագրերում հիշատակվում են Արմի երկրում բնակված «Հայայի որդիները» (հայորդիները), որոնք գործուն փոխհարաբերություններ են ունեցել Էբլայի հետ:

Ք.ա. III հազարամյակի սկզբին Արաբական թերակղզուց Միջագետք ներթափանցած սեմական ցեղերը Ք.ա. XXIV դարի երկրորդ կեսին ստեղծում են պատմությանը հայտնի առաջին բռնակալությունը: Պետության հիմնադիր Սարգոնը, հաստատվելով Միջագետքի կենտրոնում՝ Աքադ քաղաքում, ստեղծեց պատմության մեջ մինչ օրս հայտնի առաջին մշտական մասնագիտացված բանակը եւ շուրջ 10 տարի տեւած պատերազմների ընթացքում ստեղծեց նախադեպը չունեցող մի աշխարհակալություն: Նրա զորքերը հյուսիսում հասան մինչեւ Հայկական լեռնաշխարհի հարավային փեշերը եւ անհաջողություն կրեցին այնտեղ: Մեզ է հասել Սարգոն Աքադացու տերության աշխարհագրությունը ներկայացնող մի արձանագրություն, որում առաջին անգամ ներկայացված է «Արմենիա» անվան նախաձեւը՝ Արման(ում) երկրանունը՝ Հայկական Տավրոսի լեռնազանգվածի հարավային եզրաշերտով:

Աքադի չորրորդ տիրակալ Նարամ-Սուենին (Նարամ-Սին, Ք.ա. XXIII դար) հաջողվեց վերականգնել աքադական տերության հզորությունը: Եփրատի եւ Տիգրիսի հոսանքներն ի վեր նա ձեռնարկել է բազմաթիվ ռազմական արշավանքներ: Նարամ-Սուենը Տիգրիսի հովտով արշավանքներ է ձեռնարկում դեպի հյուսիս եւ Վանա ու Ուրմիո լճերի միջնատարածքում հիշատակում Արամ երկիրը: Այդ տարածքը Վանի թագավորության ժամանակաշրջանում եւս շարունակվում է հիշատակվել գրեթե նույն տեսքով (Արամալի, Արմարիլի): Հիշենք, որ, ըստ Մովսես Խորենացու տեղեկության, «արմեն» եւ «Արմենիա» անունների հիմքում ընկած է «Արամ» անունը:

Եփրատի հոսանքով դեպի վեր կատարված Նարամ-Սուենի մի քանի արշավանքներն ուղղված էին Սուբուր (Սուբարտու) երկրի դեմ, որը գտնվում էր «Վերին ծովի ափերին», այսինքն՝ Վանա լճի ավազանում: Նա արշավում է Եփրատի վերին հոսանքի շրջանում գտնվող Խախ(ում) երկրի դեմ, որը որպես ոսկու արդյունահանման կարեւոր շրջան հիշվում է Ք.ա. 3-րդ հազարամյակից սկսած Մեծ Հայքի Բարձր Հայք նահանգի տարածքում:

Նարամ-Սուենը կատարեց մի քանի արշավանք դեպի «ակունքը Տիգրիսի եւ ակունքը Եփրատի», հասավ մինչեւ Ամիդ-Դիարբեքիրի շրջան, ուր թողեց իր պատկերաքանդակով եւ արձանագրությամբ կոթող:

Եփրատի վերին հոսանքի երկրներ արշավելու մասին է պատմում Նարամ-Սուենի ամենածավալուն արձանագրություններից մեկը, որում Արման(ում)ը ներկայանում է իբրեւ մի երկիր, որը «երբեւէ՝ մարդկության արարումից ի վեր, ոչ մի թագավոր չէր նվաճել»: Նարամ-Սուենի դեմ ձեւավորվում է Հայկական լեռնաշխարհի եւ հարակից 17 պետական կազմավորումների դաշինքը՝

Արատտա երկրի մասին պատմող շումերական բնագրերից մեկը

Արման(ում) երկրի գլխավորությամբ:

Նարամ-Սուենի դեմ միավորված տասնյոթ երկրների դաշինքի ղեկավարումն Արման(ում)ից անցել է Ուրմիո լճի ավազանի հարավում գտնվող Լուլլուբի երկրին: Նարամ-Սուենը դաշնակից զորքերի դեմ է ուղարկում երեք բանակ, որոնցից ոչ մի կենդանի շունչ չի վերադառնում:

Տասնյոթ երկրների դաշինքի ղեկավարումը հետագայում Լուլլուբիից անցավ Կուտիական երկրին, որն էլ վերջ դրեց Նարամ-Սուենի բռնակալական իշխանությանը:

Կուտիական (Կորդվաց) աշխարհակալությունը: Նարամ-Սուենը կատարեց նախադեպը չունեցող մի սրբապղծություն: Նա իրեն հռչակեց «աստված»՝ կործանելով աստվածների տաճարը եւ պարտադրելով պաշտել իր անձը: Շումերական քրմությունը օգնություն խնդրեց տասնյոթ երկրների դաշինքից, որի ղեկավարումը Լուլլուբիից անցել էր Կուտիական երկրին: Շուտով սրընթաց գրոհով Միջագետքի կենտրոն արշավեցին Հայկական լեռնաշխարհի լեռնականները, որոնց դեմ պատերազմում ինքնակոչ «աստվածը» սպանվեց…

«Աշխարհի չորս կողմերի արքա» տիտղոսը հաղթողի իրավունքով անցավ կուտիական տիրակալներին: Կուտիա-

Վաղ շրջանի պետական կազմավորումներբ Հայաստանում

Մեծամորի աստղադիտարանի (Ք.ա. 2800-2600թթ.) հարթակներից մեկը՝ Մասիսի ձյունափառ գագաթով

կան աշխարհակալությունը ունեցել է տարածքային հսկայական ընդգրկում՝ Ամանոսի լեռներից ձգվելով մինչեւ Էլամ, Հայկական լեռնաշխարհի հյուսիսից մինչեւ Պարսից ծոց:

Նրանք շուրջ մեկ դար (Ք.ա. XXII դ.) գերիշխում են Առաջավոր Ասիայի զգալի մասի վրա: Այդ ժամանակահատվածում իշխեցին 21 արքաներ, որոնք կառավարում էին որոշակի ժամկետով: Այսինքն՝ գործում էր գերագույն իշխանության ընտրովի կարգը:

Կուտիական աշխարհակալության ավարտից հետո էլ Հայաստանը պահպանում է հզորությունն ու կարեւոր դիրքը Հին Արեւելքում: Այդ մասին տեղեկանում ենք Ք.ա. XXI դարի միջագետքյան հետախուզական նամակներից, որոնցում Սուբուր երկիրը ներկայանում է իբրեւ հզոր թագավորություն:

Հայկական լեռնաշխարհը Ք.ա. XX-XVII դարերում: Ք.ա. XX-XVIII դարերում Առաջավոր Ասիայի հյուսիսում գործում էր մետաղի առեւտրի մայրուղին, որը ձգվում էր Քանեշից (քաղաք Փոքր Ասիայի արեւելքում) մինչեւ Աշուր: Մայրուղու հետ կապի մեջ են եղել Հայկական լեռնաշխարհի ավելի քան երեք տասնյակ բնակավայրեր, որոնցից արտահանվում էին զանազան մետաղներ՝ ոսկի, արծաթ, պղինձ, անագ եւ այլն: Քանեշից գտնված սեպագիր արձանագրություններում հիշատակվում են հայաստանյան շուրջ մեկ տասնյակ իշխանություններ (Ծուփանա (Ծոփք), Թեգարամա (Թոգարմա, Թորգոմա տուն), Խախ(ում), Տուգրիշ եւ այլն):

Մետաղի լայն կիրառությունը խիստ կարեւոր էր ինչպես տնտեսության, այնպես էլ ռազմական գործի մեջ: Ռազմարվեստում կարեւոր նշանակություն ունեցավ ձիերի, հատկապես, ձիերին լծված մարտակառքերի կիրառությունը: Թերեւս նշված հանգամանքներով պետք է բացատրել ռազմական այն պայթյունը, որ տեղի ունեցած Հայկական լեռնաշխարհից Ք.ա. XVIII-XVII դարերում. քասեցիները (կասիտները) արշավեցին Բաբելոն, հիքսոսները՝ Եգիպտոս, արիացիները՝ Հնդկաստան: Երեք արշավանքներն էլ ընթացան բացառիկ հաղթանակներով:

Միտաննի թագավորությունը: Ք.ա. XVI դարում Հայաստանի հարավում եւ Միջագետքի հյուսիսում ստեղծվեց հնդեվրոպական Միտաննի թագավորությունը՝ Վաշշուգանե մայրաքաղաքով (Մասիոն լեռներում): Միտաննին եգիպտական աղբյուրներում հիշատակվում է «Նահարինա» անվամբ, որը, հավանաբար, նույնանում է «Նաիրիի» հետ: Այս թագավորությունն էական դերակատարում է ունենում Առաջավոր Ասիայում՝ սկսած Ք.ա. XVI դարի վերջերից: Եգիպտական, բաբելական, խեթական տիրակալների նման Միտաննիի արքաները կրում էին «Մեծ թագավոր» տիտղոսը:

Միտաննիի արքաների ազդեցությունը տարածվել է արեւելքում մինչեւ Բոհտան եւ Մեծ Զաբ գետերի հովիտները, արեւմուտքում՝ մինչեւ Միջերկրականի ծովեզերքը եւ Կիլիկյան Տավրոսի լեռները: Միտաննիի իշխանությունը հյուսիսում տարածվել է առնվազն մինչեւ Արմ. Եփրատի եւ Արածանիի միախառնման շրջանը:

Միտաննիի թագավորները հնդեվրոպական ծագում ունեին: Այդ մասին են վկայում ոչ միայն նրանց անունները, այլեւ դիցարանի հնդեվրոպական բնութագիրը:

Միտաննիին վիճակված էր լուրջ ռազմական բախման մեջ մտնել Եգիպտոսի հետ, քանի որ վերջինս հիքսոսների դեմ վրիժառու պատերազմ սկսելով՝ հարվածներն ուղղեց հենց Միտաննիի դեմ: Սկսեց Եգիպտա-միտաննիական պատերազմների երկարատեւ մի շղթա՝ Ք.ա. XVI դարի երկրորդ կեսից մինչեւ Թութմոս IV-ի (Ք.ա. 1400-1390թթ.) իշխանության շրջանը, որը հաշտություն կնքեց Միտաննիի արքա Արտադամայի հետ: Միջերկրածովյան արեւելյան ավազանի հարավն անցավ Եգիպտոսին, հյուսիսը՝ Միտաննին: Դաշինքն

Վաղ շրջանի պետական կազմավորումները Հայաստանում

ամրապնդվեց խնամիական կապերով. մի քանի սերունդ Միտաննիի արքայադուստրերը դառնում էին Եգիպտական փարավոնների տիկնայք, որոնցից ամենանշանավորը Նեֆերտիտին էր:

Հնդեվրոպական այս թագավորության տիրակալները հայոց ազգային պատմագրական ավանդույթում համարվում են բնիկ հայ արքաներ, եւ նրանց անունները գտնում ենք Մովսես Խորենացու Հայկազուն նահապետների եւ արքաների ցանկում (օրինակ՝ Պարատարնա (սեպագրում) - Պարետ (ըստ Խորենացու), Վասաշատա - Վաշտակ եւ այլն): Միտաննին անկում ապրեց Ք.ա. XIII դարում՝ հզորացող Ասորեստանի հարվածներից:

Հայասա թագավորությունը: Խեթական սեպագիր արձանագրություններում Ք.ա. XV-XIII դարերի իրադարձությունների կապակցությամբ հիշատակվում է Հայասա երկիրը: Երկրանվան հիմքում հայ ժողովրդի ինքնանվանումն է: Խեթերենում -(ա)սա մասնիկով կազմվում են տեղանունները, այսինքն՝ «Հայասա» նշանակում է «Հայք, Հայաստան»: Հայասան հիշատակվում է Հայկական լեռնաշխարհի արեւմտյան շրջանում: Հայասայի կարեւոր կենտրոններից էր Կումախան՝ հետագա Մեծ Հայքի Բարձր Հայք աշխարհի Անի-Կամախը, որտեղ գտնվում էր հայոց թագավորների մեծ դամբարանը:

Հայասան վերջին անգամ հիշատակվում է Ք.ա. XIII դարի վերջին: Գիտության մեջ Հայասայի պատմության ավարտի մասին կա երկու տեսակետ: Մեկի համաձայն՝ Հայասան պետք է անկում ապրած լինի Ք.ա. XIII դարավերջին: Մյուս տեսակետի կողմակիցները գտնում են, որ այն շարունակել է իր գոյությունը, պարզապես այլեւս չի հիշատակվում «Հայասա» խեթերեն անվամբ, քանի որ Ք.ա. XII դ. անկում էր ապրել խեթական տերությունը:

Հայասան ուներ իր արքունիքը, բանակը եւ քաղաքային կենտրոնները: Այն ուներ նաեւ իր դիցարանը: Դատելով խեթական սկզբնաղբյուրներում խեթահայասական նամակագրության հիշատակությունից՝ Հայասան ուներ արքունի դիվան՝ իր դպիրներով, որոնք վարել են պետական գրագրությունը:

Հայասան ռազմադաշտ էր դուրս բերում 700 մարտակառքից եւ 10 հազարանոց հետեւազորից բաղկացած բանակ, որն այդ ժամանակաշրջանի համար նշանակալից ուժ էր:

Նաիրյան «երկրները»: «Նաիրի» երկրանունն առաջին անգամ հիշատակված է Ասորեստանի Սալմանասար I թագավորի (Ք.ա. XIII դ. առաջին կես) կողմից: Աղբյուրների քննությունը ցույց է տալիս, որ այդ անվան տակ միավորված էին Վանա լճի շրջանը եւ նրանից դեպի հարավ ու արեւմուտք ընկած ընդարձակ տարածությունները, ուր ապրում էին դաշնային հիմունքներով միավորված բազմաթիվ ցեղապետություններ (ասուրական աղբյուրներում դրանք բոլորը կոչվում են «երկրներ»):

Ք.ա. XIII դ. Նաիրյան «երկրների» հզորության մասին է վկայում այն փաստը, որ Սալմանասար I-ը ստիպված էր սահմանամերձ մի քանի քաղաքներում նշանակել հատուկ պահակազորեր՝ Ասորեստանի տիրապետության շրջանների վրա նաիրյան հարձակումները կանխելու նպատակով:

Նաիրյան «երկրները» եւ դրանց 40 առաջնորդները (որոնք ասորեստանյան արձանագրություններում անվանված են «թագավորներ») հիշատակվում են Սալմանասար I-ի հաջորդի՝ Թուկուլթի-Նինուրտայի (Ք.ա. XIII դ.), իսկ մեկուկես դար անց՝ Թիգլաթպալասար I-ի (Ք.ա. XII-XI դդ.) արձանագրություններում: Ուշագրավ է, որ չնայած իր նախորդները գրում են, թե իբր գրավել ու հպատակեցրել են Նաիրյան «երկրները», Թիգլաթպալասար I-ը Նաիրին անվանում է «ընդարձակ, հպատակություն չճանաչող եւ անծանոթ երկիր»:

Ասորեստանյան արքաների արձանագրություններում հիշատակվում են Նաիրիի «մեծամեծ քաղաքները», «նրանց հարստությունը», «նրանց բազմաթիվ ձիերի, ջորիների, երինջների երամակները եւ նրանց երկրագործական անթիվ ունեցվածքը», որոնք խոսում են այդ շրջանում երկրի հզորության եւ հարստության մասին:

Երկու դար անց Ասորեստանի արքա Աշուրնասիրապալ II թագավորի (Ք.ա. IX դար) արձանագրություններից տեղեկանում ենք, նա չորս խոշոր արշավանք է կատարել Նաիրի երկրի դեմ, ընդ որում, այնտեղ ոչ թե խոսվում է մի քանի «երկրների» դաշինքի կամ համադաշնության մասին, այլ՝ մեկ միասնական երկիր-պետության մասին: Հիշատակվում են «Նաիրի երկրում 250 քաղաք՝

Միջագետքի տիրակալ Նարամ-Սուենի կոթողը՝ գտնված Դիարբեքիրի շրջանից (Աղձնիք նահանգ, Ք.ա. XXIII դ.)

Հայաստանի Ք.ա. II հազարամյակի զինատեսակներ

իրենց զորավոր պարիսպներով»…

Նաիրին որպես մեկ միասնական պետություն է հիշատակվում նաեւ նրա հաջորդի՝ Սալմանասար III-ի (Ք.ա. IX դար) արձանագրություններում: «Նաիրի» անվամբ են իրենց երկիրը կոչում Վանի թագավորության տիրակալները՝ ասուրերենով գրված իրենց արձանագրություններում:

Վաղ շրջանի պետական կազմավորումներ Հայաստանում

Վանի համահայկական թագավորությունը

ԱՐՏԱԿ ՄՈՎՍԻՍՅԱՆ

Ք.ա. IX դ. 30-ական թվականներին Հայկական լեռնաշխարհի տարածքում հիշատակվում են տասնյակ իշխանություններ: Ուրվագծվում են մի քանի կարեւոր կենտրոններ, որոնց շուրջ համախմբված են համադաշնություններ կազմած մանր պետական կազմավորումները:

Արարատյան դաշտում, Սեւանա լճի ավազանում, Սյունիքում եւ հարակից շրջաններում տարածվում էր էթիունի երկրի համադաշնությունը: Վերջինիս զարգացման բարձր մակարդակի մասին են վկայում Լճաշենի (Սեւանա լճի արեւմտյան ափին) պեղումներից հայտնաբերված բացառիկ նյութերը (զենք ու զրահ, կենցաղի առարկաներ, արձանիկներ, զարդեր եւ այլն): Դա փաստորեն Հայկազունների Արարատյան թագավորությունն էր՝ իր համադաշնությամբ:

Լեռնաշխարհի հյուսիսարեւմտյան շրջաններում ուրվագծվում է Դիաուխիի (Տայք) շուրջ կազմավորված մյուս համադաշնությունը: Երրորդ խոշոր համադաշնությունը կազմվել էր հարավում՝ Վանա լճի ավազանում գտնվող Նաիրի թագավորության շուրջը, որի հիմքի վրա էլ բարձրացավ Վանի համահայկական հզոր թագավորությունը:

Տուշպա (Տոսպ, Վան) մայրաքաղաքի հիմնումը: Ք.ա. IX դարի 80-70-ական թվականներից որպես մեկ միասնական պետություն ներկայացող Նաիրին Ք.ա. մոտ 830-ական թթ. ունեցավ նոր եւ մեծ մայրաքաղաք՝ Տուշպան (Տոսպ, Վան): Այն հիմնադրում է Սարդուրի I-ը (Ք.ա. մոտ 835-825թթ.), որը մայրաքաղաքի հիմնադրման մասին ասուրերեն գրված արձանագրություններում ներկայանում է «Նաիրի երկրի արքա, մեծ արքա, հզոր արքա, տիեզերքի արքա, արքաների արքա…» տիտղոսաշարով:

Ասորեստանյան աղբյուրներում թագավորությունը կոչվում է Ուրարտու, իսկ տեղական արձանագրություններում՝ Նաիրի եւ Բիայնիլի: Վերջինս կապվում է Վանի անվան հետ, այդ պատճառով էլ գիտության մեջ թագավորությունը հայտնի է նաեւ որպես Վանի թագավորություն: Աստվածաշնչում այն հիշատակվում է «Արարատյան թագավորություն» անվամբ: «Նաիրի», «Ուրարտու», «Բիայնիլի» եւ «Արարատ» անուններից բացի, թագավորությունը երբեմն հիշատակվում է նաեւ «Կուտիական երկիր» անվանումով, ինչը գալիս է Ք.ա. XXIII-XXII դարերից եւ կշարունակվի նաեւ Հայկազուն-Երվանդակաների ժամանակաշրջանում:

Սարդուրի I-ը ասորեստանյան աղբյուրներում հիշատակվում է մեկ անգամ՝ Ք.ա. 833 թվականին, Սալմանասար III-ի զորքերին դիմակայելու առնչությամբ: Այդ ժամանակ Վանի թագավորությունը տարածվում էր ոչ միայն Վանա լճի ավազանում, այլեւ Հայկական Տավրոսից հարավ՝ Տիգրիսի վերին հովտում:

Իշպուինիի գահակալությունը: Ք.ա. մոտ 825-810 թվականներին Տուշպա-Վանի տիրակալն էր Սարդուրի I-ի որդի Իշպուինի արքան: Վանի թագավորության հզորացման եւ տարածաշրջանային տերություն դառնալու գործում կարեւոր դեր էին խաղում Իշպուինիի օրոք սկսված եւ Մենուայի գահակալության ընթացքում շարունակված բարեփոխումները:

Իշպուինիի գահակալության առաջին շրջանում անցկացված բարեփոխումները կապված էին միայն նրա անվան հետ, իսկ երկրորդ շրջանում հեղինակակից է հանդես գալիս նրա որդի Մենուան, ինչը երեւում է նրանց համատեղ արձանագրություններից: Եթե գրային բարեփոխումը՝ տեղական սեպագրի ստեղծումը, տեղի է ունեցել Իշպուինիի կառավարման սկզբնական շրջանում, ապա կրոնական բարեփոխումը՝ ողջ թագավորության համար միասնական դիցարանի (պանթեոնի) ստեղծումով, կատարվել է նրա գահակալության երկրորդ շրջանում: Դրանով է պայմանավորված, որ դիցարանի արձանագրումը «Խալդյան դարպասի» վրա, որին հետագայում մեր ժողովուրդը կոչեց «Միհրի դուռ», կատարվել է երկուսի անունով: Դիցարանում միավորված էին նախկին Նաիրյան համադաշնության երկրների աստվածությունները. դա, փաստորեն, Ք.ա. IX դարավերջի հարավհայաստանյան դիցարանն էր:

Իշպուինիի օրոք սկսվեցին եւ Մենուայի օրոք շարունակվեցին ռազմական ոլորտի բարեփոխումները: Նախկին դաշնային աշխարհազորը փոխարինվեց արհեստավարժ (պրոֆեսիոնալ) կանոնավոր բանակով, որը բաժանված էր ըստ զորատեսակների: Կատարվեցին նաեւ բանակի վերազինում եւ այլ միջոցառումներ:

Դրանց շնորհիվ Իշպուինին արձանագրեց առաջին խոշոր հաջողությունները Ք.ա. 820-ական թթ. վերջին՝ Ուրմիո լճի ավազանի հարավում ընդլայնելով թագավորությունը: Նա թագավորությանը միացրեց Արդինի-Մուսասիր երկիրը, որի համանուն կենտրոնը դարձրեց նաեւ պետության հոգեւոր կենտրոն: Դեպի հյուսիս կատարած արշավանքների արդյունքում նա Հայկական պարլեռնաշղթան դարձրեց թագավորության հյուսիսային սահմանը: Այնուհետեւ նա Մակվի դաշտում կատարեց ամրաշինական աշխատանքներ: Դրան հաջորդեցին ռազմերթեր դեպի Սյունիք, Արաքսի հովտով դեպի արեւելք, ինչպես նաեւ Ուրմիո լճի ավազանով դեպի հարավ՝ մինչեւ Պարսուա երկիրը:

Թագավորության հզորացումը Մենուայի օրոք: Մենուայի միանձնյա կառավարման շրջանում (Ք.ա. մոտ 810-786թթ.) Վանի թագավորությունն աննախադեպ վերելք է ապրում: Երկիրը տնտեսապես հզորացնելու համար նա կատարում է բազմաթիվ գործեր, որոնցից հատկապես նշանավոր է 72 կմ երկարությամբ «Մենուայի ջրանցքի» կառուցումը. այն օգտագործվում է մինչ օրս:

Մենուայի առաջին քայլերից մեկն

Վաղ շրջանի պետական կազմավորումներբ Հայաստանում

է լինում Հայկական պար լեռնաշղթայի արեւելյան հատվածում ամրապնդվելը: Այնուհետեւ Մենուային հարկատու է դառնում էթիունի երկիրը, որը համանուն համադաշնության կենտրոնն էր: Արարատյան դաշտում՝ Արաքսի աջ ափին, Մենուան հիմնում է ռազմավարական խոշոր հենակետ՝ Մենուախինիլին:

Պետության հյուսիսարեւմտյան սահմաններն ամրապնդելու նպատակով Մենուան արշավում է ընդդեմ Դիաուխի երկրի (Տայք), գրավում նրա կենտրոնական Շաշիլու քաղաքը: Դիաուխիի արքան ներկայանում է Մենուային՝ մատուցելով հարուստ ընծաներ եւ պարտավորվելով վճարել հարկեր ու մասնակցել նրա արշավանքներին:

Հյուսիսում թիկունքն ամրապնդելուց հետո Մենուան աշխուժացնում է արտաքին քաղաքականությունը հարավային ուղղություններով: Նրա բանակը, հատելով Հայկական Տավրոսը, հաղթարշավով հասնում է մինչեւ Կումենու եւ Ասորեստան: Մեկ այլ արշավանք է իրականացնում Ալզի (Աղձնիք) երկրի ուղղությամբ եւ իր հսկողության տակ է վերցնում Հայկական Տավրոսի կենտրոնական հատվածի լեռնանցքները:

Արեւմուտքում Մենուայի զորքերն անցան Եփրատը եւ հարկատու դարձրեցին Մելիտեայի (Մելիդ, Մալաթիա) թագավորությանը:

Ուրմիո լճի ավազանի հարավում գտնվող Մանայի թագավորությունը լիովին ընդունում է Մենուայի գերիշխանությունը: Վանի բանակը շարունակում է հաղթարշավը Ուրմիայից հարավ-արեւելք ընկած տարածքներում՝ հասնելով մինչեւ Դիալա գետի ավազան: Այս արշավանքներով Մենուան վերահսկողության տակ է վերցնում զագրոսյան առեւտրական ուղիների զգալի մասը՝ նպատակ ունենալով կտրել Ասորեստանին Իրանական բարձրավանդակի կամ նրա միջնորդությամբ ստացվող հումքի աղբյուրներից:

Ասորեստանի փորձերը՝ ինչ-որ կերպ կասեցնելու Վանի թագավորության առաջխաղացումը Ք.ա. 791 թ., ավարտվում են անհաջողությամբ:

Մենուան հատուկ ուշադրություն դարձրեց ռազմական շինարարությանը. երկրի ռազմավարական ուղղություններում ստեղծվեց ամրաշինական մեծ ցանց: Պետության հյուսիսային գլխավոր հենարան Մենուախինիլիից զատ, հիմնվում են մի քանի ամրոցներ:

Այսպիսով՝ Մենուայի հաղթարշավների շնորհիվ Հայկական լեռնաշխարհի հիմնական մասը միավորվում է մեկ կենտրոնացված պետության մեջ, իսկ հյուսիսային շրջանների իշխանությունները, թեպետ չեն մտնում Վանի տերության մեջ, բայց ընդունելով նրա գերիշխանությունը՝ հարկատու են դառնում: Վանի տիրակալը ոչ միայն իր գերիշխանությունն է հաստատում Ուրմիո լճի ավազանից շատ հարավ եւ Եփրատից արեւմուտք, այլեւ վերահսկողություն է սահմանում Զագրոսյան լեռներով դեպի արեւելք եւ դեպի արեւմուտք՝ Փոքր Ասիա տանող ռազմավարական ուղիների վրա: Մենուան առաջին մարտավարական հաղթանակներն է տանում տարածաշրջանի խոշորագույն պետության՝ Ասորեստանի նկատմամբ եւ Վանի թագավորությունը վերածում գերտերության:

Արգիշտի Ի-ի կառավարումը: Վանի թագավորությունը հզորության գագաթնակետին է հասնում Արգիշտի Ի-ի գահակալության տարիներին (Ք.ա. 786-764թթ.): Նրա գործունեությունը վերականգնվում է ճշգրիտ ժամանակագրությամբ՝ շնորհիվ Վանի ժայռի հարավարեւմտյան կողմում փորագրված «Խորխոռյան տարեգրության» եւ առանձին այլ արձանագրությունների:

Արգիշտի Ի-ի գահակալության հենց երկրորդ տարին (Ք.ա. 785թ.) խիստ հագեցած էր արտաքին ձեռնարկումներով: Նախ նա, ռազմավարական անհրաժեշտությամբ պայմանավորված, արշավում է դեպի Դիաուխի եւ իր պետությանն է միավորում վերջինիս մեծ մասը, որ մետաղահանքերով հարուստ շրջան էր:

Երկրորդ հարվածը հասցվում է էթիունյան միությանը եւ հարեւան մի քանի երկրներին, որի պատճառը նրանց ցույց տված ռազմական օգնությունն էր Դիաուխյան միությանը: Վանի տերության բանակը իր գերիշխանությունն է հաստատում այդ երկրների նկատմամբ:

Այնուհետեւ Արգիշտին հասնում է Կարսի սարահարթ, որից հետո արշավում է Զաբախա (Զավախք)՝ մինչեւ Հզոր Սիրիմու լեռը (հետագայում՝ Սուրամի լեռներ):

Արգիշտի Ի-ն իր տերությանն է միացնում Սեւանա լճի ավազանի իշխանությունները: Մեկ այլ արշավանքով ամրապնդվում են Վանի թագավորության դիրքերը Ուրմիո լճից հարավ-արեւմուտք՝ Մեծ Զաբի միջին հոսանքի շրջանում, եւ վերահսկողության տակ են վերցվում Ասորեստանից դեպի մերձուրմյան ավազան եւ Հայկական լեռնաշխարհ տանող ճանապարհները:

Իր թագավորության չորրորդ տարում (Ք.ա. 783թ.) Արգիշտին խոշոր արշավանք է ձեռնարկում դեպի արեւմուտք՝ Փոքր Ասիայի տարածք: Նա Մենուայից հետո կրկին գրավում է Մելիտեան, Խաթինիլին, Թաբալը (Աստվածաշնչում՝ Թոբել): Արեւմտյան արշավանքից արքան վերադառնում է տասնյակ հազարավոր ռազմագերիներով եւ այլ ավարով: Այս արշավանքով Ասորեստանի առջեւ փակվում են Փոքր Ասիայի՝ հումքի աղբյուրներ տանող ճանապարհները:

Ք.ա. 782թ. Վանի զորքերը շարունակում են հաղթարշավը դեպի Ալիշտու՝ Աղստեւի հովիտ: Նույն տարում հիմնադրվում է Էրեբունի ամրոցը, որտեղ տեղակայվում են անդրեփրատյան Խաթի եւ Ցուփանի (Ցոփք) երկրներից բերված 6600 ռազմիկներ: Այնուհետեւ արշավանքը շարունակվում է դեպի հյուսիս-արեւելք՝ մինչեւ հետագա Գուգարաց աշխարհի Տաշիր գավառի տարածքը:

Վանի թագավորությունը պատրաստվում էր դեպի հարավ կայանալիք մեծ արշավանքի: Կանխելու նպատակով հայաստանյան զորքի հաջողությունը՝ Ք.ա. 781թ. Ասորեստանը նախահարձակ է լինում: Արգիշտին ոչ միայն պարտության է մատնում ասորեստանյան զորքերին, այլեւ շարունակում է հաղթարշավը դեպի հարավ՝ Զագրոսյան լեռներով հասնելով մինչեւ Պարսուա (հետագայի՝ Պարսք) եւ Բաբելոնիա (բնագրում՝ Բաբիլու երկիր), որը ձգվում էր մինչեւ Պարսից ծոց: Դրանով Արգիշտին շրջափակման մեջ է վերցնում Ասորեստանը երեք կողմից՝ հյուսիսից, արեւելքից եւ հարավից:

Այսպիսով՝ Ք.ա. 786-781թթ. Արգիշտի Ի-ի առաջնորդությամբ ստեղծվում է Վանի աշխարհակալությունը, որն արեւմուտքում հասել էր Փոքր Ասիա, արեւելքում իր իշխանությունն էր տարածել Զագրոսյան լեռնազանգվածի հյուսիսային կեսում, իսկ հարավում՝ նվաճել Բաբելոնիան:

Դրանից հետո եւս շարունակվեցին

Վաղ շրջանի պետական կազմավորումներբ Հայաստանում

Տուշպա (Տոսպ, Վան) ամրոցը Վանա լճից

Արգիշտի Ի-ի հաղթարշավները, որոնք ներկայացված են Խորխոռյան տարեգրության մեջ: Մասնավորապես, տարեգրությունը պատմում է Ասորեստանի դեմ տեղի ունեցած հաղթական պատերազմի մասին: Ասորեստանյան աղբյուրներն իրենց հերթին տեղեկացնում են Ք.ա. 781-778թթ. Ուրարտուի դեմ մղված պատերազմների մասին. Ասորեստանի ծրագրերը կատարյալ անհաջողության են մատնվում:

Բազմաթիվ արշավանքներով ուղեկցվող գործուն արտաքին քաղաքականությունն Արգիշտին շարունակեց վարել նաեւ հետագա տարիներին, որոնց ընթացքում նա լիակատար կերպով ոչնչացրեց Ասորեստանի հետ համագործակցող ուժերին: Նա կատարեց մի շարք նոր արշավանքներ դեպի հյուսիս եւ դեպի արեւմուտք:

Այսպիսով՝ Արգիշտի Ի-ի օրոք Բիայնիլի-Ուրարտու-Արարատ թագավորությունը հասավ աննախադեպ հաջողությունների՝ վերածվելով Առաջավոր Ասիայի հզորագույն ուժի:

Արգիշտին որոշում է զբաղվել նվաճված տարածքների յուրացմամբ, տերության ներքին հզորության ամրապնդմամբ: Զարկ տրվեց քաղաքաշինությանը. հիմնվեցին այնպիսի խոշոր վարչատնտեսական կենտրոններ, ինչպիսիք էին Էրեբունին եւ Ք.ա. 776թ. Արարատյան դաշտում հիմնված Արգիշտիխինիլին: Անցկացվեցին նոր ջրանցքներ, ընդլայնվեցին մշակովի հողատարածքները. այդ միջոցառումները կոչված էին բավարարելու տերության աճող կարիքները:

Արգիշտի Ի-ի տերության եւ ազդեցության ոլորտների աշխարհագրությունը: Արգիշտի Ի-ի բուն թագավորությունը ձգվում էր Ուրմիայի ավազանի հարավից մինչեւ Զավախք, Սեւանա լճի ավազանից եւ Կուր գետից մինչեւ անդրեփրատյան աջափնյա շրջաններ (ներառյալ Մելիտեա եւ Թաբալ երկրները), Մասիուս եւ Կորդվաց լեռներից մինչեւ Ճորոխի ավազան:

Նրա գերիշխանության սահմաններն ավելի լայնածավալ էին. դրանք ընդգրկում էին Փոքր Ասիայի արեւելյան պետությունները եւ մերձուրմյան ավազանի մի քանի երկրներ, իսկ հարավում՝ մինչեւ Պարսից ծոց՝ ներառյալ Բաբելոնիան:

Արգիշտի Ի-ի հեռավոր արշավանքներից ամենանշանավորը թերեւս Բաբելոնիայի նվաճումն էր: Վանի թագավորության՝ Առաջավոր Ասիայի հզորագույն տերություն դառնալը փաստագրված է նաեւ նրա գլխավոր մրցակից Ասորեստանի զորքերի գերագույն հրամանատարի խոստովանության մեջ: Հայտնի է, որ պարտվողները հազվադեպ են խոստովանում իրենց պարտությունները: Սակայն Արգիշտիի պարագայում պատկերն այլ է: Ք.ա. 780թ. Ասորեստանի գլխավոր զորահրամանատարը գրում է, որ Արգիշտի արքայի «անունն անգամ ահարկու է որպես ծանր հողմ, նրա ուժերը մեծաքանակ են»…

Արգիշտի Ի-ի ստեղծած տերության ազդեցության ոլորտների պատկերը համալրվում է հնագիտական պեղումներից

Վաղ շրջանի պետական կազմավորումները Հայաստանում

հայտնաբերված նյութերի շնորհիվ: Նրա անվամբ սեպագիր արձանագրությամբ սաղավարտ է գտնվել Հյուսիսային Կովկասից, որը ներկայումս պահվում է Բեռլինի Առաջավորասիական թանգարանում: Համանման սաղավարտներ են հայտնաբերվել նաեւ Աբխազիայից, Օսիայից եւ Գուգարաց աշխարհի ամենահյուսիսային գավառ Թռեղքից: Հնագիտական փաստերը վկայում են Արգիշտի I-ի՝ մինչեւ Հյուսիսային Կովկաս տարածված ռազմաքաղաքական ազդեցության մասին:

Ամփոփելով Արգիշտի I-ի աշխարհակալության մասին տեղեկությունները՝ տեսնում ենք, որ նրա գերիշխանությունը տարածվել է բուն թագավորության սահմաններից շատ հեռու՝ արեւմուտքում՝ մինչեւ Փոքր Ասիա, հարավում՝ Բաբելոնիա, իսկ քաղաքական ազդեցության եւ հետաքրքրությունների ոլորտները ձգվել են մինչեւ Հյուսիսային Կովկաս եւ Լուրիստան (Արեւմտյան Իրանի կենտրոնական եւ հարավային շրջաններ): Այսպիսին է իրական պատկերը հայոց մեծ տիրակալի ստեղծած աշխարհակալության, որի գործը շարունակեց նրա տաղանդավոր հաջորդը՝ Սարդուրի II-ը:

Սարդուրի II: Չորս ծովերի տերությունը: Վանի թագավորության հզորությունը շարունակվում է Սարդուրի II-ի օրոք (Ք.ա. 764-735թթ.): Նրա գործերի տարեգրությունը եւս հասել է մեզ, որն այսօրվա գիտության մեջ կոչվում է «Սարդուրյան տարեգրություն»:

Սարդուրի II-ն առաջին խոշոր արշավանքն ուղղում է Մելիտեա պետության դեմ՝ վերահաստատելով Վանի տերության իշխանությունն այնտեղ:

Ասորեստանը արտաքին, հատկապես Արգիշտի I-ից ստացած հարվածների, ինչպես նաեւ ներքին ապստամբությունների հետեւանքով ի վիճակի չէր տարածաշրջանային լուրջ դերակատարում ունենալու: Վիճակը փորձում է փոխել Աշուր-Նիրարի V թագավորը, որը գահ բարձրանալուն պես փորձում է պառակտումներ մտցնել Վանի տերության, նրա գերիշխանության տակ գտնվող եւ դաշնակից երկրների միջեւ:

Սարդուրին, որն այդ ընթացքում արշավել էր Սեւանա լճի ավազան, պատասխան քայլեր է ձեռնարկում: Զորաբանակներից մեկն արշավում է Արմե, որի մայրաքաղաքի մոտ ջախջախում է ասորեստանցիներին, ապա նաեւ ճնշում Ուրմե երկրում բարձրացած ելույթը:

Այնուհետեւ Սարդուրի II-ը նախ ճնշում է Մանա երկրի ապստամբությունը, ապա հաղթարշավը շարունակում դեպի հարավ: Սարդուրին կրկնեց հոր՝ Արգիշտի I-ի բացառիկ արշավանքն Ասորեստանի արեւելքով դեպի Բաբելոնի երկիր: Հայաստանյան բանակը մտնում է Բաբելոն՝ նվաճելով եւ ավերելով երեք ամրոց եւ մոտ երկու տասնյակ քաղաք, տանելով գրեթե քառասուն հազար ռազմագերի եւ հարուստ ավար: Բաբելոնիայի վերանվաճումով հայոց աշխարհակալության հարավային սահմանը կրկին հասնում է Պարսից ծոց:

Ք.ա. 740-ական թթ. սկզբին տեղի են ունենում Սարդուրի II-ի երկու արշավանքները դեպի հյուսիս՝ Իգանի երկրի դեմ (Հյուսիսային ծովակի ավազանում), եւ ապա Կուլխա՝ Ճորոխի ստորին հոսանքի շրջանում. դա կոլխերի երկիրն էր՝ հունական աղբյուրների Կոլխիդան, որը ձգվում էր մինչեւ Սեւ ծովի ափերը:

Սարդուրի II-ի օրոք համահայկական թագավորության հյուսիսարեւելյան սահմանն անցնում էր Կուր գետով, իսկ արեւելյանը՝ հասնում Կասպից ծով: Նրա տերության մեջ էր մտնում նաեւ Արցախը, որը սեպագրում կոչվում է Ուրտեխի:

Այնուհետեւ Սարդուրի II-ը հասնում է նոր հաջողության. նա, առաջինը Վանի թագավորներից, դուրս է գալիս Միջերկրական ծովի արեւելյան ավազան: Այդ հանգամանքն ավելի էր մոտեցնում Ասորեստանի լիակատար ոչնչացման ծրագրին, որը մշակվել էր դեռեւս Արգիշտի I-ի օրոք: Զագրոսյան լեռներով դեպի հարավ՝ մինչեւ Բաբելոն արշավանքները երեք կողմից շրջափակում էին Ասորեստանը: Եթե հաջողվեր նաեւ Սիրիայի տարածքով ու Եփրատի ավազանով հաղթարշավը մինչեւ Բաբելոն, կիրականանար Ասորեստանի լիակատար շրջափակումը:

Սարդուրի II-ի գահակալության ժամանակաշրջանում Վանի տերությունն ունեցել է տարածքային ամենամեծ աճը: Նրա տերությունը հյուսիսում հասնում է Սեւ ծով, հյուսիս-արեւելքում՝ Կուր գետ, արեւելքում՝ Կասպից ծով, արեւմուտքում՝ Փոքր Ասիայի կենտրոնական շրջան, հարավում՝ Պարսից ծոց

Սա աշխարհի հնագույն՝ Բաբելոնյան քարտեզն է, որը ստեղծվել է Ք.ա. I հազարամյակի առաջին կեսին: Քարտեզին նշված 7 երկրներից մեկը Ուրարտու-Հայաստանն է:

եւ հարավ-արեւմուտքում՝ Միջերկրական ծով:

Սարդուրի II-ի կառավարման շրջանում նկատվում է շատ կարեւոր անցում տերության կառավարման ոլորտում: Նա սկսում է վերացնել կախյալ (գուցե «դաշնակից» համարվող) թագավորությունները՝ դրանք վերածելով պետության վարչական միավորների, դրանով իսկ համադաշնային կառավարման համակարգից անցում կատարելով կենտրոնացված պետության:

Ասորեստանի դիրքերի վերականգնումը: Լիակատար շրջափակումից եւ ոչնչացումից խուսափելու նպատակով Ասորեստանը լուրջ քայլեր ձեռնարկեց: Կատարած բարեփոխումները տվեցին սպասված արդյունքը: Ք.ա. 743թ. Թիգլաթպալասար III-ը կարողացավ կասեցնել Վանի տերության՝ Եփրատի հովտով դեպի Բաբելոն շարժվող զորքերը: Ութ տարի անց՝ Ք.ա. 735թ., Թիգլաթպալասար III-ն ի վիճակի եղավ արշավանք ձեռնարկելու դեպի Տուշպա: Մայրաքաղաքը գրավել նրան, իհարկե, չհաջողվեց, սակայն դրանով Ասորեստանը վերականգնեց իր դիրքերը՝ կրկին դառնալով Վանի տերության գլխավոր մրցակիցը Առաջավոր Ասիայում:

Վաղ շրջանի պետական կազմավորումներ Հայաստանում

«Միերի դուռ» կոչվող ժայռը, որին արձանագրված է Վանի թագավորության դիցարանը

Սարդուրի II-ի որդի Ռուսա I-ը (Ք.ա. 735- մոտ 710-ական թթ.) գահ բարձրացավ մի դժվարին շրջանում: Ք.ա. 735թ. արշավանքի արդյունքում աշխուժացել էին կենտրոնախույս ուժերը, որոշ ենթակա երկրներում իշխանության էին եկել ասուրամետ կամ Վանից անկախության ձգտող ուժեր:

Այս իրադրության մեջ Ռուսա I-ը կատարեց պետական համակարգի եւ բանակի բարեփոխումներ: Նախկին նահանգների տրոհմամբ ձեւավորվեց մարզային կառավարման մի համակարգ: Կենտրոնախույս ուժերին դիմագրավելու համար Ռուսան ձեռնարկեց արշավանքներ: Ձենքն ուղղելով դեպի Սեւանա լճի ավազան՝ նա վերանվաճեց «լճի այս եւ այն ափի» 23 երկրներ: Սեւանա լճի ավազանում Ռուսա I-ը վերակառուցեց երկու խոշոր ամրոց՝ անվանակոչելով Խալդի եւ Թեյշեբա գերագույն աստվածների անուններով: Դրանից հետո Ռուսան ուշադրությունը կենտրոնացրեց մերձուրմյան ավազանին, հատկապես Արդինի-Մուսասիրին: Նա գահընկեց արեց իշխանությանը տիրացած ասուրամետ դրածոյին եւ գահին վերահաստատեց իր վստահելի կառավարչին: Արդինի-Մուսասիրը Խալդիի պաշտամունքի գլխավոր կենտրոնն էր, նրա «սրբազան քաղաքը»: Վերականգնվեցին Վանի տերության դիրքերը նաեւ Աղձնիքի տարածքում:

Ռուսա I-ի հարավային արշավանքները հանգեցրին Ասորեստանի նոր արքա Սարգոն II-ի հետ բախմանը Ք.ա. 719թ.: Վերջինս անհաջողություն կրեց: Զարգացնելով հաջողությունը՝ Ռուսա I-ն արշավեց դեպի արեւելք՝ նվաճելով մինչեւ Կասպից ծով ընկած նոր տարածքներ:

Ք.ա. 716թ. Մանայի համար Ասորեստանի եւ Ուրարտուի պայքարը վերածվեց վճռական պատերազմի: Սակայն նույն տարվա աշնանը հյուսիսից անակնկալ հայտնվեցին կիմերների քոչվոր ցեղերը՝ ասպատակելով Վանի թագավորության տարածքները: Երկիրը հայտնվեց երկու ճակատով հարձակվող թշնամիների օղակում. Ռուսա I-ն անհաջողություններ կրեց:

Օգտվելով դրանից՝ Ք.ա. 714թ. գարնանը Սարգոն II-ն արշավեց Վանի թագավորության վրա: Նա չունեցավ առանձնապես մեծ հաջողություններ, սակայն վերադարձին մտավ Արդինի-Մուսասիր եւ թալանեց Խալդիի գլխավոր տաճարը: Իբրեւ հերոսություն ներկայացվող այս քայլը իրականում պարզ սրբապղծություն էր, քանի որ Արդինի-Մուսասիրը բաց սրբավայր էր, եւ ասորեստանցիները եւս գալիս էին այնտեղ պաշտամունքի: Սարգոնի հետագա տարիների արձանագրություններում նշվում է, որ Ք.ա. 713թ. Ռուսա I-ը շարունակում էր թագավորել եւ Ասորեստանի դեմ ձեւավորել է փոքրասիական երկրների դաշինք: Դատելով փաստերից՝ Ռուսա I-ին հաջողվել է հետ նվաճել նաեւ Արդինի-Մուսասիրը:

Ք.ա. 743-713թթ. մղած երեսնամյա պայքարի արդյունքում Ասորեստանին հաջողվեց վերականգնել իր դիրքերը՝ կրկին դառնալով Առաջավոր Ասիայի գերտերություններից մեկը:

Վանի թագավորությունը Ք.ա. VIII դարի վերջին եւ Ք.ա. VII դարի առաջին կեսին: Ռուսա I-ին հաջորդում է նրա որդի Արգիշտի II-ը: Աղբյուրներից դատելով՝ Սարգոնի արշավանքին հաջորդող շրջանում, բացի Ուրմիո լճի հարավային հենարանից, Վանի թագավորությունը տարածքային այլ կորուստներ չէր ունեցել: Տերության դիրքերի վերականգնումը հարավային սահմանագծում իրականացվեց բավական արագ:

Վանի թագավորության համար հյուսիսում հայտնվել էր լուրջ թշնամի՝ կիմերների ցեղը, իր հերթին Ասորեստանն էլ Փոքր Ասիայում ձեռք էր բերել նոր հակառակորդ: Վտանգավոր թշնամիների հայտնվելու պատճառով մերձեցում է նկատվում Ասորեստանի եւ Վանի թագավորության հարաբերություններում: Բարիդրացիական էին հարաբերություններն Ասորեստանի նոր գահակալ Սինաքերիբի (Սենեքերիմի) հետ: Այս պայմաններում Արգիշտի II-ը զենքն ուղղում է արեւելք՝ Արաքսի հարավով հասնելով մինչեւ Կասպից ծով: Վերանվաճված տարածքներում արքան հիմնադրում է երկու խոշոր ամրոց՝ Խալդի աստծո եւ իր անուններով:

Բիայնիլի-Ուրարտու-Արարատի վերջին ականավոր տիրակալը դարձավ Ռուսա II-ը (Ք.ա. մոտ 685-645թթ.)՝ Արգիշտի II-ի որդին: Նա շարունակեց Սարդուրի II-ի սկսած կառավարման համակարգի բարեփոխումը՝ համադաշնությունների համակարգից անցումը գերկենտրոնացված պետական կառավարման մոդելին: Զարկ տրվեց քաղաքաշինությանը. հիմնվեցին ընդարձակ բնակելի թաղամասեր ունեցող բազմաթիվ նոր քաղաքներ: Անցկացվեցին նոր ջրանցքներ, հիմնվեցին այգիներ, զարգացան արհեստներն ու առեւտուրը, ծաղկում ապրեց ամբողջ տնտեսությունը:

Ռուսա II-ի արտաքին քաղաքականության մասին տեղեկանում ենք, որ իշխանության առաջին տարիներին նա արշավանքներ է կազմակերպում Եփրատից արեւմուտք տարածվող մի շարք երկրների դեմ:

Ք.ա. 660-ական թթ. սկզբին կրկին սրվում են հարաբերությունները Ուրարտուի եւ Ասորեստանի միջեւ: Այդ ժամանակաշրջանի ասորեստանյան մի քանի աղբյուրներ վկայում են Վանի տերությունից սպասվող սպառնալիքի մասին: Վանի տիրակալը հիշատակվում է կիմերների հետ Ասորեստանի հանդեպ թշնամական գործողություններ ծրագրելիս:

Հայկական լեռնաշխարհի հյուսիսային եւ հյուսիսարեւմտյան շրջաններում հաստատված կիմերները դեռեւս Ք.ա. 715-714թթ. թշնամական արշավանքներ էին ձեռնարկել Վանի տերության

Վաղ շրջանի պետական կազմավորումները Հայաստանում

դեմ՝ դրանով նաեւ նպաստելով վերջինիս թշնամի Ասորեստանի հաջողությանը: Հատկանշական է, որ Ռուսա II-ը կիմերների դեմ ռազմական պայքար չի սկսում, այլ դիմում է դիվանագիտական հնարքի: Նրան հաջողվում է բարեկամական եւ դաշնակցային հարաբերություններ հաստատել կիմերների հետ եւ նպաստել նրանց՝ Փոքր Ասիայի արեւելք տեղափոխվելուն: Կիմերները հաստատվեցին Կապադովկիայի տարածքում, որը միջնադարյան հայկական աղբյուրներում նրանց անվամբ կոչվում է Գամիրք: Իսկ Փոքր Ասիայի տարածքից Ռուսան կարողանում է կիմերներին ուղղել Ասորեստանի դեմ:

Փաստորեն դիվանագետ արքան ոչ միայն կարողանում է կանխել կիմերների հնարավոր հարձակումներն իր երկրի դեմ, այլեւ կեսդարյա թշնամուն դարձնում է իրեն դաշնակից եւ ուղղում իր հին թշնամու՝ Ասորեստանի դեմ:

Ք.ա. 650-ական թթ. առաջին կեսին տեղի են ունենում ռազմական բախումներ Ասորեստանի եւ Վանի թագավորության միջեւ: Այդ ժամանակ Ուրարտու-Արարատի դեմ ռազմական գործողություններ են սկսում հյուսիսից հայտնված նոր հակառակորդները՝ այս անգամ սկյութները: Ասորեստանի եւ Վանի թագավորության պատերազմը, հավանաբար, ավարտվել է նրանց միջեւ բարեկամության ու խաղաղության պայմանագրով: Համենայն դեպս, Ք.ա. 652թ. Ռուսան բարեկամական ուղերձով պատվիրակություն է ուղարկում Ասորեստանի արքայի մոտ:

Թագավորության թուլացումն ու անկումը: Հաջորդ տասնամյակներում Վանի թագավորության ռազմական գործողությունների մասին տեղեկություններ չունենք: Ռուսա II-ին հաջորդել են եւս մի քանի թագավորներ, որոնց ժամանակ պետությունը թուլացել էր: Վերջին հստակ թվագրվող արքան Սարդուրի III-ն է, որն ասորեստանյան արձանագրություններում հիշատակվում է Ք.ա. 643թ.:

Համեմատաբար լուսաբանված է Էրիմենայի որդի Ռուսա III-ի իշխանության շրջանը, որից մեզ հասած արձանագրությունները հայտնաբերվել են Վանա լճի արեւելյան շրջանների եւ Արարատյան դաշտի հնավայրերից, ինչն անուղղակիորեն կարող է վկայել Ռուսա III-ի օրոք պետության սահմանների նեղացման մասին:



Էրեբունիի՝ Հայաստանի մերօրյա մայրաքաղաք Երեւանի հիմնադրման քարե վկայագիրը

Վանի արքայատոհմի իշխանությունն աստիճանաբար թուլանում էր: Պետության անկմանը նպաստեցին նաեւ հյուսիսից ասպատակող սկյութական ցեղերը: Թե երբ է անկում ապրել Վանի թագավորությունը, ստույգ հայտնի չէ: Հիմքեր կան կարծելու, որ Վանի արքայատոհմից իշխանության անցումը հաջորդ արքայատոհմին կատարվել է Ք.ա. VII դ. վերջին՝ առանց լուրջ պատերազմական գործողությունների, պալատական հեղաշրջման ճանապարհով:

Վահան՝ դիցաբանական էակների պատկերներով: Կենտրոնում՝ ռազմի գերագույն աստված Թեյշեբան

Հայկական լեռնաշխարհի հարավարեւմտյան մասում Ք.ա. VII դարում ձեւավորվել էր նոր հայկական մեծ իշխանություն՝ Հայկազունների գլխավորությամբ: Պարույր Հայկազունուն էլ վիճակված էր Ք.ա. 612թ. հռչակել նոր թագավորություն:

Վանի թագավորությունը կարեւոր դեր է խաղացել հայոց եւ համաշխարհային քաղաքակրթության պատմության մեջ: Ահա թե ինչպես է գնահատում այն մեծագույն պատմաբաններից մեկը՝ Նիկողայոս Ադոնցը. *«Ինչպիսին էլ որ լինեն ասորեստանյան քաղաքակրթության արժանիքները, չպետք է թաքցնել, որ Ասորեստանը զուրկ էր մարդու ունեցած արժեքի գիտակցությունից, որ այնքան էական է քաղաքակրթության համար: Աշուրի տիրակալների անգթությունը առասպելական էր... Ռուս ասուրագետ Նիկոլսկին, որն Ուրարտուի անցյալի առաջին հետազոտողներից մեկն է, շատ լավ նկատել ու ընդգծել է ասուրական վայրենի ոգու եւ Ուրարտուի շատ ավելի մեղմ ու մարդկային ոգու միջեւ եղած հակադրությունը: Սանձահարել Ասորեստանի մոլեգնությունը եւ արգելել նրան ներխուժելու նահրյան երկրները. ահա մի էապես ազնիվ առաքելություն, որը բաժին էր ընկել Ուրարտուին: Նա շատ արժեքավոր ծառայություն մատուցեց՝ իր ավանդը ներմուծելով մարդասիրական գաղափարների մեջ»...*

Վանի թագավորությունը հաջորդ դարաշրջանի համար ստեղծում է հրաշալի պայմաններ քաղաքական, տնտեսական ու մշակութային զարգացման համար: Այն ամուր հիմքեր է նախապատրաստում Հայկական լեռնաշխարհում հետագա միասնական պետականությունների համար:

Վանի թագավորության պետական կարգը: Վանի տերությունը փաստորեն ծնունդ առավ Նաիրյան

Վաղ շրջանի պետական կազմավորումներ Հայաստանում

համադաշնությունից: Համադաշնությունների համակարգը բնորոշ էր Հայկական լեռնաշխարհին՝ սկսած Ք.ա. III հազարամյակից. հիշենք 17 երկրների դաշինքը Ք.ա. XXIII-XXII դդ. եւ Նաիրյան երկրների համադաշնությունները Ք.ա. II հազարամյակում:

Վանի թագավորությունը, ստեղծվելով որպես Հայաստանի հարավային իշխանությունների համադաշնություն, կարեւորագույն դեր խաղաց հայկական պետականության պատմության մեջ: Հենց այս թագավորության ժամանակաշրջանում տեղի ունեցավ դարակազմիկ փոփոխությունը հայոց պետականության պատմության մեջ՝ բազմաթիվ իշխանությունների համադաշնությունից անցումը կենտրոնացված պետության: Այս երեւույթը տեղի ունեցավ Ք.ա. VIII-VII դարերում:

Պետության կառավարման ոլորտում շատ կարեւոր այդ անցումը նկատվում է Սարդուրի II-ի կառավարման շրջանում, երբ նա սկսում է վերացնել կախյալ (նաեւ՝ «դաշնակից» համարվող) թագավորություններն ու իշխանությունները՝ վերածելով դրանք պետության վարչական միավորների:

Ռուսա I-ը շարունակեց քայլերը գերկենտրոնացված պետություն ստեղծելու ճանապարհին: Նա, մասնատելով նախկին նահանգները, ձեւավորեց մարզային կառավարման նոր համակարգ, որում սահմանափակվեցին փոխարքաների իրավունքները: Կարեւոր նորամուծություններից մեկը պետական կայուն աշխատակազմի կազմավորումն էր մայրաքաղաքում եւ մարզային խոշոր կենտրոններում՝ ձեւավորելով կառավարման բազմաստիճան համակարգ՝ իր մեծաթիվ պաշտոնեությամբ:

Ռուսա II-ի օրոք այս գործընթացը լիովին ավարտվեց: Նա անցկացրեց վարչական նոր փոփոխություններ, երկիրը վերստին բաժանվեց փոխարքայությունների, ընդ որում՝ պաշտոնեության միջին եւ ցածր օղակներում ներգրավվեցին տեղական բնակչության ներկայացուցիչները: Ստեղծվեց կուռ համակարգով կենտրոնացված միապետություն, որի սկզբունքները պահպանվեցին ավելի քան մեկ հազարամյակ՝ մինչեւ Արշակունյաց թագավորության անկումը 428 թվականին:

Վանի թագավորությունը հինարեւելյան տիպի բացարձակ միապետություն էր: Պետության գլուխ կանգնած թագավորի իշխանությունն անսահմանափակ էր եւ ժառանգական՝ հորից ավագ որդուն: Նրա ձեռքում էին կենտրոնացված երկրի գերագույն իշխանությունը, դատավարությունը, զինված ուժերի հրամանատարությունը եւ այլն: Թագավորը համարվում էր գերագույն աստված Խալդիի ներկայացուցիչը երկրի վրա եւ իր բոլոր գործերը կատարում էր նրա անունից:

Թագավորին կից գործում էր Ավագների խորհուրդը, որի մեջ մտնողները համարվում էին արքայի «խորհրդականներ»:

Վարչական առումով պետությունը բաժանվում էր խոշոր մարզերի, որոնք կառավարվում էին արքունի կառավարիչների կողմից: Նվաճված երկրներում իշխանությունը կարող էր թողնվել նախկին թագավորին կամ ցեղապետին, որը պարտավորվում էր հարկ վճարել եւ իր զորքով մասնակցել Վանի տիրակալի արշավանքներին:

Արձանագրություններում հիշատակվում են մի շարք գործակալությունների անվանումներ՝ «աշխարհակալ», «գավառակալ», «սահմանապահ կուսակալ», «զորահրամանատար», «քրմապետ», արքունիքի սպասավորներ՝ «դպրապետ», «կնքապահ», «գանձապահ», «հաշվի մարդ», «ցանքսի մարդ», «ավագ հովիվ», «որսապետ», «հացթուխ» եւ այլն: Մեծ թիվ էին կազմում պետական համակարգի պաշտոնեությունն ու սպասարկու անձնակազմը: Օրինակ՝ Տուշպայի մոտ գտնվող Ռուսախինիլի քաղաքի արքունի պալատը սպասարկող անձնակազմը բաղկացած էր 5507 հոգուց (նրանցից 119-ը գրագիրներ էին եւ ենթարկվում էին «հաշվի մարդուն»):

Թագավորության բանակը: Կառավարման համակարգին զուգահեռ բարեփոխումներ իրականացվեցին նաեւ բանակում: Դեռեւս Իշպուինիի եւ Մենուայի օրոք սկսվել էր դաշնային զորաջոկատների եւ աշխարհազորի փոխարինումն արհեստավարժ զինվորականությամբ: Նրանց ստեղծած արհեստավարժ բանակի կազմում Ռուսա I-ի օրոք առանձնացվեց «արքայական գունդը» (հեծյալ զորամիավորումներից բաղկացած ընտրյալ ուժեր), ձեւավորվեցին «մարզային զորքերը»:

Զինված ուժերի կորիզը կազմում էր արքունի մշտական զորաբանակը, որը խաղաղ պայմաններում տեղակայվում էր արքունական բերդերում, ամրոցներում եւ սահմանային զորանոցներում: Պատերազմների ժամանակ արքունի զորաբանակին միանում էին իշխանությունների զորամասերը, դաշնակից երկրների զինված ուժերը, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաեւ աշխարհազորային գնդերը:

Բանակը կազմված էր հետեւակից, հեծելազորից եւ մարտակառքերից: Այն բաժանված էր 3-հազարանոց գնդերի, որոնք իրենց հերթին կազմված էին 50-ական զինվորից բաղկացած վաշտերից:

Տերության ամենամեծ ընդարձակման տարիներին՝ Սարդուրի II-ի օրոք, երբ սահմանները ձգվում էին չորս ծովերի միջեւ, «Սարդուրյան տարեգրության» համաձայն՝ զինված ուժերի ընդհանուր թիվը շուրջ 350 հազար էր: Այս թվի մեջ ներառված են նաեւ նվաճված ու հարկատու երկրների զինված ուժերը:

Զորքի գերագույն հրամանատարն արքան էր: Պատերազմի ժամանակ նրան օգնում էին առաջին եւ երկրորդ սպարապետերը: Հիշատակվում են «գնդապետեր», «հարյուրապետեր», «հիսնապետեր» եւ «տասնապետեր»:

Բանակը ստորաբաժանվում էր ըստ զինվածության եւ մարտական հմտությունների՝ սակրավորների, սուսերավորների, նիզակավորների, աղեղնավորների, հետախույզների եւ այլն:

Արքաների կողմից կազմակերպվում էին զինախաղեր եւ մրցություններ:

Ուրարտուի զորաբանակում օգտագործում էին երաժշտական փողային գործիքներ եւ թմբուկներ՝ իրենց մարտիկներին ոգեւորելու եւ հակառակորդին ահաբեկելու նպատակով: Ուրարտուի բերդապահները, խարույկ վառելով, ազդանշան էին տալիս, հեռավոր տարածություններից միմյանց հաղորդում թշնամու զորքերի տեղաշարժերի մասին:

Պատերազմը Վանի թագավորության համար ստրուկների ձեռքբերման հիմնական աղբյուրն էր: Միայն Արգիշտի I եւ Սարդուրի II արքաների օրոք նվաճված երկրներից բերվել են կես միլիոնից ավելի ռազմագերի ստրուկներ: Ստրուկներն աշխատում էին քաղաքների ու ամրոցների, տաճարների, ջրանցքների ու ճանապարհների կառուցման ու նորոգման վրա:

Էջեր հայ ժողովրդի պատմությունից

Հայաստանի առաջին հանրապետությունը

Հայաստանի 1-ին հանրապետության պետական դրոշը

Հայաստանի 1-ին հանրապետության պետական զինանշանը

Հայտարարություն

Անդրկովկասի քաղաքական ամբողջության լուծումով եւ Վրաստանի ու Ադրբեջանի անկախության հռչակումով ստեղծված նոր դրության հանդեպ, Հայոց ազգային խորհուրդը իրեն հայտարարում է հայկական գավառների գերագույն եւ միակ իշխանություն: Որոշ ծանրակշիռ պատճառներով թողնելով մոտիկ օրերը կազմել հայոց ազգային կառավարություն, Ազգային խորհուրդը ժամանակավորապես ստանձնում է կառավարական բոլոր ֆունկցիաները՝ հայկական գավառների քաղաքական եւ վարչական ղեկը վարելու համար:

Հայոց ազգ. խորհուրդ
1918թ. մայիս 30 Թիֆլիս

Հայոց ազգային երգը

Մեր հայրենիք թշուառ, անտէր
Մեր թշնամուց ոտնակոխ,
Իր որդիքը արդ կանչում է
Հանել իր վրէժ, քէն ու ոխ:

Ահա՛ եղբայր, քեզ մի դրօշ,
Որ իմ ձեռքով գործեցի,
Գիշերները ես քուն չեղայ,
Արտասուքով լուացի:

Ամենայն տեղ մահը մի է,
Մարդ մի անգամ պիտ մեռնի,
Բայց երանի՝ որ իր ազգին
Ազատութեան կը զոհուի:

ՄԻՔԱՅԵԼ ԵՍԱՅԵԱՆ

Հայաստանի Հանրապետության հռչակումից հետո ղեկավարել է երկիրը մինչեւ 1918 թ.-ի հուլիսի 23-ը, երբ Երեւան ժամանեց Թիֆլիսում ստեղծված Հայաստանի Հանրապետության կառավարությունը Հովհաննես Քաջազնունու գլխավորությամբ: Նոր կառավարության մեջ Մանուկյանը ներքին գործերի նախարար էր եւ այդ պաշտոնը վարել է մինչեւ մահը, իսկ աշխատանքի եւ խնամատարության նախարար Խաչատուր Կարճիկյանի սպանությունից հետո, մոտ մեկ ամիս՝ 1918 թ.-ի նոյեմբերի 15-ից-1918 թ.-ի դեկտեմբերի 13-ը հանրային խնամատարության եւ աշխատանքի նախարարի պաշտոնակատարն էր: Մահացել է 1919 թ.-ի հունվարի 29-ին բծավոր տիֆից:

Արամ Մանուկյան (Սարգիս (Սերգեյ) Հարությունի Հովհաննիսյան), Արամ, Արամ փաշա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏՆԵՐԸ



ՀՈՎՀԱՆՆԵՍ ՔԱՋԱԶՆՈՒՆԻ
ՀՀ առաջին վարչապետ

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԽԱՏԻՍՅԱՆ
ՀՀ երկրորդ վարչապետ

ՀԱՄՈ ՕՀԱՆՋԱՆՅԱՆ
ՀՀ երրորդ վարչապետ

ՍԻՄՈՆ ՎՐԱՑՅԱՆ
ՀՀ չորրորդ վարչապետ

Հայաստանի երկրորդ հանրապետության առաջնորդները

Խորհրդային Հայաստանի առաջնորդները

Ալեքսանդր Մյասնիկյան (Հայաստանի կառավարության նախագահ եւ ռազմական գործերի ժողկոմ 1921-25թթ.)

Գեւորգ Սարգսի Ալիխանյան (Հայաստանի կոմկուսի կենտկոմի 1-ին քարտուղար 1920-21թթ.)

Աշոտ Գարեգինի Հովհաննիսյան (Հայաստանի կոմկուսի կենտկոմի 1-ին քարտուղար 1922-27թթ.)

Հայկ Ալեքսանդրի Հովսեփյան (Հայաստանի կոմկուսի կենտկոմի 1-ին քարտուղար 1927-28թթ.)

Հայկազ Արշակի Կոստանյան (Հայաստանի կոմկուսի կենտկոմի 1-ին քարտուղար 1928-30թթ.)

Աղասի Ղեւոնդի Խանջյան (Հայաստանի կոմկուսի կենտկոմի 1-ին քարտուղար 1930-36թթ.)

Ամատունի Սիմոնի (Վարդապետյան) Ամատունի (Հայաստանի կոմկուսի կենտկոմի 1-ին քարտուղար 1936-37թթ.)

Գրիգոր Արտեմի Հարությունյան (Հարութինով) (Հայաստանի կոմկուսի կենտկոմի 1-ին քարտուղար 1937-53թթ.)

Սուրեն Հակոբի Թովմասյան (Հայաստանի կոմկուսի կենտկոմի 1-ին քարտուղար 1953-60թթ.)

Յակով Նիկիտի Զարոբյան (Հայաստանի կոմկուսի կենտկոմի 1-ին քարտուղար 1960-66թթ.)

Անտոն Երվանդի Քոչինյան (Հայաստանի կոմկուսի կենտկոմի 1-ին քարտուղար 1966-74թթ.)

Կարեն Սերոբի Դեմիրճյան (Հայաստանի կոմկուսի կենտկոմի 1-ին քարտուղար 1974-88թթ.)

Սուրեն Գուրգենի Հարությունյան (Հայաստանի կոմկուսի կենտկոմի 1-ին քարտուղար 1988-1990թթ.)

Հայոց ինքնիշխանությունը Սյունիքում

ՍՏԵՓԱՆՈՍ ՕՐԲԵԼՅԱՆ



Սյունիքի թագավորությունը

êÛáõÝÛ³ó ÇßË³ÝÝ»ñÇ (Ñ³çáñ¹³Ï³Ý) Ï³ñ·Á »õ Ýñ³Ýó Ã³·³íáñ»ÉÁ í»ñçÇÝ Å³Ù³Ý³ ÏÝ»ñáõÙ. ³Ù÷á÷ ï»Õ»ÏáõÃÛáõÝÝ»ñ

Ո՛վ պատվական ընթերցող, այժմ լսի՛ր ինձ, եւ ես քեզ կպատմեմ պանծալի բաներ. քանի որ Սիսական տոհմը, որ սերվում է Հայկից, մի ժամանակ միավորված էր Արշակունի եւ Պահլավիկ թագավորական ցեղին, երբեմն առնչվում էր Խազիրների թագավորության, իսկ ամենից հետո՝ Բագրատունիների հետ, երբեք չընդոստացավ հայրենի իշխանությունների դեմ: Իսկ երկար ժամանակ անց, երբ դուռ բացեցին նախ Արծրունիները՝ թագադիր լինելով (846) ընդդեմ հայոց թագավոր Սմբատի (847), թագադիր եղան նաեւ Վրաց բդեշխ Ատրներսեհն ու Աղվանից Համամը, Ափշինը մեծարանքով (առաջարկեց) թագադիր լինել Վասակ Սյունիին, բայց սա չկամեցավ ապստամբի անուն վաստակել:

Ապա երբ թուլացավ Բագրատունիների իշխանությունը, եւ ուժեղացավ արաբական բռնությունը, տրոհվելով անջատվեցին երկրի բոլոր գլխավոր նախարարական գահերը՝ Վասպուրականինը, վրացականը, աղվանականը, Կյուրիկյան կոչված ծորագետցիներինը (848), ինչպես նաեւ Կարս-Վանանդինը (849), որ Բասյանք է կոչվում:

Ապա Աշոտի որդի Սահակի որդի Սմբատը (850), որ ամուսնացած էր Աղվանից մեծ ու փառաբանված իշխան Սեւադայի Շահանդուխտ անվամբ դստեր հետ, իր թոռ Կատրամիդեին՝ իրենից հետո թագավոր դարձած իր Վասակ որդու դստերը, կնության էր տվել Աշոտի որդի Գագիկ թագավորին (851), որը եւ կառուցեց Անիի մեծ կաթողիկե սքանչելի, հոյաշեն եկեղեցին (852): Սմբատը կապված է Ատրպատական աշխարհի Թավրիզի մեծ աթաբեկի, Դերբենդի կիրճին (853) տիրող Ռան ամիրայի, ինչպես նաեւ Աղվանքի իշխանների հետ: Սրանք բոլորով (իրենց տածած) առավել սիրուց ծանուցում են Խորասանի (854) մեծ սուլթանին, ստանում նրա թույլտվությունը եւ թագադրում այն գեղեցկահասակ ու վայելչագիսակ հայկազուն մարդուն՝ Սյունյաց իշխան Սմբատին: Այն ժամանակ Բագրատունիներն իշխում էին միայն Շիրակին ու Այրարատին՝ մինչեւ Գեղարքունիք, Ուխտիք (855), Կարին (856), Վասպուրականի սահմանը, Ջորագետ (857) ու Գարդման (858), իսկ Սյունիքը կտրված էր նրանցից: Այդ պատճառով էլ Սմբատը քրեական մեղք չհամարեց: Եթե Բագրատունիները, որ գերեվարությամբ բերված էին Հրաչեից, արժանի գտնվեցին դրան, ապա որքա՜ն առավել արժանի էին սրանք, որ Հայկից ակնհայտ հարազատությամբ որդիները հայրերին փոխարինելով բնիկ իշխանությամբ եկել-հասել են մինչեւ այժմյան ժամանակները: Արդ՝ Սմբատը թագադրվելով ճոխ ու երեւելի փառքով կազմակերպում է թագավորությունը՝ ինքնակալ թագավորների ձեւով: Եվ շատ ճոխություններից ու արքունական երեւելի գործերից հետո վախճանվում է: Նրա դին թաղվում է Տաթեւի աստվածաբնակ աթոռի մեծ սրբարանում՝ համաժողովրդական մարդաշատ հանդեսով:

Նրա իշխանությունը ժառանգում է իր կտրիճ որդի Վասակը, որը եւ մեծահանդես համախմբությամբ, ազատակույտ բազմությամբ օծվում է

Սյունիքի թագավորությունը

Սյունիքի ու Բաղքի թագավոր (859)՝ Սյունյաց եպիսկոպոս Տեր Գրիգորի ձեռքով: Նա իր Սեւադա եղբորը դարձնում է իր ազատակույտ զորքերի իշխանաց իշխան: Սրանց մայրը՝ երանելի թագուհի Շահանդուխտը, (դեռ) կենդանի էր: Սա, աստվածային մի հիշեցումից մղված, շինում է Վաղատնի գեղեցկակերտ ու վայելչաձեւ վանքը (860), որը դեռ վաղուց ուխտադիր մարդկանց վայր էր, որովհետեւ այնտեղ վաղ ժամանակներից մի եկեղեցի կար սուրբ Գրիգոր Լուսավորչի անունով, որը կարծեմ նրա կողմից էլ հիմնադրված էր, հետո [վերա]շինված Ստեփանոս հոր եւ սուրբ ճգնավորի կողմից: Այն բուժում էր թունավոր օձերից խայթվածներին, ինչպես որ Փարպու եկեղեցին է բուժում մարդու եւ անասունի անբուժելի կատաղի ցավը: Այստեղ հենց այժմ էլ տեսնում ենք անպատմելի հրաշքներ. թունավոր (զեռուններից) խայթված, սեւացած ու պայթելու աստիճան ուռածներին հանում են բարձրադիր լեռները, ցույց են տալիս վանքը եւ կամ եկեղեցուց մի քիչ հող են հասցնում, մակարդված թույնն իսկույն քայքայվում է, ու հիվանդը՝ բուժվում:

Այդ պատճառով մեծ բարեպաշտ Շահանդուխտը կոփածո քարերով եկեղեցի է շինում՝ սուրբ նախավկա Ստեփանոսի անունով, հայոց չորս հարյուր քառասունինը թվականին (861), այնտեղ հաստատում է կրոնավորների ու վանքի բազմաթիվ սպասավորների տուն: Եկեղեցու բակում շինում է նաեւ աղոթատուն՝ կրաշաղախ քարե շարվածքով, ինչպես նաեւ պահեստներ, արհեստանոցներ, եւ վանքը շրջափակում պարսպով: Վանքի համար սահմաններ է առանձնացնում Վաղատնից, նրան է հանձնում Գոմեր ագարակը (862): Զանազան զարդերով պայծառապես զարդարում է եկեղեցին: Ինքն էլ վախճանվելով թաղվում է նույն սրբարանի բակում: Ապա որոշ տարիներ անց, չորս հարյուր հիսունհինգ թվականին (863), Սեւադան՝ նույն Շահանդուխտի որդին եւ Վասակ թագավորի եղբայրը, մեծ ջանքերով կառուցում է մի եկեղեցի՝ խիստ պայծառ, գեղեցկակերտ, գմբեթահարկ՝ սուրբ Կարապետի անունով, նրա բակում էլ՝ մի գավիթ: Նույն բակում իրենք են հանգչում: Նրանց հիշատակն օրհնությամբ լինի, եւ վարձը՝ բյուրապատիկ մեր Քրիստոս աստծուց:

Ծանոթագրություն

846. Խոսքը վերաբերում է Հայաստանի կենտրոնական թագավորությանը հակադիր Վասպուրականի Արծրունյաց թագավորության հիմնադրմանը (էջ 250):

847. Խոսքը վերաբերում է Սմբատ 1-ին Բագրատունի թագավորին (890-914թթ.) (էջ 256):

848. Հայոց Սմբատ 2-րդ Բագրատունի թագավորի (977-990թթ.) ժամանակ նրա եղբայր Գուրգենը, որ իշխում էր իրեն բաժին ընկած Լոռում, ըմբոստացավ Անիի թագավորության դեմ եւ Գուգարքն անջատեց նրանից: Սրա որդի իշխան Դավիթը (Անհողին) 989 թվականին իրեն հայտարարեց թագավոր: Այսպիսով հիմք դրվեց Գուգարքի թագավորության, որն սկզբում կոչվում էր Զորագետի կամ Լոռու, հետագայում՝ նաեւ Կյուրիկյան թագավորություն (էջ 256):

849. Բասյանքի (Կարս-Վանանդի) թագավորությունը հիմնադրեց Աշոտ 3-րդ թագավորի եղբայր Մուշեղը: Սա Հայաստանի սպարապետն էր: Երբ 962 թվականին արքունիքը Կարսից փոխադրվեց Անի, Մուշեղը չենթարկվեց թագավորին, մնաց Կարսում եւ իրեն հայտարարեց թագավոր՝ իշխելով մինչեւ 984 թվականը: Նրան հաջորդեց իր որդի Աբասը (էջ 256):

850. Հմմտ. ծան. 830 (էջ 256):

851. Գագիկ 1-ին Բագրատունի թագավորն է, Աշոտ 3-րդ Ողորմածի որդին է, որը հաջորդեց իր եղբայր Սմբատ թագավորին եւ իշխեց 990-1020թթ. (էջ 256):

852. Ս. Գրիգոր անունով կոչված այդ հռչակավոր եկեղեցին կառուցվել է 1000 թվականին, նրա առաջ դրված է եղել Գագիկի արձանը (էջ 256):

853. Սա այժմ ընդգրկված է Դաղստանի ԻՍՍՀ-ի տարածքի մեջ (էջ 257):

854. Խորասանը Պարսկաստանի ընդարձակ նահանգներից մեկն է՝ երկրի հյուսիսարեւելյան մասում: Ժամանակին այստեղ էր նստում մեծ սուլթանը (էջ 257):

855. Ուտիք անվան տակ պատմիչը նկատի ունի Տայքը, որը մեծ Հայքի 14-րդ նահանգն էր: Ուտիք անունը պահպանվել է այժմյան Օլթի քաղաքի անվան մեջ: Օլթին եղել է նահանգի կենտրոնը (այժմ՝ Թուրքիայում) (էջ 257):

856. Կարինը Բարձր Հայքի 9-րդ գավառն էր՝ համանուն կենտրոնով: Այժմյան Էրզրումի սանջակը Թուրքիայում (էջ 257):

857. Զորագետը այժմյան Դեբեդ գետի շրջակա տարածքն է՝ գետի հին անվամբ: Հետագայում սխալմամբ Զորագետ են անվանել Տաշրա ջուր գետը (տե՛ս Ս.Տ.Երեմյան, «Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 63) (էջ 257):

858. Տե՛ս ծան. 461 (էջ 257):

859. Սյունյաց Սմբատ 1-ին թագավորի որդի այս Վասակ 1-ինը Սյունիքի երկրորդ թագավորն էր, որ գահ էր բարձրացել մոտավորապես 998թ.: Սա էր Գագիկ 1-ին Բագրատունի թագավորի աները, նրան կնության էր տրվել իր դուստր Կատրամիդեին դեռ Սմբատի կենդանության օրոք (էջ 257):

860. Վաղատնի (Վաղադնի) վանքը, որ կոչվում է նաեւ Որոտնավանք, գտնվում է այժմյան Սիսիանի շրջանի Վաղուդի գյուղից 2 կիլոմետր հարավ, Որոտան գետի ձախ ափի քարափի վրա: Հնուց այստեղ եկեղեցի է եղել: Այս վանքում 1000 թվականին Շահանդուխտը եկեղեցի է կառուցել ս. Ստեփանոսի անվամբ, ինչպես քիչ վարը տեղեկացնում է նույն պատմիչը: Այնպես որ Շահանդուխտը այնտեղի մեկ եկեղեցու կառուցողն է եւ ոչ թե ամբողջ վանքի: Այստեղ է նաեւ Շահանդուխտի որդի Սեւադայի 1006 թվականին կառուցած եկեղեցին: Այժմ այդ երկու եկեղեցիներն էլ զգալի չափով քանդված են: Կատարվում են վերանորոգման աշխատանքներ (մեր վերջին այցելությունը՝ 1984 թվականի ապրիլի 22) (էջ 257):

861. Այսինքն՝ ընդհանուր 1000 թվականին (էջ 258):

862. Այս Գոմերը հարկացուցակում հիշատակված է Ծղուկ գավառում՝ 7 միավոր հարկաչափով: (էջ 258):

863. Այսինքն՝ ընդհանուր 1006 թվականին (էջ 258):

Սյունիքի պատմություն
Երեւան, 1986

Հայոց ինքնիշխանությունը Սյունիքում

Սյունյաց թագավորության կազմավորումը, անունը եւ սահմանները

ԹԱԴԵՎՈՍ ՀԱԿՈԲՅԱՆ

X դարի երկրորդ կեսին Բագրատունյաց թագավորությունը, ինչպես հայտնի է, մի շարք ներքին եւ արտաքին պայմանների շնորհիվ մասնատվեց երեք մասի՝ Անի-Շիրակի, Կարսի կամ Վանանդի եւ Լոռու կամ Տաշիր-Ջորագետի: Դրանից դեռ շատ առաջ Բագրատունիների մի ճյուղը հաստատվել էր Տայքում (հավանաբար Բյուզանդիայի հովանավորությամբ), կազմակերպելով կյուրապաղատություն:

10-րդ դարի առաջին տասնամյակում (908/909թ.) Վասպուրականի Արծրունյաց իշխանները, Ատրպատականի Յուսուֆ էմիրի անմիջական համաձայնությամբ եւ օժանդակությամբ, հիմնադրեցին իրենց թագավորությունը:

Բացի այս համեմատաբար խոշոր տերություններից, Հայկական լեռնաշխարհի տարբեր անկյուններում կային բազմաթիվ հայկական մանր իշխանություններ, որոնք, անգամ սելջուկների արշավանքներից հետո, տեղ-տեղ պահպանեցին իրենց գոյությունը (1):

Այդպիսի մանր իշխանություններ էին հաստատվել նաեւ լեռնային Արցախում, որը, մոտավորապես այդ ժամանակներից սկսած, հայտնի է դառնում Խաչեն անունով: Նրա հարավային մասում հաստատվել էր Աբու-Մուսեի փոքրիկ թագավորությունը, իսկ Վերին Խաչենում եւ նրա սահմանակից Փառիսոս գավառում՝ մի քանի այլ «արքայիկների հարստություններ» (2):

10-րդ դարի երկրորդ կեսին Սյունյաց աշխարհում եւս կազմավորվում է մի թագավորություն: Նրա հիմնադրման ճշգրիտ թիվը հայտնի չէ: Օրբելյանն իր պատմության մեջ, ուր մի գլուխ (ԾԹ) ամբողջովին նվիրել է Սյունյաց թագավորների մասին տեղեկություններ հաղորդելուն, թագավորության կազմավորման թվականի մասին ոչինչ չի հիշատակում: Ենթադրվում է, որ այդ թագավորությունը հիմնադրվել է մոտավորապես 970 թվականին (3): Առաջին թագավորի մասին Օրբելյանը գրում է. «Արդ առաջին թագաւորեաց ի Սիսական աշխարհս արին եւ քաջն, հզօր եւ բարեպաշտ արքայն Սմբատ՝ որդի Սահակայ՝ եղբօրն Սմբատայ, որք էին որդիք բարեպաշտին Աշոտոյ՝ եղբօր մեծին Վասակայ որ Իշխանիկ կոչիւր. եւ սոքա որդիք երանելւոյն Փիլիպպէի՝ եղբօր Սահակայ որ ի Դվին սպանաւ ի պատերազմին Հաւլայ ամիրային, որդիք Վասակայ՝ մեծ նահապետին Սիւնեաց» (4):

Ինչպես տեսնում ենք, առաջին թագավորը Սահակի որդի Սմբատն էր: Սահակը, ինչպես եւ իր եղբայր Սմբատը, Սյունյաց գահերեց կամ գահագլուխ իշխանական տան սերնդից էին: Էմիրի այն կարծիքը, թե «Կապանում նստողը (Կապանում նստող թագավորը-Թ.Հ.) Գեղարքունիքի Հայկազուն իշխաններից էր» (5), պարզապես թյուրիմացության արդյունք է: Թվում է, թե Էմիրի մոտ այդ սխալը առաջացել է Վարդան վարդապետի հետեւյալ հիշատակությունից. «Ի հինգ հարիւր քառասուն եւ երեք (1094թ.) թուին առաքեաց Փատ-

Հայոց ինքնիշխանությունը Սյունիքում

Թագավորության մայրաքաղաք Կապանն այսօր

լուն ամիրայն Գանձակայ զՎասակ Պահլաւ՝ որդի Գրիգորոյ Մագիստրոսի, ամենայն զօրօքն Առանայ, յանառիկ յամուրսն Բաղաց եւ Կապանին, որ եւ խաբէութեամբ հնարեալ մտին անդր, եւ սպանեալ զՍենեքերիմ արքայն Հայկազնի, զի թագաւորքն որ անդ՝ հայկականք էին. եւ ոչ բարձաւ մինչ ի յետին աւուրս եղելոյ երկուց եղբարց անզաւակաց, Սմբատայ եւ Գրիգորոյ, որ առեալ զմանուկն Սենեքերիմ հայազարմ՝ եդին թագաւոր ժառանգորդ իւրեանց. զոր եւ սպանեալ հրամանաւ Փատլնոյ շիջաւ ճրագն որ անդ, եւ տիրեցին Պարսք» (6): Սրանից, սակայն, բնավ չի կարելի եզրակացնել, թե Սենեքերիմը Գեղամա լճի ավազանում տիրող Հայկազուն իշխանների սերնդից էր: Հավանաբար պատմիչը Սենեքերիմ արքային «Հայկազն» է անվանում միայն ցույց տալու համար, որ նա հայ էր, Հայկի սերնդից:

Սյունիքում ստեղծված թագավորությունը տարբեր պատմիչների մոտ տարբեր կերպ է անվանվում: Մատթեոս Ուռհայեցին անվանում է «թագաւորն Կապանին» (7): Այդ նշանակում է, որ պատմիչին թագավորությունը հայտնի է եղել նրա մայրաքաղաքի՝ Կապանի անունով: Վարդան վարդապետը չի հիշատակում թագավորության անունը, սակայն նրա անուղղակի ակնարկներից պարզ երեւում է, որ նրան նույնպես թագավորությունը հայտնի էր Կապան մայրաքաղաքի անվամբ (8): Սյունյաց տան պատմիչ Ստեփանոս Օրբելյանը, որն ավելի տեղյակ է եւ ավելի շատ վկայություններ ունի Սյունիքում ստեղծված թագավորության մասին, այն երբեմն անվանում է «Բաղաց», երբեմն էլ «Սիւնեաց», իսկ ամենից հաճախ՝ «Սիւնեաց եւ Բաղաց»:

Նկատի ունենալով, որ Կապանը մինչեւ վերջ չի մնացել որպես մայրաքաղաք, մենք ճիշտ ենք համարում թագավորությունը կոչել Սյունիքի կամ «Սյունյաց եւ Բաղաց» թագավորություն:

Սյունյաց թագավորության գրաված տերիտորիայի վերաբերյալ մեզ հասած տեղեկությունները չափազանց անորոշ են:

Սյունյաց թագավորությունը, կազմավորված լինելով Սյունիք աշխարհում, իր գրաված տերիտորիայով, բնականաբար, պետք է համապատասխաներ կամ ամբողջ Սյունիք աշխարհին, կամ թե, համենայն դեպս, նրա մի մասին:

Աղբյուրների մանրազնին ուսումնասիրությունը մեզ բերեց այն համոզման, որ թագավորության կազմավորման հենց սկզբից էլ նրա տերիտորիայից դուրս է մնացել Գեղամա երկիրը (Գեղարքունիք եւ Սոտք գավառները): Մեր այդ եզրակացությունն անառարկելի դարձնելու համար բերենք մի քանի փաստեր:

Օրբելյանը Սյունյաց թագավորության հիմնադրման մասին գրում է.

«Եւ զի յայնմ ժամանակի

Հայոց ինքնիշխանությունը Սյունիքում

Բագրատունիքն իշխէին միայն Շիրակայ եւ Այրարատու մինչ ի Գեղամ եւ մինչ ի յՈւխտիսն եւ մինչ ի Կարին եւ մինչ ի Վասպուրականի սահմանն եւ մինչ ի Ձորոյ գետն եւ մինչ ի Գարդման. եւ Սիւնիք կտրեալ էր ի նոցանէ. վասն որոյ ոչ ինչ քրէական մեղս համարեցաւ Սմբատ. զի թէ Բագրատունիքն (որք) գերութեամբ իմն ածեալ էին Հրաչէէ՝ այնմ արժանի գտան, ապա քանի՞ եւս առաւել սոցա անկ էր որ ի Հայկայ երեւելի հարազատութեամբ որդիք զհարս փոխանակելով՝ բնիկ տէրութեամբ եկեալ, հասեալ էին մինչեւ ցայժմ: Արդ՝ թագ կապեալ Սմբատայ ճոխ եւ երեւելի փառօք յարդարէր զարքայութիւնն ըստ օրինի ինքնակալ թագաւորաց» (9):

Պատմիչը Սյունյաց Սմբատ իշխանի անջատվելը եւ առանձին թագավորություն հիմնադրելը արդարացնելու համար ունի աչառու վերաբերմունք, ինչպես նշում է պրոֆեսոր Մ. Աբեղյանը (10):

Նա Բագրատունյաց թագավորների տիրապետության շրջանների արեւելյան սահմանը հասցնում է մինչեւ Գեղամա լեռները եւ Սմբատ իշխանի կենտրոնախույս գործողությունները արդարացնում նրանով, որ իբր Սյունիքն անջատված էր Բագրատունիներից: Բերված վկայությունը եթե իրոք միտումնավոր չլիներ, ապա առանց սխալվելու պետք է ասեինք, որ Գեղամա լճի շուրջը գտնվող գավառները կազմեցին Սյունյաց թագավորության մասը: Սակայն հարցն ավելի պարզվում է, երբ դիմում ենք Օրբելյանի այն վկայություններին, որոնցում նա առանձին շահագրգռվածություն չուներ կեղծելու իրական փաստերը: Սյունյաց թագավորության վերաբերյալ խոսելիս նա որեւէ ակնարկ չունի այն մասին, թե Գեղարքունիքն ու Սոտքը երբեւէ եղել են թագավորության տերիտորիայի մեջ մտնող շրջաններ:

Թե՛ Վարդան վարդապետը եւ թե՛ Ստ.Օրբելյանը նշում են թագավորության մեջ մտնող մի շարք բերդեր (11), որոնցից եւ ոչ մեկը չէր գտնվում Գեղամա երկրում:

Ասողիկը, որ ժամանակակից էր Գագիկ առաջինին, գրում է. «Իսկ Գագիկ յաւուրս մանկութեան իւրոյ յորժամ շրջէր նա ի գաւառին Գեղամայ՝ տայ նմա (Սարգիս վանականին-Թ.Հ.) տեղի եւ վանս բնակութեան զվանսն, որ յաղագս ծագման իրիք լուսոյ աստուածայնոյ՝ Շողագայ անուանի: Եւ ապա ի թագաւորիլն բոլոր Հայաստանեայցս՝ դարձեալ ի նոյն տեղի սննդեան իւրոյ, ի վանս Սեւանայ օծեալ՝ զհայրութեան եւ զառաջնորդութեան պատիւն նմա տալ: Որ եւ ամենայնիւ յամենայնի ընտիր գտեալ բարւօք վերակացութեամբ՝ հաճոյանար Աստուծոյ եւ մարդկան» (12): Ինչպես երեւում է, 10-րդ դարի երկրորդ կեսում Բագրատունյաց թագաժառանգ Գագիկը մանկության հասակում Գեղամա երկրում շրջելիս Սարգիս վանականին տալիս է բնակության տեղ: Դրանից դժվար չէ եզրակացնել, որ Գեղամա երկիրը (Գեղարքունիք եւ Սոտք գավառները) պատկանում էր Անի-Շիրակի Բագրատունյաց թագավորներին. այլապես Գագիկը չէր կարող այդ երկրից որեւէ տեղ նվիրել այս կամ այն անձնավորությանը:

Մենք նախորդ գլխում տեսանք, որ 10-րդ դարի առաջին քառորդում Սյունյաց գահերեց իշխանական տան Սմբատ, Սահակ եւ Բաբգեն իշխանները, որոնք եղբայրներ էին, ամբողջ Սյունիքը, առանց Գեղամա լճի շուրջը գտնվող գավառների, բաժանել էին իրար մեջ: Սմբատին բաժին էր ընկել Վայոց ձոր եւ Ճահուկ գավառները, իսկ Սահակին եւ Բարգենին՝ Ծղուկքը, Բաղքը եւ դրանց շուրջը գտնվող մյուս գավառները:

Այդ իշխանների կատարած գործերի եւ վախճանի մասին Սյունյաց տան պատմիչ Օրբելյանը ունի մի քանի հիշատակություններ, որոնցից մեջ բերենք հետեւյալը. «Իսկ Սմբատայ եղբայրն կրտսեր Վասակ մեռանի ի պատերազմին Գողթան ամիրային առ ամրոցին Երնջակայ. եւ ինքն Սմբատ առեալ զգահերէց իշխանութիւնն՝ բազում ցուցեալ գործ գովելի հոգեւոր եւ մարմնական վախճանի եւ թողու ժառանգ իւրոյ պայազատ տէրութեանն զորդի իւր Վասակ: Իսկ Սահակայ՝ եղբօր Սմբատայ, էր որդի Սմբատ անուն, մեռանի Սահակ եւ առնու զիշխանութիւնն իւր Սմբատ որդի իւր: էր եւ ի Բաղս իշխան մի ի սոյն ցեղէ Ձեւանշէր անուն՝ որդի Ձագկայ իշխանին» (13): Քիչ հետո նա շարունակում է. «Մեռանէր եւ Սահակն. դնէր ի դրան Նորատուսայ եկեղեցւոյն: Իսկ Վասակ՝ որդի Սմբատայ, յետ բազում իշխանութեանց եւ գովելի գործոց մեռանի. եւ տիրէր համագունդ աշխարհիս Սիսական Սմբատ՝ որդին Սահակայ, գահերէց իշխանութեամբ» (14):

Բերված վկայության մեջ ասված է, որ Սյունյաց գահերեց իշխան Սմբատի մահից հետո (Ալիշանի հաշիվներով նա մահացել է 958թ., «Սիսական», էջ 16) նրան հաջորդեց իր որդի Վասակը: Վերջինիս իշխանությունը տեւում է մոտ հինգ տարի (15): 963թ. նրան հաջորդում է Սահակի որդի Սմբատը՝ գահերեց իշխանի իրավունքներով, տիրելով ամբողջ Սյունյաց աշխարհին: Բայց այդ վկայությունը որոշակի պատասխան չի տալիս այն հարցին, թե Վայոց ձորն ու Ճահուկը, որ բաժին էին ընկել Սմբատին, իսկ նրանից հետո էլ՝ նրա որդի Վասակին, նույնպե՞ս անցան Սահակի որդի Սմբատին, թե վերջինս Վասակի մահից հետո, ձեռք բերելով գահերեց իշխանի պատիվը, շարունակեց իշխել միայն Ծղուկք, Բաղք եւ սրանց շուրջը գտնվող գավառների վրա, որոնք կազմում էին հոր՝ Սահակի սեփականությունը, իսկ նրա մահից հետո անցան իրեն:

Սակայն պարզ է, որ երբ 963թ. Սմբատը կարգվեց Սյունյաց թագավոր, Վայոց ձոր եւ Ճահուկ գավառները մտան նրա տիրապետության մեջ:

Ավելի ուշ շրջանին պատկանող վկայություններն արդեն հաստատ կերպով ասում են, որ Վայոց ձորը, ամենայն հավանականությամբ նաեւ նրա սահմանակից Ճահուկը, գրավվեց Գագիկ 1-ի (989-1020) կողմից: Ասողիկը, որ ժամանակակից էր Գագիկ թագավորին, այդ մասին հաղորդում է. «Եւ տիրեաց նա (Գագիկը-Թ.Հ.) յոլով բերդից եւ գաւառաց ի սահմանացն Վայոց ձորոյ, Խաչենոյ եւ Փառիսոսոյ՝ առաւել քան զեղբայր իւր. եւ ոչ ոք էր, որ զարհուրեցուցանէր զՀայաստանեայսս մինչեւ ցօր գրելոյ իմոյ զբան յիշատակիս այսորիկ» (16):

Ասողիկը, ինչպես ինքն է ասում (17), իր պատմությունը գրել է 1004 թվականին: Իսկ Վայոց ձորը եւ Ճահուկը Գագիկի կողմից պետք է գրավված լինեին 1003 թվականից առաջ, որովհետեւ Ասողիկն իր պատմությունը վերջացնում է 1003թ. դեպքերով, երբ Գագիկը բազմաթիվ բերդեր ու գավառներ էր գրավել Փառիսոսի եւ Խաչենի կողմերում (18): Սրանց գրավումն անհնար կլիներ, եթե Գագիկը նախօրոք իր ձեռքը չվերցներ դեպի Փառիսոս ու Խաչեն տանող ճանապարհի վրա գտնվող Վայոց ձորը, նրա սահմանակից Ճահուկը, Ծղուկքի հյուսիսային մասն ու Աղահեճք գավառը:

Հայոց ինքնիշխանությունը Սյունիքում

Հետագայում, թագավորության գոյության ամբողջ ընթացքում, չկա որեւէ հիշատակություն այն մասին, թե երբեւէ Վայոց ձորն ու Ճահուկը միացված են եղել Սյունյաց թագավորությանը: Օրբելյանը լավ ծանոթ էր Վայոց ձոր եւ Ճահուկ գավառներին, սակայն նրա պատմության մեջ չկա որեւէ ակնարկ դրանք թագավորության տերիտորիային միացնելու մասին: Թե՛ Օրբելյանի եւ թե՛ Վարդան վարդապետի հիշատակած պատմական վայրերը, որոնք այս կամ այն չափով կապված են եղել թագավորության պատմության հետ, գտնվում են միայն Ծղուկք, Ջորք, Արեւիք, Կովսական, Բաղք եւ Հաբանդ գավառներում:

Թագավորության անկումից հետո (1170թ.) որոշ իշխաններ ապաստան են գտնում Վայոց ձորում: Բերենք պատմիչի խոսքերը. «Իսկ մնացեալ ազատքն Ջուրջն եւ Խոսրովիկն տղայ հասակաւ մեռան ի Նախջաւանի. եւ թաղեցան ի Ճահուկ. եւ եղբօրորդի մի Ջուրջին գնաց փախստական ի քաղաքն Անի Մահեւան անուն, եւ միւս իշխանն Համտուն որ էր որդի մեծ իշխանին Բաղաց Հասանայ, եւ թոռն աւագ Համտունայ, գնաց ի Վայոց ձոր առ փառաւորեալ եղբայրն իւր Տէր Յովհաննէս, որ բնակէր ի խորաձոր անապատին որ Նորավանս կոչի, մերձ Հրաշկաբերդոյն… » (19):

Բաղաբերդի գրավումից հետո Բաղաց Համտուն իշխանի՝ Վայոց ձորում ապաստան գտնելը ցույց է տալիս, որ վերջինս թագավորության տերիտորիայի մասը չէր կազմում:

Նախորդ գլխում տեսանք, որ 10-րդ դարում Գողթնը, Նախիջեւանը եւ Երնջակը չէին մտնում Սյունիքի մեջ: Դրանք, բնականաբար, դուրս էին նաեւ Սյունյաց թագավորության տերիտորիայի սահմաններից:

Այսպիսով, Սյունյաց թագավորությունից հյուսիս-արեւմուտքում դուրս էին մնում նախկին Սյունյաց աշխարհի մասերը կազմող Գեղարքունի, Սոտք, Վայոց ձոր, Ճահուկ, Երնջակ գավառները, ինչպես նաեւ երբեմն նրա մեջ մտնող Նախիջեւանն ու Գողթնը:

Այժմ հարց է առաջանում՝ ի՞նչ գծով էր անցնում արեւմուտքում նրա սահմանը: Օրբելյանի մոտ հիշատակված Սյունյաց թագավորությանը պատկանող բերդերից ամենաարեւմտյանները Կաքավաբերդ, Մեղրի եւ Շլորուտ բերդերն են (20):

Կաքավաբերդի ավերակները գտնվում էին այժմյան Մեղրագետի ակունքների շրջանում: Մեղրի բերդի ավերակները նույնպես գոյություն ունեն եւ գտնվում են այժմյան Մեղրի ավանի հյուսիսային մասում, իսկ Շլորուտն էլ, ինչպես կտեսնենք Ջորք կամ Կապան գավառի մասին խոսելիս, համապատասխանում է այժմյան Վերին Հանդ գյուղի մոտ գտնվող տեղացիների անվանակոչությամբ «Շլրոտ» վայրին:

Հիշված բերդերը, մանավանդ նրանցից Մեղրին եւ Կաքավաբերդը, գրեթե կպած են Սյունյաց լեռների ջրբաժան շարին: Անկասկած՝ հենց Սյունյաց լեռներն էլ, որ ձգվում են միջօրեականի ուղղությամբ մինչեւ Երասխ, հանդիսացել են թագավորության գրաված տերիտորիայի արեւմտյան սահմանը: Նրա սահմաններն այս մասում համընկնում են Արեւիք, Ջորք եւ Ծղուկք գավառների արեւմտյան սահմաններին (21):

Ծայր հարավում թագավորության տերիտորիայի մեջ էին մտնում Արեւիք եւ Գրհամ կամ Կովսական գավառները: Մեր այդ միտքը հաստատելու համար ունենք հետեւյալ փաստերը. ա) Կաքավաբերդ, Մեղրի եւ Կարճեւան բերդերը, որոնք հիշատակված են Վարդանի («Պատմութիւն տիեզերական», էջ 168) եւ Օրբելյանի («Պատմութիւն նահանգին Սիսական», էջ 335) մոտ, պատկանում են Արեւիք գավառին: բ) Թագավորության անկման ժամանակների մասին խոսելիս Օրբելյանը գրում է. «Ի 575 թուականին (1126թ.) եկն ամիր Հարոնն եւ բնաջինջ արար զտուն Կապանին եւ զԱրեւիք գաւառ… » (22):

գ) Սյունյաց թագավորությանը պատկանող նշանավոր բերդերից էր Գրհամը (23): Նախկին Կովսական գավառն այդ ժամանակներում կոչվում էր գլխավոր բերդի անվամբ՝ Գրհամ (Օրբելյան, էջ 17):

Հիշված գավառների հարավային սահմաններն անցնում էին Երասխ գետով (24): Նշանակում է՝ թագավորության հարավային սահմանը, Գողթն ավանից մինչեւ Աղավնո (Հագարի) գետի գետաբերանը, եւս կազմում էր Երասխ գետը:

10-րդ դարի առաջին քառորդում Սյունյաց իշխանները բուն Սյունիքը բաժանել էին իրար մեջ: Սահակ իշխանը ստացել էր արեւելյան մասը՝ մինչեւ Հագարի գետը, «… եւ զի հարթ եւ հաւասար վայելչութեամբ կային իշխանքն Սիւնեաց Սմբատ եւ Սահակ, եւ բաժանեալ էին զհայրենի ժառանգութիւնս աշխարհին, աւագն Սմբատ զաւագագոյն մասն Սիւնեաց ընդ արեւմուտս կողմն եւ զբոլոր Վայոց ձոր ունէր ի բաժնի. իսկ Սահակ՝ ընդ արեւելս մինչ ի Հակարի. բայց փոքրիկն Բաբգէն սակաւ ինչ ունէր մասն ի բաժնի» (25):

Հայաստանում 10-րդ դարի առաջին քառորդի վերջերից սկսած համեմատաբար խաղաղ շրջանը վերաբերում է նաեւ նրա մի մասը կազմող Սյունիքին: Այդ խաղաղության հետեւանքով Սյունիքն արեւելյան կողմից մինչեւ 11-րդ դարի սկիզբը եւ դեռ նրանից հետո էլ տերիտորիալ փոփոխություններ չի կրել:

Այսպիսով, պարզվում է, որ Սյունյաց թագավորության գրաված տերիտորիայի սահմանն արեւելքում ձգվում էր մինչեւ Հագարի գետը, որովհետեւ, ինչպես մենք սույն գլխի սկզբում տեսանք, թագավորությունը կազմավորվել էր Սահակ իշխանի բաժնում, որի սահմանն արեւելքում անցնում էր Հագարի գետով:

Սյունյաց թագավորության արեւելյան սահմանների վերաբերյալ մեր այդ ընդհանուր դիտողությունն անտարակուսելի դարձնելու համար դիմենք Ստեփանոս Օրբելյանի անուղղակի վկայություններին: Նրա մի ակնարկից երեւում է, որ Բաղք գավառն ամբողջությամբ մտնում էր թագավորության տերիտորիայի մեջ. «Եւ ի սուր սուսերի մաշեցան բազմութիւնք քրիստոնէից, եւ բնաւին յաւեր անցաւ տունն Բաղաց… » (26):

«Տունն Բաղաց» ասելով, անշուշտ, պետք է հասկանալ իշխանական տան հետ միասին նաեւ նրա գրաված տերիտորիան: Բաղաց տունը, տերիտորիալ իմաստով, ոչ այլ ինչ է, եթե ոչ ամբողջ Բաղքը, որն իր հերթին բաժանվում էր երկու գավառի՝ Աճենի եւ Քաշունիքի, որոնց արեւելյան սահմանն անցնում էր Հագարի գետով: Հետեւապես եւ թագավորության տերիտորիայի սահմանը՝ Քաշունիք եւ Աճեն գավառների ուղղությամբ, կազմում էր Հագարի գետը:

Բաղքից հյուսիս գտնվում էր Հաբանդ գավառը, որը համապատասխանում է գրեթե այժմյան Գորիսի շրջանին: Օրբելյանի հին վավերագրերից վերցված երկու հիշատակություններից դժվար չէ տեսնել, որ Հաբանդ գավառն ամբողջությամբ մտնում էր թագավորու-

Հայոց ինքնիշխանությունը Սյունիքում

թյան տերիտորիայի մեջ: Ահա այդ հիշատակությունները. ա) «Յանուն Աստուծոյ կամ եղեւ ինձ Շահանդխտոյ՝ դստեր Սեւադայի, տալ ի Համբանդ գաւառի զանուանեալ շէնդ զՏեղ իւր ամենայն բոլոր սահմանովն, լերամբ եւ դաշտիւ եւ այլ մտիւք, զոր իմ թագաւորին Սմբատայ ինձ տուեալ էր, եւ իմ ի կորդոյ շէն դրեալ. եւ ես յետ ելից երանելի թագաւորին իմոյ յաստեացս՝ իւր հոգւոյն ի Տաթեւ ի սուրբ մայրաքաղաքն եւ ի սուրբ նշանն ետու ի ձեռն Տեառն Յակոբայ՝ Սիւնեաց եպիսկոպոսի… » (27): բ) «Իշխան մի Դլեն անուն՝ որդի Խաղբակայ, տայ իւր հայրենի ժառանգութեանցն զխոտ գիւղն եւ զխոտագետոյ մեծ այգին, եւ ի Վժանիս զՇաղկիկ որ է տեղի բազում անդաստանաց, վասն իւր հոգւոյն ի Տէր Յովհաննէս եւ ի սուրբ նշանն. եւ գրէ ինքեան կտակ վճռի… » (28):

Առաջին մեջբերումը վերաբերում է 998 թվականին եւ հանդիսանում է այն վավերագիրը, որ գրված է եղել Շահանդուխտ թագուհու հրամանով՝ իր որդի Վասակի ձեռքով: Երկրորդը՝ 1046 թվականին է վերաբերում:

Ինչպես տեսնում ենք, Տեղ եւ Խոտ գյուղերը մտնում էին թագավորության տերիտորիայի մեջ: Տեղը մինչեւ այժմ էլ գոյություն ունի, գտնվում է Հաբանդ գավառի հյուսիսարեւելյան մասում, գավառի սահմանագծին շատ մոտ եւ ոչ հեռու Հագարի գետից: Իսկ Խոտը, որը նույնպես այժմ կա՛, գտնվում էր Հաբանդի հարավարեւմտյան մասում: Հետեւապես՝ Հաբանդ գավառը մտնում էր Սյունյաց թագավորության մեջ: Ուրեմն թագավորության գրված տերիտորիայի արեւելյան սահմանը՝ Քաշունիք, Բաղք եւ Հաբանդ գավառների ուղղությամբ, անցնում էր Հագարի գետով:

Թագավորության հյուսիսային սահմանների վերաբերյալ մեր սկզբնաղբյուրներում տեղեկություններ չկան: Սյունյաց երկրի այդ մասը, որտեղ տարածվում էին Աղահեճք գավառն ու արեւմուտքից նրան սահմանակից Ծղուկք գավառի հյուսիսային կեսը, առհասարակ քիչ է ծանոթ մեր պատմիչներին, այդ թվում եւ Սյունյաց տան պատմիչ Ստեփանոս Օրբելյանին:

Հյուսիսային սահմանի վերաբերյալ ուղղակի փաստեր չունենալու պատճառով ստիպված ենք բավարարվել չափազանց ընդհանուր դիտողություններով:

Աղահեճք գավառը տարածվում էր Հագարի գետի վերին հոսանքի շրջանում: Նա հարավում սահմանակից էր Հաբանդ գավառին: Աղահեճքում գտնվող բազմաթիվ բերդերից, վանքերից եւ բնակավայրերից ոչ մեկը սկզբնաղբյուրներում չի հիշատակվում իբրեւ թագավորության տերիտորիայում գտնվող վայր, չնայած բազմաթիվ հարմար առիթների (29): Հնարավոր է, որ սկզբնական շրջանում Աղահեճքը թագավորության մասը կազմած լիներ, բայց ինչպես քիչ հետո կտեսնենք, 1003 թվականից սկսած նա երբեք չէր կարող պատկանել Սյունյաց թագավորությանը, որի սահմանն այս մասում համընկնում էր Աղահեճք եւ Հաբանդ գավառների սահմանագծին:

Ալիշանը ենթադրում է (30), որ Ծղուկք գավառից թագավորության մեջ մտնում էր նրա մի փոքր մասը: Այդ ենթադրությունը, որի հետ մենք միանում ենք անվերապահորեն, ավելի հավանական դարձնելու համար անհրաժեշտ ենք համարում բերել մի երկու անուղղակի փաստեր, որոնք վրիպել են նշանավոր հայագետի ուշադրությունից:

Մեր պատմիչները Սյունյաց աշխարհի ավերման սկիզբը համարում են 1103 թվականը (31), երբ թշնամին կողոպտեց եւ տակնուվրա արեց Կապան մայրաքաղաքը: Հաջորդ տարին՝ 1104թ., թշնամին գրավում է Որոտն բերդը (Օրբելյան, էջ 334), եւ եթե Կապան քաղաքն ավերելուց հետո Չորթմանի զորքերը թողնում ու հեռանում են իրենց տեղերը, ապա Որոտն բերդն ընդմիշտ մնում է նրանց ձեռքին: Որոտնը Սյունյաց թագավորության տերիտորիայում հիշատակված ամենահյուսիսային բերդն է: Նրա այդքան վաղ գրավումը թշնամու կողմից անկասկած ցույց է տալիս, որ բերդն այնքան հեռու չէր սահմանից:

Ասողիկը վկայում է. «Յայսմ ժամանակի, ի ՆԾԲ թուականին (1103թ.) իշխանքն Փառիսոսյ, որ ի Հայկազեան ազանց՝ բաւեալ մինչեւ ցՍենեքերիմ եւ ցԳրիգոր՝ սպառեցան մահուամբ: Զորոց զաշխարհն բաժանեալ հակառակութեամբ ի միջի իւրեանց արքայն Հայոց Գագիկ եւ Փատլոն ամիրայն Գանձակայ» (32):

Ինչպես տեսնում ենք, Գագիկ առաջինը 1003թ. Փառիսոսի կողմերում գրավել է որոշ շրջաններ: Նույն պատմիչը մի ուրիշ տեղ ասում է, որ Փառիսոսի հետ միասին Գագիկը գրավումներ է կատարել նաեւ Փառիսոսի թագավորների տիրապետության տակ գտնվող Խաչենում: Նախկին Արցախի մասերը կազմող Խաչեն եւ Փառիսոս (33) գավառներում գրավումներ կատարելու համար, ինչպես մենք մեկ անգամ արդեն ասացինք, Գագիկն անպայման պետք է նախօրոք տիրապետած լիներ Ծղուկքի հյուսիսային մասին ու Աղահեճք գավառին: Այլապես Գագիկի տիրապետություններն այս մասում կտրված կլինեին նրա պետության մասը կազմող Վայոց ձորից:

Հաշվի առնելով վերը բերված փաստերը՝ Սյունյաց թագավորության հյուսիսային սահմանը Ծղուկք գավառի շրջանում անց ենք կացրել (տե՛ս քարտեզը) Իշխանասար-Գզըլ-թեփե եւ Գզըլ-բողազ հրաբխային լեռներով, համարելով այն որպես ամենահավանական բնագիծը, որ Ծղուկքի հյուսիսային մեծ մասը բաժանում էր թագավորության տերիտորիայի մեջ մտնող հարավային փոքր մասից:

Ամփոփելով Սյունյաց թագավորության գրված տերիտորիայի սահմանների վերաբերյալ մեր ասածները, հանգում ենք հետեւյալ եզրակացության.

Սյունյաց թագավորության տերիտորիան 11-րդ դարի սկզբներից իր մեջ ընդգրկում էր նախկին Սյունյաց աշխարհի հարավարեւելյան մասը: Թագավորության սահմաններն արեւմուտքում կազմում էր Սյունյաց լեռների հարավային մասը, հարավում՝ Երասխ (Արաքս) գետը, արեւելքում՝ Աղավնո (Հակարի կամ Հագարի) գետը, իսկ հյուսիսում նրա սահմանն անցնում էր Հագարի գետի Աղօղլան վտակի եւ Որոտան գետի ջրբաժան լեռներով, ապա Իշխանասար, Գզըլ-թեփե եւ Գզըլ-բողազ հրաբխային գագաթների գծով դեպի արեւմուտք՝ մինչեւ Սյունյաց լեռների հետ հատվելը: Սյունյաց թագավորության գրված տերիտորիան հիշյալ սահմաններում իր մեջ ընդգրկում էր Բաղք (Աճեն եւ Քաշունիք), Կապան կամ Զորք, Արեվիք, Գրհամ կամ Կովսական եւ Հաբանդ գավառներն ամբողջությամբ ու Ծղուկք գավառի հարավային մասը:

Նկարագրված սահմանները, որոնք վերաբերում են 11-րդ դարին, ներկայացնում են Սյունյաց թագավորության գրված տերիտորիայի մաքսիմումը, հաջորդ ժամանակների համեմատությամբ:

Աղբյուրների մանրազնին ուսումնա-

Հայոց ինքնիշխանությունը Սյունիքում

Բաղաբերդ

սիրությունը ցույց է տալիս, որ նշված սահմանների մեջ ամփոփված ամբողջ տերիտորիան, մոտավորապես 10-րդ դարի վերջերից սկսած, կոչվել է «Սյունյաց եւ Բաղաց» աշխարհ: Ավելորդ չի լինի այստեղ բերել մեր այդ միտքը հաստատող մի քանի փաստեր.

«Եւ պայազատէ զտէրութիւն նորա (Սմբատ թագավորի-Թ.Հ.) մանուկ որդին իւր Վասակ, որ եւ սա մեծահանդէս ժողովով եւ ազատակոյտ բազմութեամբ օծանի թագաւոր Սիւնեաց եւ Բաղաց ձեռամբ Տեառն Գրիգորի՝ Սիւնեաց եպիսկոպոսի» (34): «Եւ բարեպաշտ եւ աստուածասէր թագաւորն Սիւնեաց եւ Բաղաց աշխարհիս Վասակ… » (35): «Եւ այս իսկ են գաւառք վիճակեալք հօտի նոցա (Սյունյաց եպիսկոպոսական թեմին պատկանող գավառները-Թ.Հ.) Սիւնիք, Բաղք, Արեւեաց տունն, Որոդուատ, Արքուլիք, Վանանդ, Երնջակ, Նախիջաւան, Ջուղայ որքան Երասխայ գետն հատանէ, ճահուկ, Վայոց ձոր խաչերոյ խոռովն, Գեղաքունի Կռզայ բակովն… » եւ այլն (36): «Կամաւ կարող հզօրին Յիսուսի ես Սենեքերիմ՝ թագաւոր Հայոց, կացեալ ի Սիսական եւ Բաղաց աշխարհիս… » (37): «Ահա զայսօրինակ բարձաւ տէրութիւն Սիւնեաց եւ Բաղաց. եւ եղեւ վախճան տոհմին Սիսակայ եւ նախարարութեան Սիւնեաց… » (38):

«Սյունյաց եւ Բաղաց» աշխարհ անունը առաջացել է Սյունյաց իշխանական տան այն երկու ճյուղերից, որ ժառանգաբար իշխում էին այդ կողմերում: Ծղուկքում եւ Հաբանդում իշխում էին գահերեց իշխանական ճյուղին պատկանող իշխանները, իսկ Բաղքում, Կովսականում, Ջորքում եւ, հավանաբար, նաեւ Արեւիքում իշխում էր նույն իշխանական մյուս ճյուղը, որը բերված վկայությունների մեջ անվանված է «Բաղաց» իշխանական տուն (39):

Ուրեմն «Սիւնեաց եւ Բաղաց» աշխարհ ասելով պետք է հասկանալ այն տերիտորիան, որում իշխում էին Սյունյաց եւ Բաղաց իշխանները:

Այն հայագետները, որոնք այս կամ այն առիթով ստիպված են եղել որոշ գաղափար տալ Սյունյաց թագավորության մասին, հատուկ ուսումնասիրությունների բացակայության պատճառով բավարարվել են միայն ընդհանուր դիտողություններով:

Թագավորության գրված տերիտորիայի վերաբերյալ համեմատաբար ավելի կոնկրետ մտքեր են արտահայտել Ալիշանն ու ակադ. Հ. Մանանդյանը, որոնց կարծիքները բերում ենք առանց կրճատումների:

«Եւ առ Սենեքերիմաւ յամի 1070 մինչդեռ «շէն էին գաւառք Կապանին», ըստ պատմիչին, որ այնու իմանայ զերկիր թագաւորութեանն Սիւնեաց ժամանակին, տասնեքին յիշատակեալ գաւառքն այնորիկ եւ բերդեան՝ չորեցուն հին գաւառացն պատշաճին, այսինքն են Ծղուկք, Ջորք, Արեւիք եւ Կովսական. եւ ոչ յիշի եւ ոչ մի տեղի Հաբանդայ եւ Բաղաց՝ որոց յառաջն տիրէին» (40):

Հայոց ինքնիշխանությունը Սյունիքում

«Ստեփանոս Օրբելյան պատմագրի վկայությամբ այս թագավորության (Սյունյաց թագավորության-Թ. Հ.) իշխանության տակ էին գտնվում 43 բերդ, 48 վանք եւ 1008 գյուղ, իսկ նրա կենտրոնն էր Կապան մայրաքաղաքը: Որքան եւ մոտավոր լինեն այդ թվերը, Ստեփանոս Օրբելյանի այս եւ ուրիշ տեղեկություններից պարզ երեւում է, որ Կապանի ընդարձակ թագավորությունը պարունակել է իր մեջ Սյունյաց եւ Բաղաց աշխարհի մեծագույն մասը» (41):

Մեր կատարած ուսումնասիրությունների արդյունքները ցույց են տալիս, որ Սյունյաց թագավորության մեջ մտնող գավառների վերաբերյալ Ալիշանի արած կողմնակի դիտողությունները հիմնականում ճիշտ են: Ինչ վերաբերում է ակադ. Մանանդյանի կարծիքին, ապա պետք է ասել, որ այն ունի բավականաչափ անորոշություններ:

Եթե «Սյունյաց եւ Բաղաց աշխարհ» ասելով անվանի գիտնականը նկատի ունի նախկին Սյունիքի Ծղուկք, Ջորք, Արեւիք, Կովսական, Հաբանդ եւ Բաղք գավառները, ապա մենք միանում ենք նրա կարծիքին, որովհետեւ իրոք «Սյունյաց եւ Բաղաց աշխարհի մեծագույն մասը» մտնում էր այդ թագավորության տերիտորիայի մեջ, իսկ եթե «Սյունյաց եւ Բաղաց աշխարհ» ասելով նա նկատի ունի նախկին ամբողջ Սյունիքը, որը բաղկացած էր 12 գավառից, ապա մեր ուսումնասիրության արդյունքները չեն հաստատում այդ, հետեւապես ընդունել չենք կարող:

Ծանոթագրություն

1. *Տե՛ս Հ.Մանանդյան, Հայաստանի պատմությունը թուրք-թաթարական արշավանքների շրջանում, ձեռագրի իրավունքով, Երեւան, 1922, էջ 49:*
2. *Լեո, Հայոց պատմություն, հ. 2-րդ, Երեւան, 1947, էջ 633:*
3. *Շահնազարյան, Սիւնիք (տե՛ս Ստ.Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, Փարիզ, 1859թ., էջ 17): Էմին, Տաթեւի վանքը, («Արաքս», 1852թ., գիրք 2-րդ, Ս.Պետերբուրգ, էջ 20): Ալիշան, Սիսական, էջ 16, եւ այլն:*
4. *Ստ. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 317:*
5. *Էմին, Տաթեւի վանքը («Արաքս», 1892թ., գիրք 2-րդ, էջ 20):*
6. *Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի լուսաբանեալ, Վենետիկ, 1862, էջ 103:*
7. *Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898, էջ 17, 231:*
8. *Տե՛ս Վարդան վարդապետ, Հաւաքումն պատմութեան… էջ 128 («ի սոյն ժամանակի առան եւ մնացեալ դղեակք Կապանին յայլազգիս… »), տե՛ս նաեւ նույն աշխ. էջ 103.*
9. *Ստ. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 300-301:*
10. *Տե՛ս Մ.Աբեղյան, Հայոց հին գրականության պատմության, գիրք երկրորդ, Երեւան, 1946, էջ 214-215:*
11. *Տե՛ս Վարդան վարդապետ, Հաւաքումն պատմութեան…, էջ 128, Ստ. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 334-335:*
12. *Ասողիկ, Պատմութիւն տիեզերական, Ս.Պետերբուրգ, 1885, էջ 259:*
13. *Ստ. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 298:*
14. *Նույն տեղում, էջ 298-299:*
15. *Տե՛ս Ալիշան, Սիսական, էջ 16:*
16. *Ասողիկ, Պատմութիւն տիեզերական, 1885, էջ 256:*
17. *Տե՛ս նույն տեղը, էջ 285:*
18. *Տե՛ս նույն տեղը, էջ 283:*
19. *Ստ.Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 337:*
20. *Տե՛ս նույն տեղը, էջ 335:*
21. *Սյունյաց լեռներն ըստ երեւույթին միշտ ծառայել են որպես սահմանային բնական գիծ բուն Սյունիքի եւ Գողթնի ու Երնջակի միջեւ: Մինչեւ այժմ էլ Օխչու ենթաշրջանի բնակիչները Գողթնի կողմերին անվանում են՝ «Սարին էն ղոլը» («սարի այն կողմը»):*
22. *Ստ. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 335:*
23. *Տե՛ս Վարդան վարդապետ, Հաւաքումն պատմութեան, էջ 128: Ստ.Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 335:*
24. *Տե՛ս Ստ.Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 335, Ալիշանի «Սիսական»-ին կցված քարտեզը:*
25. *Ստ.Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 197:*
26. *Նույն տեղում, էջ 334:*
27. *Ստ.Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 291-292:*
28. *Նույն տեղում, էջ 315:*
29. *Մենք նկատի ունենք Գանձակի աթաբեկության կողմից Սյունյաց թագավորության վրա կատարվող այն բազմաթիվ հարձակումները, որ տեղի են ունենում գլխավորապես Աղահեճքի կողմերով:*
30. *Տե՛ս Ղ.Ալիշան, Սիսական, էջ 273:*
31. *Տե՛ս Վարդան վարդապետ, Հաւաքումն պատմութեան, էջ 140-141, Ստ.Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 334:*
32. *Ասողիկ, Պատմութիւն տիեզերական, էջ 283:*
33. *Արցախի կենտրոնական մասը, որ գտնվում է Խաչեն գետի ավազանում, 10-11-րդ դարերից հայտնի է Խաչեն անունով: Սրան հյուսիս-արեւմուտքից հարեւան էր Փառիսոս գավառը, որը սահմանակցվում էր Ուտի աշխարհի Առանձնակ Ուտի գավառի հետ:*
34. *Ստ. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 301:*
35. *Նույն տեղում, էջ 303:*
36. *Ստ.Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 310:*
37. *Նույն տեղում, էջ 322:*
38. *Նույն տեղում, էջ 337:*
39. *Այդ իշխանական տունը Ալիշանի մոտ անվանված է «Ջագիկեանք»:*
40. *Ալիշան, Սիսական, էջ 291:*
41. *Հ.Մանանդյան, Հայաստանի պատմությունը թուրք-թաթարական արշավանքների շրջանում, 1922, էջ 50:*

Սյունիքի պատմություն

Հայոց ինքնիշխանությունը Սյունիքում

1720-ական թվականների Սյունյաց իշխանապետությունը

ԼԻԼԻԹ ԱՌԱՔԵԼՅԱՆ

Նախաբան

18-րդ դարի սկզբին ազատագրական պայքար է սկսվում Անդրկովկասի երկրներում, այդ թվում եւ Հայաստանում: Ազատագրական շարժումները հիմնականում ուղղված էին թուրքական ու պարսկական բռնակալությունների դեմ:

Հայ ժողովուրդն ինչպես պարսկական, այնպես էլ թուրքական կողմում ենթարկվում էր տնտեսական հարստահարությունների ու ճնշումների, ազգային, կրոնական հալածանքների եւ ֆիզիկական բնաջնջման: Ազատագրական շարժումը Հայաստանում ծավալվեց Արցախում եւ Սյունիքում: Շարժման ծավալումը պայմանավորված էր նրանով, որ Սյունիքը կամ նույն ինքը՝ Ղափանը միախորհուրդ էր Ղարաբաղի հետ, որտեղ այդ ժամանակ ապրում էր մոտ 100 հազար ընտանիք, իսկ Սյունիքի հայ բնակչությունն ավելի շատ էր (1): Մեկ ընտանիքում ընդունված է հաշվել 5 հոգի. այդ դեպքում Արցախում ապրում էր մոտ 500 հազար մարդ, իսկ Սյունիքում մի քիչ ավելի, ուստի Արցախում եւ Սյունիքում բնակչության թիվը կկազմեր ավելի քան մեկ միլիոն: Եթե համեմատելու լինենք, ապա այդ ժամանակ Երեւանի խանությունում ավելի քիչ հայ բնակչություն կար, քան Արցախում: Հետեւաբար բնական է, որ ազատագրական շարժումներն ավելի ուժեղ արտահայտվեցին այնտեղ, որտեղ շատ էր հայ բնակչությունը (2): Ուստի եւ պատահական չէր, որ հենց այս տարածաշրջանում ձեռնարկվեցին հայկական պետականությունը վերականգնելու եւ իշխանապետություն հաստատելու քայլեր: Սակայն մինչ իշխանապետությանն անդրադառնալը պատմական շրջադարձով ներկայացնենք Սյունյաց աշխարհում տեղի ունեցող իրադարձությունները:

Դավիթ-Բեկը Սյունիքում

18-րդ դարի 20-ական թթ. Սյունիքն ավելի շատ հայտնի էր Ղափան անունով: Կային երկու Ղափաններ՝

1. *Փոքր Ղափան կամ Սյունիք, որի մեջ մտնում էին Չորք կամ Կապան, Բաղք եւ Կովսական գավառները,*
2. *Մեծ Ղափան, որի մեջ մտնում էին Փոքր Ղափան եւ պատմական Արեւիք, Հաբանդ, Ծղուկ, Աղահեջ գավառները եւ դեպի հյուսիս ընկած շրջանները (3):*

1722թ. Արցախում սկսած ազատագրական շարժումը հասավ նաեւ պատմական Սյունիք: Այստեղ իրավիճակը, համեմատած Ղարաբաղի հետ, շատ բարդ էր: Արցախում բնակչությունը միատարր էր: Բացի դրանից շարժումն ուներ հմուտ ղեկավարներ: Իսկ Ղափանում ռազմական ուժերը ցաքուցրիվ էին, չկար հմուտ ղեկավար, իսկ պարսիկ խաներն ուժեղ էին: Հաշվի առնելով այս ամենը՝ Ղափանի մեծամեծերը՝ տանուտերերը, մելիքները, վաճառականները, ովքեր ակտիվ մասնակցություն են ունեցել ազատագրական պայքարին, վաճառական Ստեփանոս Շահումյանին ուղարկում են Թիֆլիս, որպեսզի վրացական բանակի հայ հրամանատարներից մեկին հրավիրեն Ղափան: Անգահատելի է Ստ. Շահումյանի դերն ու նշանակությունը ոչ միայն որպես առեւտրականի եւ ապստամբության մասնակցի: Նա ղափանցիների անօրինակ հերոսամարտերի մասին ականատեսի եւ ակտիվ մասնակցի իր հիշողությունները հետագայում՝ 1737 թվականին, գրել տվեց նորաստեղծ Մխիթարյան միաբանության անդամ Ղուկաս վարդապետ Ստեփանյան Սեբաստացուն: Այս գիրքը կոչվում է. «Ընտիր պատմութիւն Դաւիթ բէգին եւ պատերազմացն Հայոց Խափանու, որք եղեն ընդդէմ Թուրքաց ի մերում ժամանակի, այն է յամի Տեառն 1722, եւ Հայոց 1171» (4): Գիրքը միակն է 8-9 տարվա ռազմական գործողությունների, սյունեցիների ազատագրական շարժման մասին: Ստ. Շահումյանի «Ընտիր պատմության» մեջ նշվում է, որ վրաց թագավոր Վախթանգ 6-րդը, ընդառաջելով սյունեցիներին,1722թ. վերջին մի խումբ հայ զորականների հետ Թիֆլիսից Սյունիք է ուղարկում Դավիթ-Բեկին: Դավիթ-Բեկի մասին կցկտուր տեղեկություններ կան «Ընտիր պատմության» մեջ: Նա հիշատակվում է որպես վրացահայ՝ «մցխեթցի», հայկազյան տոհմից, քաջությամբ, հմտությամբ օժտված: «Բեկ» տիտղոսը վկայում է նրա բարձր դիրքի մասին: Դավիթ-Բեկը մտերիմ է եղել վրաց թագավորի եւ նրա մերձավորների հետ (5):

1746թ. Աստրախանում հրատարակվում է մի հիշատակարան, թիֆլիսցի Ղուզունենց Փարսադան բեկի որդի Թաղու հեղինակությամբ, ուր հայտնվում է, որ Վրաստանի թագավորի հրամանով Ալիխանի որդի Դավիթ-Բեկն իր հետ վերցնելով զորապետ Աբդլմասեհին մեկնել է Ղափան՝ կռվելու տեղի խաների եւ

Հայոց ինքնիշխանությունը Սյունիքում

օսմանցիների դեմ: Նշվում է, որ կռվի ժամանակ Դավիթ-Բեկը եւ Աբդլմասեհը զոհվել են, եւ որ Դավիթ-Բեկը եղել է թիֆլիսցի Ղուզանենց Փարսադան բեկի փեսան (6): Սակայն Դավիթ-Բեկի պատմության միակ հրատարակիչ Ա.Գյուլամիրյանցը «ազգասիրական» նկատառումներով փոխել է բնագրի մի քանի բառ եւ Դավիթ-Բեկին դարձրել սյունեցի. «… եւ կոչեալ զԴաւիթ-պէկն Մծխիթեցի ի Հայկազեանս տոհմէ,ետ նմա զիշխանութիւն երթալ յաշխարհն Սիւնեաց որ այժմ կոչի Խափան…» (7):

Այսպիսով Սյունիքի ազատագրական շարժման մեջ Ստ. Շահումյանի ամբողջ ծառայությունը Դավիթ-Բեկի Ղափան գալու գործում այն է, որ նա ղափանցիների խնդրանքը հասցրեց վրաց արքունիք, որի համաձայն 1722թ. աշնանը Դավիթ-Բեկն իր 30-40 քաջերով գալիս է Սյունիք, որոնց մեջ էին Ավթանդիլը, Բայանդուրը, Մխիթարը, Մեծ ու Փոքր Գեորգները, Թադեւոսը, Եղիազարը եւ այլն: Նրանց ուղարկել էր վրաց Վախթանգ 6-րդի որդի Բակուր Շահնավազը՝ բավարարելով սյունեցիների խնդրանքը:

«Դավիթ-Բեկի գալուստը, - ասում է Ն.Ադոնցը, - *հետեւանք էր Գանձակի մոտ կանգնած վրացի եւ հայ զորքերի ակնկալությունների: Ինչպես Եսայի կաթողիկոսն ուղարկված էր Ղարաբաղի մելիքների մոտ, նույն առաքելությամբ Դավիթ-Բեկը եկել էր Սյունիք Վախթանգի հրահանգով»* (8):

Իսկ Եսայի կաթողիկոսը, ով այդ ժամանակ գտնվում էր Վախթանգ թագավորի մոտ եւ քաջատեղյակ էր նրա պլաններին, վկայում է, որ վրաց արքան սիրում եւ վստահում էր հայերին մանավանդ «ազգս հայոց իւրն սեփականացուցանել որպես Թփխեսցի» (9):

Սյունիքում Դավիթ-Բեկը գտնում է միայն ցիրուցան եղած, անկազմակերպ զորքեր: Սկզբում, քանի դեռ ուժերը քիչ էին, նա ընտրում է կռվի պարտիզանական մարտավարությունը, որի համար անչափ նպաստավոր էին Սյունիքի աշխարհագրական պայմանները: Սյունիքը մեծ եւ փոքր լեռնաշարերի, անդնդախոր ձորերի ու վիթխարի ու անմատչելի գագաթների մի անտառոտ աշխարհ է՝ հռչակված մանավանդ իր անմատչելի յոթ բերդերով, որի համար այն երբեմն կոչվում է «Յոթնաբերդ գավառ»:

Նրա գլխավորած ապստամբությունն ազգամիջյան չէր, այլ հայ աշխատավոր գյուղացիության վրա հիմնված շարժում՝ ուղղված իրանական խաների եւ նրանց հետ համագործակցող ավատատերերի եւ Օսմանյան Թուրքիայի դեմ (10): Լինելով տաղանդավոր զորավար, Դավիթ-Բեկը մեծ եռանդով ձեռնամուխ եղավ հայկական զինված ուժերի կազմակերպմանը եւ, ինչպես Ռաֆֆին է նշում, *«Այդ լեռնաստանի ժողովուրդն իր շրջապատող ժայռերի նման ամուր կուրծք ուներ եւ իր ծմակների վագրերի նման աներկյուղ սիրտ… եւ որպես մի դարանամուտ գազան իր թաքստոցի միջից հարձակումներ էր գործում, երբ թշնամին հանդգնում էր վրդովվել նրա խաղաղությունը»* (11):

Բանակաշինություն

1722թ. ժամանելով Սյունիք, Դավիթ-Բեկը Ղափանում լծվեց ամրությունների կառուցմանը, նյութական եւ ռազմական կայուն հենարան ստեղծելուն՝ պարսիկ եւ թուրք ցեղապետերին եւ նրանց զինված հրոսակախմբերին ոչնչացնելու համար: Վերջիններս օգտվելով Իրանի կենտրոնական իշխանության թուլացումից՝ ասպատակում էին հայկական գյուղերը, ձգտում ինքնիշխան տիրապետության:

Սյունիքում իշխանապետություն հաստատելու ճանապարհին Դավիթ-Բեկի առաջին եւ գլխավոր խնդիրն էր բանակի կազմավորումն ու ղեկավարումը եւ այդ նպատակով ստեղծեց ռազմական խորհուրդ իր ղեկավարությամբ: Ազատագրական պայքարի սկզբնական շրջանում Սյունիքի մասնատված ուժերը հավաքելու համար Դավիթ-Բեկին օգնության են գալիս Ղարաբաղի սղնախներից: 1724թ. Ավան Յուզբաշին 2000-ոց զորքով օգնության եկավ սյունեցիներին: Սակայն այդ օգնությունը դադարեցվեց սկսված օսմանյան արշավանքների պատճառով: Ուստի Դավիթ-Բեկը կարողանում էր հարկ եղած միջոցները գտնել, եւ ժողովուրդն էլ սիրով համալրում էր նրա բանակի շարքերը: Նրա բանակի թվաքանակի մասին բացարձակ հավաստի աղբյուր չկա: Նույն ժամանակաշրջանում, եթե համեմատենք այն փաստի հետ, որ Ղարաբաղի հայ բնակչությունը 100 հազար ընտանիք էր, իսկ Ղափանինը՝ ավելի շատ, Ղարաբաղի բոլոր սղնախներում միասին կար մոտ 40 հազար զորք, ուստի Դավիթ-Բեկը պետք է որ ունեցած լիներ ավելի քան 40 հազարանոց մշտական բանակ, որը սակայն կենտրոնացված չէր մեկ վայրում, այլ գտնվում էր երկրի տարբեր մասերում եւ հարկ եղած ժամանակ հավաքվում էր: Այն, որ Սյունիքում զորքը միավորված չէր մեկ բանակի մեջ եւ գտնվում էր գավառներում՝ մելիքների ու յուզբաշիների հրամանատարության ներքո, տեղեկանում ենք Ստ. Շահումյանի պատմությունից (12): Շահումյանն իր պատմության մեջ ներկայացնում է Ղափանի ամբողջ հայ զինվորության բնակության տեղերի, քանակի եւ զորավարների մասին մինչեւ այն ժամանակ, քանի դեռ Դավիթ-Բեկը Շնհերում էր, եւ մինչեւ 1724թ. հավասար էր 6600 մարդու, որոնք գտնվում էին տարբեր վայրերում: Զորքն այդ ձեւով բաժանելն ուներ իր առավելությունը Դավիթ-Բեկի վարած լեռնային պատերազմի մարտավարության համար, որի վճռական պահը, որոշիչը՝ շեշտակի, անակնկալ եւ ուժգին հարձակումն էր, որը մեծ խուճապ էր առաջացնում թշնամու բանակում եւ ապահովում հաղթանակը: Անգամ եթե ցանկանար, չէր կարող պահել խոշոր զորաբանակներ, որովհետեւ անհրաժեշտ կլիներ երկրի տարբեր մասերում կառուցել հսկայական շինություններ, զորանոցներ, բնակատեղիներ եւ դրա համար ունենալ բավականաչափ դրամական միջոցներ:

Համալրելով իր ուժերը եւ հասնելով որոշակի հաջողությունների, Դավիթ-Բեկը Սյունիքում ստեղծեց հայկական իշխանություն, որի կենտրոնը 1724 թվականից դարձավ Հալիձորի բերդը, ուր կենտրոնացրեց անհրաժեշտ քանակությամբ պարեն, զինամթերք, հանդերձանք:

Ստեղծեց մարտունակ բանակ՝ հաստատելով ամուր կարգապահություն: Նա հրամանատարների միջոցով ղեկավարում էր առանձին գավառների պաշտպանական ու հարձակողական կռիվները՝ հրահանգելով իր զորավարներին օգնության հասնել միմյանց հատկապես այն ճակատներում, որտեղ թշնամին սպառնում էր հայերի դիմադրությանը: Առանձին ջոկատների հրամանատարներ է նշանակում Տեր-Ավետիսին, Փարսադանին, Բայանդուրին,

Հայոց ինքնիշխանությունը Սյունիքում

Թորոսին, Պապին, Գեորգին եւ ուրիշների, իսկ սպարապետ՝ Մխիթարին: Այստեղ հարկ է անդրադարձ կատարել պատմաբան Լեոյի տեսակետին (13), ուր նա իրավացիորեն նշում է, որ «սպարապետ», «զորավար», «իշխան», «զորապետ» տիտղոսները գործածական չեն եղել Ղափանում, այլ Դավիթ-Բեկի պատմությունը գրող Ղուկաս վարդապետն է կիրառության մեջ մտցրել՝ հարմարեցնելով հին հայկական տիտղոսներին: Այն, որ Դավիթ-Բեկի գլխավոր օգնական Մխիթարը չի կրել «սպարապետ» անունը, ցույց է տալիս նրա գերեզմանաքարի արձանագրությունը (14), ինչպես նաեւ ռուսաց կառավարությանն ուղղված Մխիթար բեկի ստորագրած խնդրագիրը (15):

Բանակաշինության գործում ունեցած հաջողությունները մեծացնում էին Դավիթ-Բեկի հեղինակությունը ժողովրդի մեջ, եւ դրան նպաստում էր նաեւ այն հանգամանքը, որ նա անողոք էր մելիքական դասի այն ներկայացուցիչների հանդեպ, ովքեր գերադասելով իրենց անձնական շահերը՝ մեկուսի դիրք էին գրավում, դավաճանում եւ համագործակցում հակառակորդի հետ: Անպատիժ չէր թողնում իր հավատարիմ զորականներին, երբ նրանք սխալներ կամ հանցանքներ էին թույլ տալիս: Նրանցից էին Տաթեւի մելիք Դավիթը, ով ուրանալով քրիստոնեական հավատը՝ ընդունել էր մահմեդականություն եւ կրում էր մելիք Բաղր անունը, եւ Կալերցի Պապ զորավարը, որի սխալ մարտավարության պատճառով Սափի-Ղուլի խանն Ալագյազից հասնում է Դաշտուն՝ ճանապարհին կոտորելով հայ բնակչությանը, ավերելով հայկական գյուղերը՝ հազարավոր մարդկանց թողնելով անօթեւան (16):

Ազատագրական պայքարի ընթացքը

Դավիթ-Բեկի առաջին հաղթական ճակատամարտը տեղի ունեցավ Ուչթափա (Եռաբլուր) վայրում, ուր հարվածն ուղղեց Սյունիք թափանցած Ղարա-չոռլու եւ Ջեւանշեր քոչվոր ցեղերի դեմ: Հաղթանակից հետո նրա շուրջը համախմբվում են 400 մարտիկներ, եւ նա գնում ու հաստատվում է Շնհեր (Շինուհայր) ավանում՝ սկսում անընդհատ հարձակումներ գործել պարսկական իշխանությունը ներկայացնող տեղական խաների ու բեկերի վրա: Նրա փառքը տարածվեց ժողովրդի բոլոր խավերում, անգամ այն տեղերում, ուր մինչ այդ նրա մասին լսած անգամ չկային: Սկսվում է արյունահեղ ու դաժան պատերազմներով լի նրա հերոսական կյանքի ուղին: Շուտով բոլոր կողմերից հայ իշխանները գալիս եւ համախմբվում են Դավիթ-Բեկի շուրջը: Առաջինը Չավնդուր գավառի իշխան Թորոսն էր, ով Դավիթ-Բեկից ստանում է այդ գավառի կառավարման եւ զորք կազմելու լիազորություններ, ապա իր հետ վերցնելով Վրաստանից եկած Բայանդուրին, վերադառնում է իր գավառ: Ապա նրա մոտ են գալիս Տեր Ավետիսը, Փարսադանը, Պապը, Գողթնի, Հին Ջուղայի տանուտերեր, իշխաններ եւ ուրիշներ, որոնց Դավիթ-Բեկը հաստատում է իրենց գավառներում եւ տալիս Վրաստանից իր հետ եկած ռազմական մասնագետներ, որպեսզի նրանց օգնությամբ տեղերում կազմակերպեն ու մարզեն հայկական զորքը:

Սյունիքում իր իշխանապետությունը հաստատելու ճանապարհին Դավիթ-Բեկը ստիպված էր նախ եւ առաջ պայքարել ներքին ռազմաճակատով՝ Ղափանի տեղական թուրք եւ պարսիկ ավատատերերի դեմ, ովքեր ամեն կերպ փորձում էին պահպանել պարսկական իշխանությունը: Այդ պայքարի ընթացում տուժում էր խաղաղ բնակչությունը. հրահրվում էին ազգային եւ կրոնական կրքերը, եւ առանձին տեղերում պայքարը երբեմն կրում էր ազգամիջյան կոտորածների բնույթ: Նման օրինակ է Ստ. Շահումյանի հաղորդումը, ըստ որի՝ Սափի-Ղուլի խանը 500 պարսիկի գլուխ անցած ավերում է երկու հայկական գյուղ, իսկ դրա դիմաց Դավիթ-Բեկի հրամանով Մխիթարը Թաղամեր ավանում կոտորում է 60 պարսիկի ընտանիք:

Դավիթ-Բեկն արտակարգ ջանքեր էր գործադրում թրքախոս ու քրդական ցեղերին, նրանց պարագլուխներին երկրի սահմաններից դուրս քշելու ուղղությամբ: Գույքաթափ ու զինաթափ էր անում տեղի վաչկատուն ցեղերին, խլում նրանց տերերի երիվարները, ոչխարները եւ այդ ամենը կենտրոնացնելով իրեն ենթակա բերդերում՝ ծառայեցնում իր ձեռնարկած պատերազմի պետքերին:

Դավիթ-Բեկի զորքը հաջող մարտեր մղեց Օրդուբադի, Նախիջեւանի, Բարգուշատի խաների, Ղափանի ավատատերերի դեմ, գրավեց Սյունիքի բոլոր կարեւոր ամրացված կետերն ու բնակավայրերը՝ Շինուհայրը, Խնձորեսկը, Զեյվան, Որոտնա բերդը: Ղարաբաղցիների օգնությամբ հետ մղեց Ղարաբաղի խանի հարձակումը (17):

Դավիթ-Բեկի հուշարձանը Կապանում

1724թ. բուռն մարտեր են ծավալվում Բարգուշատի եւ Լեւազի շրջանում, ուր կռվում աչքի է ընկնում Չավնդուրի հրամանատար Թորոսը: Նա կոտորում է Լեւազի շրջանի թշնամու հոտերի հովիվներին: Այդ նույն ժամանակ Նախիջեւանի խանը հարձակվեց Սիսիանի վրա, եւ Դավիթ-Բեկը դուրս գալով նրա դեմ՝ ճակատամարտ տվեց Նախիջեւանի մոտ: Այստեղ նրա ուժերը պարտվեցին, եւ դա Դավիթ-Բեկի առաջին լուրջ պարտությունն էր (18):

Հայկական ուժերն ուշքի գալով՝ պատրաստվեցին հարձակվելու Օրդուբադի խանության վրա: Հարձակումը պետք է ղեկավարեր Թորոս իշխանը: Ինչպես բոլոր ժամանակներում, այնպես էլ այդ ժամանակ, հանդես եկան ազգի դավաճաններ, որոնցից էր Արծվանիկ ավանի մելիք Ֆրանգյուլը՝ Բարգուշատի Ֆաթալի խանի սիրելին: Ֆրանգյուլը կալվածական վեճեր ուներ Թորոսի հետ եւ առիթ էր փնտրում նրան կործանելու: Ֆրանգյուլը Թորոսի հարձակման լուրը հասցնում է Ֆաթալի խանին, ով զորքով

Հայոց ինքնիշխանությունը Սյունիքում

Հալիձորի բերդը

շարժվում է Չավնդուր: 1725թ. Եղվարդ գյուղի մոտ ճակատամարտում հայերը պարտվում են թիկունքից Ֆրանգյուլի հանկարծակի հարձակման հետեւանքով, եւ Թորոս իշխանն իր 3000 զինվորներով հերոսական մահով ընկնում է Եղվարդի դաշտում: Թորոս իշխանի այդ պայքարը վառ նկարագրված է Ռաֆֆու «Դավիթ Բեկ» պատմավեպում (19):

Նույն ժամանակ Դավիթ-Բեկը զբաղվում է Փոքր Ղափանի եւ Սիսիանի կողմերում ավազակությամբ զբաղվող թափառական մահմեդական ցեղապետերին ու նրանց հորդաներին ոչնչացնելով, իսկ Տեր Ավետիսն ու Մխիթարը կոտորում են Ղազանկուլի, Գազբել լեռներում, Բարգուշատի կողմերում եղած թափառական ցեղերին:

Պարսկական բռնապետության դեմ դաժան մարտերով ու մեծագործություններով լի Սյունյաց լեռնականների մղած ժողովրդա-ազատագրական պայքարի առաջին փուլը, որն ընդգրկում է 1722-1726թթ., ավարտվում է հայերի հաղթանակով: Սյունիքում ստեղծվում է հայկական իշխանություն Դավիթ-Բեկի գլխավորությամբ:

Ազատագրական պայքարի առաջին փուլի հաջողություններին նպաստեցին մի քանի հանգամանքներ: Դրանցից էին՝

- *Պետրոս կայսեր պարսկական արշավանքը, որը նպաստեց հայ ժողովրդի ազատատենչ ոգու բարձրացմանը,*
- *թուլացած եւ անդամահատված Իրանը չէր կարող խոչընդոտել անծայրածիր տերության բազմաթիվ կետերում բռնկված ազատագրական շարժումներին եւ ապստամբություններին,*
- *Թուրքիան պատերազմում էր Իրանի դեմ եւ դրանով նպաստում Դավիթ-Բեկի գլխավորած շարժման հաջողությանը,*
- *հայ ժողովուրդը մղում էր արդարացի, ազատագրական պատերազմ, որի հաջողությամբ շահագրգռված էին հասարակության բոլոր խավերը,*
- *ազատագրական պայքարի ղեկավարը՝ Դավիթ-Բեկը, հիանալի առաջնորդ էր, տաղանդավոր դիվանագետ՝ օժտված արագ ու ճիշտ վճիռներ կայացնելու ու հրամաններ տալու ընդունակությամբ:*

Բովանդակ հայոց աշխարհը հույսով լի իր հայացքը հառել էր դարավոր թշնամուն հաղթած Դավիթ-Բեկին ու փառաբանում էր նրան: Հայն էր իր երկրի օրինական ու երջանիկ տերը:

Ավաղ, վաղ էր ցնծությունը:

1726թ. դառը փորձությունների տարի էր սյունեցիների ազատագրական պայքարի պատմության մեջ: Սյունյաց երկնակամարում մթամած ու ահարկու ամպեր էին կուտակվում: Հորիզոնը սեւանում էր ենիչերիների մահաբեր շնչից. գալիս էր օսմանցին՝ մի ահարկու թշնամի, որը նման չէր մինչ այդ եղած տեղական թուլամորթ պարսիկ խաներին: Սյունիք էր ներխուժում մարտերում կոփված թուրքական կանոնավոր բանակը, որը սարսափի մեջ էր պահում աշխարհի ամենազորեղ պետություններին անգամ: Սյունիքի ազատասեր գյու-

Հայոց հնամիշխանությունը Սյունիքում

ղացին պետք է բախվեր մի հզոր ուժի՝ մարտերում կոփված թուրքական կանոնավոր բանակի հետ:

Սակայն թուրքերի դեմ մղված նշանավոր ճակատամարտերում Դավիթ-Բեկն իր մարտավարական ճիշտ դիրքորոշմամբ, իր զորավարների՝ Մխիթարի, Տեր Ավետիսի եւ այլոց աջակցությամբ կարողացավ հաղթանակներ արձանագրել Սյունիքի այդ ժամանակաշրջանի տարեգրության մեջ: Հատկապես նշանավոր էր 1727թ. մարտին մղված Հալիձորի ճակատամարտը, երբ բերդում գտնվող 350 հոգանոց քաջերը կարողացան ջախջախել թշնամուն, որը Հալիձորի բերդի պարիսպների տակ կորցրեց 13 հազար զինվոր, 148 դրոշ եւ բազմաթիվ ռազմավար: Մեղրիում ջախջախեց օսմանյան զորքին, ինչպես նաեւ թուրքական հարկահաններին եւ այրեց օսմանյան իշխանությունների կազմած Ղափանի եւ շրջակա մի քանի շրջանների 32 հազար հարկացուցակներ (20): Հաղթական մարտերը բարձրացրին հայ ժողովրդի հայրենասիրական ոգին. մարդիկ ամեն կերպ աջակցում էին ազատագրական պայքարին, սատարում Դավիթ-Բեկին իր բոլոր նախաձեռնություններում՝ օսմանցիներին երկրից դուրս շպրտելու, տեղական խաներին ու բեկերին հնազանդեցնելու կամ ոչնչացնելու գործում:

Իշխանապետության հասպատում եւ տեղագրություն

Դավիթ-Բեկի զորավարական տաղանդի հետ միացած էր նաեւ հմուտ դիվանագետը: Նրա ամենանշանակալից դիվանագիտական հաղթանակն այն կտրուկ շրջադարձն էր, որ կատարում է Իրանի նկատմամբ վարվող քաղաքականության մեջ:

Հայտնի է, որ հայ մելիքներն իրենց իրավունքների մեջ հաստատվում էին պարսից շահերի տրված հրովարտակներով, ապա դառնում իրենց երկրի (գավառի) լիակատար տեր ու տնօրենը, արտոնություն ունենում ըստ իրենց հպատակների թվի եւ նյութական կարողությունների զորք պահելու:

Ստ. Շահումյանի հաղորդած այն փաստը, որ Սյունիքի մելիքները գալիս էին Դավիթ-Բեկի մոտ եւ նրա կողմից հաստատվում իրենց նախկին իրավունքների մեջ, նշանակում է, որ Սյունիքի բոլոր հայ իշխանավորների համար նա արդեն համարվում էր սյուզերեն (21): Փաստորեն Սյունիքն այլեւս չէր ճանաչում Իրանի կենտրոնական իշխանությունը եւ իրեն անկախ էր հռչակում Իրանից: Սակայն այդ անկախությունը դեռ հարկավոր էր նվաճել համառ եւ երկարատեւ պայքարի ընթացքում, հաղթահարել բազմաթիվ խոչընդոտներ ու արգելքներ: Եվ չնայած նրան, որ ի տարբերություն Ղարաբաղի, որտեղ պայմաններն ավելի բարենպաստ էին, Դավիթ-Բեկը կարողացավ ղափանցիների ազատագրական պայքարի գործը պսակել հաջողությամբ, ցուցաբերել մեծ շրջահայացություն, ճիշտ գնահատել ստեղծված արտաքին իրադրությունը՝ այն, որ Իրանը 1726 թվականից պատերազմում էր Թուրքիայի դեմ: Այդ հանգամանքը հնարավորություն է տալիս մերձենալ Իրանին, բարեկամություն եւ դաշնակցություն հաստատել իր երեկվա թշնամու՝ շահ Թահմազի հետ եւ դրանով ամրապնդել իր տարած հաղթանակը Թուրքիայի դեմ:

1727թ. Դավիթ-Բեկը բարեկամական առաջարկով դիմում է շահ Թահմազին, ով իր աթոռանիստը դարձրել էր Թավրիզը, եւ ձեւականորեն հպատակություն հայտնում նրան: Որպես ապացույց, Թահմազին չորս բեռ օսմանյան կտրած գլուխներ է ուղարկում, սակայն Թահմազի վրա ավելի մեծ ազդեցություն էին թողել Հալիձորի եւ Մեղրիի ճակատամարտերը, որոնց շնորհիվ Սյունիքն ազատվել էր օսմանցիներից:

Ըստ այդ համաձայնության՝

- *Թահմազը Դավիթ-Բեկին ճանաչում է Սյունիքի կիսաանկախ իշխան ու նրա իշխանությանն է հպատակեցնում տեղական խաներին ու բեկերին: Դավիթ Բեկն էլ ընդունում է շահ Թահմազի գերիշխանությունը,*
- *Դավիթ-Բեկը նշանակվեց Արեւելյան Հայաստանում եւ Պարսկաստանում գտնվող զորքերի հրամանատար,*
- *Դավիթ-Բեկին իրավունք էր տրվում դրամ հատել, որը գրեթե հավասարազոր էր լրիվ անկախության. հատված դրամի մի երեսին գրված էր շահ Թահմազի անունը, իսկ մյուս երեսին՝ «Քրիստոսի ծառայ Դաւիթ» (22),*
- *հայ-պարսկական ուժերը պետք է համատեղ պայքար մղեին թուրքերի դեմ:*

Այս հրովարտակի հետ շահ Թահմազը Դավիթ-Բեկին ուղարկում է վասալական նշաններ՝ խաչվառ, որն առանձին դրոշ էր, որը տանում էին առջեւից, եւ մի հիանալի նժույգ, իսկ զորապետերին էլ մեկական պատմուճան: Այնուհետեւ Դավիթ-Բեկի մոտ գալիս եւ հնազան-

Որոտնաբերդը

Հայոց ինքնիշխանությունը Սյունիքում

դություն են հայտնում տեղական բոլոր մահմեդական իշխանավորները:

Համաձայնությունից ելնելով կարող ենք վստահաբար նշել, որ Դավիթ-Բեկը հզոր պետականություն ստեղծելուն ուղղված իր քայլերում հասել էր հաջողության եւ Սյունիքում հաստատել այն ժամանակների համար երազանք թվացող իշխանապետություն:

Հարկ է անդրադառնալ նաեւ իշխանապետության սահմաններին՝ ընդհանուր պատկերն ամբողջացնելու համար:

> *Հյուսիսային սահմաններ: Ղափանի իշխանապետության ամենահյուսիսային սահմանը Սիսիանն էր, որի մասին հուշում է Մխիթար սպարապետի ստորագրությամբ ռուսաց կայսրին 1724թ. մարտի 24-ին հղած հայտնի ուղերձում առկա հետեւյալ հաղորդումը. «…օսմանցիք բազմահոյլք եկին Ջերմկայ գլուխքն բազում քաղաք, վանք, անապատք, գեղորանք առան տիրեցան…յետ սոցա դիեցան առ մեզ (23):*

Օսմանցիներն ամբողջ Վայոց ձորը գրավելուց հետո միայն հարավարեւելյան ուղղությունից կարող էին գրոհել Ջերմուկի վրա, քանի որ Ջերմուկի արեւելյան կողմում ձգվում էին Ղարաբաղի բարձրավանդակի դժվարանցանելի լեռները, որոնցից այն կողմ Ղարաբաղի հայոց սղնախների զինված ուժերն էին: Ուստի, ելնելով այս սկզբնաղբյուրից, կարող ենք հետեւություն կատարել, որ 1725-1726թթ. Ղափանի իշխանապետության հյուսիսային սահմանները սկսվում էին Վայքից հարավ (24):

Արեւելյան սահմանները: «Ընտիր պատմության» մեջ հիշատակված Դավիթ-Բեկի իշխանության ներքո գտնվող ամենաարեւելյան գյուղերն ու վայրերն էին՝ Ծավ, Շիշկերտ (Շիշկետ, Իշկերտ), Գեմանցու (Կեմանցու, Կումանու) դաշտ, Շիվանիձոր (Շվանիձոր), Ղարաչիմեն, Խոտանան, Եղահորդ (Եղայ հորթ, Եղեվարդ, Եղվարդ):

Ծավ, Շիշկերտը, Գեմանցու դաշտը գտնվել են սահմանամերձ գոտում, եւ Դավիթ-Բեկը Շիշկերտում Պապ զորավարին գլխատելուց հետո հաջորդաբար կանորեն բնակվում էր այս վայրերում, որի մասին վկայում է Տեր Ավետիքը (25), ով հավանաբար այդ ժամանակ Դավիթ-Բեկի բանակում էր ծառայում:

Մեղրու բերդի աշտարակներից մեկը

Դավիթ-Բեկն այդտեղից արշավանքներ էր իրականացնում մահմեդաբնակ Շահապակլու գյուղի վրա, որը համեմատաբար կարելի է տեղադրել նախկին Ադրբեջանական ԽՍՀ Զանգելանի շրջանի Շայիֆլի (Շայիպլու) ավանի շրջակայքում՝ Շիկահողից մոտ 6 կմ հյուսիս-արեւելք, Ողջի գետի աջ ափին, այժմ ազատագրված տարածքում: Ղ. Ալիշանն իր «Սիսական» աշխատության մեջ նշում էր, որ 1886թ մարդահամարի ժամանակ այդ բնակավայրն ուներ ընդամենը 88 բնակիչ: Շահապակլուն վարչականորեն պատկանել էր Չավնդուր գավառին, սակայն գտնվելով սահմանային գոտում՝ բնակչությունը հարել էր Բարգուշատի մահմեդական իշխանությանը՝ ի դեմս Ֆաթի-Ալի սուլթանի:

Ղուկաս Սեբաստացին հատուկ «Ղափանցվոց պատմության» համար պատրաստած իր քարտեզում Ղափանի հյուսիսարեւելյան սահմանային վերջին գծի վրա կանգնած ավանների թվում Խնձորեսկի կողքին նշել է «Կորին», «Կորէսը», «Խնածախը», «Տեղը» (26): Այստեղից սկսվել է Ղափանի եւ Ղարաբաղի միջեւ ընկած մահմեդական իշխանության զբաղեցրած ոչ մեծ տարածքը: Ղափանի իշխանապետության ամենաարեւելյան ամրացված կետը եղել է Կուլաբերդը, որտեղ կար 110 զինվոր Ղազար զորավարի հրամանատարությամբ (Զորացուցակ, էջ144): Դատելով Սեբաստացու կազմած քարտեզից, կարելի է անվարան ասել, որ Կուլաբերդն այսօրվա Քաշաթաղի (Լաչին) շրջանի Գյուլեբերդ ավանն է, Հագարու գետի աջ ափին:

Ղափանի իշխանապետության արեւելյան ամենահարավային վայրերից է Շվանիձորը, ուր տեղակայված էր Սարգիս զորավարի 250 հոգանոց ջոկատը (Զորացուցակ, էջ144):

> *Արեւմտյան սահմանը ձգվում էր Զանգեզուրի լեռնաշղթայի (Սյունյաց լեռների) երկայնքով, եթե չհաշվենք Ագուլիսի կարճատեւ գրավումը եւ հայկական զորքերի կողմից Ղազանկլու (Կապուտջուղ) լեռան շրջակայքում քոչվոր թուրքմեն ցեղերի վրա հարձակումները:*

Հարավային սահմանը հասնում էր Արաքսին, եւ ուշագրավ է այն փաստը, որ 1720-ականների Ղափանի հայոց իշխանապետության սահմանները գրեթե համընկնում էին արդի Հայաստանի հանրապետության հարավային շրջանների սահմաններին: Մյուս կողմից՝ Բարգուշատի մի քանի տասնյակ հայկական

Հայոց ինքնիշխանությունը Սյունիքում

գյուղերն ու ավանները, ինչպես նաեւ Գողթնի, Երնջակի եւ Ճահուկի հայկական բավական մարդաշատ բնակավայրերը, որոնք դուրս մնացին Դավիթ-Բեկի գլխավորած ազատագրական շարժման ոլորտից, հետագայում իսպառ հայաթափ եղան: Բարգուշատն ազատագրվեց միայն 1992-1994թթ.՝ արցախյան ազատամարտի ընթացքում:

Ամփոփենք Դավիթ-Բեկի իշխանապետության տարածքը. այն հիմնականում համընկնում է այսօրվա Սիսիան, Գորիս, Կապան, Մեղրի տարածաշրջանների հետ: Այժմյան Մեղրու տարածքը 1720-ական թթ. ուներ երկու անվանում՝ Կենավուզ եւ Գուրհամ, որոնցից առաջինն իր իմաստով ընդգրկում էր ամբողջ շրջանը եւ ուներ համաղափանյան գործածում, իսկ երկրորդը՝ տեղային նշանակության էր եւ հոմանիշն էր Մեղրի գետի հովտով ձգվող ու դեռեւս 17-րդ դարում Կաքավաբերդ անունով ծանոթ գավառի:

Վերջաբանի փոխարեն

1722-1727թթ. ընթացքում իրականացրած ձեռնարկումների արդյունքում Դավիթ-Բեկի ստեղծած իշխանապետությանը սակայն վիճակված չէր երկար գոյատեւել: 1728թ. սկսվում է թուրքական զորքերի ընդհանուր հարձակումը, որի նպատակն էր ծնկի բերել Սյունյաց եւ Արցախի զինված հայությանը եւ այդ շրջանը ենթարկել օսմանյան զինվորական իշխանությանը: Ղափանի հայ զինվորականության համար սկսվում է պայքարի նոր ժամանակաշրջան: 1728թ. Դավիթ-Բեկի մահից հետո կամ ավելի վաղ՝ վերջինիս հիվանդության ժամանակ, իր ձեռքը վերցնելով հայկական զինված ուժերի ընդհանուր հրամանատարությունը, Մխիթար սպարապետը շարունակում է հավատարիմ մնալ ազատագրական շարժման մեծ ղեկավարի մարտական ավանդներին: Սակայն նա չուներ Դավիթ-Բեկի վարչական ու դիվանագիտական միտքը, չկարողացավ համերաշխություն պահպանել զորքի եւ երկրի միջեւ: Նրա հետ գժտվեց մարտական ընկերը՝ Տեր Ավետիսը, ով ոչնչով չէր զիջում Մխիթարին եւ ինքն էր ձգտում ստանալ Դավիթ-Բեկի ժառանգությունը, մանավանդ որ տեղացի

Հայոց ինքնիշխանությունը Սյունիքում

էր, իսկ Մխիթարը, ինչպես գրված է նրա տապանաքարին, եկվոր էր՝ գանձակեցի:

Ազատագրական պայքարի համար ստեղծվել էին նոր՝ անբարենպաստ պայմաններ, եւ Տեր Ավետիսը խոնարհվեց թուրքական զորության առաջ: Մխիթար ապարապետն ընդամենը մեկ տարի մնաց իշխանապետության կենտրոն Հալիձորում: Այդ մեկ տարվա մեջ Տեր Ավետիսն այնքան ստորացավ, որ հասավ մինչեւ հայրենիքի դավաճանության աստիճանի: Նա հակվեց դեպի օսմանցիները, որոնք իրենց զորեղ զգացին Սյունիք արշավելու համար: Չկար Դավիթ-Բեկը: Ավելին, Մխիթարին հավասար Տեր Ավետիսը ոչ թե նրա հետ էր, այլ նրա դեմ:

> *1729-1730թթ. թուրքերը ծավալուն հարձակման անցան Դավիթ-Բեկի ստեղծած իշխանությունը ոչնչացնելու համար: 1729թ. թուրքերը պաշարում են Հալիձորը: Բերդի ներսում ծայր է առնում անմիաբանությունը, կար երկու ուղղություն՝*

Մխիթարի գլխավորությամբ ուժերը պահանջում էին շարունակել բերդի պաշտպանությունը եւ ուժասպառ անել թշնամուն,

Տեր Ավետիսի գլխավորությամբ ուժերը գտնում էին, որ պետք է բանակցել թուրքերի հետ եւ բերդը հանձնել նրանց՝ արյունահեղությունից խուսափելու համար:

Երբ Տեր Ավետիսի դավաճանության հետեւանքով թուրքերը խաբեությամբ կարողացան մուտք գործելԴավիթ-Բեկի հիմնած իշխանապետության կենտրոն Հալիձորի բերդը եւ, դրժելով տրված խոստումը, կոտորեցին ու գերեցին բերդի բնակչությանը, Մխիթարին հաջողվում է գիշերով դուրս գալ եւ նոր զորքեր հավաքելով՝ հաղթական մարտեր մղել թշնամու կանոնավոր զորքերի դեմ ու նրանց միացած տեղական հողատերերի դեմ: Մխիթարը բերդում թողնում է նաեւ կնոջը եւ երեխաներին: Թուրքերը տղամարդկանց սպանում են, իսկ կանանց ու երեխաներին գերի վերցնում: Նրանք մտնում են նաեւ կուսանոցը, գերում բոլոր կույսերին, քանդում բերդի պարիսպները, ավերակների վերածում, վերցնում Մխիթարի կնոջն ու երեխաներին ու հեռանում: Այդ դեպքերը խորապես ցնցում են Տեր Ավետիսին եւ նրա մեջ արթնանում է նախկին կրոնական ջերմեռանդությունը: Նա մտաբերում է, որ ինքը կրոնի մի պաշտոնյա, մինչ ազատագրական պայքարին սուրը ձեռքին մասնակցելը, օծված էր քահանա: Այնքան արյուն է թափել, այնքան քաջագործություններ կատարել, վերջում էլ դավաճանել իր ժողովրդին: Հուսահատ թողնում է իր հայրենիքը, գնում բնակվում Երուսաղեմում, ու, բազմաթիվ ապաշխարհություններից հետո, ներում ստանում: Սակայն որտեղ էլ ստացած լինի ներումը, պատմության դատավճիռն անողոք է…

Թորոս Իշխանի գերեզմանաքարը Եղվարդ գյուղում

Մխիթար սպարապետը, հավատարիմ ազատագրական պայքարի շահերին, ամեն կերպ աշխատում է վառ պահել Սյունյաց լեռներում սկսած Դավիթ-Բեկի սուրբ գործը: Անխոջ եռանդով սկսում է հայոց զորքեր հավաքել: Սակայն ունենում է ողբերգական վերջաբան: Ահա թե ինչպես է այդ ամենը ներկայացնում Լեոն՝ «Մխիթարը գյուղեր, նույնիսկ քաղաքներ էր խլում նրանցից: Հարձակվեց Օրդուբադ քաղաքի վրա, վերցրեց նրան, մեծ կոտորած արավ եւ հարուստ ավարը հարյուր վաթսուն ուղտերի վրա բարձած տարավ Խնձորեսք անունով բերդը, ուր ժամանակավոր կայան էր հաստատել իր համար: Սակայն այստեղի հայերն այնպիսի մի ստրկություն ցույց տվին, որի նմանը շատ չի կարելի գտնել ազգերի տարեգրությունների մեջ: Հաղթական զորապետին ուրախությամբ չընդունեցին այդ ձորաբերդում: Թշնամությունը բորբոքվեց նրա դեմ, մի զգացմունք, որ բխում էր անասնական երկյուղից: Խնձորեսքը սարսափի մեջ ընկավ. ամենքը վախենում էին օսմանցիներից. վախենում էին, թե կգան նրանք եւ իրենց էլ այնպես կկոտորեն, ինչպես կոտորեցին հալիձորցիներին: Եվ այդ երեւակայական վտանգից ազատվելու համար նրանք հրացանով խփում, սպանում են Մխիթարին(1730): Սակայն այսքանը չի հանգստացնում ստրուկներին, եւ նրանք ավելի եւս պժգալի գործ են կատարում. կտրում են հերոս սպարապետի գլուխը եւ տանում են Թավրիզի փաշային՝ նրանից գովասանք լսելու եւ պարգեւ ստանալու համար: Սակայն ահա ինչ ընդունելություն են գտնում ըստ ավանդության Շահումյանի. «Իսկ նա իբրեւ ետես՝ զարմացաւ յոյժ, եւ սկսաւ սրտմտիլ յոյժ ի վերայ այնպիսւոյ անօրէնութեան նոցա. եւ ասէ, ո՞վ անօրէնք եւ անբարիշտք, զիա՞րգ իշխեցիք իզուր տարապարտուց սպանանել զտէրն ձեր, եւ զայսպիսի քաջ այր. եւ հրամայեց հատանել զգլուխս ամենուն

Հայոց հնագիտությունը Սյունիքում

Հին Խնձորեսկ

նոցա, որք տարան զայն, ըստ արժանեացն հատույց նոցա զհատուցումն»:

Այսպիսի վախճան է գտնում այն մարդը, ով երբեք հաղթված չէր թշնամուց: Հայ ազատագրական շարժման զինվորների մեջ նա, անկասկած, ամենախոշոր դեմքն էր Դավիթ-Բեկից հետո, որը փայլուն ընդունակությունները միացնում էր անբիծ բարքի հետ: Իսկ իր ողբերգական վախճանով նույնիսկ գերազանցեց ամենքին՝ իբրեւ գործի նահատակ, ընկած հենց իր տգետ ու ստրկամիտ ժողովրդի ձեռքից:

Հերոս սպարապետի զորքը մասամբ ցրվեց, մասամբ էլ գնաց հայոց սղնախները, որոնք հենց այդ միջոցին, ինչպես գիտենք, ապրում էին իրենց վերջին օրերը:

Հայ ամբոխի այդ պատմական ոճրագործության վայրում, Խնձորեսք գյուղի հարավարեւելյան կողմում ժայռերից

Մխիթար Սպարապետի գերեզմանը Խնձորեսկում

Հայոց ինքնիշխանությունը Սյունիքում

մի լեզվակ է բաժանվում, որի երեք կողմից հոսում է գյուղի գետակը: Այժմ այդ քարային՝ լեզվակի հարթ մասի վրա, երեւում է մի փոքրիկ ավերակ եկեղեցի՝ պարսպով շրջապատված: Եկեղեցու հյուսիսային կողմում, մի հասարակ տապանաքարի վրա, կարելի է կարդալ հետեւյալ անգրագետ տողերը.

Այս է դրապան ի հանգիստեան
Բջեալ մարմնով ի գերեզման,
Սայ Մխիթար մեծ անուանեալ
Տորա օնէր իշխանութիւն
Սա բէմուրատ գնաց ջիվան
Որ է երկրէն սայ Կեանքով էր

Նահատակացեւաւ ՌՃՀԶ» (Երկերի ժողովածու, 3-րդ հատոր, Երեւան 1973թ., էջ 208-209): Նկատի ունենանք նաեւ, որ Մխիթար սպարապետի տապանագրի թվականը սխալ է գրված, պիտի լինի ՌՃՀԹ, ինչը պնդում է Ե.Լալայանը («Զանգեզուրի գավառ», Թիֆլիս, 1899)»:

Մխիթար Սպարապետի ստոր սպանությունից հետո հայկական զորքերը ցրվում են զանազան կողմեր:

Սյունիքում ծավալված ժողովրդազատագրական պայքարը հայ ժողովրդի հերոսական պատմության փառավոր էջերից մեկն է: Թուրքական ու պարսկական բռնապետությունների ահավոր լծի տակ տառապող, կեղեքվող ու ճնշվող հայ ժողովրդի մի հոծ զանգվածի՝ սյունեցիների պայքարը, չնայած ժամանակավոր հաջողություններին՝ վերջացավ իր ժամանակի համար անխուսափելի պարտությամբ: Պարտությանը նպաստեցին մի քանի պատճառներ: Դրանցից էին՝ ա) ապստամբությունը տեղի էր ունենում անջատ-անջատ՝ առանց միասնական կենտրոնի, բ) թշնամին՝ սկզբում պարսիկը, հետո՝ թուրքը ռազմական, տնտեսական եւ մարդկային ուժերով անհամեմատ գերազանցում էին հայերին, գ) հայերը զրկված էին հզոր դաշնակցից: Խոստացված օգնությունը չստացվեց Ռուսաստանից, քանի որ դեռեւս 1724թ. հունիսի 12-ին կնքվել էր ռուս-թուրքական պայմանագիրը, որն էլ բացառում էր որեւէ օգնություն Արցախի եւ Սյունիքի հայությանը:

Իրականում ազատագրական պայքարի պարտության հիմնական պատճառը երկրի ներքին եւ արտաքին ընդհանուր տնտեսական ու քաղաքական աննպաստ իրադրությունն էր: Ժողովրդական զրույցներն ու ավանդույթները պատմում են, որ Ղափանի հայության ազատագրական պայքարը շարունակվել է նաեւ հետագայում: Նվաճողների դեմ կռիվները ղեկավարել են մելիք Փարսադանի թոռ Այվազ բեկն ու Ստեփան իշխանի որդի մելիք Ղուկասը: Բազմաթիվ այլ զրույցներն ու ավանդույթները վկայում են, որ ղափանցիների դիմադրությունն օսմանցիների դեմ շարունակվել է մինչեւ 1730-ական թթ., երբ Թավրիզն ու Արդաբիլը վերագրավելուց հետո պարսկական զորաբանակները Նադիրի հրամանատարությամբ անցան Շիրվան եւ, պաշարելով Գանձակը, կապ հաստատեցին Արցախի եւ Սյունյաց հայ մելիքների, հավանաբար նաեւ Ղափանում դիմադրությունը շարունակող հայկական զինված ուժերի հետ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Эзов, Сношения Петра Великого с армянским народом, СПА 1898, стр 378-388*
2. *Հ. Կնյազյան, Ազատագրական պայքարը Դավիթ-Բեկի գլխավորությամբ, ԵՊՀ հրատարակչ., Երեւան 1963թ., էջ 68-69*
3. *Հ. Կնյազյան, Ազատագրական պայքարը Դավիթ Բեկի գլխավորությամբ, ԵՊՀ հրատարակչ., Երեւան 1963թ., էջ 58*
4. *Հ. Կնյազյան, Ազատագրական պայքարը Դավիթ Բեկի գլխավորությամբ, ԵՊՀ հրատարակչ., Երեւան 1963թ., էջ 60*
5. *Հայկական սովետական հանրագիտարան, հատոր III, Երեւան 1977թ., էջ 302*
6. *Հայ ժողովրդի պատմություն, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատար., հատոր IV, Երեւան 1972թ., էջ 162*
7. *Հայկական ՍՍՌ ԳԱ, Տեղեկագիր հասարակական գիտությունների, 1954թ. N6, էջ 104*
8. *Ն. Ադոնց, Երկեր, հատոր Բ, Երեւանի համալսարանի հրատարակչություն, Երեւան 2006, էջ 505-506*
9. *Եսայի կաթողիկոս Հասան Ջալալյան, Պատմություն համառօտ Աղուանից երկրի, Երուսաղեմ 1868, էջ 47-48*
10. *Հայկական սովետական հանրագիտարան, հատոր III , Երեւան 1977թ, էջ 302-303*
11. *Ռաֆֆի, Երկերի ժողովածու, հատոր 10, Հայպետհրատ 1959թ., էջ 167*
12. *Ստ. Շահումյան, Ընտիր պատմութիւն Դավիթ Բէգին.., Վենետիկ, 1737թ., էջ 76-78*
13. *Լեո, Հայոց պատմություն, հատոր 3, էջ 674*
14. *Ե. Լալայան, Ազգագրական հանդես, Զանգեզուրի գավառ, 1899թ.*
15. *Հայկական ՍՍՌ ԳԱ, Տեղեկագիր հասարակական գիտությունների, 1952թ., N3, էջ 99*
16. *Հ. Կնյազյան, Ազատագրական պայքարը Դավիթ Բեկի գլխավորությամբ, ԵՊՀ հրատարակչ., Երեւան 1963թ., էջ 103-104*
17. *Հայկական սովետական հանրագիտարան, հատոր III , Երեւան 1977թ., էջ 302-303*
18. *Հայ ժողովրդի պատմություն, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատար., հատոր IV, Երեւան 1972թ., էջ 164-165*
19. *Ռաֆֆի, Դավիթ Բեկ, Հայպետհրատ, 1956թ., էջ 574*
20. *Հայ ժողովրդի պատմություն, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատար., հատոր IV, Երեւան 1972թ., էջ 172*
21. *Հ. Կնյազյան, Ազատագրական պայքարը Դավիթ Բեկի գլխավորությամբ, ԵՊՀ հրատարակչ., Երեւան 1963թ., էջ 84-85*
22. *Ե. Լալայան, Ազգագրական հանդես, Զանգեզուրի գավառ,1904թ., գիրք12, էջ 185*
23. *Ашот Иованисян, Армяно-русские отношения в первой трети XVIII века, сборник документов, том II,часть II, Ереван 1967, стр.273,274-335*
24. *Ա. Այվազյան, 1720-ական թթ. Սյունյաց իշխանապետության տեղագրության մասին, էջմիածին (պաշտօնական ամսագիր Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան) N5 (մայիս 2006), էջ 60-64*
25. *Տեր Ավետիք քահանա, Ղափանցոց պատմություն, Հայրենապատում, էջ 149,152-153*
26. *Ղ. Սեբաստացի, Պատմություն Ղափանցոց, առաջաբան, էջ 49-ից առաջ ներդիր*
27. *Ստ. Շահումյան, Ընտիր պատմութիւն Դավիթ Բէգին.., Վենետիկ, 1737թ., էջ 71-72*

Հայոց ինքնիշխանությունը Սյունիքում

Լեռնահայաստանի Հանրապետությունը

ՄԱՐՏԻՆ ՋԻԼՖՈՒՂԱՐՅԱՆ

Սյունիքի ինքնավարության հռչակումը

Ի՞նչ Արարատյան Հանրապետության դրության կայունացումը, Զանգեզուրի ռազմաքաղաքական իրավական դրության վերջնական պարզվելը, երկիրը պետք է ապրեր ու կառավարվեր սեփական օրենքներով: Իսկ օրենքներ կարող էր ստեղծել ժողովրդի հավաքական կամքը: Անհրաժեշտ էր նաեւ ի մի բերել գավառում թուրք-բոլշեւիկյան զինված ուժերի դեմ անցած ամիսներին մղված արյունալի կռիվների արդյունքները, նաեւ մշակել ու ընդունել ապագա գործողությունների ծրագիր: Այդ խնդիրները պետք է լուծեր Համազանգեզուրյան առաջին համագումարը (1):

Համագումարի նախապատրաստական աշխատանքներն սկսվեցին 1920 թվականի դեկտեմբերի կեսերից: Գարեգին Նժդեհը եւ Գյուղացիական ժամանակավոր խորհուրդը գավառի բոլոր շրջաններ ուղարկեցին հեռախոսագրեր՝ պահանջելով հրավիրել շրջանային համագումարներ, նախապես այդ համագումարների պատվիրակներ ընտրելով գյուղական համայնքներում: Շրջանային համագումարներին առաջարկվում էր քննարկման դնել Հայաստանում տեղի ունեցած հեղաշրջման եւ դրա նկատմամբ շրջանի բնակչության բռնելիք դիրքի հարցը, ինչպես նաեւ ժողովրդական հիմունքներով ընտրել Համազանգեզուրյան համագումարի պատգամավորներ եւ նրանց Տաթեւ ուղարկել՝ համապատասխան մանդատներով:

Զանգեզուրի բոլոր շրջանների գյուղական համայնքներում ժամանակին անցկացվեցին ժողովներ, առաջադրվեցին, քննարկվեցին եւ ընտրվեցին շրջանային համագումարի պատգամավորներ: Այդ համագումարները, իրենց հերթին, ընտրեցին Համազանգեզուրյան առաջին համագումարի պատգամավորներ, որոնք մեկնեցին Տաթեւ:

Բացառություն էր կազմել Արեւիքի (Մեղրու) շրջանը, ուր հեռախոսագիրը հասել էր մեծ ուշացումով՝ դեկտեմբերի 21-ի երեկոյան:

Դեկտեմբերի 21-ի լույս 22-ի գիշերը Արեւիքի բոլոր 14 հայկական գյուղերում տեղի են ունենում հասարակական ժողովներ, որոնք ընտրում են ներկայացուցիչներ եւ շտապ մանդատներով ուղարկում Մեղրի գյուղ՝ շրջանային գյուղացիական համագումարի: Դեկտեմբերի 22-ին բացված համագումարին 12 գյուղերից ներկա էին 68 պատգամավորներ: Բացակայում էին Կարճեւանի եւ Ապկեզի ներկայացուցիչները:

Արեւիքի գյուղացիական պատգամավորների համագումարի օրակարգի հարցերն էին.

1. *Հայաստանում տեղի ունեցած հեղաշրջումը եւ Արեւիքի ժողովրդի բռնելիք դիրքը:*
2. *Համազանգեզուրյան համագումարին ներկայացուցիչներ ուղարկելու մասին:*

Օրակարգի առաջին հարցի քննարկումից հետո ընդունվեց հետեւյալ որոշումը.

«Բոլշեւիկյան իշխանությունը բռնի կերպով է փաթաթված հայ ժողովրդի վզին, Հայաստանը սովետական է հայտարարված տաճկական եւ ռուսական զորքի բռունցքի ճնշման տակ: Նորմալ պայմանների մեջ երբեք նման քաղաքական հեղաշրջում չէր կարող կատարվել Հայաստանում, ընդհակառակը, շատ անգամ Հայաստանը ցայտուն կերպով արտահայտել է, որ ինքն Ազատ եւ Անկախ Հայրենիք է ցանկանում:

Արեւիքի ժողովրդական ներկայացուցիչներս համոզված ենք, որ այս ապստամբությունն ավելի արագ կկատարվի, եթե Զանգեզուրը կանգուն մնա իր սահմանների մեջ: Իսկ ժողովրդի հոգին եւ հերոսական կամքն անընկճելի է, այն է՝ ապրել ազատ: Այդ իսկ նկատառումներով, Արեւիքի ժողովրդական ներկայացուցիչներս դեկտեմբերի 22-ի ժողովում գտանք, որ մեր հորիզոնների վրա դեռ փրկության ճառագայթներն ընդմիշտ չեն մարել, որ կա փրկության ճանապարհ, ուստի, որոշեցինք պաշտպանվել մինչեւ վերջին հնարավորությունը» (2):

Պատգամավորները Մեղրիից դուրս եկան, բայց Լիճք-Տաշտունի ճանապարհն առատ ձյան պատճառով փակվել էր, եւ նրանք ստիպված էին հետ վերադառնալ ու դեկտեմբերի 23-ին անցնել Հանքերը:

Նրանք Հանքերից հեռախոսով Տաթեւ հղեցին Արեւիքի գյուղացիական համագումարի որոշումը՝ ավելացնելով, որ արեւիքցիները լի են անկոտրում վճռականությամբ. *«Թույլ չտալ ոչ մի օտար զորքի եւ օտար մարդկանց ներս խուժել մեր երկրի սահմանները եւ խառնվել մեր ներքին գործերի մեջ»* (3):

Տաթեւի համազանգեզուրյան 1-ին համագումարը

Այսպիսով, Հայաստանի խորհրդայնացումից մի քանի օր անց՝ 1920թ.

Հայոց ինքնիշխանությունը Սյունիքում

Գարեգին Նժդեհի հուշահամալիրը Կապանում

դեկտեմբերի 25-ին, Տաթեւի վանքում տեղի ունեցավ համազանգեզուրյան 1-ին համագումարը, որի գլխավոր հարցը Խորհրդային Հայաստանի նկատմամբ ունենալիք վերաբերմունքն էր: Այն օրակարգում ձեւակերպված էր այսպես՝ **«Զեկուցում Հայաստանի քաղաքական անցուդարձերի մասին եւ համագումարի բռնելիք դիրքը»:** Համագումարի վերաբերմունքի ընտրության մեջ կարեւոր տեղ ու դեր էր տրվում այն բացասական արդյունքներին, որ ունեցել էր խորհրդային իշխանության ժամանակավոր գոյությունը Զանգեզուրում 1920թ. հուլիս-նոյեմբեր՝ հինգ ամիսների ընթացքում: Այդ ամիսների արդյունքները հանրագումարի էր բերել Զանգեզուրի գյուղացիական ժամանակավոր խորհուրդն իր 1920թ. նոյեմբերի 30-ի նիստում: Գյուղացիական ժամանակավոր խորհուրդը, որպես ժամանակավոր կառավարման օրգան, ստեղծվել էր Զանգեզուրի ազատագրումից հետո, որը գործելու էր մինչեւ համագումարի միջոցով հիմնական իշխանության ստեղծումը:

«Զանգեզուրի գյուղացիական խորհրդի այսօրվա նիստում, - կարդում ենք արձանագրության մեջ, - *որոշվեց արձանագրել տարվույս հուլիսի 5-ից նոյեմբերի 20-ը խորհրդային կառավարության միջոցով եւ կարգադրությամբ կատարված սպանությունները, բռնագրավումները եւ բռնությունները, որոնք գործադրված են ազգաբնակչության բոլոր խավերի նկատմամբ Զանգեզուրում»:* Այնուհետեւ, տվյալներ են բերված ըստ գյուղերի եւ ամբողջությամբ վերցված (4):

«Ազատ Սյունիք» հրատարակության մեջ, որպես օրինակ, բերված է միայն Կոռնիձոր եւ Տեղ գյուղերի բնակիչների համախոսականների սեղմ բովանդակությունը, որը ներկայացնում է սարսափելի պատկերներ: Կարմիր բանակի, նրա կազմում թուրքական «կամավորների կարմիր» դիվիզիայի օկուպացիան, բոլշեւիկների տիրապետությամբ հանդերձ, երկրամասում ստեղծել էր ահաբեկչության ծանր մթնոլորտ (5): Նման պայմաններում աննպաստ կարծիք էր ստեղծվել եւ անվստահություն ձեւավորվել նաեւ Խորհրդային Հայաստանի նկատմամբ: Ելնելով այդ ամենից, համագումարը որդեգրեց «առայժմ սպասելու» մարտավարությունը: Առայժմ սպասելու եւ հարցի լուծումը ձգձգելու մարտավարությունը շարունակվեց նաեւ հետագայում, ընդհուպ մինչեւ Զանգեզուրի գոյամարտի ու ինքնապաշտպանության վերջը (6):

Զանգեզուրի բոլոր շրջանների 69 գյուղերից ներկա էին ըստ բնակչության թվի ընտրված պատգամավորները, գավառի բոլոր շրջանային խորհուրդների 15 ներկայացուցիչները, Զանգեզուր-Գողթանի սպարապետ Գարեգին Նժդեհը, ընդամենը՝ 118 մարդ (7):

Համաժողովի դիվանի կազմում ընտրվում են Գեղեոն Տեր-Մինասյանը՝ նախագահ, Եգոր Հարությունյանը եւ Տիգրան Մելիք-Հուսեինյանը՝ փոխնախագահներ, Սամվել Մաշուրյանը եւ Նիկոլայ Դորունցը՝ քարտուղարներ:

Համագումարի օրակարգը

Առաջարկվում է համագումարի հե-

Հայոց ինքնիշխանությունը Սյունիքում

տեւյալ օրակարգը.

1. *Զեկուցում Հայաստանի քաղաքական անցուդարձերի մասին եւ համագումարի բռնելիք դիրքը:*
2. *Իրենց գործունեության մասին բոլոր շրջանային խորհուրդների զեկուցումները:*
3. *Ինքնավար Սյունիքի հռչակումը եւ նրա կառավարման ձեւի որոշումը:*
4. *Ինքնավար Սյունիքի իշխանության կազմակերպումը (Սպարապետի հրավիրումը, Ինքնավար Սյունիքի պառլամենտի դիվանի, Ինքնավար Սյունիքի վերահսկիչ մարմնի ընտրությունները):*
5. *Իշխանության կենտրոնատեղի որոշումը:*
6. *Արտաքին քաղաքականություն (փոխհարաբերությունների մշակում Հայաստանի եւ Ադրբեջանի խորհրդային հանրապետությունների, Պարսկաստանի կառավարության եւ հարեւան թուրքերի հետ):*
7. *Ինքնապաշտպանության հարց:*
8. *Պարենավորման հարց:*
9. *Պետական ծառայողների ռոճիկների նորմաների որոշման հարց:*
10. *Մասնավոր խոշոր սեփականությունների պետականացում.*

ա. *վանքապատկան եւ եկեղեցական,*
բ. *խաների, բեկերի եւ մելիքների,*
գ. *արդյունաբերական ձեռնարկությունների պետականացման հարց,*

11. *Ընթացիկ հարցեր (որբանոցի, ջուլհականոցի բացման, նախկին կառավարություններից զանազան անձնավորությունների մոտ մնացած գումարների պահանջման, դրամների գործադրության հարցը (8):*

Ինչպես տեսնում ենք, համագումարը, ըստ էության, նաեւ Սահմանադիր ժողովի դեր է կատարում, քանի որ քննության էին առնվելու մի շարք հիմնական պետական սկզբունքներ, մասնավորապես որոշվելու էր նաեւ երկրի պետական կառույցի խնդիրը (9):

«Սովետական կառավարությունը իր ալան-թալանը, իր ճնշումները, իր բռնությունները կատարեալ կերպով առաջ տանելու համար, հարիւրավոր անմեղ մարդիկներ բանտ ձգեց ու խեղդեց:

Զանգեզուրի աշխատաւոր գիւղացիությունը այլեւս չկարողացավ տանել նման բարբարոսութիւններ, որոշեց դուրս վռնդել սովետական Ռուսաստանի զօրքերին եւ նրա դիմակի տակ թաքնված ադրբեջանական վարձկաններին... » (10):

Մյուս կողմից, պատգամավորներն այն տեսակետն էին արտահայտում, որ Խորհրդային Հայաստանի նորածին իշխանությունը տվյալ իրադրության մեջ ի վիճակի չէ պաշտպան կանգնելու Զանգեզուրին, առավել եւս՝ անզոր է գավառն ընդգրկելու հանրապետության կազմի մեջ (11):

Ելնելով դրանից, համագումարը պարզեց *«Զանգեզուրը յայտարարել ժամանակաւորապէս ինքնավար, մտցնելով հանրապետական իրաւակարգ՝ մնալով անկախ, մինչեւ քաղաքական հնարաւորութիւն կունենայ միանալու իր մայր երկրի՝ Հայաստանի հետ»* (12):

> *Պատգամավորներն իրենց ելույթներում նկարագրում էին Զանգեզուրի ծանր տնտեսական վիճակը, ցավով նշում, որ վաղուց դադարել են աշխատելուց Ղափանի պղնձահանքերը եւ ձուլարանը, փակվել են Գորիս քաղաքի մանր ձեռնարկությունները:*

Ծայրահեղ անկման էին հասել գավառի արդյունաբերությունն ու գյուղատնտեսությունը: Խոպան էին մնացել դաշտերը, բարձիթողի վիճակում՝ այգիները: Կեր չկար կովերի ու լծկանների համար:

Երեք երկար տարիներ մեկուսացված լինելով դրսի աշխարհից, գավառի բնակչությունն իր գոյությունը պահպանում էր միայն ու միայն ներքին աղքատ միջոցներով՝ ամեն ինչում տնտեսելով, հաճախ՝ ուղղակի զրկելով իրեն:

Շրջանառության մեջ գտնվող անդրկովկասյան բուն թղթադրամները եւ Հայաստանի Հանրապետության չեկերն արժեզուրկ էին, չէին երաշխավորված որեւէ տարադրամով, ուստի, առեւտուրը ոչ այլ ինչ էր, քան պարզ ապրանքափոխանակություն: Այդ ամենի մասին խոսում էին համագումարի պատգամավորները եւ առաջարկներ անում, թե ինչպես շտկել դրությունը:

«Զանգեզուրի աշխատավոր գյուղացիությունը, - կարդում ենք համագումարի որոշման մեջ, - *մոտ 5 ամսվա ընթացքում դատարկեց դառնության բաժակը մինչեւ վերջին կաթիլը: Խորհրդային հրամանատարությունը հենց առաջին քայլից գավառիս գյուղացիության նկատմամբ սկսեց իր ավերիչ, քայքայիչ քաղաքականությունը, որի առաջ նսեմանում են պատմական լենկ-թեմուրյան եւ արեւելքի բարբարոսների արշավանքներն ու գործելակերպը»:*

«Ինքնավար Սյունիքի» հռչակման անհրաժեշտությունը եւ «մինչեւ»-ի իմաստը բացատրել է Նժդեհը 1923 եւ 1925թթ. հրատարակած հոդվածներում: *«Հայաստանի Հանրապետության անկումից հետո*, - գրել է նա, - *երբ Կարմիր բանակի հրամանատարության հետ իմ կողմի բանակցությունները մնացին անհետեւանք, երբ կարմիրները, «շլացած Երեւանի կամովին խորհրդայնացումից», մերժեցին հաշտության իմ առաջարկած նախնական պայմանները, ստիպեցին Սյունիքը հայտարարել անկախ: Սյունիքը չէր կարող տեղի տալ, քանի դեռ տաճկական զորքերը գտնվում էին Ալեքսանդրապոլում, Շարուրում եւ Նախիջեւանում, միշտ պատրաստ, ցանկության դեպքում՝ արհամարհելու Երեւանի բոլշեւիկյան ուժերը եւ շարժվելու Սյունիքի դեմ»:* Միաժամանակ, Նժդեհը խոսում է «կարմիր կացնի սարսափի տակ» ընկած «ամբողջ հայ մտավորականության» շահերի մասին (13):

Նորից անդրադառնալով տվյալ հարցին, Նժդեհը նշում է, որ Հայաստանի Հանրապետության անկումով Զանգեզուրը դադարեց ինքնանպատակ լինելուց եւ դարձավ միջոց, որով խնդիր էր դրված ապահովել «մեր լեռնահայության ֆիզիկական գոյությունը սովետ-պանիսլամական վտանգից», «փրկել Հայաստանի հողը մահացու անդամահատությունից, իսկ հայ մտավորականությանը՝ գլխովին ոչնչացումից»: Ուստի, պետք էր, Զանգեզուրը «ներքուստ ավելի եւս ամրացնելու նպատակով», հռչակել այն «Ինքնավար Սյունիք» (14):

Այսպիսով, եթե մինչեւ Հայաստանի խորհրդային դառնալը Զանգեզուրը պայքարում էր Ադրբեջանի հավակնություններից պաշտպանվելու համար, ապա դրանից հետո նա վերածվեց միջոցի՝ ստիպելու, որ խորհրդային իշխանությունն ընդունի իր պայմանները՝ խորհրդային բանտերից ազատելու հայ մտավորականներին, ինչպես նաեւ կան-

Հայոց ինքնիշխանությունը Սյունիքում

խելու խորհրդա-քեմալական հետագա հնարավոր վտանգը Հայաստանի նկատմամբ:

Սյունիքի սահմանադրությունը

«Կառավարության ձեւի գլխավոր գծեր»

Տաթեւի համագումարն ընդունեց Ինքնավար Սյունիքի, այսպես կոչված, սահմանադրությունը, որն անվանվում է «Կառավարության ձեւի գլխավոր գծեր»: Ըստ դրա՝ բարձրագույն օրենսդիր մարմինը խորհուրդն էր /պառլամենտ-խորհրդարանը/ որպես ընտրովի մարմին: Տվյալ պահին համագումարը հայտարարվեց օրենսդիր: Գործադիր մարմինը կամ պրեզիդիում-դիվանն ընտրվում էր խորհրդարանի անդամներից եւ ոչ անդամներից՝ 6 ամիս ժամանակով, 9 հոգուց բաղկացած, որը ղեկավարելու էր երկրի զինվորական ու քաղաքացիական բոլոր գործերը:

Որոշման մեջ ուղղակի նշվում է, որ. «Համագումարը միաձայն ընդունում ու հաստատում է ինքնավար Սիւնիքի կառավարութեան ձեւի հետեւեալ գլխաւոր գծերը.

Սոյն համագումարը ճանաչել ինքնավար Սիւնիքի բարձր օրէնսդրական մարմին-պառլամենտ եւ վերապահել նրան Սիւնիքի բախտի լիակատար տնօրէնութիւնը» (15):

Խորհրդարանն էր նշանակում եւ արձակում զինվորական ընդհանուր հրամանատարին, պատերազմ հայտարարում, հաշտություն կնքում՝ արտակարգ դեպքում դա վերապահելով նաեւ սպարապետին:

Ըստ նշված սահմանադրության կամ սահմանադրական օրենքի՝ Սյունիքում հաստատվում են հանրապետական կարգեր, կառավարման հանրապետական խորհրդարանական ձեւ: Խորհրդարանի կազմումը բավական ժողովրդավարական է: Փաստորեն, յուրաքանչյուր գյուղական համայնք իր պատգամավորն ուներ պառլամենտում: Ընդհանուր գծերով «Սյունյաց սահմանադրությունը» հիշեցնում է «Որոգայթ փառաց»-ի ընտրահամակարգի սկզբունքները:

«Սյունիքի սահմանադրությունը» Խորհրդարանը (պառլամենտը) հաստատում է ոչ միայն որպես Սյունիքի բարձրագույն օրենսդիր մարմին, այլեւ որպես Սյունիքի բախտի լիակատար տնօրենի: Հատկապես ուշագրավ է այն հանգամանքը, որ Խորհրդարանի գերակայությունը, կոլեգիալ կառավարմանը գերապատվություն տալու գաղափարը հետեւողականորեն ամրագրվել է հայկական հիմնական սահմանադրական ակտերում՝ «Որոգայթ փառաց»-ում, Արեւմտահայ Ազգային սահմանադրության (1860-63թթ.) մեջ, ինչպես տեսանք նաեւ «Սյունյաց սահմանադրություն»-ում, կամ սահմանադրական օրենքում: Խորհրդարան-պառլամենտի իշխանության մյուս թեւերի նկատմամբ գերակայության գաղափարը բուրժուադեմոկրատական կարգերի երկունքի շրջանի արդյունք էր: Այդ գաղափարն իր ուղղակի ազդեցությունն ունեցավ նաեւ ժամանակաշրջանի հայ իրականության վրա: Սակայն համայնական կառավարման միտումներն ու պրակտիկան հայ իրականության մեջ ավելի խորն ակունքներ ունեն. արդեն 5-րդ դարի հայ պատմագիրները բազմիցս հիշատակում են աշխարհաժողովների մասին, որոնցում թե իշխանների եւ թե շինական-ռամիկների մասնակցությամբ քննարկվում էին երկրի հասարակական-պետական կյանքին վերաբերվող կարեւորագույն հարցեր:

Վարչատերիտորիալ բաժանումը

Վարչական տեսակետից Սյունիքը բաժանվում էր 6 շրջանների՝ Բուն Զանգեզուր, Տաթեւի ձոր, Ղափան, Դարաբասի ձոր, Սիսիան եւ Գենվազ: Շրջանում իշխանությունը պատկանում էր գործադիր մարմնին՝ 3-5 անդամով, դարձյալ 6 ամիս ժամանակով: Նրանց վերապահված էր շրջանների ներքին հարցերի լուծումը, որոնք չունեին համապետական նշանակություն: Շրջանային գործադիր մարմինն ուներ իր մասնաճյուղերը՝ ներքին գործերի, պարենավորման եւ զինվորական:

Հայոց ինքնիշխանությունը Սյունիքում

Տաթեւի վանքը

Շրջանը /գավառակը/ ուներ իր գավառապետը եւ շրջանային կոմիսարները, որոնց ընտրում էր շրջանային գործադիր մարմինն իր կազմից եւ հաստատում խորհրդարանի դիվանը:

Գյուղը կամ համայնքն ուներ իր գյուղական կոմիսարը, որոշ դեպքում, նաեւ՝ կոմիսարի օգնականը: Նրանք ընտրվում էին գյուղական հասարակության եւ համայնքի կողմից եւ հաստատվում շրջանային գործադիր մարմնում: Ինքնավար Սյունիքի վերահսկիչ մարմինը վերահսկում էր պետական հիմնարկությունների գործունեությունը:

Կառավարության (դիվանի) ընտրությունը, Սյունյաց Սպարապետի հրավիրումը

Համագումարի առանձին միաձայն որոշմամբ, ազատարար եւ հերոս Նժդեհը հրավիրվեց որպես Սյունյաց սպարապետ:

Համագումարը, գաղտնի քվեարկությամբ, ընտրեց դիվանի /կառավարության/ 8 անդամ: Գենվազը, որի ներկայացուցիչները տեղ չհասան համագումարին մասնակցելու համար, ընտրելու էր դիվանի 9-րդ անդամին:

Ինքնավար Սյունիքի կենտրոնատեղին Գորիսն էր:

Համազանգեզուրյան համագումարը որոշումներ ընդունեց նաեւ արտաքին հարաբերությունների վերաբերյալ: *«Զանգեզուրը միշտ ձգտել է լինել Մայր երկրի՝ Հայաստանի Հանրապետության անբաժան մասը,* - արձանագրել է համապատասխան բանաձեւը: - *Բայց, նկատի առնելով Հայաստանի վերջին քաղաքական փոփոխությունները, որ նա, ստիպված, մի շարք քաղաքական անբարեհաջող հանգամանքներից ելնելով, իրեն հայտարարել է խորհրդային, մի իրավակարգ, որի հետ երբեք չի կարող հաշտվել մեր ժողովուրդը, համագումարը որոշեց, մինչեւ նրա այդ իրավակարգից բաժանվելը, գործել սեպարատ եւ ապրել ուրույն կյանքով»:*

Բանաձեւեր ընդունվեցին նաեւ Ադրբեջանի կառավարության հետ բարեկամական վերաբերմունքի, Պարսկաստանի հետ փոխհարաբերությունները զարգացնելու, այնտեղ ներկայացուցիչ ունենալու, ինչպես նաեւ Զանգեզուրում հարեւան թուրք բնակչության հետ թշնամանքը դադարեցնելու, երկու դարավոր հարեւանների միջեւ սերտ բարեկամություն հաստատելու մասին (16):

Ինքնավար Սյունիքի դիվանի /կառավարության/ նախագահ ընտրվեց Գեդեոն Տեր-Մինասյանը:

Մինչեւ 1920թ. դեկտեմբերի 25-ը՝ հակառակորդից ազատագրված Զանգեզուրը ղեկավարում էր 7 մարդուց բաղկացած Գյուղացիական ժամանակավոր խորհուրդը: Սակայն, ինչպես գրել է Ս. Վրացյանը, «Երկրի գերագույն իշխանությունը, փաստորեն, հանդիսանում է սպարապետ Նժդեհը: Նժդեհի անձնական հատկությունները եւ նրա արտակարգ ազդեցությունը ժողովրդի վրա ստվերի մեջ են թողնում կառավարությունը»: Այսպիսով, կարելի է ասել, ինչպես նկատել է Սիմոն Վրացյանը, համազանգեզուրյան 1-ին համագումարն ուներ սահմանադիր ժողովի նշանակություն:

> *Համագումարից հետո 1921թ. փետրվարի 23-ին, հրապարակվեց Ինքնավար Սյունիքի կառավարության առաջին կոչը «Հայ ժողովրդին», ուր գնահատվում էր երկրամասի ինքնավարության հռչակումը եւ մեծարվում Նժդեհի սպարապետությունը:*

Սպարապետի օծումը Գորիսի Սբ Գ. Լուսավորիչ եկեղեցում

1921թ. փետրվարի 21-ին Գորիսի Սուրբ Լուսավորիչ եկեղեցում՝ հանդիսավոր իրադրության մեջ, օծվել էր սպարապետին հանձնվող գոտին եւ եռագույն դրոշը, որը դարձյալ նա էր ընդունել:

«Հայ ժողովուրդը, - ասված է կոչում, - *կառավարությունը՝ ժողովրդի անունից, սպարապետին հանձնելով ազատ Սյունիքի դրոշակը, դրա հետ մեկտեղ հանձնել է եւ «մեր քաղաքական բախտը», համոզված լինելով, որ, ինչպես մինչեւ այսօր, այսուհետեւ եւս, նա կշարունակի «փառավոր հաղթություններով ապացուցել աշխարհին, որ հայ ժողովուրդը, տոգորված ազատ եւ անկախ հայրենիք ունենալու տենչով, պատրաստ է զոհաբերել այն ամենը, ինչ հարկավոր կլինի հասնելու ցանկացած նպատակին»* (17):

Հավանորեն, այս համագումարի մասին է խոսվում, չնայած փաստաթղթում նշվում է որպես 2րդ համագումար, Կարմիր բանակի գրանցման բաժնի 1921թ. փետրվարի 11-ի՝ Զանգեզուրի շրջանին վերաբերող հետախուզական ամփոփագրում: *«Գործակալական տվյալները,* - ասվում է ամփոփագրում, - *հաստատում են, որ կազմավորվել է պառլամենտ՝ նախագահությամբ հայտնի ավանտյուրիստ, ուսուցիչ Գեդեոնի: Զինվորական մինիստր է նշանակվել Նժդեհը: Իրադարձությունների ընթացքին տոն է տալիս Հայաստանի նախկին դաշնակցական զինվորական մինիստր Ռուբեն փաշա Տեր-Մինասյանը: Համագումարում ընդարձակ զեկուցում է արել Նժդեհը եւ ասել, որ գարնանը Կարմիր բանակն անպայման կձեռնարկի իր*

Հայոց ինքնիշխանությունը Սյունիքում

խմբի վերացումը եւ հրավիրել է ներկաներին արտահայտել իրենց վերաբերմունքը: Եղել է նաեւ Կարմիր բանակին հանձնվելու առաջարկություն, քանի որ նա կարողացել է պարտության մատնել Կոլչակին, Դենիկինին եւ Վրանգելին» (18):

Խորհրդային Ադրբեջանն ուշադրությամբ հետեւում էր Զանգեզուրի իրադարձություններին, որին տիրելու նրա փորձերը մատնվել էին անհաջողության: 1921թ. փետրվարի 15-ին Շուշիի հեղկոմը Ն.Նարիմանովին (Օրջոնիկիձեի համար) ուղարկած գրության մեջ հայտնում էր, թե Զանգեզուրից Կարմիր բանակի հեռանալուց հետո /խոսքը 1920թ. նոյեմբերին Զանգեզուրում Կարմիր բանակի կրած խայտառակ պարտության մասին է /Ղարաբաղի քաղաքական դրությունն ավելի է վատթարացել: *«Այդ կապակցությամբ Զանգեզուրի դաշնակցականները կազմակերպել են գյուղացիական խորհուրդ, «Ինքնավար կառավարության» գլխավորությամբ /հասկանալ 1-ին համագումարը- (19) եւ, զգալով մեր թուլությունը, որոշել են իրականացնել իրենց վաղեմի ցանկությունը դաշնակցական իշխանության տիրապետությունը Զանգեզուրում եւ Ղարաբաղում»: Այդ նպատակով,* - շարունակում է հեղկոմը, - *առայժմ, հնարավորություն չունենք հարձակվել Քրդստանի ուղղությամբ, դաշնակցականները ապստամբություն են բարձրացրել Վարանդայի 2-րդ տեղամասում՝ Խանքենդի 1-ին տեղամասի հետ միանալու համար:*

Սյունիքի պառլամենտը (Խորհրդարանը)

Այսպիսով, Սյունիքի ինքնավարության հռչակմամբ դրվեցին Լեռնահայաստան հայկական պետության հիմքերը: Ստեղծվեց նրա իշխանության բարձրագույն օրենսդիր մարմինը՝ խորհրդարանը, ի դեմս համագումարի:

Սահմանվեց նրա ձեւավորման կարգը՝ 100 ծուխ ունեցող համայնքից 1, 100-200-ից՝ 2, 200-ից ավելի ծուխ ունեցող համայնքներից՝ 3 պատգամավոր.

ա) զինվորական ընդհանուր հրամանատարի՝ սպարապետի ընտրությունը,
բ) պատերազմ հայտարարելու եւ հաշտության բանակցություններ վարելու իրավունքը, իսկ արտակարգ դեպքերում դա վերապահվում էր նաեւ սպարապետին,
գ) երկրի թե՛ քաղաքացիական եւ՛ թե զինվորական կառավարչական ձեւի հաստատումը եւ օրենսդրությունը:

Եթե նայում ենք հարցին պետության եւ իրավունքի տեսության տեսանկյունից, որ օրենսդրական իշխանության ֆունկցիան իրականացնում են պետության բարձրագույն ներկայացուցչական մարմինները, որն իրականացնում է.

ա) ֆինանսական լիազորություններ, բ) վերահսկողություն գործադիր իշխանության նկատմամբ, գ) մասնակցում է գործադիր իշխանության կազմավորմանը եւ այլն, ապա, ակնհայտ է դառնում, որ ինքնավար Սյունիքն արդեն ուներ պետությանը բնորոշ իր պառլամենտը:

Պառլամենտի կողմից հետեւյալ կերպ էր կազմակերպվում ինքնավար Սյունիքի կառավարությունը. «Պառլամենտն ընտրում է 6 ամիս ժամանակով 9 հոգուց բաղկացած կառավարութիւն եւ ցրւում: Մինչեւ պարլամենտի նոր նստաշրջանը, կառավարութեանն է անցնում այդ երկրի զինւորական եւ քաղաքացիական բոլոր գործերի ղեկավարութիւնը, որը եւ կիրառում է կեանքի մէջ, Պառլամենտից բղխած բոլոր օրէնքներն ու որոշումները:

Ծանօթութիւն. Պառլամենտը կառավարութեան անդամ կարող է ընտրել նաեւ ոչ պառլամենտի անդամներին:

դ) Կառավարութեանն է վերապահւում զինւորական ընդհանուր հրամանատարի-սպարապետի հրաւիրումը եւ արձակումը:
ե) Կառավարութեանն է վերապահւում պատերազմ յայտարարելու եւ հաշտութեան բանակցութիւններ վարելու իրաւունքը, իսկ արտակարգ դէպքում, այդ վերապահւում է նաեւ սպարապետին:
զ) Երկրի թե քաղաքացիական եւ թէ զինւորական կառավարչական ձեւերի հաստատումը եւ օրէնսդրութիւնը:
է) Կառավարութիւնը ունենում է հետեւյալ վարչութիւնները 1) Ներքին-գործերի, 2) Արտաքին-գործերի, 3) Պարենաւորման, 4) Արդարադատութեան, 5) Ֆինանսական, 6) Լուսաւորութեան, 7) Առեւտրա-Արդյունաբերութեան, 8) Հողային, 9) Ճանապարհների հաղորդակցութեան (փոստ, հեռագիր, հեռախոս եւ խճուղի), 10) Խնամատարութեան:
ը) Բոլոր խոշոր եւ կարեւոր խնդիրները, մասնաւորապէս ներքին ու արտաքին քաղաքականութեանը վերաբերող, իրենց լուծումն ստանում են ոչ թէ այս կամ այն վարիչի, այլ կառավարութեան ամբողջ կազմի կողմից:
թ) Բոլոր պատասխանատու պաշտօնեաները հաստատւում են կառավարութեան կողմից՝ վարիչների առաջարկութեամբ:
ժ) Զինւորական բոլոր տեսակի գործերը տարւում են սպարապետի ղեկավարութեամբ, որը այդ մասին իրազեկ է դարձնում կառավարութեան»:

Այսպիսով, սահմանադրական մակարդակով կարգավորվում է նաեւ ոչ միայն կառավարության կազմակերպման կարգը, այլեւ ստույգ որոշում է նրա կարգավիճակը:

Համագումարի կողմից ստեղծվում են նաեւ իշխանության ու կառավարման տեղական մարմինները եւ որոշվում նրանց իրավասությունների շրջանակը:

Տաթեւի համազանգեզուրյան II համագումարը, Լեռնահայաստանի անկախության հռչակումը

Սյունիքի խորհրդարանի դիվանի հրավերով 1921թ. ապրիլի 26-ին Տաթեւի վանքում կայացավ Ինքնավար Սյունիքի հայ ազգաբնակչության 2-րդ (Արտակարգ) համագումարը, որտեղ 64 գյուղից ներկա էին 95 պատգամավոր եւ Սպարապետ Նժդեհը:

Օրակարգը

Համագումարը հաստատում է հետեւյալ օրակարգը, 1. Ինքնավար Սյունիքի դիվանի կազմի հրաժարականը: 2. Պարենավորումը: 3. Ինքնավար Սյունիքի սահմանադրության վերամշակումը: 4. Ազատ հողերի բաշխման հարցը: 5. Պաշտոնյաների վարձատրության մասին: 6. Դպրոցական գործ: 7. Պետական հարստության պահպանության մասին: 8. Նոր կառավարության (դիվանի) ընտրություն: 9. Համագումարում հարուցվե-

Հայոց ինքնիշխանությունը Սյունիքում

Լեռնահայաստանի մայրաքաղաք Գորիսը

լիք խնդիրներ:

Համագումարը վարչապետ ընտրեց Նժդեհին՝ նրան հանձնարարելով նոր կառավարության կազմավորումը: Կառավարության անդամը կոչվելու էր նախարար (20):

Նույն օրը պառլամենտը ողջունեց զորքին ու նրա հրամանատարներին՝ նրանց մաղթելով նոր հաղթանակներ (21):

Նժդեհը, հանդես գալով զեկուցմամբ, հանգամանալից հաշվետվություն է տալիս, կատարում է Ինքնավար Սյունիքի ռազմաքաղաքական եւ սոցիալ-տնտեսական իրավիճակի բազմակողմանի ու խոր վերլուծությունը, հանրագումարի բերում նախորդ համագումարից հետո կատարված աշխատանքները, ժամանակների հրատապ խնդիրները: Սպարապետի սպառիչ զեկուցումից հետո, համագումարի պատգամավորներն այլեւս ավելորդ են համարում լսել հաշվետու մյուս զեկուցումներն առանձին-առանձին եւ անցնում են մտքերի փոխանակության:

Պարենավորման հարցը

Այնուհետեւ քննարկվում է պարենավորման հարցը, որի մասին դարձյալ զեկուցում է Նժդեհը: Նա նկարագրում է տնտեսական ծանր կացությունը գավառում, բնակչության կրած տառապանքները, որոնք անընդհատ խորանում էին Արարատյան դաշտից եկած հազարավոր գաղթականներին կերակրելու պատճառով:

Սյունիքը հացի մեծ կարիք ուներ սկսած դեռ 1918 թվականից, երբ Անդրկովկասը մատնվել էր քաոսի, երբ ծայր էին առել հայ-ադրբեջանական եւ հայ-վրացական բախումները, որի հետեւանքով փակվել էին ճանապարհները, եւ լեռնաշխարհը կղզիացել էր: Բայց, եթե 1918-1919 թվականներին վիճակն ինչ-որ կերպ տանելի էր, ապա 1920թ. ամառվանից, սովը չոքել էր զանգեզուրցիների դռանը: Ճիշտ է, 1920-ին Կարմիր բանակի զորքերից խլած հացի պաշարները փոքր-ինչ մեղմել էին զանգվածային սովը: Նժդեհի պատկերավոր խոսքերով ասած՝ զանգեզուրցին «հաց էր ճարել իր սրի ծայրով», բայց 1921թ. գարնանը նա նորից սոված էր:

1921թ. գարնան ամիսներին սովի սաստկացումը երկու պատճառների հետեւանք էր. ա) Սյունիք թափված բազմահազար գաղթականությունն արագորեն նվազեցնում էր զանգեզուրցիների հացի առանց այն էլ խղճուկ պաշարը, բ) Արաքսի վրայով Սյունիքից դեպի Պարսկաստան կամուրջ չլինելը եւ այդ երկրից բավարար քանակությամբ հաց չստանալը: Աշխարհից կտրված երկրամասը դրսի օգնության որեւէ հույս չուներ:

Այս պայմաններում սովը սաստկանում էր օրըստօրե, ժամ առ ժամ: Շատ գյուղերի բնակիչների միակ սնունդը դաշտերի բանջարեղենն էր եւ արմտիքը: *«Դիրքապահ վաշտերը շատ ռազմաճակատներում ապրում էին վայրի շագանակի ալյուրից պատրաստած հացով,* - նշել է Նժդեհը, - *Գողթանը գործածեց անգամ կատվի եւ էշի միս» (22):*

Սպառվելու վրա էր ռազմամթերքը: *«Նման դժնդակ պայմաններում,* - ասում էր Նժդեհը, - *բանակները գոնե*

Հայոց ինքնիշխանությունը Սյունիքում

ժամեր դիմադրելու փոխարեն, թշնամու անարգանքին են հանձնում իրենց դրոշակները, «տեղի են տալիս կառավարությունները», բայց «սյունեցին չլքեց իր վահանը», քանզի նրա մարմնում «ցեղի հրաշագործ ոգին» էր: Կրելով գերմարդկային տառապանքներ, նա, զարմանալիորեն, չէր ընկճվում, չէր թուլացնում բազուկը, շարունակում էր ամուր բռնած պահել զենքը (23):

Համագումարին տված հաշվետվության մեջ Նժդեհը պատգամավորներին տեղեկացնում էր, որ հացի չնչին պաշարներն ինչ-որ չափով լրացնելու համար Ինքնավար Սյունիքի իշխանությունները 1921թ. գարնանը մի շարք փորձեր են արել հաց հայթայթել հարեւան ադրբեջանական թուրքաբնակ եւ քրդաբնակ Ավդալարի, Կուբաթլիի, Զանգելանի, Ջիբրայիլի շրջաններում: Այդ նպատակով մարտի 21-ին Ադրբեջանի մոտակա գյուղերից Գորիս էին հրավիրվել երեք մարդ՝ Էյվազբեկովը՝ Էյվազլար գյուղից, Հաջի Հաշիմը՝ Շուռնուխից եւ մեծահարուստ Քերբայալ Աղամամեդը՝ Մելիք-Ահմեդլի գյուղից, որոնց հետ Նժդեհը հանդիպել եւ առաջարկել էր համեմատաբար բարձր գներով հացահատիկ վաճառել: Սրանք համաձայնել էին, բայց վերադառնալով իրենց գյուղերը՝ ադրբեջանական իշխանությունների սպառնալիքների տակ, հրաժարվել էին կատարել տված խոստումը: Նման մեկ այլ խորհրդակցություն ապրիլի 6-ին հրավիրվել էր Ղափանի Ագարակ գյուղում, որտեղ Խոջախան, Մինջեւան, Խորամա, Իսկենդերբեյլի, Դոնդարլու եւ այլ գյուղերից եկել էին ոչ քիչ թվով հարուստ թուրքեր՝ Շահսուվարբեկ Քալանթարովը, Բախլուլ էֆենդի Բահչետին եւ ուրիշներ: Խորհրդակցությանն անձամբ եկել էր մասնակցելու Նժդեհը: Այստեղ եւս հացահատիկ վաճառելու խոստումներ էին եղել, որոնք նույնպես չէին կատարվել:

Բնակչության եւ զորքի պարենավորումը համարելով առաջնային, համագումարը տեղի պաշտոնյաներին ցուցում տվեց՝ խիստ կազմակերպված կատարել հացահատիկի հունձը, հացը հավաքել անկորուստ, միաժամանակ միջոցներ հայթայթել Պարսկաստանից լրացուցիչ հացահատիկ կամ ալյուր ձեռք բերելու համար:

Պարենավորման խնդրի վերաբերյալ համագումարի միաձայն ընդունած հայտարարության մեջ ասված էր.

«Պարենավորման համար Սպարապետը հայտարարում է, որ մինչեւ նոր հունձը հնարավոր է Հայաստանի Հանրապետության կառավարության նյութական օգնությամբ հաց ձեռք բերել եւ միաժամանակ, ըստ հնարավորության աշխատել կազմակերպել պետական տրանսպորտը եւ ժողովրդին ազատել փոխադրական ծանր պարտականությունից» (24):

Այնուհետեւ քննարկվում է կառավարման մարմիններ կազմելու ձեւի եւ սկզբունքների հարցը: Պատգամավորների ձայների մեծամասնությամբ, համագումարը որոշում է.

1. *«Ինքնավար լեռնաշխարհ Ազատ Սյունիքը» հայտարարել անկախ պետություն եւ այն վերանվանել Լեռնահայաստան, որի մեջ մտնում են Զանգեզուրը, Վայոց ձորը (Դարալագյազ) եւ Լեռնային Ղարաբաղը: Գորիս քաղաքը համարել Լեռնահայաստանի մայրաքաղաք:*
2. *Քանի որ նորաստեղծ պետությունն ազդարարվում էր հանրապետական եւ ժողովրդավարական, ուստի, այն պետք է ունենար համապատասխան հաստատություններ՝ պառլամենտ, նախարարների խորհուրդ եւ ինքնիշխանությանը բնորոշ մյուս հատկանիշները:*
3. *Համագումարը հայտարարել Լեռնահայաստանի վարչապետություն՝ նախարարների խորհուրդ: Կառավարության անդամներին հետայսու անվանել նախարարներ:*
4. *Վարչապետ ընտրել Սպարապետին՝ նրան վերապահելով նոր կառավարության կազմի ընտրությունը (25):*

Կառավարության կազմը

Նժդեհը համագումարի հաստատմանը գրավոր ներկայացնում է կառավարության յոթ մարդուց բաղկացած հետեւյալ կազմը.

1. *Գ. Նժդեհ՝ վարչապետ եւ արտաքին գործոց նախարար,*
2. *Ս. Մելիք-Յոլչյան՝ ներքին գործոց,*
3. *Հ. Տեր-Հակոբյան՝ պարենավորման,*
4. *Բժիշկ Մ. Մինասյան՝ խնամատարության,*
5. *Հովհ. Տեւեճյան՝ արդարադատության եւ լուսավորության,*
6. *Ավ. Օհանջանյան՝ հաղորդակցության եւ փոստ-հեռագրի,*
7. *Բժիշկ Ս. Եղիազարյան՝ ֆինանսների նախարար:*

«Համազանգեզուրյան Տաթեւի 2-րդ Խորհրդարանը սրտանց ողջունում է իր կուռ, անհաղթահարելի եւ տոկուն բանակի ռազմիկներին եւ լիահույս է, որ այդ անհաղթ բանակը, որ մինչեւ օրս իր փառապանծ հաղթանակներով աշխարհն է զարմացրել, այսուհետեւ էլ պատրաստ կլինի նոր հրաշքներ, նոր զարմանքներ ցուցադրելու քաղաքակիրթ աշխարհին, իր կատարյալ եւ վերջնական հարվածը տալով հայ աշխատավորության թշնամիներին:

Կազմված է կառավարություն:

Մեր ինքնավար Սյունիքն այսուհետեւ կոչվելու է Լեռնա-Հայաստան, որն իր քաջարի զորքով, իր անպարտ առյուծասիրտ մարտիկներով սպառնալիք պետք է լինի մեր բոլոր թշնամիների համար (26):

Մեր ազատարար սպարապետ Նժդեհին տրված է զորավարի տիտղոս եւ «Խուստուպյան արծիվ» շքանշան:

Այս սուրբ տաճարում նա ուխտեց եւ իր սրբազան խոսքն ասաց ձեզ հետ միասին, սեւ օրվա համար հայության բաժին համարված Սյունիքը դարձնել հայության վերածնության օրրան» (27):

1921թ. մայիսի 1-ին Լեռնահայաստանի կառավարությունը Գորիսում հանդես եկավ Դեկլարացիայով: Կառավարությունը հայտարարում էր, որ «իր առաջնակարգ պարտքն է համարում լարել երկրի բոլոր ուժերը՝ զորացնելու մեր հայրենիքի ինքնապաշտպանության ռազմական կորովը. Լեռնահայաստանը պետք է լինի ամուր հենակետ՝ մոտ ապագայում Մայր Հայաստանը թշնամի տարրերից ազատելու համար» (28):

Կառավարությունն իր կարեւորագույն խնդիրներից էր համարում պարենավորման գործի արմատական բարելավումը, գյուղացիական տնտեսությունների արագ զարգացումը: Միաժամանակ, ազդարարվում էր կառուցել իրավական պետություն՝ *«մոտեցնելով ժողովրդին եւ մատչելի դարձնելով դատավարությունը, զարկ տալ ժողովրդի լուսավորության գործին՝ կազմակերպելով նորանոր դպրոցներ, անգրագետների դասընթացներ,*

Հայոց հնգնիշխանությունը Սյունիքում

դասախոսություններ, զրույցներ, երեկույթներ եւ տարածելով գրավոր հրատարակություններ: Կառավարությունը ջանք չի խնայելու հանրային առողջապահությունը եւ բժշկական օգնությունը դնելու ավելի լավ հիմքերի վրա» (29):

Կառավարությունը վստահ էր, որ ժողովրդի միակամ աջակցության պայմաններում ինքը կարող է կատարել իր առաքելությունը: *«Լիահույս լինելով, որ Լեռնահայաստանի ազատատենչ ժողովուրդը եւ պարտաճանաչ պաշտոնեությունը ոչ մի ջանք չեն խնայի ընդառաջ գնալու եւ բոլոր ուժերով աջակցելու կառավարությանը՝ համագումարի կողմից նրա վրա դրած պարտականությունները կատարելիս, նաեւ վստահ լինելով, որ Սյունյաց Աշխարհի հերոսացած Դավիթ-Բեկյան զորքերը՝ միացած բուն Հայաստանի զորամասերի հետ, նորանոր սխրագործություններով պիտի զորավիգ հանդիսանան կառավարությանը, իրենց Սպարապետի ղեկավարությամբ՝ Լեռնահայաստանի կառավարությունը ստանձնում է երկրի ծանր ղեկը»* (30):

Նժդեհը նշում էր, որ Լեռնահայաստանի ստեղծման նպատակը «ոչ թե Սյունիքի անկախ գոյությունը երկարացնելն էր», «այլ որպեսզի այդ ապստամբ երկրամասին հնարավորություն տրվեր մի որոշ ժամանակով եւս դիմագրավելու իրեն օղակող թշնամիներին», մինչեւ որ Երեւանից փախչող հայ մտավորականությունը, երկրից հեռացող արեւմտահայ զորամասերը, սպայության մեծագույն մասը, խմբապետների մի որոշ մասը անցնեն Պարսկաստան» (31):

Երկրորդ համագումարի անհրաժեշտությունը բացատրել է Նժդեհը, ըստ որի՝ այն ուներ ոչ այնքան գործնական, որքան բարոյական նշանակություն: *«Երեւանյան գաղթի առաջացրած բարոյալքումից հեռու պահելու համար՝ պետք էր մի նոր ժեստով գոտեպնդել տեղական ժողովուրդը: Եվ այդ ոչ թե միայն անկախ Հայաստանի գաղափարն ապրեցնելու համար, այլեւ, որպեսզի հոգեբանական հնարավորություն տրվեր Սյունիքի հայությանը մի որոշ ժամանակով եւս դիմագրավելու իրեն օղակող ռուս եւ թուրք հորդաներին, մինչեւ որ մազապուրծ եղած հայ մտավորականությունը կանցներ Պարսկաստան: Երեւանի առաջին անկմամբ ստեղծված ծանր դրությունը փրկել էր Ինքնավար Սյունիքը: Նրա երկրորդ խորհրդայնացմամբ առաջացած աղետալի դրությունը պիտի փրկեր անկախ Լեռնահայաստանը, որը, փաստորեն, գոյություն ուներ Ղարաբաղի եւ Վայոց Ձորի գրավման օրերից»* (32):

Համագումարի ավարտից մի քանի օր անց հրապարակվեց «Լեռնահայաստանի կառավարության դեկլարացիան», որում շարադրված էին նրա խնդիրները ներքին կյանքում եւ արտաքին հարաբերություններում (33):

Ծանոթագրություն

1. *Համազանգեզուրյան համագումարի եւ ինքնավար Սյունիքի կազմավորման մասին, ՀՀ ՊԿՊԱ, Ֆ 113, ց.1, գ.30, թ.25, գ.37, թ.98, 129:*
2. *«Նժդեհ, Կյանքն ու գործունեությունը, նշխարներ, վկայություններ», էջ 165-166:*
3. *Նույն տեղում, էջ 166: ՀՀ ՆՊԿՊԱ, Ֆ 113, ց.3, գ.37, թ.127-128, նաեւ «Ազատ Սիւնիք», էջ 58, Ս. Վրացյան, Հայաստանի Հանրապետութիւն, էջ 626-627 (հավելված):*
4. *ՀՀ ՆՊԿՊԱ, Ֆ 114, ց.2, գ.70, թ.11: Վլ. Ղազախեցյան, Նժդեհը Զանգեզուրում, Երեւան, 2001թ., էջ 7-8:*
5. *«Ազատ Սյունիք, Սեւ էջեր եւ փաստեր բոլշեւիկների հնգամսյա գործունեությունից», Գորիս, 1921թ.:*
6. *Վլ. Ղազախեցյան, Նժդեհը Զանգեզուրում, Երեւան, 2001թ., էջ 87:*
7. *Գարեգին Նժդեհ, Իմ պատասխանը, էջ 42, «Ազատ Սիւնիք», էջ 44, ՀՀ, ՆՊԿՊԱ, Ֆ 113, ց.3, գ.37, թ.120 շրջերես:*
8. *ՀՀ, ՆՊԿՊԱ, Ֆ 113, ց.3, գ.37, թ.121 եւ շրջերես, նաեւ «Ազատ Սիւնիք», էջ 45-46, Ս. Վրացյան, Հայաստանի Հանրապետութիւն, էջ 620-621:*
9. *Ա. Սիմոնյան, Զանգեզուրի գոյամարտը, (1920-1921թթ.), Երեւան, 2000 թ., էջ 373:*
10. *Ա. Սիմոնյան, նշված աշխատությունը, էջ 373:*
11. *Համազանգեզուրյան 1-ին համագումարի արձանագրություն:*
12. *Ա. Սիմոնյան, նշված աշխատությունը, էջ 373:*
13. *ՀՀ ՆՊԿՊԱ, Ֆ 114, ց.2, գ.70, թ.11, շրջ., նաեւ Ա. Վրացեան, Հայաստանի Հանրապետութիւն, էջ 628, «Ազատ Սիւնիք», էջ 46-50:*
14. *Ա. Սիմոնյան, նշված աշխատությունը, էջ 375,*
15. *Վ. Ղազախեցյան, նշված աշխատությունը, էջ 8:*
16. *Գ. Նժդեհ, Ինչու պայքարեց Լեռնահայաստանը: «Հայրենիք», 1923թ.. թիվ 8, էջ 80:*
17. *Գ. Նժդեհ, Ազատ Սիւնիք: «Հայրենիք», 1925 թ., թիվ 7, էջ 135:*
18. *Ա. Սիմոնյան, նշված աշխատությունը, էջ 376:*
19. *Համազանգեզուրյան առաջին համագումարի որոշումներն ու բանաձեւերը, Ս. Վրացյան, Հայաստանի Հանրապետություն, Երեւան, 1993 թ., էջ 658-567:*
20. *ԲՀԱ, 1978 թ., թիվ 1, էջ 89-90:*
21. *Վլ. Ղազախեցյան, նշված աշխատությունը, էջ 12:*
22. *Գ. Նժդեհ, Ազատ Սիւնիք, «Հայրենիք», 1925 թ., թիվ 10, էջ 138-139:*
23. *ՀՀ ՆՊԿՊԱ, Ֆ 114 ց.2. գ.89, թ.12:*
24. *Ա. Սիմոնյան, նշված աշխատությունը, էջ 473:*
25. *Գ. Նժդեհ, Ցեղի ոգու շարժը, Սոֆիա, 1932 թ., էջ 32:*
26. *ՀՀ ՊԿՊԱ, Ֆ 178, ց1. գ. 73, թ.11:*
27. *Ա. Սիմոնյան, նշված աշխատությունը, էջ 474:*
28. *Ս. Վրացեան, Կեանքի ուղիներով, Դէպքեր, դեմքեր, ապրումներ, Ձ հատոր, էջ 178:*
29. *Ա. Սիմոնյան. նշված աշխատությունը, էջ 475:*
30. *Ա. Սիմոնյան, նշված աշխատությունը, էջ 476:*
31 *Հ ՊԿՊԱ, Ֆ 198, ց.1, գ.73, թ.11 եւ շրջ.:*
32. *Ս. Վրացեան, Կեանքի ուղիներով: Դէպքեր, դեմքեր, ապրումներ, Ձ հատոր, էջ 233:*
33. *Նույն տեղում, էջ 234: Ա. Սիմոնյան, նշված աշխատությունը, էջ 476:*
34. *Ս. Վրացեան, Կեանքի ուղիներով: Դէպքեր, դեմքեր, ապրումներ. Ձ հատոր, էջ 235:*
35. *Գ. Նժդեհ, Ինչու պայքարեց Լեռնահայաստանը, «Հայրենիք» ամսագիր, 1923, հունիս, թիվ 8, էջ 80: 36. Ա. Սիմոնյան, նշված աշխատությունը, էջ 477:*
37. *Գ. Նժդեհ, Ազատ Սիւնիք, «Հայրենիք», 1925 թ.. թիվ 10, էջ 138:*
38. *Վ. Գեւորգյան, Լեռնահայաստանի հերոսամարտը, էջ 161-162:*

Հայոց ինքնիշխանությունը Սյունիքում

Ինքնավար Սյունիք

Զանգեզուրը յայտարարել ժամանակաւորապես ինքնավար, մտցնելով հանրապետական իրաւակարգ, մնալով անկախ, մինչեւ քաղաքական հնարաւորութիւն կունենա միանալու իր մայր երկրի՝ Հայաստանի հետ:

Ինքնավար Սիւնիքի սահմաններն են Զանգեզուրի նախկին սահմանները:

Տաթեւի համազանգեզուրյան I համագումար

25 դեկտեմբեր, 1920թ.

Լեռնահայաստանի Հանրապետություն

1. *«Ինքնավար լեռնաշխարհ Ազատ Սյունիքը» հայտարարել անկախ պետություն եւ այն վերանվանել Լեռնահայաստան, որի մեջ մտնում են Զանգեզուրը, Վայոց ձորը (Դարալագյազ) եւ Լեռնային Ղարաբաղը: Գորիս քաղաքը համարել Լեռնահայաստանի մայրաքաղաք:*
2. *Քանի որ նորաստեղծ պետությունն ազդարարվում էր հանրապետական եւ ժողովրդավարական, ուստի այն պետք է ունենար համապատասխան հաստատություններ՝ պառլամենտ, նախարարների խորհուրդ եւ ինքնիշխանությանը բնորոշ մյուս հատկանիշները:*
3. *Համագումարը հայտարարել Լեռնահայաստանի վարչապետություն՝ նախարարների խորհուրդ: Կառավարության անդամներին հետայսու անվանել նախարարներ:*
4. *Վարչապետ ընտրել Սպարապետին՝ նրան վերապահելով նոր կառավարության կազմի ընտրությունը:*

Տաթեւի համազանգեզուրյան II համագումար,
26 ապրիլ, 1921

Ինքնավար Սյունիքի քայլերգը

Մեր սարերը անառիկ ու հպարտ,
Մեր որդիք կորովի ու անպարտ,
Խոր ձորերը Սյունիքի ահավոր՝
Շիրիմ են թշնամու դարավոր:
Թշնամին հազարով միշտ մեր դեմ,
Կուրծք-կրծքի մենք կանգնած նրա դեմ:
Չենք դողում, չենք սարսում մենք մահից,
Մեր մահը թեթեւ թիթեռի թեւից:
Ինքնավար Սյունիքին ցանկանք
Միշտ լինել թշնամու սպառնանք,
Շատ ապրի մեզ համար այսուհետ,
Քաջ հերոս Նժդեհ Սպարապետ:

Սյունիքի քայլերգի տեքստի հեղինակն է Տիգրան Սազանդարյանը (Տաթեւիկ Սազանդարյանի հայրը):

Հայրենիք արծարծող թեման՝ հայ արվեստագետների ստեղծագործություններում

ԴԱՎԻԹ ՄՈՒՐԱԴՅԱՆ. «Մասշտաբային մի ֆիլմ նորանկախ Հայաստանին դեռեւս պակասում է»

Հարցազրույց Երեւանի թատրոնի եւ կինոյի պետական ինստիտուտի ռեկտոր Դավիթ Մուրադյանի հետ

– Պարոն Մուրադյան, սեպտեմբերի 21-ին լրանում է հայոց անկախ պետականության 25-ամյակը: Ի՞նչ տվեց անկախությունը կինոյին:

– Ազատություն:

– Կինոյին ազատությո՞ւն տվեց: Մինչ այդ ազա՞տ չէր կինոն:

– Այո, կինոն այլեւս չէր մտածում գաղափարախոսությանը հարմարվելու մասին, ինչպես խորհրդային տարիներին, եւ ազատ հայացքով էր նայում իրականությանը: Սա լուրջ ձեռքբերում է: Գեղարվեստական ի՞նչ արդյունքներ եղան: Սա այլ վերլուծության հարց է: Բայց որ այդ ազատությունը եկավ եւ իր հետ ահագին նորություն բերեց՝ փաստ է, թեմատիկ նորությունից սկսած, հատկապես վավերագրական կինոյում: Հարություն Խաչատրյանը, ով հայ կինոյի առաջատար վարպետներից մեկն է, ինչպես գիտեք, «Ոսկե ծիրան» փառատոնի հիմնադիրն ու ղեկավարը, իր ամբողջ էությամբ, տեսողությամբ հենց անկախության ծնունդ է: Նրա ֆիլմերը ցուցադրվում են տարբեր երկրներում, պատվավոր մրցանակների արժանանում: Այնպիսի կինո, ինչպիսին նկարում է Հարություն Խաչատրյանը, ոչ անկախ ժամանակներում հնարավոր չէր նկարահանել: Այ, սա իրավամբ համարվում է անկախության ձեռքբերում՝ ստեղծագործական, ազատագրված հայացք կինոյին:

– Իսկ գեղարվեստական ի՞նչ արժեքավոր ֆիլմեր ստեղծվեցին:

– Գեղարվեստական կինոյում ձեռքբերումներն այդքան ակնառու չեն, դե վերջին 25 տարվա ընթացքում, այնուամենայնիվ, ունեցանք արժեքավոր ֆիլմեր. Ալբերտ Մկրտչյանի «Ուրախ ավտոբուսը», Վիգեն Չալդրանյանի «Տեր ողորմյան», Սուրեն Բաբայանի «Մի նայիր հայելուն»: Ձեր նշած ժամանակաշրջանում ֆիլմեր ստեղծվեցին. երիտասարդ սերունդ կինո եկավ՝ Արամ Շահբազյան, Հովհաննես Գալստյան, Մարիա Սահակյան, ովքեր նոր ժամանակների ծնունդ էին, եւ ամենակարեւորը՝ այս ժամանակաշրջանի բնակիչ էին, իրենց ապրած ժամանակի միջից էին խոսում: Նոր սերնդի գալը էական բան է, կարեւոր: Բայց խոր տարբերություններ կան, երբ խոսում են երկու դարաշրջանի սահմանագծի մասին, իսկ դա այդպիսին է՝ սահմանագծային ժամանակի կինո է. մի հասարակարգ սպառվել է, մյուսը նոր է ձեւավորվում: Մի դար ավարտվել է, մեկ ուրիշը դեռ նոր է իր լեզուն գտնում:

Եթե մեր նախորդ դարի ամենանշանավոր ֆիլմերից մեկը կոչվում է «Բարեւ, ես եմ», որը, եթե կուզեք, ինքնահայտնաբերման, ինքնագիտակցության, իր «ես»-ը, սեփական տեղն այս աշխարհում հաստատելն այդ վերնագրի մեջ կա: «Բարեւ, ես եմ» ասում էր այդ ժամանակի հերոսը, հայ հասարակության անունից, հայ մարդու անունից, մեծ աշխարհում իր եսն է ուզում հաստատել: Դա ծրագրային եւ կարեւոր ֆիլմ էր՝ Ֆրունզե Դովլաթյանի «Բարեւ, ես եմ» ֆիլմը:

Երիտասարդ ռեժիսոր Մարիա Սահակյանի ֆիլմը, որ մրցանակի արժանացավ «Հայակ» ազգային մրցույթում, հետո «Կինոշոկ» փառատոնում, ուներ «Այդ ես չեմ» վերնագիրը: Նա ասում է՝ «Բարեւ, ես եմ», այս մեկն ասում է՝ բարեւ, ես չեմ: Որովհետեւ գուցե այս ժամանակի կերպարը դեռ գտնված չէ: Այն ժամանակն իր կերպարի մեջ հայտնաբերված էր, այդ անունից հայ մարդն ասում էր՝ բարեւ, ես եմ: Հիմա ժամանակը դեռ ինքը պիտի իրեն գտնի, կերպարը վերջնականացնի: Ֆիլմը երիտասարդ աղջկա մասին է, ով իր ինքնությունը, իր ով լինելն է ուզում հասկանալ այս աշխարհում: Սայթաքում է, մոլորվում է, փնտրում է, մի խոսքով՝ ֆիլմը կոչվում է՝ այդ ես չեմ: Կարծես բանավիճում է այն դասական վերնագրի հետ: Բայց դրա մեջ կա ախտորոշիչ տարր, ինքնաբնութագիր, այսինքն՝ մեր ժամանակների կինոն դեռ իր եսը պիտի գտնի, որ լիարժեք խոսի իր ժամանակի անունից:

Առանձին լավ ֆիլմերը դեռեւս չեն դառնում մի ամբողջական գեղարվեստական պրոցես, որովհետեւ 1960-70-ական թվականներին էլի կային բազմաթիվ թույլ եւ միջակ ֆիլմեր, որոնց այսօր չենք հիշում: Բայց այդ ֆիլմերի կողքին, նրանց մեջ ձեւավորվել էր, այսպես ասած, մի մայրուղի՝ «Բարեւ, ես եմ», «Մենք ենք, մեր սարերը», «Եռանկյունի», «Սարոյան եղբայրներ», «Նռան գույնը», Արտավազդ Փելեշյանի վավերագրական ֆիլմերը, որոնք, ըստ էության, բոլորը միասին հայի ինքնության եւ հայի հոգեգիտակցումի անունից էին խոսում, հայ մարդու հարաբերությունն էր աշխարհի հետ: Այժմ դեռ դա չունենք: Բայց դա կստացվի եւ կստեղծվի, եւ նոր սերունդը, որ կինո է գալիս, եւ իր առաջին քայլերն է անում, դեռ այդ խոսքը կասի:

– Պարոն Մուրադյան, կարծիք կա, որ մեր նոր պետականության ստեղծումը, մերօրյա ազատամարտը՝ Արցախյան պատերազմը, կինեմատոգրաֆում չեն արտացոլվել, ո՞վ պիտի անի, որ չարեց, ինչո՞ւ չի արել:

Հայրենիք արծարծող թեման՝ հայ արվեստագետների ստեղծագործություններում

– Գիտե՞ք, պատերազմական իրադարձությունների տաք հետքերով մի քիչ դժվար է ֆիլմ ստեղծել, տաք հետքերով վավերագրական կինոն է ֆիլմ ստեղծում, տարածություն է պետք՝ հոգեբանական, պատմական: Հապա, հիշեք, երկրորդ համաշխարհային պատերազմի մասին լավագույն ֆիլմերը ե՞րբ նկարվեցին՝ 1960-70-ական թվականներին, այսինքն՝ երկու տասնամյակ պիտի անցներ այդ ամեն ինչից, որ «Բալլադ զինվորի մասին»-ը էկրան բարձրանար, «Իսկ արշալույսներն այստեղ խաղաղ են» եւ այլն, եւ այլն: Այդպես, տաք հետքերով չի նկարահանվում, որոշակի պատմահոգեբանական իմաստավորում պիտի լինի, այլապես չի ստացվի: Այլեւս չխոսելով այն մասին, որ կինոն շատ ծախսատար արվեստ է, եւ այդպիսի ֆիլմ նկարահանելը լուրջ բեմադրական միջոցներ է պահանջում, թեպետ չեմ կարող չասել, որ այդ թեման մեր կինոյում չի արտացոլված: Օրինակ, Ալբերտ Մկրտչյանի «Տխուր փողոցի լուսաբացը» ֆիլմում այդ թեման շոշափված է:

– Իսկ հայկական պետականության թեման որեւէ կերպ արտացոլվա՞ծ է մեր կինոյում:

– Մեր պետականաշինության մասին ընդամենը մի ֆիլմ ունենք, որ ժամանակին նկարահանվեց՝ «Երկունքը»՝ Ալեքսանդր Մյասնիկյանի մասին, գլխավոր դերը Խորեն Աբրահամյանն էր խաղում, ֆիլմ այն մասին, թե ինչպես ավերակված Հայաստանում փորձում էին կենսական ուժերը հավաքելով՝ ինչ-որ երկիր ստեղծել-կառուցել: Այդ իմաստով այդ ֆիլմն արժեքավոր է, հայկական, կենսական, ազգային ուժերը մոբիլիզացնող ֆիլմ է՝ ժամանակի ծանր բեռան տակ: Մասշտաբային, ստացված ֆիլմերից է: Այդպիսի մի ֆիլմ նորանկախ Հայաստանի մասին դեռեւս պակասում է, դրա կարիքը, իհարկե, կա: Հավանաբար գտնված չէ այն մտահղացումը, որի շուրջ նման ֆիլմ կարելի է հավաքել: Այդ էպիկական թափի ռեժիսորն էլ չկա, որովհետեւ Ֆրունզե Դովլաթյանը վիպասան ռեժիսոր է, էպիկական ռեժիսոր է: Ժամանակակից կինոն, նման ռեժիսորի բացակայության պայմաններում, ավելի շատ կամերային է իր տեսակով: Էպիկան բացակայում է:

– Վերջին այս տարիներին տարբեր զարգացումներ եղան «Հայֆիլմ» կինոստուդիային առնչվող եւ դեռեւս չեն դադարում: Մի քանի խոսք «Հայֆիլմի» ճակատագրի մասին:

– Շատ կարեւոր քայլ եմ համարում, որ կառավարությունը հետ բերեց «Հայֆիլմը», որը մասնավորեցված էր, ցավոք սրտի, պայմանագրային պարտավորություններն այդպես էլ չկատարվեցին, որ կարողանայինք մենք ազգային կինոարտադրություն վերականգնել: «Հայֆիլմը» հետ բերվեց, թեպետ մեծ կորուստների գնով, մեծ ժամանակ պարապուրդի տալու գնով: Բայց օրենքն օրենք է, դա չես կարող շրջանցել, քանի որ պայմանագրի ժամկետը չի սպառվել: Սա սկզբունքային մոտեցում է, որ պետությունը գիտակցում է, թե իր ազգային կինոն ստեղծելու համար իր արտադրական ենթակառույցն է անհրաժեշտ: Բայց միամտություն կլինի կարծել, որ այդ նույն առաջվա «Հայֆիլմը», որպես մի հզոր կինոֆաբրիկա, գործարկել զուտ պետական միջոցներով: Որովհետեւ էն դարի կինոֆաբրիկան մի բան է, էս դարի կինոֆաբրիկան՝ բոլորովին այլ բան:

– Ռուսներին հաջողվեց իրենց կինոարտադրությունը պահպանել, այժմ «Մոսֆիլմը» կինոկոնցեռնի կարգավիճակ ունի:

– Որովհետեւ նրանք այդ արանքը՝ երկու դարաշրջանի, չկորցրեցին, անխափան գործունեություն ծավալեցին: Եվ դրա ընթացքում տեխնիկական կատարելագործման հասան: Գործունեություն ծավալեցին, շահույթ ունեին, այլեւս չխոսելով նրա կինոշուկայի մասին: Եթե նկարահանված ֆիլմն այդ շուկայում պտտի, եթե ծախսը լրիվ չհանի, առնվազն 80 տոկոսով կփոխհատուցի այն: Կինոարտադրության մեջ կլինի մասնավոր կապիտալի ներգրավվածություն, բայց ոչ երբեք պետության շահերի հաշվին: Հավանաբար վերահսկիչ փաթեթը պետության ձեռքում պիտի լինի: Թեպետ կա ազգային կինոկենտրոն:

– Մի քանի խոսք այդ մասին:

– Ազգային կինոկենտրոն վաղուց ունենք, գործում է: Բոլոր երկրներում կա այդ կառույցը, որը ըստ էության, պետական օժանդակություն է հատկացնում կինոնախագծերին, եւ, ի վերջո, նկարահանված ֆիլմերը հենց ազգային կինոկենտրոնի պետական աջակցության շնորհիվ են ստեղծվել: Թեպետ անկախ պրոդյուսերական կազմակերպություններ էլ ստեղծվեցին. դա էլ է վերջին 25 տարվա ձեռքբերումներից: Ստեղծվեցին կազմակերպություններ, որոնք ֆիլմեր են նկարահանում որպես բիզնես-պրոյեկտ՝ «Պարադիզը», «Շարմ հոլդինգը»: Դա էլ է բազմազանություն բերում իր հետ. «Շարմը» ունի իր նախընտրելի ուղղությունը. հիմնականում ստեղծում է թեթեւ ժանրի կատակերգություններ, «Պարադիզը» հաճախ համագործակցում է ռուսական կողմի հետ, եւ մեզ մոտ ֆիլմեր են նկարահանում. սա էլ է անկախության ձեռքբերումներից մեկը, որ մենք ունենք մի քանի կինոարտադրող:

– Կինոարվեստն էլ երբեմն տրվում է օրվա թեմաներին, եթե ավելի խիստ չարտահայտվենք, պատեհապաշտությանը, նկարահանվեց, օրինակ, «Գարեգին Նժդեհը», որը միանշանակ չընդունվեց հանդիսատեսի եւ քննադատների կողմից:

– «Նժդեհը» իր հանդիսատեսն ունեցավ, թեպետ բոլորս ավելին էինք սպասում: Այսպես ձեւակերպենք. թեման մեծ է արդյունքից: Արդյունքը թեմային զիջում է:

– Որպես կինոգետ, դուք ի՞նչ կցանկանայիք, որ նկարահանվեր:

– Ով ինչ ցանկանա, պիտի նկարահանի: Որովհետեւ մտահղացումը ոչ թե ուրիշինը, այլ կինոռեժիսորինը պիտի լինի: Եղել է, իհարկե, որ հուշել են: Ասենք, գրականության պատմությունից հայտնի է, որ «Ռեւիզոր» պիեսի թեման Գոգոլին հուշել է Պուշկինը: Ի վերջո ստեղծվել է անմահ մի ստեղծագործություն: Ամեն ինչ հնարավոր է, բայց այսօրվա կինոյի համար շատ կարեւոր է ներկայացնել հայ մարդուն, տեսեք, որքան սիրում ենք «Մենք ենք, մեր սարերը»: Սովորական հայ մարդու կյանքն է, սովորական հայ հովիվների, բայց որոնց մեջ մի ամբողջ կենսափիլիսոփայություն կա: Մեր կողքին ապրող սովորական հայ մարդն սպասում է իր մասին ֆիլմին:

– Նաեւ կարծիք կա, թեեւ մի քիչ ծայրահեղ, որ ԽՍՀՄ-ի փլուզումից հետո փլուզվեց հայ կինոն:

– Ոչ, համաձայն չեմ նման կարծիքին: Իհարկե, համաձայն չեմ, ի՞նչ է նշանակում՝ փլուզվեց հայ կինոն: Բա էդ ո՞ւմ ֆիլմերն են ցուցադրվում աշխարհով մեկ, տարբեր փառատոներում: Նույն այդ հայ կինոյի ֆիլմերը չե՞ն: Հայ կինոն փոխվեց, դա ուրիշ բան է:

Զրույցը՝ ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆԻ

Հայրենիք արծարծող թեման՝ հայ արվեստագետների ստեղծագործություններում

ԱՆԿԱԽ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ

ԼՈՒՍԻՆԵ ՍԱՀԱԿՅԱՆ
Երեւանի Կոմիտասի անվան պետ. կոնսերվատորիայի երաժշտության պատմության ամբիոնի վարիչ, արվեստագիտության թեկնածու, դոցենտ

Ռուս գրող, թարգմանիչ, հայ մշակույթի գիտակ Վալերի Բրյուսովի 1916 թվականին լույս տեսած «Հայաստանի պոեզիան» աշխատության մեջ կարդում ենք հետեւյալ տողերը. «Իր ողջ կրքոտությամբ հանդերձ հայ երգը ողջախոհ է, իր ողջ կրակոտությանբ հանդերձ՝ զուսպ է արտահայտությունների մեջ: Դա մի պոեզիա է՝ արեւելյանի պես գունեղ, արեւմտյանի պես իմաստուն: Պոեզիա, որ գիտե վիշտն առանց հուսահատության, կիրքն՝ առանց մոլեգնության, հիացմունք, որին սակայն խորթ է անզսպությունը»:

Օտարազգի մտավորականների կողմից գովերգած հայոց երգն ու երաժշտությունը դարեր շարունակ եղել են հայկական հնագույն մշակույթի եւ պատմության անքակտելի մասը: Ձեւավորվելով հազարամյակների ընթացքում՝ հայերի երաժշտական արվեստն ունեցել է զարգացման եւ ծաղկման իր շրջափուլերը: Հեթանոսությունից մինչեւ «Ոսկեդար», միջնադարյան հոգեւոր մոնոդիայի գանձերից մինչեւ գուսանների ու աշուղների սիրագեղգեղ արվեստը: Հայ երաժշտությունն անմասն չի մնացել նաեւ եվրոպական մշակույթի նվաճումներից: 19-րդ դարի առաջին կեսին՝ ազգային ինքնագիտակցության վերելքի շրջանում, հայ իրականության մեջ ձեւավորվել են երաժշտության նոր ոլորտներ՝ կոմպոզիտորական (բառի եվրոպական իմաստով) եւ կատարողական արվեստ: Հայ առաջին կոմպոզիտորն արեւմտահայ մշակույթի մեծանուն գործիչ Տիգրան Չուխաճյանն էր, որի երաժշտալուսավորչական գործունեությունը նոր ուղիներ նշագծեց ազգային արվեստի համար:

Հայ երաժշտական մշակույթի համար շրջադարձային եղավ ազգային կոմպոզիտորական դպրոցի հիմնադիր Մեծն Կոմիտասի դարակազմիկ դերը: Կոմիտասի առաքելությունը հայ ինքնուրույն երաժշտության գոյության հաստատումն էր: Կոմիտասյան դասական արվեստի հիմքով ասպարեզ եկավ կոմպոզիտորական մի ողջ աստղաբույլ՝ համաշխարհային մեծություն Արամ Խաչատրյանի գլխավորությամբ: Ավելին, ժամանակի մեջ Կոմիտաս Վարդապետի կերպարն ու երաժշտությունը դարձան Հայաստան դրախտավայրի խորհրդանիշ: Հայոց երաժշտարվեստն իր մեծագույն ներկայացուցիչներով, նրանց ազգանվեր դրսեւորումներով մշտապես արտացոլում էր սեփական ժողովրդի ոգեղեն արժեքներն ու բաղձալի երազանքները:

Բայց հայոց պատմության խորխորատներում հայ մտավորականն ու արվեստագետը հաճախ զրկվում էին բացեիբաց ստեղծագործելու հնարավորությունից:

Խորհրդային տոտալիտար գաղափարախոսության ժամանակաշրջանում արգելված էին ազատ գեղարվեստական մտքի շողարձակումները: Հայաստանի, հայրենիքի թեման արծարծվում էր միջնորդավորված ձեւով:

Այսօր՝ անկախ ու ազատ Հայաստանում, նորովի են մեկնաբանվում հայազգի հանճարների ստեղծագործական ընդվզումները: Արամ Խաչատրյանի «Սպարտակ» բալետի հզոր Հռոմը պատկերող կամային ռիթմերում, Սպարտակի աննկուն կերպարում, լսելի են նաեւ հայոց հեռավոր անցյալի ու Տիգրան Մեծի հաղթանակների արձագանքները: Իսկ խաչատրյանական երկրորդ սիմֆոնիայի ողբերգական էջերը, Առնո Բաբաջանյանի «Հերոսական բալլադ»-ի թախծոտ դրվագները, Ավետ Տերտերյանի երրորդ սիմֆոնիայի տիեզերական ընդգրկումները, անտարակույս, հայոց վշտի խորունկ արտահայտությունն են, գենետիկ ողբերգության արտացոլումը: Մերօրյա Հայաստանում նոր հնչեղությամբ են կատարվում 1965 թվականին գրված եւ Մեծ եղեռնին նվիրված՝ տաղանդաշատ կոմպոզիտոր Հարո Ստեփանյանի կամերային օրատորիան ըստ Պարույր Սեւակի «Անլռելի զանգակատուն» պոեմի, ինչպես նաեւ մեծանուն կոմպոզիտոր Ալեքսանդր Հարությունյանի a capella (առանց նվագակցության) «Ռեքվիեմ»-ը՝ եղեռնի զոհերի հիշատակին:

20-րդ դարի վերջն ու 21-րդ դարասկիզբը հայերի ինքնագիտակցության ու զարթոնքի նոր շրջան էր, եւ արվեստագետների ազգայինի վրա խարսխված առաջադեմ գաղափարները համահունչ էին անկախ Հայաստանի կայացմանը: Այս շրջանում էին ֆիդայական երգերը դառնում արդար պայքարի ու հայրենիքին նվիրաբերվելու ու վերածնվելու խորհրդանիշ: Այդպես է ընկալվում էդվարդ Բաղդասարյանի յուրատիպ մեկնաբանմամբ «Զարթիր լաո» երգը (1): Հայ կոմպոզիտորներից շատերն ունեցան ազատ ստեղծագործելու, արտերկրում իրենց երաժշտությունը հնչեցնելու մեծ հեռանկարներ:

Անկախ Հայաստանում ստեղծագործական եւ մանկավարժական հագեցած կյանքով են ապրում հայ երաժշտական մշակույթի մեջ մեծ ավանդ ունեցող, ավագ սերնդի կոմպոզիտորներ Գագիկ Հովունցը, Ստեփան Շաքարյանը: Մայր հայրենիքում են ստեղծվում տաղանդավոր հայ կոմպոզիտոր Տիգրան Մանսուրյանի գլուխգործոցները: Մանսուրյան-գեղարվեստագետի երաժշտական առաջադեմ ու նորարարական մտահ-

Հայրենիք արծարծող թեման՝ հայ արվեստագետների ստեղծագործություններում

ղացումները Խորհրդային Հայաստանում ընկալվում էին ոչ միանշանակ: Կոմպոզիտորի սպասված ու երազած անկախ Հայաստանում նորովի հնչեցին «Հայրեններ»-ն ու Կոմիտասին նվիրված խմբերգերը: Մայր հայրենիքում գրվեցին միջազգային ճանաչման արժանացած կոնցերտներն ու Մեծ եղեռնի 100-ամյակին նվիրված «Ռեքվիեմ»-ը, որի կոթողային հնչողության մեջ վսեմանում է անմեղ նահատակների հոգու փրկության եւ հավերժության գաղափարը: Եղեռնի թեմային եւ հերոս հայորդիներին է ձոնված տաղանդաշատ կոմպոզիտոր Ռոբերտ Ամիրխանյանի կանտատը՝ Միսաք Մանուշյանի խոսքերով, իսկ կոմպոզիտորի «Երազ իմ երկիր հայրենի» երգը դարձել է անկախ հայրենիքի հանդեպ ունեցած սիրո եւ հայրենասիրության խորհրդանիշ:

Հավատարիմ մնալով ազգային կոմպոզիտորական դպրոցի հարուստ ավանդույթներին՝ ժամանակակից հայ կոմպոզիտորները ստեղծագործում են երաժշտության բազմապիսի ժանրերում՝ արվեստում հմտորեն միավորելով ավանդականն ու արդիականը:

Ռուսաստանի, Եվրոպայի, ԱՄՆ-ի խոշոր քաղաքներում եւ մշակութային կենտրոններում համբավավոր նվագախմբերի կատարմամբ հնչում են հայազգի կոմպոզիտորներ Միխայիլ Կոկժաեւի, Աշոտ Զոհրաբյանի, Լեւոն Չաուշյանի, Արամ Սաթյանի, Երվանդ Երկանյանի, Վարդան Աճեմյանի, Վաչե Շարաֆյանի, Արթուր Ավանեսովի ազգային ակունքներից բխած բազմաոճ երաժշտական երկերը: Ընդ որում՝ նշված հեղինակները զբաղվում են ոչ միայն ստեղծագործական, այլեւ բազմաբեղուն (ավանդույթ-առաքելություն, որը գալիս է Մեծն Կոմիտասից) երաժշտալուսավորչական գործունեությամբ:

Եվրոպայի Բնագիտական ակադեմիայի պատվավոր անդամ Միխայիլ Կոկժաեւը Բաքվից տեղափոխվելով մայր հայրենիք՝ ծավալեց երաժշտագիտական եւ ստեղծագործական բուռն գործունեություն: Երեւանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի պրոֆեսոր Կոկժաեւը մանկավարժությանը զուգընթաց հեղինակեց Ալեքսանդր Հարությունյանին, ինչպես նաեւ երաժշտա-տեսական մի շարք կարեւոր հիմնահարցերին նվիրված ուսումնասիրություններ: Կոկժաեւի սիմֆոնիաները, կոնցերտներն ու սոնատները կատարվում են ԱՄՆ-ից մինչեւ Հարավային Կորեա: Անկախության տարիներին գրվեցին կոմպոզիտորի ամենահինքնատիպ ստեղծագործությունները՝ «Հիշատակի օրը» կամերային կոմպոզիցիան՝ նվիրված Սպիտակի երկրաշարժի զոհերի հիշատակին, ինչպես նաեւ Սուրբ Նարեկացու «Պայծառեցումն ու վիշտը» ստեղծագործությունը, որտեղ ձայնագրությանը զուգընթաց հնչում է Նարեկացու աստվածային խոսքը:

Ստեղծագործական բազմաբեղուն գործունեություն է ծավալում Հայաստանի կոմպոզիտորների միության նախագահ, կոմպոզիտոր, մանկավարժ Արամ Սաթյանը: Նրա նվագախմբային, դաշնամուրային երկերի կողքին իրենց գեղարվեստական բարձր արժանիքներով առանձնանում են հայ բանաստեղծների տեքստերով հեղինակած երգերը: Արամ Սաթյանի գործուն մասնակցությամբ եւ աջակցությամբ կազմակերպվում են երիտասարդ ստեղծագործողների մրցույթ-փառատոններ, ինչը միտված է հայ շնորհալի կոմպոզիտորներ բացահայտելու եւ աջակցելու կարեւորագույն գործընթացին:

Տոհմական արվեստագետների ընտանիքում են ձեւավորվել 2016 թվականին պետական մրցանակի արժանացած մանկավարժ, բազմաժանր կոմպոզիտոր Վարդան Աճեմյանի գեղագիտական սկզբունքներն ու խոր հայրենասիրությունը: Յուրաքանչյուր նոր ստեղծագործության հետ ավելի ակնբախ է կապը կոմիտասյան ավանդույթների հետ, ու «Հայաստան» խմբերգի (խոսք՝ Պարույր Սեւակի) «քաղցրանուն ու բարձրանուն» ելեւէջների մեջ կրկին հառնում է հնադարյան մեր լեռնաշխարհի գեղեցկությունն ու վեհությունը:

Ազգային երաժշտության լեզվամտածողության վրա է կառուցված նաեւ կոմպոզիտոր Երվանդ Երկանյանի ստեղծագործական ոճը: Անկախության տարիներին Երկանյանը հիմնադրեց եւ ղեկավարեց «Հայաստան» եւ «Մադրիգալ» նվագախմբերը, ինչպես նաեւ Հայկական երաժշտական կազմակերպությունը, որի նպատակն ազգային կոմպոզիտորական դպրոցի ավանդույթների պահպանումն ու տարածումն էր: Անկախության տարիներին Երկանյանին հնարավորություն ընձեռվեց Բեյրութում կազմակերպել «Գուսան» երգչախումբը (2), իսկ 2000-2007թթ. կոմպոզիտորը ղեկավարեց Բեյրութի «Բարսեղ Կանաչյան» երաժշտական կրթօջախը՝ զգալի գործունեություն ծավալելով Հայրենիք-Սփյուռք ստեղծագործական փոխառնչությունների ամրապնդման մեջ: «Հայկ եւ Բել» սիմֆոնիան, «Շուշանիկ» օպերան, ժողովրդական եւ հոգեւոր մոնոդիաների գեղարվեստական բարձր վարպետությամբ իրագործած կոմպոզիտորի խմբերգային մշակումները հնչել են աշխարհի շատ բեմերում: Երկանյանի «Սյուիտը» վերլուծելիս երաժշտագետ Ժ. Զուրաբյանը ճշմարտացիորեն ընդգծում է այդ ցիկլի «կոմպոզիտորի արդի երաժշտամտածողությամբ ծնվող բազմաձայն ներդաշնակությամբ պարուրված յուրատիպ «որմնանկարների» տպավորությունը (3):

Ինքնատիպ ստեղծագործական լուծումներով են աչքի ընկնում կոմպոզիտոր Վաչե Շարաֆյանի երաժշտական երկերը, որոնք հնչում, ձայնագրվում եւ հրատարակվում են բազմաթիվ երկրներում՝ աշխարհահռչակ երաժիշտների կողմից: Առաջին անգամ, 1998թվականին ԱՄՆ-ի Չիկագո քաղաքում հնչեց Շարաֆյանի ստեղծագործությունը, որը դարձավ հայտնություն մեծ լսարանի համար եւ երեւույթ ժամանակակից դասական երաժշտության մեջ: Կոմպոզիտորի համար երաժշտությունն ամենահոգեւոր ճանապարհով խոսելու, սեփական ինքնությունն արտահայտելու միջոց է. «Ես հայ եմ, բայց երկրագնդի մարդ, ոչ թե կոմպոզիտոր, այլ հայաստանցի», այս պատասխանատվությամբ է մոտենում ստեղծագործողի իր առաքելությանը Վաչե Շարաֆյանը՝ մնալով «Հայաստանցի», իր երաժշտությամբ կարողանում է միավորել Արեւելքն ու Արեւմուտքը, «Ակացիաների երգի առավոտյան բուրմունքը» ստեղծագործության մեջ դուդուկի անզուգական մեղեդայնությունը համադրում է սոպրանոյի եւ լարայինների քնքուշ տեմբրերին, իսկ լարային տրիոյում ասես հնչեցնում է արեւելյան գործիքների հնչերանգները:

Հայ արդի երաժշտության մեջ ստեղծագործական խիզախումներով աչքի են ընկնում կոմպոզիտոր, դաշնակահար Արթուր Ավանեսովի՝ ազգային

Հայրենիք արծարծող թեման՝ հայ արվեստագետների ստեղծագործություններում

Երեւան, Ա.Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոն

երաժշտության վրա խարսխված, բայց ժամանակակից կոմպոզիտորական տեխնիկայով գրված երաժշտական երկերը: Ինչպես նաեւ երիտասարդ երաժիշտ Տիգրան Համասյանի հայկական մեղեդիների ջազային, իմպրովիզացիոն մեկնաբանումները:

Նոր անկախ Հայաստանում, պետական հովանավորչությամբ, կազմակերպվում են հեղինակավոր միջազգային փառատոններ: 2000 թվականից կոմպոզիտոր Ստեփան Ռոստոմյանի նախաձեռնությամբ իրականանում է «Երեւանյան հեռանկարներ» փառատոնը, որը հայ ունկնդրին հնարավորություն է ընձեռում հյուրընկալել համաշխարհային մեծության երաժիշտների, հեղինակավոր նվագախմբերի:

Երաժշտալուսավորչական նշանակալի իրադարձություններից է նաեւ «Վերադարձ»-ի փառատոնը, որի շրջանակներում հայ արվեստագետները ծանոթանում են երաժշտական մշակույթի վերջին ձեռքբերումներին: Համերգներով հայրենիք են վերադառնում բազմաթիվ հայ, արդեն ճանաչված երաժիշտներ՝ իրենց օտարերկրացի գործընկերների հետ: Փառատոններին հնչում են երիտասարդ կոմպոզիտորների ստեղծագործությունները, իրենց կատարողական բարձր վարպետությամբ աչքի են ընկնում արդեն անկախ Հայաստանում ձեւավորված նվագախմբերն ու երգչախմբերը, երիտասարդ, բայց համաշխարհային ճանաչում ձեռք բերած այնպիսի երաժիշտներ, ինչպիսիք են ջութակահար Սերգեյ Խաչատրյանը, թավջութակահար Նարեկ Հախնազարյանը: Աշխարհը մշակույթով ճանաչում է Հայաստանը: Գնահատում են ոչ միայն օտարազգի, այլեւ մեր Մեծերը, որոնց մարգարեական խոսքը հարատեւ է. «Ժողովուրդն ինքն է իրեն տեսնում՝ նայելով իր այն զավակներին, որ սերել են նրա ոսկրից ու ծուծից, կաղապարվել ըստ նրա հավաքական կերպարի ու ժառանգել ամենայն հայրականը: Ժողովուրդն է ստեղծում նրանց՝ ի մի հավաքելով մի ամբողջ ցանուցիր բազմանիստությունը, բայց հենց որ ծնեց, ինքը՝ ժողովուրդն էլ լուսավորվում է այդ բազմանիստի ներքին ճառագումից: Այս վերառումով էլ՝ ոչ միայն ժողովուրդն է նրանց ծնում, այլեւ նրանք են ժողովուրդ վերածնում». Պարույր Սեւակ:

Ծանոթագրություն

1. *Հնչում է նաեւ «Ջորի Միրո» ֆիլմում:*
2. *«Գուսան» անունով 300 հոգուց կազմված երկսեռ երգչախումբ Կոմիտաս Վարդապետն է ղեկավարել Պոլսում 1912 թվականին:*
3. *Ջուրաբյան Ժ., Մոնոդիան հայ կոմպոզիտորների գործիքային ստեղծագործություններում, Երեւան, ՀՀ «Գիտություն» հրատ., 2014, էջ 222:*

Հայրենիք արծարծող թեման՝ հայ արվեստագետների ստեղծագործություններում

Հայրենիք բանք հայոց

ՀԱՏՎԱԾ

Ա. Հայոց հայրենիք եւ հայ գրականություն (պատմական ակնարկ)

ԴԱՎԻԹ ԳԱՍՊԱՐՅԱՆ

Հայոց ազգային գիտակցության հիմքը հայրենիքի գաղափարն է, որ հետեւողական հաջորդականությամբ արծարծվել է մեր պատմության բոլոր փուլերում: Դա ըստ ամենայնի պայմանավորված է հայ ժողովրդի պատմական ճակատագրով, որը միշտ խնդիր է ունեցել պաշտպանելու հայրենիքը, պահպանելու ժողովրդին, նրա լեզուն ու մշակույթը: Այս հարցերի պատմական քննությունը շատ հեռու է տանում՝ որպես սկիզբ նախանշելով հինգերորդ դարի մատենագրությունը, հաջորդող բոլոր դարերի պատմական աշխատությունները, որոնց մեջ պատմության իրողությունները զուգակցված են բանահյուսությանը, գրականությանը, քրիստոնեական վարդապետությանը: Հայ գրականությունը, 5-րդ դարից սկսած, մի մեծ գիրք է գրում եւ այդ գրքի վերնագիրն է «Հայ ժողովրդի պատմություն»: Այս տեսադաշտում պետք է հիշատակել Մովսես Խորենացու, Փավստոս Բուզանդի, Եղիշեի, Ղազար Փարպեցու, Հովհան Մամիկոնյանի, Ղեւոնդի, Թովմա Արծրունու, Հովհաննես Դրասխանակերտցու, Ուխտանեսի, Ստեփանոս Տարոնեցի Ասողիկի, Արիստակես Լաստիվերցու, Մատթեոս Ուռհայեցու, Կիրակոս Գանձակեցու, Ստեփանոս Օրբելյանի, Առաքել Դավրիժեցու եւ շատ այլ մատենագիրների անունները, որոնց գրքերը հայրենասիրական ոգորումների առանձին դրվագներ են՝ պայմանավորված պատմաշրջանի քաղաքական իրադարձություններով: Ամեն ինչ սկիզբ է առնում Մովսես Խորենացու հայրենահիացումից, ով հեռավոր ժամանակներում կարողացավ տեսնել հայ ժողովրդի կերպարը, նրա սկզբնավորումը պայմանավորել «Հայկ եւ Բել» հերոսական առասպելով, ոգել մյուսների հերոսությունը, շարակարգել հայոց ծննդյան տոհմամատյանը եւ, քաջատեղյակ իր ժամանակի հունական, ասորական, պարսկական աղբյուրներին, ասել հիմնական միտքը. *«Որովհետեւ թեպետ մենք փոքր ածու ենք եւ շատ սահմանափակ թվով եւ շատ անգամ օտար թագավորության տակ նվաճված, բայց եւ այնպես մեր աշխարհում էլ քաջության շատ գործեր կան գործված՝ գրելու եւ հիշատակելու արժանի, որ նրանցից ոչ ոք հոգ չտարավ գրի առնելու»:* «Նրանցից ոչ ոք» ասելով՝ Քերթողահայրը նկատի ուներ նախկին մատենագիրներին: Հինգերորդ դարի հայ մատենագրությունը դարձավ հետագա պատմագրության հիմքը, իսկ ավելի ուշ ազդակ հաղորդեց գեղարվեստական զարգացմանը: Գեղարվեստական գրականությունը նորոգեց, վերաշարադրեց ու վերամարմնավորեց նրանց ավանդած բազմաթիվ առասպելներ, լեգենդներ, պատմական իրադարձություններ: Առաջնակարգ սկզբնաղբյուր են Խորենացու բանահյուսական գրառումները, իսկ Եղիշեի մատյանի հիման վրա ստեղծվել են տարաբնույթ ու տարատեսակ բազմաթիվ գեղարվեստական երկեր: Այսպես պահպանվել է ամենակարեւորը՝ ժամանակների կապը, հիշողության կենդանի շղթան ասես վերացրել է ժամանակների հեռավորությունը, պատմական ժամանակները լրացրել են իրար եւ ձեւավորել հայ ժողովրդի պատմական հոգեբանությունը, ինչն էլ ընկել է արվեստի ստեղծագործությունների հիմքում: Պատմագրական այս ժառանգության հետ մեկտեղ առանձնանում է միջնադարյան բանահյուսությունը: Առանձնահատուկ նշանակություն ունեն Մովսես Խորենացու գրի առած առասպելներն ու Գողթան երգերը: Այդտեղ, ինչպես նշել են հետազոտողները եւ, առաջին հերթին, Մանուկ Աբեղյանն իր «Հայոց հին գրականության պատմություն» աշխատության մեջ, հայոց հեթանոսական ժամանակների էպոսն է՝ իր փուլերով ու դրվագներով: Այդտեղ նաեւ հայ ժողովրդի ծննդաբանությունն է (տե՛ս Մ. Աբեղյան, «Հայոց հին գրականության պատմություն», Ե., հ. 1, 1944: «Երկեր», Ե., ԳԱ հրատարակչություն, հ. Գ, 1968): Միջնադարի հարուստ մշակույթի մեջ պետք է առանձնացնել «Սասնա ծռեր» դյուցազներգությունն իր պատումներով: Դա ժողովրդի բանավոր հանճարի խտացումն է, ինչի բարձրագույն սրբությունը հայրենիքն է: Էպոսի բոլոր գլխավոր հերոսները ծառայում են հայրենիքի կայացմանը, հայրենիքի անկախության նվաճմանն ու պահպանմանը, եւ դա՝ Սասուն բերդաքաղաքի կառուցումից, թշնամու դեմ Մհերի ու Դավիթի կռիվներից մինչեւ Փոքր Մհերի փակվելը՝ որպես անթեղված վաղվա հույս: Այս շրջանի բանահյուսական արժեքներից են նաեւ վիպերգերը, պանդխտության երգերը, հայրեններն ու անտունիները: Հենց միայն ժողովրդական «Կռունկ» երգի ծնունդը խորհրդանշում է այդ տարիների հայրենասիրական տրամադրությունների բնույթը: Հայ միջնադարում հայրենասիրությունը դարձավ նաեւ բուն գեղարվեստական գրականության նյութ: Այս տեսակետից առանձնահատուկ են Դավթակ Քերթողի «Ողբ ի մահն Զվանշերի մեծի իշխանին», Ներսես Շնորհալու հատկապես «Ողբ Եդեսիոյ» եւ «Վիպասանություն» պոեմները: Հայրենասիրական գաղափարախոսութ-

Հայրենիք արծարծող թեման՝ հայ արվեստագետների ստեղծագործություններում

յունն ամբողջ միջնադարում զուգակցված էր քրիստոնեական հավատի քարոզչությանը: Խորհրդանշական սկիզբը Եղիշեի «Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին» աշխատությունն է: Այս ոգին այս կամ այն չափով առկա է հայ միջնադարյան տաղերգության տարբեր տարատեսակների մեջ՝ վիպերգեր, ողբերգեր: Սա մի հարուստ ժառանգություն է, որ հայ ժողովուրդն ստեղծեց իր պատմության դժվարին ճանապարհին: Այդ ժառանգությունը սերտորեն կապված է հայ ժողովրդի հոգեբանությանը, նրա կյանքի ու պայքարի անմիջական արձագանքն է: Այս շրջանակում պետք է դիտել նաեւ պանդխտություն-գրականություն հարցը: Պատմությունը լի է դավերով ու փորձություններով, ինչին ժողովուրդն իր հողի վրա որքան կարողացել դիմագրավել է: Բայց պատմությունը հայ ժողովրդին պատուհասել է կործանարար մի աղետով, ինչը կոչվում է հայրենազրկություն՝ այս բառի բոլոր հնարավոր իմաստներով՝ պանդխտություն, բռնագաղթ, վտարանդիություն, արտագաղթ, տեղահանություն, փախեփախ եւ այլն: Բառապաշարի մեջ իրենց տեղն ունեն նաեւ ղարիբն ու նժդեհը: Այդ երեւույթը նկատվել է դեռեւս վեցերորդ դարում, խորացել սելջուկների օրոք՝ 11-13-րդ դարեր, մոլեգնել շահ Աբասի ժամանակ՝ 17-րդ դարի սկիզբ, սովորական դարձել հետագա հարյուրամյակներին: Հողից կտրված ժողովուրդը շատ արագ դիմազրկվել է, ուծացվել ու վերացել: Իսկ 1915-ի ցեղասպանության, տեղահանության եւ բռնագաղթի հետեւանքներն առ այսօր զգալի են: Հայրենասիրական ոգին, հայրենասիրական գրականությունը նոր թափ ստացան Մխիթարյան միաբանության գրական-բանասիրական-մշակութաբանական, ընդհանուր առմամբ՝ հայագիտական գործունեության մեջ: Ընդհանրապես Մխիթար Սեբաստացու եւ նրա շուրջ հավաքված հայագետների գործունեության նպատակը հայրենիքի վերածնունդն էր, որ դրսեւորվեց գործունեության տարբեր ձեւերով՝ նախեւառաջ հայոց մատենագրության գիտական հրատարակությամբ, հայագիտական տարատեսակ աշխատություններով (բառարաններ, դասագրքեր, ազգագրություն, պատմագրություն, լեզվաբանություն, գրականագիտություն, գեղագիտություն, տոմար եւ այլն) եւ բուն գրական-գեղարվեստական գործունեությամբ: Այս տեսակետից պետք է առանձնացնել ու հիշատակել Հովհան Վանանդեցու «Տեսարան հանդիսիցն Հայկայ, Արամայ եւ Արայի» (1829, տպագրվել է 1856), «Արփիական Հայաստանի», «Ոսկե դար Հայաստանի» (1836) պատմակրոնական պոեմները, «Առ Հայաստան» («Հայաստան, երկիր դրախտավայր») բանաստեղծությունը, Պետրոս Մինասյանի «Խոսրով Մեծ» (1845), «Սմբատ Առաջին» (1845) ողբերգությունները, Արսեն Բագրատունու տաղերը, «Երվանդ» (1869), «Արտաշես» ողբերգությունները, «Հայկ դյուցազն» (1858) վիպերգը: Հայրենասիրական գործունեության մի ամբողջական նվիրում է Ղեւոնդ Ալիշանի ժառանգությունը: «Շիրակ» (1881), «Սիսուան» (1885), «Այրարատ» (1890), «Սիսական» (1893) պատմագրական-ազգագրական-հայագիտական աշխատությունների կողքին իրենց ուրույն տեղն ունեն նրա «Նուագք» խորագրված բանաստեղծությունների եւ պոեմների 5 հատորները (1857-1858): «Երգք Նահապետի» հատորաշարում են զետեղված այնպիսի հանրահայտ երկեր, ինչպիսիք են «Պլպուլն Ավարայրի», «Շուշան Շավարշանայ», «Աշոտ Երկաթ ի ծովուն Սեւանայ» պոեմները, «Հայ հայրենիք», «Հայոց աշխարհիկ», «Ողբամ զքեզ Հայոց աշխարհ», «Մասիսու սարերն» բանաստեղծությունները: Հայրենասիրական քնարերգության լավագույն ներկայացուցիչներ են Հարություն Ալամդարյանը, Մեսրոպ Թաղիադյանը, Գաբրիել Պատկանյանը, Ստեփանոս Նազարյանը: Հիշատակելի են Ալամդարյանի «Չափաբերականք» (1884) ժողովածուի մեջ զետեղված բանաստեղծությունները, ինչպես նաեւ «Հռադամեստ եւ Զենոբիա» (1824–1829) ողբերգությունը, Թաղիադյանի՝ Թուքակ Թաղիդեանց» (1847) ժողովածուն, «Սոս եւ Սոնդիպի» (1847) պոեմը, Գաբրիել Պատկանյանի «Հարսանիք Արտաշէսի եւ Սաթինկայ», «Յուլիանոս Շամիրամայ», «Արի արքան արքայից», «Վահագն», «Անուշավան», «Փառնակ», «Հայկերգ», «Արամերգ», «Արայի մահը» պատմադիցաբանական պոեմները, «Վարդանամակ կամ Արկածք Վարդանայ», «Վաշտակ» վեպերը, «Առ հայրենիս», «Գեղեցիկ Նախիջեւան» եւ մի քանի այլ բանաստեղծություններ, Նազարյանի «Մայրենի լեզու» քերթվածը, «Հանդես նոր հայախոսության» աշխատությունը: Այս հեղինակները վերականգնեցին հայրենիքի հիշատակները՝ դրանով իսկ բորբոքելով հայ ժողովրդի հայրենասիրությունը: Պետականության կորստից հետո հայ ժողովուրդն աստիճանաբար կորցրեց նաեւ ազգային արժանապատվությունը, հիշողությունից գրեթե ջնջվեց ազգային գիտակցությունը, եւ հայությունը տարբեր հատվածներում հեռացավ լեզվից, եկեղեցուց, մշակույթից, կենցաղից: Ահա եկել էր զանգվածի վերածված հայությանը քնից արթնացնելու ժամանակը: Պատմությունը, պատմական-առասպելական դեմքերն ու անունները, առանձին դրվագների գեղարվեստական մշակումներն ստեղծեցին այն ամուր գաղափարական հիմքը, որից հետո հանդես եկած գրողների հայրենասիրական երկերն ուղղակի պետք է դառնային ժողովրդական սեփականություն եւ վերածվեին գործունեության ծրագրի: Այդ ոգով զարգացավ հայ գրականությունն ամբողջ 19-րդ դարում եւ 20-րդ դարի սկզբին: Այդ ոգին, ի վերջո, 1918-ին ծնունդ տվեց հայոց նոր պետականությանը: Հայրենասիրական գործունեության այս ծրագրի սկզբում Խաչատուր Աբովյանի նվիրական անունն է, ով հայրենասիրության վերածնունդը դրեց գործնական հիմքի վրա: Այդ նա էր, ով «Վերք Հայաստանի: Ողբ հայրենասիրի» (գրել է 1841-ին, տպագրվել է 1858-ին) վեպով առաջադրեց պատմական ժամանակաշրջանի մեջ ճիշտ կողմնորոշվելու ազատագրական ծրագիր: Այդ նա՛ էր, ով ստրկության դատապարտված ժողովրդի ընդհանուր հաշտվողական վիճակի մեջ տեսավ Աղասուն, առանձնացրեց, զենք տվեց ձեռքը եւ պայքարի կոչեց ընդդեմ պարսկական լծի: Այդ նա՛ էր, ով ընդվզեց ֆարաշների դեմ, ստեղծեց հայրենասերների զինված խմբեր եւ ճակատագրական պահին միացավ ռուսական բանակին: Ազատագրական գաղափարախոսությունը որպես գործունեության ծրագիր տվյալ ժամանակաշրջանում ուներ այդպիսի ուղղվածություն, այլ բան, որ ինքը՝ Աբովյանը, պիտի հիասթափվեր այս նոր գաղութատիրությունից, հակառակ դեպքում նրա հերոսը չէր սպանվի վեպի վերջում, իսկ վեպը չէր վերնագրվի

Հայրենիք արծարծող թեման՝ հայ արվեստագետների ստեղծագործություններում

«Վե՛րք…» եւ «Ո՛ղբ…»: Աղասու հայրը պարսկական ժամանակների խորհրդանշանն էր, ինքը՝ Աղասին, ով ոչ թե պայմանական կերպար է, այլ իրականահավաքական, նոր ժամանակների: Երկուսն էլ վեպի վերջում հեռացան կյանքից, որովհետեւ՝ առաջինի ժամանակն ավարտվել էր, իսկ երկրորդի ժամանակը չեկավ, քանի որ մեկ գաղութատիրությունը փոխվեց մեկ ուրիշով: Աբովյանն սկզբնավորեց զինված պայքարով հայրենիքի ազատագրման իրատեսական գաղափարախոսությունը, ինչը պիտի շարունակեին Ռաֆֆին, Մուրացանը, Յարճանյանը, Վարուժանը եւ ուրիշներ: Նշեցինք, որ 19-րդ դարի հայ գրականության առանցքային ուղղվածությունը հայրենասիրությունն էր: Հատկապես ազատագրական գաղափարները կազմում էին ոչ միայն հայ արձակի, պոեզիայի ու թատերգության հիմնաշերտը, այլեւ հայ հրապարակագրության, ընդհանուր առմամբ՝ մամուլի ուղղվածության: Այս տեսադաշտում պետք է հիշատակել Գաբրիել Պատկանյանի «Արարատ» (1850-1852), Ստեփանոս Նազարյանի «Հյուսիսափայլ» (1858-1860), Ստեփան Ոսկանյանի «Արեւելք» (1855) եւ «Արեւմուտք» (1868) պարբերականների գործունեությունը, որոնք արձագանք էին եվրոպական լուսավորության: Նույն ուղղվածությամբ պետք է դիտել Հարություն Սվաճյանի «Մեղու» (1856–1862, 1870–1872), Գրիգոր Չիլինկիրյանի «Ծաղիկ» (1861–1867), Ռափայել Պատկանյանի «Հյուսիս» (1863–1864), Մատթեոս Մամուրյանի «Արեւելյան մամուլ» (1871–1901) եւ հատկապես Գրիգոր Արծրունու «Մշակ» (1872–1921) պարբերականների գործունեությունը: Պատկերն ամբողջացնելու նպատակով ավելացնենք նաեւ Արփիար Արփիարյանի «Մասիս»-ը, «Արեւելք»-ը, «Հայրենիք»-ը, Արշակ Չոպանյանի «Անահիտ»-ը (1898-1911, 1929-1939, 1947-1949): Մամուլն այս տարիներին դարձավ հայ հանրային կյանքի առաջնորդող ուժը: Տարբեր էին հոսանքները, նախասիրությունները, բայց հրապարակագրական նյութերի մեծ մասը վերաբերում էին հայ ազգային գիտակցության վերազարթոնքին եւ ծրագրված ուղղվածությանը: Ահա այս տեսադաշտում ավելի հստակ է ուրվագծվում գեղարվեստական գրականության հայրենասիրական բնույթը: Մեծանում էր հայրենասիրական վեպերի ընթերցանության ամենօրյա պահանջարկը: Այստեղից՝ պատմավեպերի առատությունը: Իսկ հայրենասիրական քնարերգությունը հիմա արդեն հնչում էր դպրոցական եւ թատերական սրահների բեմերից եւ ներգործում հանրային գիտության վրա: Այս տեսակետից առանձնահատուկ է Միքայել Նալբանդյանի եւ Ռափայել Պատկանյանի գործունեությունը: Գրեթե հասակակից երկու նորնախիջեւանցիները դարձան հայրենասիրական գաղափարների դրոշակակիրներ: Շատ հուժկու էր հնչում Նալբանդյանի ձայնը: Նրա «Հայ մարդու հայրենիքը» (1858), «Սուրբ Մեսրոպի տոնին», «Օշական» եւ հատկապես «Ազատություն» (1859), «Իտալացի աղջկա երգը» (1859), «Մանկության օրեր» (1860), «Ապոլոնին» (1861) հայրենասիրական եւ քաղաքացիական բանաստեղծությունները սերունդներ են դաստիարակել: Ժամանակին շատ մեծ ներգործուն դեր են ունեցել նաեւ Ռափայել Պատկանյանի 1850-1860-ական թթ. գրած «Զարմայր նահապետի մահը», «Արաքսի արտասուքը», «Օրորոցի երգ», «Աղասու մոր երգը», «Հայ եւ հայություն» բանաստեղծությունները, «Քաջ Վարդան Մամիկոնյանի մահը» պոեմը: 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի եւ հայկական հարցի անդրադարձներ են նրա «Բողոք առ Եվրոպա», «Տաճկահայերի օրհասը», «Վեհաժողով» բանաստեղծությունները: Հայրենասիրական ոգին ներծծված է նրա ոչ միայն չափածո, այլեւ արձակ գրեթե բոլոր գործերի մեջ: Հայրենիքի լուսավորության ու սիրո գաղափարների մարմնավորումներ են Սմբատ Շահազիզի «Լեւոնի վիշտը» (1865) պոեմը եւ «Ազատության ժամեր» (1860) գրքում զետեղված, ինչպես նաեւ զանազան այլ բանաստեղծություններ՝ «Ազգային վիճակ», «Ինձ մի սիրիր», «Երգ մեռնող հայրենասերի», «Կեցցե սուրբ գործը», «Հայաստան եւ նորա որդիք», «Բռնավոր սուլթան», «Եզվիտներ եւ Զեյթուն»: Հայրենասիրական գաղափարները միաժամանակ բորբոքվում էին ինչպես արեւելահայ, այնպես եւ արեւմտահայ իրականության մեջ: Արեւմտահայ պոեզիայի եւ թատերգության ասպարեզում առանձնանում են Մկրտիչ Պեշիկթաշլյանն ու Պետրոս Դուրյանը: Նրանք բեմ հանեցին պատմական դրամաներ ու ողբերգություններ՝ փորձելով թուրքական բռնատիրության պայմաններում զինավառել ժողովրդին: Նշանակալի են Պեշիկթաշլյանի «Կոռնակ», «Արշակ Երկրորդ», «Վահան Մամիկոնյան», «Վահե», Դուրյանի «Արտաշես Աշխարհակալ», «Անկումն Արշակունի հարստության», «Ասպատակություն պարսկաց ի Հայս կամ ավերումն Անի մայրաքաղաքին Բագրատունյաց», «Տիգրան Բ» երկերը: Իր քնարերգության մեջ հայրենասիրական գաղափարները Պեշիկթաշլյանը ծառայեցրեց պատմական այնպիսի իրողության փառաբանությանը, որպիսին Զեյթունի ապստամբությունն էր: Քաղաքացիական-հայրենասիրական բարձր ներշնչանքով են գրված այս շարքի չորս գործերը՝ «Հայ քաջորդին» «Մահ քաջորդվույն», «Թաղումն քաջորդվույն» եւ «Հայ քաջուհին»: Հակառակ այս պատմական անդրադարձի՝ ավելի ռոմանտիկ շնչով են գրված Դուրյանի «Իղձք առ Հայաստան», «Երգ մարտին Վարդանանց», «Իմ ցավը», «Վիշտք հայուն» քերթվածները: Բոլոր ձեւերով գրականությունը փորձում էր ոտքի հանել, զինավառել ժողովրդին, բորբոքել նրա ազգային գիտակցությունը. բեմերում թատերական ներկայացումներն էին ու ասմունքը, թերթերում շարունակաբար տպագրվող վեպերն էին, հրապարակագրական հոդվածները: Հավաքվում էր ազգային բանահյուսությունը, հնչում էր ազգային երգը, վերականգնվում էր ազգային հիշողությունը: Հայրենասիրական շունչը մի նոր թափ առավ հայկական գաղափարապաշտության (ռոմանտիզմի) գրականության մեջ: Այս տեսակետից առանձնահատուկ են Ռաֆֆու եւ Մուրացանի ստեղծագործությունները: Հայրենասիրական գաղափարներ ամեն ինչի մեջ՝ լինի բուն հայրենասիրական նյութ, թե սոցիալական կամ սիրային: Սա արդեն արմատական սկզբունք էր՝ առանց որի գրողները չէին պատկերացնում գրականության գործառական-դաստիարակչական դերը: Այսինքն՝ գրականությունն իր դրսեւորման բոլոր ձեւերով պետք է նպաստեր ժողովրդի հայրենասիրական վերազարթոնքին: Այս առաջադրությը Ռաֆֆին իրականացրեց թե՛ կովկասահայ կյանքին նվիրված վիպակներում, թե՛ թուրքահայ կյանքին նվիրված պատմվածքներում եւ թե՛ հատկապես պարսկահայ կյանքն

Հայրենիք արծարծող թեման՝ հայ արվեստագետների ստեղծագործություններում

արտացոլող «Սալբի» ու «Հարեմ» վեպերում: Ռաֆֆին առաջ է քաշում գաղափարապաշտ հերոսի կերպարը, ում գլխավոր նպատակը հայրենիքին ծառայելն է: Այս մտայնությունն առավել խորությամբ արտահայտվեց հատկապես Ռաֆֆու ծրագրային վեպերում՝ «Ջալալեդդին» (1878), «Խենթը» (1881), «Կայծեր» (հհ.1-2, 1883-1887): Սարհատի, Վարդանի, Միքայել Դուդուկջյանի (Սալման), Ֆարհատի, Սարոյի, Սարգիսի, Ասլանի, Ավոյի, Սոնայի, Մարոյի կերպարները Ռաֆֆու հայրենասիրական գաղափարները մարմնավորողներն են, ովքեր զենքով, գաղափարով, լուսավորությամբ ծառայում են հայրենիքին: Հայրենասեր կերպարների նվիրվածությամբ են ստեղծված նաեւ Ռաֆֆու պատմական վեպերը՝ «Դավիթ Բեկ» (1882), «Պարույր Հայկազն» (1884), «Սամվել» (1886): Այս դեպքում արդեն Ռաֆֆու գաղափարական առաջադրույթները կենսագործում են պատմականորեն վավերական դեմքեր՝ Սամվելը, Մովսես Խորենացին, հանրահռչակ, բայց ազգին անօգտակար Պարույր Հայկազն-Պրոերեսիոսը եւ Դավիթ Բեկը: Մուրացանի համար եւս, անկախ նրանից գյուղի կյանք է պատկերում, քաղաքային հարաբերություններ, թե պատմական իրադարձություններ, ամեն ինչի նպատակը հայրենիքին ծառայելու գաղափարն էր: Հայրենիք՝ հանուն որի նա առաջ է քաշում իր գյուղափրկիչ ծրագիրը՝ «Խորհրդավոր միանձնուհի» (1889), «Նոյի ագռավը» (1899), «Առաքյալը» (1902), հանուն որի քննադատում է քաղաքային բարքերը եւ ծաղրում քաղքենիական կենցաղը՝ «Հասարակաց որդեգիրը» (1884), «Հարուստները զվարճանում են» (1884), «Ինչ լայեղ է» (1885), «Անպատճառ իշխանուհի» (1886), «Լուսավորության կենտրոնը» (1892), «Հատուկ թղթակիցը» (1902) եւ, հակառակ դրանց, օրինակելի հայրենասիրական վարքով է կերտում իր պատմական հերոսներին՝ Ռուզանին («Ռուզան կամ Հայրենասեր օրիորդ», 1881), Գեւորգ Մարզպետունուն («Գեւորգ Մարզպետունի», 1896) եւ Անդրեաս Երեցին («Անդրեաս Երեց», 1897-1898): Հայրենապատումի նույն այս ծրագրի մեջ իրենց որոշակի տեղն ունեն նաեւ Մուրացանի «Հայ բողոքականի ընտանիքը» (1882) վիպակը եւ «Իմ կաթոլիկ հարսնացուն» (1885) վեպը: Մուրացանի միտումնավորությունը գրականության մեջ ուներ միմիայն մեկ նպատակ՝ ինչ գնով էլ լինի փրկել հայրենիքը: Նույն այս շրջանակի մեջ պետք է դիտել նաեւ Ծերենցի պատմավիպասանությունը՝ «Երկունք Թ դարու» (1879), «Թեոդորոս Ռշտունի» (1881), «Թորոս Լեւոնի» (1887) եւ Պերճ Պռոշյանի «Սկիզբն երկանց» (1892), «Հունո» (1900) վեպերը: Իսկ Պռոշյանի մյուս վեպերը ժողովրդին համախմբում են ազգագրության շուրջ՝ հիշեցնելով կենցաղի ու սովորույթների մանրամասները: Հայրենասիրական տրամադրությունները նոր թափ առան հայ նոր քնարերգության հիմնադիր Հովհաննես Հովհաննիսյանի պոեզիայում՝ ուղենշելով մի նոր ճանապարհ, որի շարունակողները պիտի լինեին Հովհաննես Թումանյանն ու Ավետիք Իսահակյանը: Հովհաննիսյանի հայրենասիրական քնարերգության մեջ կա եւ՛ սոցիալական մոտիվ, եւ՛ ազգային, եւ՛ պատմական: Պատմական նյութով են գրված նրա «Արտավազդ» (1887), «Վահագնի ծնունդը» (1904), «Լուսավորչի կանթեղը» (1904) բալլադները, «Սյունյաց իշխան» (1887) պոեմը, «Տղմուտ» (1887), «Վարդանանց օրը» (1888) բանաստեղծությունները: Հայ ժողովրդի ծանր վիճակի, ապա եւ 1894-1896 թվականների ջարդերի արձագանք են «Նոր գարուն» (1887), «Արազն եկավ» (1887), «Աշուղ» (1887), «Սգո օրեր» (1896) բանաստեղծությունները: «Իմ հայրենիքը տեսե՞լ ես, ասա...», - ռոմանտիկ ոգեւորությամբ բացականչում է նրա քնարական հերոսը՝ կարոտով կերտելով հայրենիքի մի իդեալական կերպարը, որն ավելի ուշ Հովհաննես Թումանյանը պիտի ծաղրանմանության ենթարկեր՝ հայրենիքի գեղեցկության պատրանքին հակադրելով սոցիալական հակասություններն ու թշվառությունը: Սոցիալական վիճակն այս անգամ թուրք հարստահարիչների կեղեքումների պայմաններում արտացոլվել է նաեւ Վրթանես Փափազյանի «Պատկերներ թուրքահայոց կյանքից» (1891), «Պատմվածքներ թուրքահայերի կյանքից» (1904) պատմվածքների եւ ակնարկների մեջ: Դա արտահայտվել է նաեւ նրա «Ձրույցներ» (1889-1904) եւ «Պատկերներ գյուղից» (1911-1912) շարքերում: Հայրենասիրության ակունքն այս դեպքում դառնում է հայ կյանքի պատկերը հատկապես թուրքական բռնատիրության պայմաններում: Հայ կյանքի այս ծանր իրականությանն են նվիրված Ավետիս Ահարոնյանի «Պատկերներ» (1899) շարքի գործերը, որոնց մեջ արտացոլված են 1894-1896 թթ. իրադարձությունները՝ համիդյան ջարդերը: Գրողը լայն համապատկերով ներկայացնում է հայության կյանքը թուրքական բռնակալության պայմաններում. դրա արտահայտություններն են «Խեղճերը» (1902) պատմվածաշարը, «Սեւ օրեր» (1897), «Ռաշիդ» (1897) վիպակները: Ահարոնյանը նաեւ Ռաֆֆու ազգային-ազատագրական գաղափարների ժառանգորդն էր: Այս տեսակետից կարեւոր են նրա «Ազատության ճանապարհին» պատմվածաշարի գործերը (1898-1900), ինչպես նաեւ «Մրրիկի սուրբը» (1903), «Լռություն» (1909) վեպերը: Այս մտայնությունների արտահայտությունն է նաեւ նրա «Արցունքի հովիտ» (1907) դրաման: Արեւելահայ-արեւմտահայ գրականությունների ու գրողների մերձեցումը 20-րդ դարասկզբին դառնում է պահանջ: Այդ գիտակցությամբ «Գարուն» (1910-1912, Մոսկվա) տարեգիրքն իր երեք հատորներում հավասարապես տեղ է տալիս երկու կողմի գրողներին: Առաջին գրքում Ահարոնյանի, Իսահակյանի, Կուրղինյանի, Դեմիրճյանի, Փափազյանի, Ծատուրյանի, Տերյանի հետ մեկտեղ տպագրվել են Սիրունին, Հակոբ Քյուֆեճյանը (Օշական գրական անունով հանդես է եկել 1920-ից), Մերուժան Պարսամյանը, Հրանտ Նազարյանցը, երկրորդում՝ Շիրվանզադե, Իսահակյան, Դեմիրճյան, Միքայել Մանվելյան, Ծատուրյան, Կարեն Միքայելյան, Տերյան, նաեւ Փայլակ, Քյուֆեճյան, Չիֆթե Սարաֆ, Հրանտ Նազարյանց, Ռուբեն Սեւակ, Մերուժան Պարսամյան: 3-րդ գրքում հոդվածներ են: Հրաշալի է Դավիթ Անանունի «Անցյալի մեծարանքը (Հովհաննես Թումանյանի քնարը)» հոդվածը՝ այսպիսի դիպուկ բնորոշմամբ. «Հովհաննես Թումանյանը առանձնակի տեղ ունի գրված հայ Պառնասում, նա ոչ միայն հայ բանաստեղծ է, այլեւ հայկական առանձնահատկության բանաստեղծ»: Վերջին արտահայտությունն ընդգծում եմ ի հակադրություն ինքն իրենից հեռացած հայ գրականության: Ցոլակ Խանզադյանը վերլուծել է Ավետիս Ահարոնյանի, Պողոս Մակինցյանը՝ Թումանյանի, Իսահակյանի ստեղծագոր-

Հայրենիք արծարծող թեման՝ հայ արվեստագետների ստեղծագործություններում

ծությունները: Հոդվածներ ունեն նաեւ Հ. Կուսիկյանը (Աբովյանի մասին), Ալ. Ռուբենին (Շահազիզի մասին), Ալ. Մարտունին (Հովհաննիսյանի եւ Ծատուրյանի ստեղծագործության հասարակական արժեքի մասին): Մակինցյանը մի քանի դիպուկ դիտողություններ է անում «Աբու Լալա-Մահարի» պոեմի կապակցությամբ: Ինչպես Նիցշեն՝ զրադաշտին, այնպես էլ Իսահակյանը՝ Մահարուն խոսեցնում է ասույթներով, որոնք վերջին դեպքում հնչում են «հին, եւ մաշված, եւ նույնիսկ բանալ»: Սերը քաղցր թույն է՝ Սուլթան Մուհամեդի խոսքն է կնոջը, հզորի առաջ թույլն է մեղավոր՝ ռուսական ասույթ է: Միեւնույն միտքը Աբու Լալան ծամծմում է պես-պես ձեւերով եւ <...> այդ ձգձգվածությունը հոգնեցնում է …» (էջ 362): Բայց նույն Մակինցյանը չգիտես ինչու քննադատում է «Գեղարվեստ»-ի 4-րդ գրքում Ե. Ֆրանգուլյանի «Ավետիք Իսահակյանը որպես մտածող» հոդվածը, ինչի մեջ՝ «Աբու Լալա…»-ի կապակցությամբ նա զուգահեռներ է նշել Շոպենհաուերի, Բուդդայի, Օտտո Վայնինգերի եւ Նիցշեի հետ: Վերջում էլ Մակինցյանը Նիցշեի իսկ անդրադարձով Ֆրանգուլյանին «զրադաշտի կապի՛կ» է անվանում: Հայրենասիրական տարերքը կարիք է զգում զտման, բյուրեղացման եւ ինքնուրույնության: Անկախ նյութի բնույթից՝ բուն հայրենասիրակա՞ն, թե՞ համամարդկային խնդիրների արծարծում է, ազգային գիտակցության մեջ դրանք վերափոխարկվում են հոգեբանական վիճակների եւ վերակերպավորվում գործող հերոսի: Դա է պատճառը, որ հայ հայրենասերները սահմանափակ հերոսներ չեն, այլ համամարդկային արժեքների կրողներ: Այլ պարագայում նրանք դատապարտված են կործանման կամ, լավագույն դեպքում, գործունեության հնարավորությունների սահմանափակման: Իսկ մեկ այլ պարագայում այդպիսի հերոսները դառնում են ծաղրուծանակի առարկա, ինչպես Հակոբ Պարոնյանի, Երվանդ Օտյանի երկերում: Հայրենասիրական տրամադրություններն ու զգացումներն այնքան համապարփակ են, որ ոմանք դարձրեցին չարաշահման նյութ, անգամ նյութականացրեցին այն: Ահա այդպիսիների կերպարներ են բացահայտում Հակոբ Պարոնյանի «Ազգային ջոջեր», «Հոսհոսի ձեռատետրը», «Կսմիթներ» շարքերը, «Պաղտասար Աղբար» կատակերգությունը, Արփիարյանի «Կարմիր ժամուց» վիպակը, Երվանդ Օտյանի «Ընկ. Բ. Փանջունի», «Թիվ 17 խաֆիեն: ժամանակակից պատմական վեպ» (1919-1920) վեպերը, «Հեղափոխության մակաբույծներ» պատմվածքների շարքը: Դարասկիզբը բերում էր ազատության եւ հավասարության գաղափարներ: Բոստոնի «Շանթ» ամսաթերթը «Մեր նպատակը» խմբագրականում (1910, թիվ 1, մայիս) ավետում է՝ աշխարհը հնացել է. «Հինցած են սրբություններն ալ, նվիրատվությունները ալ, աստվածները ալ…»: Հինը պիտի մեռնի, աշխարհը պիտի քանդել ու նորից շինել: Իսկ ի՞նչ դեր ունի այստեղ հայն ու Հայաստանը: Քանի որ թերթն ուներ համայնավարական (սոցիալիստական) ուղղվածություն, ուստի գրականության լրացուցիչ պայմանը համարում է «հեղաշրջելու, առաջնորդելու հանգամանքը» (1910, թիվ 4, օգոստոս): Ըստ այդմ՝ գրագետն իր գրականությամբ պետք է առաջնորդի դեպի նոր կյանք՝ իր մեջ կրելով «դարերի գուշակությունը»: Գրողը պետք է լինի վաղվա «իմաստուն ճարտարապետը»: Շահան Նաթալին «Վրեժիս երգը» ուղղում է համիդյան զոհերի հիշատակին: Գործեր ունեն Զապել Եսայանը՝ «Գուշակը» (պատմվածք), Հրանտ Նազարյանցը, Արսեն Երկաթը եւ ուրիշներ: Պոլսի «Շանթ»-ն առաջին համարի հանգանակում արձանագրում է. «ոչ մեկ երկրի քաղաքական կյանքը այնքան զորավոր կերպով ազդած է Գրականության եւ Արվեստի վրա, որքան մեր մեջ» («Շանթ», կիսամսյա հանդես, Կ. Պոլիս, 1911, թիվ 1, 15/28 հունիս, խմբագիր՝ Մերուժան Պարսամյան): Ասածն այն է, որ երիտթուրքերի սահմանադրությունը «…բոլոր գրագետները գինովցուց ու քաղաքական անպատասխանատու գոյության մը բավիղներուն մեջ մոլորեցուց զանոնք»: Կոչ է անում հանդարտեցնել «ազգային մոլեգնոտ կռիվներեն հոգնած» գրողներին՝ ստեղծելու նոր միջավայր, արվեստի նոր հանգրվան: Սահմանադրությամբ ոգեւորված, 1915-ի ցեղասպանության կանխատեսումը չունեցող հայ գրողներն են, ովքեր համիդյան շրջանի «ցեղին սուգն» են խնկարկում նոր վստահեցումների առջեւ: «Գրողներ ունինք, բայց ոչ գրականություն»,- գուժում է հանդեսը «Թրքահայ գրական շարժումը» հոդվածում՝ ուշադրություն հրավիրելով ճահճացյալ գրական-մշակույթային կյանքին: Դեռ ավելին. «Հայ գրող վարպետները բացարձակ ընդօրինակողներ են, ոչ թե հղացողներ» (նույն տեղը, 1911, թիվ 2): Այս հոդվածին հակադարձում է Երուխանը. «Համիդ… չկրցավ տեսնել, թե ճղակոտոր ելլող հայութենեն նոր եւ տարօրինապես հզոր գրականություն մը կը հառն»: Ահա թե ինչու կը սխալին անոնք, որ կ'ողբերգեն հայ գրականության անկումին վրա…» (նույն տեղը, 1911, թիվ 3): Լալկանությունը համարելով տոհմական պակասություն՝ Երուխանը տեսակետ է հայտնում, ըստ որի՝ Ոսկեդարից հետո վերջին քսան տարում հայ գրականությունը հասել է ծաղկման: «Կարճատեսությունը քննադատության մեջ» հոդվածում Եռնվք Արմենն առարկում է Երուխանին. «…միջակություններեն զոհ ու երջանիկ սակավապետ լավատես» (նույն տեղը, թիվ 4): Մերուժան Պարսամյանը «Դժգոհներ՝ գրականության մեջ» հոդվածում «արվեստագետ», «հմուտ», «իմաստասեր» քննադատի կերպարն է բարձրացնում ընդդեմ իմաստա՛կ գրողների. «Ավելորդ գրական դպրոցներ չկան: Կան միայն ավելորդ գրողներ» (նույն տեղը, թիվ 7): Հորձեռանդ գրիչով գրքունակ գրողներ միշտ են եղել: Հիմա նոր ժամանակ էր. Արտաշես Հարությունյանը Միքայել Վարանդյանի «Վերածնվող հայրենիքը եւ մեր դերը» (Ժնեւ, 1910) գիրքն է դարձնում օրախնդիր (նույն տեղը, թիվ 10) եւ արծարծում հայրենաշինության գաղափարներ: Ավելացնենք, որ «Շանթ»-ի շուրջ համախմբվել էր արեւմտահայ գրողների ընտրանին: Բոլորն ապրում եւ գրում էին հայրենիքի վաղվա տեսլականով: Կարծես թե մոտ էր ազատության ու վերականգնումի օրը, մանավանդ որ համընթաց շարժումներ էին ծավալվել Բալկաններում ու Բուլղարիայում: «Հայ գրականություն» ամսօրյա հանդեսը եւս խմբագիր Սուրեն Պարթեւյանի համանուն խոսքում նույնն է ասում՝ քաղաքականությունը փակել է գրականության ճանապարհները. «Կարծես թե Տիկին Քաղաքականությունը նախանձահույս մրցակցության մը ելած է մեր մեջ Տիկին Գրականության դեմ, անոր սիրահարները ձեռքեն խլելու <...>: Ազգ մը իր գիրքերեն եւ գիրքերուն մեջ կ'ապրի: Մենք

Հայրենիք արծարծող թեման՝ հայ արվեստագետների ստեղծագործություններում

միայն ջարդերու, աղետներու առջեւ մտահոգվիլ գիտենք: Կոտորվելով չի լմննար սակայն ազգ մը, այլ իր հոգեկան նկարագիրը կորսնցնելով: Այս համոզումով է, որ մենք նվիրական կը նկատենք ամեն ջանք, որ կուգա ի սպաս դրվիլ Հայ գրականության վերականգնումին: Միջակություններու մշտահորդ հոսանք կեցնել, զտումի ու բյուրեղացումի գործը դյուրացնել, հանգրվան ու հենարան ընծայել ճշմարիտ տաղանդներուն» («Հայ գրականություն», հանդես ամսօրյա, Ա տարի, 1911, թիվ 1, 1–14 հուլիս): Դարձյալ տաղանդավոր գրքերով ու արվեստով ազգը ոտքի կանգնեցնելու ծրագիր, ընդդեմ կոտորածների՝ պահպանելու ազգի հոգեկան նկարագիրը: Ինչ պարբերականի առաջին էջին է՝ նույնը նաեւ վերջին էջին է. ըստ որի՝ ամսաթերթը հիմնված է ի հայտ բերելու «անշքացած հայ մտքի ստեղծագործությունը», «պիտի աշխատի ցոլացնել տիեզերական ընդհանուր առաջադիմության ոգին <...>, ժամադրավայրը պիտի ըլլա գեղեցիկին, ճշմարտին եւ բարվոյն»: Հայտնի դատողություն է՝ գեղեցիկը կփրկի աշխարհը: Եթե այդպես է, ապա գեղեցիկը կփրկի նաեւ Հայաստանը: Այդ իսկ տրամաբանությամբ՝ որքան տաղանդավոր գործեր, այնքան լավ: Այս տեսակետից, ահա, խոչընդոտ են նաեւ միջակությունները: Մի կողմից՝ համիդյան ջարդերի, մյուս կողմից՝ նոր սահմանադրության խոստումների արանքում հայ գրողը խոսում է ապրելու գիտության մասին. «Ապրելու գիտություն մը կրնա ըլլալ, ինչպես կա գրելու գիտություն մը: <…>: Ապրելու արվեստ կա ճիշտ այնպես, ինչպես որ կա գրելու արվեստ մը» (Ա. Հարությունյան, «Հակասություններ», «Հայ գրականություն», 1911, թիվ 5, 1-14 նոյեմբեր): Այս ամենը տանում է դեպի ազգաբանություն՝ ինչպե՞ս ապրել, ո՞րն է հայ մարդու կյանքի գերագույն նպատակը: Չմոռանանք, որ այս տարիներին շարունակվում է դեռեւս անցյալ դարավերջից սկսած հայության արտահոսքը մայր երկրից: Դրա անդրադարձն է Զ. Եսայանի «Գաղթականներ» գրությունը («Հայ գրականություն», 1911, թիվ 6, 15-30 նոյեմբեր), ինչի մեջ հայության արտահոսքի պատկերն է դեպի Նոր Աշխարհ՝ ԱՄՆ: Հարցը պարզ էր բոլորին. կա՛մ մնալ՝ երկի՛րը պաշտպանել, կա՛մ գնալ՝ կյա՛նքը փրկել: Այս երկվության պատասխանն է Գրիգոր Արծրունու «Մենք ստրուկներ ենք» հայաքննության տպագրությունը. «Հայը սեր չունի դեպի իր ազգությունը՝ նա իրան երբեք չի զոհի ազգության համար: Հայի սերը դեպի իր նմանները կեղծավոր է, սուտ է» («Հայ գրականություն», 1912, թիվ 2, 1-14 սեպտեմբեր): Այսպես ազգն ու գրականությունը կանգնում են նախ մեկը մյուսին ճանաչելու, հարաբերություններ ճշտելու եւ ապա ով՝ ում եւ ուր առաջնորդելու անհրաժեշտության առջեւ: Հակոբ Քյուֆեճյանը գրախոսում է Մոսկվայում լույս տեսած «Գարուն» տարեգրքի Գ հատորը (նախորդ երկու գրքերում ինքը եւս գեղարվեստական նյութեր ունի) եւ գրում. «Հովհաննես Թումանյան մեր ամենամեծ բանաստեղծն է դյուցազներգության սեռին մեջ: Ասիկա կը խոստովանիմ հայտնի հպարտությունով մը: Հովհաննես Թումանյան ցեղին հոգիեն կու գա, կու գա իր երեց եղբայրներեն, կու գա Նարեկացիեն, Քուչակեն, Աբովյանեն» («Հայ գրականություն», 1912, թիվ 4, 1-14 նոյեմբեր): Նա քննադատում է Դավիթ Անանունին՝ «այդ սքանչելի բանաստեղծը… գյուղին կյանքից ներս» խցկելու համար, ծաղրում է հայ քննադատության հասարակագիտական կողմնորոշումը, որ իշխում էր արեւելահայ հատվածում: Այդ քննադատությունը համարում է «հասարակամոլ եւ հավակնոտ», «ահարկու պոռոտախոսություն եւ անիմաստ սոփեստություն», ցանկություն է հայտնում հասարակագիտականի փոխարեն անհատականություններ վերլուծել («Հայ գրականություն», 1912, թիվ 5, 1-14 դեկտեմբեր): Ազգաբանական քննությունը շարունակվում է Զարեհ Գազազյանի «Քաղաքակրթությունը եւ մենք» հոդվածում. «Ազգերու ճակատագիրը այնքան չի ազդվիր արտաքին ճնշումներու կազմալուծող զորութենեն, որքան ներքին անհամաձայնություններու, անմիաբանության եւ անորոշ մտայնության համառող գոյարանեն» («Հայ գրականություն», 1912, թիվ 5,1-14 դեկտեմբեր): Այսինքն՝ ազգը պետք է միտվի գաղափարական միաբանության, իսկ միավորողը ազգային ոգին է, որի արտահայտությունը գրականությունն է, նաեւ բանահյուսությունը: Այստեղից Բաբկեն եպիսկոպոսի կոչը Թուրքիո հայության՝ ի նպաստ հայոց բանահյուսության, որ նշանակում է հավաքել, ամբարել ժողովրդական գանձերը: Ս. Հ. Գալիոնճյանը «Բնազդին աստվածացումը» վերնագրով գրախոսում է Վարուժանի «Հեթանոս երգեր»-ը եւ նրան գնահատում որպես համաշխարհային անուն. «Դ. Վարուժան <…> հայ մեծագույն ու կատարելագույն քերթողն է. ան մեր Հյուկոն, մեր Պրաունինկն է <…>, ոչ մեկ քերթող համաշխարհային գրականության մեջ չի կրցած գերազանցել զայն: Վարուժանի պես տաղանդներ մարդկությունը մատի վրա կը հաշվե» («Հայ գրականություն», 1913, թիվ 9,1-14, մայիս): Հաջորդում է Հակոբ Քյուֆեճյանի վերլուծականը՝ նվիրված Վարուժանի «Ցեղին սիրտը» եւ «Հեթանոս երգեր» հատորներին: Գեղարվեստական անորոշ մտայնությունը, ինչպես պատերազմի դաշտում, այստեղ եւս առաջնորդ է որոնում, որպեսզի դառնա ազգային դրոշակ եւ որի ետեւից գնան: Իր աճող հեղինակությամբ այդպիսին դառնում է Վարուժանը՝ ցեղի երգիչը: Քյուֆեճյանը գրում է. «Մեր տռամին Ռյուպենս մը պետք էր: Դանիել Վարուժան եղավ ատ: «Ցեղին սիրտ»ին հեղինակը մեծ բանաստեղծ մըն է, որ ապագա հանճար մը դառնալու երջանիկ կարողությունները կ'ավետե» («Հայ գրականություն», 1913, թիվ 12, 1-14 օգոստոս): Այս հանդես ամսօրյան իր հերթին 1913-ի 1-ին համարի շապիկի 2-րդ երեսին զետեղել է «Շրջաբերական արտագաղթի մասին» եւ արտագաղթը համարել ազգային գոյությանն սպառնացող աղետ: Այսպես յուրաքանչյուր հայի հեռացումով թուլանում է հայոց ոգին, առջեւում դեռեւս անճանաչելի 1915 թվականն էր, ետեւում 1894-ից սկիզբ առած բռնություններն ու հալածանքներն էին: Անդեկ ու ցաքուցրիվ՝ քամին քշում էր հայոց սերմը… Վրթանես Փափազյանը «Գրական զրույցներ»-ում անդրադառնում է ռուսահայությանը. «Ռուսաստանում ռուս հոգու պստիկության ազդեցությամբ շատ ավելի պստիկանում են ենթակա մանր ազգերի հոգիները»: Անցնում է «հայկական ոգուն», որ մշտական հակվածություն ունի «ամեն տեսակ տարափոխիկ ախտերի հանդեպ» եւ կտրուկ անդրադարձը. «Չէ՛, պարոննե՛ր, վատ է հայ ժողովրդի մտավոր կյանքը, շատ վատ է» («Հայ գրականություն», 1914, թիվ 5, 1-14 հունվար): Նկատի ունի հայ գրականության մեջ թափանցած «կանանց

Հայրենիք արծարծող թեման՝ հայ արվեստագետների ստեղծագործություններում

բումբեր, զիստեր եւ ստինքներ երգող բոլոր «ազատախոհներին»: Գորկու խոսքերով նա կոչ է անում առողջ հոգու համար վերադառնալ «դեպի եռանդի բո՛ւն աղբյուրը՝ դեպի ժողովուրդն ու գիտությունը»: Եվ ամփոփումը. «Ո՛չ, հին արժեքները չեն, որ վարկաբեկ են եղել, այլ այդ արժեքները գնահատողնե՛րն են ու ըմբոստները, որ պստիկացել են» («Հայ գրականություն», 1914, թիվ 5, 1-14 հունվար): Հերոսների ժամանակն էր: Փափազյանի դիտողությունը ետադարձ ուղղվածությամբ վերաբերում է նաեւ Վարուժանին: Այս հարցում նա ձայնակցում է Շիրվանզադեին, ում տեսակետին նույն՝ 1914 թվականի ապրիլի 30-ի իր «Հայ գրականության գալիք օրը» հանրահայտ զեկուցման մեջ պետք է միանար նաեւ Տերյանը: Մինչդեռ Վարուժանը ոչ թե կնոջ տարփանք էր գովերգում, այլ անտիկ հունական արձաններին վայել մերկություն եւ ուժ, ինչը պիտի կորովի ոգի արթնացներ եւ այդ ոգին պիտի ծառայեր ազգությանը: Վարուժանը իրո՛ք գնում էր առաջնորդի ճանապարհով եւ նրան հետեւողները նաեւ ֆիդայի ազատամարտիկներն էին, որ «Ցեղին սիրտը» ժողովածուն կրում էին իրենց մախաղների մեջ: Ժամանակը միտված էր դեպի հայոց ոգու մարմնավորում, ուժերի համախմբում ու գնահատություն: Այս տեսակետից հիշարժան է 1913 թ. Էսայան սանուց միության կազմակերպած «Գրական ասուլիսներ»-ը, որոնք լույս տեսան նույն թվականին եւ նվիրված են Լեւոն Շանթին, Գրիգոր Զոհրապին, Դանիել Վարուժանին, Ռուբեն Զարդարյանին, Ատոմ Յարճանյանին (Սիամանթո) եւ Հովհաննես Սեթյանին: Իր ձեւով եւ բովանդակությամբ սա մի նոր բարեկիրթ վերաբերմունք էր գրողի ու գրականության հանդեպ: Նույն այս թվականին Կոստան Զարյանը համախոհների հետ գրում է «Մեհյան»-ի հանգանակը եւ ձեւակերպում. «Պաշտամունք եւ արտահայտություն Հայ հոգվույն: <...>: Առանց հայ հոգվույն չկա հայ գրականություն եւ հայ արվեստ: <...>: Կհավատանք. Հայ Հոգին Լույսն է, Ուժն է, Կյանքն է՝ մարմնավորված անդրիական շքեղության մեջ Արիական ցեղին, որուն կը պատկանինք»: Այնուհետեւ. «Մշակում՝ կենսանորոգ պատվաստումով մը հայ լեզվին: <...>: Հռչակելով մաքրագործումը հայ լեզվին բազմաթիվ օտարահունչ բառեր»՝ կ'որոշենք դիմել հայ լեզվի զանազան աղբյուրներուն, գրաբարին եւ բնաշխարհի հայ բարբառին՝ որդեգրել հարազատ ու հայեցի բառերը, բացատրություններն ու ասույթները <...>: Կ'ուզենք հիմնել լեզվի գեղագիտություն մը՝ նոր գիծերու, նոր գույներու, նոր շեշտերու…»: Եվ այս ամենը արվեստի կատարյալ անկախության պահանջով, անկախություն նաեւ լրագրությունից ու քաղաքականությունից: Արվեստը վեր է ամեն տեսակի հեղափոխություններից, եւ «ինքն իսկ ըլլալով կրոնական մոլեռանդություն մը, վե՛ր է նաեւ ամեն կրոնքե»: «Ցեղ մը, որ կ'ուզե ապրիլ՝ պարտավոր է ստեղծել»: «Ստեղծե՛նք, ապրելու համար տեւականության մեջ, ստեղծե՛նք, հոն, այդ տեւականության մեջ մեր ցեղին նոր շերտեր ավելցնելու համար տիեզերական մեծ համերգության վրա»: Այսպես էին դատում Կոստան Զարյանը, Հակոբ Քյուֆեճյանը, Ահարոն Տատուրյանը, Գեղամ Բարսեղյանը եւ Դանիել Վարուժանը: Վերջինը «Մեհյան»-ի առաջին համարից պետք է հեռանար եւ հիմներ «Նավասարդ» տարեգիրքը: Նրանք կո՛չ արեցին ստեղծել հայադրոշմ արվեստ եւ հանուն դրա ասացին թե՛ իրենց ո՛չ-ը, թե՛ իրենց այո՛-ն: Ո՛չ-ը Հակոբ Քյուֆեճյանի վարած «Հարթե՛նք» շարքն էր, ուր ծաղրուծանակով՝ «պիտի ըլլանք կարճ, կծու, արյունող», քննադատում է Հրանտ Նազարյանցի քերթվածները, Վրթանես Փափազյանի «Պատմություն հայ գրականության՝ սկզբից մինչեւ մեր օրերը» (1910) աշխատությունը («Մեր գրականության պատմությունը մեր երազին, մեր ոսկի երազին պատմությունն է: Պ. Վրթանես Փափազյանին նման դարբիններ չեն, որ այդ նուրբ ու նվիրական պաշտոնին ընդունակ պիտի ըլլան»): Ի հարգանք Հայաստանյայց գրականության՝ «Մեհյան»-ի երրորդ համարում չեն զետեղվում «Հարթենք» եւ սրա շարունակությունը հանդիսացող «Հիմարապատում» բաժինները: «Մեհյան»-ի 4-րդ համարի «Հարթենք»-ի զոհը …Լեւոն Շանթն է՝ «Հին աստվածներ»-ով, ըստ որի՝ նրա «տիպարները հայ չեն», հեղինակն ազդված է Իբսենից: Հանդեսի 5-րդ համարի «Հիմարապատում» բաժնում խայտառակել են «Բյուզանդիոն»-ի խմբագիր Միրիջան Պարսամյանին, ով իր հերթին հալածել էր Մեծարենցին եւ Արտաշես Հարությունյանին: Վերջին համարում «Հարթենք»-ի ծանր գլանն անցել է Հայր Սիմոն Երեմյանի վեպերի վրայով՝ հեղինակը համարվում է «միտքի պատկառելի գաճաճ մը», ինչին հաջորդում է ապտակը՝ «Արգահատելով կ'ուրանանք զինքը» (էջ 106): Հանդեսի 2-րդ համարում Կոստան Զարյանը տպագրում է «Հայուն Հիսուսը» հոդվածը: «Մեր Հիսուսը սոսկալիորեն լռած է, եւ ան երբեք ապրած չէ հայ հոգվույն ներքնախորը, վասնզի ո՛չ ոք տեսած է զայն: Հայկական հանճարը վերստեղծված չէ: <...>: Հիսուսի հարցը մտերմորեն կապված է հայ ազգի մտավորական եւ հոգեկան ապագա կյանքին բախտին հետ»: «Արդարեւ, ստրկացած, մեռած բան մը կա Հայ Հոգվույն մեջ, որուն դեմ պատրաստ ենք պայքարել»: Ըստ նրա՝ Հիսուսի պաշտամունքն ի սկզբանե եղել է ձեւական, քանզի «գոյություն չունի ո՛չ մեր արվեստին մեջ, ո՛չ մեր գրականության մեջ, ո՛չ ժողովրդի հավատքի մեջ»: Հիսուսը՝ որպես հայ, գոյություն չունի «իբրեւ պատկեր, իբրեւ աստված»: Ահա «արիական իդեալին հասնելու համար» նա կոչ է անում «կա՛մ վերստեղծել զայն նորեն, <...> կա՛մ մարտնչիլ անոր դեմ, տապալել զայն»: Հին աստվածների վերադարձը բացառում է, «վասնզի անոնք իրավամբ հին են եւ մեռած»: Հներին դառնալը մտավոր ծուլություն է, նորը չի ապրում հայ հոգու մեջ, ուրեմն հույսը նոր մտավորականությունն է, որ նոր է ծնվում հրդեհաշունչ եւ զգայավառ հայկական թարմ արյունով: Կոստան Զարյանը երազում է մի նոր Վահագնի ծնունդ՝ որպես պաշտամունք եւ հայ ոգու մարմնավորում արվեստի մեջ: Այդ պաշտամունքով «Մեհյան»-ի երրորդ համարը նվիրվում է Հայաստանյայց գրականությանը: Կար նաեւ «վաղվան» գրականության հարցը (Արտաշես Հարությունյան): Շեշտվում է «Հայաստանյայց գրականությունը եւ ոչ թե գավառի գրականությունը, քանի որ Հայաստանեն դուրսը գաղթավայրն է - գերազանցորեն «Վաղվան գրականությունեն է, որուն կ'սեւեռենք մեր հոգիները…»: Հայաստանյայց գրականության մեջ հիշում են Քուչակից մինչեւ Ռուբեն Զարդարյան, ում իդեալը ձեւակերպվում է այսպես. «Հայ հոգին արվեստի նորանոր ու բազմազան ձեւերու մեջեն…»: Կոստան Զարյանը հանդես է գալիս «Հայրենիքին սիրտը» բանաս-

Հայրենիք արծարծող թեման՝ հայ արվեստագետների ստեղծագործություններում

տեղծությամբ. Հիշե՛նք Խրիմյան Հայրիկը՝ իրա՛վ Հայրիկը, Աբովյանը՝ տոկուն իտեալամարդը, Սրվանձտյանցը՝ խելացի ճանապարհորդը, Ալիշանը՝ դեպի հայրենիք հառած աչքերը, եւ ուրիշներ, ուրիշներ… Հակոբ Քյուֆեճյանը «Հայաստանյայց գրականություն» հոդվածում հռչակում է «մեր գրականությունը մեկ է» կարգախոսը եւ կոչ անում այն «..ազատ տեսնել աշխարհագրական եւ ցեղագրական կարգ մը պայմաններեն, անգամ լեզվական, բարբառային տարբերություններից: Այս ասելով՝ ցեղի հոգին նա որոնում է «իր մեծ զավակներուն հոգիին մեջ… Հայաստանյայց գրականությունը հրավեր մըն է ցեղին զավակներուն»: Սա նշանակում է, որ տարաբաժանված հատվածյալ գրականությունը պետք է միաբանել իր մեծություններով: «Մենք կը դիմավորենք բոլոր մեր գրողներուն մեջ ազգայնամոլ իտեալը»: Հաջորդաբար մեհենականները ճշտում են իրենց դիրքորոշումը: Նախ, նրանք դեմ են մտավոր վարժապետականությանը, քանի որ այն ունի սոսկ «սահմանափակ մտային կարողություն եւ տափակ ձեւականություն» եւ ամենուրեք արվեստի թշնամի է, քանի որ դեմ է նորոգումին: Ուստի՝ «Անկցի վարժապետը գրականության եւ արվեստի մեջ» (թիվ 4): Կ. Զարյանը հանդես է գալիս «Հեթանոսությո՞ւն» հոդվածով եւ հայտարարում. «Մենք՝ մեհենականներս, հեթանոսներ չենք: <…>: Մեր ուղին տարբեր է»: Հակոբ Քյուֆեճյանը «Վահան Թեքեյան եւ իր «Հրաշալի հարությունը»» հոդվածում («Մեհյան», թիվ 6) բերում է «հայկական նոր քերթողականի» առաջարկը (էջ 69): «Ասպարե՛զ» («Մեհյան», թիվ 7) հոդվածում Կոստան Զարյանն ասում է, որ հանդեսը հալածանքի է ենթարկվում, քանի որ չի գովում միջակություններին: Այս դիրքերից 1913-ի «Գրական ասուլիսներ»-ն անհիրավացիորեն բնորոշում է «ամոթ» եւ «ամբոխային» բառերով: Սակայն շարունակության մեջ կարեւոր է նրա սթափության կոչը. «Գիտե՞ն արդյոք այն աղքատամիտ պարոնները, սրբապիղծները, որ կը քրտմնջեն մեզի դեմ, կզգա՞ն արդյոք, որ այս որպեիս մենք իբրեւ ազգ մտավոր եւ հոգեկան սնանկություն մը կը ներկայացնենք, որ արվեստը եւ գրականությունը միակ միջոցն են, որով կրնանք արտահայտել թաքնված ազգային հանճարը եւ մեր գոյության պատճառը հաստատել: Միջակություն, վախ, մտային մուրացկանություն, հոգեկան անգոյություն - ահա՛ տխուր պատկերը, որ մեզ կը շրջապատի»: Միջակությանց երկիրն է մեր երկիրը…» (էջ 99): «Ցեղին հանճարը արթնցնելու» էր կոչված Դանիել Վարուժանի (Հակոբ Սիրունու համագործակցությամբ) «Նավասարդ» գրական-գեղարվեստական տարեգիրքը. միակ հատորը լույս տեսավ 1914-ին Կ.Պոլսում: Նա, ի հակադրություն ապագայապաշտության (futurism) դարձավ անցյալապաշտության (passeism) քարոզիչը: «Գրականություն» բաժնում զետեղված են Վարուժանի «Նավասարդյան», Յարճանյանի «Նավասարդյան աղոթք առ դիցուհին Անահիտ», Գեղամ Տ. Կարապետյանի «Ինքնակյանց մեհյանները եւ Նավասարդի տոնը Տարոնո մեջ», ինչպես նաեւ արեւմտահայ ու արեւելահայ հեղինակների բազմաթիվ գործեր: Ապագայապաշտությանը Վարուժանը հակադրում էր անցյալապաշտ հեթանոսական շարժումը, որովհետեւ ըստ նրա, քրիստոնեությունը թուլացրել էր հայ ազգի դիմակայության ոգին, ուստի՝ դա՛ծ դեպի հին աստվածները, որտեղ մեր ցեղի ուժն էր ու կորովը: Սա գաղափարական շարժում էր՝ գրական-գեղագիտական որոշակի պահանջներով եւ դարձյալ ի նպաստ հայրենիքի վերածնության: 20-րդ դարասկիզբը հայ ժողովրդի կյանքում նշանավորվեց նոր ոճրագործություններով: Այնքան մեծ դժվարությամբ սերմանած ազատագրական գաղափարները, որոնք վերածվեցին ֆիդայական շարժման, դեմ առան թուրքական պետության ջարդարար մեքենայի անխափան գործունեությանը: Համիդյան ջարդերին հաջորդեցին երիտթուրքերի հրահրած նորանոր ջարդերն Ադանայում եւ երկրի բոլոր հայաշատ վայրերում: Ի վերջո, նյութվեց եւ իրականացվեց 1915 թվականի համազգային ողբերգությունը՝ ցեղասպանություն իր բոլոր օրենքներով: Հայ ժողովուրդը բնաջնջվեց իր պատմական հայրենիքում, կենդանի մնացածները բռնագաղթի ենթարկվեցին, մեռան անապատներում կամ դարձան հայրենազուրկ փախստականներ: Սա հայ ժողովրդի ամենածանր փորձության ժամն էր: Որտեղ ժողովուրդն էր, այնտեղ էլ գրականությունն էր: Ահա այս ծանր մղձավանջն էր, որ արտահայտվեց Գրիգոր Զոհրապի ֆրանսերեն գրած աշխատությունների եւ հրապարակագրական առանձին էջերի մեջ, Յարճանյանի «Դյուցազնորեն» (1902), «Հայորդիներ» (1905, 1906, 1908) բանաստեղծական շարքերում, «Հոգեվարքի եւ հույսի ջահեր» (1907), «Կարմիր լուրեր բարեկամես» (1909) գրքերում, տարագիր հայությանն ուղղված տասներկու կոչերում եւ «Սուրբ Մեսրոպ» (1912) պոեմում, Դանիել Վարուժանի «Ցեղին սիրտը» (1909), «Հեթանոս երգեր» (1912) ժողովածուների եւ «Զարդը» (1909) պոեմի մեջ, Ռուբեն Սեւակի «Կարմիր գիրք»-ում (1910) Ադանայի ջարդերին նվիրված քերթվածներում՝ «Հայաստան», «Զանգակներ, զանգակներ», «Ով իմ հայրենիք», «Զարդին խենթը», «Առջի հայեր», «Վերջի հայեր»: Յարճանյանը գրեց «Հեղափոխության Նարեկը», Վարուժանը դարձավ ցեղի ուժի ու վրեժի ձայնարկուն, Ավետիս Ահարոնյանը՝ զուլումի ու սարսափի երգիչ… Այսպես հայության, հայկականության գաղափարները խորապես համակել էին 20-րդ դարասկզբի հայ մտավորականությանը: 1915-ի եղեռնին ժողովրդի հետ մեկտեղ զոհ գնաց նրա մտավոր սերուցքը՝ հայոց դատի հետամուտ եւ հանուն ժողովրդի իր անձնական կյանքը մոռացած Գրիգոր Զոհրապը, հայոց ոգու դրոշակակիրներ Ատոմ Յարճանյանը (Սիամանթո), Դանիել Վարուժանը, Ռուբեն Սեւակը, Տիգրան Չյոկուրյանը, Երուխանը, Թլկատինցին, Ռուբեն Զարդարյանը, Արտաշես Հարությունյանը, Գեղամ Բարսեղյանը, Գեղամ Տեր-Կարապետյանը (Մշո Գեղամ), Մելքոն Կյուրճյանը (Հրանտ), նաեւ Սմբատ Բյուրատը, Տիրան Քելեկյանը, Խաչատուր Մալումյանը (Ակնունի), Կարապետ Փաշայանը, Գարեգին Խաժակը, Հովհաննես Գազանճյանը, Սարգիս Մինասյանը, Լեւոն Լարենցը, Տոնապետ Լյուլեճյանը, Միհրան Թապագյանը, ժագ Սայապալյանը (Փայլակ), Գագիկ Օզանյանը, Սենեքերիմ Գալիոնճյանը, Բարսեղ Շահպազը, Գրիգոր Եսայանը, Արիս Իսրայելյանը (Տիրունի), Արմեն Դուրյանը... ավելի ուշ՝ Տիրան Չրաքյանը (Ինտրա), աքսորի ճանապարհին խելագարված Կոմիտասը, ում հետ կատարվածը հայ ժողովրդի խելագարության պահն է խորհրդանշում… Այդ ցավից էլ Չարենցը խելագարվեց եւ, ծաղրածուի կերպարանք ստացած, մղկտաց. «Ես խեղ-

Հայրենիք արծարծող թեման՝ հայ արվեստագետների ստեղծագործություններում

կատակ եմ հիմա»… Նույն ցավի մեջ էին՝ Հովհաննես Թումանյանը, ով ստիպված հոգեհանգստի աղոթք ասաց, Վահան Տերյանը, ում համար հայրենիքը դարձավ յոթնապատիկ խոցված տիրամայր, մյուսները: Իսահակյանը դեպքերին հետեւում եւ արձագանքում էր եվրոպական հեռուներից: Մեր հարցադրման տեսակետից յուրաքանչյուր հեղինակը մի առանձին ուսումնասիրության նյութ է, բայց հնարավոր սեղմ ընդգրկումով պատկերն այս է: Անկախ բուն հայրենասիրական շեշտադրումից՝ հայրենասիրական բնույթ ունի Հովհաննես Թումանյանի ամբողջ ստեղծագործությունը: Հայրենասիրական երկեր են «Սասունցի Դավիթը» (1902), «Թմկաբերդի առումը» (1902) պոեմները, բայց նույնքան հայրենասիրական են «Անուշ»-ն (1890-1902) ու մյուս բնաշխարհիկ պոեմներ, որոնց մեջ հայոց կյանքն ու կենցաղն է: Ի տարբերություն գրական այն միտումի, որ ոգեկոչում է պատմական հիշատակներ, տալիս թանկ ու սրբազան վայրերի անուններ, Թումանյանը տեսավ եւ պատկերեց այդտեղ ապրող ժողովրդին, ցույց տվեց նրա կյանքն ու կենցաղը, ուրախությունն ու ողբերգությունը: Կերտեց իսկապես ազգային կերպարներ՝ օգտագործելով ոչ միայն բնաշխարհիկ նյութը, այլեւ ազգային բանահյուսությունը: Այս տեսակետից Թումանյանի հայրենապատումը մի ուրույն բույր ու երանգ ունի: 1916-ին Թումանյանը հրատարակեց «Հայրենիքիս հետ» բանաստեղծությունների ժողովածուն: Այս «հետ»-ի մեջ է նրա ամբողջ գաղտնիքը: Ժողովածուի մեջ են զետեղված «Հայրենիքիս հետ», «Հայոց վիշտը», «Հայոց լեռներում», «Հոգեհանգիստ» եւ այլ բանաստեղծություններ: Թումանյանի ճանապարհը գրականության ժողովրդականացման ճանապարհն էր, որով ընթացավ նաեւ Ավետիք Իսահակյանը: Նա եւս հայն ու հայոց հայրենիքը տեսավ միասնության մեջ, որտեղ եւ՛ բնաշխարհն է, եւ՛ պատմությունն է, եւ՛ մարդն է՛ իր ազգային ու սոցիալական հոգսերով: Հայրենասիրական քնարերգության նմուշներ են «Հայաստանին», «Հայրենիքիս», «Մեր պատմիչներն ու մեր գուսանները», «Ժողովրդի երգը»: Հայրենասիրական մոտիվն առկա է նաեւ նրա սոցիալական բոլոր երկերում, «Գարիբալդիականը», «Նրանք դրոշակ ունեն» եւ մի շարք այլ պատմվածքներում, «Ուստա Կարո» վեպի տարբերակներում: Իսահակյանը յուրովի մշակեց ազգային դյուցազներգության վերջին ճյուղը՝ «Սասմա Մհեր»-ը (1919-1937): Ժողովուրդը Մհերին պահ էր տվել ժամանակներին, Իսահակյանը նրան դուրս բերեց ստալինյան հալածանքների ամենաարյունոտ օրերին, թե, իբր, աշխարհում հաստատվել է ռամիկի օրենք ու իրավունք, եւ հողը դիմանում է նրան: Բայց իրականում այդպես չէր, որովհետեւ ռամիկը գնդակահարված էր կամ աքսորված, իսկ նրա իրավունքը՝ բռնադատված: Թե ինչո՞ւ Իսահակյանը դիմեց այդ քայլին, ի՞նչ էր ուզում դրանով ասել՝ ինքնին պարզ է, քանի որ ներբողեց ինչպես Ստալինի 60, այնպես եւ 70-ամյակները՝ վերջինում շահարկելով ժողովրդի անունը: 1914-ին Տերյանը հանդես եկավ երկու կարեւոր ելույթներով՝ «Հայ գրականության գալիք օրը» եւ «Հոգեւոր Հայաստան»: Հայրենիքին ուղղված մի նոր հայացք բերեց Վահան Տերյանը: Խորհրդապաշտության գեղագիտությունը չէր, որ այդ բնույթի բանաստեղծություններում ուղեկցում էր նրան, այլ հայրենիքի ցավից նրան հասնող ողբի թառանչը: Տերյանը իսկապես ապրեց ժողովրդին պատուհասած աղետն ու ոճիրը: Դեռեւս 1914-ին «Հայ գրականության գալիք օրը» զեկուցման մեջ նա ասում էր. «Հայ գրականության մեջ իշխող գաղափարը, նրա հիմնական առաջնորդիչ ուժը ազգային գոյության, ազգային անկախության գաղափարն է: Սակայն այդ ընդհանուր եւ իշխող գաղափարն ունեցել է մեզանում իր բնորոշ ու առանձնահատուկ գույնը, որ գրեթե բոլորովին անհասկանալի է օտար մարդուն թե իր էությամբ, թե արտահայտության ձեւով: Հայրենիքի երգը հնչել է մեզանում առավել կամ պակաս ուժեղ եղիշեից ու Խորենացուց սկսած մինչեւ մեր օրերը: Այդ գաղափարը կարմիր թելի նման անցնում է մեր գրականության միջով սկզբից մինչեւ մեր օրերը, դարձել է մի անբաժանելի հատկանիշ, գունավորել է մեր ինտելիգենցիայի միտքն ու երեւակայությունը դարեր շարունակ, անշուշտ կոնկրետ ձեւի որոշ շեղումներով ու տարբեր գույներով, սակայն էությամբ միշտ նույնն է մնացել - մի ֆանտոմ է եղել, մի զորություն, որը մղել է դեպի հերոսական մարտիրոսություն, դեպի աներեւակայելի լարումն հոգեկան ու նյութավոր էներգիայի, մի անհասանելի, մի միշտ բաղձալի ցավատանջ իղձ է դարձել այդ անկախ հայրենիքի, այդ ազգային գոյության գաղափարը» (III, 55-56): Ըստ Տերյանի՝ «…աչքի առաջ….[էր] այդ հիրավի մշտական լարումը, որ գոյություն է ունեցել մեր գրականության մեջ ազգային հարցի եւ հայրենիքի տառապանքի վերաբերմամբ» (III, 56)»: Ահա, այն բանաստեղծը, ով հայ գրականությունը կարծես թե ուզում էր ազատագրել հայրենանվիրումի հարաճուն լարվածությունից, ինքն ընդունեց հայրենիքի նոր լարվածությունից եկող բարձր լարման հոսանքները, ընդունեց իբրեւ մարտահրավեր եւ ստեղծեց իր «Երկիր Նաիրի» շարքը: Դա հայրենասիրական քնարերգության միանգամայն նոր որակ էր: Ժողովուրդը, պատմությունը, փորձության պահը եւ բանաստեղծի մեջ բեկված հայոց ճակատագիրն այստեղ դարձել են մեկ միասնական հայացք՝ ուղղված աչքի առաջ խոշտանգվող ու հեռացող հայրենիքին: Տերյանն էր, որ մերժեց ռուսերեն գրելու Գորկու առաջարկությունը, այդ առաջարկությունը քննադատեց նամակներից մեկում եւ հրապարակավ հայտարարեց. «Չեմ դավաճանի իմ Նվարդին, // Որքան էլ դյութես, օ, Շամիրամ…»: Ինչպես Թումանյանը, այնպես եւ Տերյանը այս անլուր տառապանքի ժամին ամեն կերպ փորձում են պահել լավատեսությունը, չկորցնել վերհառնումի հույսը, որովհետեւ, հակառակ դեպքում, ամեն ինչ պետք էր վերջնականորեն կորած համարել: Եկավ Եղիշե Չարենցը՝ որպես մի նոր սերունդի ձայն, բայց գրականություն մտավ նույն ցավով ու մորմոքով: Գրեց «Հայրենիքում» բանաստեղծությունը որպես նվիրումի երգ եւ հյուսեց «Կապուտաչյա հայրենիք» (1915) պոեմի կապույտ երազը, ինչը մեկ տարի անց դարձավ «Դանթեական առասպել» (1916): Կամավոր մեկնեց հայոց բանակ, տեսավ Մեռած Քաղաքի՝ Վանի ողբերգությունը եւ հայացքն ուղղեց դանթեական դժոխքին: Գրեց «Վահագն» (1916) քառատուն բանաստեղծությունը եւ զետեղեց պոեմների մեջ, որովհետեւ մի ամբողջ պոեմի ծանրություն էր կրում: Գրեց եւ զարհուրելի ճշգրտությամբ արձանագրեց մի ամբողջ ժողովրդի հոգեվարքի պահը. *Եվ երբ քարշ տվին դիակդ արնաքամ, Որ նետեն քաղցած ոհմակներին կեր – Մեր*

Հայրենիք արծարծող թեման՝ հայ արվեստագետների ստեղծագործություններում

կյանքի հիմերն անդունդը ընկան եվ արնոտ միգում ճարճատում են դեռ… Այս նույն Չարենցը կտրուկ շրջադարձով փորձեց կասեցնել այդ հոգեվարքը եւ փրկության ուղիներ որոնել՝ աչքը հառելով ռուսական հեղափոխությանը: Այդ հույսով գրեց «Ինչպես երկիրս անսփոփ….» բանաստեղծությունը, «Սոմա» (1918) եւ «Ամբոխները խելագարված» (1919) պոեմները, «Ողջակիզվող կրակ» (1918–1920) շարքը, «Նաիրի երկրից», «Դեպի ապագան», «Բրոնզե թեւերը կարմիր գալիքի» (1920) ռադիոպոեմները, «Ամենապոեմ»-ը (1920): Ոգեւորությամբ հայրենիքին հարություն տալու նույն այդ պահին նորից մոտեցավ հոգեվարքի մորմոքը, որ մարմնավորվեց որպես «Մահվան տեսիլ» (1920), բայց վերստին իր մեջ ուժ գտավ եւ նորից ոգի ներշնչեց մեռնող մարմնին եւ գրեց «Տաղարան» (1920-1921) շարքը՝ հատկապես այն եզրափակող «Ես իմ անուշ Հայաստանի արեւահամ բառն եմ սիրում» բանաստեղծությամբ: Գրական այս ժամանակի մի ծայրին Հովհան Վանանդեցու «Առ Հայաստան» բանաստեղծության «Հայաստա՛ն, երկի՛ր դրախտավայր, // Դու մարդկայնո ցեղիս օրրան…» սկիզբն է, մյուս ծայրին Չարենցի հիշյալ բանաստեղծությունը՝ հատկապես վերջին տան իմաստաբանությամբ. *Իմ կարոտած սրտի համար ո՛չ մի ուրիշ հեքիաթ չկա. Նարեկացու, Քուչակի պես լուսապսակ ճակատ չկա. Աշխա՛րհ անցիր, Արարատի նման ճերմակ գագաթ չկա. Ինչպես անհաս փառքի ճամփա՝ ես իմ Մասիս սարն եմ սիրում:*

1915-ի մահասփյուռ ողբերգությունից եւ Առաջին համաշխարհային պատերազմի ավարտից հետո ավերված, կործանված, խաթարված, հոգեբանորեն խախտված ժողովրդին սթափեցնող առաջին ձայներից մեկը հնչեցրեց Իզմիրում լույս տեսնող «Ատրուշան» կիսամսյա հանդեսը: Առաջին համարի խմբագրականը վերնագրված է «Վաղորդայնին». «Կու գա՛նք չորս տարիներու մահասփյուռ թմբիրեն վերջ, զենքի եւ թնդանոթի ժխորեն հոգնած արվեստասեր մտքերու իբր հանգստավայր հիմնել «Ատրուշան»-ը: «Ատրուշան»-ը գրական զարթոնքի աղաղակն է, որ կը բարձրացն»: <...> հաստատորեն կը հավատանք մեր խաչելության վաղորդայնին, նույնպես գրական հարության մը իրականության» («Ատրուշան», 1919, թիվ 1,1 մարտ): Այս շունչը շարունակվում է հանդեսի խմբագիրներից Անտոն Ղազելի «Գրական սթափեցում» կոչում. «…ազգ մը կոտորելով, բնաջնջելով, բոցակիզելով կարելի չէ վերացնել աշխարհի վրայեն, երբ նա դարերու հնություն ունեցող գրականություն մը ունի ապրելու սահմանած»: Այսինքն՝ բանասիրական ազգ ենք եւ տոկալով պիտի պահպանվենք: Եվ դա այն դեպքում, երբ Թուրքիայում զոհերին «սգալն իսկ վրեժի եւ ատելության շարժում մը կը նկատվեր»: Եվ հուսահատ կոչը. «Սթափվեցե՛ք, ո՞վ հայ գրականության ճողոպրած փշրանքներ, սթափվեցե՛ք… ժամանակը սկսած է գրական շարժումը սկսելու» (նույն տեղը): Մկրտիչ Պարսամյանը «Հեղաշրջումը եւ նորերը» գրության մեջ գնահատում է քառամյա լռությունից հետո հայ նորահաս սերունդի գրական գործունեությունը՝ հենց թեկուզ սգո ձայնը: Սգո ձայնը հնչում է Էդվարդ Գոլանճյանի «Տեր Զորի սարսափներեն» շարքում: «Երկու խարույկներ»-ում խարույկներ են՝ … հայ մանուկներից: Բանաստեղծություններով հանդես են եկել նաեւ նույն Անտոն Ղազելը (Կազել), Արամ Վտարանդին, Կոստան Զարյանը (մանրանկարներ), Վահրամ Թաթուլը, Հերմինե Հովյանը, Մերուժան Պարսամյանը: Ընդհանուր թշվառության մեջ վերջինս «Ուժին փառքի» երազանքն ուներ. «Ուժ, դուն Աստված ամենազոր, ուժ, փառք քեզ»: Այս ընթացքում գրվում են գրքեր, որոնցից Հովհաննես Հակոբյանի «Գերման դավը Կովկասի մեջ (համագերմանականությունը եւ Վրաստան)» (Թիֆլիս, 1917) Մկրտիչ Պարսամյանը հարկ է համարում գրախոսել «Ատրուշան»-ի էջերում (1919, թիվ 4-5, 20 ապրիլ): Առաջին համաշխարհայինի ավարտից հետո նույնքան լարված, ծանր ու պատերազմական ժամանակաշրջան էր հայ ժողովրդի կյանքում: Միակ լուսավոր նվաճումն ավերակների վրա հռչակված Հայոց Առաջին Հանրապետությունն էր՝ որպես ինքնիշխան ու անկախ երկիր: Թե՛ «Մեհյան»-ի գրական քաղաքականությամբ, թե՛ այլեւայլ հոդվածներով ու գեղարվեստական երկերով Կոստան Զարյանը դարձավ հայկականության ուսմունքի հիմնադիրը: Այս հայկականություն-արմենիզմը չպետք է շփոթել ռամկավարության վերափոխված արմենականության հետ: Հայ ոգու գյուտը Կ. Զարյանի համար արվեստի նախապայման էր: Այդ մտայնությունը նա շարունակեց Կ. Պոլսի «Բարձրավանք»-ի էջերում՝ «Առաջադրություններ» հանգանակում կոչ անելով «Ազնվացնել հայ կյանքը խորհրդով եւ արվեստով, հզորացնել եւ հիմնավորել հայ խորհուրդը եւ արվեստը կյանքով» (1922, թիվ 1): Հանուն հայրենիքի նա հայության հոգնած ուժերը միաբանելու պահանջ էր դնում: Նպատակը «հայ խորքին, հայ ուժի» հայտնաբերումն էր՝ դուրս նմանակումից, ազդեցությունից եւ խորապես ինքնուրույն: Ազգային կյանքի շրջանակները դեռեւս պիտի ընդլայնվեին տարբեր շարունակություններով: Արեւմտահայ հանճարը զոհ գնաց ցեղասպանությանը: Արեւելյան արժեքները տարբեր էին: Թումանյանով ամփոփվում էր Աբովյանի գրական դարաշրջանը: Ազդեցության շրջանակներ ուներ միայն Վահան Տերյանը: Ահա եկավ ետտերյանական փուլը: Շարունակողներից եւ հայ պոեզիան նոր աշխարհ դուրս բերողներից գլխավոր դեմքը Եղիշե Չարենցն էր, բայց Հակոբ Օշականը շարունակության երկու ճանապարհ է նշում. «Կոստան Զարյան եւ Եղիշե Չարենց տարբեր ճամփաներով, բայց նույն նպատակներով հառաջապահներն են այդ սերունդին» (Հ. Օշական, «Եղիշե Չարենց», «Հայրենիք», 1924, թիվ 2, էջ 56): Եղեռնի ու Առաջին համաշխարհային պատերազմի արձագանքները թափանցեցին Օտյանի («Անիծյալ տարիներ», 1914-1919-ի անձնական հիշատակարան), Օշականի, Ռենի, Դեմիրճյանի, Զորյանի գեղարվեստական արձակի մեջ: «Մնացորդաց» վեպի առաջին երեք հատորներում Հակոբ Օշականը պատկերեց նախաեղեռնյան իրականությունը, մանրամասների մեջ վերլուծեց հայ-թուրք հարաբերությունները, իսկ «Հարյուր մեկ տարվան» եռագրության մեջ արդեն թուրքի կենսաբանությունն է: Հայոց նոր պետականության վերականգնման ճիգը նաեւ փորձ էր ժողովրդին ուղղորդելու ետեղեռնյան հարության: Այս տեսակետից հիշարժան է հայոց պետականության 1918-1921 թվականները պատկերող Կոստան Զարյանի «Նավը լեռան վրա» (1943) վեպը: Հայկական ոգու հարություն էր քարոզում 1922-ից Վիեննայում լույս տեսնող «Արեգ» ամսագիրը, 1924-ից՝ երկշաբաթաթերթ եւ նորից

Հայրենիք արծարծող թեման՝ հայ արվեստագետների ստեղծագործություններում

ամսագիր (խմբագիր՝ Սիմոն Հակոբյան): Այն ժամանակ, երբ Խորհրդային Հայաստանում բոլշեւիկները թքում էին անցյալի հիշատակների վրա, սույն պարբերականի խմբագրականում առաջարկվում է. «…զարգացնել կատարելագործել մեր անցած երախտավոր հեղինակներին: Խաչատուր Աբովյանը, Ռաֆֆին, Միքայել Նալբանդյանը, Ղազարոս Աղայանը, Խրիմյանը, Դուրյանը, Արփիար Արփիարյանը պահանջում են, որ սրբագրվեն, նորանան եւ ժամանակի անդիմադրելի պահանջի համեմատ կերպարանափոխվեն» («Արեգ», 1922, Վիեննա, թիվ 1): Պահանջում է նաեւ գրական երկի ամբողջական, միասնական քննություն: Սա՛ է «նոր ուղին» եւ «Գրական այժմյան սերունդը պետք է հասկանա այս ակնհայտ ճշմարտությունը»: Հին իդեալները պետք է նորոգվեն՝ սա՛ էր հիմնական ասելիքը: Այս պարբերականի գործուն թղթակիցը Ավետիք Իսահակյանն էր: Սիմոն Հակոբյանը տպագրում է «Վահան Տերյան» (1922, թիվ 7,19, առանձին գրքով՝ 1923, Բեռլին) վերլուծականը՝ արծարծելով նաեւ ազգային կյանքի այլեւայլ խնդիրներ: Բուն կենդանի գրական միջավայրից կտրված՝ «Արեգ»-ի խմբագիր Սիմոն Հակոբյանը գրախոսում է Վշտունու «Մուրճ»-ի 1923-ի համարներից մեկը եւ, մեղմորեն աչք փակելով աղաղակող ետամնացության առջեւ, գրում. «Նրա մեջ գոյանում է հեղափոխության պատկերը: <...>: Այն, ինչ որ խորապես հետաքրքրական է եւ գնահատելի այսօր, նոր բանաստեղծության ոգին է եւ նոր ժամանակի ուժգին տրամադրությունը» (1923, թիվ 7): 1923 թ. 9-րդ համարից Ս. Հակոբյանը տպագրում է Չարենցին նվիրված ուսումնասիրություն, ինչը 1924-ին պետք է լույս տեսներ առանձին գրքով: Մեզ հետաքրքրող տեսանկյունից կան գրողի թե՛ հեղափոխական, թե՛ ազգային գործերի ուշագրավ դիտարկումներ՝ «Դանթեական դժոխքի պոեզիան <..> իր հեգնական արտաքինի տակ խորապես ողբերգական է» (1924, թիվ 4, 15 փետրվար): Ավելանում է «Հեղափոխության դյուցազներգությունը» (1924, թիվ 9, 1 մայիս): Հայ մշակույթին եւ գրականությանը ծառայելու իր պատրաստակամությունն է հայտնում Փարիզի «Մենք» խմբակցությունը. «…շաղախ հանդիսանալ չորս ափերով ցրված երիտասարդ գրողներու միջեւ եւ այդպիսով դյուրացնել հայ նորագույն գրականության ազատ զարգացումն ու ծաղկումը: Փնտրելով յուրաքանչյուրիս մոտ նո՛ւյն ժողովրդի զավակներուն հատուկ հասարակաց գծեր, ներշնչումներ ու մտահոգություններ, ճամբա հարթել, որոնել եւ կերպարանք տալ ժամանակի ընթացքին, ընդհանուր հանգանակ մը, որ ազատություն տալով յուրաքանչյուրին անհատականության՝ համապատասխանե հայ մշակույթի պահանջներուն» («Մենք», 1931, Ա., գրական հանդես, Փարիզ), - սա Փարիզում միավորված երիտասարդ գրողների «Մենք» խմբակցության հանգանակի վերջին մասն է: Իսկ հանգանակն ստորագրել են 15 գրող՝ Նշան Պեշիկթաշլյան, Ղեւոնդ Մելոյան, Հրաչ Սարգիսյան, Ռաֆայել Զարդարյան, Հարություն Ֆրենկյան, Ոստանիկ, Գ. Գեղարքունի, Նիկողոս Սարաֆյան, Բյուզանդ Թոփալյան, Փայլակ Միքայելյան, Արշամ Տատրյան, Զարեհ Որբունի, Շահան Շահնուր, Վազգեն Շուշանյան, Շավարշ Նարդունի: Նրանք եւս հայի հոգու ազնվացման կոչեր են անում. «Մենք պետք ունինք ուժի, հավատքի, նվիրումի եւ անձնազոհության բոլոր այն զգացումներուն, որոնք խաթարվեցան: Եվ անոնց երթալու համար միայն սա ճամփան կը տեսնեմ ես, ուրիշ ամեն ճամբաներե առաջ - հոգիի ազնվացումը, հայ հոգիին ազնվացումը» (Հ. Ֆրենկյան, «Վեպի մը հերոսին», նույն տեղը, էջ 6): Գրականություն-ժողովուրդ կապի ճշտման առումով ուշագրավ է Վազգեն Շուշանյանի «Կը պարսավեմ բառերը…» մտորումը. «Խրած՝ մինչեւ մեր վիզը, վերացական գաղափարներու այս մոխրակույտին, այս հեղձուցիչ դեզին մեջ, անընդհատ կը պատրաստենք… գունատ գեղեցկությանց հաղթանակը՝ բացարձակ բառերու դեմ: <…>: Գթացե՛ք, գթացե՛ք մեր վրա, ամենակարող բառե՛ր, որ օգտվելով մեր անեզր սնափառութենե՝ հաստատած եք ձեր անարգ ու դավաճան իշխանությունը: Ազատեցե՛ք մեզ ձեր սեւ մոգութենեն: Ահա մոռցած ենք բոլոր զգայուն բառերու քաղցր շնորհը: Մեր զգայարանքները հազիվ թե անմիջական կապ ունին հողին, ցորենի արտերուն, ջրի երգերուն, արքնացող արեւածագին հետ: <…>: Բառերով կերակրեցինք հայոց այս սակավապետ ու հառաջապահ ժողովուրդը, ամբողջ տարիներ: Ու երբ ան սկսավ զարթնուլ՝ ուրիշ բառերով օրորեցինք զայն: Բառերով երկիր կառուցանեցինք ու այդ երկիրը ընդարձակ էր, կը տարածվեր ափեափ: Ու երբ այդ երազը փլավ, կրկին ձեզի ապաստանեցանք մեր անկարելի արդարացումին համար: Ու ո՛չ ոք կրցավ խենթ հրճվանքով մը պատռել մեր դիմակները: Օ՜ բառեր… ազատեցեք մեզ ձեզմե - գթացե՛ք, գթացե՛ք մեր գրադարանային աղքատությունը» (նույն տեղը, էջ 24-25): Սա ա՛յն է, ինչ Շահնուրն արդեն ձեւակերպել էր «Նահանջը առանց երգի» (1929) վեպում: Ասես նույն տեղից շարունակում է Շավարշ Նարդունին. «Մենք հողե զրկված երիտասարդներ, կ'ուզենք արվեստի հողին վրա բարձրացնել մեր ժողովուրդը» («-Մենք… -Մենք… -Մենք», նույն տեղը, էջ 40): Նիկողոս Սարաֆյանը նույն եռաշար «Մենք» խորագրի ներքո շարունակում է. «Պե՛տք է միջամտել, ջղուտ բազուկով մը, ազգային մշակույթին վերաբերող բոլոր հարցերուն, Պե՛տք է ստեղծել հոգեկան հայրենիք մը…» (նույն տեղը, էջ 41): Սա արդեն Տերյանի «Հոգեւոր Հայաստան»-ի արձագանքն է: Նիկողոս Սարաֆյանը «Մենք»-ի տղաներին կոչ է անում գրականությունն ազատագրել կուսակցական ու կրոնական մտայնություններից՝ ձայնակցելով Կոստան Զարյանին, ով կոչ էր անում գրականությունը հեռու պահել քաղաքականությունից ու լրագրությունից: Եվ սա այն դեպքում, երբ «Մենք»-ականները բացասաբար էին տրամադրված նրա հանդեպ: «Վ. Շ.» ստորագրությամբ, ով Վազգեն Շուշանյանն է, գրախոսված է «Տատրագոմի հարսը», եւ ի՞նչ. «Մենք կը մերժենք այս մարդուն գրադարանային դյուցազներգությունը, որ մտքի ընդարձակ գիջություն մըն է պարզապես: <...>: Օտար մըն է, որ կեցած մեր ցավի ընդարձակ տարածության դիմաց՝ կ'ապավինի իր բառերուն գեղեցկության մեզ խաբելու համար: Ու այդ բառերը սուտ կը խոսին» (նույն տեղը, էջ 49-50): Նիկողոս Սարաֆյանը «Մենք» վերնագրված գրության մեջ շարունակում է Կոստան Զարյանի քննադատությունը եւ փորձում ճշտել մեր ազգային նկարագիրը. «Գրել մեր մեջ մասնավորաբար կը նշանակե օձիքը ուրիշներու ձեռքը տալ: Ատկե՝ մեր կեղծ ու աճպարար կյանքը, մեր մեծամոլիկ եւ ունայնամիտ գրականությունը: <...>: Մեհյանի օրերեն սկսյալ «խենթու-

Հայրենիք արծարծող թեման՝ հայ արվեստագետների ստեղծագործություններում

թյունը» կը շրջի մեր արյան մեջ: Բայց զայն քարոզողները իրենք իսկ չկրցան գոհար մը բերել հոգիին անգիտակից խորերեն: <...>: Քսան դար է մեր երկիրը չկրցավ գիտենալ թե որո՛ւ մաս կկազմեր՝ արեւելքի՞ն թե՞ արեւմուտքին («Մենք», 1931, Բ, էջ 68-70): Հայրենիք չունեցող մարդու հուսահատություն է, հաղթանակի ուրախություն չճաշակած մտավորականի պարտվածություն, որ արդեն իսկ ազգային դատապարտվածություն էր: Մինչ խորհրդային վարչակարգը լափում էր իր առաջադեմ զավակներին եւ Հայաստանի ղեկավարությունը հանցակից էր ազգի բնաջնջման հերթական ծրագրին՝ Նիկոլ Աղբալյանը գրում է «Մտածումներ ազգի եւ դավանանքի մասին» հոդվածը (Բեյրութ, 1938, «Նորք», 1989, թիվ 12, էջ 3-7): Մեծ հայը իր չկայացած պետության ծանր ապրումներով ազգի պահպանման գաղափարական ուղիներ էր որոնում: Ըստ այդմ՝ 1. «Օտարին հակադրվելով՝ մենք ամեն օր զգում ենք, թե հայ ենք, այսինքն ուրույն ժողովուրդ, քան օտարներ, բայց մեր հավաքական ճիգով միայն կարող ենք բովանդակություն տալ «Հայ» գաղափարին»: 2. Բարեկեցության ձգտումը տանում է դեպի ապազգայնացում՝ փրկվում է մարդը, կործանվում է տեսակը: Այդ ճանապարհով՝ «Անհատական տեսակետով բոլոր խնդիրները կը լուծվին լավապես, բայց ազգային տեսակետով վատթար հետեւանքների կհասնենք»: 3. «Ազգային գիտակցության պայծառացումը զանգվածների մեջ միակ միջոցն է ազգի պահպանության մինչեւ այն օրը, երբ բավական ընդարձակ հայրենիք ունենանք, որ կարենա իր տարագիր զավակներին ընդունել, եւ այդ հայրենիքը բավարար պայմաններ ունենա՝ իր զավակներին մարդավայել կյանքով ապրեցնելու»: Այս ուղղությամբ գործելու ազդակներ է համարում եկեղեցին, «լեզուն, որ ասել է՝ դպրոց», «հատուկ բարք ու սովորույթ եւ խորշանք օտար կենսաձեւերից»: 4. Դավանանքն անհատական խղճի գործ է, մինչդեռ ազգային-քաղաքական գիտակցությունը հանրային պարտադրանք է, որից խուսափողը հայրենի ցանկը քանդող պիտի նկատվի՝ բոլոր դավանության պատկանող հայերի աչքին: Հարանվանական գիտակցությունից վեր պիտի տիրաբար իշխե ընդհանուր եւ համազգային մի ուրիշ գիտակցություն՝ ազգային-քաղաքական: <..>: Եկեղեցական տեսակետով, եթե ոմանք անհիշխանական են, ոմանք տարիշխանական, ազգային տեսակետով ամենքը պետք է դառնան հայիշխանական»: <...>: Պետք է սովորեցնել՝ խստորեն տարբերել ազգությունը դավանանքից, հասկացնելով՝ թե ազգությունը մեկ է, մինչդեռ դավանանքները կարող են մի քանի լինել, որ կրոնը մարդու կապն է Աստծու հետ, իսկ ազգությունը մարդու կապն է իր հայրենիքի եւ մշակույթի հետ…»: Պատերազմի տարիների շրջանակի մեջ դիտենք նաեւ Անդրանիկ Օշականի «Թուղթ առ Երեւան» (1945) պոեմը: Գրության շարժառիթը Գեւորգ Աբովի «Մենք չենք մոռացել» (1944) բանաստեղծությունն էր՝ ուղղված դաշնակցության դեմ (Կարմիր մարտիկի գրադարան, թիվ 7, Երեւան, Հայպետհրատ, 1944).

Դո՛ւք, դաշնակ շներ. Երկրից առհավետ՝ <…>Մենք չե՛նք մոռացել

Սեւ ֆաշիզմի հետ Որ պիտի ջնջենք
Նաեւ հետքն իսկ ձեր… - Շնե՞ր են արդյոք ազգի հերոսները,- հարցնում է Օշականը եւ ներկայացնում նրանց հայրենասիրական գործունեությունը՝ պատմական իրադարձություններ, ազգային-ազատագրական կռիվներ, գործիչներ, Առաջին Հանրապետություն, սփյուռք եւ հայության ուղենիշ՝ Արարատ. Օ՜, շո՞ւն էր, շո՞ւն էր Սերոբը պարթեւ, Գեւորգը առյուծ, <...> Շո՞ւն էր Զավարյանն՝ անբի՛ծ, ինչպես լույս, Թե մեր աշխարհում մարդացած Հիսուս: <...> Քերթողները վես,– Փոթորկամռունչ խոլ Սիամանթոն, Եվ քաղցրաթախիծ Վարուժանը հեզ… Այսպես նա Աբովին հիշեցնում է հայոց պատմության էջերը, Հոկտեմբերյան հեղաշրջումից հետո լքված հայկական ճակատը եւ այդ ծանր պահին ազգի պատասխանատվությունը վերցրած դաշնակցական գործիչներին, Սարդարապատն ու Բաշ Ապարանը. Հիշո՞ւմ ես ապա. Արյունից ծորած երիզ մի կարմիր, Երկնքից պոկված կտոր մի կապույտ, Հասուն հասկերի շող նարնջագույն, Եվ վեց դարերի խավարի վրա Դրոշ եռագույն… <…> Դու հողի՛ն լսիր, Եվ նա քեզ կասի, թե չկա խտիր Իր զավակների միջեւ տարագիր, Թե չկա՞ն շներ…

Հայրենիք արծարծող թեման՝ հայ արվեստագետների ստեղծագործություններում

ՓԱՐԱՎՈՆ ՄԻՐԶՈՅԱՆ.
«Եթե կոչման մասին մտածես, արվեստ ստեղծել չես կարող»

«Իմ նկարները իմ հայրենիքի գովքն են: Այն, ինչ ստեղծել եմ, ինձ հոգեհարազատ է, որովհետեւ արվեստն առանց հոգու չի ստեղծվում», – իր աշխատանքների մասին ասել է ՀՀ ժողովրդական նկարիչ Փարավոն Միրզոյանը: Նրա վրձնին են պատկանում «Հայաստան», «Սյունիք», «Ծովից ծով Հայաստան» եւ «Արցախ աշխարհ» պաննոները՝ յուղաներկով արված մեծ կտավները, որոնք ներկայացնում են հայրենիքի հավաքական նկարագիրը: «Արցախ» պաննոն իր ծննդյան օրը՝ դեկտեմբերի 1-ին, նվիրել է Ազգային պատկերասրահին: Ընդհանրապես գեղանկարչի կտավները շնչում են հայկականությամբ: Նեւայի ափերին է կրթություն ստացել (ավարտել է Սանկտ Պետերբուրգի Իլյա Ռեպինի անվան գեղարվեստի ակադեմիան), բայց ինչպես նշել է արվեստաբաններից մեկը, Պետերբուրգն իր ճարտարապետությամբ չխանգարեց Միրզոյանին՝ ձեւավորվելու որպես հայ նկարիչ:

Մայրաքաղաքում՝ նրա արվեստանոցում՝ Հայոց անկախ պետականության 25-րդ տարեդարձին նվիրված թերթի հատուկ թողարկման համար նյութ պատրաստելու առիթով հանդիպելով՝ առաջին հարցս այն էր, թե մեր ժամանակների կերպարվեստում հայրենիքի թեման ինչպես է արտացոլվել:

– Խորհրդային շրջանում արտացոլվում էր, նույնը չի կարելի ասել վերջին քսանհինգ տարվա մասին, – պատասխանեց, ապա շարունակեց, – բնական ստեղծելով՝ հայրենիքի թեման չես ներկայացնի: Գեղանկարում պիտի խոսք լինի, խոհ լինի: Միշտ կրկնել եմ միտքը, որ հայ կերպարվեստը չի նշանակում գորգ, կարպետ, նուռ կամ խաղող նկարել: Վերջերս Բեյրութում բացվել էր իմ անհատական ցուցահանդեսը: Ելույթի ժամանակ այն միտքը հայտնեցի, որ իսկական մեծ արվեստ Հայաստանի հողի ու ջրի վրա է ստեղծվում: Չի կարող մարդ ապրի Չեխիայում, Ֆրանսիայում, Ամերիկայում, այլուր եւ ստեղծի հայկական արվեստ: Կարող է նրա մեջ, նրա արյան շրջանառության հետ կապված լինի մի այնպիսի աշխարհազգացողության, որ բնորոշ է հայ մարդուն: Օրինակ, Վիլյամ Սարոյանի, Արշիլ Գորկու մեջ կա ապրելու այդ զգացողությունը: Բայց չես կարող ասել, որ դա այն հայկականն է, որ կա ու պիտի լինի: Արամ Խաչատրյանը շփվել է Հայաստանի հետ, ապրել է Հայաստանում, քայլել է հայ մարդու հետ, բնականաբար, նրա երաժշտության մեջ հայկականությունն ավելի շատ է:



Խնդրեցինք արվեստագետին տալ գեղանկարիչների անուններ, որոնց ստեղծագործություններում հայրենիքի թեման արտացոլվել է, ովքեր վերջին քսանհինգ տարում մնայուն արժեքներ են ստեղծել: Դժվարացավ անուններ տալ՝ նշելով, որ կան շնորհալի նկարիչներ, բայց մեզ հետաքրքրող ոլորտի առնչությամբ չի կարող անուններ տալ: Իսկ ահա Խորհրդային Միության օրոք, ըստ նրա, նման տասնյակ անուններ կային՝ Մարտիրոս Սարյան, Երվանդ Քոչար, Հովհաննես Զարդարյան, Արա Բեքարյան, Սարգիս Մուրադյան, Մինաս Ավետիսյան, Կալենց եւ ուրիշներ: «Հարցն այն չէ, որ նրանք սոցիալիստական հասարակարգի գովք էին անում, նրանք իրոք վարպետներ էին, թարմ խոսք էին ասում մեր կերպարվեստում, հպարտանալ կարելի է նրանցով»:

Այժմ գեղանկարչության ոլորտում, ըստ մեր զրուցակցի, բարձիթողի վիճակ է, ուստի պետությունը մշակույթի զարգացումը պետք է վերցնի իր ձեռքը: «Իսկ դրանից ստեղծագործական ազատությունը չի՞ տուժի», – մեր հարցմանը հակադարձեց. «Ինչ էլ լինի, տաղանդավոր մարդը ստեղծագործում է, ինձ մի անգամ հարցրին՝ ավարտել ես Լենինգրադի գեղարվեստի ակադեմիան, ի՞նչ է տվել քեզ: Պատասխանեցի՝ վարպետություն: Դա է ազատությունը եւ ոչ թե այն, որ անգրագետ լինես ու ազատ լինես: Այդ էլ ասեմ, որ մեկը կարող է ակադեմիա ավարտել եւ գեղանկարիչ չդառնալ: Գեղանկարիչ լինելն այլ բան է, դա Աստծո տված շնորհ է, նաեւ կրթություն է, աշխատասիրություն է, այդ երեքն ուս ուսի տված պիտի քայլեն, այդ երեքի համագործակցությամբ միայն կարելի է ստեղծել մեծ, մնայուն արվեստ»:

> *Ո՞ր խոշոր գեղանկարչից է ազդեցություն կրել: Պատասխանում է, որ ուսումնասիրել է համաշխարհային մեծ վարպետների գործերը եւ հանգել այն եզրակացության, որ մեծեր շատ կան, նկարիչը պիտի իրեն գտնի: Եթե տարվի մեկով, կկորցնի իր «ես»: «Ես» է արվեստի ամենամեծ չափանիշը, եթե գեղանկարիչն ուզում է ստեղծել մի որոշակի չափի արվեստ:*

Փարավոն Միրզոյանը կոչումների, գնահատանքի պակաս չունի. արժանացել է ՀՀ մշակույթի նախարարության ոսկե շքանշանի (2005 թվական), ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ է (2006), նրա վաստակը գնահատվել է ՀՀ պետական մրցանակով (2007), շնորհել են ՀՀ ժողովրդական նկարչի կոչում (2014), իսկ բոլորովին վերջերս ստացել է Ռուսաստանի Դաշնության գեղարվեստի ակադեմիայի արվեստի ակադեմիկոսի պատվավոր կոչում: Ինչպե՞ս է այս ամենին վերաբերվում:

Հայրենիք արծարծող թեման՝ հայ արվեստագետների ստեղծագործություններում

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի կերպարվեստի ամբիոնի վարիչը այն համոզմունքն ունի, որ թե պետական մրցանակը, թե կոչումը անհրաժեշտություն են, մարդու աշխատանքը, վաստակը գնահատելու միջոց:

«Կոչումներին խելոք մարդն այլ կերպ է վերաբերվում. մտածում է, որ պետությունը կամ մի այլ կառույց գնահատել է իր աշխատանքը: Իսկ գնահատված լինելու զգացումը մեկ շաբաթ պիտի տեւի: Կոչումներ շատ ունեմ, դրանք ընդամենը հիշողություն են: Եթե միշտ կոչման մասին մտածես, արվեստ չես ստեղծի: Իսկ մենք ծնվել ենք արվեստ ստեղծելու համար: Աստված մեզ հենց այնպես չի տվել այդ շնորհքը»:

Բայց որոշ վերապրումներ ունի պետական մրցանակի առումով: Նրա համոզմունքով ճիշտ չէ ամեն տարի պետական մրցանակ շնորհելը, կարծես կանոն է դարձել ամեն անգամ երկու-երեք հոգու մրցանակ շնորհելը. «Պետական մրցանակը պետության արժեքի չափանիշը պիտի լինի: Դու պիտի պետության խոսքն ասես, քո պետության բարձր արվեստը ստեղծես: Այդ մասին քիչ են մտածում: Հիշում եմ՝ Խորհրդային Միության օրոք պետական մրցանակ ստանալը ինչ մեծ իրադարձություն էր արվեստագետի համար, իրականում ստեղծագործական մեծ ուժի, վարպետության տեր պիտի լինեիր նման պարգեւի արժանանալու համար: Այսօր որպես կերպարվեստի ամբիոնի վարիչ, ինձ գեղանկարիչները աշխատանքներ են ներկայացնում հանրապետության նախագահի մրցանակաբաշխությանը մասնակցելու կամ ժողովրդական նկարչի կոչմանն արժանանալու համար: Նայում ես ու չես հասկանում՝ ինչ է նկարել, ինչ ստեղծագործություն է: Քանի որ սկզբունքային մարդ եմ, մրցույթին մասնակցելու երաշխավորագիր չեմ կարողանում տալ»:

Առանց պետական աջակցության, առանց մշակութային ծրագրի կերպարվեստը զարգացում ապրել չի կարող, կարծում է Փարավոն Միրզոյանը. «Պետությունն այն օղակն է, որի շնորհիվ զարգանում է տվյալ երկրի կերպարվեստը: Իսկ շատերը կարծում են, որ մշակույթը, կերպարվեստը (կինոն, թատրոնը, գեղանկարչությունը) կարող է զարգանալ առանց պետության հովանավորության, առանց պետության հոգածության, նրա կողմից մեծ ուշադրության: Այդպիսի բան չկա: Այն երկրներում, որտեղ ներդրումներ են անում, մշակույթին, կերպարվեստին ուշադրություն են դարձնում, այն զարգանում է: Հասկանալ կարելի է, որ անձնավորությունն է ստեղծում արվեստը, մշակույթը, բայց այն ընդհանրացնելը եւ ներկայացնելը որպես տվյալ երկրի մշակույթ, արվեստ, պետության գործն է»:

> *Չեմ հասկանում, թե ինչ է կատարվում այսօրվա մեր մշակույթի հետ. մի քանի ամիս առաջ բացվեց Անդրանիկ զորավարի 150-ամյակին նվիրված ցուցահանդեսը, որտեղ այսօրվա արվեստագետի մտածելակերպը, խոսքը՝ այդ թեմային առնչվող, չտեսա, որովհետեւ պետության կողմից ներդրում արված չկար. մեկ-երկու հոգի մի կազմակերպության հետ ցուցահանդես էին կազմակերպել՝ նայեցին, անցան, պրծան: Մենք շատ մակերեսայնորեն ենք նայում այդ ամենին: Մինչդեռ այդ պատկերասրահից մի տասը լավ ստեղծագործություն պիտի համալրեր ազգային պատկերասրահի ֆոնդերը»:*

Արվեստագետի համոզմամբ՝ խորհրդային տարիները ԽՍՀՄ կազմի մեջ մտնող բոլոր ազգերի համար ոսկեդար էր, որովհետեւ ազգային մշակույթին, կերպարվեստին մեծ ուշադրություն էր դարձվում. ամեն տարի կազմակերպվում էին հոբելյանական ցուցահանդեսներ, ցուցահանդես-վաճառքներ, սիմպոզիումներ, գիտաժողովներ, ինչը շատ կարեւոր էր կերպարվեստի զարգացման համար: Հիշում է 1969-ին բացված ցուցահանդեսները՝ նախ Հովհաննես Թումանյանի, ապա՝ Կոմիտասի 100-ամյա հոբելյաններին նվիրված: «Թվում է, թե դրանք օրվա թեմաներ էին, բայց դա երկրի գաղափարախոսությունն էր, նրա մշակութային ուղղվածությունը: Թեմային առնչվող պատվերներ էր պետությունը տալիս արվեստագետներին, ինչի արդյունքում ծնվեցին արվեստի բարձրարժեք գործեր», – պատմում է Փարավոն Միրզոյանը:

Վերջերս խոսակցություններ են շրջանառվում Հայաստանի Հանրապետության զինանշանն ու օրհներգը փոխելու մասին, թերթերում եւ մամուլի ակումբներում այդ առնչությամբ բանավեճեր են ծավալվում: Ցանկացանք իմանալ անվանի արվեստագետի կարծիքը: Զինանշանի առումով նշեց, որ այն 21-րդ դարի զինանշան չէ, չի կարելի ամեն ինչ արհեստականորեն բերել ու խցկել զինանշանի մեջ: Օրհներգն էլ պիտի վերանայել, թե ինչպես, թող դա որոշեն ստեղծագործական միությունները՝ գրողների, կոմպոզիտորների եւ այլն: Անձամբ ինքը շատ է հավանում օրհներգի՝ Արամ Խաչատրյանի գրած երաժշտությունը, իսկ տեքստն էլ կարելի է գրել՝ այօրվան համահունչ: Իսկ թե որն է մեր տոնացույցի ամենահիշարժան օրն իր համար, առանց այլեւայլության պատասխանեց՝ սեպտեմբերի 21-ը, մեր անկախության տոնը, ինչը կապում է ե՛ւ առաջին ե՛ւ երկրորդ հանրապետության հետ. «Մեր անկախությունը պիտի փայփայել, պահել, որ երբեւէ չկորցնենք», – ասում է համոզմունքով:

Վերստին անդրադառնալով կերպարվեստին՝ ընդհանրապես մեր պետականության հետագա ընթացքին, արվեստագետից ցանկացանք իմանալ, թե որն է փակուղուց դուրս գալու ելքը. «Պաշտոններ փոխելով ու նշանակելով ոչինչ չի փոխվելու: Եթե երկիրը չունի իր հիմնական ծրագիրը, զարգացման ուղին, բան դուրս չի գա: Մենք պիտի իմանանք, թե ուր ենք քայլում, թեկուզ բազում խոչընդոտների հանդիպենք: Այլապես ճանապարհին ամեն ինչ կարող ենք կորցնել… »:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

Հայ առաքելական եկեղեցին եւ հայոց պետականությունը

Հայոց եկեղեցին պետականության գաղափարախոս

Զարգացած ավատատիրության շրջան

ՎԱՀԵ ԹՈՐՈՍՅԱՆ
Պատմական գիտությունների թեկնածու

Ազգի գոյապահպանման եւ պատմական կեցության կարեւորագույն գրավականներից մեկն անկախ պետականությունն է: Վերջինիս ամրությունն, ի թիվս այլ գործոնների, մեծապես պայմանավորված է այն սրբագործող գաղափարախոսությամբ, որպիսին հայոց մեջ ամբողջ միջնադարում քրիստոնեությունն էր: Ասվածը լավագույնս փաստում են Հայաստանում քրիստոնեության պետականորեն ընդունման հանգամանքներն ու դրդապատճառները:

Մեծ Հայքում իրենց ռազմաքաղաքական ազդեցությունը տարածելու ուղղությամբ քրիստոնեության ընդունման (301թ.) նախօրեին ակտիվորեն մրցակցում էին ժամանակի երկու հզոր տերությունները՝ Սասանյան Իրանը եւ Հռոմեական կայսրությունը: Առաջինի պարագայում այդ քաղաքականությունն ուղեկցվում էր հայ ազատանու շրջանում զրադաշտականության բռնի պարտադրմամբ: Դա հանգեցնում էր նոր ձեւավորվող ավատատիրական վերնախավի ազգային դիմագծի ձեւախեղմանը: Զրադաշտականություն ընդունած հայ ավագանու ներկայացուցիչները, որպես կանոն, որդեգրում էին իրանամետ դիրքորոշում:

Հռոմի պարագայում խնդիրը փոքրինչ այլ էր: Այն առնչվում էր կայսրության կողմից Հայոց թագավորության, մասնավորապես, թագավորի կարգավիճակի ընկալմանը: Համաձայն դեռեւս I դ. ձեռք բերված պարթեւահռոմեական քաղաքական պայմանավորվածության՝ Հայոց թագավորները հաճախ թագադրվում էին Հռոմի կայսեր կողմից, ինչն էլ կայսրությունից Հայաստանի կախվածության յուրահատուկ դրսեւորում էր: Նկատի առնելով, որ ըստ ժամանակի աշխարհընկալման՝ թագավորի իշխանությունն աստվածատուր էր, պարզ է դառնում, որ այդպիսով Հռոմի կայսրը հավակնում էր Հայաստանում յուրացնել «ատվածային» այդ գործառույթը: Տրդատ Գ-ի թագադրումը եւս տեղի ունեցավ Հռոմի կայսեր կողմից, այսինքն՝ վերոգրյալ սկզբունքի շրջանակներում: Դրան հաջորդեց Մծբինի 298թ. քառասնամյա հաշտությունը, որով ազդարարվեց Հայաստանի վերստեղծումը՝ որպես ինքնուրույն թագավորություն, որի լիարժեքությանը, սակայն, պակասում էր գաղափարական անկախությունը:

Ահա այդ բացն էլ լրացրեց Հայաստանում դեռեւս I դ. մուտք գործած քրիստոնեական գաղափարախոսությունը, որի պետականորեն ընդունումը լիարժեքորեն սրբագործեց Հայոց թագավորության գաղափարաքաղաքական անկախությունը: Հայոց քրիստոնյա արքան Հռոմի կայսրին այլեւս չէր ճանաչում որպես վեհագույն աստվածային ատյան (1) այն պարզ պատճառով, որ քրիստոնեության պարագայում իշխանության աղբյուրը, այն շնորհողը ոչ թե Հռոմի կայսրն էր, այլ Հիսուս Քրիստոսը. «Իշխանութիւնք ամենայն ի վերուստ յԱստուծոյ են իջեալ առ ի մարդիկ» (2), - գրում է Գրիգոր Տաթեւացին: Արմատապես տարբերվելով զրադաշտական կրոնից՝ քրիստոնեությունը փաստորեն պատնեշում էր Հայաստանն Իրանի գաղափարաքաղաքական ազդեցությունից եւս:

Քրիստոնեության պետականորեն ընդունումը նշանակում էր, որ այն վերածվում էր պետական գաղափարաբանության, քաղաքական դավանանքի: Դրանով հանդերձ Հայ առաքելական եկեղեցուն էլ, բնականաբար, վերագրվում էին պետականության գաղափարախոսի բարդ եւ միեւնույն ժամանակ պատասխանատու գործառույթներ:

Հայաստանում քրիստոնեության ընդունումը նոր բովանդակություն հաղորդեց աշխարհիկ ու հոգեւոր իշխանությունների փոխհարաբերություններին: Ի տարբերություն հեթանոսականի՝ քրիստոնեական շրջանում այդ գաղափարախոսության գլխավոր ջահակիր Հայոց եկեղեցին առավել ներգրավվեց երկրի հասարակական-քաղաքական գործընթացներում: Դա առաջ բերեց արքայական իշխանության ծավալի փոփոխություն, ավելի ճիշտ՝ հանգեցրեց դրա նվազմանը (3):

Այստեղ մասնավոր ուշադրության է արժանի աշխարհիկ իշխանությունների բնույթի խնդիրը թե՛ հեթանոսության եւ թե՛ քրիստոնեության շրջանում: Առաջինի պարագայում հանդիպում ենք աշխարհիկ բարձրագույն իշխանության աստվածացման երեւույթին: Օրինակ՝ Արտաշեսյաններն իրենց ծագումը կապում էին արեւի աստված Միհրի հետ եւ նրան համարում իրենց հովանավորը: Արտավազդ Բ-ն (Ք. ա. 55-34) իր դրամներից մեկի վրա ներկայացված է ոչ միայն «արքայից արքա» տիտղոսով, այլ նաեւ «θειος» («աստվածային») մեծարումով: Տվյալ պարագայում հին Հայաստանում տեղի էր ունենում թագավորի ձեռքում աշխարհիկ ու հոգեւոր

Հայ առաքելական եկեղեցին եւ հայոց պետականությունը

իշխանությունների համատեղում, որի հետեւանքով աստվածացված արքան հեթանոս աստվածների եւ ժողովրդի միջեւ հանդես էր գալիս որպես միջնորդ:

Քրիստոնեության պարագայում աշխարհիկ իշխանությունների վերոգրյալ բնույթը նահանջում է իր նախկին դիրքերից: Արքայական իշխանությանը, ինչպես նաեւ այն կրող անձին, գերազանցապես վերագրվում էր ոչ թե աստվածային, այլ իշխանության դեպքում՝ աստվածաստեղծ, իսկ անձի պարագայում՝ աստվածընտրյալ բնույթ:

Հայոց անկախ պետության բացակայության, Հայաստանի սահմաններից դուրս գտնվող եւ անջատ-անջատ գործող հայկական իշխանությունների գոյության պայմաններում Հայ առաքելական եկեղեցին էր, որ դարձավ ազգի միասնության երաշխավորը՝ հաճախ իրականացնելով երկրի կառավարման քաղաքական գործառույթներ: Դրանով հանդերձ՝ Հայոց եկեղեցին երբեւէ չձգտեց պետական իշխանության եւ շարունակեց հայրենի աշխարհիկ իշխանությունը համարել ազգի, եկեղեցու բարեկեցության գլխավոր երաշխավորը. «Եւ զձեզ ետ Աստուած՝ փոխանակ հարց, - Երզնկայի իշխաններին դիմելով՝ գրում է Հովհաննես Երզնկացին, - մխիթարութիւն ազգի եւ սիւն հաստատուն սրբոյ եկեղեցոյ եւ դեղ դիւրացուցիչ խոցոտեալ սրտից քրիստոնէից» (4): Հայոց եկեղեցին քաջ գիտակցում էր անկախ պետականության բացակայության կործանարար ազդեցությունն ինչպես երկրի սոցիալ-տնտեսական ու հասարակական-քաղաքական, այնպես էլ հոգեւոր-եկեղեցական կյանքի վրա: Պատահական չէ, որ ուսումնասիրվող ժամանակաշրջանի եկեղեցական գրեթե բոլոր գործիչներն իրենց ստեղծագործություններում առանձնակի կարեւորում էին պետականության վերականգնման եւ պահպանման անհրաժեշտությունը: Ավելին, նրանք քննել եւ վեր էին հանել պետականության կորստի իրական պատճառները: Անշուշտ, դեռեւս իր նկատելի ազդեցությունն ուներ հայ ժողովրդին բաժին հասած չարիքները «վասն մեղաց մերոց» միջնադարյան տարածված դրույթով պայմանավորելը: Սակայն, դրա հետ մեկտեղ, եկեղեցական դասը, նկատի ունենալով անցյալի փորձը, պետականության կորուստն իրավացիորեն պայմանավորում էր պետական իշխանության շրջանում կենտրոնախույս ձգտումներով, մասնատվածությամբ, երկպառակչական կռիվներով: Դրանց կործանարար բնույթն Արծրունյաց թագավորության օրինակով իր «Ողբ»-ում բավական դիպուկ տվել է Ստեփանոս Օրբելյանը (5):

Դա էր պատճառը, որ խնդրո առարկա ժամանակաշրջանի ստեղծագործություններում գերակայում են միասնության, ազգը համախմբելու կոչերը. «…միմեանց վահանակիցք լիցուք սպառազէնքս, - գրում է Ներսես Լամբրոնացին, - եւ մի՛ կործանիչք. միմեանց մարտակիցք եւ մի՛ ընթադրիչք» (6): Այդ իսկ պատճառով նա պահանջում էր, որ թե՛ աշխարհիկ եւ թե հոգեւոր իշխանավորները փոխադարձ համաձայնությամբ կառավարեն երկիրը, քանզի հակառակ դեպքում, իշխանության կորուստն անխուսափելի էր: Նա գրում էր. «…առաջնորդ եթէ հոգեւոր եւ եթէ մարմնաւոր, որ ինքիշխանութեամբ կատարէ զգործն՝ փրկութիւն ոչ կարէ ուղղել ընդ անկելոցն» (7):

Բուն Հայաստանում պետականության ամրապնդման գործում եկեղեցին ծանրակշիռ մասնակցություն ունեցավ: Հասկանալի պատճառներով չկարողանալով զենքով մասնակցել հայրենիքի ազատագրմանը՝ եկեղեցին ծավալեց պետականանպաստ լայն գործունեություն՝ իր վրա վերցնելով առավելապես հասարակական հարաբերությունների կարգավորման պատասխանատու գործը: Եկեղյաց գավառի իշխաններին հղած թղթում Հովհաննես Երզնկացին գրում է. «Վասն զի, թէ էր այժմ հնար զաւրաւք կամ գանձիւք շնորհաւորել զաստուածապարգեւդ իշխանութիւն ձեր, յոյժ ախորժի է, բայց զի բանի գոլով սպասաւոր՝ բանիւ շնորհաւորեմ եւ օժանդակեմ եւ տամ օգնութիւն փափագելի սիրելոյդ» (8): Հովհաննես Երզնկացու նպատակադրման իրականացմանը նպաստում էր այն հանգամանքը, որ տվյալ ժամանակաշրջանում գլխավորապես հոգեւոր դասի ներկայացուցիչներն էին հեղինակում հասարակական հարաբերությունները կարգավորող կանոնաիրավական նորմերը: Այն լավագույնս դրսեւորում գտավ Մխիթար Գոշի Դատաստանագրքում, որը հեղինակի նպատակադրմամբ կիրառվելու էր նաեւ անկախ պետականության պայմաններում: Հասարակական հարաբերությունները, մասնավորապես դատավարությունը, սեփական օրենքներով կարգավորելը երկրի ինքնիշխանության կարեւոր երաշխիքներից էր (9):

Այժմ անդրադառնանք եկեղեցու առաջադրած այն սկզբունքներին, որոնց կենսագործումը դիտվում էր որպես պետականության պահպանման եւ ամրապնդման հիմնական նախապայման:

Հանդիսանալով ավատատեր ու ավատատիրական իշխանության բաղկացուցիչ մաս՝ եկեղեցին միապետական կառավարման կողմնակից էր. «Ոչ է բարւոք բազմիշխանութիւն, մի իշխան եղիցի» (10), - գրում էր կաթողիկոս Գրիգոր Դ. Տղան (1173-1193): Միապետության գաղափարը մեծապես կարեւորվում է նաեւ Մխիթար Գոշի Դատաստանագրքում: Սակայն ուշագրավ է, որ թագավորն այլեւս չէր դիտվում որպես բացարձակ իշխանավոր, այլ համարվում էր ավատատիրական աստիճանակարգի բարձրագույն աստիճանին կանգնած դատավոր (11), ով իրեն կարգող իշխանների կողմից կարող էր անգամ գահընկեց արվել. «Եթէ իշխանք թագաւորեցուսցեն, եւ ոչ ըստ արժանւոյն վարէ զթագաւորութիւնն, - գրում է Մխիթար Գոշը, - ի նոցունց կարգողացն աքսորեսցի» (12): Նման դիրքորոշումը մեծապես պայմանավորված էր բուն Հայաստանում Գոշի ապրած ժամանակաշրջանում թագավորական իշխանության բացակայությամբ, հակառակ դեպքում դժվար կլիներ այդ հոդվածը ներառել Դատաստանագրքում:

Ասվածն առավել համոզիչ է դառնում, երբ նկատի ենք առնում Կիլիկիայում նույն հոդվածին Սմբատ Սպարապետի տված մեկնաբանությունը, որտեղ խոսք անգամ չկա իշխաններին նման լիազորություններով օժտելու մասին, իսկ թագավորի գահազրկման իրավունքը վերապահվում է եկեղեցուն եւ ժողովրդին (13)՝ դրա իրականացումը դարձնելով գրեթե անհնարին: Ավելին, ըստ նույն հոդվածի՝ նույնիսկ անհրաժեշտության դեպքում, երբ անգամ երկրի շահն էր պահանջում, իշխաններն իրավունք չունեին թագավորին գահընկեց անելու. «Եւ թէ վասն փրկութեան աշխարհի կամենան զթագաւորն խրատել կամ մեռցնել՝ նա չկարեն իշխանքն» (14): Նման մոտեցումը, անշուշտ, պայմանավոր-

Հայ առաքելական եկեղեցին եւ հայոց պետականությունը

ված է այն հանգամանքով, որ Սմբատ Սպարապետի Դատաստանագիրքը գրվել է Կիլիկիայի հայկական թագավորության շրջանում: Բացի այդ՝ հեղինակը ոչ միայն աշխարհիկ դասի, այլեւ թագավորական տան ներկայացուցիչ էր:

Եկեղեցին միաժամանակ առաջ էր քաշում թագավորական իշխանության բացարձակ անկախության գաղափարը, քանզի «…թագաւորք այնոքիկ անուանին, որք ազգաց իւրեանց տիրեն համանգամայն եւ յայլոց հարկս առնուն յազգաց, եւ եթէ ոչ՝ ոչ հարկիցին» (15): Այս առումով ուշագրավ է ապագա հայոց թագավորներին եւ իշխաններին հին աշխարհի նշանավոր նվաճող Ալեքսանդր Մակեդոնացու օրինակով բնութագրելու Խաչատուր Կեչառեցու փորձը, որպես «յաւգուտ յաւրինակ ամենայն թագաւորաց եւ իշխանաց… ըստ այսմ աւրինակի վայել է արքայից եւ զաւրապետաց իմաստուն եւ հանճարեղս լինել, զի մի տգիտաբար կորուսանի զթագն» (16): Հոգեւոր իշխանությունը պետականության ամրության հարցում առանձնակի կարեւորում էր նաեւ թագավորի անձնական որակները, որոնցից առաջնահերթ էին «պատերազմական զաւրութիւն եւ բազմահնար իմաստութիւն յամենայն կողմանց» (17):

Մեծապես արժեւորելով անկախ պետականության պահպանման անհրաժեշտությունը՝ եկեղեցին դրա շարունակականության գլխավոր նախապայման էր համարում իշխանությունների արդար կառավարումը՝ առաջ քաշելով հետեւյալ չափանիշները.

Ա. Աշխարհիկ իշխանությունների հավատարմությունը քրիստոնեության դրույթներին: «Այսպես, - գրում էր Հովհաննես Երզնկացին, - եւ Հայոց ետ մեծ իշխանութիւն եւ զաւրաւոր թագաւորութիւն եւ, յորժամ ոչ կացին յաւրէնս հրամանացն Աստուծոյ եւ ոչ լսեցին սուրբ եւ իմաստուն առաջնորդացն եւ եղեն անհրաւք եւ նեղիչք երկրի, էհան Աստուած յիշխանութենէն» (18): Քրիստոնեական գաղափարախոսության վրա հիմնված կառավարում ապահովելու գործում հոգեւորականությունն ուներ ուրույն առաքելություն, որը դրսեւորվում էր աշխարհիկ իշխանությունների վրա եկեղեցու գաղափարական ազդեցությամբ. «Իսկ եկեղեցական դասուց, - նշում էր Վահրամ Ռաբունին, - արժան է զաստուածային օրէնս ի ժամու եւ ի տարաժամու յունկն թագաւորի լսեցուցանել անպատկառ եւ անակն առնուլ. ի սահման թագաւորական ուղղութեան՝ զնա յորդորել» (19):

Բ. Եկեղեցին մեծապես կարեւորում էր ժողովրդի հանդեպ իշխանությունների (թե՛ աշխարհիկ, թե՛ հոգեւոր) արդար կառավարումը. «Զայսպիսի իշխանս սիրեն իւր հնազանդեալքն վասն երեք իրաց՝ ի բնութենէ, ի հարկէ, ի կարեաց: Ի բնութենէ՝ որպէս որդիք զբարի եւ զգթած հայր, ի հարկէ՝ որպէս աստուածադիր իշխան, ի կարեաց՝ որպէս զիրաւարար եւ զարդարադատ», - գրում է Հովհաննես Երզնկացին (20): Այսինքն՝ միայն աշխարհիկ իշխանությունների «աստուածադիր» լինելը չէ, որ ապահովում էր ժողովրդի համերաշխ դիրքորոշումը նրանց նկատմամբ, այլեւ հավասարապես կարեւորվում էր վերջիններիս՝ ժողովրդի նկատմամբ «զբարի եւ զգթած հայր» լինելու հանգամանքը:

Արդար կառավարման կողմնակից էր նաեւ Մխիթար Գոշը, որի դիտարկմամբ՝ իշխանություններն Աստծուց կարգվել են երկրի պահպանության, փրկության, այլ ոչ թե անարդար կառավարման համար, քանզի «յԱստուծոյ կարգեցան ի փրկութիւն եւ ի պահպանութիւն աշխարհի եւ ոչ ի կործանումն» (21): Դա էր պատճառը, որ աշխարհիկ իշխանությունների աստվածընտրյալ լինելու առաջին նախապայման համարվում էր «բարեպաշտութիւն հաւատոյ՝ եւ ուղղութիւն գործոց» (22), ինչպես նաեւ «իմաստութեամբ եւ խոհականութեամբ» կառավարելը (23):

Կառավարման վերոգրյալ սկզբունքները հաշվի առնելով՝ եկեղեցին առաջ էր քաշում թագավորի՝ Աստծո եւ մարդկանց կողմից կարգված լինելու գաղափարը: Խնդրի վերաբերյալ ուշագրավ դիտարկման ենք հանդիպում Մխիթար Գոշի Դատաստանագրքի՝ «Յաղագս դատաստանաց աքսորելոց թագաւորի եւ որք ընդ նավաւե հոդվածում, որտեղ մասնավորապես ասվում է. «Թագաւորք, կարգեալ յԱստուծոյ, որպէս Իսրայելին, յԱստուծոյ բարձցին եւ կամ աքսորեսցին (24), իսկ ի մարդկանէ կացեալք՝ ի նոցունց աքսորեսցին»: Իրավադրույթը տեղ է գտել նաեւ Սմբատ Սպարապետի Դատաստանագրքում (25): Ա. Գալստյանի պնդմամբ՝ Աստծո կողմից կարգված թագավոր ասելով՝ Սմբատը նկատի է ունեցել կաթողիկոսին, որին աշխարհիկ իշխանությունները չէին կարող ո՛չ նշանակել եւ ո՛չ էլ դատել (26): Դիտելի է, որ Սմբատ Սպարապետի Դատաստանագրքում թագավոր եւ կաթողիկոս հասկացությունները հստակ տարանջատված են: Նկատենք, որ թագավորի՝ Աստծո եւ մարդկանց կողմից կարգված լինելու տարբերակումը լավագույնս պատճառաբանվում է Աստվածաշնչյան դրույթներով: Սույն տարանջատման հիմնական սկզբունքը պայմանավորված է թագավորական իշխանության կառավարման բնույթով: Այստեղ հարկ է ուշադրություն դարձնել «Իսրայելի թագաւոր» արտահայտությանը: Հարցի էությունը ճիշտ հասկանալու համար անհրաժեշտ է նկատի առնել այն սկզբունքը, որով Աստված առաջնորդվում էր Իսրայելի թագավորներին ընտրելիս:

Դա նախ եւ առաջ ապագա թագավորի հավատարմությունն էր Աստծուն, նրա պատվիրաններին, որոնց չհետեւելն էր պատճառը, որ Իսրայելի առաջին թագավոր Սավուղը զրկվեց ոչ միայն թագավորելու, այլ, որ ամենակարեւորն է՝ իշխանությունը ժառանգություն թողնելու իրավունքից (27): Իսրայելի թագավորությունը, ինչպես հայտնի է, տրվեց Դավթին, ով, երկիրն Աստծո պատվիրաններին հավատարմությամբ կառավարելով, վաստակեց ոչ միայն թագավորելու, այլեւ իշխանությունը ժառանգություն թողնելու իրավունք (28): Աստվածաշնչյան այս պատվիրանները նկատի ունենալով էր Վահրամ Ռաբունին եզրակացնում, որ «այլ է թագաւորն՝ որ յԱստուծոյ, եւ այլ՝ որ ի մարդկանէ» (29): Նա աստվածընտրյալ էր համարում այն թագավորներին, ովքեր կհետեւեին Իսրայելի թագավոր Դավթին՝ հավատարիմ լինելով Աստծուն (30):

Միեւնույն ժամանակ, հանդիսանալով երկիրը կառավարող օղակներից մեկը՝ եկեղեցին հանդես էր գալիս նաեւ իշխանության շահերից: Այդ առաքելության արդյունավետ իրականացման համար հոգեւոր-եկեղեցական դասն աշխարհիկ իշխանավորներին վերագրում էր աստվածընտրյալ բնույթ: Փաստենք, որ ներկայացվող ժամանակաշրջանում աստվածընտրյալ էին համարվում ոչ միայն թագավորական, այլեւ առանձին ավատատիրական իշխանությունները, որոնք, ըստ էության, փոքր

Հայ առաքելական եկեղեցին եւ հայոց պետականությունը

թագավորություններ էին: Այդ առումով բնութագրական է Հովհաննես Երզնկացու՝ Եկեղյաց գավառի իշխաններին ուղղված թուղթը, որտեղ կարդում ենք. «Ըստ որում եւ ձեզ ետ Աստուած լինել ժառանգ իշխանութեանն, իբր արեամբ հաւր ստացելոյ իշխանութեանն» (31):

Աշխարհիկ իշխանությունների աստվածընտրյալ բնույթը տրամաբանորեն հանգեցնում էր վերջիններիս անձեռնմխելիության եւ մասնակի անսխալականության գաղափարին, ինչն էլ մեծապես ծառայում էր երկրի ներքին կայունությունն ու միասնությունը պահպանելուն: Պատահական չէ, որ Մխիթար Գոշն իր առակներում խրատում էր թագավորներին «կարգել զմեծամեծս եւ զնուաստս ընդդէմ միմեանց, զի մի՛ ընդ թագաւորս, այլ ընդ միմեանս պատերազմեսցին» (32): Ավելին, իր մեկ այլ առակում Մխիթար Գոշն աշխարհիկ տերերին զգուշացնում է, որ չպետք է անուշադրության մատնել իրենց ստորադասների (այդ թվում՝ հասարակ ժողովրդի) դժգոհությունները, քանզի նրանք կարող են միավորվել եւ հաղթել հզորներին: Նա գրում է. «Զօրութիւն առակիս այսպիսի է, զի հզօրք զտկարս արհամարհեն, եւ ոչ երկնչին. սակայն իմաստութեամբ զօրանան փոքունք, եւ յաղթեն հզօրաց» (33):

Միեւնույն ժամանակ, հոգեւորականությունն ավելորդ չէր համարում նշել, որ հասարակ ժողովրդին չի տրված իշխանավորներին դատելու իրավունքը եւ շեշտում, որ դա Աստծո պատվիրանն է. «…ժողովրդեան չէ պարտ զիշխանաւորն դատէ. զի ամենայն իշխանաւոր աստուծոյ ազնիւ ծառայ է. եւ Քրիստոս հրամայէ, թե դու ո՞վ ես, որ դատես զայլում ծառայ. եւ ամենայն գիրք աստուածայշունչք զայս ասեն» (34), - գրում էր Վարդան Այգեկցին: Այս միտքն իր առակներում արծարծում է նաեւ Մխիթար Գոշը՝ նշելով, որ Աստված ինքն է կարգել տկարին՝ հնազանդ լինել հզորին, ուստի ժողովուրդը պետք է հնազանդ լինի թագավորի իշխանությանը. «զի հնազանդէլ պարտիք եւ ոչ քննիչք լինել, զի մի՛ անկարգութիւն լիցի» (35): Հետաքրքրական է, որ ժողովրդից նման հնազանդություն պահանջվում էր նաեւ եկեղեցու նկատմամբ. «Ձեզ (ժողովրդին - Վ. Թ.)՝ լսել հրամայեցաւ քահանայիցդ եւ հնազանդ լինել բանից եւ քարոզութեան նոցա, եւ ոչ հայել ի գործս նոցա կամ հոգալ եւ քննել զնոսա», - նշում էր Վարդան Այգեկցին (36):

Աշխարհիկ իշխանությունների դիրքերի ամրապնդման առաքելությունն առավել կենսունակ դարձնելու համար հոգեւորականությունը նրանց հանդեպ հնազանդությանը տալիս էր աստվածահաճո բնույթ: Սակայն հաշվի առնելով, որ դա հակասում էր Աստծու կողմից բոլորին հավասար ստեղծած լինելու գաղափարին, անհրաժեշտ էր համարում հասարակական տարբեր շերտերի ձեւավորումը վերագրել մարդկանց՝ դրանց կարգավորումը թողնելով Աստծուն: Ասվածի առումով բավական դիպուկ է XIIդ. երկրորդ կեսի նշանավոր հոգեւոր-եկեղեցական գործիչ Սարգիս Շնորհալու հետեւյալ դիտարկումը. «Զայս ուսուցանէ մեզ՝ եթէ թագաւորի պատիւ, եւ դատաւորի, եւ իշխանի, մարդկան մտաց ստեղծուածք են՝ եւ զանազանութիւնք. վասն զի, ի ստեղծմանէն Աստուծոյ ո՛չ ոք աւելի ունի քան զընկերն, քանզի համապատիւս ստեղծ զամենայնսն արարիչն: Իսկ տէրութիւն եւ ծառայութիւն՝ յետոյ սպրդեալ ի նե՛ղքս եմուտ. եւ միտք մարդկան սակս գահասիրութեան պատիւս պէ՛սպէսս եւ զանազանս իմացան» (37): Ասվածն առավել համոզիչ դարձնելու համար Սարգիս Շնորհալին վկայակոչում էր Պողոս առաքյալի հրամանը. «հնազանդ լինել այնպիսեացն (նկատի ունի աշխարհիկ իշխաններին - Վ. Թ.), այլեւ աղօ՛թս եւս առնել. զի ի նոցա խաղաղութեան՝ եւ մեք Աստուածապաշտութեամբ եւ խաղաղութեամբ զկեանս մեր (ասէ) յանգեսցուք. վասն զի ա՛յն է բարի եւ ընդունելի առաջի աստուծոյ» (38): Ուշագրավ է, որ ժողովրդի շրջանում աշխարհիկ իշխանությունների նկատմամբ հնազանդություն քարոզելը հոգեւոր դասը դիտում էր եկեղեցու կարեւոր գործառույթ. «Իսկ եկեղեցական դասուց, - գրում էր Վահրամ Ռաբունին, - արժան է … զաշխարհ (ժողովրդին - Վ. Թ.) ի նոցին (թագավորական իշխանությանը - Վ. Թ.) հնազանդութիւն յորդորել: Ուսուցանել ծառայել մարմնաւոր տեառն՝ որպէս Աստուծոյ, եւ զամենայն հարկս եւ զիրաւունս առանց տրտնջման յարքունիս վճարել» (39):

Հնազանդության նման կոչն ու պարտադրանքը բնավ չէր նշանակում, թե հոգեւորականությունն ամեն կերպ արդարացնում էր աշխարհիկ իշխանությունների ցանկացած գործողություն: Սակայն հարց է առաջանում. ո՞վ կամ ի՞նչ մարմին էր իրավասու դատել աշխարհիկ իշխանությունների գործողությունները: Այս հարցում եկեղեցին, կարծում ենք, չուներ իրավական լիազորություններ եւ միայն գաղափարապես էր կարողանում ազդել աշխարհիկ իշխանությունների վրա՝ օգտագործելով հասարակության վրա ներգործելու իր լծակները: Ուստի հոգեւորականությունը փորձում էր ժողովրդի շրջանում ընկալելի դարձնել այն գաղափարը, որի համաձայն՝ աշխարհիկ իշխանությունն ըստ էության անցավոր է, եւ միայն հոգեւորն է հավերժ: Այս առնչությամբ Մխիթար Գոշը գրում է. «Բայց գիտասցեն, զի ոչ անգիտանամ, եթէ ամենայն թագաւորութիւն երկրաւոր անցաւոր եւ փոփոխելի է, այլ առաւել մերս եղեւ արքայութիւն» (40): Սարգիս Շնորհալին նույնիսկ աշխարհիկ իշխանությունների՝ քրիստոնեական վարդապետությանը, կանոններին հակասող գործողությունների պարագայում անհնազանդության կոչ էր հնչեցնում. «Ապա եթէ զԱստուծոյ զպարտ եւ պատշաճ պատիւն՝ իւրեանց խնդրեն առնուլ, եւ մեզ զանօրէն օրէնս ուսուցանել, յԱստուծոյ պարտիմք երկնչել՝ եւ զնոցա (աշխարհիկ իշխանություններին - Վ. Թ.) պատիւն առ ո՛տն կոխել, եւ զանօրէն օրէնսն արհամարհել» (41):

Կանոնական իրավունքի տեսանկյունից իրավասու չլինելով դատել աշխարհիկ իշխանավորներին՝ եկեղեցին այդ իրավունքը վերագրում էր իշխանություն շնորհողին՝ Աստծուն (42):

Հայոց եկեղեցին վայրիվերումներով լի այս ժամանակաշրջանում դրսեւորեց պետական մտածողություն եւ հնարավորինս նպաստեց ավատատիրական իշխանությունների դիրքերի ամրապնդմանը: Այս պարագայում գերակա էր այն համոզումը, որ այլ կերպ, քան հայրենի իշխանությունների անկախության կամ գոնե ինքնուրույնության դեպքում է հնարավոր արդյունավետ իրականացնել երկրի թե՛ հասարակական-քաղաքական եւ թե՛ հոգեւոր-եկեղեցական կառավարումը:

Ծանոթագրություն

1. *Մանասերյան Ռ., Հայաստանը Արտավազդից մինչեւ Տրդատ Մեծ, Երեւան, 1997, էջ 180:*
2. *Գրիգոր Տաթեւացի, Գիրք հարց-*

Հայ առաքելական եկեղեցին եւ հայոց պետականությունը

մանց, Երուսաղէմ, 1993, էջ 537–538:
3. Մանասերյան Ռ., նշվ.աշխ., էջ 187:
4. Բաղդասարյան է., Յովհաննես Երզնկացին եւ նրա խրատական արձակը, Երեւան, 1977, էջ 204–205:
5. Ստեփաննոս Օրպէլեանի Ողբ ի Ս. Կաթուղիկէն, բնագիրը յառաջաբանով եւ ծանօթութիւններով հրատարակեց Կ. Կոստանեանց, Թիֆլիս, 1885, էջ 36:
6. Սրբոյն Ներսիսի Լամբրոնացւոյ Տարսոնի եպիսկոպոսի Խորհրդածութիւնք ի կարգս եկեղեցւոյ եւ մեկնութիւն խորհրդոյ պատարագին, Վենետիկ, 1847, էջ 545:
7. Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. թիվ 2602, էջ 18 ա:
8. Բաղդասարյան է., նշվ. աշխ., էջ 205:
9. Մխիթար Գոշ, Գիրք դատաստանի, աշխատասիրությամբ՝ Խ. Թորոսյանի, Երեւան, 1975, էջ Ժէ:
10. Գրիգոր Կաթողիկոս Տղայ կոչեցելոյ Նամականի, Վենետիկ, 1865, էջ 8:
11. Յովհաննիսյան Ա., Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք Ա, Երեւան, 1957, էջ 285:
12. Մխիթար Գոշ, Գիրք դատաստանի, էջ 141:
13. Սմբատ Սպարապետ, Դատաստանագիրք, հավաքական տեքստը, ռուսերեն թարգմանությունը, առաջաբանը եւ ծանոթագրությունները Ա. Գ. Գալստյանի, Երեւան, 1958, էջ 81:
14. Նույն տեղում:
15. Մխիթար Գոշ, Գիրք դատաստանի, էջ 28:
16. Ավդալբեկյան Մ., Խաչատուր Կեչառեցի. XIII–XIV դդ., Երեւան, 1958, էջ 62:
17. Մառ Ն. Ժողովածոյք առակաց Վարդանայ, մասն Բ, Բնագիր, Ս. Պետերբուրգ, 1894, էջ 35 (այսուհետեւ՝ Ժողովածոյք առակաց Վարդանայ, մասն Բ):
18. Բաղդասարյան է., նշվ. աշխ., էջ 205-206:
19. Վահրամայ վարդապետի ատենադպրի Լեւոնի արքայի Բան ի Յայտնութիւն Տեառն եւ յօծումն Լեւոնի Գ. արքայի, Յերուսաղէմ, 1875, էջ 53 (այսուհետեւ՝ Վահրամ Ռաբունի, Բան ի Յայտնութիւն տեառն):
20. Բաղդասարյան է., նշվ. աշխ., էջ 207:
21. Մխիթար Գոշ, Գիրք դատաստանի, էջ 31:
22. Վահրամ Ռաբունի, Բան ի Յայտնութիւն տեառն, էջ 54:
23. Նույն տեղում:
24. Մխիթար Գոշ, Գիրք դատաստանի, էջ 141:
25. Սմբատ Սպարապետ, Դատաստանագիրք, էջ 81.
26. Նույն տեղում, էջ XXVIII:
27. Աստուածաշունչ Մատեան, Գլուխք Առաջին Թագաւորութեանցն, գլ. ԺԳ 13–15:
28. Նույն տեղում, Գլուխք Երրորդ Թագաւորութեանցն, գլ. Բ 12–13, Սաղմ. ճԼԱ 11–13:
29. Վահրամ Ռաբունի, Բան ի Յայտնութիւն տեառն, էջ 32:
30. Նույն տեղում:
31. Բաղդասարյան է., նշվ. աշխ., էջ 204:
32. Մխիթար Գոշ, Առակներ, տեքստը ձեռագրերի համեմատությամբ եւ ներածությունը է. Պիվազյանի, Երեւան, 1951, էջ 45:
33. Նույն տեղում, էջ 114:
34. Ժողովածոյք առակաց Վարդանայ, մասն Բ, էջ 165:
35. Մխիթար Գոշ, Առակներ, էջ 74:
36. Վարդանայ վարդապետի Այգեկցւոյ Խրատք, աշխատասիրութեամբ Պ. վարդապետ Անանեանի, Վենետիկ, 1956, էջ 24:
37. Մեկնութիւն եօթանց թղթոց կաթուղիկեայց արարեալ երանելւոյն Սարգսի շնորհալւոյ Վարդապետի՝ հայոց իմաստասիրի եւ քաջ հռետորի, աշխատասիրութեամբ Տ. Անդրէաս Վարդապետի Նարինեան Ակնեցւոյ, Կոստանդինուպօլիս, 1828, էջ 261 (այսուհետեւ՝ Սարգիս Շնորհալի, Մեկնութիւն եօթանց թղթոց կաթուղիկեայց):
38. Նույն տեղում:
39. Վահրամ Ռաբունի, Բան ի Յայտնութիւն տեառն, էջ 53:
40. Մխիթար Գոշ, Գիրք դատաստանի, էջ 33:
41. Սարգիս Շնորհալի, Մեկնութիւն եօթանց թղթոց կաթուղիկեայց, էջ 267:
42. Մխիթար Գոշ, Գիրք դատաստանի, էջ 141:

Հայ առաքելական եկեղեցին եւ հայոց պետականությունը

Ընդհանրական կաթողիկոսական աթոռի վերահաստատումն էջմիածնում՝ Գրիգոր Տաթեւացու եւ նրա համախոհների ջանքերի արդյունք

ՍՈՒՍԱՆՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Տաթեւի համալսարանի գոյության տարիները զուգադիպել են հայ ժողովրդի պատմության դրամատիկ շրջաններից մեկին. մի կողմից՝ Հռոմի դավանանքի պարտադրումը՝ քողարկված կրոնական վեճերի ներքո, մյուս կողմից՝ մեկը մյուսին հաջորդող արշավանքները եւ, վերջապես, մեծագույն կորուստը՝ պետականության անկումը: Այս տարիներին, սակայն, Տաթեւի համալսարանը շարունակեց գործել՝ կրթական, գիտական հարցերից բացի լուծելով նաեւ քաղաքական հարցեր: Այստեղ խաչաձեւվեցին ոչ միայն նրա անմիջական նախորդի՝ Գլաձորի համալսարանի, այլեւ առհասարակ գիտական մտքի նախորդ նվաճումները, մշակութային ավանդները: Այս փաստն իր արտացոլումն է գտել հատկապես Գրիգոր Տաթեւացու աշխատություններում:

Տաթեւացին իր բազմակողմանի գործունեությամբ նշանավորվել է դեռ կենդանության օրոք: Նա համբավ է վայելել եւ՛ իբրեւ դպրապետ, եւ՛ իբրեւ գիտնական, եւ՛ իբրեւ քաղաքական գործիչ:

Բոլոր նրանք, ովքեր որեւէ առիթով գրել են Տաթեւացու մասին, հատկապես նրա ժամանակակիցները, հիշում են նրան բազմապիսի մեծարող մակդիրներով՝ քաջ հռետոր, բանիբուն վարդապետ, եռամեծ, արեգակ պայծառ, մեծ ոաբուն, տիեզերալույս, երիցս երանեալ, բազմերախտ հայր, պայծառամիտ, հանճարեղ եւ այլն: Մեզ են հասել նրան նվիրված Առաքել Սյունեցու, Մեսրոպ վարդապետի, Մատթեոս Ջուղայեցու ներբողները, բազմաթիվ ու բազմապիսի հիշատակություններ, նրա անձի շուրջ հյուսած լեգենդներ: Լեգենդներից մեկում պատմվում է, որ նրա ծնունդը ավետվել է, ինչպես սրբերինը՝ «Որպես յաւուր միում բարեպաշտուհի մայր սորին ետես յանուրջս երազոյ զսուրբ Լուսաւորչին մեր, ունելով ի ձեռին իւրում կանթեղ մի նուազեալ ի լուսոյն եւ ասէ ցնա. լուաւ աստուած աղօթից քոց եւ ետ քեզ բարեգոյն զաւակ միջնորդութեամբ իմով, բայց առ զկանթեղս այս եւ պահեա ի քեզ, զի մանուկն, որ ծնանելոյն է ի քէն՝ նա լուսաւորեսցէ զխաւարեալ կանթեղս զայս ուղղափառ դաւանութեամբ եւ ողջամիտ վարդապետութեամբ»:

Կենսագրական տեղեկություններ Տաթեւացու մասին հաղորդել են հիմնականում Թովմա Մեծոփեցին եւ Մատթեոս Ջուղայեցին, սակավաթիվ տեղեկություններ քաղում ենք նաեւ իր իսկ աշխատությունների հիշատակարաններից: Ի՞նչ են հաղորդում նրա կենսագիրները: Ըստ Ջուղայեցու՝ «էր ազգաւ Հայկազնի, աշխարհաւ կրկնակի՝ ի հայրենական տոհմէ Քաջբերունի եւ մայրենական ցեղն յԱյրարատ գաւառէ ի գեղաւանէն Քարպոյ»: Հովհան Որոտնեցին Երուսաղեմ գնալու ճանապարհին տեսնում է պատանի Խուլուշահին (Ստեփանոս Օրբելյանի ստուգաբանությամբ նշանակում է «շնորհալի թագավոր»), նկատում նրա արտասովոր ընդունակությունները, դարձնում հոգեորդի՝ «սնոյց ի բարին եւ ուսոյց զամենայն իմաստս աստուածային գրոց եւ արտաքին սոփեստից»: Սարկավագ է ձեռնադրում Սեպուհ լեռան վրա գտնվող Լուսավորչի դամբարանի մոտ, նրա անունով էլ կոչում Գրիգոր: Քահանա ձեռնադրվում է Երուսաղեմում, իսկ վարդապետ՝ դարձյալ Դարանաղյաց գավառի հիշարժան վայրում: Այս ամենը, ըստ Թովմա Մեծոփեցու, տեւում է 28 տարի:

1386 թ. Որոտնեցին անսպասելի հիվանդանում է. «կոչեաց զմեծ վարդապետն (Տաթեւացուն- Ս. Գ.) եւ զընկերակիցսն նորա, օրհնեաց զնոսա ամենայն հոգեւոր եւ աստուծային օրհնութեամբ եւ եդ զԳրիգոր ամենեցուն գլուխ եւ ուսուցիչ»: Ուսուցչին փոխարինում է Տաթեւացին՝ «հաւանութեամբ եւ կամօք մեծ վարդապետին Սարգիս սուրբ ուխտին Խառաբաստայ եւ համշիրակ եղբարց իւրոց Յակոբայ Սաղմոսավանցին Արարատեան գաւառին եւ Գէորգայ Երզնկացւոյ եւ ամենայն աշակերտաց գնդին Յովհաննես վարդապետին Մեծոբայ, Յակոբայ եւ Մխիթարայ Ռշտունեաց»: Տաթեւացուն ոաբունապետ նշանակելուն, այսպիսով, մասնակցում են Հայաստանի բոլոր անկյուններից: Այս ամենը տեղի էր ունենում Ապրակունյաց վանքում, որտեղ Որոտնեցին եւ Տաթեւացին գտնվում էին հանգամանքների բերումով:

Որոտնեցու մահվանից հետո նրա

Հայ առաքելական եկեղեցին եւ հայոց պետականությունը

աշակերտները, ովքեր արդեն վարդապետական կոչում էին ստացել, մեկնում են տարբեր գավառներ՝ կատարելու իրենց առաքելությունը: Տաթեւացին մնում է սակավաթիվ աշակերտներով: Այստեղ նրա կենսագիրները չեն հաղորդում մի փաստ, որի մասին տեղեկանում ենք իր «Հարցմունք Գէորգայ» (սա, այսպես կոչված, փոքր «Գիրք հարցմանցն» է) աշխատության հիշատակարանից: Նա գնում է Շահապոնիք, որտեղ եւ դառնում է Լենկթեմուրի Հայաստան կատարած առաջին արշավանքի ականատեսը: 1387 թ. վերջինս պաշարում է Շահապոնք բերդը. պաշարվածների մեջ էր նաեւ Տաթեւացին: Բերդի գրավման, ավերման, բնակչության կոտորածի մասին է, որ նա գրում է նույն թվականին ստեղծած իր այդ աշխատության հիշատակարանում: Տաթեւացին աշակերտներով կրկին գալիս է Ապրակունյաց վանք՝ «յաւուրս ձմերայնոյ», իսկ գարնանը վերջնականապես հաստատվում Տաթեւում: Այստեղ Տաթեւացին օգտվելով Օրբելյան իշխանական տան եւ հատկապես Հովհան Որոտնեցու եղբոր՝ Սմբատի հովանավորությունից, վերսկսում է համալսարանի աշխատանքները՝ իր հայտնի երեք «ուսումնասիրություններով» (բաժիններով)՝ երաժշտության, նկարչության եւ պատկերահանության, ներքին եւ արտաքին գիտությունների: Կարճ ժամանակ անց, Մեծոփեցու վկայությամբ, Տաթեւացին հավաքագրում է բազմաթիվ աշակերտներ, եւ Տաթեւի համալսարանի փառքը կրկին տարածվում է երկրով մեկ:

1406թ. Քաջբերունյաց գավառից Տաթեւացու մոտ են գալիս նաեւ Սարգիս Ապրակունեցու, ապա նրան հաջորդած Վարդան վարդապետի տասներկու աշակերտները, որոնց մեջ էր եւ Թովմա Մեծոփեցին: Այդ թվականից անբաժան լինելով Տաթեւացուց, Մեծոփեցին դառնում է նրա գործունեության ականատեսը, ապա եւ սկզբունքների հետեւորդն ու կենսագիրը:

Տաթեւացին, որպեսզի կարողանա զերծ պահել համալսարանն ավերածություններից, կապերի մեջ է մտնում նախ Լենկթեմուրի, ապա՝ նրա որդի Միրանշահի հետ: Սրանք ոչ միայն ընդունում են նրան, այլեւ, թերեւս, ի նկատի ունենալով նրա ազդեցությունը,պատվի արժանացնում. «Եւ մեծարեցաւ եւ պատուեցաւ ի մեծ աշխարհակալէն Թամուրէն եւ յարդոյ նորին Միրանշահէն»:

Լենկթեմուրի մահից հետո հերթական արշավանքն է ձեռնարկում Հայաստանի վրա թուրքմենական կարա կոյունլու ցեղից Ղարա Յուսուֆը: Տաթեւացին փորձում է բանակցություններ վարել նաեւ սրա հետ, բարեխոսելու նաեւ Սմբատ Օրբելյանի համար, որից Ղարա Յուսուֆը գրավել էր Որոտնաբերդը, սակայն՝ ապարդյուն: Դեռ 1402թ., Թովմա Սյունեցու վկայությամբ, Տաթեւացին համալսարանի ռաբունապետությունը հանձնել էր Մատթեոս Ջուղայեցուն՝ ազատված ժամանակը, ինչպես կտեսնենք, մի քանի հարցերի լուծմանը տրամադրելու ակնկալությամբ: 1408թ. նա թողնում է Տաթեւը եւ գալիս Քաջբերունյաց գավառ, Մեծոփա վանք: Տաթեւացուն ընդառաջ է գալիս Հովհաննես Մեծոփեցին, որ ղեկավարում էր Մեծոփի ոչ պակաս հեղինակություն վայելող դպրոցը. (Հովհաննես Մեծոփեցին վարդապետական կոչումը ստացել էր Տաթեւացուց՝ 1386 թվականին):

Տաթեւացու գալը մեծ աշխուժություն է առաջացնում: Բազմաթիվ վարդապետներ եւ կրոնավորներ շտապում են տեսնելու եւ լսելու ժամանակի մեծահամբավ մարդուն: Այստեղ Տաթեւացին ծավալում է բազմակողմանի գործունեություն. վարդապետում, քարոզում, թղթին է հանձնում նոր աշխատություններ եւ, որ անենակարեւորն է, ընդարձակ քննության նյութ դարձնում հայոց կաթողիկոսական աթոռի հարցը: Սա ուշագրավ պատմական փաստ է, սակայն Տաթեւացու գործունեությունն այս ուղղությամբ ամբողջութամբ վեր չի հանվում, ուստի հարմար ենք գտնում քիչ հանգամանորեն խոսել այս հարցի շուրջը:

Սկսած 5-րդ դարից, Բյուզանդիան քողարկելով իր բուն նպատակը, եկեղեցու միջոցով դավանաբանական վեճերի մեջ է ներքաշում Հայաստանը: Հարցի քննարկումը հատկապես սրվում է Կիլիկյան թագավորության օրոք, որի գահակալներից ոմանք՝ Հեթում Բ, Լեւոն Բ, Լեւոն Ե,Հռոմից օգնություն ակնկալելով, ազգային ինքնությունը վտանգող քաղաքականություն են վարում: Իրենց անհեռատեսությամբ աչքի են ընկնում նաեւ որոշ կաթողիկոսներ: Նրանցից է Գրիգոր Անավարզեցին, որի սխալը շտկելու համար հետագայում շատ ջանքեր են պահանջվում: Ժամանակին նրան զգուշացնող եւ դատապարտող նամակ է հղում Ստեփանոս Օրբելյանը, որը ղեկավարում էր Սյունաց մետրոպոլիտական աթոռը: Սակայն լատին եկեղեցուն միանալու շարժումն ավելի է ուժեղանում, որովհետեւ այն հովանավորում են կիլիկյան վերոհիշյալ թագավորները: Բավական է ասել, որ երկու անգամ՝ 1307թ. Սսում, 1309թ. Ադանայում ժողովներ են գումարվում, որպեսզի ընդունվի Հռոմի եկեղեցուն միանալու (ունիայի) ծրագիրը: Չնայած 1361թ. Սսի երկրորդ ժողովով Կոստանդին Դ թագավորի եւ Մեսրոպ Ա Արտազեցի կաթողիկոսի ջանքերով չեղյալ են համարվում նախորդ երկու ժողովների որոշումները, ունիթորներին, սակայն, հաջողվում է բռնելով դավադրությունների ուղին՝ անցնել այլ քաղաքականության եւ շարունակել իրենց գործունեությունը:

Ունիթորների դեմ կազմակերպված պայքար է սկսում նախ Հովհան Որոտնեցին: Հայտնի է հատկապես 1379թ. նրա կազմակերպած հակահարվածը, որի պատճառը դառնում է ունիթորների հրահրած Ապրակունյաց վանքի դպրոցի սաների խռովությունը: Այդ մասին հանգամանորեն տեղեկացնում են Թովմա Մեծոփեցին, Միքայել Չամչյանցը, վկայում է նաեւ Տաթեւացին: Որոտնեցուց հետո Տաթեւացին այս պայքարը վախճանակետին է հասցնում նաեւ տեսականորեն. նրա աշխատությունների բազմաթիվ էջեր նվիրված են այդ շարժման սնանկությունը բացահայտելուն, նրա ակունքները մատնանշելուն, նրա դեմ պայքարի ձեւերի ուսուցանելուն: Նա դատապարտում է նաեւ նրանց, ովքեր թողած ճշմարիտ դավանանքը խոտորվում են. «որք թողուլ զճշմարիտ գիտութիւն եւ զհաւատ ուղղութեան եւ զհետ օտարաց ընթանան», որի պատճառն, ըստ նրա, մի կողմից՝ այդ հետեւորդների անփորձությունն ու տգիտությունն է, մյուս կողմից՝ հակառակորդի ուսմունքի գայթակղիչ լինելը: Տաթեւացին զգուշացնում է նաեւ, որ չարաչար սխալված կլինեն նրանք, ովքեր կկարծեն, որ գուցե սխալ է հայ ժողովուրդն իր բռնած ուղիով:

Այս պայմաններում Տաթեւացու կողմից միաբանության ջատագովումը եւ այդ ուղղությամբ գործնական քայլեր անելը դառնում է այդ իրավիճակից դուրս գալու ելքի մատնանշում: Արդեն պետա-

Հայ առաքելական եկեղեցին եւ հայոց պետականությունը

կանություն չունեցող Հայաստանի համար էական է դառնում կաթողիկոսական հարցի լուծումը, որի ձեռնարկումով Տաթեւացին կատարում է ունիթորների դեմ պայքարի եզրափակիչ քայլը: Նրա այս վերջին քայլը վերլուծելիս, սակայն, հայ բանասիրության մեջ տեղ են գտել տեսակետներ, որոնք վիճելի են. առաջինը վերաբերում է կաթողիկոսական աթոռի միավորման հարցի առաջքաշման ժամկետին, երկրորդը՝ դրա դրդապատճառներին: Ուսումնասիրողների մի մասի կարծիքով (Մ. Չամչյանց, Հր. Աճառյան, Ն. Ակինյան) Տաթեւացին այդ ծրագիրը հղացել է հենց Մեծոփա վանքում, այսինքն ոչ շուտ, քան 1408 թվականը: Սակայն այն, որ այդ հարցը նրան զբաղեցրել է ողջ վարդապետական գործունեության ընթացքում, հաստատվում է իր իսկ վկայությամբ: Դեռ ավելին, Տաթեւացու «Վասն աթոռոյն Աղթամարայ» աշխատության քննությունից պարզվում է, որ այդ ծրագիրը սաղմնավորվել է դեռ Որոտնեցու օրոք, ընդ որում, ծրագրված է եղել նախ միացնել երկու աթոռները, ապա այն տեղափոխել ավելի ապահով վայր: Տաթեւացին նշում է, որ մեծ վարդապետը (Որոտնեցին) ցանկանում էր այն տեղափոխել Աղվանք (ամենայն հավանականությամբ Գանձասար): Տաթեւացու վկայությամբ, այդ մասին թղթեր են գրվել Կոստանդին (1372-74 թթ.), Թեոդորոս (1377-92 թթ.), Կարապետ (1392-1408 թթ.) կաթողիկոսներին:

Այսպիսով, 1114 թվականից երկպառակված հայոց կաթողիկոսական աթոռի միացման խնդիրը վաղուց էր ծագել:

Գալով Քաջբերունիք եւ օգտվելով այն հանգամանքից, որ Աղթամարի հակաթոռ կաթողիկոսությանը պատկանելու պատճառով գավառը գտնվում էր «կապանաց անիծից» ներքո, Տաթեւացին հմտորեն օգտագործում է գավառը բանադրանքից ազատելու առիթը եւ լուծարքի է ենթարկում Աղթամարի կաթողիկոսական աթոռը՝ ստանալով Դավիթ կաթողիկոսից դժգոհ տեղի աշխարհիկ եւ հոգեւոր առաջնորդների համաձայնությունը:

Այժմ այն դրդապատճառների մասին, որոնք ստիպեցին Տաթեւացուն ձեռնարկել այդ քայլը: Բանն այն է, որ նա ստիպված էր հիմնավորելու իր կողմից Աղթամարի կաթողիկոսական աթոռի լուծարքի ենթարկելը, որովհետեւ աթոռն ուներ արդեն 300 տարվա պատմություն, եւ շատերը կարող էին հարցնել, թե «նախկինում բազմաթիվ առաջնորդներ եւ վարդապետներ են եղել մեզ մոտ. նրանք ինչո՞ւ չանարգեցին եւ ուղղեցին մեզ, եթե սխալ էինք»: Տաթեւացու պատճառաբանումները մենք գտնում ենք երկու թղթերում, որոնց առանձին գոյությունը մինչեւ հիմա ուշադրության չի արժանացել: Միքայել Չամչյանցն իր «Հայոց պատմության» մեջ բերում է Աղթամարի աթոռի լուծարքի մասին Հակոբ Սսեցի կաթողիկոսին (1408-1411 թթ.) գրված նամակից մի հատված, որտեղ վկայում է այդ երկու թղթերի գոյության մասին. «Լուծեցինք նրան (Աղթամարի Դավիթ կաթողիկոսին- Ս. Գ.) կարգից եւ աթոռից եւ գրեցինք երկու թուղթ՝ առաջին եւ երկրորդ՝ նրանց բոլոր քաղաքները եւ գյուղերը, այլեւ (մեր) աշխարհի չորս կողմերը... եւ առաքեցինք (այդ) թղթերը ձեզ»: Թղթերից մեկը հենց այս նամակն է, որտեղ համառոտ նշվում են նաեւ աթոռը լուծարքի ենթարկելու պատճառները: Այն աչքի է ընկնում իր պաշտոնականությամբ, հատու եւ չոր ոճով, որտեղ աթոռը լուծարքի ենթարկելու պատճառը բերվում է նույնքան խստությամբ: Երկրորդը Տաթեւացու «Վասն աթոռոյն Աղթամարայ» վերնագրով թուղթն է: Բովանդակությամբ այն հենց հասցեագրված է «յամենայն քաղաքս նոցա եւ ի գեղս»՝ այսինքն Աղթամարի աթոռին ենթարկվող քաղաքներին եւ գյուղերին: Եվ քանի որ սա արդեն ուղղված էր բանադրանքից ազատվող ժողովրդին, ուստի Տաթեւացին մատուցել է այն հրաշապատում հատվածով՝ մատչելի, հասկանալի, գուցեեւ ազդեցիկ լինելու համար: Նա գրում է, որ ձեռնարկեց այդ քայլը «գիշերվա տեսիլքի պատճառով», «իմ հարազատ ծնողների պատճառով, (որովհետեւ) նրանք դարձել են Աղթամարի որոշմանն ակամա հավանողներ» (բանն այն է, որ Տաթեւացու հայրը ծնունդով Քաջբերունյաց գավառից էր, իսկ եկեղեցու կանոնադրությամբ «կապանաց անիծից» կամ նզովքի տակ էին ընկնում բոլորը, ովքեր աթոռին ենթակա տարածքից էին): Ահա մի կողմ թողնելով աթոռի լուծարքի ենթարկելու բուն պատճառը եւ հիմնվելով Տաթեւացու այս վերջին հաղորդածի եւ Մեծոփեցու վկայության վրա, որ Տաթեւացին «ազատեց երկիրն Արճիշո Աղթամարի կապանքներից գիշերվա տեսիլքի պատճառով», Ն. Ակինյանը գրում է. «Գրիգոր Տաթեւացի, որուն հայրն ի Քաջբերունեաց էր... իւր հանած հռչակին անպատուաբեր համարելով Աղթամարայ նզովեալ կաթողիկոսական թեմին պատկանիլ, որով յինքն կը ձգէր նաեւ նզովքը, 1408-ին աշնան «վասն տեսլեան գիշերոյ» կը շարժե Տաթեւեն եւ կու գայ Մեծոփ»: Այս կերպ Տաթեւացու այդ քայլը ներկայացվում է զուրկ քաղաքական այն հնչեղությունից, որ ունեցել է իրականում: Մինչդեռ, եթե մի կողմ թողնենք առաջին թուղթը, նույն այդ՝ «Վասն աթոռոյն Աղթամարայ» աշխատության մեջ Տաթեւացին մի երրորդ պատճառ է նշում, որը նույնպես աչքաթող է արվել: Նա այն համարում է «վերագոյն», քան առաջին երկուսը. «զի տեսի զերկիրս զայս բարգաւաճեալ ուղղափառ հաւատով եւ բարի գործով, մանաւանդ զքահանայս... ամենայն տեսականաւ եւ գործնականաւ զարդարեալ առաքինությամբ եւ հոգ տարայ սիրով զի պակասն լցցեն»՝ այսինքն միանան ընդհանրական աթոռին, ինչպես ապրել են դարեր շարունակ: Թղթի վերջում Տաթեւացին զգուշացնում է նաեւ, որ այդ քայլով սեփական անձը փառավորելու նպատակ չի հետապնդել. «Արդ, եղբայրներ, այս խրատական թուղթը, որ գրում եմ, ոչ թե անձն իմ հարգելով (ուզում եմ) ինձ փառաբանել»: Ինչ վերաբերում է Մեծոփեցու վկայությանը, ապա դրա մասին պետք է ասել հետեւյալը. նա իր «Յիշատակարանում» հանգամանորեն վերլուծելով կաթողիկոսական աթոռը Սսից էջմիածին տեղափոխելու խնդիրը (որովհետեւ արդեն նպատակահարմար չէր տեղափոխել Աղթամար), բերում է 12 պատճառ, որոնք հիմնականում ճիշտ են վեր հանում այդ հարցի առաջքաշման անհրաժեշտությունը:

Այսքանից հետո մեկ անգամ եւս կամենում ենք շեշտել, որ Տաթեւացու այդ վերջին հայրենասիրական ձեռնարկը վաղուց հղացված էր, եւ նրա դրդապատճառներն ավելի քան լուրջ էին: Տաթեւացու նպատակը մեկն է եղել. միաբանել ժողովրդին. տեսականորեն եւ գործնականորեն ամրապնդել այդ միաբանության հիմքերը: Սրան են նպատակաուղղված եղել նրա աշխատությունները, դրան է հասցեագրվել նաեւ նրա գործունեությունը, ուստի եւ տեսնելով նպատակի այդ ընդհանրությունը՝ նրա գործունեության յուրաքանչյուր փուլը պետք է դիտել իբրեւ նախորդի շարունակու-

Հայ առաքելական եկեղեցին եւ հայոց պետականությունը

թյուն, ինչպես որ այն եղել է իրականում եւ նրա գործողություններում չնշմարել հանկարծակիություն կամ տարերայնություն: Այս կերպ պետք է դիտարկել նաեւ վերոհիշյալ հարցը: Եվ չնայած Տաթեւացին չկարողացավ այդ ծրագիրն ամբողջությամբ իրականացնել, սակայն այդ ուղղությամբ արված քայլերը վճռական նշանակություն ունեցան. 1441 թ. Տաթեւացու հետեւորդներից հատկապես Թովմա Մեծոփեցու եւ Հովհաննես Հերմոնացու ջանքերով ընդհանրական կաթողիկոսական աթոռը վերջնականապես հաստատվեց Էջմիածնում:

Այսպիսով, Տաթեւացու եւ նրա համախոհների ջանքերն ապարդյուն չանցան. մեկ անգամ եւս վերացավ հայ եկեղեցու՝ իր մեջ այնքան վտանգ պարունակող լուծարքի հարցը:

Տաթեւացին գուցե կշարունակեր իր գործունեությունը Քաջբերունյաց գավառում, որովհետեւ Մեծոփա վանքի դպրոցը նրա շնորհիվ մեծ հռչակ էր ձեռք բերել, սակայն մնալն այդտեղ նրա կյանքի համար դառնում է վտանգավոր, այլապես նրան «գաղտագողի» տանելու հարկ չէր լինի, որի մասին վկայում է Մեծոփեցին. «Գալով՝ նրա աշակերտները մնացին ժամանակ առ ինչ եւ գաղտագողի առնելով (Տաթեւացուն- Ս. Գ.), գնացին Արարատյան գավառը»: Ի դեպ, քիչ ժամանակ անց թունավորում են Հակոբ Սսեցի կաթողիկոսին, որը եւ պետք է փոխադրվեր Աղթամար՝ Դավիթ կաթողիկոսի փոխարեն:

Հովհաննես Մեծոփեցին իր աշակերտներով եւ միաբանության վարդապետներով ուղեկցում է Տաթեւացուն: Տաթեւացին գալիս է Սաղմոսավանք: Շուտով Տաթեւից մեծ վարդապետին տանելու է գալիս Առաքել Սյունեցին: Մեծոփից եկած վարդապետները եւ նրանց աշակերտները նրա հետ մեկնում են Տաթեւ՝ ըստ ամենայնի նրա ընդհատված քարոզչական աշխատանքին, դասախոսություններին հետեւելու ակնկալությամբ: Սակայն սպառված անմնացորդ նվիրումից, ըստ Մեծոփեցու, ութ օր անց Տաթեւացին հիվանդանում է եւ կնքում իր մահկանացուն: «Հանգեաւ երանելի մահուամբ ի վանքի Տաթեւոյ ի դեկտեմբերի Իէ (27-ին)», - գրում է Մատթեոս Ջուղայեցին:

Տաթեւացու մահը ժամանակակիցների կողմից հիշատակվում է իբրեւ համազգային կորուստ: Այդ մեծարանքների, գովասանքի, հարգանքի տուրքի արտահայտությունների մեջ մեզ է ներկայանում հռչակավոր մարդու իրական կերպարը: Ժամանակակիցները գնահատելով Տաթեւացու բոլոր ծառայությունները, հատկապես շեշտում են հայ եկեղեցու ինքնության փրկության նրա ջանքերը: Արժեւորելով Տաթեւացու ներդրումները իբրեւ Գրիգոր Լուսավորչի, Սահակ Պարթեւի, Մեսրոպ Մաշտոցի, Գրիգոր Նարեկացու եւ այլոց ծառայություններին հավասար, հայ եկեղեցին վերջինը Տաթեւացուն է ընդունել իր սրբերի շարքը, որի առիթով Մաղաքիա Օրմանյանը դիպուկ դիտողություն է արել. «Հայ եկեղեցւոյ սուրբերէն անոնք, որ 5-րդ դարեն ետքն են, հազիւ թէ տասնեակ մը կը կազմեն, եւ ամենքն ալ այդ պատուոյն բարձրացած են իրենց մեծահռչակ եւ լուսաւոր արդիւնքներուն համար»:



Գրիգոր Տաթեւացի

Բոլոր նրանք, ովքեր գրել են Տաթեւացու մասին, մտավախություն են ունեցել, որ չեն կարողանա ըստ արժանվույն ներկայացնել նրան. «Եթե բոլոր լեզուները մի տեղ ժողովվեն, չեն կարող ըստ արժանվույն ներբողներով դրվատել»: Եվ դա հասկանալի է. չէ՞ որ խոսքը հռետորական արվեստով իր ժամանակի չգերազանցված եւ մեծ հռչակի արժանացած մարդու մասին էր: Այս ամենի մեջ հարկ չկա չափազանցում տեսնելու, որովհետեւ Տաթեւացու ծառայությունները իրավամբ մեծ եւ անգնահատելի էին պետականությունը կորցրած ժողովրդի համար:

Հետաքրքիր հայացք հայոց պետականության

ՀԵՆՉԵԼ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ. «Որտեղ սխալվեինք, կկորվեր մեր ազգային գործունեության շղթան»

Փիլիսոփա, ազգագրագետ, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, Երեւանի պետական համալսարանի միջազգային հարաբերությունների ֆակուլտետի քաղաքական գիտությունների պատմության ամբիոնի պրոֆեսոր Հենզել Մանուչարյանի աշխատանքները վերաբերում են հայ քաղաքական մտքի պատմությանը, հասարակագիտության հիմնախնդիրներին, անդրադարձել է Մեծ եղեռնի քաղաքական դրդապատճառներին: Երեւանի պետհամալսարանի դասախոսի կողմից կարդացվող դասընթացներն են՝ «Ազգ եւ ազգային գաղափարախոսություն», «Հայ քաղաքական մտքի պատմություն», «Հայ քաղաքական հրապարակախոսություն», «Քաղաքական հայագիտություն»: Այս առումով նրա գրքերից մեկն ավելի քան խոսուն վերնագիր ունի՝ «Հայության գոյապահպանության գաղափարախոսությունը»:

Հենզել Մանուչարյանից նախ հետաքրքրվեցինք հայ պետականության ակունքների մասին: *Հայ ժողովուրդը,* - ասաց նա, - *աշխարհի այն բացառիկ ժողովուրդներից է, որ տասը անգամ համազգային պետություն է կերտել համաշխարհային ուժային բեւեռների, աշխարհակալ պետությունների հակամարտությունների կիզակետում: Եվ բնական է, որ ինը կորցրել է: Թող այն տպավորությունը չստեղծվի, որ այդ պետականությունները կորցրել ենք մեր անփութության եւ անկազմակերպվածության պատճառով: Հայ ժողովուրդը երբեք իր հավասար որեւէ մի պետության, մի ժողովրդի դեմ ճակատամարտում կամ վճռական պատերազմում չի պարտվել: Պետականությունը կորցրել է մոնղոլ-թաթարական կամ թուրք-սելջուկյան արշավանքների պայմաններում, արաբաբյուզանդական հակամարտությունների ժամանակ, այսինքն՝ աշխարհակալ պետությունների մեծ պատերազմների բովում է կորցրել իր պետականությունը: Եվ զարմանալիորեն ձեռք է բերել նոր պետություն, հենց որ մի մազաչափ հնարավորություն է ընձեռվել:*

> Զրույցի սկզբում նա ներկայացրեց Հայաստանի աշխարհաքաղաքական դիրքը, որ դժվարություններ էր հարուցել կենտրոնածիգ պետություն ստեղծելու համար: Արեւելքի եւ Արեւմուտքի ճանապարհներն են խաչվել Հայաստանում, մեր երկիրը պատերազմների եւ արյունալի բախումների թատերաբեմ է եղել:

«Հայկական լեռնաշխարհը խիստ առանձնահատուկ է եղել 400 հազար քառ. կմ տարածքի վրա: Մեր պատմության ընթացքում քիչ է եղել, երբ ամբողջ լեռնաշխարհն ընդգրկող պետականություն ունենանք, որովհետեւ մեր տարածքը գտնվել է ստրատեգիական մի շատ կարեւոր դիրքում՝ Սեւ, Կասպից եւ Միջերկրական ծովերի միջեւ, մի յուրահատուկ կամուրջ, մի մայրցամաք, մի ճանապարհ, որտեղով այդ ծովերի ավազանների բնակիչները կապվել են իրար հետ: Եվ բոլոր ժամանակների աշխարհակալությունները մինչեւ Հայկական լեռնաշխարհում չհաստատվեին, Առաջավոր Ասիայում չէին կարող հաստատվել, ուստի Հայաստանը ոչ թե աչքից հեռու՝ մի կողմ քաշված, ապահով տեղ է եղել, այլ միշտ թոհուբոհի մեջ է գտնվել: Եթե ամբողջ համապետական մասշտաբով չենք կարողացել պետություն ունենալ, ապա հայկական լեռնաշխարհի առանձին շրջանները գրեթե անընդմիջորեն պահպանել են պետականությունը, պետական արժեքները:Այդ խոշոր կենտրոններից են եղել Մուշը, Սասունը, Զեյթունը, արեւելահայ իրականության մեջ՝ անպայմանորեն Սյունիքը, Արցախը, բավական երկար շրջանում նաեւ Գուգարքը՝ Զաքարյանների տիրապետության օրոք»:

Քաղաքագետի հետ զրույցում անդրադարձ եղավ հայ պետականության կորստի մի դրվագի մասին՝ վկայակոչելով կոնկրետ տարեթիվ. 1045թ., երբ Բագրատունիների պետությունը կործանվեց, նոր պետություն ստեղծվեց հեռավոր Կիլիկիայում: *«Աշխարհում այդպիսի նախադեպ չկա, երբ մի ժողովուրդ իր երկրից ծեծված, ջարդված, վնասված դուրս քշվի ու, բոլորովին օտար միջավայրում պետություն ստեղծի, այն էլ 300 տարի գոյատեւի եւ համաշխարհային արժեքներ ստեղծի»:* Իսկ բուն Հայաստանում շատ բարդ իրավիճակ ստեղծվեց. մոնղոլ-թաթարների արշավանքներից հետո. երկիրը չկարողացավ ազատագրվել, ուշքի գալ: Նոր նվաճողներ եկան՝ Լենկ-Թեմուր, Ակ-Կոյունլու, Կարա-Կոյունլու ցեղեր, որոնք անուն էլ չունեին, իրենց պահած ոչխարների բրդի գույնով էին հայտնի:

Բայց, այնուամենայնիվ, Հայաստանի առանձին անմատչելի վայրերում Կիլիկիայի հայոց պետության անկումից հետո պահպանել են որոշակի անկախ իշխանություններ: Դարձյալ անսանք Հ. Մանուչարյանի խոսքին. *«18-րդ դարի մեր հեղինակներից մեկը՝ Մովսես*

Հետադարձ հայացք հայոց պետականությանը

Բաղրամյանն իր «Նոր տետրակ, որ կոչի հորդորակ» աշխատության մեջ հայոց պետականության պատմությունը ոչ թե, ասենք, Բագրատունիների, Զաքարյանների, Կիլիկյան թագավորության ժամանակներով է ավարտում, այլ բերում, հասցնում է մինչեւ Խամսայի մելիքություններ եւ Սյունիքի իշխանություն, այսինքն՝ Սյունիքը, Արցախը մեր ժողովրդի մեջ պահել են ազգային պետականության, ազգային քաղաքական հասունության շարունակականությունը, իսկ որտեղ որ պետականությունը վերացել է, դարեր շարունակ պետություն չի եղել, այնտեղ ժողովուրդը թերարժեքության բարդույթ է ձեռք բերել, ծանր իրավիճակներ են ստեղծվել:

Եվ պատահական չէ, որ ամբողջ Խամսայի մելիքությունը, Սյունիք-Զանգեզուրը, նաեւ Արցախը 1920-ական թվականներին իրենց հանրապետություններն են ստեղծել՝ քեմալական Թուրքիայի դեմ կռվելով, այսինքն՝ դա գալիս է դարերով նրանց պահպանած ավանդույթներից: Արեւելահայ իրականության մեջ, հատկապես մինչեւ 18-րդ դարն իրենց ինքնիշխանությունը պահպանած Արցախն ու Սյունիքը մնացին ազատագրական շարժման կենտրոններ»:

Քաղաքագետը նկատում է, որ 18-րդ դարից սկսած (Իսրայել Օրի եւ ուրիշներ) հայ քաղաքական մշակույթի մեջ, մեր հոգեւոր կյանքում պետականության գաղափարն անընդհատ առաջ է քաշվել. *«300 տարի պետության գաղափարը մեր ազգային մշակույթի մեջ, հասարակական հոսանքների, այնուհետեւ քաղաքական կուսակցությունների ծրագրերում պետականության գաղափարն անընդհատ ծամվում էր, հատկապես 18-րդ դարի վերջից, 19-րդ դարում մեր ազգային մշակույթի գործիչները դրսեւորում են պետական մտածողություն, պետական գաղափարներ, որի արդյունքում 1915-ին ցեղասպանության ենթարկված ժողովուրդը՝ կոտորված, ջարդված, բնավեր եղած, հայրենիք կորցրած ժողովուրդը պետություն ստեղծեց: Այդ ժողովուրդը կարողացավ իր մեջ ուժ գտնել՝ հաղթելով Սարդարապատում: Պետություն ստեղծեցինք, քանզի պետականության ավանդույթներ ունեինք, որովհետեւ պետական մտածողության կրողներն էինք»:*

20-րդ դարն առանձնահատուկ է հայ ժողովրդի համար, քանզի ունեցանք երեք հանրապետություն՝ երեք պետականություն: Ինչպես գրում է Սիմոն Վրացյանը, արցունքի եւ տառապանքի ծովից ծնվեց Հայաստանի առաջին հանրապետությունը: Ոմանք չէին հավատում դրան: Անկախություն եւ հանրապետություն բառերը դնում էին չակերտների մեջ: Եվ այդպես վարվելու հիմքերը շատ էին զորավոր: Իրոք որ զարհուրելի էին պայմանները, եւ անկախությունն այդ պայմաններում թվում էր հեգնանք: Փաստորեն հայերի ձեռքում մնացել էր մի փոքր հողաշերտ՝ հազիվ 12 հազար քառ. կմ, աղքատ ու կիսակործան մի երկիր: Խորհրդային պատմագրությունը, խորհրդային գաղափարախոսները Հայաստանի առաջին հանրապետությունը համարել են մի աղետ, որ ազգին հասցրել է կործանումի դուռը:

> *Հենզել Մանուչարյանի համոզմամբ՝ հայոց երեք պետականություններն էլ սերտորեն կապված են իրար հետ. «Պատկերացնու՞մ եք՝ այդ երեք պետականությունների մի օղակը եթե չլիներ, մյուսները չէին լինի: Գուցե գաղափարախոսական տեսակետից բացառել են իրար»: Այսօր ոմանք փորձում են նսեմացնել Խորհրդային Հայաստանի դերը, պիտակներ կպցնել՝ սովետական, կոմունիստական, բռնապետական եւ այլն, հիմք ունենալով այն հանգամանքը, որ բռնաճնշումներ եղան եւ այլն, եւ այլն:*

Հենզել Մանուչարյանն այդ առիթով ասում է, որ խորհրդային տարիները, Խորհրդային Հայաստանը հայ ժողովրդի երեք պետականության մեջ առանձնահատուկ տեղ ունեն, եւ դեռեւս սերունդները, պատմաբաններն իրենց գնահատականը կտան: *«Կուսակցական գաղափարախոսության, լենինիզմի, սոցիալիստական ինտերնացիոնալի որոշ դրույթներ, ազգային հարցի սխալ դրվածքը, սովետական միալեզու ժողովուրդ ստեղծելու հապճեպ ձգտումը սխալ էին, բայց որ հայ ազգը կայացավ եւ իր շուրջը համախմբեց աշխարհի հայությանը, ոչ ոք չի կարող ժխտել, սա է լուսավոր կետը: Այդ հանգամանքը շատ բարձր պիտի գնահատվի: Իսկ այդ ժամանակաշրջանի գաղափարախոսության առանձին կողմերի վերաբերյալ կարելի է ճշտումներ անել, գնահատումներ տալ: Ո՞վ կարող է 1937-ի, 1949-ի բռնաճնշումները, անձի պաշտամունքն արդարացնել: Բայց այդ ամենով հանդերձ մենք կայացանք որպես ազգ՝ գիտությամբ, արդյունաբերությամբ, մշակույթով եւ այլն: Եթե երկրորդ հանրապետությունը չլիներ, երրորդը որտեղից պետք է ստեղծվեր: Եվ ոչ միայն պետությունը չէր լինի, այլեւ հայությանը միավորող ուժը: Ասում ենք՝ դրսում տասը միլիոն հայություն ունենք, երկու-երեք միլիոնը ՀՀ-ում: Բայց միեւնույնն է, դրսում 20 միլիոն էլ լինի, կենտրոնը, առանցքն այս Հայաստանն է: Պետականություն ունեցող այս երկիրն է, որի շուրջ պտտվում են ամբողջ հայության ծրագրերը, գաղափարները, խնդիրները: Հայաստանով է ապրում աշխարհասփյուռ հայությունը»:*

Այս համատեքստում Հենզել Մանուչարյանն Իսրայելի օրինակն է մեջբերում: *«Հրեաները ողջ աշխարհը ղեկավարում են, բայց նրանց հույսն Իսրայելն է: Ստեղծեցին հազար տարվա կորցրած իրենց երկիրը, Սիոն լեռան շուրջը հիմնեցին իրենց պետությունը, եւ նրանով ապրում է հրեա ժողովուրդը»:*

Նրա կարծիքով բոլոր պարագաներում երեք հանրապետությունները մեր ժողովրդի պատմության օրգանական շարունակությունն են. *«Մեր տարածաշրջանը, մեր երկիրը այնքան փխրուն են, որ օղակում էլ սայթաքեիր, որ օղակն էլ չլիներ, մյուսը հաստատ չէր լինի: Այդ պատճառով մեր պետականությունը մեկ ամբողջի մեջ պետք է տեսնենք»:*

Անդրադառնալով մերօրյա զարգացումներին՝ քաղաքագետն իրավամբ նկատում է, որ մեր ազգային խնդիրներն այնքան շատ են, որ միայն աստիճանական լուծում պիտի ստանան: Լեոն ժամանակին մի հետաքրքիր բան է ասել, վերհիշում է նա, ցավոք այսօր էլ այդպես է, հայկական հարցը բոլոր ժամանակներում մեծ տերությունների ձեռքին մի մտրակ է եղել թուրքերի ներքին գործերին միջամտելու համար. *«Եվ հիմա էլ այդ մտրակը գործում է, աշխատեցնում են: Պատահական չէ՝ երբ թուրքերը ռուսական ինքնաթիռը խփեցին, ռուսները հայկական հարցը բարձրացրեցին, բա Մասիսը, բա Արեւմտյան Հայաստանը*

Հեսադարձ հայացք հայոց պետականությանը

հայերն ինչու տվեցին Թուրքային: Հիմա էլ Ղարաբաղի թնջուկն է, ստեղծվել է մի իրավիճակ, երբ կարծես ոչ մեկին ձեռք չի տալիս, որ Ղարաբաղի հարցը վերջնականապես լուծվի, որովհետեւ այն մեծ լծակ է խոշոր տերությունների ձեռքին՝ Հայաստանի եւ Ադրբեջանի ներքին գործերին միջամտելու համար: Այս բարդ իրավիճակում մեր խնդիրն է՝ ճիշտ հետեւել միջազգային իրադարձությունների ընթացքին, որ նպաստավոր պահը կարողանանք օգտագործել, աննպաստ պահից էլ խուսափենք: Այդ ընդունակությունը բնականորեն մեր ժողովրդին տրված է: 387 թվականին Հայաստանը պաշտոնապես բաժանվեց Բյուզանդիայի եւ Պարսկաստանի միջեւ, դրանից հետո մեր երկիրը, երկու մասի բաժանված լինելով, միշտ կարողացել է կողմնորոշվել այդ հակամարտությունների եւ ուժային բեւեռների միջեւ. դիվանագիտական, քաղաքական, մշակութային, հոգեւոր կողմնորոշումներում պահել մեր տեսակը՝ ամենաբարդ իրավիճակներում: Եվ հիմա էլ մեր ապագան չի ոգեւորում, համաշխարհային ուժային բեւեռների ուժերի վերադասավորումները հաշվի չառնելով՝ մենք ոչ մի հաջողություն չենք ունենա»:

Իսկ թե որն է եղել մեր անկախ պետականության 25-ամյա երթի ամենալուրջ բացթողումը, մեր զրուցակիցը փոխանցեց, թե ընդհանրապես հաղթող պետությանը չեն դատապարտում (նկատի ունի Արցախյան պատերազմում կրած հաղթանակը)՝ հավելելով թե՝ որտեղ սխալվեինք, կկտրվեր մեր գործունեության շղթան:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

Արտաշես Ա բարեպաշտ Հայոց թագավոր մ.թ.ա. 189-160թթ.

Փառանձեմ թագուհի
Հայոց թագուհի 4-րդ դարում, Արշակ Բ-ի կինը, Պապ թագավորի մայրը, Անդովկ Սյունու դուստրը

Տիգրան Մեծ
Մեծ Հայքի արքա մ.թ.ա. 95-55թթ.

Հեռադարձ հայացք հայոց պետականությանը

ՎԼԱԴԻՄԻՐ ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ. «Այս վիճակից դուրս կգանք, եթե իշխեն արդարությունը, ճշմարտությունը, օրենքը...»

Հարցազրույց Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի նախագահի խորհրդական, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ գիտության վաստակավոր գործիչ Վլադիմիր Բարխուդարյանի հետ:

– Պարոն Բարխուդարյան, 20-րդ դարում երեք հանրապետություն ունեցանք, կխնդրեինք համառոտակի ներկայացնել դրանց պատմությունը:

– Մեր առաջին հանրապետությունը շատ կարճ կյանք ունեցավ՝ երկուսուկես տարի: Դժվարին պայմաններում ծնունդ առավ՝ Առաջին համաշխարհային պատերազմից եւ Հայոց մեծ եղեռնից հետո: Հետո ստեղծվեց խորհրդային իշխանություն, որ գոյատեւեց 70 տարի: Ճիշտ է, պատմաբանները գրում են, որ խորհրդային իշխանության օրոք միակուսակցական իշխանություն, դիկտատուրա էր, ազատություն չկար, բռնաճնշումներ եղան, բայց հայ ժողովուրդն անասելի մեծ հաջողությունների հասավ խորհրդային իշխանության յոթանասուն տարում: Հաջողություններ գյուղատնտեսության, արդյունաբերության, մշակույթի, գիտության եւ այլ բնագավառներում: Ավելին, այն, ինչ մենք չունեինք, խորհրդային իշխանության ժամանակ ձեռք բերեցինք: Օրինակ, տեխնիկական մտավորականություն չունեինք, բարձրագույն ուսումնական հաստատություններ, գիտությունների ակադեմիա, ազգային թատրոն չունեինք, այդ ամենն ունեցանք, մեծ զարգացում ապրեցինք:

Անկախություն ձեռք բերելիս (1991թ. սեպտեմբերի 21) ժողովուրդը մեծ խանդավառություն ապրեց, ինչի շնորհիվ ամենածանր պայմաններում Ղարաբաղյան պատերազմում կարողացանք հաղթանակ տանել: Բայց արդյունաբերության, ազգային մշակույթի, գիտության եւ այլ ոլորտներում մեծ հաջողություններ չունեցանք: Արդեն քառորդ դար է, մենք անկախ ենք, բայց մեծ հաջողություններ չկան: Դրան խանգարում են շրջափակումը, այլ հանգամանքներ: Հույս ունենանք, որ առաջիկայում այդ հաջողություններին կարող ենք հասնել:

– Ի՞նչ մարտահրավերներ են նետված երիտասարդ (նկատի ունեմ նոր պետականություն ունեցող) մեր երկրին:

– Ամենամեծ մարտահրավերը Ղարաբաղի հիմնահարցն է, երբ զինադադար է հայտարարված 1994 թվականից, բայց Ղարաբաղի վերջնական անկախության ճանաչման հարցը լուծված չէ (*հարցազրույցը կայացել է ապրիլյան քառօրյա պատերազմից առաջ, խմբ.*), Հայաստանի հետ միավորվելու հարցը լուծված չէ: Դա ամենամեծ խնդիրն է, որ մեծ հոգսեր է պատճառում, նյութական, ռազմական միջոցներ պահանջում: Ղարաբաղի խնդրում Թուրքիան անվերապահորեն պաշտպանում է Ադրբեջանին, մենք էլ շրջափակված ենք Թուրքիայի

ՍՅՈՒԺԵՏՆ

Ծնվել է 1927 թվականին Վրացական ԽՍՀ Մառնեուլի շրջանի Աղքյորփի գյուղում: Ավարտելով գյուղի միջնակարգ դպրոցը՝ ընդունվել է Երեւանի պետհամալսարանի պատմության ֆակուլտետը, որն ավարտել է 1950 թվականին: Նույն տարում ընդունվել է ՀԽՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի ասպիրանտուրան: 1954-ին թեկնածուական ատենախոսություն է պաշտպանել «Հայաստանի 9-11-րդ դարերի ավատատիրական հողատիրությունը» թեմայով: 1955-ին աշխատանքի է անցել այն ժամանակվա Գիտությունների ակադեմիայի կազմում գործող Հայաստանի պատմության պետական թանգարանում որպես կրտսեր գիտական աշխատող: 1958-1990թթ. աշխատել է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում՝ կրտսեր գիտական աշխատող, գիտական քարտուղար, դիրեկտորի տեղակալ: 1968 թվականին Վ.Բարխուդարյանին շնորհվել է պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճան, 1973-ին ստացել է պրոֆեսորի կոչում:
1990 թվականից Վ.Բարխուդարյանը Հայաստանի գիտությունների ակադեմիայի համակարգում է՝ նախ որպես ակադեմիկոս-քարտուղար:
1994-ին ընտրվել է ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի ակադեմիկոս: 2000 թվականից՝ միաժամանակ ակադեմիայի փոխնախագահ: 2004 թվականից՝ փոխնախագահ եւ հումանիտար գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար: 2006 թվականից ակադեմիայի հայագիտության եւ հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար:
2007-ին պարգեւատրվել է «Սուրբ Սահակ- Սուրբ Մեսրոպ» շքանշանով: Պարգեւատրվել է «Մեսրոպ Մաշտոց» շքանշանով:

Հեսադարձ հայացք հայոց պետականությանը

կողմից: Այս առումով Հայաստանի վիճակը բավականին ծանր է: Բայց դրական մի պահ կա, արտաքին քաղաքականության հարցում. պատմականորեն Ռուսաստանի հետ ենք դաշնակից եղել, մեր պաշտպանն է եղել, հիմա էլ է այդ գիծը վարվում, եւ միանգամորեն պատմականորեն արդարացված քաղաքականություն է, բայց բացի Ռուսաստանից, հաջողվեց նաեւ Եվրամիության եւ ԱՄՆ-ի հետ հարաբերությունները լավ պահպանել: Դա համարում եմ շատ մեծ հաջողություն արտաքին քաղաքականության բնագավառում:

– Իսկ արտաքին քաղաքականության հարցում բացթողումներ չունե՞նք:

– Դե կարող են լինել, բայց նշածս գլոբալ հարցում կարողացանք հաջողության հասնել: Արտաքին քաղաքականության հարցում բացթողում եմ համարում այն, որ դեռեւս չենք կարողացել սփյուռքի համայնքների հետ հարաբերությունները շատ սերտացնել այն առումով, որ այնտեղ հայապահպանության, հայոց լեզվի պահպանության հարցերը բավականին ծանր վիճակում են: Եվ նոր սերունդը հեռանում է հայրենիքից ու Հայաստանից: Ցեղասպանության 100-ամյակի ոգեկոչումից հետո այդ երիտասարդության մեջ ազգային կայծ առաջացավ իրենց ազգային պատկանելությունը գիտակցելու առումով, որ իրենք հայ են եւ այլն: Դա 30-40 տարեկան սերունդն է, ով տիրապետում է ժամանակակից տեխնոլոգիաներին եւ աստիճանաբար հեռանում է իր ազգային ծագումից, նախնիներից, արմատներից: Նրանց նկատմամբ լայն քաղաքականություն չի վարվում:

Երկրորդ՝ Ռուսաստանում ստեղծված են հայկական բազմաթիվ համայնքներ, ռուսահայերի միություն կա, որը նրանց հետ կանոնավոր աշխատանք չի կատարում: Ի՞նչ աշխատանք պիտի կատարվի: Համայնքներն ունեն շաբաթօրյա, կիրակնօրյա հայկական դպրոցներ, հայ երեխաների համար հատուկ դասագիրք է անհրաժեշտ, հայալեզու գրականություն, մանկավարժներ: Այդ ուղղությամբ, իմ կարծիքով, աշխատանք թույլ է կատարվում:

– Իզուր չի ասված, վրացիները ծով ունեն, ադրբեջանցիները՝ նավթ, իսկ հայերը՝ սփյուռք: Սփյուռքը հայոց պետականության երաշխիքը կարելի է դիտել, մինչդեռ ձեր նշած վերաբերմունքը տխուր խոհեր կարող է առաջացնել:

– Առանց սփյուռքի մենք շատ խեղդված վիճակում կլինենք: Սփյուռքը մեր ժողովրդի մի մասն է, մեր պատմությունը սփյուռքի հետ զուգահեռ է ընթացել: Նախկինում հայ ժողովրդին ճանաչել են իր գաղթավայրերի, սփյուռքի միջոցով: Ենթադրենք որ երկրում հայկական համայնք է եղել, հայ համայնքի միջոցով այդ երկիրը ճանաչել է հայերին, հետեւաբար սփյուռքի պատմությունը հայ ժողովրդի պատմական կապերի պատմությունն է, մի անբաժանելի մասն է: Այսօր ունենք մի իրողություն. սփյուռքը թվաքանակով ավելի մեծ է, քան Հայաստանի բնակչությունը:

– Ինչպես տեղեկանում ենք ձեր աշխատությունների ցանկից, ձեր գիտական գործունեության մեջ մեծ տեղ է գրավում հայկական գաղթավայրերի ուսումնասիրությունը:

– Խորհրդահայ պատմագրության մեջ անտեսվում էր այն գործոնը, որ առանց հայկական գաղթավայրերի, հնարավոր չէ ներկայացնել հայ ժողովրդի ամբողջական գիտականորեն հիմնավորված պատմությունը: Նկատի չէր առնվում այն հանգամանքը, որ արտերկրում է բնակվել հայության զգալի մասը, որ որոշ պատմափուլերում այնտեղ են գործել գիտության եւ մշակույթի հիմնական կենտրոնները: Երկար տարիներ աշխատել եմ Պետերբուրգի, Մոսկվայի, Ռոստովի արխիվներում, Հայաստանի Ե.Չարենցի անվան գրականության եւ արվեստի թանգարանի արխիվներում, Մատենադարանի արխիվային եւ ձեռագրական ֆոնդերում, օգտագործել թեմային առնչվող ողջ գրականությունը, հայկական եւ ռուսական պարբերական մամուլը: Պիտի ասեմ, որ հավաքված նյութն առաջին անգամ է գիտական շրջանառության մեջ դրվում: Նաեւ պիտի նշեմ, որ հայկական գաղթօջախների մեջ առանձնանում է հատկապես Կովկասի նախադռներում հաստատված հայկական կյանքով ապրած ամենից խոշոր ու հարուստ գաղութը՝ Նոր Նախիջեւանը: Այդ գաղութի պատմության հետազոտմանը նվիրված նյութը հրատարակվել է «Նոր Նախիջեւանի հայկական գաղութի պատմություն» երկու ստվարածավալ հատորներում: Դրանք հրատարակվել են 1967 եւ 1985 թվականներին: Ռուսերեն ամբողջական լույս է տեսել 1996 թվականին՝ « История армянских колоний. Новая Нахичевань» (1779-1917): Նաեւ կազմել եմ «Հայկական գաղթավայրերը» ուսումնաօժանդակ ձեռնարկը, հայ ազատագրական շարժումներին եւ հայ գաղթավայրերին նվիրված երկու ժողովածու: Վերջին տարիներին հրատարակել եմ «Մոսկվայի եւ Պետերբուրգի հայկական գաղութների պատմություն» աշխատությունը՝ հայերեն եւ ռուսերեն:

– Որքանով հայտնի է, դուք նաեւ աշխատություն եք հեղինակում հայոց պետականության մասին:

– Մի աշխատանք եմ ավարտել՝ «Հայկական մշակույթը զարգացած միջնադարում», որ ընդգրկում է Բագրատունիներից մինչեւ 15-րդ դարը, որ օրերս դրվեց ընթերցողի սեղանին: Բագրատունիների ժամանակ մեր պետությունը հզորություն ապրեց՝ Վասպուրականում, Սյունիքում, Բագրատունիների մայրաքաղաք Անիում՝ տնտեսությունը, մշակույթը, արհեստագործությունը այնպես զարգացան, որ հետագա երկու-երեք դարերի ընթացքում, թեեւ Հայաստանում մոնղոլ-սելջուկներն էին տիրապետում, բայց այդ զարգացման ընթացքը շարունակվեց, զարգացան մշակույթը, ճարտարապետությունը, երաժշտությունը, գրականությունը, Նարեկացին, Շնորհալին եւ մյուսներն են ստեղծագործել այդ ժամանակ: Եվ այս ամենին մեծապես նպաստում էր Կիլիկյան հայկական պետության գոյությունը: Մեզանում պետականության պահպանման գաղափարն այնքան ուժեղ է եղել, որ երբ Հայաստանում Բագրատունյաց թագավորությունը կործանվեց Բյուզանդիայի պատճառով, պետականություն ունենալու, ազգային ինքնությունը պահպանելու ձգտումն այնքան ուժեղ է եղել, որ հեռավոր Կիլիկիայում հայկական պետություն ստեղծեցինք 1080թ., որ գոյություն ունեցավ երեք դար՝ մինչեւ 1375 թվականը: Դա պետականությունը կարեւորելու շնորհիվ էր:

– Կուզեի, որ անդրադառնայինք հայոց պետականության ակունքներին:

– Հայկական պետականությունը շատ շուտ է առաջացել: Պետական միավորումներ ենք ունեցել մեր թվարկությունից շատ առաջ: Վանի

Հետադարձ հայացք հայոց պետականությանը

թագավորությունը հայկական ցեղերի պետականություն էր: Եթե ամբողջ թագավորությունը հայկական չէր, ցեղերի հայկական պետականություն էր: Իսկ Վանի թագավորությունից հետո Երվանդունիների թագավորությունն էր, Արտաշիսյաններն էին, Արշակունիները, Բագրատունիները: Բայց որովհետեւ Հայաստանը Ասիայի եւ Եվրոպայի սահմանագծում, որ այդ երկու հզոր պետությունների բախումը միշտ եղել է Հայաստանի տարածքում՝ Հռոմ, Բյուզանդիա, Պարսկաստան, Թուրքիա, արաբներ, եւ սրանց հակամարտությունների ընթացքում հաճախ մենք պետականությունը կորցրել ենք: Ընկել ենք հզոր պետությունների տիրապետության տակ եւ այլն, վերջին անգամ Հայաստանը Պարսկաստանի եւ Թուրքիայի միջեւ է բաժանվել: Միայն Ռուսաստանի միջոցով Արեւելյան Հայաստանը Պարսկաստանից անջատվեց, միացավ Ռուսաստանին, եւ անկախություն ստացանք: Եվրոպական պետությունները թույլ չտվեցին հայությանը միանալ Ռուսաստանին, Հայաստանի արեւմտյան մասը մնաց Թուրքիայի տիրապետության տակ եւ ցեղասպանության ենթարկվեց:

Չնայած Հայաստանը տարբեր պետությունների տիրապետության ներքո էր, բայց միշտ ձգտել ենք պետականության, մեր ինքնության պահպանմանը: Եվ պատահական չէ, որ 20-րդ դարը եղավ մեր պետականության դարաշրջանը՝ առաջին հանրապետություն, խորհրդային Հայաստան, եւ հիմա անկախ Հայաստան: Այն ժողովուրդները, ովքեր չեն ձգտել սեփական պետականությունը ունենալ, վերացել են պատմության թատերաբեմից:

Ի՞նչ է նշանակում պետականություն ունենալ, դա նշանակում է քո ազգային ինքնությունը, քո լեզուն, քո մշակույթը պահպանել, ովքեր չեն ձգտել պետականություն ունենալուն, չեն մաքառել այդ նպատակի համար, ձուլվել ու անհետացել են: Իսկ մենք պահպանել ենք: Արամեական ցեղեր կային, որոնք հիմա չկան, ի վերջո ասորիներն էլ պետականությունից զրկվեցին եւ այդպես շատ ցեղեր:

– Արդյոք ազգային պետական գաղափարախոսության բացակայությամբ չէ՞ պայմանավորված մեր ճանապարհի անհստակությունը, ի՞նչ եք մտածում այդ մասին: Դա՞ չէ պատճառը, որ զարգացման հստակ ուղի չունենք:

– Մենք հստակ ուղի ունենք, մեր հստակ ուղին մեր անկախությունն է, որ պիտի պահպանենք: Բայց շատ դժվար է, որովհետեւ շրջապատված ենք թշնամական, մուսուլմանական պետություններով: Ռուսաստանի հետ ենք մերձավոր, նրա հետ էլ սահման չունենք: Այնպես որ Հայաստանը դժվարին վիճակում է, եւ երկիրը մաքառում է, որ իր ինքնությունը պահպանի: Եվ մեր գիտական, մշակութային կյանքով կարողացել ենք մեզ միշտ պաշտպանել:

– Պարոն Բարխուդարյան, մեր զրույցն այսպիսի ենթատեքստ ունի՝ հետադարձ հայացք հայոց պետականությանը՝ դասեր, եզրակացություններ, հետեւություններ:

– Հայոց պետականությունն ամրապնդելու համար երկրի ներսում միասնականություն պիտի լինի, որքան հնարավոր է՝ պիտի իշխի արդարությունը, պետք է սահմանադրության դրույթները կատարվեն, պետք է օրենքը գործի եւ, եթե օրենքով գործենք, սոցիալական արդարություն լինի, եթե կրթությունը, առողջապահությունն իրենց բարձրության վրա լինեն, հայոց պետականությունը կկայանա: Մեր միասնականության, պետականության ուժեղությունը այդ հիմքի վրա պիտի լինի: Օրենքը գործի, սահմանադրությունը գործի, արդարություն լինի, եւ արտագաղթը վերանա: Հատկապես այս վերջինը մեծ վնաս է հասցնում մեր երկրին: Եվ ցավալիորեն արտագաղթում են ոչ միայն աշխատանք չունեցողները, նյութական միջոցներից զուրկ մարդիկ, այլեւ համեմատաբար ապահով մարդիկ, ովքեր այստեղ հեռանկար չեն տեսնում: Պետք է այնպես անել, որ համոզվենք, որ մեր երկրում արդարությունը, ճշմարտությունը հաղթանակել են, օրենքը գործում է, եւ դրանցով մեր երկիրն ամրապնդվում է:

– Ի՞նչ կարեւոր հարց կտայիք ինձ այս համատեքստում:

– Նույն հարցը ես կուղղեի ձեզ. դուք ինչպե՞ս եք մտածում, քանզի մարզում եք աշխատում, ավելի մեծ հնարավորություն ունեք անմիջականորեն շփվելու ժողովրդի հետ, մենք՝ գիտնականներս, մեծ չափով կտրված ենք ժողովրդից, դուք ինչպե՞ս եք տեսնում մեր պետականության ամրապնդումը:

– Իշխանությունները կառուցողական, խելամիտ քաղաքականություն պիտի վարեն, ինչը բացակայում է:

– Բայց կառուցողական, խելամիտ քաղաքականություն ասելով ի՞նչ եք հասկանում:

– Այնպիսի քաղաքականություն, որ հնարավորություն կտա այս վիճակից դուրս գալ:

– Դե, մոտավորապես այն եք ասում, ինչ ես ասացի: Քանզի այս վիճակից դուրս կգանք, եթե իշխեն արդարությունը, ճշմարտությունը, օրենքը գործի 100 տոկոսով: Եթե ոտքի կանգնեցնեն արդյունաբերությունն ու գյուղատնտեսությունը: Միայն առեւտրով ու տուրիզմով երկիր չես պահի: Խորհրդային տարիներին մենք ունեինք հզոր արդյունաբերություն, հզոր գյուղատնտեսություն: Ցավալի է, որ անցած քառորդ դարում չկարողացանք արդյունաբերություն ստեղծել, խորհրդային տարիներին ունեինք կոշիկի հիանալի արդյունաբերություն, թեթեւ արդյունաբերություն, սննդի արդյունաբերություն: Եթե ծանր արդյունաբերությունը դժվար է ստեղծել, թեթեւը հնարավոր է աստիճանաբար վերականգնել: Առանց արտադրանքի՝ արդյունաբերական, գյուղատնտեսական, երկիր պահել չի լինի: Դրանց բացակայության պատճառով գործազրկությունը մեծ չափերի է հասել, եւ դրանով է պայմանավորված արտագաղթը, որ քայքայում է երկիրը: Եվ պատահական չէ, որ Ռուսաստանի Դաշնությունում այնքան հայություն կա, որքան Հայաստանում:

– Անկախության 25-րդ տարեդարձի առթիվ ինչ կմաղթեիք հայ ժողովրդին, Սյունիքի ժողովրդին մասնավորապես:

– Կցանկանայի մեր ժողովրդի կյանքը դառնար բարեկեցիկ, արտագաղթը վերանար, որ հայ մարդը չլքեր իր պապերի երկիրը, մեկներ այլ երկիր՝ փոխանակ իր երկիրը շենացնելու: Կուզեի, որ ժողովրդի վիճակը լավանար, կարողանար շունչ քաշել, իր զավակներին կրթություն տալ, իր առողջության, կեցության հարցերը լուծել: Չթողներ իր պապերի, ապուպապերի գերեզմանները եւ օտար ափերում դեգերեր: Որ հայն իր օջախի տերը լիներ:

Զրույցը՝ ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆԻ

Հեսադարձ հայացք հայոց պետականությանը

ՎԱԶԳԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ. «Եթե պետության եւ տնտեսության զարգացում չկա, ինչքան էլ խելամիտ արտաքին քաղաքականություն վարես, ոչ մի արդյունքի չես հասնի»

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆԻ հարցազրույցը Հայաստանի Հանրապետության առաջին վարչապետ Վազգեն Մանուկյանի հետ

– 25 տարվա անկախության մեր երթի ճամփաբաժնում ենք: Դեռեւս ամեն ինչ հստակ չէ: Մեզ հուզում է հայ պետականության վաղվա օրը. ո՞ւր ենք գնում, ի՞նչ ենք ուզում:

– Եթե հարցին լուրջ պատասխանենք, ապա մարդկությունը հազարավոր տարիներ գնում է առաջ, բայց որոշվա՞ծ է, թե մարդկությունն ուր է գնում: Ինչպես երեւում է, մարդկությունն էլ չգիտի՝ ուր է գնում: Իսկ ինչ վերաբերում է անկախությանը, մինչեւ անկախություն ստանալը որոշակիորեն երեւում էր, թե մենք ինչ ենք ուզում: Մենք ասելով նկատի ունեմ ոչ միայն շարժման առաջնորդներին, այլեւ ողջ ժողովրդին: Մենք ուզում էինք անկախ պետություն ունենալ, ունեցանք, ուզում էինք, որ պետության ներսում մարդիկ ապրեին արժանավայել կյանքով, ազատ, օրենքներով պաշտպանված, հնարավորություն ունենային մասնավոր սեփականությամբ իրենց վաստակն ապահովել, բայց նաեւ իր նկատմամբ պետության հոգածությունը լիներ: Դրանք կատարվեցի՞ն, թե՞ ոչ: Մասամբ: Անկախ պետությունն ունենք, համեմատած Խորհրդային Միության ժամանակաշրջանի հետ՝ որոշակի ազատություններ ունենք, մասնավոր սեփականության ինստիտուտը գործում է, մարդը հնարավորություն ունի աշխատելու, ցավոք սրտի, այդ ոլորտում շեղում կա. ոմանց համար դա հեշտ է լինում, ոմանց համար արգելքներ են լինում, այսինքն՝ բավականին խոչընդոտներ կան: Այն երազանքներին, որոնք սկզբից ունեինք, հասել ենք. արժանավայել կյանքով ապրել, ունենալ աշխատանք, հոգատարությունը պետության կողմից լինի, մյուս կողմից՝ մասնավոր ձեւով իր կյանքն ապահովել: Երրորդ խնդիրն այն էր, որ ուզում էինք Ղարաբաղը վերամիավորվի Հայաստանին: Դա ոչ միայն մեր, այլեւ Ղարաբաղի ժողովրդի ցանկությունն էր: Ի վերջո, պատմական Հայաստանից՝ կոտորելով, բռնազավթելով մնացել էր այս մի փոքր մասը՝ փոքր Հայաստանը եւ մի փոքր հատված, որ մնացել էր հայերով բնակեցված, որ ուզում էր միանալ Հայաստանին: Քաղաքական տեսակետից, միջազգային իրավունքի տեսակետից խնդիրը վերջնական լուծված չէ, բայց ռազմական, հոգեբանական, ներքին քաղաքականության տեսակետից այդ հարցը լուծված է:

Բայց չի կարելի ասել, թե չգիտեինք՝ ուր ենք գնում: Ըստ իս, բոլոր հայերի գիտակցության մեջ նշածս ճանապարհը բավականին հստակ երեւում է, մի բան է փոխվել՝ մարդկանց վստահությունը, որ կարելի՞ է դրան հասնել, թե՞ ոչ, կլինի՞ արդար մեր պետությունը, թե՞ ոչ: Մի բան է կատարվել. խաթարվել է վստահությունը երկրի ապագայի հանդեպ: Դա էլ հիմնականում եղավ երկու պատճառով. նախ՝ ընտրությունների անընդհատ անվստահելի արդյունքներից եւ մյուսը՝ մամուլում անընդհատ հանդիպող այն երեւույթներից, որ իշխանությանը մոտ կանգնած մարդիկ կարողանում են մեծ գումարներ աշխատել, իսկ տեր չունեցողները չեն կարողանում փող աշխատել: Այդ տեղեկությունների մի մասն անհիմն է. մի մասը համընկնում է ճշմարտությանը: Եվ քանի որ թացն ու չորը խառնվել են իրար, մարդկանց մեջ անվստահություն է առաջանում:

– Ասվածից ածանցյալ մի հարց. այսօր ի՞նչ մարտահրավերներ են ծառացել մեր առջեւ:

– Մարտահրավերները շատ լուրջ եւ մեծ են: Նախ՝ պիտի խոսել արտաքին մարտահրավերների մասին: Մենք ապրում ենք մի տարածաշրջանում, նայեք, ինչ երկրներով ենք շրջապատված եւ ուղղակի, եւ անուղղակի, հյուսիսից Ռուսաստանը, որն առճակատման մեջ է Արեւմուտքի հետ, կովկասյան գոտի՝ Վրաստան, որն ի հեճուկս Ռուսաստանի, հարում է Արեւմուտքին, Ադրբեջան, որի հետ ունենք բազմաթիվ խնդիրներ, Թուրքիան, որ նորից դարձել է անկախագուշակելի եւ վտանգավոր մի պետություն՝ ի տարբերություն 1960-80-ական թվականների. նոր մի իրավիճակ է ստեղծվել այդտեղ: Աֆղանստան, Իրաք, – ամբողջն այդ տարածաշրջանի մեջ է մտնում: Այդ տեսակետից ապահովել մեզ մոտ խաղաղություն, այս առճակատումների մեջ պահպանել Ղարաբաղի

Հետադարձ հայացք հայոց պետականությանը

հարցը թեկուզ եւ այս վիճակում եւ կարողանալ գոյատեւել, ինքնին մեծ մարտահրավեր է: Բացի այդ մեծ ճաքեր են անցնում աշխարհով, իսկ մեր ժողովրդի պատմությունից գիտենք, որ ճաքերը միշտ անցնում են Հայաստանով, մի ճաքը գնում է մահմեդական-քրիստոնյա ուղղությամբ, որի պատճառով մենք միշտ տուժել ենք. այժմ նորից բավականին սրվում է, ինչը շատ վտանգավոր է մեզ համար: Չնայած պետք է ասեմ, որ կա դրական օրինակ՝ Իրանը, որ ֆունդամենտալիստական մահմեդական երկիր է, բայց հայկական գաղութն այնտեղ ապրում է՝ օգտվելով բոլոր այն իրավունքներից, ինչ իրավունքներից օգտվում է Իրանի ժողովուրդը:

Շատ լավ մոդել է, թե ինչպես կարելի է քրիստոնյան եւ մահմեդականը միասին ապրել, բայց միեւնույն է. մի օրինակով հարցը չի լուծվում. ճաքն առկա է, եւ դա մենք զգացինք Սիրիայում, թե ինչ կոտորած եղավ մեր ժողովրդի հանդեպ:

Երկրորդ մեծ ճաքը, որ գոյություն ունի, Ռուսաստան-Արեւմուտք հակամարտությունն է: Մենք բազմաթիվ թելերով կապված ենք եւ Ռուսաստանի, եւ Արեւմուտքի հետ՝ եւ մշակույթով, պատմական հիշողություններով, նաեւ մեր շահերով: Մեզ համար շատ դժվար է, երբ ճաքի կամ այս կողմում, կամ այն կողմում ես: Շատ վտանգավոր մի իրավիճակ է: Հիմնական մարտահրավերները դրսից դրանք են:

Ներքին մարտահրավերների մասին: Այս պայմաններում, երբ դու նման հարեւաններով շրջապատված ես, իշխանությունները շատ պրոֆեսիոնալ քայլեր պիտի անեն: Եվ շատ մարդիկ պիտի վստահ լինեն, որ երկրի ներսում արդարություն կա, որ օրենքները գործում են, բոլորը հավասար ենք օրենքի առջեւ, առանց դրա պետությունը զարգանալ չի կարող: Իսկ եթե պետության եւ տնտեսության զարգացում չկա, դու ինչքան էլ խելամիտ արտաքին քաղաքականություն վարես, ոչ մի արդյունքի չես հասնի, քանզի հետեւիդ կանգնած չի լինի ուժ: Իսկ ուժը միայն բանակը չէ: Բանակի հետեւին էլ կանգնած են հասարակությունը, ժողովուրդը: Շատ կարեւոր է, թե նա որքանով է վստահ ապագայի նկատմամբ եւ որքան է բավարարված նյութական ու բարոյական տեսակետից:

– Ո՞րն է մեր 25-ամյա ընթացքի ամենամեծ վրիպումը:

– Վրիպումներ շատ են եղել, բայց հանցագործություն է եղել 1995-96 թվականների ընտրությունները՝ եւ Ազգային ժողովի, եւ նախագահական, ինչպես նաեւ սահմանադրական հանրաքվեն: Մենք կառուցեցինք մի պետություն, որի զարգացման եւ առաջընթացի գլխավոր մեխանիզմը պիտի լիներ ազատ, արդար ընտրությունները: Այդ մեխանիզմը եթե քանդվում է, ավերվում է մնացած ամեն ինչը: Այդ մեխանիզմը1995-1996 թվականներին քանդվեց: Սա արդեն վրիպում չէր: Դա համարում եմ հանցագործություն մեր ժողովրդի հանդեպ: Այդ հանցագործությունը կատարվեց: Իսկ վրիպումներ եւ սխալներ բազմաթիվ են եղել:

– Կխնդրեինք դրանցից մի քանիսն առանձնացնել:

– Առանձնացնեմ: Հողի սեփականաշնորհումը, օրինակ, որ կատարվել է իմ վարչապետության օրոք, ես էլ եղել եմ հողի սեփականաշնորհման հանձնաժողովի նախագահը: 100 տոկոսով համոզված եմ, որ ուրիշ ելք չունեինք, ամենաճիշտ ելքը հողի սեփականաշնորհումն էր: Բայց մենք ծրագիր ունեինք հողի սեփականաշնորհումից հետո անցնել հողերի խոշորացմանը, բայց կամավոր սկզբունքով: Ի՞նչն է բանը: Փոքր հողակտորների մշակումն արդյունավետ չէ: Ողջ աշխարհում փոքր հողակտորների խոշորացման գործընթաց է տեղի ունենում: Երկու ճանապարհ. կամ մեկը հարստանում է, մյուսի հողակտորը գնում, դառնում է խոշոր ֆերմեր, կամ մարդիկ միավորվում են, կոոպերացիա ստեղծում, կոոպերատիվ շարժում է ծավալվում: Եթե մենք ուզում էինք գյուղը պահպանել, պիտի գնայինք հողերի խոշորացման ճանապարհով: Մենք դրա փայլուն օրինակն ունենք, օրինակ, Էռնեկյանի կողմից մոտ երկու հազար հա հողակտորի ձեռքբերումը Բաղրամյանի շրջանում, որտեղ կարողացել է խաղողի շատ լավ այգիներ հիմնել, «Կարաս» գինի է արտադրում: Դա մի ճանապարհն է: Մյուս ճանապարհը կոոպերացիայի միջոցով է, ինչպես արդեն նշեցի, ինչը հնարավորություն է տալիս գյուղը պահպանել: Գերմանիայում, Իտալիայում, Ֆրանսիայում գնացել են կոոպերացիայի ճանապարհով: Գյուղացիները միավորվել են, ստեղծել են կոլեկտիվ տնտեսություններ, արտադրություններ հիմնել, շուկայական հարաբերություններ է գործում եւ այլն: Հողի սեփականաշնորհումից հետո պետք է արագ անցնեինք այդ ճանապարհով: Բայց մինչեւ հիմա նույն վիճակն է, ինչ եղել է հողի սեփականաշնորհումից հետո:

Երկրորդ նկատառումը, որ ուզում եմ հայտնել, արդյունաբերության ձեռնարկությունների սեփականաշնորհումն է, որը կատարվեց իմ վարչապետությունից հետո: Դեմ եմ եղել, որ վաուչերներով լինի սեփականաշնորհումը: Դա շատ կոպիտ սխալ էր: Չէր կարելի սեփականաշնորհել գործարանը՝ առանց նոր սեփականատերերից պահանջելու, թե ձեռնարկությունը վերագործարկելու ինչ ծրագրեր են առաջարկում: Ի՞նչ ստացվեց իրականում. ցածր գնով գործարանը գնում էին, հաստոցները վաճառում, եկամուտ ստանում, բայց գործարանը ոչնչանում էր, փոշիանում: Գուցե այդ ամենը դիտավորյալ չի արվել: Բայց դրանք սխալներ էին, որոնք վնասել են մեր պետության զարգացմանը:

– Դուք մեր պետականության ակունքներում կանգնած անձնավորություն եք, եղել եք «Ղարաբաղ» կոմիտեի նախագահ, հայոց համազգային շարժման ղեկավար, հանրապետության վարչապետ, պաշտպանության նախարար: Եթե անցնեիք նույն ճանապարհը, խոսքը վերջին 25 տարվա մասին է, ի՞նչ սխալ կուղղեիք, ի՞նչ բացթողում կշտկեիք, ինչի՞ համար եք ափսոսում:

– Գիտե՞ք ինչ, եթե հետ նայես, բազմաթիվ սխալներ կգտնես, բայց որ նստես ու մղկտաս ու ասես, էս ինչ բանը որ չանեի, հիմա լրիվ ուրիշ կերպ կլիներ, այս պահին, համենայն դեպս, այդպիսի զգացողություն չունեմ: Չնայած շատ բաներ կային, որ կարելի էր այլ ձեւով անել, ամենակարեւորը՝ իշխանությունը չարժեր հեշտությամբ տալ այն մարդկանց, որոնց մասին նախապես գիտեիր, որ ինչ-որ մի բան ճիշտ չեն անելու: Բայց դա էլ շատ սուբյեկտիվ կարծիք է, այնպես որ չխորանանք այս հարցադրման մեջ:

– Ձեր ելույթների եւ հոդվածների ժողովածուն (Երեւան, 2002) «Հայկական երազանքը գոյատեւման փակուղում» վերնագիրն է կրում: Ո՞րն էր հայկական երազանքը եւ ինչպե՞ս հայտնվեց փակուղում:

– Հայկական երազանքը մեր զրույցի սկզբում փորձեցի մի քիչ ձեւակերպել:

Հետադարձ հայացք հայոց պետականությանը

Հայերով միշտ երազել ենք ունենալ մեր սեփական պետությունը, արժանապատիվ կյանքով ապրել եւ միշտ համոզված ենք եղել, որ աշխարհին ասելիք ունենք: Ընդ որում՝ այդ ասելիքը թրով եւ սրով չէ: Մենք մեզ պաշտպանում ենք թրով ու սրով, բայց աշխարհին շատ բան ենք տվել եւ շատ բան կարող ենք տալ, եւ 20-րդ դարի վերջում ստեղծված իրավիճակը, ոնց որ գտնված լիներ մեզ համար, մենք շատ խելամիտ պիտի գործեինք մեր երազանքը իրականացնելու համար: Ես չեմ կարող ասել, որ հնարավորությունը չօգտագործեցինք: Բայց ինձ թվում է, որ շատ ավելիին պիտի հասած լինեինք: Ցավոք, մենք բոլորս՝ առանձին-առանձին վերցված, այդքան լավ քաջատեղյակ չենք հայ ժողովրդի պատմությանը, ոչ թե այն իմաստով, թե որ թագավորը որ թագավորից հետո է եղել կամ ով ինչ ճակատամարտում հաղթեց կամ պարտվեց, այլ այն, թե հայ ժողովրդի աշխարհով մեկ սփռվածության միջոցով ինչ ենք տվել մարդկությանը, աշխարհաքաղաքական որ պրոցեսներին ենք մասնակցել: Երբ որ ծանոթանում ես այլ երկրների պատմությանը եւ տեսնում հայերի դերակատարությունն այդտեղ, նոր ես սկսում ավելի հիանալ սեփական ժողովրդով, որովհետեւ պատմական իրադարձություններ այս տարածքի վրա ավելի քիչ են տեղի ունեցել, քան այն պատմական իրադարձություններն են ամբողջ աշխարհի, որոնց մասնակից են եղել հայերը: Չեմ ուզում կենտրոնանալ դրա վրա, բայց շումերներից, աքքադներից սկսած մինչեւ հիմա ամեն ինչին մասնակից ենք եղել, եւ կարծում եմ՝ անկախությունը պետք է մեզ տար հնարավորություն նորից դառնալ մասնակից: Ըստ իս՝ ժամանակավորապես կանգնած ենք տեղում, ուժ ենք կուտակում, ամեն ինչ դեռ առջեւում է:

– Շատ են խոսում, տարբեր ամբիոններից, հեռուստատեսությամբ, մամուլով, որ մեր բանակն ամենամարտունակն է, համաձա՞յն եք ձեւակերպմանը, ի դեպ, ձեր հեղինակած հոդվածներից մեկը կրում է այսպիսի վերնագիր՝ «Հզոր բանակ ունենանք միայն պետական ընդհանուր կառույցի բարեփոխմամբ»: Հիմա էլ ե՞ք այդ կարծիքին, եւ ընդհանրապես մեր ընթացքի այս փուլում ի՞նչն է պակասում մեր բանակին (հարցազրույցը կայացել է մարտի 10-ին, խմբ.):

– Նախեւառաջ, եթե նկատի ունենանք մեր հարեւաններին, Ադրբեջանին մենք հաղթել ենք, բնական է՝ մեր բանակն ավելի մարտունակ է եղել այդ պահին: Վրաստանը կորցրեց տարածքներ՝ վատ բանակ ունենալու եւ սխալ կառավարելու հետեւանքով: Այդ տեսակետից մենք, իհարկե, իրենցից մարտունակ ենք: Այլ է բանը Թուրքիայի եւ Իրանի դեպքում: Նրանք խոշոր պետություններ են, շատ մեծ ռեսուրսներով օժտված. ուստի համեմատություն անելը բավականին դժվար է: Մի անգամ ասել եմ, նորից կրկնեմ, բանակի մարտունակությունը երկու փակագծի արտադրյալ է. մի փակագծում նշվում է, թե դու ինչքան համախառն ներքին արդյունք ունես, ինչքան փող ես ծախսում պաշտպանության վրա, քանի տանկ ու ինքնաթիռ ունես, ինչ զենքեր ունես, որքան է բնակչությունը, քանիսն են ծառայում բանակում, այսինքն՝ թվային արժեքներ են: Մյուս փակագծում գրված է՝ ինչքանով է ժողովուրդը վստահում իր ապագային, որքանով է պատրաստ պաշտպանել այն արժեքները, որոնց համար պատերազմ է մղվում, ինչքանով է արդար կառուցված պետությունը, ինչքանով է ներքեւը ենթարկվում վերեւներին: Այդ արտադրյալով Արցախյան պատերազմում մենք շատ ուժեղ դուրս եկանք: Հիմա այդ փակագծերն անընդհատ փոխվում են: Կողքի երկրները զենք են գնում, մենք էլ ենք ձեռք բերում, ներքին իրավիճակն է փոխվում: Բայց ինչքանով փոխվի Հայաստանի ներքին իրավիճակը՝ սոցիալական անարդարության մասին խոսեն եւ այլն, շփվելով մարդկանց հետ, տեսնում եմ, որ ազգային հարցում անսասան են. եթե ազգային հարցի շուրջ պատերազմ լինի, բավականին միասնական են լինելու: Բավարար լինելու տեսակետից պետության ինչ լինելն ազդում է եւ առաջին փակագծի վրա (ինչ տնտեսության ունես, ինչքան հնարավորություն ունես զենք գնելու), ազդում է նաեւ երկրորդ փակագծի վրա (թե երկրի քաղաքացին ինչքանով է վստահում իր պետությանը, իր երկրի ապագային): Մենք մարտունակ ենք, իսկապես բավականին ուժեղ ենք, բայց մեր ձեռքում է ե՛ւ թուլանալը, ե՛ւ ուժեղանալը:

– Ձեզ՝ փորձառու քաղաքական գործչիդ հնարավոր չէ այս հարցը չուղղել, ո՞րն է Ղարաբաղի թնջուկի լուծումը, ո՞րն է ստեղծված փակուղուց դուրս գալու ելքը:

– Այժմ բանակցություններ են ընթանում Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ ԵԱՀԿ առաքելության շրջանակում: Ողջունում եմ այդ բանակցությունները: Քանզի քանի դեռ դիվանագետները բանակցում են, ապա կողմերը չեն պատերազմում: Երբ բանակցությունները դադարեն, կարող է վերսկսի պատերազմը: Եթե բուն նյութին անդրադառնանք, կասեմ, որ Ղարաբաղի հարցը երեք բաղադրիչ ունի, երկուսը՝ հեշտ լուծելի, մեկը՝ անհնարին: Դժվարին լուծելին այն է, թե Ղարաբաղն ում է պատկանում. ինքն Ադրբեջանից դուրս առանձին, ինքնուրույն պետությո՞ւն է, թե՞ ոչ:

Ադրբեջանը ոչ մի դեպքում չի ընդունում, որ Ղարաբաղն իրենը չէ: Ինչ պետություններ էլ փաստաթուղթ ստորագրեն, Ղարաբաղը նորից չի մտնելու Ադրբեջանի կազմի մեջ: Համաշխարհային պատմության մեջ դրա նախադեպը չկա, երբ մեկը տասնյակ տարիների անկախություն ունենա, հետո ուրիշները ստորագրեն թղթի տակ, ինքը կորցնի անկախությունը: Այսինքն՝ Ղարաբաղն անկախությունը կարող է կորցնել միայն պատերազմի ճանապարհով, դրա համար Ադրբեջանն անընդհատ փորձում է պատերազմել: Մինչեւ Ադրբեջանը չհամակերպվի այն մտքի հետ, որ Ղարաբաղն արդեն իրենը չէ, հարցը լուծում չունի: Բայց հենց հարցը լուծվեց, մյուս երկու՝ տարածքների եւ փախստականների վերադարձի հարցերն ինքնաբերաբար կլուծվեն: Տարածքների առումով բոլոր պետություններն էլ նստում են բանակցությունների սեղանի շուրջ եւ որոշում, թե պետական սահմանները որտեղով անցնեն, միշտ էլ կարելի է հարցը փոխզիջումներով լուծել: Հենց պատերազմը վերջացավ, պայմանագիր կնքվեց խաղաղության մասին, փախստականների հարցը կարելի է լուծել, որ մարդիկ վերադառնան այն տները, որտեղ ապրել են:

Բայց Ղարաբաղի կարգավիճակի հարցը բանակցությունների միջոցով լուծում չունի. Ղարաբաղը ոչ մի դեպքում չի ընդունում, որ Ադրբեջանի կազմի մեջ է, չի էլ երեւում, որ Ադրբեջանն ընդունի, որ Ղարաբաղն իր կազմի մեջ չէ: Այս ամենից ելնելով՝ առայժմ հարցի լուծում չեմ տեսնում եւ ողջունում եմ բանակցային գործընթացը: Բանակցություններն ինչքան երկար շարունակվեն, այնքան

Հետադարձ հայացք հայոց պետականությանը

լավ, որովհետեւ հարցը մաշվում է: Երբ նույն վիճակը երկար է մնում, տասնյակ տարիներ մարդիկ համակերպվում են այդ մտքի հետ:

– Անցնենք քաղաքամայր Երեւանին: Ունենք մի հանրապետություն, որ թող ներվի ասել՝ հայտնի ձուկն է հիշեցնում. գլուխն ավելի մեծ է, քան մարմինը: Գիտությունը, մշակույթը, քաղաքակրթությունը կենտրոնացված են մայրաքաղաքում, իսկ մարզերն աղքատ ազգականի կարգավիճակում են: Ստեղծվել է մի մտայնություն, ըստ որի հանրապետություն ասելով մայրաքաղաք Երեւանն են պատկերացնում: Չե՞ք կարծում, որ ծանրության կենտրոնը պետք է մայրաքաղաքից տեղափոխել մարզեր: Հնարավո՞ր չէ Երեւանը փոքր-ինչ «բեռնաթափել»:

– Այդպես է, բայց խոսքն ուրիշ բանի մասին է: Խնդիրն այն է, որ կարո՞ղ ենք միջոցներ ձեռնարկել, որ մարզերն էլ նույն ձեւով զարգանան: Կենտրոնական բանկը առաջարկում էին տեղափոխել Դիլիջան: Ասենք, ֆինանսների նախարարությունն էլ տեղափոխենք Կապան, դրանով ի՞նչ կփոխվի: Երբ հանրապետությունը տնտեսապես բարվոք վիճակում չէ, կարծում եմ, արհեստական քայլեր անելը վտանգավոր է, ժամանակը չէ: Այլ բան, որ կարելի է արտոնություններ տալ մարզերին, որ ինքնուրույն զարգանան, որ իրենց ներքին մարդկային ու նյութական ռեսուրսներով աճեն: Հիմա մասնավոր տնտեսություն է: Մասնավոր սեփականատիրոջը չես կարող ասել՝ գնա եւ Կապանում աշխատիր: Չի գնա: Բայց դու կարող ես Կապանում այնպիսի պայմաններ ստեղծել, որ նա գոնե գրասենյակը գրանցի Կապանում: Ոչ մեկը չի կարող մասնավորին կարգադրել:

– Մեր պետական խորհրդանիշների՝ օրհներգի եւ զինանշանի փոփոխման հարցերը եւս մշտապես քննարկման առարկա են: Դրա անհրաժեշտությունը կա՞, ի՞նչ եք կարծում: Ոմանք, օրինակ, առաջարկում են վերադառնալ հին օրհներգին՝ թողնելով խաչատրյանական մեղեդին, բայց փոխելով օրհներգի տեքստը: Առաջարկություններ կան նաեւ զինանշանի վերաբերյալ:

– Երբ նոր էինք եկել իշխանության, ստեղծվեց երկու հանձնաժողով, որոնց նախագահը ես էի որպես վարչապետ, մեկը՝ անկախ Հայաստանի օրհներգի, մյուսը՝ զինանշանի: Բոլոր հայտնի կոմպոզիտորները եւ նկարիչները մասնակցություն ունեին հանձնաժողովին: Որպես զինանշան՝ առաջարկում էին առաջին հանրապետության զինանշանը՝ որոշակի փոփոխություններով կամ Խորհրդային Հայաստանի զինանշանը՝ իհարկե հանելով սոցիալիստական ատրիբուտիկան, բայց պահպանելով Արարատը: Անկեղծ ասած՝ ես կողմ էի այդ տարբերակին, որ Արարատը պահպանվեր զինանշանի վրա: Օրհներգի վերաբերյալ ասեմ, որ փորձում էին նոր բան գրել, այդպես էլ նոր բան չծնվեց, համենայն դեպս՝ հանձնաժողովին ոչ մի բան չներկայացվեց: Իմ՝ վարչապետության պաշտոնը թողնելուց հետո խորհրդարանը մեծ արագությամբ ընդունեց երկուսն էլ: Այսինքն՝ այն ժամանակ ես կվիճեի, բայց երբ զինանշանն ու օրհներգն ընդունված են, կարծում եմ՝ արդեն չարժե նման խնդիր քննարկել: Օրինակ, շատ կուզեի, որ զինանշանի մեջ Արարատ լեռը լիներ: Բայց եթե արդեն ընդունել են զինանշանը, ինչո՞ւ պիտի փոխել: Չի կարելի անընդհատ ամեն ինչ փոխել: Երեւանի հին տները քանդում են, նոր տներ են կառուցում: Ուզում ենք ամեն ինչ նոր լինի, մի քանի հազար տարվա ազգ ենք, աշխատում ենք ոչ մի բան չպահպանել, այլ ջնջել, նորից սկսել: Հիմա ի՞նչ իմաստ ունի փոխելու մասին մտածել:

– Դուք հանրային խորհրդի նախագահն եք, դա եւս նոր կառույց է՝ մեր նոր ժամանակների, երկու խոսքով ներկայացրեք այն:

– Մոտ 70 երկրում կա հանրային խորհուրդ, որոնք որոշակի դերակատարություն նրա հասարակական-քաղաքական կյանքում ունեն: Հանրային խորհուրդների նախագահները նախկինում գործադիր իշխանությունում բարձր պաշտոն զբաղեցրած մարդիկ են՝ վարչապետ, նախարար եւ այլն: Հիմնականում ի՞նչ խնդիր են լուծում հանրային խորհուրդները: Մի խնդիրը քաղաքացիական հասարակության կառուցումն է: Ի՞նչ է նշանակում քաղաքացիական հասարակություն: Երբ քաղաքացիները միասին հավաքվում են, միավորվում են եւ իրենց ձայնը բարձրացնում, որ իրենց պահանջը, ասենք, Ազգային ժողովով անցնի: Քաղաքացին միայնակ չի հանդես գալիս, այլ խմբակային: Որքան պետությունը զարգացած է, նույնքան կայացած է քաղաքացիական հասարակությունը: Այնուհետեւ՝ անընդհատ պրոբլեմ է առաջանում իշխանության եւ ընդդիմության միջեւ, երբեմն ընդդիմությունն է ճիշտ լինում, երբեմն՝ իշխանությունը: Ընդդիմությունը կարող է առաջարկել մի նախագիծ, որ պետականության տեսակետից ճիշտ է: Բայց իշխանության համար դժվար է ընդդիմության նախագիծը վերցնել, որովհետեւ ընդդիմությունն իր դեմ պայքարում է իշխանության համար: Հանրային խորհուրդը, գտնվելով երկուսի արանքում, անընդհատ կապի մեջ լինելով իշխանության հետ, ասում է՝ այս առաջարկությունը ճիշտ է, եկեք սա՝ իրականացնենք: Այսինքն՝ միշտ անհրաժեշտություն կա մի մարմնի՝ բուֆերի, որ լինելով երկուսի արանքում, կարողանում է հակասությունները հարթել: Կարճ ասած՝ հանրային խորհուրդը երկխոսության հարթակ է, որտեղ կարող են լինել ե՛ւ իշխանավորները, ե՛ւ ընդդիմադիրները, տարբեր քաղաքական ու տնտեսական շահեր ունեցողները եւ այդ հարթակը օգտագործելով՝ գտնել փոխզիջումային լուծումներ:

– Անկախության 25-ամյակի առիթով ի՞նչ կփոխանցեիք մեր ժողովրդին:

– Նախեւառաջ կուզենայի, որ ժողովուրդն ավելի շատ սիրեր իր երկիրը, եթե ինքն ինչ-որ տեղ դեմ է իշխանություններին, դա չդառնա դեմ լինել հայրենիքին: Երբ տեսնում է, որ մի բան անարդար է, արդար ձեւերով պայքարեր դրա դեմ: Փորձեր կամաց-կամաց հարցերը լուծել: Միանգամից հարցերը չեն լուծվելու: Աշխարհում ոչ մի տեղ էլ չեն լուծվում: Նայեք, Ֆրանսիայի պես պետությունում ամեն տարի ֆերմերները ցույցեր են անում: Որովհետեւ անընդհատ պայքարելու տեղ կա: Չկա այնպիսի պետություն, որտեղ պայքար չլինի: Բնականն այն է, որ մարդիկ սովոր լինեն պայքարել եւ սիրեն իրենց երկիրը: Սիրելու առավել մեծ չափաբաժին անհրաժեշտ է իշխանություններին: Խոսքը երկիր սիրելու մասին է: Բայց ժողովուրդը կարողանում է ճնշում գործադրել, ընտրություններին մասնակցել եւ այլն: Դա էլ պետք է ուղեցույց լինի իշխանությունների համար:

Հեսադարձ հայացք հայոց պեսականության

Պատմության քառուղիներով

ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑ

Պատմության քառուղիներով մենք քայլել ենք երկար՝
Անդեկ, ցաքուցրիվ, անգաղափար,
Վին դարերից մինչեւ այս հանճարեղ ներկան,
Որ հուրհուրատում է մեր դեմ գալիքնափայլ:
Այն անգո առավոտից, երբ լեգենդական
Իր խարույկն է վառել մեր անգո նախահայրը,
Այս Մասիսի հանդեպ, այս անիրական
Արարատյան դաշտում, - որպես գրույց անծայր մի
Տարածվել է ուղին մեր անպատմելի,
Անծայրածիր ձգվել դարերով ձիգ
Եվ գնում է այսօր ու երկարվում էլի
Դեպի ի՜նչ անհայտ ափեր ու գալիքներ անծիր...

Բայց ուղին մեր եղել է միշտ մթին,
Եղել է անանուրջյուր ու անփառունակ,
Տարածվել անբոց ու անժպիտ՝
Ուրիշների փայլով շարունակ
Շառագունված - որքա՜ն, որքա՜ն աղետավոր...
Որպես անմիտ գրույց՝ մեզ պատմել են մի օր
Նախնիների մասին մեր փառապանծ,
Բայց օրերի հեռվում ես տեսնում եմ միայն
Սրրկություն, մոխիր, մոռացություն ու մահ
Եվ երկրային ընթացք մի անիմաստ...
Եվ ես, ահավասիկ, հին գրերով այս մեր
Իմ տողերը կոփող մի պոետ -
Ի՜նչ խոսքերով երգեմ եւ ինչ տենդով պատմեմ
Մեր անանցյալ անցյալը, մեր ընթացքը, որ էլ
Ո՛չ մի գուսան երգով չոգեկոչի հին փառքը
Ու կարոտով անմիտ ետ չնայի, -
Չպանծանա այլեւս, որ առանց մեզ աշխարքը
Կլիներ պարտեզ մի ամայի...
.....
.....
Պատմության քառուղիներում առաջնորդել են նախ
Մեզ նախնիներ անստույգ ու ոչնչատեսիլ,
Մոայլ հեռուներում անճանապարհ առկախ,
Որ իրենց մորթի հետ միասին
Տարել են բախտը մեր թավալգլոր
Երկրներից երկիր, - օ, տառապանք երկար, -
Նշել են մեզ համար ուղի աղետավոր,
Եվ տոտեմը եղել է մեր - գայլ...
Օ՜, նախնիներ՜... Տեսնում եմ ահավասիկ. -
Վին դարերի խորքում, ուղիներով մոայլ,
Քաղցած, քոսոտ, անբուրդ, դեպի լյառը Մասիս
Քայլում է առասպելյալ մեր գայլը...
Վենց առաջին օրից բզկտված են նրա
Նիհար կողերը - բյուր գազանների կողմից, -
Եվ կողերով կարմիր ահա քայլում է նա
Դեմքը տված գալիք փորձանքների հողմին: -
Որտեղի՜ց է եկել նա, այդ գայլը,
Եվ ինչո՞ւ է արդյոք նա առաջին օրից
Մարսափահար հայացքը հառած լուսնի փայլին՝
Աղեկտուր ոռնում իր սարսափը խորին:
Եվ նա գիտե՞ արդյոք, այդ բզկտված գազանը,
Որ նշված է արդեն նրա ուղին
Ապագայի գրքում, - որ տարիներ հազար
Քայլելու է այդպես անուղի, -
Որ պատմության մոայլ քառուղիներում
Նա բազմաթիվ դարեր պիտի այդպես տանի
Իր բզկտված կողերը - դեպի ի՜նչ անհայտ հեռու,
Ի՜նչ արուտներ կարմիր ու արնանիստ...
Օ, չի եղել մեր գայլը պղնձյա
Եվ ոչ մարմարիոնյա, եւ ոչ անգամ քարե, -
Նիհար, կողերը լերկ, նա անցել է անծայր
Տափաստաններ, մինչեւ նա հանգիստ է առել
Այս Մասիսի հանդեպ անիրական,
Այս խորշակյալ, անդուռ Արարատյան դաշտում,
Եվ՝ լուսնի դեմ նստած՝ նա երկար
Ոռնացել է իր վիշտը անկշտում, -
Ոռնացել է անձուկ իր տառապանքը,
Անասնական իր քաղցը, - եւ ոռնոցը նրա
Դարձել է հիմնը մեր անարձագանք -
Ու դարերով հնչել մեր պատմության վրա...
.....
.....
Ապա առաջնորդել են մեզ տարիներ երկար
Արքաներ անժողովուրդ եւ գահազուրկ,
Որոնց փառքը՝ մեր հին մատյաններում երգած՝

Հեսադարձ հայացք հայոց պետականությանը

Եղել է եղկություն ու քծնություն քսու: -
Օ, դո՛ւք, մեր վաղեմի առաջնորդնե՛ր,
Առասպելյալ Հայկեր ու Տրդատներ բազում,
Իշխաններ անխառնուկ, սին ըղձերի ճորտեր,
Արքաներ անժողովուրդ ու գահազուրկ, -
Դո՛ւք, որ դարեր երկար, հազարամյակներ,
Ուրուների նման անկերպարանք
Ապրել եք ու կանգնել օդե ապարանքներ,
Օտար խարույկներից հայցել ոգու կրակ, -
Որ ամբողջ ձեր գոյության հազարամյակներում
Չեք ծնել եւ ո՛չ մի խոհ սերունդների համար -
Ո՞ր, ո՞ր պատմիչը ձեզ պիտի կարդա ներում,
Օ, դո՛ւք, անպտուղ պարտեզներ ու խորաններ ամա...
.....
.....
Ապա առաջնորդել են մեզ դարիներ երկար
Ֆեոդալներ շվայտ ու իշխաններ չնչին,
Հազար երանգներով իրենց դեմքը ներկած, -
Եվ մեր անմահության ակունքները այն ջինջ
Պղտորել են ոխով ու ոչնչությամբ,
Չնչին տենչանքների անխոհությամբ ոսին,
Փաթաթելով վզին մեր մի ճորտային շղթա,
Սերմանելով մեր ողջ ժողովրդի մասին
Ոչնչության սերմեր, անխոհության,
Թշվառ անհողության եւ աղապատանքի,
Եվ դրել են դեմքին մեր կնիքը գերության,
Սնել թշվառ կաթով ապաշնորհի կյանքի...
.....
.....
Իսկ նոքա՞, որ եկել են իշխաններից հետո, -
Վերջին ասպետները մեր խեղճության խորին,
Սնված նախնիների անհողության կաթով, -
Օ՜, վարդապետ Մինաս, կամ Իսրայել Օրի, -
Այն ի՜նչ տենչեր են վեհ, ու անխորտակ ու խոր,
Որ սերմանել եք դուք երկրներում օտար,
Եվ ո՞ր, եւ ո՞ր, եւ ո՞ր նպատակի շողով
Զգտել եք կյանքը մեր անմիխթար
Հանել ափունքներից այն սեւ ու ապերջանիկ,
Նշել սերունդներին ուղի պայծառ, -
Եվ ձե՛զ պիտի արդյոք մենք երգենք հիմն -
Ձեր ո՞ր խոհին, կամ ո՞ր երազանքին անճառ...

...Ահավասիկ ելած մեր լեռներից այն բարձր,
Ուր վառվում էր հույսի մեր խարույկը վերջին,
Շուրջը - խավար գիշեր ու մառախուղ մի թանձր,
Շուրջը - ժայռեր մռայլ ու բարդիներ վերձիգ, -
Ու թանձրացյալ մուժում - ապարանքներ ահա՝
Փոքրիկ, ողորմելի, խեղճ -
Իրենց մութ պատերում մի բուռ ոսկի պահած,
Եվ ո՛չ մի, ոչ մի մեխ, -
Ո՛չ մի կտոր երկաթ, կամ անագե շաղափ,
Կամ մարմարյա մի սյուն, կամ թեկուզ կիր,
Որ փորձության պահին անձրեւներից միայր
Եվ իր ծուխը խառներ ըմբոստության երգին...

Ապարանքը - այսպես: - Իսկ ներքեւում - խուղեր՝
Գետնափոր, ստորերկրյա, ցաքուցրիվ,
Թաղված գանգի պես խուլ, գանգի պես անուղեղ,
Կարծես մի խեղճ նախիր
Արածելու ժամին կայծակնահար՝ հանկարծ
Կըծկըվել է ահից ու մոխրացել -
Եվ մնացել է տեղը մի մոխրաբույր զանգված՝
Դարերով անջրդի ու հողմածեծ...
Եվ նոքա - մեր անդեկ առաջնորդները,
Այդ իշխանները եղկ, այդ տերերը վերջին,
Ելել են գիշերով ու մենակ ճամփորդել են
Դեպի հյուսիս, դեպի հյուսիսային որջի
Արջերը սառցասիրտ ու արնաթաթախ, -
Այդպես մեր գայլն էր հին ճանապարհվում որսի՝
Ցոնծված, կողերը լերկ եւ անապատ...

Ես տեսնում եմ նոցա: - Իմ աչքերի առջեւ
Ահավասիկ իրենց եղկ հասակով ամբողջ՝
Իրենց խուլ խուղերից ու լեռներից այն բարձր
Ճանապարհ են ընկնում՝ անուղի ու անխոհ: -
Ելած որոնելու հորիզոններ, գալիք
Սերունդների համար արահետներ ուղիղ -
Ի՜նչ են տանում նոքա ուրիշներին տալու,
Այն ի՜նչ բերքեր երկրի ու բարիքներ հողի...
Այն ի՜նչ գանձեր արդյոք, ի՜նչ արգասիք ու բեռ,
Ի՜նչ ոսկիներ ոգու ու գորության...
Ո՛չ: - Տանում են նոքա, որպես շնորհ առձեռն,
Կարավաններ ահի ու թշվառության: -

Ելած որոնելու գալիքների շավիղ,
Ապագայի ընթացք ու հորիզոն -
Նոքա կրում են լոկ անանձնական ցավի
Ու հանգուցյալ փառքի մեռելային կավիճ՝
Հազարամյա մեր դեմքը երիզող...
Եվ անվավեր փառքի առասպելյալ փայլով
Շողարշելով խեղճությունն հազարամյա -
Միջնորդել են նոքա հյուսիսում ու այլուր՝
Ներքինատիպ, զազիր ու զառամյալ...
Խոստացել են նոքա իրենց երբեք չեղյալ
Փառապանծ անցյալի անունով -
Առաջնորդել նոցա Երկիրը Ավետյաց՝
Հանուն Որդու, Հոգու եւ հանուն Հոր...
.....
.....
Այսպես անցել ենք մենք անխոհ ու անգաղափար
Պատմության քառաղիներով, որպես միրաժ, -
Կտրել ենք երկար մի ճանապարհ
Եվ ճանապարհը մեր այս
Ե՞րբ է արդյոք, ե՞րբ է փայլատակել, օ, ե՞րբ,
Ե՞րբ է վառվել լույսով գալիքնափայլ, -
Եվ ո՞վ, եւ ո՞վ է մեր ապագային տվել
Անիզելի ընթացք ու գաղափար...
.....
.....
Իսկ նրանցից հետո ահավասիկ իմ դեմ
Մի ձեռք, որ զորություն է տալիս գրչիս -
Մեր պատմության գրքից դարձնում է մի թերթ

Հեսադարձ հայացք հայոց պետականությանը

Եվ բացում է էջը նախավերջին, -
Եվ հանդես են գալիս - անկերպարանք անդեմ -
Երեկվա մեր տերերը չնչին: -
Օ, վաշխառու ճորտե՛ր, հացկատակներ, մթին
Սերմանողներ քամու ու մուրացկանության, -
Մեզ ժառանգած գանձի, օ, վատնիչներ հերին,
Որ ափերում հեռու ձեզ ապատրան գրած -
Կերտեցիք դղյակներ ու ապարանքներ,
Մեր անունից մորիկ սերմանեցիք -
Եվ այսօրվա ձեր խեղճ ոչնչությանն անգետ
Վերջին խարիսխը մեր
Վաճառքի հանեցիք...
Եվ կործանվեց ձեր փառքը:- Ապարանքները ձեր
Միրաժների նման անապատի
Անէացան մի օր - եւ ո՛չ մի ձեռք
Չդրոշմեց ձեր հետքը պատմության ճակատին...
Որպես փոշի - անցաք, որպես քամի,
Եվ ո՛չ մի, ո՛չ մի մատյան
Չի նշելու երբեք ձեր ցնորքը անհիմն
Իր էջերում անջինջ ու անհատյալ...
Անէացավ ձեր փառքը: - Եվ այն, որ դեռ ունեք
Աշխարհի բոլոր հեռուներում -
Կկործանվի մի օր ամենուրեք
Եվ գալիք պայծառ օրերում
Ո՛չ մի գուսան երբեք իր երգերում հնչեղ
Չի կարդա նզո՛վք անգամ ձեզ, -
Դո՛ք, որ միայն ոգու խեղճություն եք ցանել
Եվ գալիքում - տխուր մոռացություն հնձել...
.....
.....
Իսկ ժողովո՞ւրդը, որ եղել է հանճարեղ,
Եղել է որմնադիր, եղել է կառուցող,
Քաղաքներ է շինել, պարիսպներ է շարել,
Կամուրջներ է գցել կոր գծով, -
Որ դարերի միջով մինչեւ այգն այս հասած՝
Կրել է մեջքի վրա իր,
Օ՜, եղկելի տերե՛ր, զազիր ու բազմազան
Ձեր բռնությունը բիրտ...
Ունի՞ արդյոք թեկուզ մի աննշան մասնիկ
Վասպրակներում ձեր այս անքանքար -
Ժողովուրդը, որ իր աշխատանքն է ազնիվ
Ձեր սեղանին բերել՝ արնաքամ: -
Օ, ո՛չ: - Ապրել է նա իր ճորտային կյանքով,
Խոր խավարում՝ արեւ երազել, -
Եվ երգել է դարեր իր ռամկական հանգով
Իր խոհերը արդար ու վսեմ:
Ստեղծել է նա իր հեքիաթները, - եւ իր
Հնամյա վեպում հանճարեղ -
Իր ապագա կյանքի գաղափարը կարմիր
Եվ անմահ խորհուրդն է դրել:
Խոր գերության ներքո, այնուամենայնիվ,
Պատմության քառուղիներում ոլորապտույտ,
Պայքարել է ոգով, մաքառել է նա միշտ,
Եվ չի կորել դաժան տարիներում այն մութ: -
Խո՛ր գերության քարե կամարների ներքո,
Բռնության տակ հայրենի եւ օտար,
Նա մեր անպարտ ոգու ստեղծարար բերքի
Ճանապարհն է հարթել անդադար:
Այդ ճանապարհն է, որ չնչին արքաների
Եվ բոլո՛ր տերերի ոչնչությանն ընդդեմ -
Դարձել է ոգին մեր - այնքա՛ն բերրի,
Ամե՛ն ճորտության անընտել:
Այդ ճանապարհը ձգվում է ահավասիկ
Մեր օրերից մինչեւ միջնադարյան հեռուն,
Մինչեւ դարերը հին, ուր մենք հազի՛վ ենք
Պատմության ընթացքը տարբերում:
Քայլել են քարքարոտ այդ ճանապարհով
Գորշ, անանուն մարդիկ, գեղջուկ ճորտեր, -
Կրել են կրծքերում գաղափարներ գերող,
Ստեղծարար մտքեր, բոցե բառեր, որ դեռ
Չեն խոյացել երկինք, չեն ընդունել դեռ ձեւ,
Բայց կհառնեն մի օր կերպավորված, -
Օ՜, հանճարե՛ղ ոգու դեռ չբացված գանձե՛ր,
Եվ հանճարի հանքե՛ր դեռ չփորված...
Այս է տվել նրան ոգու անհուն կորով
Եվ այս է մեզ փառք սահմանել, -
Բայց կարո՞ղ էր արդյոք՝ կապանքներում գերող՝
Իր հուրը անեղծ նա պահել...
Արքաների օրով եւ իշխանների
Կքել է ճորտության կապանքներում նա լուռ,
Եվ անգամներ բազում նա քշվել է գերի
Եվ գերությունը իր կրել է համր ու լուռ: -
Եվ գերության գրկում կեղեքող
Յուրաքանչյուր գերին՝ աչքը ահեղ մահի՝
Ծածկել է խեղճության թաղիքով
Իբրեւ անգին մի գանձ, իբրեւ ավանդ վերին՝
Իր հանճարեղ ոգու կրակն անշեջ,
Ստեղծարար այն հուրը, - եւ բոլորից թաքուն
Վառել է միայնակ, վախվրդխելով, ինչպես
Հանցագործն է վառում իր լապտերը միգում:
Ջլատվել է այսպես ժողովրդի անեզր
Հավաքական հանճարը զարկիչների հանդեպ, -
Եվ դարձել է ահա ժողովուրդը եւս,
Իր տերերի նման, անուղի ու անդեմ...
Իսկ ապա, երբ փոխվել է ընթացքը դարերի,
Երբ դարերում մարել է թիթեղյա,
Սակայն շլացուցիչ պորփյուրն արքաների -
Եվ արքաների տեղ այն
Ոսկի՞ն է նվաճել իշխանություն ու փայլ,
Բաժանել արյունոտ դափնիներ,
Պետություններ կանգնել, ուր պճնություն ու փառք
Կարելի է գնել, -
Նա քշվել է կրկին նախիրների նման
Դեպի թիարաններն անհաց աշխատանքի,
Եվ վասպրակել այնտեղ մինչեւ ի մահ՝
Ընտելացած արդեն անինքնուրույն կյանքի:
Եվ անհաց վասպրակի այդ թիարաններում,
Ինչպես առաջ՝ դաշտերում ճորտության -
Վիճակվել է նրան մի կապարե հեռու
Կրկնակի՜ տառապանքի եւ գերության:
Նրա գլխին շաչող այդ նոր խարազանը
Եղել է երկաթյուղ, ինչպես քիստ, -

Հեսադարձ հայացք հայոց պեսականության

Սարդարապատի հերոսամարտի հուշահամալիր (1968թ.)

Եվ վասպակը ոգու, որ սրբազան է -
Արգելված է եղել նրան միշտ:
Բայց առաջին անգամ իր գոյության չարքաշ
Հազարամյա ուղու ընթացքում -
Նա այսպե՛ղ է տեսել շողշողացող մի այգ,
Որ պայքարով է բացվում...
.....
.....
Եվ այսպես - պատմության քառուղիներով
Անցել ենք մենք անդեկ ու անգաղափար,
Շառագունված անվերջ ուրիշների հրով, -
Եվ մեր ճանապարհը անփայլ
Եղել է ճանապարհ ունայնության, մահի -
Եվ չե՞նք կարող այսօր ձեզ մեծարել
Օ, նախնիներ՛ մեր խեղճ, առաջնորդներ՛ մեր հին, -
Մեր պատմություն անդեմք ու անհանճարեղ...
*Ահավասիկ ե

Հայաստանը երգերի մեջ

ԴԱՆԻԵԼ ՎԱՐՈՒԺԱՆ

Զոն

Եղեգնյա գրչով երգեցի փառքեր.
- Քեզի ընծա՛, իմ հայրենիք -
Սոսյաց անտառեն էի զայն կըտրեր...
- Քեզի ընծա՛, հին հայրենիք -
Եղեգնյա գրչով երգեցի քուրմեր.
Ընդ եղեգան փող լո՛ւյս ելաներ:
Եղեգնյա գրչով երգեցի կարոտ.
- Քեզի ընծա՛, հայ պանդուխտներ -
Ան դարաշիարհիկ բույսի մէ՛ր ծըղոտ...
- Քեզի ընծա՛, հեգ պանդուխտներ -
Եղեգնյա գրչով երգեցի հարսեր.
Ընդ եղեգան փող ո՛ղբ ելաներ:
Եղեգնյա գրչով երգեցի արյուն.
- Քեզի ընծա՛, սուրի զոհեր -
Ան ծլած էր մոխրի մեջ իբրեւ կընյուն...
- Քեզի ընծա՛, կրակի զոհեր -
Եղեգնյա գրչով երգեցի վերքեր.
Ընդ եղեգան փող սի՛րտս ելաներ:
Եղեգնյա գրչով որբ տունս երգեցի.
- Քեզի ընծա՛, հայր ալեհեր -
Յամաքած աղբյուրեն մեր զայն հոտեցի...
- Քեզի ընծա՛, մայր կարեւեր -
Եղեգնյա գրչով օճախս երգեցի.
Ընդ եղեգան փող ծո՛ւխ ելաներ:
Ու պայքա՛ր, պայքա՛ր, պայքա՛ր երգեցի.
- Քեզի ընծա՛, հայ մարտիկներ -
Գրիչս եղավ անթրոց սըրտերու հնոցի...
- Քեզի ընծա՛, քաջ մարտիկներ -
Եղեգնյա գրչով վըրեժ երգեցի.
Ընդ եղեգան փող բո՛ց ելաներ:

ՍԻԱՄԱՆԹՈ

Հույսին համար

Գաղափարներու ո՞ր հովիտներեն պիտի գաս եւ
ե՞րբ պիտի լուսնաս, ո՛վ Հույս,
Ե՞րբ, որպեսզի ես ալ իմ երկու Ձեռքերս, կարոտեն
ու սպասումեն դողդոջուն,
Արշալույսիդ քրքումներուն երկարեմ, կյա՛նք
պաղատողի մը պես, երկարե՛մ...
Անոնց հոսանքին առջեւ, իմ ազատության առաջին
նայվածքս բանալու համար:
Եվ ի՜նչ ծովերեն խոր հուզում պիտի թափես մեր
հոգիներուն աշխարհներեն ներս,
Ի՜նչ կնճիռներ պիտի ջնջվին մեր վշտակոծ ու
տժգունած այտերեն,
Ո՛րչափ ժպիտ պիտի ծաղկի, հրեշտակորե՛ն, ո՛րչափ
ժպիտ մեր աչքերուն մեջ,
Ո՛րչափ հառաչ պիտի մեռնի, ո՛րչափ արյուն եւ
ո՛րչափ արցունք պիտի ցամքին...
Մոխիրներու հողը ծաղկաստան մը պիտի դառնա,
դրախտային եւ անթառամ,
Եվ բազմահազար աղբյուրները, իրենց հեծեծանքը՝
հովիվներուն հետ՝ երգերու պիտի փոխեն,
Սեւ անձրեւներուն տեղ՝ հայրենի աստղերեն,
կապույտ եթերն է որ վար պիտի թորա,
Եվ գառնուկներ պիտի ծնին առվակին եզերքը եւ
մարմանդներուն վրա...
Գեղուհիներու էն գեղանին քու քղանցքիդ առջեւ իր
խունկը եւ իր ծաղիկը պիտի թափե,
Եվ կեղծիքին տաճարները պիտի քանդենք՝ քու
Տաճարդ կերտելու համար.
Ժպիտե այրի ցեղը վերջապես կանաչ պիտի հագնի,
եւ դառնասիրտ թշնամին՝ սեւ...
Եվ գերեզմանները, մեր քայլերուն տակ, կմախքի
անտառներե՛, դանդաղորեն պիտի շարժին:
Երազուն ճակատիս համար ամառվան տերեւանքեն
պսակներ պիտի հորինեմ,

Հայաստանը երգերի մեջ

Եվ ծիածանե վերարկուս, հովերուն հետ, ուսերուս
վրա, արծիվի մը պես պիտի ծփա...
Ու երեւնուսե սրինգս՝ շունչիս, կամ գեղաքանդակ
քնարս՝ ձեռքս առած,
Ոսկիե դաշխուրանես, ասպուածներու գինի են, գինի՛,
գինի՛, գինի՛ պիտի ըմպեմ...
Եվ հետո ես՝ ցնծության եւ Հույսերու կարմիր Ջահերը
կռապաշտորեն պիտի վառեմ...
Եվ անդրառներուն համանվագը, քու փառքիդ համար
մրրիկներ պիտի երգե,
Սուրերը, մեր ծունկերուն դիմաց կորդրդելեն՝
արյունոտ կամ անբիծ, անցյալին պիտի նետենք,
Եվ Հայ գինվորին պղինձե շեփորը պիտի պատռի՝
հաղթանակի Ռազմերգին որոտումեն...

Ափ մը մոխիր, Հայրենի փուն

Ա
Ավա՜ղ, ապարանքի մը պես մեծ էիր եւ շքեղ,
Ո՞ւ ես՝ երդիքներուդ ապիտակ կապարեն,
Ասպղածորան գիշերներու լուսին հետ,
Վարեն, ահեղավազ Եփրատին կո՛ւնկնդրեի...:
Բ
Արցունքո՜վ, արցունքո՜վ լսեցի որ ավերակ առ ավերակ
Քու լայնանիստ պատերդ իրարու վրա կործանեցին,
Սարսափի օր մը, կորորածի օր մը, օր մը արյունի...
Ջքեզ եզերող պարտեզիդ ծաղկըներուն վրա:
Գ
Ո՞ւ մոխրացա՜վ այն սենյակը կապույտ,
Որուն որմերուն ետեւ եւ գորգերուն վրա
Իմ երջանիկ մանկությունս կը հրմվեր,
Եվ կյանքս կ՛ճաեր եւ հոգիս իր տեսերը կ՛առներ...
Դ
Փշրեցա՜վ, ուրեմն, այն հայելին ոսկեծիր,
Որուն եթերային խորությանը մեջ,
Երազներս, հույսերս, սերերս եւ կամքս կարմիր,
Տարիներով, մտածումիս հետ, ցոլացին...:
Ե
Ո՞ւ բակին մեջ երգող աղբյուրը մեռա՜վ,
Ո՞ւ կորդրդեցա՜ն պարտեզիս ուռին եւ թթենին.
Եվ այն առվակը որ ծառերուն մեջեն կը հոսեր,
Ցամքեցա՜վ, ըսե՛, ո՞ւր է, ցամքեցա՜վ, ցամքեցա՜վ...
Զ
Օ՜, այն վանդակին կ՛երազեմ հաճախ,
Որուն մեջ գորշագույն կաքավս, առավոտուն,
Արեւածագին հետ եւ վարդի թուփերուն դիմաց,
Զարթնումի ժամուս՝ հստակորեն կը կարգեր...:
Է
Հայրենի՛ փուն, հավատա՛ որ մահես հետո,
Քու ավերակներուդ սեւին վրա իմ հոգիս
Պիտի գա, որպես փաստրակ մը փարագիր,
Իր դժբախտի երգն եւ արցունքը լալու...:
Ը
Բայց ո՞վ պիտի բերե, ո՞վ պիտի բերե, ըսե՛,
Քու սրբազան մոխիրեդ ափ մը մոխիր,
Մահվանս օրը, իմ տրտում դագաղիս մեջ,
Հայրենիքս երգողի իմ ամյունին խառնելու...
Թ
Ափ մը մոխի՛ր ամյունիս հետ, Հայրենի փուն,
Ափ մը մոխի՛ր քու մոխիրեդ, ո՞վ պիտի բերե,
Քու հիշատակե՛դ, քու ցավե՛դ, քու անցյալե՛դ,
Ափ մը մոխիր... իմ սրտիս վրան ցանելու...:

ՎԱՀԱՆ ԹԵՔԵՅԱՆ

Անկախութիւն հայկական

...Սակայն չրկա՛յ նաւը ա՛լ...
Ընդհարեցա՛ւ իւարակերու
Կամ՝ նաւերու մէջ երկու
(Երէկ՝ օրհնեալ, այժմ՝ անիծեալ)
Ճզմըւեցա՛ւ, փշրեցա՛ւ...
Անկախութի՛ւն Հայկական՝
Երազն էր ան՝ սուզուեցա՛ւ,
Թողլով բեկոր մը միայն...:
...Կենդանութի՛ւն Հայրենի,
Ո՛վ դուն, մարմի՛ն եւ հոգի՛,
Ա՛հ՝ անվերջ, հո՛ւր անշէջ...,
Դուն հո՛ն էիր՝ նաւուն մէջ
Եւ դուն... թրռա՛ր անկէ դուրս...
Եւ հիմա դուն իմ հոգւոյս,

Հայաստանը երգերի մեջ

Հազարներու հոգւոյն մէջ
-Հոգւոյն, մտքին, մարմինին-
Հեծեծագին, հրճուագին
Աշխատելով գաղտնօրէն՝
Գիշեր-ցերեկ, լաւտ առ լաւտ
Կը շինե՛ն նաւը նորէն
Կ՚ընեն Վաղուա՛ն զայն պատրաստ...:

Հայոց երկրին մէջ միշտ կ՚ապրին

Մեծ սօսիներն արմէնաւանդ...
Եւ լռության ու ըստուերին
Մէջտեղ անոնց, անարգաւանդ
Օրէ մը եւրք քերթողն երբ խանդ
Ու ներշնչում խնդրել կուգայ,
Խրոմայոյզ ճիւղերն աստ անդ
Կը փսփրսան «դո՛ն ես, արքայ...»:
Կանցնին անվերջ օրն ու տարին
Խստահալած...: Դաշտ, դարեւանդ
Եւ լեռներուն ալ կապարին
Ձիւնը փայլուն գերդ աղամանդ
Կը կրրեն հեղքն անոնց հիւանդ
Ծա՛նրը քայլին... Մինչ հոս՝ հսկայ
Ծառերն, յոյսով միշտ անվրկանդ,
Կը փսփրսան «դո՛ն ես, արքայ...»:
Սեւ աղէտի մը նախօրին՝
Անտառն յուզուած է մանաւանդ
Եւ տխրութեամբ սօսիք կ՚օրրին.
... Օ՜հ թշնամւոյն ըստուերը Ժանդ.
Տուներ, գիւղե՛րը քարուքանդ...
Բայց մինչ թաւուտքը կը սգայ,
Ահա՛ ձայներ անհրնազանդ
Կը փսփրսան«դո՛ն ես, արքայ...»:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՇԻՐԱՔ

Իմ սուրբ հայրենիք

Իմ սուրբ հայրենիք, դու սրտիս մեջ ես,
Դու սրտիս մեջ ես, ոչ լեզվիս վրա,
Իմ սրտի միջից, թե սիրտս ճեղքես՝
Դրոշիդ բոցը պիտի հուրհրա:
Չեմ ուզում գոռալ իմ սիրո մասին,
Սակայն, իմացիր, հայրենիք իմ մեծ,
Քեզ հարյուր տեղով խոցեց թշնամին,
Բայց հազար տեղով իմ սիրտը խոցվեց:
Ես ամբողջովին քոնն եմ, հայրենիք,
Եվ մոմի նման, ճամփեքիդ վրա
Քո փառքի համար թե մի օր վառվեմ,
Մոխրաբիծ անգամ ինձնից չի մնա:

Կտակ

Որդիս, քեզ ի՞նչ կտակեմ, ի՞նչ կտակեմ, իմ բալիկ,
Որ ինձ հիշես վշտի մեջ, թե խինդի մեջ քո գալիք.
Գանձեր չունեմ, բայց գանձն ի՞նչ, գանձը լույսն էր աչքերիս,
Դու ես միակ իմ գանձը, դու ես գանձը գանձերիս:
Քեզ այնպիսի գանձ կուզեմ ես կտակել հայրաբար,
Որ չի կարող կտակել ուրիշ երկրում ոչ մի հայր,-
Ես քեզ այն եմ կտակում, որին այս մեծ մեր դարում
Փոքրիկ մարդիկ են բանտել ու շղթայել ամպերում.
Քեզ մեր սարն եմ կտակում, որ դուրս բերես սեւ ամպից,
Որ տուն բերես շալակած արդարությամբ մեր անբիծ,
ՈՒ կբերես, իմ բալիկ, թեկուզ քո խեղճ թաթիկով
Մեր սարն այս կողմ շուռ կտաս՝ արդարության ուժն է ծով:
ՈՒ երբ բերես, իմ բալիկ, սիրտս էլ շիրմից կհանես,
Կբարձրանաս ու սիրտս ազատն ի վեր կտանես
ՈՒ կթաղես իմ սիրտը ձյունների տակ Մասիսի,
Որ շիրմում էլ՝ դարավոր հուր կարոտից չմրսի:
Քեզ Մասիսն եմ կտակում, որ դու պահես հավիտյան,
Որպես լեզուն մեր հայոց, որպես այունը քո հոր տան:

Արարատ

Երբ օրոցքում աչքս բացի՝ Մասիս սարերն հեռվում

Հայաստանը երգերի մեջ

տեսա,
Գերված տեսա ու ես լացի, հայոց ցավերն հեռվում տեսա,
Ամի, ես մանկուց երազեցի սուրալ ազատ
Մասիսն ի վեր,
Հովտում այրվել սիրտս բացի, բայց հով
սարերն հեռվում տեսա...
Ամի, ասացին, Ճամփա չկա քարերն ի վեր,
ի վեր Մասիս,
Կընկնի վիհերն՝ ով բարձրանա սարերն ի վեր,
ի վեր Մասիս,
Մենակ դու չես, սիրտ իմ, լացած աչքդ հառել
Մասիսն ի վեր,
Արքաներդ են ընկել անմահ դարերն ի վեր,
ի վեր Մասիս...
Մի՞թե իրավ անհաս ես դու, ահ, իմ երազ՝
Մասիսն ի վեր,
Մի՞թե մի օր չեմ հասնելու ասպեղնահաս
Մասիսն ի վեր,
Նահատակս է սանդուղք դրել ասպղերն ի վեր,
ի վեր Մասիս,
Ահ, մի՞թե չեմ համբուրվելու իմ ասպղի հետ
Մասիսն ի վեր:
Նա՛ է կարոտն իմ անսահման՝ քարերն ի վեր,
ի վեր Մասիս,
Թող ամպ ու շանթ գլխիս ոռնան սարերն ի վեր,
ի վեր Մասիս
Կդառնամ սիրտս վիրավոր, որպես դրոշ,
Մասիսն ի վեր,-
Թեկուզ մահով՝ կբարձրանամ դարերն ի վեր,
ի վեր Մասիս...

ՀԱՄՈ ՍԱՀՅԱՆ

ՈՒր որ նայում եմ

ՈՒր որ նայում եմ, քարե բարձունք է,
Քարե արցունք է, քարե ժպիտ,
Քարե սարսուռ, է ու քարե սունկ է,
Քարե ծաղկունքի քնքշանք է բիրտ:
Քարերի վրա քարե վագրեր են,
ՈՒր-որ է պիտի պատռեն իրար:
Քարե երգեր են, քարե վանքեր են,
Քարե հավքեր են քիվերն ի վար:
Քարե մորիկ է ու քարե բուք է,
Քարե բողոք է ու քարե բերդ,
Քարե շեփոր է, քարե թմբուկ է,
Քարե թափոր է, քարերի երթ...
Քարե ընդվզում, քարե դանջանք է,
Քարե ավար է, առեւանգում...
Քարե զարմանք է ու զարհուրանք է,
Քարե թռիչք է, քարե անկում:
Քարե ամպրոպ է ու ծիածան է,
Քարե լծկան է ու քարե մահ.
Քարե մագաղաթ, քարե մատյան է,
Քարե խորհուրդ է ու քարե խաչ:
Մեր բաժին ասրված, քո սիրտն էլ քար էր,
Որ մեզ քարերը դվիր նվեր,
Բայց քո կյանքը կարճ, մերը երկար էր,
ՈՒ երկարում է քարերն ի վեր:

Հայաստան ասելիս

Հայաստան ասելիս այտերս այրվում են,
Հայաստան ասելիս ծնկներս ծալվում են,
Չգիտեմ՝ ինչո՞ւ է այդպես:
Հայաստան ասելիս շրթունքս ճաքում է,
Հայաստան ասելիս հասակս ծաղկում է,
Չգիտեմ՝ ինչո՞ւ է այդպես:
Հայաստան ասելիս աչքերս լցվում են,
Հայաստան ասելիս թեւերս բացվում են,
Չգիտեմ՝ ինչո՞ւ է այդպես:
Հայաստան ասելիս աշխարհը
իմ տունն է,
Հայաստան ասելիս էլ մահը ո՞ւմ շունն է...
Կմնամ, կլինեմ այսպես:

Հայաստանը երգերի մեջ

Անունդ տալիս

Հայաստան, անունդ տալիս,
Ժայռի մեջ մի տուն եմ հիշում,
Ալեւոր կամուրջի հոնքին
Ծիծեռի մի բույն եմ հիշում,
Թեքված մի մատուռ եմ հիշում
Եվ բերդի տեղահան մի դուռ,
Ավերակ տաճարի մի վեմ
Եվ բեկված մի սյուն եմ հիշում:
Հիշում եմ լքված մի թոնիր,
Բերանին մամոտված մի խուփ,
Մամոտված որմի խոռոչում
Մասրենու վարսաթափ մի թուփ,
Աշխարհի քարերին մաշված,
Աշխարհից խռոված մի ցուպ,-
Եվ հեռվում ինչ-որ ուշացած
Ձիերի դոփյուն եմ հիշում:
Արեւոտ մի սար եմ հիշում,
Ճակատին ձյունի պատառիկ,
Սարն ի վար բարակ մի առու-
Ծուրթերին հայրեն ու տաղիկ,
Ցորենի կանաչ արտի մեջ
Առվույտի կապույտ մի ծաղիկ
Եվ արտի եզրին՝ մենավոր
Մի բարդու շրշյուն եմ հիշում:



ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆ

Հայրենիքիս

Ցորենի ծփուն արտերի եզրին
Կանգնել, խորհում եմ սրտիս մեջ լռին՝
Մի՞թե դու չէիր, հայրենիք իմ հեգ,
Որ տայգաներից, մթին յուրդերից
Հորդացող - եկող ելուզակների
Բյուր նիզակ ու տեգ
Սրտիդ մեջ միված՝ ընկել էիր խեղճ,
Քառուղու վրա բախվող ազգերի,
Դաժան դարերի մղձավանջի մեջ,
Սմբակների տակ խոլ նժույգների.
Եվ սրում էին ճիչով խնդագին
Անգղներն իրենց կտուցները վեռ
Քո արեւակեզ ժայռերի վրա՝
Հոշոտելու քեզ...
Եվ սակայն հիմա
Դու նորից ծաղկել, ցնծում ես նորից,
Ելնում է ծուխը խրճիթներից հին,
Ուր մայրս անուշ օրորել է ինձ,
Իմաստավորել մանուկ իմ հոգին
Քո հզոր լեզվով, երկիր կաթոգին:
Այնքան ժամանակ, որ պիտի հերկե
Մեւահողդ հին՝ քո կտրիճ որդին,
Եվ գուսանդ վառ՝ սերդ պիտ երգե,
Դու պիտի ծաղկիս, երկիր հայրական,
Քո ոգով, ոճով եւ բարձրագլուխ,
Դու պիտի հնչես, հնչես հաղթական,
Իմ հին հայ լեզու՝ քա՛ղցր ու սրտաբո՛ւխ:

Հայաստանը (ավանդություն)

Հայերի վրա զայրացավ աստված,
Որ նրանք ունեն թեեւ ճոխ հանճար,
Բայց չեն միաբան, ոխով լցված,
Դավով, նախանձով ապում են իրար:
Եվ աստված պատժեց հայ ժողովրդին,
Եվ Հայաստանից հավաքեց տարավ
Գետեր, վտակներ, աղբյուրներ հորդուն,
Եվ թողեց հողերն անջուր ու ծարավ:
Եվ աստված դրանց փոխարեն
Բոցակեզ ժայռեր, առապար ու քար,
Եվ դարեր անդուլ զարկող խստաղեմ
Մի նենգ հարեւան, ամբարիշտ ու չար:

Հայաստանը երգերի մեջ

Սասունցի Դավիթ

Հատված Հովհաննես Թումանյանի համանուն պոեմից

Սեւ ձին քաշեց Զենով Օհան,
Զախը դըրավ ասպանդակին,
Աջն էլ մինչեւ շուռ տար վըրան,
Կանգնեց Սասմա սարի գըլխին:

Տեսավ Դավթի նըժույգն անտեր
Սարերն ընկած խըրխընջալով,
Ներքեւ Մըսրա գորքը չոքած,
Ինչպես անծեր ծըփուն մի ծով:

Օխտը գոմշի կաշի հագավ,
Որ չըպատռի իրեն գոռից,
Կանգնեց Օհան ամպի նըման
Գոռաց Սասմա սարի ծերից:

-Հեյ-հեյ, Դավի՛թ, որտե՛ղ ես դու.
Տիշի՛ր խաչը քո աջ թեւի,
Սուրբ Տիրամոր անունը տո՛ւր,
Ու դուրս արի լույսն արեւի...

Զենը գընաց դըմբդըմբալով
Դավթի ականջն ընկավ հորում.
- Հա՛յ-հա՛յ, ասավ, հորեղբայրս է,
Սասմա սարից ինձ է գոռում:

Ո՛վ Մարութա Ասրվածածին,
Ո՛վ անմահ խաչ պատարագի,
Ձե՛զ եմ կանչել, - հասե՛ք Դավթին...
Կանչեց, տեղից ելավ ոտքի,

Էնպես զարկեց ջաղացքարին՝
Քարը եղավ հազար կըտոր,
Կըտորները երկինք թըռան,
Ու գնում են մինչեւ էսօր:

Ելավ հորից, կանգնեց ահեղ,
Սարսափ կալավ դեւ Մելիքին:
- Դավիթ ախպեր, ե՛կ դեռ էստեղ,
Մեղան նըստե՛նք, խոսենք կարգի՛ն...

- Էլ չեմ նըստիլ ես քու հացին,
Դու տըմարդի, վախկոտ ու ենեգ.
Շո՛ւտ, գենքդը առ, հեծիր քու ձին,
Դո՛ւրս եկ մեյդան, կըռիվ անենք:

- Կըռիվ անենք, ասավ Մելիք,
Իմն է միայն զարկն առաջին:
- Քոնն է, զարկի՛ր, կանչեց Դավիթ,
Գընաց, կեցավ դաշտի միջին:

Ելավ, կանգնեց Մըսրա-Մելիք,
Իր գուրզն առավ, հեծավ իր ձին,
Քըշեց, գընաց մինչ Դիարբեքիր
Ու էնտեղից եկավ կըրկին:

Երեք հազար լիդր էր քաշում
Հըսկայական իր մըկունդը.
Եկավ, զարկեց. կորավ փոշում
Ու երերաց երկրի գունդը:

- Երկիր քանդվեց կամ ժաժք եղավ,
Ասին մարդիկ շատ աշխարքում:
- Չէ՛, ասացին, արնի ծարավ
Հըսկաներն են իրար զարկում:

- Մեռավ Դավիթ էս մի զարկից,
Ասավ Մելիք իրեն գորքին:
- Կենդանի ե՛մ, ամպի տակից
Գոռաց Դավիթ Մըսրա-Մելքին:

- Հա՛յ-հա՛յ, մոտիկ տեղից եկա,
Տե՛ս, ո՛ր տեղից հիմի կըգամ:
Ու վերկացավ, կանգնեց հըսկան,
Իր ձին հեծավ երկրորդ անգամ:

Երկրորդ անգամ քըշեց Հալաբ
Ու բաց թողեց ձին Հալաբից.
Բուք վեր կացավ, տեղ ու տարտափ,
Աղար աշխարհ դողաց թափից:

Եկավ, զարկեց. զարկի ձենից
Մոտիկ մարդիկ ողջ խըլացան:
- Գընա՛ց Դավիթ Սասմա տանից,
Գուժեց գոռոզ Մըսրա արքան:

- Կենդանի՛ եմ, կանչեց Դավիթ,
Մին էլ արի՛- հերթն ինձ հասավ:
- Հա՛յ-հա՛յ, մոտիկ տեղից եկա,
Կանչեց Մելիք ու վեր կացավ:

Երրորդ անգամ հեծավ իր ձին,
Գընաց մինչեւ հողը Մըսրա,
Ու էնտեղից գուրզը ձեռին
Քըշեց, եկավ Դավթի վըրա:

Եկավ, զարկեց բոլոր ուժով,
Ծանըր զարկով հըսկայական.
Փոշին ելավ Սասմա դաշտից,
Բըռնեց երեսն արեգական:

Երեք գիշեր ու երեք օր
Փոշին կանգնեց ամպի նըման,

Հայասանը երգերի մեջ

Երեք գիշեր ու երեք օր
Բոթը դրվին Դավթի մահվան:

Երբ որ անցավ երեք օրը,
Էն ամպի պես կանգնած փոշում
Կանգնեց Դավիթ, ինչպես սարը,
Գրրգուռ սարը մեգ-մշուշում:

- Մելի՛ք, ասավ, ո՞ւմն է հերթը:
Սարսափ կալավ գոռ Մելիքին,
Մահվան դողը ընկավ սիրտը
Ու դապ արավ գոռոզ հոգին:

Գընաց, խորունկ մի հոր փորեց,
Իջավ, մըտավ վիհն էն խավար,
Վըրեն քաշեց քառասուն կաշի
Ու քառասուն ջաղացի քար:

Մըռընչալով ելավ դեղից
Էն աղյուծի աղյուծ որդին,
Իր ձին հեծավ ու փոթորկեց,
Խաղաց, շողաց Թուր-Կեծակին:

Առաջ վազեց մազերն արձակ
Մելքի պառավ մայրը ջադու.
- Դավի՛թ, մազըս ա՛ռ ուրիդ դրակ,
Էդ մի զարկը ի՞նձ բաշխիր դու:

Երկրորդ անգամ թուրը քաշեց.
Էս անգամ էլ եկավ քուրը.
Դավի՛թ, եթե կուզես, կանչեց,
Իմ սըրտին զա՛րկ երկրորդ թուրը...

Վերջին զարկի ժամը հասավ,
Ելավ Դավիթ երրորդ անգամ.
- Էս մի զարկն ու ասրված, ասավ,
Էլ մարդ չըգա, պետք է որ դամ:

Ասավ, ելավ ու փոթորկեց,
Թըռավ, ցոլաց Դավթի հուր ձին,
Ձին փոթորկեց, փայլատակեց
Ու ցած իջավ Թուր-Կեծակին:

Անցավ քառասուն գոմշի կաշին,
Անցավ քառասուն քարերը ցած,
Միջից կըտրեց ժանտ հրեշին,
Օխտը գազ էլ դենը գընաց:

- Կենդանի՛ եմ, մին էլ արի՛,
Գոռաց Մելիք հորի դակից:
Դավիթ լսեց, շատ զարմացավ
Իրեն զարկից, Թուր-Կեծակից...

- Մելի՛ք, ասավ, թա՛փ դուր մի քեզ:
Ու թափ դըվավ Մելիքն իրեն,
Միջից եղավ ճիշտ երկու կես,

Սասունցի Դավթի արձանը Երեւանում

Մեկն ընկավ դեսն ու մյուսը դեն:

Էս որ դեսավ Մըսրա բանակ,
Ջուր կըտրըվեց ահ ու վախից:
Դավիթ կանչեց. - Մի՛ վախենաք,
Ակա՛նջ արեք հալա դեռ ինձ:

Դուք ըռանչպար մարդիկ, ասավ,
Ջուրկ ու խավար, քաղցած ու մերկ,
Հազար ու մի կըրակ ու ցավ,
Հազար ու մի հոգսեր ունեք:

Ի՞նչ եք առել նեղ ու աղեղ,
Եկել թափել օրար դաշտերը.
Չէ՞ որ մենք էլ ունենք դուն-դեղ,
Մենք էլ ունենք մանուկ ու ծեր...

Զանձրացե՞լ եք խաղաղ ու հաշտ
Հողագործի օր ու կյանքից,
Թե՞ զըզվել եք ձեր հանդ ու դաշտ,
Ձեր հունձ ու փունջ, վար ու ցանքից...

Դարձե՛ք եկած ճանապարհով
Ձեր հայրենի հողը Մըսրա.
Բայց թե մին էլ գենք ու գոռով
Վեր եք կացել դուք մեզ վըրա,

Հորում լինեն քառասուն գազ խոր
Թե ջաղացի քարի դակին, -
Կելնեն ձեր դեմ, ինչպես էսօր,
Սասմա Դավիթ, Թուր-Կեծակին:

Էն ժամանակ ասրված գիտի,
Ով մեզանից կըլնի փոշման.
Մե՞նք, որ կելնենք ահեղ մարդի,
Թե՞ դուք, որ մեզ արիք դուշման:

Գովազդ

Գորիսի ֆրանս-հայկական սրտանոթային կենտրոնն առաջարկում է բարձրորակ եւ մատչելի բուժսպասարկում

Գորիսի ֆրանս-հայկական սրտանոթային կենտրոնը հիմնադրվել է 2013 թվականին: Կենտրոնի շենքը գտնվում է քաղաքի հյուսիսային մասում, անտառափեշին: Ճերմակաթույր շենքի աջ մասում փռված է փշատերեւ անտառը, ձախից խոխոջում է Ջագեձորի լեռներից իջնող Վարարակն գետակը: Շենքի բակում՝ բարձր դրոշակաձողերին փողփողում են Հայաստանի եւ Ֆրանսիայի պետական դրոշները: Կենտրոնի գործադիր տնօրեն Մելքոն Գարասեֆերյանը, ով այդ պաշտոնը զբաղեցնում է 2014թ. մայիսից, մեզ ծանոթացնում է կենտրոնի ստեղծման պատմությանը, նրա առօրյային, զարգացման հեռանկարներին:

Առաջին վիրահատությունը կենտրոնում իրականացվել է 2013թ. գարնանը Նորք-Մարաշ բժշկական կենտրոնի՝ հատուկ այդ նպատակով ժամանած բժիշկների կողմից: Այդպես շարունակվել է մինչեւ նույն թվականի աշունը՝ հիմնականում Երեւանից ժամանած բժիշկներով: Հոկտեմբերից սկսած կենտրոնն ունի իր հիմնական բժշկական անձնակազմը: Այսօր բժշկական կենտրոնում տարեկան 400 հոգի վերականգնում են իրենց առողջությունը:

Կենտրոնը Գորիսում հիմնելն ինքնանպատակ չի եղել: Հաշվի են առնվել քաղաքի աշխարհագրական դիրքը (այն գտնվում է Սյունիքի կենտրոնական մասում՝ Ստեփանակերտն ու Սյունիքի մարզկենտրոնը Երեւան մայրաքաղաքին կապող մայրուղիների խաչմերուկում) եւ բնակլիմայական հիանալի պայմանները:

Սրտանոթային կենտրոնը կահավորված է բժշկության բնագավառի վերջին նվաճումների տեխնիկական միջոցներով, որոնք ժամանակ առ ժամանակ նորացվում են: Այստեղ աշխատում են մասնագիտական բարձր որակավորում ունեցող բժիշկներ եւ միջին բուժաշխատողներ, ովքեր պարբերաբար մասնագիտական որակավորման դասընթացներ են անցնում նաեւ Ֆրանսիայում:

Կենտրոնը երկու գործառույթ է իրականացնում՝ ախտորոշում եւ բուժում: Կատարվում է սրտաբանական համարյա բոլոր հիվանդությունների ախտորոշում՝ առիթմիաներ, բարձր զարկերակային ճնշում, սրտի քաղցի հիվանդություններ, փականային

Գովազդ

Սրտաբան Սոնա Խաչյանը էխոսրտագրության ժամանակ



Մելքոն Գարասեֆերյան
Կենտրոնի գործադիր տնօրեն

Կարեն Համբարձումյան
Կենտրոնի բուժական մասի ղեկավար, միջամտական բժիշկ-սրտաբան, Հայաստանի ստենտավորող բժիշկների ասոցիացիայի անդամ

խնդիրներ:

Կատարվում են արյան բիոքիմիական, հորմոնալ եւ իմունալոգիական անալիզներ:

Իրականացվում է ծանրաբեռնվածության թեստ, սթրես-էխոկարդիոգրաֆիա, տրեդմիլ թեստ (ծանրաբեռնվածության էլեկտրասրտագրություն), հոլտեր-մոնիթորինգ (24-ժամյա էլեկտրասրտագրություն):

Կորոնարոգրաֆիայի եւ ստենտավորման սրահում իրականացվում է սիրտը սնուցող անոթների ստենտավորում: Այս աշխատանքները ղեկավարում է կենտրոնի բուժական մասի ղեկավար, միջամտական բժիշկ-սրտաբան Կարեն Համբարձումյանը: Չնայած երիտասարդ տարիքին, նա արդեն փորձառու բժշկի համբավ ունի ոչ միայն մեր տարածաշրջանում: Որպես այս բնագավառի լավագույն մասնագետներից մեկը՝ երկու անգամ զեկուցումով հանդես է եկել ստենտավորող բժիշկների Եվրոկովկասյան միջազգային գիտաժողովում: Նրա խոսքը լսել, փորձին ծանոթացել են 30 երկրից ժամանած բժիշկները: Կարեն Համբարձումյանը Հայաստանի ստենտավորող բժիշկների ասոցիացիայի անդամ է, որը նրա աշխատանքի յուրահատուկ գնահատականն է:

Կենտրոնը սերտորեն համագործակցում է ֆրանսիական առաջավոր կլինիկաների հետ: Ֆրանսիական կողմը, հայ բուժաշխատողների վերապատրաստումը կազմակերպելուց զատ, պարբերաբար Հայաստան է գործուղում իր բժիշկներին՝ տեղում գործնական օգնություն ցույց տալու համար:

Ի տարբերություն նմանատիպ մասնավոր կլինիկաների եւ հիվանդանոցների, Գորիսի կենտրոնում գները համեմատաբար մատչելի են, եւ ժամանակ առ ժամանակ գործում են զեղչային ակցիաներ, որոնց արդյունքում գներն իջնում են մեկ երրորդով: Հավանաբար նաեւ դա է պատճառը, որ ախտորոշման ու բուժման նպատակով կենտրոն այցելողների մեջ մեծանում է հանրապետության այլ մարզերից դիմողների թիվը:

Ծրագրված է կենտրոնի հարեւանությամբ ստեղծել ուղեղը սնող անոթային հիվանդությունների ստենտավորման կլինիկա:

ՌԵԴԻԿ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Գովազդ

Կապանի բժշկական կենտրոնը՝

ձեր առողջության պահպանման հուսալի գործընկեր

Կապանի բժշկական կենտրոնի արդիականացումից հետո (2015 թվականի հոկտեմբեր) ստեղծվել են ախտորոշիչ հետազոտությունների նոր հնարավորություններ, կենտրոնը հագեցել է ե՛ւ շարժական, եւ ստացիոնար բուժսարքավորումներով: Հիմնանորոգվել եւ ժամանակակից բուժախտորոշիչ սարքերով հագեցել են վիրահատարանները, վերակենդանացման բաժանմունքը, բոլոր հիվանդասենյակները: Կենտրոնում իրականացվում է լաբորատոր գործիքային ախտորոշիչ հետազոտությունների լայն շրջանակ: 2015-ից կենտրոնում կատարվում է սրտի շուրջօրյա հսկողության ՀՈԼՏԵՐ թեսթ, էլեկտրոկարդիոգրաֆիա չափավորված ծանրաբեռնվածությամբ տրեդմիլ-թեսթ: Մասնավորապես, կենտրոնում կատարվում են էնդոսկոպիկ վիրահատությունները

Գովազդ

ՍՄԲԱՏ ՕՐԲԵԼՅԱՆ
«Կապանի բժշկական կենտրոն»
ՓԲԸ տնօրեն

Մատչելի գներ, արդիական սարքավորումներ, բարձրորակ բուժսպասարկում, փորձառու մասնագետներ

ներ՝ շագանակագեղձի ադենոմայի ներմիջուկային մասնատում, միզապարկի քարերի էնդոսկոպիկ հեռացում, միզուկի նեղացած հատվածների հատում, միզապարկի մակերեսային նորագոյացությունների հեռացում: Արդիականացման գործընթացի շրջանում հիվանդանոցն ապահովված է հեռաբժշկության հնարավորություններով: Մի խոսքով, 2015-ի հոկտեմբերից հետո «Կապանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն ներկայանում է նոր տեսքով եւ նոր որակի բժշկական ծառայություններով: Վերջին տարիներին բժշկական կենտրոնը համալրվել է երիտասարդ մասնագետներով, եւ ժամանակի ընթացքում կլուծվի բժշկական կադրերով ապահովվածության խնդիրը:

«Կապանի բժշկական կենտրոն» ՓԲԸ

Գովազդ

CONTOURGLOBAL®

«Քոնթուր գլոբալ հիդրոկասկադ»

ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Արա Հովսեփյան
«Քոնթուր գլոբալ հիդրոկասկադ» ՓԲ ընկերության գլխավոր տնօրեն

«Քոնթուր գլոբալ»-ն ամերիկյան խոշոր ընկերություն է, որը ներդրումներ է կատարում էներգետիկ ոլորտում, մասնավորապես, էներգաարտադրության մեջ: Ընկերությունն ունի ավելի քան 25 տարբեր կայաններ աշխարհի 40-ից ավելի երկրում: Մինչեւ ՔԳՀԿ գլխավոր տնօրենի պաշտոնը ստանձնելը մասնակցել է «Քոնթուր գլոբալ»-ի անունից ՀՀ կառավարության հետ բանակցություններին՝ Որոտանի հէկերի համալիրի ձեռքբերման նպատակով, որը Հայաստանի ամենամեծ հէկն է եւ որի ընդհանուր հզորությունը կազմում է 404ՄգՎտ:

Արա Հովսեփյանն իր աշխատանքային գործունեությունը սկսել է ՀՀ արտաքին գործերի նախարարությունում 1995թ.-ից, որտեղից հեռացել է 2000թ.՝ դառնալով Միացյալ Թագավորության դեսպանատան Միջազգային զարգացման նախարարության (DFID) հայաստանյան ներկայացուցչության առաջին տեղական ղեկավարը: Այնուհետեւ, 2006-2011թթ. Ա.Հովսեփյանը եղել է ԱՄՆ «Հազարամյակի մարտահրավերներ» (ՀՄՀ) ծրագրի գլխավոր գործադիր տնօրենը: 2012թ. Ա.Հովսեփյանը տեղափոխվել է ղեկավարելու Ասիական զարգացման բանկի եւ ՀՀ կառավարության կողմից ֆինանսավորվող «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի կառուցման» ներդրումային ծրագիրը մինչեւ 2013թ. մայիս ամիսը, որտեղից հեռացավ իր ցանկությամբ՝ միանալու 1990թ.-ից մինչ օրս Հայաստանում ԱՄՆ ամենախոշոր մասնավոր ներդրումային գործարքի բանակցություններին՝ որպես «Քոնթուր գլոբալ» ընկերության գլխավոր ներկայացուցիչ:

Ա.Հովսեփյանն ունի Վ. Բրյուսովի անվան Երեւանի լեզվագիտական համալսարանի անգլերեն լեզվի եւ պատմության ֆակուլտետի բակալավրի դիպլոմ (1995.), Հայաստանում Ամերիկյան համալսարանի քաղաքագիտության եւ միջազգային հարաբերությունների մագիստրոսի դիպլոմ (1997թ.), ինչպես նաեւ Օքսֆորդի համալսարանի միջազգային հարաբերությունների եւ դիվանագիտության հետբուհական ասպիրանտական դիպլոմ (Oxford University, Exeter College, 1999):

«Տաթեւհէկում» նոր ժամանակներ են

«Տաթեւ» հէկը հայկական էներգահամակարգի բաբախող սիրտն է», – այսպես պատկերավոր բնորոշեց ձեռնարկությունը նրա տնօրեն Արամ Յոլյանը, ով կայանում է 2002-ից, նախ որպես կայանի պետի տեղակալ, 2005-ից՝ պետ: Նրանից նախեւառաջ տեղեկանում ենք, որ «Տաթեւ» հէկն աշխատում է 24 ժամյա աշխատանքային ռեժիմով, որ համակարգում արտադրվող էլեկտրաէներգիայի ինքնարժեքն ցածրերից է հանրապետությունում: Ի տարբերություն հանրապետության մյուս կայանների (ատոմակայան, ջերմակայաններ) այստեղ արտադրվող էներգիան, այսպես ասած, պիկային էներգիա է եւ հանրապետության մասշտաբով կարգավորում է էներգահաճախականությունը եւ էներգիայի փոխհոսքերը: Ասել է թե՝ ընդհանուր բեռի կարգավորիչի կարգավիճակ ունի: Այն հնարավորություն ունի արագորեն իր վրա վերցնել տատանվող բեռը եւ նույն արագությամբ իջեցնել այն: Մասնավորապես, հայկական էներգահամակարգում կարգավորում է Հայաստան-Իրան փոխհոսքերը:

«Քանի որ Իրանի էներգետիկ համակարգն ավելի հզոր է, քան մերը, չենք

Գովազդ

CONTOURGLOBAL

կարող ազդել հաճախականության վրա, մենք քանակի վրա ենք ազդում», – պարզաբանում է Իսկ Մեղրի 220 կիլովոլտ գծի բացակայության դեպքում, այսինքն՝ նորոգումների ու անջատումների ժամանակ կարգավորում են հայկական էներգահամակարգի հաճախականությունը:

«Առանց մեր կայանի շատ դժվար է կարգավորել ռեժիմները հայկական էներգահամակարգում», – մանրամասնում է Արամ Յոլյանը եւ հավելում, որ իրենք աշխատում են ավտոմատ ռեժիմով, այսինքն՝ 35 վայրկյանում կայանի բեռը 0-ից կարող է բարձրանալ մինչեւ առավելագույն նիշը եւ դրանից իջնել մինչեւ նվազագույնը, նայած էներգահամակարգում ինչ պահանջ կա: Յուրաքանչյուր վթարի կամ անջատման դեպքում «Տաթեւ» հէկն է «փակում» պակասորդները եւ ավելցուկները:

«Եթե կայանում որեւէ թերություն է բացահայտվում կամ որեւէ աշխատանք կատարելու համար անհրաժեշտություն է ծագում, մեզ դժվարությամբ են թույլատրում այստեղ որեւէ ագրեգատ անջատել եւ աշխատանք կատարել՝ հաշվի առնելով մեր կայանի առանձնահատկությունները», – տեղեկացնում է զրուցակիցս:

«Տաթեւ» հէկն ունի այլ առանձնահատկություններ եւս. նախ այն գործարկվել է 1970 թվականին, չորս ու կես տասնամյակից ավելի է, ինչ Որոտանի կիրճը դարձել է լույսի աղբյուր, Որոտան գետի վերին հոսանքից մինչեւ ստորին հոսանքի պոտենցիալ էներգիան ամբողջությամբ օգտագործվում է, յուրաքանչյուր լիտր ջուր դառնում է էներգիա: «Որոտանի հէկերի համակարգի» (այժմ՝ «ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ») առաջնեկն է եւ ամենաբարձր ճնշումային հիդրոկայանը նախկին Խորհրդային Միությունում: Կայանն ունի երեք ագրեգատ 157.2 մեգավատ հզորությամբ եւ ջուր ստանում է «Տաթեւ» հէկի գլխամասային ջրամբարից, 18.4 կմ երկարությամբ ճնշումային թունելով ջուրը հասնում է օրվա կարգավորման ջրամբար, այնտեղից 1880 մետր երկարությամբ ոչ ճնշումային խողովակաշարով իջնում դեպի կայան, որտեղ արտադրվող էներգիայի ինքնարժեքն ամենացածրն է:

Մեկ տարի է, ինչ «Տաթեւ» հէկն ամերիկյան «ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ընկերության սեփականությունն է, մեկ տարին քիչ ժամանակահատված չէ արդյունքներ ամփոփելու համար, մանավանդ ձեռնարկության կարգավիճակի փոփոխությունը ենթադրում է նոր աշխատառոճ, կառավարման նոր ձեւեր ու մոտեցումներ: Արամ Յոլյանը փոխանցում է, որ փոփոխություններ կան կայանի ղեկավարման ձեւերում, նախատեսվում է տեխնիկական վերազինում, տեղադրվել են թվային նոր տեխնոլոգիաներ, բոլոր կայաններում ստեղծվել է գերարագ ինտերնետային կապ, խորհրդակցությունները կազմակերպվում են նոր համակարգչային կապի միջոցով: **«Մեզ մոտ հիմա ավելի շատ հորիզոնական հարաբերություններ են հաստատվել, բանվորից մինչեւ ղեկավար հասանելիությունն ավելի մատչելի է ե՛ւ համակարգիչների, ե՛ւ թվային տեխնոլոգիաների միջոցով: Հիմա ունենք առանձին լոկալ համակարգ, որ ընկերության հայաստանյան ղեկավարության հետ ենք շփվում, ունենք կորպորատիվ կապ, որ, ասենք, աշխարհով մեկ սփռված «ՔոնթուրԳլոբալ»-ի ձեռնարկությունների հետ ենք հաղորդակցվում, հաճախակի տեսախորհրդակցություններ են լինում: Մի կոճակի սեղմումով կարող ենք իրար հետ հաղորդակցվել»,** – ներկայացնում է համակարգչային տեխնիկայի ընձեռած հնարավորությունները:

Այժմ ավելի մեծ ուշադրություն է դարձվում աշխատանքի անվտանգությանը եւ շրջակա միջավայրի պահպանությանը: Կայանի սնուցող ջրամբարներից փորձանմուշներ են վերցվել, ուղարկվել ստուգումների ե՛ւ Երեւան, ե՛ւ Բուլղարիա: Արդյունքները դրական են եղել:

«Մեր հիդրոկայանները (նկատի ունի նաեւ «Շամբ» հէկն ու «Սպանդարյան» հէկը) ոչ մի ներգործություն չեն ունենում մեր օգտագործած ջրերի որակի վրա»:

Ինչ վերաբերում է տեխնիկական վերազինմանը, այժմ համաձայնություն է ձեռք բերվել գերմանական KFW բանկի հետ, 2016-ին կսկսվեն մրցույթի նախապատրաստական աշխատանքները, եւ հավանական է՝ տարեվերջից կամ 2017-ի սկզբից արդեն կմեկնարկեն տեխնիկական աշխատանքները:

Այսօր կայանում 27 մարդ է աշխատում, 11-ը՝ հերթափոխի աշխատողներ, մնացյալը շահագործող անձնակազմն է: Վերջերս կայանում կառուցվածքային փոփոխությունների են եղել եւ կատարվել է աշխատատեղերի օպտիմալացում:

«ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադի»-ի քաղաքականությունն այնպիսին է, որ մեծ տեղ է տրվում երիտասարդ, բանիմաց աշխատողներին», – պարզաբանում է Ա.Յոլյանը:

Վերջին մեկ տարում կայանում կատարված փոփոխությունները տեսանելի են: Դրանցից մեկը բակում տեղադրված վահանակն է, որ տեղեկացնում է՝ «Տաթեւ» հէկը 400 օր է՝ աշխատում է առանց աշխատաժամանակի կորստի եւ պատահարի:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

ԱՐԱՄ ՅՈԼՅԱՆ
«Տաթեւհէկ» էներգահամակարգի տնօրեն

Գովազդ

CONTOURGLOBAL

Նպատակը՝ դժբախտ պատահարների զրոյական զուցանիշ

«Սպանդարյան» հէկը շահագործման է հանձնվել 1989թ., ունի երկու ագրեգատ՝ յուրաքանչյուրը 38 մՎտ հզորությամբ, էլեկտրաէներգիայի տարեկան նախագծային արտադրանքը՝ 170 մլն կվտ/ժամ: Կայանի ագրեգատներն աշխատում են հիմնականում առավոտյան 8-12, եւ երեկոյան՝ 17-23-ն ընկած ժամանակահատվածում: Ներկայումս այստեղ աշխատում է 19 հոգի, եւ, ինչպես հավաստեց «ՔոնթուրԳլոբալ Հիդրո կասկադ» ընկերության «Սպանդարյան» հէկի պետ Սերգեյ Պողոսյանը, նույնիսկ ագրեգատների չաշխատելու դեպքում մշտապես գտնվում են էներգահամակարգի օպերատորի տրամադրության ներքո: Կայանը ջուր ստանում է Սպանդարյանի կամ Բազարչայի ջրամբարից՝ 257 մլն խմ լրիվ տարողությամբ, 218 մլն խմ օգտակար տարողությամբ: Ինչպես նշեց Սերգեյ Պողոսյանը, մեկ խորանարդ մետր ջուրը մոտ 2.78 կՎՏ էլէներգիա է արտադրում Որոտանի հէկերի համակարգում:

ՍԵՐԳԵՅ ՊՈՂՈՍՅԱՆ
«Սպանդարյան» հէկի պետ

Ճնշումային դերիվացիոն թունելն ունի 8,1 կմ երկարություն, 30 խմ/վրկ թողունակություն: Թունելի վերջում գտնվում է հավասարեցման հորանը՝ 1,9 հազար խմ ծավալով վերգետնյա խցով: 2046մ խառը տեսակի ընդհանուր երկարությամբ միաթել տուրբինային ջրատարը միանում է կայանային հանգույցին: Ջրատարը վերջում ճյուղավորվում է երկու մասի՝ յուրաքանչյուրը 15 խմ/վրկ թողունակությամբ եւ միանում կայանի երկու հիդրոագրեգատին: Ի դեպ, թունելը վերջին անգամ նորոգվել է 2012թ.: «ՔոնթուրԳլոբալի»՝ Որոտան հէկերի համակարգի ղեկավարումը ստանձնելուց հետո բավականին դինամիկ փոփոխություններ են կատարվել: Նախեւառաջ գործում է նոր ղեկավարման համակարգ: Կայաններին կցել են ջրամբարների եւ թունելների շահագործումը. «Սպանդարյան» հէկին են կցել Սպանդարյանի, Տոլորսի, Անգեղակոթի ջրամբարները եւ ջրատարները», - տեղեկացրեց կայանի պետը: Կայանում առաջիկայում նախատեսվում են վերականգնման մեծածավալ

Գովազդ

ContourGlobal

աշխատանքներ՝ նոր թվային/հիդրավլիկ կարգավորիչ, կառավարման/պաշտպանության նոր համակարգ, օժանդակ համակարգեր, գեներատորի ռոտորի վերանորոգում, նոր վթարային դիզելային գեներատոր, լուսավորության (ջեռուցման, օդափոխության, օդորակման), հողանցման համակարգ, հրդեհի ահազանգման եւ հրշեջ պահպանության նոր համակարգ:
Կասկադում ընդհանուր վերականգնողական աշխատանքների համար նախատեսվում է մոտ 60 մլն դոլարի ներդրում, որից՝ 9 մլն դոլարը՝ «Սպանդարյան» հէկի համար, Բնապահպանական տարբեր միջոցառումների համար, նախատեսվում են նաեւ ձկնապաշտպան ցանցերի կառուցումը: «Ընկերության նպատակներից մեկն էլ այն է, որ, էներգիա արտադրելով, հնարավորինս սահմանափակեն կամ զրոյական ցուցանիշի հասցնեն շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունը», - նշեց Սերգեյ Պողոսյանը:
«Քոնթուրգլոբալ» ընկերությունը սոցիալական տարբեր ծրագրեր է իրականացնում նաեւ համայնքներում, մասնավորապես 2016թ. համար նախատեսված է 100 հազար դոլարի ներդրում: Օրինակ՝ Շաղատի մանկապարտեզի տանիքի նորոգում է նախատեսվում կատարել, ինչպես նաեւ Անգեղակոթի զոհվածների պանթեոնի տարածքի բարեկարգում եւ այլն:
Նոր ղեկավարությունը բավականին մեծ ուշադրություն է դարձնում նաեւ աշխատանքի անվտանգության կանոնների պահպանմանը, արտադրության անվտանգ կազմակերպմանը եւ առաջնորդվում «Նպատակը՝ դժբախտ պատահարների զրոյական զուցանիշ» կարգախոսով: «Տասը տոկոս աշխատավարձի բարձրացում է կատարվել, եւ ակնկալում ենք հետագայում նույնպես ավելացում: Կատարվել է նաեւ աշխատատեղերի օպտիմալացում: Առհասարակ նախկինում նույնպես կատարվել են բազում աշխատանքներ, ներկայումս էլ աշխատակիցների համար ակնառու են կատարվող փոփոխությունները, որոնք տանում են դեպի համակարգի բարելավում եւ միջազգային չափանիշներին համապատասխանեցում», - ամփոփեց «Սպանդարյան» հէկի պետ Սերգեյ Պողոսյանը:

ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Եկող տարի «Շամբիէկը» կնշի հիմնադրման 40-ամյակը

«Քոնթուրգլոբալ Հիդրո կասկադ» ընկերության էլեկտրակայաններից (Տաթեւի, Շամբի, Սպանդարյանի) ամենահզորը «Շամբ» հէկն է, որ գործարկվել է 1977-ի դեկտեմբերի 22-ին: Օրը պատահական չէր ընտրված: Խորհրդային Միության տարիներին այդ օրը նշվում էր որպես էներգետիկի մասնագիտական տոն: Ավանդույթը մասամբ պահպանվել է նաեւ այսօր: Հիդրոկայանի պետ Սյոմա Ավանեսյանն էներգահամակարգում է 1978 թվականից. հերթափոխի պետ, տուրբինային սարքավորումների վարպետ է եղել, կարճ ժամանակ աշխատել է նաեւ «Սպանադարյան» հէկում: 1987-ին «Սպանդարյան» հէկն ամբողջովին մոնտաժվելուց հետո Ավանեսյանին տեղափոխել են «Շամբ» հէկ, վստահել են կայանի ղեկավարումը, որը կկատարի մինչեւ 2016 թվականի օգոստոսը: Նրա նվիրումն ու վաստակն աննկատ չեն մնացել. 2008-ին Սյոմա Ավանեսյանին շնորհվել է «ԱՊՀ վաստակավոր էներգետիկ» կոչում: Ասենք նաեւ, որ մասնագիտական կրթություն է ստացել. ավարտել է Երեւանի պոլիտեխնիկական ինստիտուտի էներգետիկական ֆակուլտետի «էլեկտրական կայաններ» բաժինը: Բնականաբար, «Շամբ» հէկի կայանի պետ Սյոմա Ավանեսյանից հետաքրքրվում ենք կայանի տեխնիկական պարամետրերով. ունի 171 մեգավատ հզորություն, երկու ագրեգատ՝ յուրաքանչյուրը՝ 85.5 մեգավատ հզորությամբ, մեկ

ՍՅՈՄԱ ԱՎԱՆԵՍՅԱՆ
«Շամբիէկ» էներգահամակարգի տնօրեն

ագրեգատի դրվածքային հզորությամբ առաջինն է հանրապետությունում: Նաեւ ավելորդ չի համարում նշել, որ կայանի տուրբինն արտադրվել է Խարկովի տուրբինային, իսկ գեներատորը՝ Լենինգրադի՝ «Էլեկտրոսիլա» գործարանում: Կայանը սպասարկվում է Տոլորսի ջրամբարից՝ տարողությամբ 96 մլն խորանարդ մետր, որից 16 միլիոն խորանարդ մետրը մեռյալ ծավալ է, 80 մլն-ը՝ օգտակար:
«Որոտանի հէկերի համալիր»

Գովազդ

CONTOURGLOBAL

փակ բաժնետիրական ընկերությունն ամերիկյան «ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադին» փոխանցվելուց հետո՝ ավելի ստույգ՝ 2015թ. օգոստոսի 1-ից հետո տասը տոկոսով ավելացել է կայանի աշխատակիցների աշխատավարձը, նաեւ տեղեկանում ենք , որ մայիսի 16-ին կայանում տեղի է ունեցել կրճատում: «Շամբ» հէկից երկու հոգի վաստակած հանգստի են անցել, այժմ կայանում 22 հոգի է աշխատում: 2017-ին կոլեկտիվը կնշի կայանի 40-ամյակը:

Ի՞նչ է արվում տեխնիկական վերազինման ուղղությամբ: Չորս տասնամյակ գործող մեքենասարքավորումները հնարավոր չէ, որ գոնե ֆիզիկապես մաշված չլինեն: Ս. Ավանեսյանի փոխանցմամբ՝ տուրբինները փոխելու մրցույթ կհայտարարվի:

Նաեւ տեղեկացանք, որ «ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադի» գլխամասային կազմակերպության մասնագետները լինում են «Շամբ» հէկում, հետաքրքրվում արտադրության կազմակերպման խնդիրներով, նախանշում ծրագրեր՝ աշխատանքի անվտանգության բարձրացման ուղղությամբ: « Արեւմտյան աշխատաոճն իր առանձնահատկություններն ունի: Մեծ պատասխանատվություն է աշխատել արտասահմանցի գործընկերների հետ, նրանց հետեւողականությունն ավելի բարձր է, ձգտում են ավելի որակյալ ու կատարյալ լինի սարքավորումը», -ասում է կայանի պետը:

«Շամբ» հէկում մեր եղած ժամանակ նորոգումներ էին կատարվում, հետաքրքրվեցինք դրանց բնույթով եւ ընթացքով: «Հիմնական նորոգումներ են կատարվում,- բացատրում է Սյոմա Ավանեսյանը եւ հավելում,- պլանային հիմնական նորոգում: Պլանային նորոգման անհրաժեշտությունը պայմանավորված է սարքավորումների վիբրացիաներով: Եթե ագրեգատների թռթռումները բարձրանում են նախատեսվածից, տատանումները բարձրանում, ստիպված ենք լինում մեքենասարքավորումներն ընթացիկ նորոգման ենթարկել: Հիդրոկայանում երկու նորոգման միջեւ ընկած ժամկետը հինգ տարի է: Բայց տեխնիկական պայմանների եւ սարքավորումների վնասվածքի բնույթից ելնելով՝ այդ ժամկետը կարող է կրճատվել: Այսօրվա նորոգումը կատարվում է պլանային նորոգման գրաֆիկի համաձայն, հիմա բանվորական անիվ ենք փոխում, գեներատորի թռթռումներն ենք վերացնում, նոր սարքավորումներ տեղադրում»:

Որո՞նք են աշխատակիցների առջեւ դրվող պահանջները՝ բարձրագույն կրթություն ունենալ, պատրաստված մասնագետ լինել, օտար լեզվի փոքրիշատե իմացություն:

Տվյալ տարածաշրջանում գործող ձեռնարկություններն օգնության ձեռք են մեկնում մոտակա համայնքներին:

Ի՞նչ է նախաձեռնում «Շամբ» հէկը խնդրո առարկայի առնչությամբ: Սյոմա Ավանեսյանի փոխանցմամբ՝ դեռեւս մինչեւ քառօրյա պատերազմը ձեռնարկություն են հրավիրվել Որոտանի եւ Դարբասի գյուղապետերը, որ նկատառումներ հայտնեն, թե «ՔոնթուրԳլոբալ Հիդրո կասկադ»-ն ինչ օգնություն կարող է ցուցաբերել համայնքներին: Նույնը՝ Անգեղակոթ եւ Ծղուկ համայնքների դեպքում: Գյուղապետերը նպատակահարմար են գտել, որ հատկացված գումարն օգտագործեն տանիքների նորոգման, խմելու ջրագծի բարելավման եւ այլ կուլտուր-կենցաղային նպատակներով:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

Իմ Հայաստան

Հայաստանն ըստ «Աշխարհացույց»-ի



Հայաստանի պատմական ատլաս, Ա մաս, էջ 42-43:

Հեղինակ՝ պրոֆեսոր-դոկտոր Բաբկեն Հարությունյան

Իմ Հայաստան

Հայկի եւ Բելի ճակատամարտը, Ք.ա. 2492թ.:
Ջուլիանո Ջասսո, 1885թ.

Հայոց պատմություն

Մովսես Խորենացի

Սկիզբը՝ էջ 12

նուտերի գաղթելու ժամանակ հետեւում էին նրան ոտով կամ սայլերով:

4. Տուն գրաբարում, բացի այժմյան նշանակությունից, ունի եւ ավելի լայն նշանակություն: Նշանակում է ամբողջ ազգ իր բնակած երկրով (տունն Իսրայելի, տունն Թորգոմա), նշանակում է ընդարձակ կալված, ինչպես էին նախարարներինը (արքունի տուն, տուն Մամիկոնեից), նշանակում է տոհմ, սերունդ (տուն. ս. Գրիգորի, տուն Հակոբա). վերջապես նշանակում է կալված՝ շինություններով, գյուղ, դաստակերտ, ինչպես այստեղ. նույնպես եւ քիչ հետո «շինէ երկուս տունս» (Ա, ժբ):

5. Տիտանյան Բելը, ինչպես տեսանք (ծան. 22), Նեբրովքն է, Քամի ցեղից: Նրան Պատմահայրը Տիտանյան է կոչում՝ հեթանոսական աղբյուրի Տիտան անունով, որովհետեւ Բել անունն էլ հեթանոսական աղբյուրից է, եւ ոչ ս. գրքից: Սրան համապատասխան՝ Հայկին էլ կոչում է Հապետոսբյան, հեթանոսական Հապետոսբե անունից եւ ոչ Հաբեթյան, որովհետեւ Հայկ անունն էլ հեթանոսական է, եւ ոչ ս. գրքից:

6. Վանա լիճն է իր համբավավոր տառեխ ձկնով:

7. Ասպարեզ պահլավերեն բառ է (asp reos, aspares եւ այլն) եւ նշանակում է ձիընթացարան: Երկրորդաբար նշանակում է այն տարածությունը, որ ձին մի նվագում կարող է վազել, եւ այստեղից, իբրեւ երկայնության չափ՝ նշանակում է 230 մետր տարածություն (=պարսից ասպարեզ): Կան եւ ուրիշ ասպարեզներ, 159,8 մետրից մինչեւ 266 մետր: (Տե՛ս Մանանդյան, Կշիռները եւ չափերը):

Իմ Հայաստան

Մայր աթոռ Սուրբ Էջմիածին

Մայր տաճար՝ Հայոց առաքելական եկեղեցու գլխավոր կրոնական շինությունը: Կառուցվել է IV դարի սկզբին՝ Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելուց՝ 301թ. հետո՝ հեթանոսական տաճարի տեղում: Մայր տաճարը կառուցվեց Հայ եկեղեցու առաջին հայրապետի՝ Սուրբ Գրիգոր Լուսավորչի եւ Սուրբ Տրդատ թագավորի կողմից:

Մայր աթոռի նորակառույց մատենադարանը

Իմ Հայաստան

Դրվագ Գրիգոր Խանջյանի «Հայոց այբուբենը» գոբելենից

ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ

Ճանաչել իմաստությունը եւ խրատը ու իմանալ հանճարի խոսքը

Սողոմոնի «Առակաց գրքի» առաջին նախադասությունը



Սասունցի Դավիթ

Հայկական ժողովրդական էպոսը

ՀԱՅԱՍՏԱՆ

Իմ քաղցրանո՜ւն,
Իմ բարձրանո՜ւն,
Իմ տառապա՛ծ,
Իմ փառապա՜հնած:
Հսերի մեջ դու ալեհեր,
Նորերի մեջ նոր ու ջահել.
Դու՝ խաղողի խշմարված վազ,
Վշտերդդ՝ ջուր, ինքդդ ավազ.
Դու՝ բարդենի սաղարթաշատ,
Ամուն ի վար փռված փշատ.
Դու՝ կիսավեր ամրոց ու բերդ,
Մագաղաթյա մատյանի թերթ.
Դու՝ Զվարթնոց-ավեր տաճար,
Կոմիտասյան Ծիրանի ծառ.
Դու՝ ջրաղաց խորունկ ձորում,
Դու՝ հորովել անուշ ծորուն,
Փայլ գութանի արծաթ խոփի.
Դու՝ նե՛ տ, նիզա՛կ, մկո՛ ւնդ կոպիտ,
Դու՝ հայրենի ծխանի ծուխ,
Դու՝ անգի՛ ր վեպ, դու Սասնա ծռ՛ ուռ...
Իմ փառապա՛ հնած,
Իմ տառապա՛ ծ,
Իմ բարձրանո՜ւն,
Իմ քաղցրանո՜ւն:
Դու՝ մրգերի շտեմարան,
Ոսկեվազյան գինու մառան.
Դու՝ թավշե դեղձ, դու՝ փրփուր հաց,
Արտաշատյան խաղող սեւաչ.
Դու՝ Սեւանի վառվող կոհակ,
Երեւանի ցոն ու խոյակ.
Դու՝ հանգրվան, կանչող փարոս,
Դու՝ հայկական գերբ ու դրոշ.
Խոսուն վկա կոտորածի
Ու վճիտ աչք ցամքած լացի.
Արդարության ահեղ ատյան,
Սրի պատյան,
Սիրո մատյան -
Մշտա հի՛ն ու նո՛ ր իմ Հայաստան:

ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿ
11·XI·50
Երեւան